


ՉԼԱԿՈՂ ՉԱՅՆԵՐ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ՀԵՏՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՆԱԿՈՐ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ




Տղագրվում է ՆՆ ԳԱՍ
ինագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի
որոշմամբ

104852

ՉԼԱԿՈՂ ՁԱՅԳԵՐ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԵՏՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՆԱԿՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ -



ՆԱԻ հրատարակչություն
IAE Publishing House

Գրայտսներ՝ Դ.գ.թ. Գ. Ստեփանյան, Դ.գ.թ. Ս. Մկրտչյան

Գիտական խմբագիր՝ Գայանե Շագոյան

Չլավող ճայներ. հիշողությունն ու հետհիշողությունը բանավոր դատմություններում / խմբ. Գ. Շագոյան. – Եր., ՆԱԻ հրատարակչություն, 2018, 376 էջ:

Ժողովածուն ՆՆ ԳԱՄ ՆԱԻ Բանավոր դատմության կենտրոնի կրթական ծրագրի շրջանակում իրականացրած հետազոտությունների ամփոփումն է: Նաևորում քննարկված հոդվածները բարձրացնում են տարբեր խմբերի (կանանց, փախստականների, ուսուցիչների, ցեղատաճիկների և երրորդ սերունդների, դատերազմին մասնակցած զինվորների, Նայաստանում բնակվող ինքնությամբ թուրքերի) կամ իրադարձությունների (Ադրիլյան դատերազմ, Թավլյա հեղափոխություն) և երևույթների (խորհրդային շրջանում կրոնական դատկերացումների ու ծեսերի) հետ կաղված մինչ օրս գրեթե չբարձրաճայնած խնդիրներ, որոնց միավորում է հետազոտության հիմնական մեթոդը՝ բանավոր դատմությունը: Գիրքը նախատեսվում է բանավոր դատմությամբ ու հիշողության ուսումնասիրություններով զբաղվող սոցիալական տարբեր զիտաճյուղերի մասնագետների, ինչոյես նաև այդ հարցերով հետաքրքրվողների լայն շրջանակի համար:

Մույն տղագրությունը ֆինանսավորվել է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դոլրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ) կողմից: Գրքի բովանդակության համար դատասխանատու են հեղինակները, և դարտադիր չէ, որ այն արտացոլի Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի տեսակետները:

Նրատարակչությունը վաճառքի ենթակա չէ և կոմերցիոն կամ շահույթի նղատակ չի հետաղնդում:

ISBN 978-9939-9178-5-6

© ՆՆ ԳԱՄ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2018

Նայաստանի Նանրադեպարտման
Գիտությունների ազգային ակադեմիա
Ննագիտության և ազգագրության ինստիտուտ

ԲԱՆԱԿՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՆԻՇՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ – 7

Խմբագրական խորհուրդ

Լևոն Աբրահամյան
(գլխավոր խմբագիր, ՆԱԳԱՆ ՆԱԻ)

Պավել Ավետիսյան
(ՆԱԳԱՆ ՆԱԻ)

Ստելլա Գրիգորյան
(Նյուսթոնի համալսարան)

Արմինե Իշխանյան
(Տնտեսագիտության և քաղաքագիտության Լոնդոնի
համալսարան)

Նրանուշ Խատատյան
(ՆԱԳԱՆ ՆԱԻ)

Նարություն Մարության
(Նայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,
ՆԱԳԱՆ ՆԱԻ)

Գայանե Շագոյան
(ՆԱԳԱՆ ՆԱԻ)

National Academy of Sciences
of the Republic of Armenia
Institute of Archaeology and Ethnography

ORAL HISTORY CENTER
ANTHROPOLOGY OF MEMORY-7

Editorial Board

Levon Abrahamian
(editor-in-chief, IAE NAS RA)

Pavel Avetisyan
(IAE NAS RA)

Stella Grigorian
(University of Houston)

Armine Ishkanian
(London School of Economics and Political Science)

Hranush Kharatyan
(IAE NAS RA)

Harutyun Marutyan
(The Armenian Genocide Museum-Institute, IAE NAS RA)

Gayane Shagoyan
(IAE NAS RA)

- 9 երախտիքի խոսք
- 11 ԳԱՅԱՆԵ ԸԱԳՈՅԱՆ /նախաբան /
Բանավոր դատմությունը դատմագիտության և ազգագրության միջև
- ԳԼՈՒՍ 1. ԽՈՐՆՐԴԱՅԻՆ ԱՆՑՅԱԼԻ ՎԵՐԱԿԱՇՍՈՒՄ
- ՆԵԼԼԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
29 *Մկրտությունները Խորհրդային Նայաստանի այթիզմի տայմաններում*
52 *գրուցավար՝ Նելլի Մանուչարյան, Նարցագրույց Ս.Ս. հետ*
- ԷԼԵՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ
70 *Լոնցված դատմությունները խաչքարի լեզվով*
92 *գրուցավար՝ Էլեն Ստեփանյան, Նարցագրույց Նելսոն Շիրվանյանի հետ*
- ԳԼՈՒՍ 2. ՎԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ
- ՆԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
102 *Անցյալը ներկայում. Նայոց ցեղատանությունը վերադարձնողների երկրորդ,*
երրորդ սերունդները
141 *գրուցավար՝ Նասմիկ Գրիգորյան, Նարցագրույց Արա Գևորգյանի հետ*
- ԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ
162 *Կիրովաբադը հիշելիս՝ նոստալգիայի ու տրավմայի միջև (մի փախստական*
ընտանիքի դատմության հետքերով)
178 *գրուցավար՝ Աննա Բաբայան, Նարցագրույց Կիրովաբադի նախկին բնակչի հետ*
- ԱՇԽԵՆ ՆԱԿՈՐՅԱՆ
196 *Ուսուցչի կերտարը խորհրդայինի և հետխորհրդայինի միջև՝ մեկ դրոյցի*
օրինակով
219 *գրուցավար՝ Աշխեն Նակոբյան, Նարցագրույց Իշխան Պետրոսյանի հետ*
- ԳԼՈՒՍ 3. ԼՈՒՑՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ՄԱՆԱՆԱ ՄՈՎԱՏԵՍՅԱՆ
234 *Մորիլյան տատերագճը ժամկետային զինծառայողների աչքերով*
253 *գրուցավար՝ Մանանա Մովսեսյան, Նարցագրույց Արամ Մարտիրոսյանի հետ*
- ԱՐՄԵՆՈՒՎԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
262 *Նայաստանի «թորքական համայնքը»*
- ԳԼՈՒՍ 4. ԹՎԱՇՅԱ ՆԵՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
- ԱԻՂԱ ՊԱՊԻՅԱՆ
304 *Ոստիկանի կերտարի փոխակերտումը Թավշյա հեղափոխության ընթացքում*
337 *գրուցավար՝ Աիդա Պապիկյան, Նարցագրույց Մանյա Գրիգորյանի հետ*
- ԷՎԻՅԱ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ
352 *Գյուղաբնակ և քաղաքաբնակ կանանց մասնակցությունը Թավշյա*
հեղափոխությանը՝ երկու դեղքերի համեմատության օրինակով
365 *գրուցավար՝ Էվիյա Նովհաննիսյան, Նարցագրույց Ի.Ա.-ի հետ*



ԵՐԱՄԵՏԻՔԻ ԽՈՍՍՔ՝

խմբագրից և հոդվածների
հեղինակներից

ԳՎՅԱԼՆԵ ՀՎԳՈՅՎԱՆ

ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՉԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

| նախաբան |



այաստանն այն քիչ երկրներից է, որտեղ բանավոր դատմության դատմությունը սկսվում է ավելի շուտ, քան այդ ուղղությունը ձևավորվել է որդես մեթոդաբանություն և գիտակարգ: Իրավիճակը որոշ շափով հիշեցնում է «ցեղասպանություն» եզրի դատմությունը, երբ երևույթն ավելի շուտ է տեղի ունեցել, քան ստեղծվել է դրա միջազգային անվանումն ու տրվել իրավական գնահատական: Մեր դարագայում բանավոր դատմությունը նույն ցեղասպանության դատճառով է, որ մուտք է գործում XX դարի հայոց դատմագիտության գործիքակազմ, թեև սկզբից ավելի ինտուիտիվ, սիրողական մակարդակում՝ դարգաղես գրանցելով ականատեսների բանավոր հիշողություններն իրենց վերադրածի շուրջ:

Օրինակ, Ցեղասպանությունը վերադրած Ավրորա Մարդիգանյանի հիշողությունների հիման վրա և իր իսկ մասնակցությամբ 1919-ին նկարահանված ֆիլմը կարելի է դիտարկել որդես մի կինոտարբերակ «դոկ. թատրոնի» կամ «վերբատիմ» թատրոնի, որոնք ստեղծվում են այսօր՝ գործածելով բանավոր դատմությունները: Սա հանրային դատմագիտության՝ բանավոր դատմության կարևոր առաքելություններից մեկի յուրօրինակ դրսևորում է: Ֆիլմի հիմքում ընկած գոհի լռեցված դատմությունը շատ կարևոր նշանակություն ունեցավ նույն բախտին արժանացած այլոց օգնելու համար:

Դեռքեր, երբ տարբեր քաղաքական գործընթացների ականատեսներ կիսվել են իրենց հիշողություններով կամ տողավորություններով, նախկինում էլ կարելի է գտնել և իհարկե ոչ միայն հայերիս մոտ: Պատմաբանները երբեմն-երբեմն իրենց ուսումնասիրություններում օգտագործել են բանավոր աղբյուրներ՝ ներառյալ բանահյուսական նյութերը: Մեզանում նման մոտեցում առկա էր դեռ Մովսես Խորենացու աշխատությունում: Նարցն այն է, թե արդյո՞ք ցանկացած բանավոր դատում (նարատիվ)¹ կարելի է համարել բանավոր դատմություն և այդ աղբյուրի օգտագործումն էլ՝ բավարար հիմք այս կամ այն աշխատությունն ընդունելու որդես բանավոր դատմության դատմագիտական նմուշ: Կողմնորոշվելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ նդատակով և ինչդես էին այդ դատմությունները գրանցվում, և ինչ բովանդա-

¹ «Նարատիվը» թարգմանել են «դատում»՝ հետևելով Ն. Բայադյանին: Տե՛ս Ն. Բայադյան, Նարատիվ (դատում) // Վիդեո-քառաբան, ACTV, 15.03.2015, <http://actv.am/?s=նարատիվ>, 25.12.2018:

կույթուն է վերագրվում այսօր առանձին ուղղության վերածված բանավոր դատմությանը: Ուստի, փորձեմ ուրվագծել բանավոր դատմության մի բանի հիմնարար սկզբունքներ և մոտեցումներ:

«Բանավոր դատմություն» անվանումն ինքնին հուշում է, որ ենթադրաբար գործ ոլիտի ունենանք որևէ տեղեկատվության բանավոր փոխանցման հետ, որն ունի դատումի ձևաչափ և, միգուցե, ինչ-որ աղերս դատմագիտության հետ: Այսօր այդ անվան տակ նկատի ունեն հետազոտությունների մի ուղղություն, որը հավակնում է լինել առանձին գիտակարգ, թեև այս խնդրի շուրջ քննարկումները դեռ շարունակվում են: Որդեգրելով հարցագրույցը՝ որդեհ դաշտային նյութ հավաքելու հիմնական մեթոդ՝ այս ուղղության համար կարևոր է ոչ այնքան տեղեկատվության փոխանցման բանավոր եղանակը, որքան առանձին մարդկանց, խմբերի տեսակետը լսելի դարձնելը: Նամատատասխանաբար՝ բանավոր դատմության սկզբնաղբյուրներն ընդգրկում են ոչ միայն բանավոր խոսքը, այլև մասնավոր անձանց օրագրերը, հուշագրությունները, լուսանկարները, ընտանեկան տեսագրությունները և հնարավորության դեպքում՝ այս ամենի շուրջ դրանց հեղինակների կամ ժառանգների մեկնաբանությունները: Այս ամենի մեջ ամենակարևորն է դատմագիտության գերիշխող խոսույթների կազմաբանդումն ու այլընտրանքային դատումի ստեղծումը, որտեղ տարբեր ժամանակաշրջաններ, խնդիրներ կներկայացվեն «մարդկային մասշտաբի» մեջ՝ անհատ մարդու աղբյուր կյանքի դիտանկյունից:

Այս ուղղության ծնունդը սովորաբար բացատրում են XX դարում տեղեկատվության զարգացմամբ: Նեոսխոսակաղն ու տարածություններն արագ հաղթահարելու հնարավորությունը որոշում կայացնողներին թույլ էին տալիս սահմանափակվել բանավոր հրամաններով՝ աղազա դատմաբաններին շթողնելով որևէ արխիվային փաստաթուղթ: Ուստի բանավոր դատմությունն առաջ է գալիս նախ ծառայելու որդեհ դատմական իրադարձությունների մասնակիցների հիշողության արձանագրման մեթոդ: Այսինքն՝ բանավոր դատմության առաջին առաքելությունը, որը 1966 թ. ձևակերտել է Բանավոր դատմության ամերիկյան ասոցիացիան, եղել է գրավոր սկզբնաղբյուրի դակասը լրացնելը²:

² М.В. Лоскутова, Введение // Хрестоматия по устной истории, Санкт-Петербург: Европейский университет в Санкт-Петербурге, 2003, с. 8.

Բանավոր դատմության առաջին ինստիտուցիոնալացումը նույնդեպ ԱՄՆ-ում է եղել՝ Կոլումբիայի համալսարանում (Բանավոր դատմության ասոցիացիա, 1948 թ.), որտեղ լրագրող և դատմաբան Ալան Նեխնսը նախաձեռնեց կենսագրական հարցազրույցների գրանցման մի ահռելի նախագիծ և 50 տարի անց՝ 1998 թ., այս համալսարանն արդեն ուներ շուրջ 7000 հարցազրույց՝ 700 000 էջ վերծանությամբ³: Եթե առաջին հարցազրույցները վերցնում էին հիմնականում հարուստ վերնախավի ներկայացուցիչներից, օրինակ՝ մեծահարուստ Նենրի Ֆորդից, առաջ հետագայում նրանց կողքին հայտնվեցին հասարակ մարդկանց կենսագրությունները: Այդ շրջադարձը դեղի շարքային քաղաքացուն, որ արդիական ժամանակաշրջանի դատմագրության ոչ միայն նոր դատվիրատուն էր, այլև այդ դատմության դերակատարն ու սղառողը, տեղի չէր ունենա, եթե XX դարի կեսերին չկատարվեր ընդհանուր դատմագիտության մարդաբանական շրջադարձը: Այն հետազոտողների ուշադրությունը շեղեց քաղաքական իրադարձություններից դեղի սոցիալական և մշակութային դատմություն:

Բանավոր դատմության մեթոդաբանությամբ ստեղծված աղբյուրներն այսօր կարելի է բաժանել երեք խմբի. ա) նյութեր այն մարդկանց և խմբերի մասին, որոնց վերաբերյալ չկան այլ աղբյուրներ (օրինակ՝ բանվորներ, տարբեր փոքրամասնություններ, փոքրաթիվ ազգեր, խմբեր ևն), բ) նյութեր կյանքի այն կողմերի մասին, որոնց վերաբերյալ չկա այլ աղբյուր (անձնական և ընտանեկան հարաբերություններ, մասնավոր կյանք ևն), գ) նյութեր այս կամ այն իրադարձությունների մասնակիցների զգացմունքների, հուզմունքների մասին:

Բանավոր դատմության՝ որդես առանձին ուղղության ամրագրումը տեղի է ունենում հատկապես 1950-60-ականների մարզինալ խմբերի իրավունքների դաշտոյանության սոցիալական շարժումների ազդեցությամբ: Սա այն շրջանն է, երբ ձախակալան շարժումները, հայտնվելով դրանք սատարող հետազոտողների ուշադրության կենտրոնում, վերաիմաստավորվում և վերածվում են գիտական ուղղությունների: Նույն տրամաբանությամբ են զարգացել նաև գենդերային հետազոտությունները:

Այստիպով բանավոր դատմությունը վերածվեց մարզինալ

խմբերի սոցիալական դաշտոնանության շարժման՝ փորձելով լսելի դարձնել նրանց, ում ձայնը ներկայացված չէր անցյալի դաշտոնական դատումներում (օրինակ, դատմությունը կանանց կամ գյուղացիների տեսանկյունից): Բանավոր դատմության սոցիալական այդ առաքելությունը մինչ օրս դահիճանվում է,⁴ և դա է դատճառը, որ որդես հետազոտությունների հասցեատեր այն տեսնում է ոչ միայն և երբեմն էլ ոչ այնքան գիտական հանրային, որքան ավելի լայն լսարանին: Բանավոր դատմության խնդիրներից է դառնում հանրային գիտակցության վրա ազդելն ու հանրային դատմագիտության զարգացումը: Սա մի հավելյալ հնարավորություն է՝ առերեսվելու դատմության մութ, այս կամ այն դատճառով լռեցված դրվագների հետ, հատկապես երբ կա հակասություն դաշտոնական և սոցիալական հիշողությունների միջև, ինչդեռ նաև տարածք է բացվում դատմական քննարկումների և սեփական փորձի իմաստավորման համար: Այդ իսկ դատճառով բանավոր դատմության վերջնական արդյունքները, բացի գիտական հողվածից կամ գրքից, կարող են ունենալ բազմազան այլ ձևաչափեր՝ ֆիլմ, լուսանկար, թատերական ներկայացում, խոհանոցային գիրք, փերֆորմանս ևն:

Բանավոր դատմության հայտնի տեսաբաններից Լին Աբրամսը այս մեթոդով զբանցված նյութի կիրառման երեք մոդել է առանձնացնում.⁵

- «Նիշելու կամ համայնքային մոդելը» (reminiscence and community model) ներառում է այն բանավոր դատմությունները, որոնք զբանցվում են ձայները վերականգնելու և դրանք դատմության մեջ արձանագրելու համար: Այս կարգի հարցազրույցներն առանձնապես չեն մեկնաբանվում, այլ դահիճվում են արխիվում, հաճախ ուղեկցվում գրավոր վերծանություններով, իսկ հրատարակելիս կարող են ներկայացվել ինչդեռ հատվածաբար, այնդեռ էլ ամբողջությամբ: Այս շարքում են «վիրկարար» բանավոր դատմությունները, որոնց նույնպես է դահիճանել հիշողությունները:

⁴ V.J. Janesick, Oral History as a Social Justice Project: Issues for the Qualitative Researcher // The Qualitative Report, Volume 12, Number 1 (March 2007), pp. 111-121; Ead. Oral history for the qualitative researcher: choreographing the story, New York, London: The Guilford Press, 2010, pp. 16-17.

⁵ L. Abrams, Oral History Theory, London and New York: Routledge, 2010, p. 15.

■ «Այայտությունների մոդել» (evidential model). հարցազրույցն օգտագործվում է որդես հավելյալ փաստարկ կամ օրինակ դաստանական վերլուծությունների համար: Գիտական տեսքներում դրանք ստանում են մեջբերումների տեսք՝ ի թիվս այլ աղբյուրների՝ հաստատելու հեղինակի կարծիքը: Այս դեպքում բերված հատվածները կտրվում են իրենց համատեքստից և օգտագործվում են որդես կարճ, բայց դասակերպվող և հիշվող բնորոշումներ:

«Տեսական մոդել» (theoretical model). այն կարելի է բաժանել երկու մոտեցումների՝ երբ հարցազրույցը դառնում է դատմության տեսական խնդրի ամփոփման հիմնական սկզբնաղբյուր, և երբ բանավոր դատմության մասնագետների գրանցած նյութը օգտագործվում է հարակից գիտություններում:

Այս վերջին մոդելի մեջ են տեղավորվում նաև բանավոր դատմությանը սերտաճած հիշողության ուսումնասիրությունները⁶, առավել ևս, որ ցանկացած հարցազրույց ինչ-որ իրադարձության մասին հիշողության շարադրանք է: Մեկ ժամ կամ նույնիսկ բոլոր առաջ կատարվածն էլ արդեն հիշողության տիրույթում է, և հետազոտողի խնդիրն է հասկանալ, թե ինչդեպ վերլուծել հիշողության դատումները, ինչ կարգի հավաստի տեղեկություն, փաստեր է հնարավոր այնտեղից առանձնացնել, ինչդեպ գատել դատումի ժանրային ազդեցություններն ու անձնական շահախնդիր ձևակերպումները, շրջանցված թեմաները ևն: Այս հարցերին են անդրադառնում բանավոր դատմության երրորդ մոդելի հետազոտողները:

Նրանց քննարկման առարկան այն հարցն է, թե մարդ ինչը, ինչու և ինչդեպ է հիշում, որքանով են դատմագիտական դոմինանտ խոսույթներն ազդում անհատական հիշողության վրա և հակառակը: Նարցազրույցների սուբյեկտիվ ընկալումներն ու իրադարձությունների անձնավորված մեկնաբանությունները դառնում են բանավոր դատմությանը զբաղվողների, հատկապես մարդաբանների⁷ հետաքրքրության առարկան, քանի որ

⁶ P. Hamilton, L. Shopes, *Building Partnerships between Oral History and Memory Studies* // *Oral History and Public Memories*, eds.: Paula Hamilton, Linda Shopes, Philadelphia: Temple University Press, 2008, pp. VII-XVII.

⁷ Տե՛ս, օրինակ, A. Portelli, *The Order Has Been Carried out: History, Memory, and Meaning of a Nazi Massacre in Rome*, New York: Palgrave Macmillan, 2003; Id. *The Death of Luigi Trastulli, and Other Stories: Form and Meaning in Oral History* SUNY Series in Oral and Public History, State University of New York Press, 1990:

«ինչո՞ղես» դատմելու կամ թաքցնելու, այնուհետ էլ շփոթելու փաստերը բացահայտում են տվյալ հասարակության կառուցվածքը և շատ այլ անտեսանելի խնդիրներ:

Մոցիալ-մշակութային մարդաբանների համար, որոնց Նայաստանում խորհրդային ավանդույթով դեռ շարունակում են անվանել ազգագրագետ, բանավոր դատմությունն ու հատկապես հիշողությունների ուսումնասիրությունը շատ կարևոր շրջադարձ էր հենց մարդաբանության մասնագիտական դաշտում, քանի որ ազգագրագետի երբեմնի դաշտային աշխատանքը կազմող անմիջական և երկար դիտարկումն այսօր փոխարինվել է հիմնականում հարցազրույցներով: Եթե նախկինում՝ «դասական ազգագրության» ժամանակաշրջանում, հետազոտողն ամիսներով աղորում էր որևէ օտար խմբում, և իր գրույցները տեղացիների հետ ավելի շատ նոտատակ ունեին դիտարկումներ անելու և կատարվողի շուրջ մեկնաբանություններ գրանցելու, ադա այսօր դաշտային աշխատանքներն ավելի հաճախ կարճաժամկետ այցելություններ են՝ հիմնականում մեկ կամ երկու հարցազրույց վերցնելու նոտատակով: Սակայն այդ հարցազրույցների հանդեպ վերաբերմունքը և վերլուծության գործիքակազմը տասնյակ տարիներ մնացել են այնդիսին, որ կարծես դրանք ոչ թե հիշողություններ են՝ երբեմն նույնիսկ ծնողներից կամ դառնորից ժառանգած, այլ ականատեսի վկայություններ: Մինչդեռ առանց գիտակցելու, թե ինչ տարբեր եղանակներով և հանգամանքների ազդեցությամբ է կառուցվում մարդու հիշողությունը, այն դառնում է խնդրահարույց՝ որդես գիտական հիմք կամ դատմական վկայություն:

Ավելին՝ հենց այդ հիշողության կառուցակցվելու ճանադարին ինքնին դառնում է ուսումնասիրության առավել հետաքրքիր խնդիր: Իտալացի մարդաբան, բանավոր դատմության հայտնի հետազոտողներից Ա. Պորտելլին իր հետազոտություններում լավագույնս ցույց է տալիս, որ բանավոր դատմության առավել հետաքրքիր ներդրումը դրա սուբյեկտիվ լինելն է: Ըստ նրա՝ այստեղ կարիք չկա որոշելու ճիշտն ու սխալը, այլ կարևոր է հասկանալ այն, թե ինչու են մարդիկ ինչ-որ բան հիշում, և հենց դա հիշելն է ինքնին փաստ*:

Որոշ մարդաբաններ, զարգացնելով բանավոր դատմությունը և

* A. Portelli, What Makes Oral History Different // Oral History Reader, eds.: Robert Perks and Alistair Thomson, London, New York: Routledge, 1998, pp. 65-86.

ՀԵՐԱՅԵՐ
109458

ՀԱՍՏԻՆՈՒԹՅԱՆ ՌԵՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱԿՈՐ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ

հարմարեցնելով իրենց հետաքրքրող խնդիրներին, այն կիրառել են զիր շունեցող խմբերի տատմությունը վերականգնելու համար: Այս կարգի հետազոտություններում առավել հետաքրքիր է, օրինակ, Էռնեստ Բրըշի մշակած էթնադատության վերակազմության մոտեցումը: Նա փորձում է շուտ տալ տատմության սովոր ընթացքն ու վերականգնել տատմությունը ոչ թե անցյալից դեղի ներկան, այլ ներկայից դեղի անցյալը՝ գետի հունին հակառակ ընթացքով: Այս մոտեցմամբ հետազոտողը ընտրում է ոչ շատ վաղ անցյալում մի հիշարժան իրադարձություն՝ որդես խմբային հիշողության հանգրվան, դրա շուրջ հավաքում տատմություններ, առաջ դրանից կամուրջ գցում դեղի ավելի խոր անցյալ և այնտեղ գտնում որևէ այլ հիշարժան դեղք-կայան: Այստիպի մեթոդով հաջողվել էր վերականգնել հյուսիսային որոշ ժողովուրդների շուրջ 150 տարվա տատմություն:⁹

Այսօր Մարիանա Վիրշի շնորհիվ¹⁰ լայնորեն շրջանառվում է «հետհիշողություն» եզրը: Այն հիմնականում վերաբերում է տրավմատիկ հիշողությանը, որը ժառանգում են ողբերգությունը վերադարձների հաջորդ սերունդները, բայց տարտադիր չէ, որ այդ հիշողության փոխանցողը լինի անմիջապես ողբերգության ականատեսը: Երբեմն այդ տատմություններն այնքան են լցնում հանրային խոսույթը, որ նույնիսկ վերադարձի անձնական հիշողությունները կարող են ճնշվել և ձևափոխվել գերիշխող պոստմոդերնիզմի ազդեցությամբ: Այս առումով հետհիշողությունն ավելի տայմանական է դարձնում անձնական և խմբային հիշողությունների թվացյալ հակադրությունը:

Ջեյմս Օլիկը, օրինակ, գտնում է, որ ըստ էության չի լինում հավաքական կամ հավաքված (collected) հիշողություն, այսինքն՝ անհատների հիշողության հանրագումար, այլ ցանկացած հիշողություն իր վրա կրում է խմբային (collective) հիշողության դրոշմը և վերարտադրում դրա ներդրած կադադարները¹¹: Այլ հարց է, թե ինչ հանգամանքների բերումով, մեխանիզմներով և միջոցներով է ձևավորվում այդ «խմբայինը»:

⁹ E.S. Burch. The Method of Ethnographic Reconstruction // Alaska Journal of Anthropology, Vol. 8, no. 2 (2010), pp. 123-140.

¹⁰ M. Hirsch, Family Pictures: Maus, Mourning, and Post-Memory // Discourse, Vol. 15, N 2, Special Issue: The Emotions, Gender, and the Politics of Subjectivity (Winter 1992-93), pp. 3-29; Ead. The Generation of Postmemory // Poetics Today, 29:1 (Spring 2008).

¹¹ J.K. Olick, Collective Memory: The Two Cultures // Sociological Theory, Vol. 17, No. 3 (Nov., 1999), pp. 333-348.

Այստիպով, եթե ամփոփենք բանավոր լուստմության ուղղության զարգացումները, առաջ դրանք կարելի է տեղավորել երեք փուլի մեջ.

- 1948-1960-ականների կեսերը բանավոր լուստմությունը ձևավորվում է որդես նոր գիտակարգ և տարածվում երեք ուղղություններով.
- քաղաքական կենսագրություն
- սոցիալական լուստմություն
- լոկալ հանրությունների՝ փաստաթղթային հենք շունեցող լուստմության ստեղծում:
- 1960-ականների վերջից – 1970-ականների կեսերին ձևավորվում է մարզինալ խմբերի բանավոր լուստմությունը:
- 1970-ականներից ի վեր բանավոր լուստմությունը զարգանում է արխիվներ ստեղծելու ուղղությամբ և ավելի շատ կենտրոնանում մեթոդաբանական և տեսական գործիքակազմ մշակելու խնդիրների վրա:

Նայաստանում բանավոր լուստմության առաջին գիտակցված փորձերն արվել են ազգագրագետների միջավայրում, որոնց՝ կենսագրական հարցազրույցներ գրանցելու դաշտային աշխատանքի շնորհիվ կուտակվել էր, ըստ էության, բանավոր լուստմության մեծ արխիվ¹²: «Նագարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոնը նախաձեռնեց մի շարք հրատարակություններ, որոնց նախատակն էր ոչ միայն վերլուծել տարբեր ճնշված խմբերի խնդիրները, այլև դրանք դարձնել լսելի այդ խմբի ներկայացուցիչների խոսքով¹³:

ՆՆ ԳԱԱ ՆԱԻ-ի Արդիականության ազգաբանության բաժնի

¹² Նայաստանում Բանավոր լուստմության այլ օրինակների մասին տե՛ս Լ. Արբահամյան, Գ. Շագոյան, Պատմագրության և հիշողության միջև. Խորհրդային Նայաստանի բռնաճնշումների հուշարձանագրումը // Ն. Խառատյան, Գ. Շագոյան, Ն. Մարության, Լ. Արբահամյան, Ստալինյան բռնաճնշումները Նայաստանում. լուստմություն, հիշողություն, առօրյա, Երևան. Գիտություն, 2015, էջ 238-258:

¹³ Պատմություններ աղքատության մասին, խմբ. Ն. Խառատյան, Երևան, Լուսակն, հ. 1 2001, Նույնը, հ. 2, խմբ. Ն. Խառատյան, Ն. Մարության, Երևան. Ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն «Նագարաշեն» ՆԿ, 2007; Արտագաղթը Նայաստանից, խմբ. Ն. Խառատյան, Երևան. Նեղ. հրատ, 2003; Ն. Խառատյան, Գ. Շագոյան, Ն. Մարության, Լ. Արբահամյան, Ստալինյան բռնաճնշումները Նայաստանում. լուստմություն, հիշողություն, առօրյա, Երևան, 2015:

նախաձեռնությամբ 2012 թ. հիմնվեց մի մատենաշար, որի նուա-
տակն էր շրջանառության մեջ դնել հիշողությանն առնչվող
ուսումնասիրություններ և նյութեր: Պատահական չէ, որ սույն
ժողովածուն տեղ գտավ հենց այդ մատենաշարի հերթական
դրակում: Այստեղ բնդգրկված հոդվածները ներկայացնում են
բանավոր դատմության երեք ուղղություններ. հարցազրույցնե-
րի միջոցով դատմական վերակազմություններ (Նելլի Մանու-
չարյան, Էլեն Ստեփանյան, Էվիյա Նովիանինյան), շսվող
ձայների բարձրաձայնում (Արմենուհի Նիկողոսյան, Մանանա
Մովսեսյան) և խմբային ու ինստիտուցիոնալ հիշողության
ուսումնասիրություններ (Նասմիկ Գրիգորյան, Աննա Բաբայան,
Աշխեն Նակոբյան, Աիդա Պատիկյան):

Գիրքը բաղկացած է չորս գլխից, որոնցից յուրաքանչյուրում ներ-
կայացված են հետազոտություններ և դրանց համար հիմք ծառա-
յած մեկական հարցազրույց: Նեղիմակներն ունեն տարբեր հե-
տազոտական փորձ. ոմանց համար սա առաջին հրատարակվող
աշխատանքն է, ոմանք էլ արդեն հասցրել են հեղինակել գիտա-
կան հոդվածներ, ինչդեռ նաև մենագրություն: Սակայն բանա-
վոր դատմության շուրջ գիտելիքները նրանք հիմնականում ձեռք
են բերել վերջին մեկ տարում՝ մասնակցելով ՎՎ ԳԱԱ ՆԱԻ-ի և
ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալ գերմանական կազմակերպության հա-
մատեղ հիմնադրած Բանավոր դատմության կենտրոնի մի շարք
դասընթացների: Նեղիմակներն ունեն տարբեր սոցիալական և
հումանիտար կրթություն: Եվ չնայած աշխատանքները գրվել են
որդես բանավոր դատմության նմուշներ, հեղինակներից և ոչ մե-
կը դատմաբան չէ, և բարձրացված խնդիրներն ավելի շատ դի-
տարկվում են մարդաբանական տեսանկյունից:

Առաջին գլուխը բաղկացած է երկու հետազոտությունից և հա-
մադատասխանաբար՝ երկու հարցազրույցից: Այս նյութերը
միավորում է մեկ հիմնական խնդիր՝ խորհրդային շրջանում կրո-
նի հանդեղ մարդկանց տատկերացումների ու առանձին տրակ-
տիկաների վերակազմումը: Այս հետազոտություններն այն
շարքից են, որ լրացնում են բացակայող գրավոր սկզբնաղբյուր-
ները և միևնույն ժամանակ առաջարկում խորհրդային շրջանի
քիչ դատմվող սյուժեների անտղասելի մեկնություն:

Վաղխորհրդային շրջանում իրականացվող գաղտնի մկրտությ-
ունների մասին հարուստ նյութից բացի՝ Նելլի Մանուչարյանի

աշխատանքից իմանում ենք երեխայի կնունքը նախաձեռնելու հարցում կանանց հատուկ դերի մասին: Ղողվածից դարգվում է, որ այդ շրջանում երեխաների մկրտությունը դիտվում էր որդես նորածնի խնամքի բաղադրիչ, նրա առողջության գրավական, իսկ դա կանանց սոցիալական տարտականությունների ոլորտից էր: Այսինքն՝ այդ շրջանում գործ ունենք կրոնի և առողջապահության դեռ սինկրետիկ տատկերացումների հետ: Նարց է ծագում, թե ովքեր էին արգելված կրոնի ղայմաններում ծեսն իրականացնողները: Եվ այստեղ վերականգնվում է ուշագրավ մի իրավիճակ, երբ գյուղի առանձին հեղինակավոր մարդիկ դառնում են «ոչ ֆորմալ քահանա», կամ իրենց վրա են դրվում քահանայի տարտականությունները: Այսինքն՝ նախկին սոցիալական համակարգի որոշ գործառույթներ աղահովելու համար առաջանում է դրանք կատարողների «սոցիալական ֆանտոմը»: Այդ մարդիկ ղաշտոնական որևէ կաղ շունեին եկեղեցու հետ, սակայն հաճախ և՛ եկեղեցին է ընդունում նրանց ոչ ղաշտոնական միջնորդությունը, և՛ համայնքը: Ուշագրավ է, որ այս դրվագն այժմ քննարկում ենք երկու ժառանգ՝ գաղտնի մկրտվողի դուստր Նելլի Մանուշարյանն ու ես՝ նման մկրտություններ անցկացնողի թորը:

Էլեն Մտեփանյանի աշխատանքը հիմնված է մեկ դեղքի ուսումնասիրության վրա. նա փորձում է վերլուծել լուսահոգի խաչքարագործ Նելսոն Ծիրվանյանի հետ հարցազրույցը: Վարդետի վաղաժամ վախճանը բազմաթիվ հարցեր թողեց անղատասխան, սակայն արձանագրված հարցազրույցը բացում է խաչքարագործության հետաքրքիր և քիչ հայտնի մի շրջան, երբ երեք դար տևած ճոռացությունից հետո խաչքարը խորհրդային տարիներին սկսում է վերադառնալ վարդետների արհեստանոց: Մա այն անցումային շրջանն է, երբ խաչքարագործության հին կանոնները ճոռացվել էին, և շեր վերականգնվել այդ իմացությունը, ոչ էլ ձևավորել էին խաչքարային քիչ թե շատ նոր կաղատարներ: Եվ վարդետի աշխատանքները, որոնց հաճախ ոչ ձևը, ոչ էլ բովանդակությունը գրեթե չեն աղերսվում այսօր հայտնի խաչքարագործության հետ, վերածվում են խորհրդային գաղափարախոսության դեմ ուղղված գաղտնագրված այլախոհական ուղերձների: Իսկ կոթողները խաչքար անվանելու հիմքը մնում են վարդետի վերաբերմունքն ու սուբյեկտիվ ընկալումները՝ իր հույզերով և մտորումներով: Ն. Ծիրվանյանի հետ հարցազրույցից իմանում ենք, որ նա հոր մահից խորը հոգեբանական ցնցում

Է աղբյուրում և երկու տարի տատաղում ամենեզիայով: Վարդետը վերականգնում է հիշողությունը՝ աշխատելով հորը նվիրված խաչքարի վրա, կարծես կիրառելով արտթերապիայի սեփական ձևը. սա հիշեցնում է հայտնի հոգեբույժ Գազիկ Նազոյանի մեթոդը¹⁴, երբ հիվանդը բուժվում է իր դիմանկարը քանդակելու սեանսների ընթացքում՝ խնդիրները «տեղափոխելով» իրեն դատկերող քանդակի վրա:

Ժողովածուի երկրորդ գլխում հավաքված են այն հոդվածները, որոնց հիմնական թիրախը հիշողությանն առնչվող խնդիրներն են: Եվ եթե կոտորածների մասին հիշողությունները մեզանում ավանդաբար դիտարկվել են նախևառաջ որդես վկայություններ ցեղատանության ճանաչման համար, Նասմիկ Գրիգորյանը ցեղատանության մասին հարցազրույցների վերլուծություններին ավելացնում է մեկ այլ մոտեցում՝ դրանք դիտարկելով նաև որդես հետհիշողության նմուշներ, որտեղ կարևոր է խմբային խոսույթի ազդեցությունը: Տվյալ աշխատանքում հեղինակը նույնիսկ փորձ է անում տարանջատել ցեղատանության մասին հիշողությունների փոխանցման ձևերի, հիշողության ազդեցության և այլ հարցերի շուրջ տարբերությունները ցեղատանությունը վերադարձների երկրորդ և երրորդ սերունդների միջև:

Աննա Բաբայանի ներկայացրած հարցազրույցը դասական նմուշ է, թե ինչդիսին ղիտի լինի բանավոր դատմությունը, երբ զրուցավարը գրեթե հարց չի տալիս, իսկ դատմողը ոչ մի վայրկյան չի ընդհատում իր դատմությունը: Կիրովաբադը հայերից «մաքրելու» ողբերգական իրադարձությունները նրա զրուցակցի մոտ վերածվել են կայուն դատումի, և հարցերն ավելորդ են: Այս հարցազրույցը «փայլատակող հիշողության» (flashbulb memory)¹⁵ լավ օրինակ է: Այն հաճախ է հանդիպում բանավոր դատմության մեջ, երբ մի կարևոր իրադարձության մասին հիշողությունը, «լուսավորելով» այդ դրվագը, «հիմնական հիշողություն» է տեղափոխում այն ուղեկցող, ըստ էության, ոչ կարևոր մանրուքները, որոնք սովորաբար չեն մտադասվում: Այս նյութի շնորհիվ մենք ոչ միայն հաղորդակից ենք դառնում

¹⁴ Г. Назлоян, Портретный метод в психотерапии, Москва: ПЕР СЭ, 2001; Он же, Концептуальная психотерапия: портретный метод, Москва: ПЕР СЭ, 2002.

¹⁵ R. Brown, J. Kulik, Flashbulb Memories // Cognition, 1977, N 5 (1), pp. 73-99; D.B. Pillemer, Momentous Events, Vivid Memories: How Unforgettable Moments Help Us Understand the Meaning of Our Lives. Cambridge, Mass.: Harvard University Press, 1998.

Կիրովաբադը լքելու դաժան տեսարանին, այլև իմանում ուշ-
խորհրդային կենցաղի բազմաթիվ մանրամասների մասին՝
սկսած աղյուսատը կարգավորելու չգրված օրենքներից մինչև
գորբաչովյան ակնոհյուն արգելող՝ «շոր օրենքի» շարաշահումը
աղբբեջանցի իրավադահների կողմից: Թթի օղի բաշելու հա-
մատարան սովորույթը, որը մինչ այդ անտեսվում էր, միջէթնիկ
հարաբերությունների սրման օրերին տեղացի հայերին ձերբա-
կալելու համար դառնում է հարմար դատարկ: Պարզ կենցա-
ղային հարաբերությունների նկարագրությունը ցույց է տալիս
դրացիական, մասնագիտական, ազգակցական կառույցի բարդ
թնջուկը՝ բացահայտելով այն հարցերն ու խնդիրները, որտեղ
դրանք ճեղքեր են տալիս կամ ավելի կարծրանում, և թե ինչ
հարցերում են միջէթնիկ սահմանները դառնում անանցանելի:

Աշխեն Նակոբյանի աշխատանքը, որ նվիրված է դոկտրիկ բազմիցս
քննադատված ուսուցիչներին, բացի բուն թեմայից, ուշագրավ է
կիրառված մեթոդի առումով: Դոկտրիկ կյանքին հնարավորինս
ներգրավվելու և ներսից խնդիրները հասկանալու համար Աշխե-
նը ոչ միայն հենվում է նույն դոկտրիկում իր ունեցած նախկին աշ-
խատանքային փորձի վրա, այլև հետազոտության նույնատակով
հնարավորինս ներգրավվում դոկտրիկ այսօրվա անցուդարձին:
Բացի հարցազրույցից՝ կիրառելով դիտարկման մեթոդը և համա-
գործակցելով ուսուցիչների հետ՝ փորձում է հասկանալ նրանց
խնդիրները ներսից: Նա, փաստորեն, համադրում է երկու մեթոդ՝
դիտարկումն ու բանավոր դատմությունը: Սա հնարավորություն
է տալիս բացահայտելու հիշողության մեկ այլ երևույթ՝ ինստիտու-
ցիոնալ հիշողությունը, երբ որոշակի կանոններ շարունակում են
գործել ինտերցիայի ուժով, չնայած այն ներդրած նախկին համա-
կարգն այլևս չկա: Այսինքն՝ այսօրվա դոկտրիկ մի շարք չգրված
կանոններ գործում են խորհրդային համակարգի հիշողության
ազդեցությամբ, որը տեղափոխել է դրանք հետխորհրդային կեն-
ցաղ և ամրագրել նույնիսկ այն ուսուցիչների մեջ, որոնք ծնվել են
խորհրդային տնտեսության փլուզումից հետո:

Երրորդ գլուխը բաղկացած է երկու աշխատանքից, որոնց նույն-
տակն է լսելի դարձնել իրենց գրուցակիցների ձայները:

Մանանա Մովսեսյանը խոսել է 2016 թ. Ադրիյան քառօրյա դա-
տերազմի անհայտ մնացած մասնակիցների հետ՝ փորձելով բարձ-
րաձայնել դատերազմի և խաղաղ կյանքի միջև հայտնված

զինվորների խնդիրները, նրանց զգացումներն ու զնահատականը: Այս հարցազրույցը կարող է լիովին փոխել շատ կարծրատիպեր, թե ինչն է մարդուն մղում առաջին գիծ կամ դարձնում հերոս, արդյո՞ք իրական մարտադաշտում հայրենասիրական հռետորաբանությունն ու դրոշմագանդան որևէ դեր ունեն: Այս նյութը ստիպում է բացարձակապես այլ աչքերով նայել ցանկացած զորակոչիկի:

Երևի ամենաանապատելի նյութը բարձրացնում է Արմենուհի Նիկողոսյանը՝ խոսելով Ղայաստանում համեմատաբար երկար ժամանակ բնակվող Թուրքիայի թուրք ինքնությամբ քաղաքացիների մասին: Քանի որ այս հարցազրույցներն անգլերեն էին, Արմենուհին, ի տարբերություն մյուս հեղինակների, չի դնում հարցազրույցի սղագրությունը, փոխարենը՝ բուն հոդվածը հագեցած է երկար մեջբերումներով: Տեսանկյունը, որն առաջարկում է Արմենուհին, կարող է շատ ընթերցողների համար դառնալ շրջադարձային, ինչդեռ Ղայաստանում հայտնված թուրքերի համար էր շրջադարձային այստեղ աղբյուր փորձառությունը: Նրանք հայտնվեցին մի խմբի կարգավիճակում, որին մեղմ ասած «չեն սիրում» միայն ինչ-որ «խմբի ներկայացուցիչ» լինելու դատճառով՝ անկախ իրենց մարդկային, անձնային հատկանիշներից: Ժամանակին Թուրքիայում բազմաթիվ հայեր գոհվեցին նմանատիպ դատճառով. նրանց դասել էին «հայ խմբի» մեջ՝ անկախ սղանվողի անհատականությունից: Այսօր Ղայաստան եկած թուրքերից շատերը, որոնք այս ամենի հետ անձնապես կապ չունեն, դատադարստում են ցեղատղանության մեծ ոճրագործությունը, ունեն իրենց իշխանության հետ բազմաթիվ խնդիրներ, իսկ Ղայաստանից Թուրքիա վերադառնալուց հետո նաև չեն կարողանալու կամ առնվազն մեծ խոչընդոտների են հանդիպելու դեռևս կան համակարգում աշխատանք գտնելու հարցում: Բայց և այնպես, անկախ իրենց վերաբերմունքից և զնահատականից՝ մենք նրանց ընկալում ենք որդես «մեզ ատելի խմբի» ներկայացուցիչ և զրկում անձնային հատկանիշներից: Այս մարդկանց դատմությունների միջոցով ավելի տեսանելի է դառնում հեղինակուհի «գոհերի» և «դահիճների» միջև, երբ միջանձնային հարաբերությունների հիմք է ծառայում ոչ թե կոնկրետ մարդու հանդեպ վերաբերմունքը, այլ կանխակալ ատելությունը նրա՝ ինչ-որ մի կառուցակցված խմբի անդամ լինելու դատճառով:

կան աշխատանքներն ընթացքի մեջ էին, երբ վրա հասավ 2018 թ. Թավշյա հեղափոխությունը, որը բոլորիս դարձրեց այդ իրադարձությունների ոչ միայն ականատեսը, այլև դիտարկող մասնակիցը: Այդ օրերը փոխեցին նաև ոմանց հետազոտական լույսերը՝ հենց հեղափոխությունը դարձնելով ուսումնասիրության առարկա: Այսօրես ձևավորվեց մեր ժողովածուի վերջին՝ շորորոդ գլուխը, որտեղ իրենց դիտարկումներով են կիսվում Աիդա Պատիկյանն ու Էվիյա Նովիանինիայանը:

Աիդա Պատիկյանը, որ նախկինում հետազոտել էր ուժային կառույցների, մասնավորապես հայկական բանակի հետ կապված խնդիրներ, նկատեց, թե ինչպես են միջմանց հակադրվում ոստիկանն ու գինձառայողը, և ինչպես է հեղափոխության ընթացքում փոխվում ոստիկանների հանդեպ քաղաքացիների վերաբերմունքը: Նենց այս ձևափոխությունն է նա փորձում ուրվագծել՝ ուսումնասիրելով հանրային խոսույթն ու այն համադրելով իր գրանցած հարցազրույցների հետ: Այս աշխատանքն առանձնապես հետաքրքիր է նրանով, որ հեղափոխության խոսույթն արձանագրվել է հենց իրադարձության ընթացքում, երբ դեռ չի ձևավորվել նկարագրող լեզուն, բառամթերքը, դեռ չկա դրա մասին դասագրքային տեքստ: Այս ամբողջ ընթացքը նաև «փնքնագրանցվել» է ֆեյսբուքյան գրառումներում: Մյուս կողմից՝ անմիջապես հեղափոխությունից հետո գրանցած հարցազրույցներում արդեն տեսանելի են մասնակիցների տատումներում հեղափոխության հաղթանակով տայմանավորված «շտկումները»: Աշխատանքը հետաքրքիր է բանավոր և գրավոր այս բնորոշումների համեմատության առումով: Ոստիկանների մասին խոսույթում Աիդա Պատիկյանի մոտ տակասում է հենց ոստիկանների ձայնը: Սակայն նախատեսված հարցազրույցները չստացվեցին, քանի որ այդ շրջանում, ինչպես տարզեց հեղինակը, ոստիկաններն ունեին այդ դեղքերի շուրջ հարցազրույց չտալու ներքին հրահանգ:

Ժողովածուն ավարտում է, իմ կարծիքով, ամենահուզիչ նյութը՝ Էվիյա Նովիանինիայանի խոստովանություն հիշեցնող հոդվածը, որտեղ հեղինակը համեմատում է հեղափոխությանը մասնակցելու ցանկություն ունեցող երկու կնոջ տատնություն՝ մեկը Նայաստանի հեռավոր գյուղերից մեկում, մյուսը՝ Երևանում՝ ընթերցողի դատին հանձնելով սեփական տատնությունը: Ինքնազգագրության մոտեցումը, որը կիրառում է Էվիյան, բխում է բանավոր տատնության բուն էությունից. այն քանդում է գրուցակցի հանդեպ բոլոր

տեսակի ստորադասումները՝ ներառյալ գիտնականի իշխանությունը ուսումնասիրվողի նկատմամբ: Նեղավիթությունը, որի հաղթանակը հաճախ կաղում են հատկապես կանանց մասնակցության հետ, ստանում է մեկ այլ տատկեր, երբ դեղքերը տեղափոխվում են ավանդադաշտ գյուղ, որտեղ հանրային տարածքում կանայք չեն երևում: Սակայն, ինչդեռ տարզ է դառնում Էվիյայի աշխատանքից, նրանք այստեղ էլ գտնում են մասնակցության այլընտրանքային տարբերակներ:

Էվիյայի առաջարկած հարցազրույցում, բացի հեղափոխությունից, քաղաք-գյուղ հարաբերությունները դիտարկվում են մեկ այլ համատեքստում՝ քննարկելով 1980-ականների վերջին գյուղ եկած նախկին քաղաքաբնակ փախստականներին: Էվիյայի գրուցակիցը փորձառու մարդաբանի դիտողականությամբ վերլուծում է նախկին քաղաքաբնակ կանանց հանդեպ գյուղում ձևավորված վերաբերմունքի յուրահատկությունները՝ առանձնացնելով քաղաքային և գյուղական մշակույթների մի շարք հատկանշական տարբերություններ: Եվ եթե վերլուծական հոդվածում Էվիյայի իրեն և իր գրուցակիցին դնում է երկու գուգահեռ և հավասար հարթությունների վրա՝ իրեն դարձնելով նույնքան ուսումնասիրության առարկա, որքան իր գրուցակիցն է, առաջ հարցազրույցում ինքն ու գրուցակիցը նույնդեպ հավասարվում են, սակայն արդեն ոչ թե որդես «ուսումնասիրության օբյեկտ», այլ որդես երկու ուսումնասիրող, ովքեր հավասար քննարկում են քաղաքային և գյուղական ոլրակտիկաների տարբերությունները:

Այսպիսով, հրավիրում ենք ականջ դնել մեր բացահայտած «չլավող ձայներին»: Գիրքը բաց տեքստ է, այստեղ ոչ միայն վերլուծություններ են, այլև առանձին մարդկանց կենսագրություններ, ըստ էության՝ նյութեր, որ կարելի է օգտագործել այլ հետազոտությունների համար, անել նոր հարցադրումներ ու վերակենդանացնել՝ փոխադրելով այլ ձևաչափերի՝ ֆիլմի, թատրոնի, գրականության և այլն:

ԳԼՈՒԽ I

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԳՅՅԱԼԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒՄ

- ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԹԵԻԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
- ԼՈՒՑԿԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԽԱՉՔԱՐԻ ԼԵՉՎՈՎ

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ԱԹԵԻՉՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ


ի հիշատակ Նայրիկիս՝ Գեորգի Մանուչարյանի

Խորհրդային տարիներին բոլշևիկյան ղեկավարության վարած հակակրոնական քաղաքականությունը իշխանության տարբեր փուլերում դրսևորվել է տարբեր կերպ: Չնայած «Մարտնչող անաստվածների միության» (Մույնդես՝ «Անաստվածների միություն») ակտիվ գործունեության, ինչդեռ նաև երկրում գործադրվող աթեիզմի (росатеизм) և հասարակության բոլոր շերտերից կրոնի վերացման քաղաքականության, այնուամենայնիվ, խորհրդային իրողության մեջ առկա էին ծղտված կան գաղտնի կրոնական ծեսերի իրականացման բազում թղակտիկաներ:

Յոդվածում հետազոտվում է Խորհրդային Չայաստանում լաշտոնական աթեիզմի լայնամեներում գործող ժողովրդական կրոնական, մասնավորապես գաղտնի մկրտությունների (կնունք) թղակտիկաներն ու լատկերացումները, դրանց իրականացման միջոցներն ու ձևերը: Խորհրդային վաղ շրջանում մկրտվածների և ավելի ուշ շրջանում գործող հոգևորականների հետ հարցազույցների միջոցով ներկայացվում է վաղ խորհրդային և հետոլատերազմյան շրջանի կնունքների դերի և կարևորության հանրային ընկալումները:

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ՝ Խորհրդային Չայաստան, գաղտնի մկրտություններ, աթեիզմ, կրոնական ծեսեր, ժողովրդական քրիստոնեություն, Չայ Առաքելական եկեղեցի

ներ, սակայն, թողնելով բաց: Նայրիկիս մահից հետո՝ ընտանեկան ալբոմները թերթելիս, իր մանկության լուսանկարներից մեկի ետևում շատ դատախական հայտնաբերեցի հետևյալ մակագրությունը. «Снимались в честь крестины Жорика. 16/VIII-53 г. Бюракане Армения»¹: Նայրս համոզված էր, որ իրեն Մեդրու շրջանում են կնքել, բայց այս լուսանկարով լրացվեց տատիկիս դատմության դակասող, ավելի շուտ՝ հաստատող շղթան, և հայրիկիս մկրտության դատմությունը հողվածում հիշատակելու նախադրյալ դարձավ:



¹ Լուսանկարվել ենք՝ ի դատով ժորիկի կնունքի. 16/VIII-53, Բյուրականում, Նայրստան:

Նետագոտության շրջանակներում ներկայացնելու են Խորհրդային Նայաստանում 1930-1950-ական թթ. կրոնական ծեսի, մասնավորապես՝ մկրտություն կատարելու դրակտիկաները դետական արթիզմի դայմաններում, դրանց իրականացման միջոցներն ու ձևերը: Նոգևորականների և մկրավողների հետ բանավոր դատմության մեթոդաբանությամբ գրույցների միջոցով կվերլուծեն մկրտության կարևորությունը խորհրդային հայ գյուղացու կյանքում: Աշխատանքը ժամանակագրորեն համընկնում է ԽՍՀՄ-ում 1929 թ. «մեծ բեկման» տարվա և դրանով հիմք դրված «խորհրդային արդիականացման ծրագրի» շրջանակներում իրականացվող կրոնի վերացման գործընթացների հետ:

Նետագոտությունում ընդգրկված կենսագրական հարցագրույցներն իրականացվել են Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում և Խաչաղբյուր (բնակեցված 1915-18 թթ. Արևմտյան Նայաստանի տարբեր շրջաններից գաղթածների սերունդներով), Վարդենիկ, Վաղաշեն (բնակեցված Արևելյան Նայաստանում ավելի վաղ վերաբնակեցվածների սերունդներով), ինչդեպ նաև Շիրակի մարզի Ոսկեհասկ (բնակեցված արևմտահայ գաղթականների սերունդներով), Փանիկ (բնակչության մեծամասնությունը կաթոլիկ հայեր են) գյուղերում:

**ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՆԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱՄՈՍՈՒԹՅԱՆ ՆԻՄՔԵՐԸ**

Բոլշևիկյան ղեկավարությունը, գալով իշխանության, որդես առաջնային խնդիր է ձևակերտում «նոր մարդու կերտումը», որի տակ, ի թիվս մի շարք արմատական քաղաքական, սոցիալական և տնտեսական փոփոխությունների, նաև նկատի ունեն այդ մարդու և խորհրդային հեղափոխական մշակույթի աշխարհիկացումն ու կրոնի՝ որդես նախկին իշխող դասակարգի գործիքի մերժումը: Այս նդատակին հասնելու առաջին քայլերից էր եկեղեցու տարանջատումը դետությունից, սակայն հետագայում այն վերածվեց նաև եկեղեցու և կրոնի համատարած հետադնդման:

Այդ նդատակով իշխանությունը փորձում էր վերախմաստավո-

ՀԱՍՏԱՎՈՐ ԱՅՆՈՒՐ. ԻՆՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳԵՏԻՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԱՌԹՅՈՒՆՆԵՐՈՒ

րել «մշակույթը»², այսինքն՝ ինչդեպ ինքն էր ձևակերպում՝ «մուք գանգվածների գիտակցությունն ու վարքն ավելի բարձր մակարդակի հասցնել»։ Այս գործընթացը, որ հեղափոխականներն ընկալում էին որդես «սոցիալիզմի կառուցում», մասնավորապես տարածվեց հանրային կրթության վրա, վերանայվեցին օրենքները, քրեական արդարադատությունը և սոցիալական աղահոսությունը, փոխվեց ընտանեկան հարաբերությունների օրինականացման կարգը³, և մեծ ջանքեր ներդրվեցին բոլոր բնագավառներում կրոնական դոգմաները փոխարինելու աշխարհիկ արժեքներով⁴։

Այս ամենի հետ մեկտեղ՝ ակնհայտ էր, որ նույնիսկ կտրուկ և բռնի փոփոխություններով անհնար էր հեղափոխություն իրականացնել հասարակության գիտակցության մեջ։ Դրա նշաններից էր այն, որ խորը արճատացած կրոնական սովորույթները բացահայտ դիմադրություն էին ցույց տալիս բոլշևիկյան նախաձեռնություններին։ Նակակրոնական կամդանիաներն էլ հենց առաջին օրից այս կամ այն շափով շարունակվեցին մինչև կրոնի լեգիտիմացված վերադարձը հասարակական կյանք։

Իշխանության նոր ռազմավարական խնդիրներից էր «առաջադեմ գաղափարախոսությամբ և գիտական աշխարհայացք»-ով խորհրդային հասարակության համար եկեղեցին վերածել անցյալի վերադրուկի և անհասկանալի ու անհարկի մի ինստիտուտի⁵։ Խորհրդային հասարակությունը ղեկավար է լինել արթնիստ, և նրա մաս կազմող «նոր մարդը» շղետք է տրվել «կրոնական սնահավատություններին»⁶։ Ավանդական հավատալիքները, որոնք ներառում էին կրոնական և քվազիկրոնական դրակտիկաներ՝ ծննդյան, մկրտության, մահվան շրջափու-

² Sh' u P. Kenez, A History of the Soviet Union from the Beginning to the End, Cambridge: Cambridge University Press, 2006:

³ L. Arpee, A History of Armenian Christianity, New York: The Armenian Missionary Association of America, Inc., 1946.

⁴ Sh' u J.S. Curtiss, The Russian Church and the Soviet State, 1917-50, Boston: Little, Brown and Co., 1953; Н.Б. Лебина, Повседневная жизнь советского города: нормы и аномалии. 1920-30 годы, Санкт-Петербург: Журнал «Нева» - Издательский дом «Летний сад», 1999, с. 120-158:

⁵ Sh' u F. Corley, Religion in the Soviet Union: An Archival Reader. London: Macmillan Press, 1996, p. 13:

⁶ Известия ЦК КПСС, 1990, N 4, с. 190-193; տե՛ս նաև Архивы Кремля, Политбюро и церкви, 1922-1925 гг., Новосибирск, Москва, 1997, с. 122; Վ.Ի. Լեբինի, Ungħu- լիզմը և կրոնը // Երկիր, հա-տոր 10, Երևան. Նայոնտիստա, 1949, էջ 95 (92-98):

առումով կարևոր դեր խաղալ: 1945 թ. սահմանափակումները նվազեցին, և այդուհետ Ղայաստանի Ղայկական եկեղեցին գործեց խորհրդային ղետության իր համար որոշած սահմաններում: Միևնույն ժամանակ ոչ մի կերպ չղաղարեց աշխարհիկացմանն ուղղված գաղափարախոսության տարածումը:

Ղայ Առաքելական եկեղեցին, բացի կրոնը սղասարկողի գործառույթ կատարելուց, խորաղես արմատացած էր հայերի առօրյա մշակույթում՝ տոնակատարություններում, ծեսերում, ընտանեկան ու ներհամայնական հարաբերությունների սղհիալ-տնտեսական հարցերում: Այն էթնիկ ինքնության¹⁰ հիմնապուններից էր նույնիսկ նրանց համար, ուլքեր ներգրավված չէին կրոնական ծեսերում և ում համար կրոնական ինքնությունը ստորաղասված էր քաղաքացիականին կամ ընղամենը էթնիկ ինքնության մասն էր: Ուստիև, ցանկացած քայլ՝ ուղղված հարազատ կենսամնի փոփոխության, գրերթ ինքնաբերաբար մղում էր ղիմաղղության:

Չմայած «Մարտնչող անասովածների» միության¹¹ ակտիվ գործունեության, ինչղես նաս ղետական աթեիզմի (госатеизм) գաղափարախոսության միջոցով հասարակության բոլոր շերտերից կրոնի վերացման քաղաքականությանը՝ այնուամենայնիվ, խորհրդային տարիներին բազմաղթիվ կրոնական ծեսեր գաղտնի իրականացղում էին:

Տարատեսակ արգելքների և սահմանափակումների ղյալմաններում կրոնական ծիսակատարությունների իրականացղումը

մին և Անղրերկրեղմին, որով հիմնավորում էր էջմիածնում կաթողիկոս ընտրելու համար եկեղեցական ժողով գումարելու անիրամեշտությունը: Նամակում նախատաջ ընղգծղում էր էջմիածնի քաղաքական նշանակությունը արտասահմանի թեմերի համար, էջմիածնիը խորհրդային իշխանության շահերին ծաղայեցնելու կարևորությունը՝ «հայկական եկեղեցու և նրա արտասահմանյան ներկայացուցիչներին շեղորացնելու, հնարավորինս վնասագերծելու նղատակով»:

¹⁰ R. Panossian, *The Armenians: from Kings and Priests to Merchants and Commissars*, New York, US: Columbia University Press, 2006, p. 350-356; L. Abrahamian, *Armenian Identity in a Changing World*, Costa Mesa: Mazda press, 2006.

¹¹ 1925 թ. հիմնղում է ԽՍՀՄ «Անասովածների միությունը», որը չորս տարի անց վերանղանղվեց «Մարտնչող անասովածների միությունը»: Միության գործունեության արղյունքներից է համարղում այն, որ 1937 թ. ԽՍՀՄ-ն հռչակղեց «համատարած աթեիզմի երկիր»: Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու ղատամության, 1921-1938 թթ., Երևան, 1994, էջ 3: 1928 թ. հռղեմերին Անասովածների միությունը առաջին կոնգրեսն է անցկացղում Երևանում: Տե՛ս Ա. Աթան, Ղայ կեսանք // «Ղայրենիք» ամսագիր, Է տարի, թի 3 (Յունուար 1929), էջ 171-172:

քաղաքականության թիրախ դարձրեց նաև կրոնն ու կրոնական սոցիալականություններին¹⁵:

Թեև կոմունիստական կուսակցությունը կոլեկտիվացումը ներկայացնում էր որդեա գյուղի սոցիալիստական վերափոխման կարևոր նախադրյալն, այն իրականում «գյուղի հետամնացության» դեմ դայքարում «ժամանակակից», «առաջադեմ» ուժերի՝ գյուղական մշակույթին հայտարարած դատերազմ էր նշանակում¹⁶:

Գյուղական մշակույթը, իր մեջ ամփոփելով կրոնական, ներընտանեկան, ներհամայնքային և հասարակական տեղական տարբեր ավանդույթներ, հավատալիքներ, սնահավատություններ, յուրօրինակ այլախոհության «օջախ»¹⁷ էր (օրինակ՝ մոգություններ կատարելու հակումը, մարգարեի վերադարձի սպասումը, ավագակների ու դիմադրության նահատակների գովաբանումը ևն) և դրանով իսկ դառնում էր գյուղի ինքնավարության, անկախության խորհրդանիշ: Ե՛վ կրոնի, և՛ եկեղեցու դեմ ուղղված միջոցառումներն ըստ էության թիրախավորում և ոչնչացնում էին նաև գյուղական մշակույթի մի հատվածը, իսկ համատարած բռնի կոլեկտիվացման տարիներին այս երևույթը վերաճեց կրոնական ինստիտուտների և սիմվոլների դեմ ուղղված իսկական դատերազմի:

1929 թ. երկրորդ կեսից կոմունիստների վարչական կարգով եկեղեցիների փակումը¹⁸, զանգակատների ավերումը, զանգերի

¹⁵ Ըստ Ա. Մանուկյանի՝ 1930-ականներին Նայաստանում բռնաճնշման էին ենթարկվել 161 հոգևորական՝ հայ առաքելական, հայ կաթոլիկ, հայ ավետարանական եկեղեցիներին ծառայող: Նրանցից 91-ի համար կայացվել էր զնդակահարության որոշում: Տե՛ս Ա. Մանուկյան, նշվ. աշխ., էջ 128-129:

¹⁶ Ըստ ՆամԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Լ. Կազանովիչի 1929 թ. ստորագրած հրահանգի՝ եկեղեցական կառույցները միակ ազատ գործող հակահեղափոխական կազմակերպություններն էին: Ըստ ՆԿ(բ)Կ կենտկոմի 1929 թ. մարտի 14 «Նախակրոնական աշխատանքի ուժեղացման մասին» նամակի՝ խորհրդային իշխանության դեմ միասնական ճակատով հանդես էին գալիս հակախորհրդային տարրերը՝ կոլակը, մեղմանը և հոգևորականությունը՝ ՆՅԴ-ի կոլեկտիվության: Նամատարան կոլեկտիվացման շրջանակներում քահանաները ենթակա էին ունեզրկման և արտաքսման իրենց բնակավայրերից: Դաժան ձևով շարունակվում էին հալածանքներն ու բռնաճշումները եկեղեցու սոցիալականության: Նամատարան, փակվում էին եկեղեցիներ ու վանքեր, իսկ եկեղեցական սոցիալականությունը, ինչու էլ հասարակության մյուս խավերի ներկայացուցիչները, զանգվածաբար բանտարկվում ու արսորվում էին: Տե՛ս Ա. Մանուկյան, նշվ. աշխ., էջ 28-42:

¹⁷ J. C. Scott, *Domination and the Arts of Resistance: Hidden Transcripts*, New Haven: Yale University Press, 1990, p. 11.

¹⁸ 1929 թ. մայիսին Սովետների XIV համաժողովում ընդունվեց ՌՍԲՍՄ Սահմանադրության 4-րդ հոդվածի նոր ձևակերպումը. «Կրոնական և հակաքրիստոնեական քարոզչության ազատության» փոխարեն ճանաչվեց «կրոնական դավանանքի

յուրացումը, հոգևորականների ձերբակալումն ու գնդակահարությունները զանգվածային բնույթ էին կրում¹⁹: Արգելվում էին կրոնական տոները²⁰, գյուղացիներից շատերին ստիղում էին հանձնել սրբադատներին ու խաչերը: Որոշ շրջանների կառավարման մարմիններ, սոցիալիստական մրցակցությամբ տարված, առավելագույն թվով եկեղեցիներ փակեցին²¹: Խորհրդային Նայաստանի վարչական ծրագրերի համաձայն՝ գյուղերում եկեղեցիները վերածվեցին գոմերի, աղբանոցների, ցախատների, տախտակների և ակումբների²²: Նամանոսի գյուղերի մասին բազմիցս տատնում էին նաև իմ գրուցակիցները: Օրինակ, գյուղի եկեղեցին փակելու մասին նման դատաւարություններ կան Գուրգեն Սահակյանի մանկության շրջանի հիշողություններում: Չնայած իր մանկահասակ տարիքին՝ գրուցակիցս ամենայն մանրամասնությամբ հիշում էր եկեղեցու փակման ընթացքը՝ գյուղացիների ներկայությամբ տեղական իշխանական մարմինների՝ եկեղեցու գույքի առգրավումը:

«1938 թ. մեր եկեղեցին ամբողջը տարան, կանայք հավաքվել էին, դառավները լաց էին լինում, մենք երեխա [էինք], գնացինք տեսնելու, մեզ հետացրին, էն ժամանակ մեքենա չկար, ձիու Ֆորզոնով էին էկել: Եկեղեցու մեջի էղածը ամբողջը տարան՝ սրբակարներ են, ամբողջ դատարկեցին: Մի մասը ասեցին Արթիկի էն վանք են տարել, մյուս մասն էլ մինչև հիմի ասում են թե... Լենինագանի էր Աստվածածնա խաչված Քրիստոսը դա մեր գյուղի եկեղեցուց է²³: Փակեցին եկեղեցին, տերտեր, բան չկար, որին

ազատություն և հակաքրիստոնեական բարոզություն»-ը, որը հավատացյալներին դրեց այլ քաղաքացիների հետ անհավասար վիճակում:

¹⁹ Արդեն 1937 թ. վերջին Նայաստանում փակվել էր 800 եկեղեցի: Դիմելով ՆՍՄԿ ներքին գործերի ժողովին՝ Խորեն Ա կաթողիկոսը գրում է. «Նուսով ենք, որ մեր խնդիրը ուշադրության կառնվի, քանի որ ամբողջ Նայաստանում չորս եկեղեցի է մնացել, իսկ 800-ից ավելի եկեղեցի հետգիտես փակվել են մեծ մասամբ վարչական նդանակով որդիսի գործելակերպը վերջերս էլ դատադարտվում է կենտրոնական իշխանության կողմից»:

²⁰ Համաձայն ԽՍՀՄ ՆԳԺ-ի հոկտեմբերի 14, 1929 թ. շրջաբերականի՝ հոգևորականներին արգելվում էր իրականացնել մկրտություն, թյփատում, հոգեհանգստի և դասակարգության ևն ծիսակատարություններ: Տե՛ս Биоллетень НКВД РСФСР, 1929, No 38:

²¹ Տե՛ս Ստեփան Կերտոզ, 1930 թ. Հակակոլտնտեսային աղտամբական ելույթները Դարալագյազի (Վայոց ձորի) գավառում և Նայաստանի մյուս շրջաններում, Երևան. Պատմության ինստիտուտ, էջ 25:

²² K. Tzitzernak, Aghasi Khanjian //Armenian review, vol. 3, N 2 (1950), p. 56.

²³ Գյումրիում խաչված Քրիստոսի այդ քանդակի վերաբերյալ գրանցվել է մեկ այլ քաղաքություն, որ այն իբր Գյումրու կաթողիկ Մք. Աստվածածնի եկեղեցուց է տեղափոխվել Սուրբ Յոթ Վերք կան Մք. Աստվածածին Մայր եկեղեցի 1926 թ.

աքտրեցիմ, հետո դարձրեցին ցորենի տյահեստ, զարու տյահեստ: Վիմնականում են հիշում են ըստեղ լցված էր քամահար, ձեռով մաղում են, ցորենի մեքենա, ցորենի էղ ավելորդ խզուզը լցված էր եկեղեցու անկյունում: Երեք ձիու հուրզոն միլիցիաներով եկեղեցուց հանված բաները լցնում էին հուրզոնի վրա, կանայք էլ երեսները փակ լաց ին լինում «Վայ, վայ» ասում, միլիցիաները չէին թողնում մոտիկ, ասում էին՝ գնացեք հեռու: Գյուղատվետի նախագահ, կոլխոզի նախագահ, կուսկազմակերպության քարտուղար բոլորը մասնակցում էին: Էղ ժամանակ գյուղատվետի նախագահ՝ Ամբակում էր անունը, կոծ էր հագել՝ շագանակագույն, զարմացած նայում էինք. «ոես, կոժ է հագել»²⁴:

Խորհրդային Ղայաստանում եկեղեցիների փակված մասին կան ոչ միայն անձնական, այլև «փոխանցված» հիշողություններ: Վարդենիկ գյուղի բնակիչ Ս.Ս.-ն մեր հարցազրույցի ժամանակ կարծես վերարտադրում է համայնքային մի առաստիլականացված դատում.

«Վաղ շրջանում, որ նոր են եղել, որ Լենինը, Ստալինը մերժել են կրոնը, կրոնը համարել են հաշիշ, թույն, ժողովրդի մեջից թույնը ղետք է վերացնես: Բոլորի աչքի առաջ հրաման են տվել կոմունիստներին՝ գնացե՛ք, քանդե՛ք: Ռայկոմ կանչել ա նախագահին՝ գնա, էս մատուռը վերացրու: Կարա՞ր չվերացնենք, չէ ուրեմն աշխատանքից կհեռացնեն: Գնացեք էսինչ տերտերն ձերբակալեք, տարեք: Տերտերին կոմունիստները տղանել են հենց իր տան մեջ: Փորձել ա թաքնվել, կոմունիստները գնացել բռնել են տան մեջ, մորթել են»²⁵:

Խորհրդային տարիներին եկեղեցիների ավերմանն ակտիվ մասնակցածների ընտանիքներն արդեն հետխորհրդային շրջանում նախաձեռնել են այդ նույն եկեղեցիների վերակառուցումը: Նետաքրքրական է, որ գյուղական դատումներում մի քանի անգամ կրկնվում է այն սյուժեն, որ եկեղեցիների քանդման մասնակիցները կամ նրանց ընտանիքի անդամները կրել են «աստվածային դատիժ»:

երկարաշրթից հետո, երբ կաթոլիկ եկեղեցին մասամբ փլուզվել էր: Մնաց քանդակներ Ղայ Առաքելական եկեղեցին չէր ընդունում և որոշես կանոն իր եկեղեցիներում թույլ չէր տալիս տեղադրել: Ե՛վ Փանիկի, և՛ Գյումրու վերոհիշյալ փլուզված եկեղեցիները կաթոլիկ էին: Խորհրդային տարիներին Սուրբ Յոթ վերջ եկեղեցին սոխաարկել է միաժամանակ 3 կրոնական համայնք՝ հայ առաքելական, հայ կաթոլիկ և ռուս ուղղափառ եկեղեցու հետևորդներին:

²⁴ Նելլի Մանուչարյան, Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), Փանիկ, 2018, Գուրզեն Մահակյան, 86 տարեկան:

²⁵ Նելլի Մանուչարյան, ԴԱՆ, Վարդենիկ, 2018, Ս.Ս., 76 տարեկան:

«Նենց գյուղի կոմունիստը դառալայիս հորոխտոր տղեն՝ էր Ա.Ա. է էդեն, որ նրա երեք տղեն ջահել-ջահել մահացել են, և ժողովուրդը վերագրել է նրան, որ դա սրբօջախներն ա քանդել, վերացրել է: Էդի քանդել էին լոխվ, դրա փայտերն էլ տարել ա կոլտնտեսություն գոմեր ա կառուցե, էդ մեր ազգականն էլ մի քանի փայտի կտոր տարել ա իր տան օձիթ[ք]ն»²⁶ ա վերակառուցել, և էդ տունը փլվել ա, մահացել են շատեր, վերագրել են սրբու փետը բերեց, այնինչ, որ էն առողջ փետերը կոլխոգ տարել են, էն փտածներ մնացե, էդ խեղճն ա բերե, փտած փայտն էլ ջարդվում ա, հասկացար: Եվ էդ կինը էնքան համարձակ ա էդել (դրա ախտոր էրեխերն են կառուցել էս եկեղեցին), էդ կինը, որ բերել ա տուն, վերանորոգել ա, տունը փլվել ա էրեխերի վրա, մահացել են, և դրա ախտոր էրեխերը կառուցեցին էս սրբատեղը, եկեղեցին: Կոմունիստները լրիվ քանդել էին, ալերել էին, ծածկ չկար, մնացել էր ալերված, բայց հավատացյալները էդ խաչքարերին միշտ խնկարկել են, ճոճ վառել են, խուց էլ կար: Մեր ժողովուրդը ըմբոստ ժողովուրդ էլ է եղել, լսո՞ւմ ես, նաև անվախ ժողովուրդ ա եղել: Մի հատ էլ վանք կա էս վերևի լքված գյուղ ա, որ [19]49 թ. տեղափոխեցին Արարատյան դաշտ, էտ լրիվ քարից ա, ծածկ, փայտ չկա այնտեղ, փոքր գյուղ է, վերաբնակեցրին, բայց էտ եկեղեցին մնում ա: Նա գյուղի մեջ ա եղել, ժողովրդի աչքի առաջ ա եղել: Էտեղ նաև եղել ա մատուռ, որ ժողովուրդը միշտ մատաղ ա արել, ժողովուրդը բողոքել են կեսը, որ մատուռը դիտի վերանա»²⁷:

ԿՆՈՒՆՔՆԵՐԻ «ԺՆՈՐՆՐԴԱՅԻՆ» ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ

Խորհրդային տարիներին աշխարհիկացման քաղաքականությանն ղայմաններում հավատացյալ համայնքը, լուրջ դեմքերում ինքնակազմակերպվում էր՝²⁸ գաղտնի դիմելով բազմաթիվ անօրինական գործողությունների: Այս երևույթը վկայում էր խորհրդային սոցիալ-քաղաքական իրողություններին հավատացյալների գործնական հար-

²⁶ Օճորք, գ. (բրբ.) առաստաղ, ձեղուն, առիթ: տե՛ս Ժամանակակից Նայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Երևան. Նայկական ՍՄԿ Գիտությունների Ակադեմիայի Նրատարակչություն, 1969, էջ 785:

²⁷ Նելլի Մանուչարյան, ԴԱՆ, Վարդենիկ, 2018, Ա.Ա., 76 տարեկան:

²⁸ Տե՛ս Գ. Եագոյան, Ամբողջատիրական առօրյա (սոցիալական հարաբերությունների փոփոխությունները ստալինյան արդիականացման ղայմաններում) // Ստալինյան բռնամեջուրները Նայատանում. ղատմություն, հիշողություն, առօրյա, Երևան. Գիտություն, 2015, էջ 179:

մարվողականության մասին: Նեց այդդիսի գործնական հարմարվողականությունը Վիլյամ Ֆլետչերը համարում է եկեղեցու հիմնական առավելությունը գոյատևման դայքարում²⁹:

Պաշտոնադես փակված եկեղեցիների ադորինի բացումը, այնտեղ մոմավառության, հոգևոր արարողակարգերի անցկացումը բավականին տարածված դրակտիկա էր հայաստանյան տարբեր բնակավայրերի հավատացյալների համար: Նաճախ այս կարգի գործողությունները հնարավոր էին դառնում տեղական իշխանությունների «միտումնավոր անգիտության» արդյունքում:

Նամաճայն բանավոր դատմությունների՝ այդ եկեղեցիների հարակից բնակավայրերի բնակչությունը ստանձնում էր նաև եկեղեցու խնամքը: Չրուցակիցներիցս մեկի հիշատակման համաձայն՝ *«Եկեղեցին փակ էր, ինքը՝ հորոխտորս կինը՝ Միման, գալիս բացում մաքրում էր, կային մարդիկ գալիս մոմ էին վառում, բոլորը գալիս մոմ էին վառում, մի հատ նվեր էին բերում դնում եկեղեցում, Նիսուսի նկար, էի, ինքնաբուխ ձևով էր եկեղեցին աշխատում էր»*³⁰:

Այս յուրօրինակ ծեսերը, որոնք իրականացվում էին առանց հոգևորականի, ըստ էության ժողովրդական կամ վերնակույլար քրիստոնեության դրսևորումներ էին: Նման արարողությունները կատարվում էին հիմնականում հավատացյալների կողմից՝ հոգևոր հոր բացակայության դայմաններում: Նասարակությունը հենց ինքն էր ընտրում և իր միջից մեկին նշանակում «հոգևոր առաջնորդ»:

*«Մեր գյուղը աղաշ էին ասում, աղոթք էր անում, ասենք, թաղման ժամանակ տանում էին, ինքը եկեղեցու տերտեր չէր, տիրացու չէր, բայց աղոթք գիտեր, էդդիսիք կային: Օրինակ քեռուս տղեքից տիրացու էին ասում: Յուրաքանչյուր գյուղ ինչ-որ անլեզալ հոգևորական ունեին: Ասենք, եթե մի բան լիներ, գնում էին դրա մոտ, ինքը օֆիցիալ տերտեր չէր, բայց գյուղը ընտրել էր դրան, որտև ինքը աղոթքներ շատ գիտեր, ձայնն էր լավը, կամ մեռոն էին ասում, մեռոնում էր: Ըսաշով կնունքը հետո եղավ. որ ծնվում էր երեխան, եթե տերտեր չկար, մեռոնաջուր էին լցնում, օրհնած ջուր էին լցնում վրենն»*³¹:

²⁹ St' u W. Fletcher, A Study in Survival: The Church in Russia 1927–1943. London: S.P.C.K., 1965, p. 4:

³⁰ Նելլի Մանուչարյան, ԴԱՆ, Փանիկ, 2018, Ստեփան Նահապետյան, 71 տարեկան:

³¹ Նելլի Մանուչարյան, ԴԱՆ, Փանիկ, 2018, Գորգեն Սահակյան, 86 տարեկան:

Եկեղեցում կամ դրանից դուրս իրականացվող «ժողովրդակա-
 նացված» ծեսերի տարածումը վկայում էր այն մասին, որ եկեղե-
 ցիների և գյուղական հոգևորականության թվի կրճատումը ինք-
 նաբերաբար չհանգեցրեց «բնակչության հեռացմանը կրոնից կամ
 հավատքից», այլ խթանեց նրանց կրոնական զգացմունքները, ինք-
 նուրյան ուժերով անցկացվող ծեսերը: Նոգևորականների և հավա-
 տացյալների վերածնավորված հարաբերությունների մասին Վլադ
 Նաումեսկուն գրում է. «Երբ խորհրդային քաղաքականության իրա-
 կանացման արդյունքում ավանդական եկեղեցական ծովսն ավեր-
 վել էր, հոգևորականների և հավատացյալների միջև ձևավորվեց
 հարաբերությունների բոլորովին նոր տեսակ, որից առաջացան բո-
 լորովին նոր կոլեկտիվ տրակտիկաներ... որոնք լրացուցիչ բարձ-
 րացրին հավատացյալների ներգրավվածությունը»³²:

Այս իրավիճակում խորհրդային տարիներին կնունքի արարո-
 ղությունը ձեռք է բերում «նոր» դրսևորումներ և տրակտիկաներ,
 որոնք հաճախ կիրառվում էին ընտանեկան, համայնքային և
 դաշտոնական գաղտնիության մթնոլորտում: Այս երևույթը
 դայանավորված էր նրանով, որ տետական և եկեղեցական
 մարմինները քահանաներից դահանջում էին իրականացված
 յուրաքանչյուր արարարողության հաշվետվություն³³, որը թույլ
 կտար մշտադեռ դահել տեղեկացվածությունը հասարակու-
 թյան կրոնականության աստիճանի վերաբերյալ:

Մրանով, փաստորեն, քահանան դարտավորվում էր համագոր-
 ծակցել տետական գաղտնի ծառայությունների հետ և «մատ-
 նել» Մայր եկեղեցու հովանու տակ դաշտոնություն փնտրող
եկեղեցու զավակներին: Ի տատասխան այս օրենքի՝ հոգևորա-
 կանությունը դիմեց օրենքի շրջանցման իր «զենքին»³⁴ և անցավ
 գաղտնի ծիսակատարությունների, որոնց տարածվածության և
 յուրահատկությունների մասին տեղեկություն են հաղորդում
 հիմնականում բանավոր աղբյուրներն ու անուղղակի վկայու-

³² Sh' u V. Naumescu, *Modes of Religiosity in Eastern Christianity: Religious Processes and Social Change in Ukraine*, Berlin: Lit Verlag, 2008, p. 135:

³³ Վավերագրեր հայ եկեղեցու դատմության, 1921-1938 թթ., Երևան, Ա.հ., 1994, էջ 4:

³⁴ Scott J. C., *Weapons of the Weak: Everyday Forms of Peasant Resistance*, New Haven and London: Yale University Press, 1985. Ըստ Ջ. Սքոթի՝ այսուհետ կոչված իրական դիմադրությունը տետք է. ա) լինի հավաքական և կազմակերպված, այլ ոչ թե մաս-
 անավոր և անկազմակերպ, բ) լինի սկզբունքային և անձնագոհ, ոչ թե դատեհադաշ-
 տական և եսասիրական, գ) ենթադրի հեղափոխական հետևանքներ, դ) հերքի և ոչ
 թե արդարացնի գործող կարգերը: Scott J. *Hegemony and the Peasantry // Politics and Society*, 1977, vol. 7, №3, p. 271:

թյունները: Սրա մասին իր գրույցում նշում է Նայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ, գերաշնորհ Ս. Միքայել եղիսկոպոս Աջադահյանը. «Եկեղեցին չէր գրանցում ու ճիշտ էլ անում էր, որ չէր գրանցում, կարող էր գալ ԿԳԲ-են վերցնել էր գրանցումները ու տաներ»³⁵:

Գաղտնի մկրտությունը դարձավ ամենատարածված ծեսը, որի Պատճառները դեռ է փնտրել հայոց եկեղեցում այդ խորհրդի նշանակության մեջ: Ըստ դեղքերում հենց գաղտնիությամբ էր ղայմանավորված դրանց ոչ կանոնիկ, երբեմն Նայ առաքելական եկեղեցու ղաշտոնական ծիսակարգին չհամադատասխանող, ժողովրդական ծիսականության դրսևորումները:

«Չէ, եկեղեցում ոչ մեկ, տան մեջ, գաղտնի էն էլ: Էն ժամանակ ոչ մի նվիրատվություն էլ չի էղել, ուղղակի էկել են, հնարավոր ա, գաղտնի տերտեր էլ բերած լինեն, գաղտնի, որ ոչ մեկ չիմանա, լսո՞ւմ ես, ջրի մեջ լողացրել են, մեռոն են կաթեցրել, սոյի-տակ սավանի մեջ են փաթաթել ու դարձել ա իմ կնքահայրը, ղաշտել են իրեն, ինքն էլ ինձ: Խոնրի շուրջ են կնքվել: Էն վախտ բոլորը թոնրատուն ունեին, լսո՞ւմ ես, թոնրատան շուրջ, բերել են տաշտ, ինձ դրել են տաշտի մեջ, մեռոն ջուր լցրել են վրես, լողացրել են, էս-էն, հետո գրկել են, փաթաթել են սոյիտակ շորի մեջ, դարձել ա օրինական կնքահայր, ու ղաշտել են մինչև վերջ որդես մեր ընտանիքի քավորը»³⁶:

Ի լրումն այս թեզի՝ գրանցածս բանավոր ղատմությունները հաճախ վկայում են այս երկու երևույթների փոխլրացման մասին: Չրուցակիցներիցս շատերի կենսագրական ղատմություններում նշվում է կրկնա/բազմա-մկրտությունների, աշխարհական մեկի կամ առհասարակ օծում ու ձեռնադրություն շունեցող մեկի կողմից կատարված մկրտությունների մասին:

Այս հետազոտության ընթացքում գրանցածս բանավոր ղատմություններում կարելի է առանձնացնել խորհրդային շրջանում իրականացվող կնունքների մի քանի տարբերակներ.

■ կրկնա/բազմա-մկրտություններ

«Երեխաներ կային, որ մկրտվում էին մի քանի անգամ, ասենք

³⁵ Գայանե Շագոյան, ԴԱՆ, Գյումրի, 2017, գերաշնորհ Ս. Միքայել եղիսկոպոս Աջադահյան, 54 տարեկան:

³⁶ Նեյի Մանուչարյան, ԴԱՆ, Վարդենիկ, 2018, Ս.Ս., 76 տարեկան:

հորական տատն էր բերում, մի հատ մկրտվում էր, ոչ մեկին չասելով, հետո մորական տատն էր բերում մկրտում էլի ոչ մեկին չասելով, հետո ասենք հորաբայրն էր բերում, էլի ոչ մեկին չասելով, հետո տարիներ հետո իրար խոստովանում էին՝ ասելով, - բա, աղշի, բա ես էլ էի տարել»³⁷:

Ուշագրավ է, որ բերված օրինակում գաղտնի մկրտության նախաձեռնողները հիմնականում կանայք են: Մա արտացոլում էր կրոնի գենդերային ներգրավվածությունը հատկապես մկրտության հարցում, որն ընկալվում էր որդես նորածնի խնամքի մի կարևոր դրամա: Իսկ քանի որ մանկան խնամքի հետ կապված հարցերը հիմնականում մնում էին կանանց անելիքի դաշտում, առաջ գաղտնի մկրտությունների կազմակերպումն էլ, ինչդեռ տեսնում ենք, ավելի շատ «կանանց գործն» էր:

■ աշխարհական մեկի կողմից

«Ես էլ չգիտեմ՝ քահանայով եմ կնքվել, թե առանց քահանայի: Մեր մոտ շատ դեղորբերում քահանան չէր թույլատրվում կոմունիստների ժամանակ: Քահանաներին լրիվ ոչնչացրին, սղանին, արտորին: Քահանա չեն թողել, ոչ էլ՝ նրանց օգնական տիրացուներ:... Բա, որովհետև էլ վախտ էլ քահանա չի եղե, որովհետև հենց գյուղի կոմունիստը տառապալիս հորոխտոր տղեն էլ Ա.Ա. է եղե, որ նրա երեք տղեն ջահել-ջահել մահացել են, և ժողովուրդը վերագրել է նրան, որ դա սրբօջախներն աքանդել, վերացրել է»³⁸:

«Մեռողը միշտ եղել է, մեռոնաջուրը: Կնունքը գիտե՞ս ինչ՞ ձևի է եղել, առաջ դառավ կանայք գալիս էին էլ երեխեքին ջրով աղոթք էին անում, հենց ծնվելուց: Մի շարաթական երեխտն մեռոն էին լցնում, աղոթք էին կարդում. դա կնունք, մեռոն էր կոչվում: Ղետո արդեն խաշով տերտերական արդեն կարգ չունի, էլի արարողություն էր, հյուրերով, նվագով, տերտերով, տերտերը աղոթք էր անում, քավոր էին կանգնացնում»³⁹:

Քանի որ մկրտության ծեսը դեռ նախալսորհրդային շրջանում

³⁷ Գայանե Ըագոյան, ԴԱՄ, Գյումրի, 2017, գերաշնորհ Տ. Միքայել եռլիսկոդոս Աջադահյան, 54 տարեկան:

³⁸ Նելլի Մանուչարյան, ԴԱՄ, Վարդենիկ, 2018, Ա.Ա., 76 տարեկան:

³⁹ Նելլի Մանուչարյան, ԴԱՄ, Փանիկ, 2018, Մտեփան Նահապետյան, 71 տարեկան:

ձևավորվել էր նաև ոչ կանոնիկ, ժողովրդական տարբերակով, առաջ եկեղեցու գործունեության արգելքին զուգահեռ այն սկսում է ամբողջությամբ փոխարինել եկեղեցականին ու ավելի տարածվել:

■ օծում ու ձեռնադրություն շունեցող մեկի կողմից

«Ինձ կնքել են գաղտնի, նախկին քահանան, գյուղի նախկին քահանան, որ կարգալույծ էր արված: Գաղտնի, դեռությունից գաղտնի, գալիս էր տուն. կնունքի ծիսակատարությունը կատարվում էր տներում ոչ միայն մեր գյուղում: Կարելի է ասել հայ ժողովուրդը կնքվել է գաղտնի, եկեղեցին, եկեղեցու ղաշտոնյաները մնացին ծղտված, շնայած քահանա[ները] կարգալույծ էին արված, բայց նրանք գործում էին»⁴⁰:

Դեռևս 1921 թ. ընդունված Կենտկոմի որոշումով հակակրոնական դրոշմագանդան շատ չէր շեշտադրվում, սակայն կուսակցության բոլոր անդամները ղարտավորվում էին կա՛մ մերժել կրոնը, կա՛մ հեռանալ կուսակցությունից⁴¹: Այս որոշումը խորհրդային տարբեր ժամանակաշրջաններում՝ հատկապես ստալինյան բռնաճնշումների տարիներին, առավել խստացել է: Այս հանգամանքը շատ հատակ երևում է նաև մեր գրուցակիցների ղատումներում, հատկապես կոմունիստական կուսակցության անդամ ունեցող ընտանիքներում:

«Մտնողներն չի առաջացել, բայց էդ ժամանակ գալստուկով կամ ղարտիականները չէին գնա ժամ և այլն: Մարդ, եթե ղաշտոնական էր, դիրեկտոր էր և այլն, մարդիկ խուսափում էին ժամ գնալուց, նրանք ժամ չէին գնում, որոշես կոմունիստական անդամ չէին գնացել»⁴²:

«Դե, եսիմ, մաման, որ ղարտիական էր, ես հիշում եմ կեսրարս էլ էր ասում, որ եթե կնքում էին երեխեքին, էտ ղարտիականներին չէին ընդունում կամ չէին թողնում: Ղայրս ասում էր, որ հանկարծ կնքեին, չէ՞, ոնց որ արդեն էտ մարդը էտ ղարտիականների կողմից էլ իրավունք շունենար աշխատեր: Մաման ասում

⁴⁰ Նեյլի Մանուչարյան, ԴԱՄ, Վաղաշեն, 2018, Բաղդասար Ղովհաննիսյան, 78 տարեկան:

⁴¹ J.S. Curtiss, op. cit., p. 20.

⁴² Նեյլի Մանուչարյան, ԴԱՄ, Խաչաղբյուր, 2018, Դագարյան Սամվել, 68 տարեկան:

էր, որ եթէ հանկարծ իմանամ, որ ես իմ երեխերին կնքում եմ, հաստատ խնդիրներ կունենար»⁴³:

«Գյուղում կնունք եղել է, բայց ով որ կուսակցական էր, ողարտիական էր, իրանք եկեղեցի չէին գնա, չիղեմ, շոխտի հավատային Աստծուն, և վերջ: Թաքում, հավատում էին, բայց եկեղեցի չէին գնում: Ասենք թե նախագահ էր, հաշվադատ էր, քարտուղար էր, երբեք չէին գնա: Չենք տեսել իրանց եկեղեցի գնալուց: Բայց երեխա կնքում էին: Տնեցիք էին տանում կնքելու եկեղեցի, ասենք, մեր Յոթ վերքը Գյումրիի: Նենց ըդեղ կտանեին, տնեցիք կկնքեին, բայց տունը սեղան կգցեին, կուրախանային, ինքն էլ, էդ ողարտիականը կնստեր սեղանի վերի գլուխը, բայց եկեղեցի չէր գնա: Եկեղեցի էին տանում, հազարից մեկ՝ երբ քահանա հրավիրեին»⁴⁴:

Կուսակցության շարքերից և դաշտոնից հեռացվելու վախով էր դայանավորված նաև այն, որ որոշ դեղքերում քավորները հրաժարվում էին իրենց սաներից, շնայած որ քավորության ինստիտուտը հայերի մեջ ավանդաբար փոխանցվել է նույն ընտանիքի հաջորդ սերնդին: «Քավորը, շատ քավորներ հրաժարվան իրանց սաներներից, որ վախենում էին կոմունիստ էին: Կոմունիստը վախենում էր, կեթային կասեին՝ էսինչ մարդը երեխա ա կնքել: Քավորը կոմունիստ էր, սովորական մարդու շտուժին, բայց կոմունիստներին տուժին»⁴⁵:

Կուսակցականությունը հաճախ ուներ ոչ այնքան գաղափարական բովանդակություն, որքան դայանավորված էր աշխատանքային առաջխաղացման հեռանկարով: Պահելով ձևական դաշտոնական կողմը՝ կուսակցականները հաճախ շրջանցում էին կուսակցական տարբեր արգելքներ, և իրենց հարազատներին խնդրում իրենց անունից մոմ վառել կամ աղոթել ևն. «Մեկ-մեկ մերոնց հետ գալիս եմ, ես նույնիսկ եկեղեցի գնացել եմ, մոմ վառած չկամ, ասում եմ, վառեք իմ տեղը, եթե ուզում եք»⁴⁶:

⁴³ Նեյի Մանուչարյան, ԴԱՆ, Վաղաշեն, 2018, Գոհար Նարությունյան, 78 տարեկան:

⁴⁴ Նեյի Մանուչարյան, ԴԱՆ, Ոսկեհասկ, 2018, Սիրանուշ Մելքոնյան, 67 տարեկան:

⁴⁵ Նեյի Մանուչարյան, ԴԱՆ, Մարտունի, 2018, Ռաֆիկ Գեորգյան, 78 տարեկան:

⁴⁶ Նեյի Մանուչարյան, ԴԱՆ, Վարդենիկ, 2018, Ս.Ս., 76 տարեկան:

Սակավ չէին նաև այն դեղքերը, երբ կուսակցականները օրենքում բացառություններ էին մտցնում՝ «մեղավոր հավատացյալին» արդարացնելու համար: Մեր գրուցակից Սվետա Ասատրյանը հիշում է իր հոր կուսակցական կյանքից մի դիմված.

«Իմ տատաս հիվանդացել ա բուցիլոզ՝ իրա գործի բնույթով (կոլխոզի անասնաբույժ էր), ուզեցել են տանին Սուրբ, որ Սրբի օգնությամբ լավնա, իմ տաբան հրաժարվել է, սել է՝ ես տարտիական եմ, օր իմացան, լավ չի եղնի: Իմ տաղին [տատն է կազմակերպել], կոլխոզի տարտիականների կազմից գողոց դրել են սելի վրա իմ տաբային, տարել են ստեղ Թովհատի կա, տարել են Սուրբ: Նետո գյուղի դեկավարությունը իմացել են, օր Մկոյանը գնացել է Սուրբ, իմ տաբայի հարցը դրել են փակ դռան տակ ժողովի: Ու հետո, որ հաստատվել է, օր ինքը կոլխոզի համար աշխատելու ժամանակ է հիվանդեց, իրան ներել են, տարտիայի շարքերից շեն հեռացրել»⁴⁷:

Այսինքն՝ խնդիրն իսկապես ընկալվում էր ոչ թե գաղափարախոսության դաշտում, այլ հիմնականում՝ վարքային: Ե՛վ դատողները, և՛ դատվողը շեն վիճարկում նման բուժման արդյունավետությունը, այլ քննարկում են «արգելված ոլորտ»-ին դիմելու նդատակահարմարությունը, և միայն հիվանդությունը աշխատավայրում ձեռք բերելու հանգամանքն է, որ արդարացնում է այս «դավաճանական» քայլը:

ԻՆՉՈՒՐ ԿՆՔՎԵԼ

Այս ենթաբաժնում քննարկելու են կրոնի և ինքնության, կրոնական և էթնիկ/ազգային ինքնության հարաբերությունները⁴⁸: Էնթոնի Սմիթն իր աշխատությունում նշում է, որ կրոնն ազգի կամ էթնիկ խմբի համար ինքնության կառուցման հիմնական աստեղծներից է, և որ էթնիկ խումբը մշակութային հավաքական մի միավոր է, որն ընդգծում է նախնիների միջերի և դատմական հիշողության կարևորությունը և ճանաչելի է իր մեկ կամ ավելի մշակութային միավորով (կրոն, լեզու, սովորություններ և այլն):

⁴⁷ Նելլի Մանուչարյան, ԴԱՄ, Ոսկեհասկ, 2018, Սվետա Ասատրյան, 70 տարեկան:

⁴⁸ Տե՛ս A. Smith, National Identity, University of Nevada press, 1991; B.-A. J. Rieffer, Religion and Nationalism: Understanding the Consequences of a Complex Relationship, SAGE publications, 2003, p. 216; R. Brubaker, Religion and Nationalism: Four Approaches // Nations and Nationalism, 18(1), 2012, pp. 2-20:

Նայերիս դեղորմը ղեկավարության բացակայության դարձան-
ներում դարեր շարունակ եկեղեցին էր այն ինստիտուտը, որը
դաշտոնադեմ առաջնորդում էր ազգը, միավորում սփյուռքը,
ստանձնում կրթական և մշակութային, քաղաքական ու ներկա-
յացուցչական գործառույթներ⁴⁹:

Այս առումով խորհրդային տարիներին մկրտությունը որդես էթ-
նիկ/ազգային ինքնության շարունակականությունը դահողանե-
լու գործիքի ընկալում հանդիտում ենք հատկապես Նայոց
ցեղաստանության հետևանքով Արևմտյան Նայաստանից վե-
րաբնակեցվածների⁵⁰ սերունդների բանավոր պատմություննե-
րում: Մեր գրուցակիցներից մեկի մեկնաբանությամբ՝ մկրտու-
թյունն ուներ հայադահողանության գործառույթ, ինչը նա բա-
ցատրում էր՝ մկրտությունը որդես հային թուրքից տարբերակող
ծիսակարգ: Մի հանգամանք, որը հատկապես արդիական էր
արևմտահայերի մոտ. բազմակրոն և բազմեղանիկ միջավայրում
էթնիկ ինքնությունը դահողանելու համար կրոնը դառնում էր
կարևոր գործոններից մեկը:

*«Կնունքը ըղիկ քրիստոնեություն էր, քրիստոնյա երեխեք կկըն-
քեին, որ հայ մնան, թուրք չմնան, որ դու քավոր շքոնես, երեխին
չկնքես, դու քո հայությունը ինչով ես դահում: Ըստ կներքե,
թուրքերը տղուն, իմացած կըլներ [զիտեր] ինչ ձև կկնքես, բայց
մեր մոտ չէ, մերոնց ձեթ կկաթուցին ջրի մեջ, երեսին՝ մեռոն էր,
դրեցին էղավ, քսեցին ճակտին խաչ արեցին, էղավ հայ»⁵¹:*

*«Նայ են, որ չկնքվեն՝ քա թուրք են: Թուրքը քրիստոնյա չէ:
Քրիստոնյան տիտի էլ մեռոնը անդայման քսեն երեսին: Եթե
չկնքվեն, ժողովուրդը չի սիրի անկնունք մարդու, կսե՛ ուրեմն
դու թուրք ես, օր շես կնքվել, հայը տիտի կնքվի անդայման,
կսեն՝ հո դու թուրք շես, շես կնքվել: Բոլորը կնքված էին, մեր
զյուղը Արևմտյան Նայաստանից, Մշից գաղթածներն են, շատ-
շատ հավատքով էին: Մշեցիների մոտ մեկ էլ մի խոսք կար,
կսեն՝ օր առանց կնունք, առանց մեռոնի հանկարծ մահանան,*

⁴⁹ Տե՛ս օրինակ L. Abrahamian, Armenian Identity in a Changing World, Mazda press, 2006, p. 115:

⁵⁰ Նմտ. Գ. Ըագոյան, Ամբողջատիրական առօրյա (սոցիալական հարաբերություն-
ների փոփոխությունները ստալինյան արդիականացման դարձաններում), էջ 180:

⁵¹ Նեյի Մանուչարյան, ԴԱՆ, Ռակեհասկ, 2018, Վարություն Բաղդասարյան, 81 տա-
րեկան:

թաղեն, կղաղնան գոռնափշտիկ⁵², լսած կա՞ր էր բառը, մեծերը ըղդեն կսեին: Ինձ Տարել են Յոթ Վերք [եկեղեցի Գյումրիում], մենք ունեցել ենք տաղական քավոր, մամայիս դատայիս դաս-կի քավոր է էղև, ու ինքը, իրա տղերքը կայնել են մեզի քավոր, մեր փոքր քույրը, փոքր էր, հիվանդ էր, մենք վեց էրեխա ենք, շատ հիվանդ էր, տաղաս էլ գնացել էր արտագնա աշխատանքի: Էս հորքորս մամայիս ասեց, արի տանենք կնքենք, հանկարծ մահանա, առանց կնունք առանց մեռոնի չմահանա: Շատ վատ էր: Գրկեցին, մամաս ու հորքորս տարան եկեղեցի, քավորին էլ մարդ չկար ըղեղ, գնացել մտել են եկեղեցի տեսն մի հատ տղա մո՞ժ կվառեր, խա՞ կաներ երեսին, գնացինք. «Տղա ջան, ստեղի՞ց ես», - «Նա, ոյիտի գնամ արտագնա աշխատանքի, եկել եմ մո՞ժ վառեմ ու գնամ»: Ասել են՝ կարո՞ղ ա քավոր կանգնես մեր էրեխին, ասել է՝ մեծ ուրախությամբ: Գրկել էր էրեխին, կնքել էին, բերին տուն, ոչ մի բժիշկ, լավագավ էր քույրս: Մեր գյուղը Արևմտյան Ղայաստանից, Մշից գաղթածներն են, շատ-շատ հավատորով էին»⁵³:

«Կնքվելուց հետո ինչխոր հայ ըզգացինք մեզի, էն վախտ, օր մենք էրեխայինք, տատիները կըսեին, ով որ կնքված չէ՞ թուրք է: Ինչ հայ, եթե չկնքվի»⁵⁴:

Ի տարբերություն վերոնշյալի՝ Արևելյան Ղայաստանում ավելի վաղ վերաբնակեցված բնակչությունը խորհրդային տարիներին մկրտությունը դիտում էր որդես հասարակության կողմից ընդունված և դարտադիր համարվող ծիսակարգ: Նաճախ նույնիսկ մկրտության խորհուրդը չեն մեկնաբանում, այլ դարգատես նշում են, որ սովորությանին ուժով/ժողովրդական ավանդությո՞վ էր շարունակվում այն: Չբուցակիցներիս դատմության համաձայն.

«Էս կնունքը, էղի օրենք էր, էրեխեն ծնվավ՝ ոյիտի կնքեն, եթե

⁵² Գոռնափշտիկ՝ «ուրու, ուրվական, իր մահմեդականի գերեզմանից դուրս եկած մեռել» (Արարատյան, Շիրակ, Բաղեշ): – Ղայոց լեզվի բարբառային բառարան, Ղրաշյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան. Նաիրի, 2001-2002, էջ 305: Այս երևույթի մասին մանրամասն տե՛ս Ն. Գալստյան, Ուրվական-գոռնափշտիկների հավատալիքը և դատկերացումները // Պատմա-բանասիրական հանդես, №3 (2012), Երևան, էջ 162-168:

⁵³ Նեյլի Մանուչարյան, ԴԱՆ, Ոսկեհասկ, 2018, Սիրանուշ Մելքոնյան, 67 տարեկան: Նճմտ. Ոսկեհասկ, 2018, Մարիամ Մալխասյան, 67 տարեկան:

⁵⁴ Նեյլի Մանուչարյան, ԴԱՆ, Ոսկեհասկ, 2018, Մուսաննա Սերոբյան, 67 տարեկան: Նճմտ. Փանիկ, 2018, Գուրգեն Մահակյան, 86 տարեկան:

⁵⁵ Նեյլի Մանուչարյան, ԴԱՆ, Մարտունի, 2018, Ռաֆիկ Գևորգյան, 78 տարեկան:

չկնքեն էդ էրեխի մոր ձեռի հացն էլ շողին»⁵⁵: Կամ՝ «Ժնձ կնքեցին [19]40-ականներին, հիմա էլ մարդիկ հավատարիմ են ժողովրդական ավանդույթներին, նա երկնքից չէր, նա դարտադիր էր... հիմա, սովետի ժամանակ կար բարոյական մարդու կողեքսը, տասը բարոյական կողեքսը վերցված էր Աստվածաշնչից»⁵⁶:

Այսդիսով, մկրտությունն ընկալվում էր գրեթե որդես ազգային նվիրագործման ծես, որը դարտադիր էր վկայակոչելու ազգի մաս կազմելը թե՛ արևելահայերի մեջ և թե՛ արևմտահայերի, շնայած ծեսի իրականացման ձևերն ու մոտեցումները կարող էին տարբերվել: Մկրտությունն իր հետ ընտանեկան առօրյայի մաս է դարձնում որոշ այլ կրոնական դրակտիկաներ ևս, որոնք ընկալվում էին որդես մկրտության ծեսին դարտադիր ուղեկցող հանգամանքներ: Այսդես, խորհրդային տարիներին տարածված էր մկրտություններն ու մատաղը մեկտեղելը.

«Կնքված եմ, Սահակյաններից է էղել իմ քալորը: Այսդես շատ հիվանդ կեղնի, հերս մատաղ կյտստանա, կկանչե տերտերին Լեննագանից մատաղը կանե, կուտեն կերթա, էդ մատաղով այսդերս ողի է կանգնել, մեզ բոլորիս էդ մատաղով կնքին վեց երեխանցը: Նայի համար ամենալավ արդարությունը կնունքն է: Եթե կնքված ես՝ հայ ես, եթե չէ՝ հայ չես, թուրք ես»⁵⁷:

ԱՄՓՈՓՈՒՄ

Չնայած խորհրդային իշխանությունների որդեգրած հակակրոնական քաղաքականությանը և իրականացված աշխարհիկացման ծրագրերին, այնուամենայնիվ, խորհրդային հասարակության լայն շերտերում տարածվեցին գաղտնի կրոնական ծեսերի տարբեր դրակտիկաներ, որոնք, մաս կազմելով ընտանեկան ծիսակարգի, այլևս կախված չէին եկեղեցուց և երբեմն ընկալվում էին ոչ միայն և ոչ այնքան որդես խիստ կրոնական, որքան ազգային դատկանելությունը փաստող մի անցումային ծես: Խորհրդային օրենքներին ֆորմալ ենթակայության տայմաններում խորհրդահայ գյուղական հավատացյալ համայնքներում հատկապես տա-

⁵⁶ Նելլի Մանուչարյան, ԴԱՆ, Վաղաշեն, 2018, Բաղդասար Նովհաննիսյան, 78 տարեկան:

⁵⁷ Նելլի Մանուչարյան, ԴԱՆ, Ոսկեհասկ, 2018, Նրանուշ Քոչարյան, 87 տարեկան, հմմտ. Նելլի Մանուչարյան, ԴԱՆ, Ոսկեհասկ, 2018, Մուսաննա Սերոբյան, 67 տարեկան:

րածվել էին մկրտությունները, որոնք հաճախ կիրառվում էին ընտանեկան և համայնքային գաղտնիության մթնոլորտում: «Ժողովրդականացված» այս մկրտությունների տարածվածությունը վկայում էր այն մասին, որ եկեղեցիների և գյուղական հոգևորականության թվի կրճատումը մեխանիկորեն չհանգեցրեց «բնակչության հեռացմանը կրոնից կամ հավատքից», այլ որոշ դեղքերում նույնիսկ խթանեց կրոնական զգացմունքների ինքնուրույն՝ եկեղեցու կառավարման դաշտից դուրս դրսևորումներին: Բացի դրանից՝ ստեղծվեցին հոգևորականների և հավատացյալների միջև որոշակի նոր հարաբերություններ՝ փոխօգնության, ժողովրդական քրիստոնեության հանդեպ ավելի մեծ հանդուրժողականության, կրոնական ղրակտիկաներում նախկինի համեմատ այլ գեղեղերային ներգրավվածության տարբերով: Գաղտնի մկրտությունների ղրակտիկաները նաև նոդաստում են «ազգային խտություն» տարածմանը և, եթե արդիականացման շրջանում «ազգայինը» սովորաբար գալիս է փոխարինելու «կրոնականին», ադա եկեղեցու խորհրդային հետադնդումները նոդաստում են նրան, որ Ղայաստանում «ազգայինն ու կրոնականը» ավելի են ամրագրվում որդես մեկ փաթեթ՝ մասամբ աշխարհիկացնելով կրոնականը, մասամբ է կրոնականացնելով ազգայինը:

Ընդհանուր ծրագիր` ԳԳ ԳԱԱ ԳԱԻ-ի Բանավոր ղափանության կենտրոնի ուսուցողական ծրագիր

Նելլի Մանուչարյանի մախագիծ` *Սկրտությունները Խորհրդային Դայաստանի աթեիզմի ղայմաններում*

Գարցագրույցի կարգավիճակ` անանուն

Զրուցակցի անուն` Ա.Ա.

Ծմմոյամ թիվ` 1942 թ.

Զրուցավարի անուն` Նելլի Մանուչարյան (Ն.Ա.)

Զրույցի տևողությունը` 03 ժ. 43 ր. 24 վրկ.

Գարցագրույցի վայր` գրուցակցի տուն, տան շրջակայք

Զրույցի ամսաթիվ` 16 հուլիսի 2018 թ.

Զրույցի լեզուն` հայերեն, Մարտունու բարբառ

Վերծանողի անուն` Նելլի Մանուչարյան

Վերծանության ամսաթիվ` 18 օգոստոսի 2018 թ.

Ձայնագրության ճևաչափը` Mp3

ՎԵՐԾԱՆՈՂԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Ձայնագրությունը լավ լսվում է, թեև դրսում գրոսանքի հատվածներում ձայնը թուլանում է:

ԶՐՈՒՑԱԿՑԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ա.Ա.-ն ծնվել է ԳԳ Գեղարթունիքի մարզի գյուղերից մեկում, ուսուցիչ է, դրոցի տնօրեն:

ԱՄՓՈՓՈՒՄ

00:00:00 Նախնիների վերաբնակեցման ղատնություն, ընտանիքի ղատնություն:

00:08:57 Դարաբաղյան շարժման տարիներից իր մասնակցության մասին:

00:37:46 Այցելություն Իշխանավանք, հոր գերեզմանոց, հոր ճերբակալության մասին ղատնություն, սովի տարիների կենցաղի, գյուղում սովամահության դեղքերի մասին, մանկահասակ տարիքի կենսագրական մանրամասներ, ուսանողական տարիների մասին:

00:53:00 Աշխատանքային փորձը որդես ուսուցիչ, տնօրեն, կոմունիստական կուսակցության անդամակցության մասին:

00:58:30 Դրոցում ժողովրդի թշմանու զավակ լինելու մասին ղատնություն:

01:03:54 Կոլեկտիվացման և հակակոլտնտեսական դիմադրության օրինակներ, կուլակների մասին ղատնություններ:

01:18:00 Իր մկրտության մասին ղատնություն, գյուղում կոլեկտիվացման և հակակոմունական բաղաբականության ներդրման մանրամասներ:

02:12:39 Գյուղի առկա խնդիրների մասին, 1948-1949 թթ. Շամխոր, Աղբբջան տեղափոխվելու ճանաղարհի հիշողություններ, հայրենի գյուղ վերադարձի մասին ղատնություն:

– Մեր նախնիները գաղթել են Արևմտյան Նայաստանի Ալաշկերտ, Մուշ, Սասուն գավառներից, այդ տարածքներից: Ե՞րբ են եկել: Եկել են 1825 թ., մեր այդ գաղթականները ցեղաստանություն չեն տեսել, չեն աղոթել, բայց թուրքական ճնշումներից միշտ ենթարկվել են. այդ ժամանակահատվածում ուժեղ կոիվներ են ընթացել ռուսական բանակի հայկական աշխարհագրայինների և թուրքերի միջև, և հայերը, աջակցելով ռուս բանակին, հաղթանակներ են տարել, և այդ տարիներին բարվոք շի լինում Ռուսական կայսրության դրությամբ, որովհետև լատերագրները սկսում են Ռուսաստանի դեմ Ֆրանսիան, Պրուսիան, չզիտեմ որտեղից լատերագրներ և այլն: Ստիժված ցարական կառավարությունը իր գործերը ետ է բաշում գեներալ Պասկևիչի զլխավորությամբ, բայց բանի որ հայերը մեծ դեր են խաղացել թուրքերի դեմ վարած կոիվներում, Ռուսական կայսրությունը մտածել է, եթե այս հայերը մնան տեղում, ադա թուրքերը վրեժխնդիր կլինեն հայերի նկատմամբ, ուստի համագործակցելով ցարական կառավարության դեկավարության հետ, թույլտվություն են ստանում, որդեսգի արտագաղթեն ռուսական բանակի հետ միասին և գան բնակվեն Արևելյան Նայաստանում: Եվ թվով, ըստ աղբյուրների, 300.000 հայեր արտագաղթի ճանադարի են բռնում: Ով ինչ ունի իր հնարավորություններով՝ սայլերով, ուրիշ տրանսպորտով, իրենց հետ բերելով անասուններ, միջոցներ աղոթելու համար: Եվ գալիս են, Սևան շիասած որոշ հատվածի, մարդկանց կեսը գնում են Ալսլբալբ, Ալսլցխա, կեսը բաժանվում, գնում են Ադարան, իսկ մեր դադերը նախընտրում են վերաբնակվել Սևանի ափին: Ես գիտեմ իմ արմատները ադուց դադ: Իմ ադուդադը եղել է Թաթուս, Թաթուսի որդին՝ Ղարիբ, Ղարիբի որդին՝ Գասդար, Գասդարի որդին՝ Նարություն և ես Նարությունի ծոռն եմ այժմ: Եվ փնտրելով կացարան՝ գալիս, հասնում են այ կադուտակ Սևան, որը անվանել են Գյոկչայ: Ի՞նչ է նշանակում Գյոկչայ: Օտարի լեզվով նշանակում է կադուտակ լիճ: Իսկ նվաճողները հիացել են Սևանի գեղեցկությամբ, անվանել են գեղեցիկ ծով: «Չոխ», թուրքերեն նշանակում է շատ, «չոխ յախշի»՝ շատ գեղեցիկ և «չոխ գյոկչա»՝ շատ կադուտակ և դա մնացել է որդես հուշ, որ մենք փոխանցում ենք: Մեզ անվանում են գյոկչեցիներ: Առաջ մենք նեղանում էինք, թե ի՞նչ են մեզ անվանում, Գյոկչա ի՞նչ է, ի նկատի ունեինք, որ անադատ, անճուղ և այլն, բայց հետո, որ ուսումնասիրեցինք, տեսնում ենք, որ դա Սևանի անունով է գյոկչա:

– Իսկ ո՞վ էր ասում, դարձն Մ.Ս., Գյոկչա, որ վիրավորվում էիք:

– Ղարաբաղում որ վերաբնակվել են, նրանք են ասել գյոկչեցիներ, դե մեր դադերը չիմանալով թե եղ ինչ անում է, Գյոկչա, բայց դրանից հե-

տո ես իմանում եմ, որ դա կադուտակ Սևանի անունն է Գյոլչա՝ կադուտակ լիճ: [...]

– Ուզու՞մ ես գնանք, մի հատ էլ Իշխանավանքով ման գանք:

– Այո, իհարկե ու ընթացքում հասկանանք այս գյուղում եկեղեցիներ եղե՞լ է, թ՞ե ոչ:

– Իհարկե, այստեղ 7 եկեղեցի է եղել, 7 գերեզման, այ սա վեջերս ռեստավրացիա արեցին հին եկեղեցու հիման վրա: Մեր գյուղի մարդը իր խոդանի փողերով, բրտիներով դրել ա էղ:

– Ո՞ր թվին:

– Էս վերջում, մի տասը տարում: Նինը վերակառուցեց, վրեն էլ նորը կառուցեց:

– Իսկ հինը ո՞ր դարի է:

– 12-րդ դարի է: Սիս սա մեր հին, ավելի հին ունենք, էս գերեզմանատունը տես, այ հստեղ մերոնք են ննջում, այ էս մի հորս քարի վրա մի քառյակ եմ գրել, կարող ես դա գրի առնել և այլն: Ներս, շատ հետաքրքրի բաներ ունեն ասելու [19]42 թ. գնդակահարության հողվածով տանում են հորս, ինչու՞. էս գյուղի հիմնադիրը՝ բոլշևիկ, [19]18 թվից եղել է հորս հորեղբոր տղեն, այսպիսի թոռը:

– Բարեկամներ, հարազատներ:

– Այո, իսկ հերս, որ էղ ժամանակ սով ա էղել, հացի փոխ վարդետ ա էղել:

– Մովը ե՞րբ ա եղել:

– Նենց էղ ժամանակներից, [19]30 թվից, էսենց միշտ սով ա եղել ստեղ:[...]

– Պարոն Ս.Ս., իսկ սովամահության դեղքեր եղե՞լ են, կդատմե՞ք:

– Շատ, շատ, տան մեջ մեռե, թաղող չի էղել:

– Ինքը ո՞ր թիվ ա եղել:

– Ներս, ինքը [190]2 թ. էղել, բայց սարքել են [18]98 թ. բրոնյա, որդեսզի դատերագմ չզնա, որդետ միակ մասնագետ մնա, որ հաց արտադրի:

– Այսինքն՝ ինքը խորհրդային կարգերի հաստատումը շատ լավ տեսել ա իր աչքերով, կուսակների մասին լուր ա որ հիշեր:

– Ամեն ինչ, ամեն ինչ: Էտ հորոյտդերս շատ անգրագետ ա էղել, ստորագրել չի իմացել, բայց մաքուր անձնավորություն ա էղել, դրա անուն թնդացել ա, դա Նայաստանի 64-րդ հերոսն ա և կարմիր դարսովազն: Միշտ նախագահի ու ենթակամների միջև անհաշտություն ա եղել, բայց ինքը, որ շատ մաքուր մարդ ա էղել, չեն կարացել կեղտ բռնեն, ոչ մի բան ղետությունից այլան-թալան չի արել ու կանխել ա: Ներս, որ փոխ

վարդեառ և եղել ու հաց և ինչքան կարողացել իր օգուտների հաշվին, ու հակառակորդ թիմից մեկը, որ եղել և ցորենի դահեստատեղետ, բայց շսիրող էս գյուղի հիմնադիր Ա.Ա.-ին, ուրեմն, զաղտագողի մոտենում և հորս, հորս անուն Արամ և, ասում և. «Արամ, արի մի հատ ստացական գրի, որ դու դահեստից 3 տոննա ցորեն տարել ես ջրաղաց ալուր անելու՝ բերես հաց թխես, իմ մոտ ստուգում և: Էտ կավարսովի, ոլործնի, մեր հարցերը կյունենը»: Ենքս միամտաբար, տալիս և ստացական, որ ստացել և, բայց իրոք չի ստացել, և մերս նախատում է հորս՝ դու թողիթ տվեցիր, ինչի՞ չես գնում բո թղթի հետևից: Քանի անգամ գնում և, նա մահանա և բռնում՝ վայ, մոտս էս չկա, էն չկա: Դու մի ասա բողոքում են դատախազություն, թե փուռը 3 տոննա դակասող ունի, տվել են բանդիտներին, որ կռվեն Սովետական Միության դեմ, քաղաքական աստառով, 4 ախտեր են լինում բողոքողները: Նորս գնդակահարության հողվածով տանում են:

– Դե քառասուն ո՞ր թիվն էր:

– [19]42 թ. օգոստոսի 7-ի սանկցիայով որոշում են գնդակահարել: Ես 6 ամսական եմ եղել: 4 բրոջ միակ ախտերն եմ եղել: Ուրեմն, մերս էտ վճիռը, որ լսում և՛ գնդակահարել, ուշագնաց և լինում ու հետո ասում և՛ էս անմեղ երեխին եթե Աստված կա, թող արդարադատ անի: Դե դատախազը, որ գործերը որոշում և ու գնում և Սևանով, նավով, տիտի հասնի Երևան: Առաջ գնում էին Սևան նավով, հետո՝ տրանսպորտով Երևան, եթե ճարեին: Ալիքը սկսում և, կոմստոնով նավը [19]42 թ. օգոստոսի 7-ին խորտակվում է, դատախազն էլ հետը, հորս վճիռն էլ հետը: 2-րդ դատավարության ժամանակ էլ փաստ չի լինում, հորս ոչ թե գնդակահարում, այլ 10 տարի Չեյաքիսակ նստել և: Եկել և [19]52 թվականին, երբ ես արդեն 10 տարեկան էի: Իսկ ինչդեռ է եղել ոտքս: Էս դատերազմի դաշտում չի եղել, դրա համար ով ինձ լսում և, ասում և հետաքրքիր, զարմանալի բան: Մեր տան, հորս տանելուց հետո, վերջին եղածը ստուգում տանում են, բան չեն թողնում, սովը տիրում է մեր ընտանիքին: Իմ մոր մերը, ախտերը, երկու ախտերները ռազմաճակատում են եղել, սովը նաև նրանց էլ և խեղդել, քանի հերս և եղել, նրանց օգնել և: Մորս մերը կուրանում է, որդին 14 տարեկան ընկնում է թևը, կուրացած մորը, ու էս Վարդենիսի սարերով հասնում և Դարաբաղ, գնում էնտեղ: Նիմա, նույն վիճակի մեր ընտանիքն և լինում, սով... ի՞նչ անել... մերս վարձում և մի ձի, իր քեռու ձին, իսկ քեռին լինում և գորավար, էս գյուղից ունենք գորավար: Տաղարի Աղաբեկ, այ սրա մասին տիտի դատմեմ քեզ, մի մարդ, ով ազատագրել և ամբողջ Գեղամա շախարհը, Վարդենիսը թուրքերից, կռվել և Չանգեզուրում, ամբողջ Միսիանում, Վայքում, Նժդեհի աջ թևն և էղե, և էղ մարդուն կոմունիստները լաբելով բերում գնդակահարում են Մարտունիում, և գնդակահարելուց հետո երկու կին սայրը լծած գնում են էս մարդու աճյունը թաղում են էստեղ, ոչ մեկ ռիսկ չի անում որդես դաշնակ: Նիմա, մերս արտագաղթեց Դարաբաղ, արդեն մերն ու ախտերը էնտեղ են:

Ի՞նչ է անում: Մանգաղով հունձ է անում: Մեծ բույրս եղել և էտ վախտ 14 տարեկան, իրեն օգնել և ն էս սիրունատես, չարածճի երեխա եմ եղել, ասում են էնտեղի աղջիկները ինձ ձեռից ձեռ էին փախցնում, տանում էին սիրելու: Նանկարծ, ծառի տակ նստած եմ եղել, օձ են նկատել: Քույրս էս ոտիցս քաշելով հեռացրել և օձից, մտածել են ոտիցս քաշել և դուրս և ընկել: Այնինչ, ես վարակված եմ եղել մալարիայով, էն ժամանակ տարածված և եղել և՛ Նայաստանում, և՛ Ղարաբաղում մալարիայի մոծակ: Եվ բուժում են դրիմիտիով, ի՞նչ են բուժել, խինին դեղատեսակով, որ ներարկելուց կամ աչքն է կուրանում, կամ թևն է թուլանում, կամ ոտքը: Ես բժիշկների հետ հետազայում կոնսուլտացիա անցել եմ, բացատրել են: Եվ ինձ տանում են, սրկում են խինին: Տեսնում են, որ սրկած տեղը ուշյում է, ոտքս էլ ուժ չի ունենում: Մերս նորից, ինձ շալակն առած, երեխեքին թողել և մոր ու ախտոր հույսին, եկել և էստեղ: Էն վախտ տարիքով մարդիկ, հողախախտ են բուժել սրան նրան, ոչ մի ճար չի եղել և այսդիսով, ես գրկվում եմ էս ոտիցս: [19]52 թ. հերս եկավ, տեսավ, որ ես հենակով եմ, տխրեց, բայց ես երբեք ու երբեք չլիստվեցի: Դորոցում սովորել եմ բացարձակ գերազանցիկ, եղել եմ նույնիսկ մեղալակիր, չեն ցանկացել նույնիսկ ինձ մեղալ տալ, որտև էդ ժամանակ մարդ մարդու չէր էլ դաշտդանում, իմ հորեղբայր եղել և դորոցի տնօրեն, սկի ուշադրություն էլ չի դարձրել: Իսկ ինստիտուտ ընդունվել եմ հեռակա, Երևանի մանկավարժական ինստիտուտ, դա ավարտել եմ, ու էտ ինստիտուտը լիկվիդացվել և: Քոչինյանը տեղափոխեց Կիրովական, որտև նա կիրովականցի էր: Դա շատ հեղինակավոր ինստիտուտ էր: Բոլոր բուհերի լավագույն դասախոսները ժամավճար կերտով դասավանդում էին այդ ինստիտուտում: Ես արդեն ինստիտուտում էլ փայլեցի, ռեկտորի հետ մոտիկ, Սամվել Ալիխանյան կոչված դոկտոր դոկտորի երկու անգամ բերել եմ էս գյուղ, դաստիվ եմ տվել գնացել և, էս գյուղի մասին կարծիք և կազմել: 2-րդ կուրսից հրամանագրել եմ քիմիայի, կենսաբանության ուսուցիչ: Դասավանդել եմ բարձր դասարաններում, խիստ եմ եղել, դասանջկոտ և՛ իմ նկատմամբ, և՛ աշակերտների: Մինչև հիմա դասած և իմ օրվա լյանները, յուրաքանչյուր թեմա մշակած, դատրաստի դասի եմ ներկայացել և ինձ առաջ քաշեցին՝ դարսկոմի նախագահ դորոցի, ընդունվեցի [19]68 թ. թեկնածու, իսկ էտ ժամանակ նույնիսկ կաշառքով չէին ընդունում, իսկ ես դայքարելով, մաքառելով ընդունվեցի կոմունիստական կուսակցության շարքեր: Եվ ընդունվեցի, իմ համարձակությունը բավարարում էր լյեռնումներին, կոնֆերանսներին քննադատել էր գող ու ավագակ կոմունիստներին, և շատ էին զարմանում, թե էս տղեն էս ի՞նչ ռիսկի տեր և, էս ինչե՞ր և անում: Այ էդդես էս սկսում էի կյանքս՝ դայքար:

– Դարձն Ս.Ս., իսկ ո՞րն էր կոմունիստական կուսակցություն մտնելու իմաստը:

– Էն վախտ, եթե կոմունիստ չլինեիր, նախ քեզ դաշտոն ոչ մեկ չէր տա, երկրորդ՝ եթե կոմունիստ չլինեիր, շարքերում չլինեիր, չէիր կարող ճա-

Բարի էր, ասում են, Արամը ողորմած,

Թող աղորեն գավակներդ ճակատները բաց:

Այ էր մի բառյակը զարդարում է էս գերեզմանը: Թող ինչքան ուզում են, բարձր դասովանդան դնեն՝ հզոր, բայց էս բառյակը չի դառնա: Երբ հորս թաղում էին ստեղ, էդ շրջանի տղաները, որոնք օգտվել էին հորիցս, սնվել էին, ձեռքով լցրեցին հողը, բահ շօգտագործեցին: Էս մարդը արժանի մարդ էր:

– Պարոն Ս.Ս., որդես ի՞նչ արտրեցին նրան:

– Դե էդ ստացականը որ տվել ա, բայց իրականում չի ստացել:

– Ձևակերտումը:

– Որդես Սովետական Միության թշնամի: Տվել ա էդ հացահատիկը, էլ չզիտեմ, որտեղ ա գնացել, չի ստացել, տվել ա բանդիտներին, կովել ա Սովետական Միության դեմ:

– Իսկ Ձեզ, որդես թշնամու գավակ, ո՞նց էին վերաբերվում դոքոցում:

– Դոքոցում, ասեմ: Մանկադարտեզ չէին ընդունում, դոքոցում էդ ժամանակ կար օգնություն, օգնություն չէին տալիս, ոչ մի բան:

– Այսինքն՝ մանկադարտեզից զրկվել եք Դուք:

– Նա, քույրերս մնացին անկիրթ, 1-ին, 2-րդ դասարանից էն կողմ հնարավորություն չեղավ:

– Իսկ Դուք Ձեր հասակակիցների մեջ զգու՞մ էիք այդ տարբերությունը:

– Չգում էի, որ ես դատադարտված եմ իմ հոր դատաճառով, ես ոչ մի արտոնություն չունեի:

– Ի՞նչ էին ասում էդ շատ փոքր տարիքում:

– Դե էդ ժամանակ երեխեքը չզիտեին, իրենք էլ չզիտեին՝ իմ համադասարանցիները և այն, ուսուցիչներն էլ կասեին էսդես՝ դե կերել, գնացել նստել ա: Արի ու ասա, որ էս մարդը չի կերել, զրոյարտություն ա: Եվ իմ հեքը իր բոլոր դավաճանների թաղմանը մասնակցեց, և դավաճաններից մեկի տղան միլիցա էր, ինձ դաշտում էր, ուզում էր էնդիսի վերաբերմունք ցույց տար, որ ես չիլչեի էդ բոլորը: Նրա տղեն բանաստեղծ ա՝ [...] իմ գրքի համախոսական [գրախոսական] ա գրել, որ զարմանալի ա՝ ինչդիսի մաքուր ու ռեալ գնահատել է իմ տառադասը, իմ գրքի ճակատագիրը և այլն: Եվ հիմա ես իրեն էլ եմ ասել՝ ճիշտ ա, մեր ծնողները ժամանակին իրար լեզու չեն հասկացել, ինչո՞ւ է մեղավոր սերունդը, ես իրենց հարգել եմ: [...]

Իմ մանկությունը՝ սով, ես կոշիկ հագել եմ, երբ 10-12 տարեկան էի՝ շորից կոշիկ, իմ հարևանն առել էր, լացեցի: Մերս առևտրով ա դահեղ, բայց էս գյուղի ղեկավարները, զգալով հորս դիրքը, մորս բարոյական

կերտարը, աչքերը փակել են՝ թող երեխեն դասի, առևտուր անի, ձեռք էր գցել մի էշ, ավանակ, դրա վրա դնում էր կողովներ, տանում էր էստեղից կանսերվի բանկաներ Եղեգնաձոր, վաճառում էր, էնտեղից բերում էր միրգ, օղի և այլն, վաճառում էր, և մեր տունը դարձել էր առևտրի կենտրոն: Էն վախտ խանութ չկար, բան չկար:

– Իսկ առևտուր կարելի՞ էր անել, դարձն Ս.Ս.:

– Չէր կարելի, բայց իմ մորս բացառություն էին անում՝ որդես բարոյական կին և դատադարտվածի կին, թող երեխեքը մեծացնի: Դեկավարները օգնել են: Ներս որ եկավ, էլի իր ժամանակակից ընկերներին, դոշկայի մեջ բար կար, որ եկավ, որիստուղներ կային, նախագեն եկավ բժիշկներին խնդրեց՝ տեղափոխեք, էս մարդուն փրկեք: [...]

– Իսկ Ձեր ծնողները կնքվա՞ծ են եղել:

– Նա, բա ինչդե՞ս:

– Իսկ Դուք կնքված ե՞ք:

– Ես էլ կնքված եմ, քավորս...

– Ե՞րբ են Ձեզ կնքել:

– Երբ ծնվել եմ, մորս երազ է եկել, նախ իմ քավորներն լրիվ ուրիշ մարդիկ են եղել, բայց երագով՝ իր հոր տունը սուրբ ա եղել, Նամայիլ կոչված, էդ գողացան տարան, մտիկ էր:

– Իսկ իրենից ի՞նչ էր ներկայացնում:

– Ես էլ Նամայիլը չեմ տեսել, Աստվածաշնչի ճյուղերից ա երևի եղել, Սուրբ գիրք ա համարվել, եկել, գողացել տարել են էդ լքված շենքից, հետո ասեմ՝ մորս ազգականները էս գյուղի ամենահարուստներն են եղել, Նադարի Ագիզ ա եղել, որ էս բոլորին հաց ա տվել, էնքան հարուստ դատմություն...

– Կույակաթա՞փ են արել:

– [19]30 թվին կույակաթափ են անում, երկու տղին տանում են, գնդակահարում են, ունեցվածքը տանում են, կոլխոզ են ստեղծում, և էդ դատկատելի մարդը սովածությունից մեռնում է:

– Պարոն Ս.Ս., հասկանանք այդ տյառը. այսինքն՝ կային կույակներ, ովքեր ուղղակի համձնում էին իրենց ունեցվածքը և շարունակում էին առդրել, բայց կային կույակներ, ովքեր դիմադրում էին: Ի՞նչ գիտեք այդ դիմադրող կույակների մասին:

– Ասեմ, նախ ոչ մի կույակ, եթե սեփական քրտինքով, էն չուխայի մեջ, անկողին չէր տեսել, խսիրի վրա է քնել, գիշեր ու ցերեկ անասնագոմից դուրս չի եկել, սեփական քրտինքով հարստացել է և նրա ունեցվածքը գան ու խլեն տանեն, նա ի՞նչ կանի: Ասում են՝ թշնամացել են, երբ տե-

սել են իրեց կովը, հորթը, էրինջը տարել են կոյսոզ, մատը կոխել են, աչքը հանել են, ղոշը կտրել են թշնամաբար:

– Ուլքե՞ր են այդպես կտրել:

– Նենց էլ կուլակները, որոնց կուլակաթափ են արել, սեփական անասունի աչքն են հանել, որ տեսել են ղետությունը տարել և, էդդիսի դաժանորեն...

– Իսկ դեղքեր եղե՞լ և, որ մորթոտեն իրենց անասունին, որ չհասնի կոյսոզ:

– Այո, եղել և, որ մորթոտել են, որ գաղտնի տանեն Երևան վաճառեն, էլ էլ եթե տան մեջ բռնեն, քրեական հողված էր, իսկ էլ բոլոր կուլակաթափ անողը եղել և էս գյուղի նախագահ Ա.Ա., որ տղադայիս հորոխոր տղեն և: Նա էր նախագահը, նրա ժամանակ, եթե նա շաներ, իրեն կգնդակահարեին: Դրա համար էլ Ա.Ա. էլ կուլակաթափի սերունդը չի սիրել, թե տարել են, էլ չեն ասում, թե Ա.Ա. չի տարել, Ստալինն և տարել, ղետությունն և տարել, Ա.Ա. կատարող մարդ և եղել, կնոջը ասել և, ուղղակի իր թոռու հորը, կուլակ և եղել, տանում են, իր կինը ընկնում և ոտերը, ասում և՛ փըրկի, ասում և՛ Անուշ, շկարամ, եթե փրկեմ ինձ կտանեն, իր հարսի հորը: Արգելված գրականություն, ասում և, եթե տենային մեկը կարդում և ինչ-որ մի գիրք, գնում մտնում էին քրեական գործ՝ դու էս գիրքը ինչի՞ ես կարդում: Երեք հոգի իրար հետ որ ման են եկել, եռյակ, ՊԱՀ, ու դրանց տանում էին՝ դուք երեքով ի՞նչ էիք խոսում, այ էլ իմ գիրքը հենց դա էր:

– Իսկ կուլակը ո՞վ էր, ի՞նչ ղիտի լինեք, որ համարվեք կուլակ:

– 100 ոչխար ունեցող, մի 10-20 կով ունեցող, մի 10 մատակ ունեցող, մի 5 ձի ունեցողը, սայլ ունեցողը համարվում էր...

– Իսկ ջրաղաց, կամ...

– Ջրաղաց... դե էն վախտ այրաղացը մենակ ջրաղացով ջրով էին աշխատում, 17 ջրաղաց և եղել էս տերիտորիայում...

– Ու տարբեր մարդկանց և ղատկանե՞լ:

– Սովորական, ասենք, կարող և մեկը բռն և եղել, սովել ես աղքատ և եղել, աշխատացրել և: Դե հնարավորություն ունեցող, որ ասեմ կուլակներինը քիչ և եղել, սովորական մարդիկ էին, ջրաղաց են սարքել, այլոր են ղատրաստել և էն վախտ ոչ մեկ... գնում էին, կիլոյով, մի կիլո այլոր ողորմա, տանեմ շաղեմ, երեխես փրկեմ, մոր հետո ... Էդդես ենք գոյատևել:

[...]

– Դուք ասում էիք, որ կնքվել եք մի տարեկան հասակում, որ հմայիլ և էկել երագում մայրիկի ևն, իսկ ձեր մայրը չի՞ ղատմել՝ ո՞նց և կնունքը կազմակերտվել, ուլքեր են եղել, քահանային որտեղից են հրավիրել:

– Քահանայի մասին չգիտեմ: Մեր մոտ շատ դեղորբուրում քահանան չէր թույլատրվում կոճուրկատների ժամանակ: Քահանաներին լրիվ ոչընչացրին, սղանին, արտորին: Քահանա չեն թողել, ոչ էլ՝ նրանց օգնական տիրացուներ:

– Իսկ եկեղեցիները:

– Եկեղեցին էլ մնացել ա, գաղտնի են գնացել, մատուռ ա եղել էղտեղ մակ: Էն հավատացյալ մարդիկ գաղտնի են իրենց մոճավատությունը արել, կոճուրկատ արգելել են: Մի տերտեր ա էղել էս Վարդենիսի շըրջանում, համարձակ տերտեր ա էղել: Կոճուրկատները փորձում են նրան ձեռք առնել, էշին մստած գալիս ա, հետևից էլ՝ քուռակ: Ասում ա՝ Տեր հայր, էս քուռին կնքվա՞ծ ա, ասում ա՝ չէ, դա բոլշևիկ ա, կոճուրկատ ա, չի կնքվում: Տես, ինչ համարձակություն ա ունեցել:

– Իսկ որ ասում եք՝ գաղտնի է եղել:

– Գաղտնի կանչել են, երագով իմացել ա, որ տղա կունենա, էսինչ մարդն էլ քավոր ոլիտի դառնա, էդ մարդն էլ մեր հարևան ա, կանչե, դարձրել քավոր: Մինչև հիմա էլ դաշտողանում են էդ քավորությունը:

– Իսկ էդ մարդը հիմա ո՞րջ ա:

– Մեռել ա, տղաները կան, թոռները կան:

– Երբեք չի՞ր անդրադարձել ձեր կնունքի արարողությանը, ասենք՝ ի՞նչ բերեցին, ի՞նչ նվիրեցին կամ ինչո՞րե՞ս կնքեցին:

– Էն ժամանակ ոչ մի նվիրատվություն էլ չի էղել, ուղղակի էկել են, հնարավոր ա գաղտնի տերտեր էլ բերած լինեն՝ գաղտնի, որ ոչ մեկ չիմանա, լսո՞ւմ ես, ջրի մեջ լողացրել են, մեռոն են կաթեցրել, սղիտակ սավանի մեջ են փայթաթել ու դարձել ա իմ կնքահայրը, դաշտել են իրեն, ինքն էլ ինձ:

– Այսինքն՝ կարծում եք, որ եկեղեցում չեք կնքվել:

– Չէ, եկեղեցում ոչ մեկ, տան մեջ, այն էլ գաղտնի:

– Իսկ գիտե՞ք, թե տան որ մասում էին կատարում կնունքը:

– Թոճրի շուրջ: Էն վախտ բոլորը թոճրատուն ունեին, լսո՞ւմ ես, թոճրատան շուրջ, լսո՞ւմ ես, բերել են տաշտ, ինձ դրել են տաշտի մեջ, մեռոն ջուր լցրել են վրեն, լողացրել են, էս, էն, հետո գրկել են, փայթաթել են սղիտակ շորի մեջ, դառնում ա օրինական կնքահայր ու դաշտել են մինչև վերջ, որդես մեր ընտանիքի քավորը:

– Իսկ քահանան իրա սքեմով ա՞ր եկել, թե՞ արդեն տանն ա գգեստափոխվել:

– Ես էդ չգիտեմ՝ քահանայով են կնքվել, թե՞ առանց քահանայի:

– Կարծում եք՝ հնարավոր է առանց քահանայի կնքած լինեին:

– Բա, որովհետև եղ վախտ էլ քահանա չի եղև, որովհետև հենց գյուղի կոմունիստը դատալայիս հորոխոդոր տղեն՝ եղ Ա.Ա. է եղև, որ նրա երեք տղեն ջահել-ջահել մահացել են, և ժողովուրդը վերագրել է նրան, որ դա սրբօջախներն ա քանդել, վերացրել է:

– Քանդե՞լ ա եկեղեցիները:

– Բա ինչդե՞ս, ցուցում ա եղել: Էս, որ եկեղեցին տեսար, չէ՞:

– Էդ որ հինը վերակառուցե՞լ էին:

– Էդի քանդել էին լրիվ, դրա փայտերն էլ տարել ա կոլտնտեսություն գոմեր ա կառուցե, էդ մեր ազգականն էլ մի քանի փայտի կտոր տարել ա իր տան օճիլին [օճորք, բրբ. առաստաղ] ա վերակառուցել ա էդ տունը փլվել ա, մահացել են շատեր, վերագրել են սրբու փետը բերեց, այն ինչ, որ էն առողջ փետերը կոլխոզ տարել են, էն փտածներ մնացե, էդ խեղճն ա բերե, փտած փայտն էլ ջարդվում ա, հասկացա՞ր: Եվ էդ կինը էնքան համարձակ ա եղել դրա ախոդոր էրեխեքն են կառուցել էս եկեղեցին, էդ կինը, որ բերել ա տուն, վերանորոգել ա, տունը փլվել ա էրեխեքի վրա, մահացել են, և դրա ախոդոր էրեխեք կառուցեցին էս սրբատեղը, եկեղեցին:

– Օծվա՞ծ ա հիմա:

– Նա, բա ինչդե՞ս:

– Իսկ քահանա կա՞:

– Կա, բա, ինչդե՞ս չկա:

[...]

– Դուք հավատացյալ համարո՞ւմ եք Ձեզ:

– Ոչ, ես խիստ այթեխտ եմ, իրերն ու երևույթները մեկնաբանում եմ փոխադարձ կադերով:

– Իսկ այն փա՞ստը, որ կնքված եք:

– Իմ երեխաներից հիմա իմ աղջիկները անկնունք են, էրեխեքի տեր են արդեն:

– Ինչո՞ւ:

– Ես էդ տեղիքը չեմ տվել, ծնողներս հավատացյալ էր, մերս հավատում էր Աստծուն, և էս իմ դոդրոցը, որ յոթը մասնաշենքից նորակառույց դոդրոց էր ևն, դրա տերիտորիայում մի մատուռ կար, որ բակը փակում էր, խամգարում էր, ևն: Մի օր հարց տվի գործկոմի նախագահին, ասի. «աս ի՞նչ ենք անելու», – ասեց, «թող մնա, քեզ ի՞նչ ա խամգարում», և էդ խոսքը հասել էր մորս: Մերս սենց ինձ քրքրում էր՝ թե դու գնում ես Աստծու տուն ես փակում: «Այ մեր, ես բան չեմ ասել»: «Չէէ, ասում են, որ դու որոշել ես քանդել էդի»: Ո՞վ էր հավատացրել:[...]

– Գալի^օս եք եկեղեցի:

– Մեկ-մեկ մերոնց հետ գալիս եմ, ես նույնիսկ եկեղեցի գնացել եմ, մո՞՞՞՞՞ չեմ... վառած չկամ, ասում եմ վառեք իմ տեղը, եթե ուզում եք: Ես որագ-մատիկ՝ իրերն ու երևույթները շատ լավ հավատում եմ, Երկրի մագ-նիսական դաշտի ոլտույտին, արևի լույսին, մոլորակներին հավատում եմ, ասում եմ էս բարը, էս խաչքարը մարդ է տաշել, էդ մարդը էս բոլոր ուսուցիչներից մեկը էդ մարդուն հայիոյում էին. «Քո սենց, ընենց, կեղ-տոտ, փռոտ, դե բարի փռոտ մեջ էր մարդը, բայց նրա տաշած խաչքարը համբուրում են, դե արի, տես: Գնացեք մի հատ էն մարդուն համբուրեք, նրա բրիչի տակից ա դուրս էկել, չէ՞, մարդն ա ստեղծել: Դե ասա՝ աստ-վա՞ր՞ն է ստեղծել մարդուն, թե՞ մարդը աստծուն: Մարդը ստեղծեց աստ-ծո գաղափարը, որդեհագի մոլորակի վրա կարողանար իշխեք, շարը խափանելու, բարին տարածելու մեջ: Աստվածաշունչը, Նարեկը մարդ չի՞ գրել: Եկեղեցում դրած Նարեկը գալիս համբուրում են, բայց համոզ-ված եմ, որ Նարեկը հիմա ընդեղ նստած լինեք սկի երեսին չէին նայի:

– Իսկ վանքը [Իշխանավանք] խորհրդային տարիներին ի՞նչ ա եղել: Վանք թողե՞՞լ են:

– Վանք ա եղել էլի, ձեռք չեն տվել, ծածկը չկար: Տես, էստեղ բարեք կան, ուզում են նորից ռեստավրացնեն, բայց էդ բարերը ոլիտի համա-րակալեն:

– Ես նկատեցի, որ սովետական շրջանում ա սա մշակութային կոթող հռչակվել: Դուք ներկա՞ եք եղել այդ արարողությանը:

– Իմ աչքի առաջ է բոլոր արարողություններ, գալիս էին նաև ուրիշ տե-ղերից, շատ գորավար Իշխանավանք ա համարվում: Ըստերը ուզում են թաղվել էս Իշխանավանքում:

– Իսկ եկեղեցիները, ասեցիք, յոթ տարբեր տեղերում են եղել:

– Յոթ գերեզմանոց կա հիմա, մի հատ մատուռ էս վերևում կա:

– Այսինքն՝ եկեղեցիները եղել են գերեզմանոցու՞մ:

– Եղել են նաև գերեզմաններում: Կոմունիստները լրիվ քանդել էին, ավերել էին, ծածկ չկար, մնացել էր ավերված, բայց հավատացյալնե-րը էդ խաչքարերին միշտ խնկարկել են, մո՞՞՞՞՞ վառել են, խուց էլ կար:

– Իսկ գաղտնի՞ էին գալիս, մթո՞՞վ:

– Ցերեկն էլ էին գալիս: Մեր ժողովուրդ ըմբոստ ժողովուրդ էլ է եղել, լսու՞՞մ ես, նաև անվախ ժողովուրդ ա եղել:

– Իսկ ավերման տրոցեսը ո՞՞նց են կատարել. գաղտնի ավերել են, թե՞ բոլորի աչքի առաջ ա դա արվել:

– Բոլորի աչքի առաջ հրաման են տվել կոմունիստներին՝ գնացեք, քանդեք: Ռայկոմ կանչել ա, նախագին. «Գնա, էս մատուռը վերացրո՞ւ»:

Կարա՞ր չվերացնեն, չէ, ուրեմն աշխատանքից կհեռացնեն: «Գնացե՛ք, էսինճ տերտերն ձերբակալե՛ք, տարե՛ք»: Տերտերին կոմունիստները սղանել են հենց իր տան մեջ: Փորձել ա թաքնվել, կոմունիստները գնացել բռնել են տան մեջ, մորթել են:

– Իսկ մյուս եկեղեցիների ճակատագիրը ի՞նչ էլավ:

– Էն եկեղեցիները վերանորոգել են, էս վերեր Թուխ Մանուկ կա, իսկ մերն հարկատու ա էղել Արծվանիստի վանքին, Էն էլ հարկատու ա էղել Մաքինիս վանքին Վարդենիսի շրջանում, դե եկեղեցին հարստություն ա ունեցել, իրենց հարկերը տվել են, Արծվանիստի ձորում ա էլի, սենց բարձր բարեբից կառուցված:

– Ուզում եմ հասկանալ դրանք ավիրե՞լ են թե՞..

– Ինչքան [էլ] դահված է էղել, բայց վերակառուցել են նաև: Կոմունիստները էս վերջի տարիները շրջահայաց են դարձել:

– Ի նկատի ունեմ վաղ շրջանում:

– Վաղ շրջանում, որ նոր են եղել, որ Լենինը, Ստալինը մերժել են կրոնը, կրոնը համարել են հաշիշ, թույն, ժողովրդի մեջից թույնը ղետք է վերացնես:

– Այսինքն՝ էս վանքը՝ Իշխանավանքը, թողել են, իսկ մնացածը քանդել են:

– Նա, սրան ձեռ չեն տվել:

– Այսինքն՝ մնացած հինգը քանդել են:

– Նինգ չէ, յոթ գերեզմանոց ա, բայց երեք վանք ա:

– Եկեղեցիները երե՞քն են:

– Մի հատ էլ վանք կա, էս վերևի լքված գյուղ ա, որ [19]49 թ. տեղափոխեցին Արարատյան դաշտ, էտ լրիվ քարից ա, ծածկ փայտ չկա այն-տեղ, փոքր գյուղ է, վերաբնկալեցրին, բայց էտ եկեղեցին մնում ա:

– Դա չավիրեցին երեսունականներին՞:

– Չէ, չէ:

– Ընտրությունը ինչո՞վ էր տայմանավորված:

– Նա գյուղի մեջ ա էղել, ժողովրդի աչքի առաջ ա էղել: Էտեղ նաև էղել ա մատուռ, որ ժողովուրդը միշտ մատաղ ա արել, ժողովուրդը բողոքել են կեսը, որ մատուռը ղիտի վերանա:

– Իսկ մատուռները:

– Մի մատուռի մասին դատմեմ: Եղել ա էղ եկեղեցու հարևանությամբ, և Պոռոշյանը Էկել ա մեկ որ սանձի, ձերբակալի Նունոյ՝ Արծվանիստի

դաշաղ Նունոյ, մեկ էլ փակի եւ մատուոյ: Երբ գալիս ա, եւ գյուղը դիմաւորում են, 1885 թ. եւ գյուղ էղել ա լավ քահանա՝ տեր Նոսե, տեր Մինաս, հյուրընկալվել ա էնտեղ, և էղ մատուոյ փակելու ժամանակ գյուղացիները շեն ուզեցել մատուոյ փակել, վեճ ա էղել: Դիմում են եւ գյուղի ամենաբաջ մարդուն՝ ջանաւար Պողոսին: Պողոսը էկավ, կանխեց ժողովրդին, Պռոշյանի խնդրանքով, որ էղ մատուոյ փակվի, որովհետև դա օրինական մատուո չի:

– Իսկ օրինականը ո՞րն էր:

– Պետության կողմից ճանաչված չի: [...]

– Իսկ էղ տարիքում, ընկերներով գնում էի՞ք եկեղեցու բակեր, խաղութ՞մ էիք կամ մո՞տ վառութ՞մ էիք:

– Շատ եմ գնացել եւ մեր եկեղեցին, եւ մեր տանը մոտիկ էր, գնացել եմ նստել եմ եւ քարերի վրա, սկի մտքով էղ երեխա...

– Քանդվա՞ծ էր եկեղեցին:

– Նա, քանդված էր բա ինչ էր, նստում ենք ձի էինք սարքում եւ տաղանաքարերին, ինչ իմանայինք: [...]

– Եթե մարդը ոլարտիական ա, իրա համար ղիտի խնդիր լինե՞ր կնունքը:

– Եթե ոլարտիական էր, երեխեք կնրում էին գաղտնի, որ չիմանան, իրար վրա մատնում էին:

– Ինչոյե՞ս, ո՞նց էր արվում դա:

– Դե, տերտեր տանում էին, կնունք էին անում:

– Օրինակ, տե՛նց օրինակ կա՞ հստակ, Դուք հիշում եք:

– Շատ, ես չեմ հիշում, բայց իմ մեծերը ոլատմել են, լսել ենք, որ գաղտնի նախագահն իրա երեխեքին կնրում էր:

– Գյուղի՞:

– Այո, բայց ցույց չէր տալիս, որ իր երեխան կնրված է:

– Իսկ ո՞նց էր դա անում:

– Մարդ չիմանար, կանչում էր քավորին:

– Ոչ մի անգամ եկեղեցում չէր լինու՞մ:

– Չէ, եկեղեցում չէ, տներում՝ գաղտնի:

– Իսկ, որ Ձեր ծնողները ոլատմում էին, իրանք հենց ներկա էին եղե՞լ այդ կնունքին:

– Բա իհարկե, իմ ծնողներ որ ներկա չլինեին, ինձ ո՞վ էր տալիս քավորի ձեռքերի վրա: [...]

– Իսկ Դուք հիշո՞ւմ էք Ձեր մանկությունից. տրակտորը գյուղում առաջին անգամ ե՞րբ աս եղել:

– Վիշում եմ, ինչ-որ մանկությունում թոթով լեզուս բացվել է, հիշում եմ, իսկ Էսորվա բանը չեմ հիշում: Վիշում եմ, փոքր ժամանակ, դեռ 3 տարեկանից, որ ոտս չծառայի, ոնց եմ շարժվել, վաթիկ անելով:

– Այսինքն՝ Դուք ազատված եք եղել բոլոր կոլտնտեսային աշխատանքներից, ամեն ինչից:

– Բացարձակադեմ, ես էդ գործը չեմ, ես միայն գրել, կարդալ: Ավանակ ենք ունեցել, ավանակ ունենալը հավասար էր մի հատ տրակտոր ունենալուն, ով ավանակ ուներ, կադրեր: Երբ կուլակաթափ են արել մեր գյուղ, մի ունևոր ընտանիքի էջն էլ են ուզեցել տանեն, էս մարդը փաթաթվել աս էջի վզին, լաց աս էղել, թե՛ էդ բոլորը տարեք, ավանակը թողեք:

– Ի՞նչ, ի՞նչ գործառույթ, ի՞նչ ֆունկցիա էր կատարում:

– Ավանակը բարձում էին, տրանսպորտ, բեռնակիր, նույնիսկ հողամաս են վարել, նստել են:

– Նողամա՞ս էլ են վարել:

– Այո, գութան են արել, գութանը կադրել են, կալսել են, կամ են արել, կամը գիտե՞ս՝ ինչ է:

– Այո:

– Ըհը, հացահատիկը հնձում էին, փռում էին աշամ էին անում, կամն էլ սրանից երկար փայտից տակը խփած սուր որձաքարեր, նալեր, էնքան անասուն դոտի լցվեին, դոտավեր, մինչև էտ հասկն ու իր սափը դառնար մանր հարդ, հատիկն էլ քամում տալիս էին գշերվա էն հովին-գովին, հարդը մի կոմ էր գնում, հատիկը մի կոմ, ով հողամաս ուներ, ցորեն էր ցանում, էդդեմ աղորում էր: Վի՞մա, ես իմ մանկությունը, հիշում եմ՝ ունեի մի հատ շավվար, շավվարի հետևը սենց անցք էր բացած իմ դետեքների համար, գուգարան տանել չկար, մերս ստեղ չէր, ազատ մարդ էի, բարձրանում էի կտուր, դահում էի մեր տան, եթե հատիկ կար, հսկում էի, որ ծտերն ու հավերը չուտիեն: Մի օր հիշում եմ՝ սոված եմ, էդ հատիկը կերել եմ, դե ընտանիքը էտով էտ օր ճաշ դոտի էփեր, մերս էկավ ինձ օնեց, թե ոնց ես կերել էդ հում հատիկ, հատիկը ի նկատի ունենք ցորենը:

– Բա հատիկով ի՞նչ դիտի եփեր:

– Մուղ, ցորենով սուղ, ամեն օր թունիրը վառում էր, ամեն օր հաց թխում էին, ալյուրը ճարում էին, թխում էին, ամեն օր թարմ, թեկուզ 5, թեկուզ 10 հաց, թունիրն էլ որովհետև ջեռուցում չկար, թունիրը տաքացման միջոց էր, մտնում էինք, առավոտ ցուրտ, մտնում էինք էտ թունիրի մեջ, նույնիսկ հիշում եմ, քոս հիվանդության ժամանակ դեղ մայրս

ճարեց, մտնում էինք թունիքը, որ տաք լիներ, բուժվեինք: Մերս, որ առևտուր էր անում, օդի էր բերում, լցնում էր շշեր, որ վաճառեր, գաղտնի սնդուկը բացում էի, ամեն շշից մի կում խմում էի: [...]

– Ինչ-որ մեկը օդին տնական թորո՞ւմ էր:

– Նա, Արարատյան դաշտից գնում բերում էր, ստեղ վաճառում էր:

– Կհիշե՞ք՝ էդ որ թվերն էր:

– Ես, որ հերս էկել ա [19]52 թթ., հետդաստերագմյան թվերին, արտագաղթել ենք Դարաբաղ, էկել ենք [19]48 թ.:

[...]

– Էլի վերադարձաք Ձեր հին տունը:

– Նի՛ն տունը, էդ հին տունը հիմա շկա: Նողամաս ունեինք էն Իշխանավանք որ գնացինք, դրա մոտիկ էն գետի ափ, մշակում էին, ես ամբողջ գարնամից մինչև աշուն էդ հողամասի դատին նստած հսկում էի էդ հողը, որ ուրիշներ չգողանան, շտանեն, մեր ավանակ էր դրահում:

– Դա կոլխոզին չէ՞ր դատկանում:

– Չէ:

– Ինչքա՞ն տարածք հող իրավունք ունեիք ունենալ:

– Մարդիկ կային ավելի շատ հող ունեին, բայց դե ինչի մենք չունեինք, յոթ սոթին հող ունեինք: Կոլխոզի նախագան հորոխդերս է եղել, միասին մի բակում, իրեն վերցրել էր երեսուն քառասուն սոթին, հորս թողել էր յոթը սոթին, էն էլ իրա թոռը հասուն տարիքին վարում էին միասին, էդ էլ են գողանում:

– Տնամե՞րձ էր դա:

– Չէ, օժանդակ էր, մարդիկ կային, աղբում էին, մեղու դրահում աղբում էին, զոմեշներ դրահում էին, բայց մենք ի՞նչ ունեինք, ամեն ինչ տարել էին:

– Իսկ մայրիկը կոլխոզում աշխատո՞ւմ էր: Ինչքա՞ն աշխօր էր ստանում:

– Մայրիկս աշխատել ա, աշխօր շատ քիչ ա ստացել, քույրերս էլ են աշխատել, ծխախոտ են շարել, էն մեծի փոքր քույրը ճանադարհների վերանորոգող բրիգադա կար, տասներկու տարեկանից աշխատել ա էդ բրիգադայի մեջ:

– Ինչքա՞ն աշխօր էր ստանում:

– Տարին դիտի շատ աշխատեին, 40-50 աշխօր: Օրը մի աշխօր: Նստո մայրս կովկիթ աշխատեց:

– Ասում են կթվորուհիները լավ աշխօր են ստացել:

– Երկար շաշխատեց՝ մեկ-երկու տարի, գիշերը գնում էին, մի տաս կով տյիտի կթեին, խնամեին, էլի քիչ էր: Գիտես ի՞նչ, տարեկան եթե տնից շատ աշխատող կային հինգ– վեց հոգի, սայլերով բերք ին ստանում: Էդ բերք ստանալու տեսարանը մի երգ կա, էս գյուղում մի բժիշկ ա, հիմա չգիտեմ՝ կարա՞մ գտնեմ, գյուղի անունը 1938 թ. փոխվեց: Այստեղ մի բժիշկ ա եղել, երգեր ա գրել, էս էլ շատ երգեր դրել են իմ գրքի մեջ, որոյտել են, գտել են էդ մարդկանց, վերարտադրել են:

– Էդ որ երգում էին սայլերով մթերքը ստանալուց, ի՞նչ էին բերում:

– Բերքին ստանում սայլերով: Ամեն ինչ ստանում էին՝ ոլանի, յուղ, կարագ, մեղր էլ նույնիսկ:

– Իսկ հենց Ձեր տանը ամենամոխ տարին ո՞րն ա եղել:

– Մենք ճոխ տարի չենք ունեցել, մերս շատ քիչ ա աշխատել կոլխոզում, որովհետև դրանով երեխա չէր կարող ոլահել, մա զբաղվեց առևտրով: Քույրս էր աշխատում ծխախոտագործ, հետո էս անտառը, որ տնկեցին 1953 թ., ծառեր տնկեցին քիչ ժամանակով: Քույրերս էնքան գեղեցիկ են եղել, որ դեռ չհասումացած, 18 տարին շրացած՝ ձեռքից ձեռք փախցրել տարել են: Էդ Երևանաբնակ քույրս փախավ, և դա դարձավ իմ համար հենարան, որ էս կարողացա աղրել էդ բրոջս տուն, կրթություն ձեռք բերել, հոգատար եղան, տրագեդիկ կյանք ենք աղրել, ոչ բոլորն են լավ կյանքով աղրել, դատերագմ, հետդատերագմյա ավերված տնտեսություններ, դետք էր շինարարություն զարգանար ևն: 1921 թ. կոիվ դաշնակների հետ բոլշևիկների, երկրի լինել-չլինելու հարցը: Եթե դաշնակները, [գյուղի] գորավար տաղարի Աղաբեկը շիներ, հիմա էստեղ հայկական գյուղ չկար Սևանի ափում, թուրքերը Բասարից կովով վերցրել հասել էին էս կողքի գյուղը [...], որ նոր գնացինք ճամբար: Ուրեմն էդտեղ եղել ա Ազրբեջանի Ծիլխիսկու կառավարություն, որ որոշել էր Սևանի լիճը վերցնել, Սևանը համարում են իրենցը: [...]

– Ես դրանք կկարդամ Ձեր գրքերում, եկեք վերադառնանք ձեր մանկության տարիների հուշերին:

– Նասանք Ծամխոր, հետո վերադարձանք, էս ընդունվեցի դորոց: Նետում էի մեր հողամասին: Նետո մերս ավանակ ձեռք բերեց՝ մեկի տեղը երկուս, դրանով գնում էր և Ազրբեջան և Եղեգնաձոր, միրգ էր բերում ևն, իսկ մավով էլ գնում էր Երևան, Արտաշատ, օղի էր բերում ևն: Եվ մի մեջբերում անեմ, որ ասեցի մի հարուստի երբ կուլակաթափ են անում, էշին գրկած ասում է. «Ինչ որ ունեմ տարեք, մենակ էս էշին թողեք ինձ»՝ էդ էշատերը խնդրում ա մորս, որ տանի իր հետ առևտուր անի: Գնում են առևտուր անելու, հիմա ճիշտն ասած մոռացել են՝ Եղեգնաձոր ա եղել առևտուր անելուց, թե Արտաշատ, խառնում են

իրար, բայց իրա տղեն լավ ա սսում, սսում ա. «Դուխիկ, արի մի դայման կադենք», – էդ մարդուն մականուն Կռկո ա՝ կարճ մարդ էր, կքռկած, սսում ա. «Արի, դու համաձայնվի աղջիկ տուր ի՞մ տղին, ես էս քու բեռը շալակով տանեմ. հասցնեմ մինչև գյուղ, միայն մի դայմանով՝ աղջիկ տաս ի՞մ տղին», մերս կեղծ համաձայնություն ա տալիս, սսում ա. «հա, Աղիբեկ ջան, համաձայն եմ»: Ուրեմ, շալակում, հասցնում ա գյուղ, ործնում ա, գալիս ա, թե խոսքիդ տեր, աղջիկ դիտի տաս: Ասում ա, թե «Աղիբեկ ջան, ի՞մ աղջկա հերը բանտում նստած, ես ո՞վ եմ, որ առանց ի՞մ մարդու թույլտվության աղջիկ ամուսնացնեմ»: Դիմա իրա տղեն դատմում ա, թե քու մայրը էս ինչ օյին ա հանել ի՞մ հոր գլխին, և ի՞մ «Նուշեր» գրքիս մեջ գրված է: Ի՞նչ փշոտ մտքերը մանկությունից, որ մեծացա ավանակի վրա, հասուն տարիքում կալոսների վրա, և մինչև հիմա էլ Դարաբաղյան շարժում ևն, ևն: [...]

– **Դուք սովետական մարդ համարո՞ւմ եք Ձեզ:**

– Ես սովետական մարդ եմ, սովետի հացով սնված, սովետի դորոցում կրթված, անձերի կրթություն ստացած, մանկավարժ դարձած, դայքարած, սովետի և լավի համար աղրած, և վատի համար էլ տանջված: Ես գիտեմ սովետը հետևյալ՝ 700.000 փախստական, թոշվոր, ոջլոտ, անտուն, անտեր հայը դարձավ Նայաստան կերտող, Երևան շենացնող, աշխարհին ներկայացնող որդես քաղաքակիրթ մի ազգ: Ի՞նչ էր, եթե դա չլիներ:

ԼՈՒՅՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՉՔԱՐԻ ԼԵՉՎՈՎ

ի հիշատակ խաչքարագործ Նելսոն Շիրվանյանի

Հողվածը նվիրված է բանդակագործ Նելսոն Շիրվանյանի խաչքարային գործունեությանը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև հեղինակի խաչքարերը նվիրված են եղել որևէ կոնկրետ մարդու հիշատակին, բայց իրենց մեջ գաղտնագրել են Խորհրդային Սիության դաշտոնական գաղափարախոսությանը հակասող գաղափարներ՝ ինքնին դառնալով սամիզդատին հարազատ այլախոհական տեքստեր: Փորձ է արվել հասկանալու այդ խաչքարերի ստեղծման քաղաքական ենթատեքստը: Բանավոր դատմության մեթոդով հարցազրույցը բացահայտեց, որ հեղինակի խաչքարային գործունեությունը հետևանք է և հակազդեցություն խորհրդային իշխանությունների իրականացրած բռնաճնշումների, Հայոց ցեղասպանության փաստի լռեցման և կրոնի ժխտման քաղաքականության:

աչքարը հիմնականում բացօթյա միջավայրում ուղղամիզ կանգնած քարե սալ է, որի արևմտահայաց երեսին տեղադրում են խաչն ու նրան ուղեկցող բուսաերկրաչափական զարդերը, երբեմն էլ՝ թռչունների, կենդանիների և մարդկային կերպարներից բաղկացած քանդակային հորինվածքը: Այն հայ մշակույթի ամենաբնութագրական խորհրդանշաններից մեկն է¹:

Դասական խաչքարը Պարտադիր եռամաս կառուցվածք ունի՝ վերնամասում քիվը, կենտրոնում խաչը, ստորին հատվածում վարդյակը: Պահպանված առաջին խաչքարերը Նայաստանում թվագրվում են 9-րդ դարով: 12-րդ դարի կեսից խաչքարային մշակույթը ադրեց իր բարձրագույն ծաղկումը²: Այս շրջանում է նաև, որ խաչքարը դառնում է միջնադարյան գերեզմանոցի համադատկերի հիմնական տարրը: Այն կանգնեցվում է տաղանաքարի արևելյան ծայրին, այնուհետև, որ հանգուցյալի «հայացքը» ուղղված լինի դեղի խաչը³: 14-րդ դարի կեսերից սկսած քաղաքական և տնտեսական վայրէջքի տյանաններում խաչքարային մշակույթը անկում է ադրում: Խաչքարը վերածվում է գուտ վերգերեզմանային կոթողի: Նայաստանում խաչքարագործության ավանդույթը շարունակվել է մինչև 17-րդ դար, այնուհետև այն ընդհատվում է և կյանքի է կոչվում 20-րդ դարի 60-ականներին⁴:

Խորհրդային Նայաստանում մինչև 60-ականները չկային նոդաստավոր տյանաններ խաչքարային մշակույթի վերագարթոնքի համար, որովհետև ընդունված էր այթեիզմը որդես գադափարախոսություն, և այդ տյանաններում հնարավոր չէր ստեղծել կրոնական բովանդակություն ունեցող որևէ կառույց՝ այդ թվում խաչքար: Սակայն Երկրորդ համաշխարհային տյատերագմի տարիներին, երբ եկեղեցին դիտարկվեց տյատերագմի ծանր տյանանները և առաջ՝ հետևանքները հաղթահարելու միջոցներից մեկը, որոշակիորեն ստեղծվեցին կրոնի ազատականացման տյանաններ, խորհրդային մարդը հնարավորություն ստացավ իրականացնելու իր կրոնական ծեսերը,

ՉԼՍԿՐԻՍՏՈՒՆՆ ԸՐ ԳԵՏԻՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԱԿՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ

ՉԼՍԿՐԻՍՏՈՒՆՆ ԸՐ ԳԵՏԻՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԱԿՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ

¹ Տե՛ս Ն.Լ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, գործառույթը, տյատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան. ՊրինթինՖո, 2008, էջ 9: Տե՛ս նաև Խաչքարեր, <http://www.khachkar.com>, 15.10.2018:

² Նույն տեղում, էջ 128:

³ Նույն տեղում, էջ 141:

⁴ Նույն տեղում, էջ 373:

սկսեցին կառուցվել, վերակառուցվել ժողովրդական սրբավայրեր:⁵

Այս ժամանակաշրջանում ի թիվս քրիստոնեական ժառանգության այլ կոթողների՝ խաչքարը նույնդեպ դառնում է գիտական ուսումնասիրությունների առարկա: Նատկանշական են Սեդրակ Բարխուդարյանի⁶ և Ռաֆայել Իսրայելյանի⁷ աշխատությունները: Վերջինս խաչքարի ծագման և հետագա ձևափոխումների վերաբերյալ հողված է հրատարակում «Էջմիածին» ամսագրի 1977 թ. հուլիս և օգոստոս համարներում⁸: Նրանց և հայ մշակույթի այլ հետազոտողների շնորհիվ սկսում են տարածվել խաչքարի վերաբերյալ նոր ընկալումներ ու դատկերացումներ: ԻՄրուշչովյան ձմեռային և Նայաստանում ազգային զարթոնքի ժամանակաշրջանում՝ 1960-ական թթ.-ից սկսած, խաչքարը ընկալվում է որդես խորադես ազգային, բնորոշ միայն հայ ժողովրդին, ինքնատիպ ու չկրկնվող⁹: Բարձր է գնահատվում նրա զեղագիտական կողմը, շարունակվում է ընկալվել իբրև սրբազան մի քար, որի կերտմանը դեսոք է մասնակցեն միայն ազնիվ ու արդար կենսակերպ վարողները, և որը դեսոք է կանգնեցվի միայն արդարամիտ նդատակներով¹⁰:

Այս դայմաններում է, որ քարտաշ վարդեստները սկսում են ստեղծել խաչքարեր: ԻՄաչքարային մշակույթը վերականգնողներից մեկը Նելսոն Շիրվանյանն էր, ով լինելով քանդակագործ՝ սկսում է կերտել խաչքարեր՝ հարազատների գերեզմաններին տեղադրելու նդատակով՝ դրանց մեջ ներդնելով իր մտորումները և հատկադես բողոքը՝ կաղված տարբեր քաղաքական խնդիրների հետ, ներառյալ ցեղատդանությունը: Սույն հողվածում, որդես ուսումնասիրության դեղք (case study) ընտրելով խաչքարագործ

⁵ Յու. Անտոնյան, Խորիրդային աշխարհիկացման ծրագիրը // Խորիրդային ժառանգություն հողորդաշար, Բուն TV, 22.02.2018, <http://boon.am/yuliantonyan/>, 15.10.2018:

⁶ Մ. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարադեստներ և քարգործ վարդեստներ, Երևան. Նայկական ՍՍՌ ԳՄ Նրատարակչություն, 1963:

⁷ Ռ. Իսրայելյան, Ինչ են արել Նայրենական դատերագմի տարիներին // Նողվածներ, ուսումնասիրություններ, ակնարկներ, Երևան. Սովետական գրող, 1982, էջ 162:

⁸ Ռ. Իսրայելյան, Խաչքարեր // Նողվածներ, ուսումնասիրություններ, ակնարկներ, Երևան. Սովետական գրող, 1982, էջ 112:

⁹ Ն.Լ. Պետրոյան, նշվ. աշխ., էջ 374:

¹⁰ Այտոյիս նեկնաբանություն խաչքարի վերաբերյալ հարցագրույցների ժամանակ տվել են այն վարդեստները, որոնք 1970-ականներից խաչքարագործությամբ են գրաղվել:

Նեխտն Շիրվանյանի անհատական փորձառությունը, այն դիտարկելու եմ խորհրդային քաղաքականության համատեքստում:

Ն. Շիրվանյանի խաչքարային գործունեությունը ղայմանավորված էր վերոհիշյալ 1960-ականների ազգային զարթոնքով, որում մեծ տեղ ունեին ցեղաստանության թեմայի տարբեր ձևաչափերով քննարկումները: Նայտնի է, որ քաղաքական նկատառումներից ելնելով՝ ցեղաստանության թեման հիմնականում արգելված էր Խորհրդային Նայաստանում¹¹: Թեև ցեղաստանություն վերադրածները և նրանց սերունդները այստեղ աղաստան էին գտել և շարունակում էին իրենց կենսընթացը, բայց ստալինյան ժամանակաշրջանում թուրքահայերի, նախկին դաշնակցականների և այլ լսմբերի նկատմամբ բռնաճնշումները ստեղծել էին համատարած վախի մթնոլորտ, որը կարծես լռեցրել էր նրանց անձնական հիշողությունները կամ առնվազն արգելել դրանք բարձրաձայնելը հանրային տարածքում:

Ցեղաստանության թեման համեմատաբար ազատ արտահայտություն է գտնում Ստալինի մահից հետո: Ստալինի անձի դաշտամունքի դատադարտումը, դեմոկրատական սկզբունքներն ամրագրելու փորձերը որոշակիորեն ճեղքեցին վախի մթնոլորտը և նդաստեցին ցեղաստանության խոսույթի ձևավորմանը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝ գիտականից մինչև առօրեական: Ցեղաստանությունը դարձավ ինքնության կարևոր բաղադրիչը, գրեթե հայ լինելու ցուցիչ¹²: Ի հայտ եկան ցեղաստանության «անձնական հիշողությունը» ամրագրողներ (օրինակ, Վերժինե Սվազյանը 1955 թ.-ից սկըսած գրանցում էր ցեղաստանության վերադրածների հուշագրությունները՝ իբրև բանահյուսական նյութ)¹³, ցեղաստանության թեման արտահայտվեց կերդարվեստում¹⁴, գրակա-

¹¹ Ն. Մարության, Կարո¹⁰ է արդյոք ցեղաստանության հիշողությունն առաջնորդել դեղի հաշտություն. Նայացք Երևանից // 21-րդ դար. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 2011, թիվ 5(39), էջ 21:

¹² R. Panossian, The Past as Nation. Three Dimensions of Armenian Identity // Geopolitics, vol 7(2002), p. 139.

¹³ Լ. Արսահամյան, Գ. Շազոյան, Պատմագրության և հիշողության միջև. Խորհրդային Նայաստանի բռնաճնշումների հուշարձանացումը // Ստալինյան բռնաճնշումները Նայաստանում. դատություն, հիշողություն, առօրյա, Ղիշողության ազգագրություն 5, Երևան. Գիտություն, 2015, էջ 247:

¹⁴ Ուշագրավ է նկարիչ Մարգիս Մուրադյանի «Կոմիտաս, 1915 թվական-աղբիլ» կտավը՝ արված 1965 թ.: Տե՛ս նաև Լ. Մարգյան, «Ձնհաղը», «ազգայինը» եւ հայ գեղանկարչությունը (ըրվագներ 1950-ական թթ. խորհրդային քննադատության էջերից) // Արտեբիա, 04.12.2015, <http://www.arteria.am/hy/1449062694>, 15.10.2018:

նույթյան¹⁵ ու դատաւարական մեջ¹⁶: Ակտիվ գործունեության անցան ալյախոհները (համամիտ շլիներով այդ անվան հետ՝ իրենք իրենց անվանում էին ազգային հայրենասիրական շարժման ներկայացուցիչներ). ստեղծում էին ընդհատակյա կազմակերպություններ, տղագրում *սամիզդատ*¹⁷ թերթեր և թոռուցիկներ, տարածում էին ֆիդայիներին նվիրված երգեր, բանաստեղծություններ՝ ձգտելով հանրայնացնել ցեղասպանության մասին հիշողությունը¹⁸:

Յեղասպանության նարատիվը առավել ակտիվորեն շրջանառվեց 1965 թ. ադրիլի 24-ին Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի նշումի առիթով՝ դառնալով աննախադեղ մի իրադարձություն Խորհրդային Ղայաստանի դատմության մեջ, բերելով իր հետ արդեն վաղուց սկսված, բայց այսուհետ առավել խորացող խորհրդային մարդկանց գիտակցության հեղաշրջում¹⁹: Շուտով ցեղասպանության ինքնության վերագարթոնքը հանգեցրեց իրենով դայմանավորված հուշարձանաշինության:

Յեղասպանության մարմնավորման համար որդես առաջին հուշակոթող ընտրվեց խաչքարը: 1965 թ. կաթողիկոս Վազգեն Առաջինի դատվերով կանգնեցվում է Ռաֆայել Իսրայելյանի աշխատանքը՝ ասիմետրիկ խմբական խաչքարերի հորինվածք, ինչը օրինականացնում էր և նդաստում խաչքարային արվեստի տարածմանը²⁰: Սրանից հետո՝ 1970-ականներին սկսվում և աս-

¹⁵ Խաչիկ Դաշտենցի «Մտղեղան», «Ռանշդարների կանչը», Գորգեն Մահարու «Այրով այգեստաններ», Ստեփան Ալաջաջյանի «Եղեղները շխտարիվեցին» վեղերը, Ղովհաննես Շիրազի «Ղայոց Դանթեականը», Պարույր Սևակի «Անլուբի զանգակատուն» ղոնմները և այլն:

¹⁶ Մ. Ներսիսյան, Ղայ ժողովրդի ազատագրական դայքարը թուրքական բռնակոտորան դեմ 1850-1870 թթ., Երևան. ՂՍՄ ԳԱ իրատ., 1955: Տե՛ս նաև Ա. Ղովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մղթի դատմությունից, զիբր առաջին, Երևան. Ղայկական ՄՄՌ ԳԱ, 1957; Ղ. Թուրշյան, Մարդարադատի հերոսամարտը, Երևան. Ղայաստան, 1965:

¹⁷ Ռուսերեն՝ самиздат, բարացի՝ «փնքնահրատ». ընդհատակյա ձեռագիր կամ տղագրամբերնայով բազմացվող և զաղտնի տարածվող հրատարակախոսական, գրական, բաղարական բնույթի նյութեր: Տե՛ս նաև «Անկարելի» կարելի է» վավերագրական ֆիլմ, հեղ. և ղեմ.՝ Տիգրան Պասկևիչյան, 2014, փետր. 9, 2014: https://www.youtube.com/watch?v=T8ixDIWKZ_Y, 15. 10. 2018:

¹⁸ Մանրամասն տե՛ս Վ. Ղարությունյան, Ալյախոհությունը Խորհրդային Ղայաստանում, Երևան. Վան Արյան, 2014:

¹⁹ M. Lehmann, Apricot Socialism: The National Past, the Soviet Project, and the Imagining of Community in Late Soviet Armenia // Slavic Review, 2015, 4 (1), p. 9 (9-31).

²⁰ Վ. Ղարությունյան, Նահատակաց հուշարձանի կառուցումը // Վազգեն Ա կաթողիկոս ամենայն հայոց, նվիրվում է մահվան 10-րդ տարելիցին, Էջմիածին. Մայր աթոռ Ա. Էջմիածին, 2005, էջ 40:

հետևյալն ա. որ եթե մեկը ըստեղ խաչքար ա անում, ուրեմն էտ դողողակը կա, ոչ թե ազդեցություն ձևի, բովանդակության և այլն, այլ՝ կարաս դու էլ անես»²³:

Այսդիսի մթնոլորտում է իր գործունեությունը սկսում քանդակագործ Նելսոն Շիրվանյանը: Նա ծնվել է 1944 թ. Իրանում՝ Նոր Ջուղայում: 1946 թ., երբ նա 2 տարեկան էր, ընտանիքը հայրենադարձվել է Խորհրդային Ղաչաստան և բնակություն հաստատել Միսիանում, այնուհետև տեղափոխվել Երևան: Խորհրդային երկրում առաջին խնդիրները թերևս կառված էին հայրենադարձությունից բխող բոլոր դժվարությունների հետ: 1946-1947 թթ.՝ հետդատերազմյան ժամանակաշրջանում, Ղաչաստան ներգաղթածների վիճակը բարվոք չէր: Տարբեր երկրներից Ղաչաստան տեղափոխվածները, այդ թվում նաև Շիրվանյանները, անցնում էին նոր դժվարությունների հարմարվելու դժվարին ուղի՝ հաղթահարելով խորհրդային քաղաքական համակարգից բխող գաղափարական մտածելակերպի տարբերությունները, կենցաղային դժվարությունները և այլն²⁴:

Ընտանիքի համար հաջորդ խնդիրը կառված էր հոր՝ Սերոբ Շիրվանյանի 1951 թ. Միբիբ աքսորվելու հետ՝ մեղադրվելով դաշնակցական գործունեություն ծավալելու մեջ²⁵: 1956 թ. առողջությունը կորցրած հայրը համաներումով վերադարձել է Ղաչաստան և մահացել 1976 թ.: Սա այն հանգուցային իրադարձությունն էր, որը քանդակագործը բնորոշել էր իբրև անձնական տրավմա և դայնամավորել իր աստելությունը Խորհրդային Միության նկատմամբ: Մյուս կողմից, շնայած իր ընտանիքը ցեղաստղանության գոհ չէր դարձել, նա կրում էր նաև ցեղաստղանության հիշողությունը՝ իբրև խմբային տրավմատիկ հիշողություն: Այդ ազդեցություններն այնքան ուժեղ էին, որ նա հրաժարվել էր քանդակագործության հնարավոր այլ ճյուղերից և զբաղվում էր միայն խաչքարագործությամբ՝ ընդ որում կտրականաաղես մերժելով որևէ աշխատանք գումարով անելու գաղափարը:

Խորհրդային Միությունում այթեիզմը իշխող գաղափարախոսու-

²³ Էլեն Ստեփանյան, ԳԱՆ, Երևան, 2017, Նելսոն Շիրվանյան, 73 տարեկան:

²⁴ Ար. Ստեփանյան, Ն. Սարգսյան, Իրանահայերի ներգաղթն ու վերաբնակեցման խնդիրները (1946-1970-ական թվականներին) // Գաղտնա-բանասիրական հանդես, N 1 (2009), էջ 52:

²⁵ Բռնադատվածների մասին էլեկտրոնային շտեմարան, <http://armeniatotalitaris.ru>, 17.10.2018:

«ՆՈՐԵՂԲՈՐ ԽՍՂՔԱՐ» ԿԱՄ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՔ
ԱՆՅՅԱԼԻՆ (1976 թ.)

Առաջին խաչքարը նախատեսված էր Նելսոն Շիրվանյանի հորեղբոր շիրիմի համար (նկ. 1.): Այս գործը վարդետը ձեռնարկել է հանգուցյալի որդու առաջարկությամբ: Խաչքարը դրված է լուսավանդանի վրա, որին արձանագրված է հանգուցյալի անուն, ազգանունը և մահվան տարեթիվը: Մշոտ Մկրտիչի Շիրվանյան, 1922-1976: Խաչքարն իր հորինվածքային կառուցվածքով գրեթե ճշգրտորեն կրկնում է դասական ուղղանկյուն խաչքարերի կառուցվածքը՝ քիվ, բուն խաչանշան և վարդյակ: Խաչային հորինվածքը ընդգրկող հատվածի ետնախորքը թողնված է անմշակ, ինչը դիտողի ուշադրությունը կենտրոնացնում է վարդյակի վրա կանգնած կոունկին, որի կտուցին էլ հենված է խաչային հորինվածքը: Վերջինը մի մոտիվ է, որ կիրառված չէ և ոչ մի դասական խաչքարում ու արտահայտում էր վարդետի անձնական գաղափարաբանությունը: Նեղինակը կոունկի առկայությունը մեկնաբանում է այսուհետ. «*ես հորեղբորս քարը արեցի ոնց ընդունված ա խաչքարը, ուղղակի տակը մի հատ կոունկ էի նկարել, որի կտուցի վրա էր խաչը: Իսկ ինչի՞ կոունկի. որովհետև միշտ ընենց արևմուտքի կարոտը աչքերին էր. հենց առնում էր էտ մանդոլինը կամ ջութակը, կողերի տակ արցունք էր գալի, գոլ էր դառնում: Ես էտ հիշում եմ, որովհետև ինքը երևի էնտեղից եկող կոունկների հետ էր»:* Կորուսյալ հայրենիքի նկատմամբ կարոտի գաղափարը, որին հեղինակն առնչվել է իր հարազատների վարքագծի շնորհիվ, հետհիշողություն դառնալով՝ արտահայտվել է իր ստեղծած խաչքարի մեջ՝ խաչը կոունկի կտուցին կանգնեցնելու մոտիվով: Այս՝ միայն իրեն հասկանալի գաղտնագիրը բարձրացնում է այն ժամանակ «արգելված հայրենիքի» թեման, և օրինակ է, թե ինչու էր խորհրդային մարդը զըտնում իրեն հուզող հարցերն արտացոլելու մեկ այլ լեզու, այս դեղքում՝ վիզուալ այլաբանության միջոցով: Եվ իր առաջին աշխատանքում հեղինակը արտացոլում է խորհրդային խոսույթում տարրալուծված, բայց երբեք հանրային վայրում չբարձրաձայնած խնդիրը՝ «հայրենադարձվածների» կարոտախոտը իրենց ծնված վայրի հանդեպ՝ անկախ նրանից, թե որտեղ էր այն՝ Թուրքիայում, Միջին Արևելքի, թե Եվրոպայի տարբեր երկրներում: «Այլ երկրի» հանդեպ կարոտախոտը իր մեջ դարունակում էր նաև «այլ տիղի կյանքի» ձգտելու քողարկված մեկ այլ ուղերձ:

փոխանցել կրոնն ու հավատը լուսաբանելու իր լուսաբանչի՝ որ-
դես խորհրդային գաղափարախոսության դեմ անձնական
ուղերձ: Կրոնի լուսաբանությունը նա անում է ոչ թե վերաբ-
տադրելով ավանդական խաչքարագործությունը և այդդիսով
լուսաբանելով ու լուսաբանելով այս կոթողների կրոնական
տեքստը, այլ քանզում է այն՝ փոխարենն առաջարկելով քրիս-
տոնեությունը լուսաբանող, բայց հակակրոնական (հմմտ.
խաչքարի սկզբունքները քանդող) մի նոր լեզու:

Խաչքարի վրա տեղ գտած մյուս լուսաբանները հեղինակը նույն-
դես մանրամասն մեկնաբանում է, օրինակ՝ ցույց որդես դրա-
կան, գորտը՝ բացասական ուժ: Գորտի երկկենցաղ լինելը հե-
ղինակի համար հիմք է ծառայել այդ կենդանուն ասոցացնելու
խորհրդային հասարակության հետ՝ փորձելով փոխանցել այն
միտքը, որ *«սովետական հասարակությունը ցերեկը աղոթում էր
սովետական ճշմարտության համադաստասխան, գիշերը՝ ան-
հասկանալի»*: Կնոջ բացված ոտքերի լուսաբանը հեղինակի բա-
ցատրությամբ սկզբի, կենսատու ուժի խորհրդանիշն է:

Նամածայն Ե. Շիրվանյանի՝ աշխարհը կառավարվում է այս 3
ուժերով, և դրանցից որևէ մեկի գերիշխանությունից է կախված
աշխարհի ելքը: Այս ուժերի հակասությունների հետևանքով խա-
չը, որը կարծես երկաթից ձուլած լինի, ճաք է տվել: Մույն ուժերից
որևէ մեկի հաղթանակից է կախված՝ արդյոք ամոթերը կցուլեն, թե
ոչ, և արդյոք կլինի լույս: Կարելի է ասել, որ վարդեսն իր աշխա-
տանքում արտացոլել է այդ ժամանակաշրջանում շրջանառվող
այն հակախորհրդային խոսույթը, որը հատուկ էր Նայաստանի
այլախոհական շարժումներին, և իր խաչքարը կարծես վերած-
վում է «սամիգդալի» մի այլախոհական տեքստի:

Այդդիսով՝ Նելսոն Շիրվանյանի երկրորդ աշխատանքի հիմ-
նական ուղերձը, բացի ընդհանրադես խորհրդային հասարա-
կության դեմ լինելուց, թիրախավորում է հատկադես այդ
հասարակության աղակրոնական բնույթն ու կեղծիքը, երկակի
ստանդարտներին համակերպվելու լուսաբանողանքն ու դրան
համակերպվելը:

Բարդ առաստիակյալ խորհրդանշաններով լեցուն այս աշխատանքը նույնիսկ դժվար է համարել խաչքար, քանի որ այն կորցրել է կանոնիկ խաչքարի իր բոլոր հատկանիշները՝ դահեղով միայն խաչի թույլ նշմարվող տատկերը: Սակայն այս աշխատանքը հեղինակի համար իր՝ առավել գաղափարախոսական բովանդակություն տարունակող կոթողն է, քանի որ այն ոչ միայն ձևակերտում է հիմնական խնդիրը, այլև ցույց տալիս ազատվելու ճանադարհը: Նեղինակի համար խաչքարը ազգային ինքնության խորհրդանիշն է, և այն դահեղանելը հավասարվում է ազգային ինքնությունն ուրանալուց փրկելու առաքելության: Այսպես, վարդեսը խաչքարի միջոցով փորձում է փոխանցել դրա դահեղանման գաղափարը՝ ամբողջությամբ կազմաքանդելով բուն խաչքարային հորինվածքը:

Սա թերևս 1980-ականներին խորացող այլընտրանքային խոսույթի անձնական արտահայտումն է: Դրսևորումներից մեկը այն շրջանի, երբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում սկսեցին լայնորեն տարածվել ազգային բնույթի հարցեր արծարծող գրական ստեղծագործություններ, հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ, հրատարակախոսական ելույթներ:

Ըստ Ն. Շիրվանյանի՝ իր գործունեության վրա խորը ազդեցություն է թողել 1980-ականներին ցուցադրվող «Գրական կամուրջներ» ամենամյա հաղորդաշարը՝ գրող, հրատարակախոս Կարեն Սիմոնյանի հեղինակությամբ: Նաղորդաշարը հետադիմորում էր ազգային ինքնությունը վերահաստատող նդատակներ և անդրադառնում մայրենի լեզվի նկատմամբ իրականացվող «աղետալի գործողություններին», դատմամշակութային և էկոլոգիական խնդիրներին²⁸:

ՎԵՐԱՇՆՈՒՆԴ ԿԱՄ ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԼԱԿԱՆ (1982 թ.)

«Վերածնունդ» անուն ստացած խաչքարը (նկ. 4) ստեղծվել է՝ ի հիշատակ հեղինակի մորաքրոջ: ԻՍաշասալի կենտրոնում երեվում է միայն խաչի ուրվագիծը՝ ողային շարվածքի նմանությամբ, որի վերին ուղղամիզ թևից ճեղք է բացվում և խաչքարը կիսում երկու մասի, իսկ ճեղքից դուրս է հորդում մի գանգված,

²⁸ Վ. Նովհաննիսյան, Կարեն Սիմոնյանի հարցազրույցը 2010 թ. // Սուրհանդակ, 24.10.2012, <https://surhandak.wordpress.com>, 08.11.2018:

որը ստացել է հեղինակի հետևյալ երեք ձևակերպումները. ձեռք՝ իբրև գործարարություն, կրակ՝ իբրև գիտություն, և բերան՝ իբրև ազատություն: Նելսոն Շիրվանյանն այսպես է մեկնաբանում այս աշխատանքը. «Նավատի՝ Էնթան ուժատյառության, փուլ եկած վիճակ կա որ խաչի փոխարեն, չէ՞, ստեղ լիտի խաչ լիներ՝ իրա հարդարանքներով: Ողնաշարն ա մնացել, էտ գեղեցիկ, ծաղկուն, ծաղկաշատ խաչերից ողնաշարն ա մնացել: Ու տաղակվող լանգետի մսի տես ամբողջ իր գեղագիտական զարդանախշերը հայել ա, թափել ա լավայի նման դուրս: Ի՞նչն էր դատաճառը սրա: Որ տարիների անհարթությունը և հակասությունը այ ստեղ բերել ա մատրիցայի և ճեղվածքի, որից դուրս է հորդում կրակը»: Սկզբից խաչքարը այնպես է կանգնեցված եղել, որ արևի լույսը դուրս է հորդել այդ ճեղքից, և ստեղծվել է ջահի դատարանը: Ն. Շիրվանյանի բացատրությամբ՝ այս խաչքարը նա քանդակել է իբրև մի ամբողջական օլիմպիական ջահ, որ իր սերունդը փոխանցում է գալիք սերունդին; որ թեև իրենց փոխանցած հայրենիքը ճաք տված է, որովհետև գրկված է հավատից, բայց նոր սերունդը այն փրկելու և հավատով երկիր կառուցելու հնարավորություն ունի, և ամեն բան կախված է նոր սերնդի կամքից:

Այսօր, խաչքարային այս ուրույն տեքստերում հայտնվում է մի նոր մոտեցում՝ ուղղված դեռի աղազան, որը շունի որևէ աղերս դեռական գաղափարախոսության քարոզած խորհրդային աղազայի հետ: Նեղինակի մեկնաբանությամբ՝ այս խաչքարն ավելի միատիկ է և դժվար ընկալելի միգրացիոնալ այն դատաճառով, որ իր համար էլ աղազայի հետ կառված դատկերացումներն այն ժամանակ ավելի մշուշոտ էին:

ՆԱՅԱՍՏԱՆ (1984 թ.)

Վարդեսի այս խաչքարը (նկ. 5) կանգնեցվել է գոհված մի դեռատի աղջկա հիշատակին: Աշխատանքը հիշեցնում է թևավոր խաչ, վերին աջ թևի վրա նկատելի է արևածաղկի մի փոքրիկ հատված, իսկ ամբողջ սալի մնացյալ հատվածը ճաքեր տված հողաշերտ է հիշեցնում՝ «չորացած Նայաստան», որը եթե խնամվի, նորից կծաղկի: Սա է հեղինակի բացատրությունն ու Նայաստանի աղազայի հետ կառված ցանկությունն ու դատ-

գամը: ԻՄաչքարի այս տիպը՝ որոշակի փոփոխություններով, Ն. Շիրվանյանը կրկնում է մի քանի տարի անց՝ այդդիսով կառ ստեղծելով իր աշխատանքների միջև, ինչդեռ նաև ամրագրելով իր իսկ հորինած խորհրդաբանությունը:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ (1989 Թ.). ԸՆԴՆԱՏՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ ԿՈՏՐՎԱԾ ԽՍՉՔԱՐ

Այս խաչքարը հեղինակը հետագա իր մեկնաբանություններում անվանել է «Յեղաստանություն» (նկ. 6): Սա նույնդեպ դիտի ծառայեր իբրև վերգերեզմանային կոթող, սակայն տեղափոխելիս վերամբարձ կոունկից ընկնում է և ընկած դիրքով այսօր էլ շարունակում է իր գոյությունը Չարբախի գերեզմանոցում: Սա ուղղանկյուն սալ է, որի վրա կարծես արհեստականորեն ներդրված է խոշոր ու կոտիտ չափեր ունեցող խաչանշանը, իսկ վարդյակին փոխարինում է հրեշի գլուխ, որը ըստ հեղինակի՝ ցեղաստանության խորհրդանիշն է: ԻՄաչքարի մակերեսը կարծես չորությունից ճաքեր տված հող լինի, որի կենտրոնում երևում է արևածաղկի մեկ երրորդը: Ըստ հեղինակի՝ արևածաղիկը ցեղաստանության արհավիրքից հետո նոր վերածնունդ ապրող Նայաստանի խորհրդանիշն է, իսկ չորացած հատվածը կորուսյալ հայրենիքն է:

«Յեղաստանություն» խաչքարը վարդեսը քանդակել է 1989 թ., ու թերևս այն իր վրա կրում է քաղաքական իրադարձությունների ազդեցությունը: ԻՄՄՄ դեկավարության հռչակած վերակառուցման, դեմոկրատացման կուրսի շնորհիվ զանգվածային լրատվության միջոցներում և գեղարվեստական գրականության մեջ առաջ էր եկել խորհրդային դատմությունը վերանայելու և վերագնահատելու դաժանաբանությունը: 1988-ին սկսվեց Ղարաբաղյան շարժումը, նույն թվի փետրվարի 27-29-ին տեղի ունեցան սուսգայիթյան ջարդերը: Այս իրադարձությունները հայերը ընկալեցին իբրև ցեղաստանություն. դրանք թարմացրին 1915 թ. ցեղաստանության դատմական հիշողությունը²⁹: Յեղաստանության թեման ինքնին դարձավ Ղարաբաղյան շարժման հիմնական խթանը³⁰: Մյուս կողմից, ինչդեռ վերը

²⁹ Ն. Սարգսյան, Յեղաստանության հիշողությունը որդես նոր ինքնության ձևավորիչ, (1980-ական թվականների վերջ – 1990-ական թվականների սկիզբ) // Պատմա-բանասիրական հանդես, N 1 (2005), էջ 57:

³⁰ Նույնի, Նայ ինքնության դատկերագրությունը: Նատոր 1. Յեղաստանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան. Գիտություն, 2009:

նշեցինք, արդեն իսկ ձևավորվել էր մի փորձառություն, երբ գերեզմանաքարերը, խաչքարերը հաճախ էին օգտագործվում իբրև ցեղասպանության խնդիրը հնչեցնելու հնարավորություն: Այսպես, ներկայիս Ղայաստանի տարբեր բնակավայրերի գերեզմանոցներում կարելի է տեսնել գերեզմանաքարեր, որոնց վրա նշված են ոչ միայն հանգուցյալի ծննդյան և մահվան տարին, այլև ծննդավայրը, եթե այն գտնվում է Արևմտյան Ղայաստանում: Այստիսով, հանգուցյալի ընտանիքը «ծննդականի» քարե վավերագիր է ստեղծում՝ ոչ մի բառ չասելով ցեղասպանության մասին, բայց և այսպես փորձում է ձևակերտել իր դահանջատիրությունը³¹:

Նելսոն Շիրվանյանի այս աշխատանքն էլ, ըստ էության, քանդակագործի դահանջատիրության գեղարվեստական տեքստն է, բայց որը, ի տարբերություն այլոց գերեզմանաքարերի, միաժամանակ ունի երկու հասցեատեր՝ ոչ միայն Թուրքիան, այլև այս հարցը լռեցնող խորհրդային կայսրությունը: Նետաքրքիր է խաչքարի դատմությունը, որը կարծես մի կենդանի ինստալյացիա լինի, երբ ժողովրդի դատմությունը ցեղասպանությամբ ընդհատող ողբերգությունը խորհրդանշող գեղարվեստական աշխատանքը տեղափոխության ժամանակ նույնդես կոտրվում է և վերածվում իրական հուշարձանի՝ որդես ամբողջից դատահական վայրում մնացած մի բեկոր:

Այս և մյուս աշխատանքները թեև նախատեսված էին որդես շիրմաքար կոնկրետ մարդկանց համար, սակայն նրանց կենսագրության հետ ինչ-որ աղերս ակնարկելուց բացի՝ վարդեսի համար դրանք շատ ավելի ընդարձակ ուղեբժներ են, որոնք կարծես մեկ գաղափարական տեքստի տարբեր դարբերություններ լինեն: Այդ տեքստի ստեղծման տարիներին դրա բառային մակարդակով արտաբերումը կա՛մ բացառվում էր, կա՛մ ենթադրում էր հեղինակի հետադիմում: Արվեստագետն այստիսով գտել էր իր ասելիքը ձևակերտելու սեփական լեզուն՝ անկախ նրանից, թե որքանով այն կարող է ընկալելի լինել հասցեատիրոջը՝ դատահական «ունկնդրին»:

Նարկ է նշել, որ հեղինակը չի վաճառել ոչ մի խաչքար՝ համարելով խաչքարը «անգնահատելի արժեք»: Նա նաև ընտրողա-

³¹ H. Kharatyan-Araqelyan, On some Features of Armenian-Turkish Joint Memories of the Past // Prospects for Reconciliation: Theory and Practice. Proceedings of the International Workshop, Yerevan, 27 November, 2010, eds.: H. Kharatyan-Araqelyan, L. Neyzi, DVV international, pp. 126-138.

բար է մոտեցել այն հարցին, թե հատկապես ում համար լինում է այն կանգնեցնել: Ըստ հեղինակի՝ միայն Պարկեշտ, բարոյական առաքինությամբ աչքի ընկնող մարդիկ են արժանի իրենց հիշատակը հավերժացնող խաչքարի: Վարդեսի կինը լուսամուտ է, թե ինչդեպ է քանդակագործը բազմաթիվ լուսավորատուների մերժել՝ հաշվի չառնելով սեփական նյութական կարիքը: Վարդեսը հիմնականում աղյուր է մեկուսացած, աշխատել է Գեղարվեստի ակադեմիայում որդես քանդակագործության դասախոս և այդ աշխատավարձով հոգացել իր աղյուրատը: Նրա խաչքարերը շարունակում են իրենց գոյությունն իբրև վերգերեզմանային կոթողներ: Դրանք իրենց արտասովոր կառուցվածքով, մյուս գերեզմանաքարերից և խաչքարերից տարբերվող տեսքով առաջացրել են հետաքրքրություն և որոշակի ոգևորություն: Նեղինակը հիշում է, թե ինչդեպ գերեզմանի լուսակն առաջարկել է իր հոր համար լուսատրաստած խաչքարը տեղադրել գերեզմանամուտքի մոտ, որդեսգի այն առավել հասանելի ու նկատելի դառնա մարդկանց համար: Սակայն այս կարգի առաջարկները եղել են անհատներից, իսկ խորհրդային իշխանության լուսամուտներում անհատական առաջարկությունները՝ առանց լուսակն հովանավորության, դժվար իրականացվող նախաձեռնություններ էին, մինչդեռ լուսակնները որևէ վերաբերմունք չի դրսևորել վարդեսի ու նրա գործունեության նկատմամբ՝ ոչ դրական, ոչ բացասական:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչդեպ տեսանք, թեև Նելսոն Շիրվանյանի աշխատանքները հիմնականում արվել են 1970-80-ականներին, սակայն դրանց ստեղծման նախադրյալները ձևավորվել էին դեռ 1960-ականների Խորոշողյան ձևալի ընթացքում, որի հայաստանյան բնորոշ առանձնահատկությունները դրսևորվել ու իրենց ուրույն լեզուն էին գտել քանդակագործի աշխատանքներում: Որդես ամփոփում լուսակն է առանձնացնեմ երկու կարևոր կետ.

1. 1960-ականներին է տարածվում ցեղասպանության խոսույթը, և այդ լուսակն ամրադրվում է իբրև ազգային ինքնության հիմնապարհներից մեկը: Նելսոն Շիրվանյանը, լինելով հայրենադարձի զավակ, կորուսյալ հայրենիքի ցավն ընկալել է որդես

անձնական ողբերգություն և խորհրդային բռնաճնշումների անթարկված հոր տրավման տեղադրել է ցեղասպանության համատեքստում: Թեև հայրը ցեղասպանության ականատես չէր և այս ողբերգության հետ որևէ առնչություն չուներ, սակայն «կորուսյալ հայրենիքն» ու «ցեղասպանությունը» այնքան են փոխկառված հանրային խոսույթում, որ տեղափոխվում են մասնավոր դատմություն՝ շունենալով դրա հետ դատմական աղերս: Այստեղ ակնհայտ է խմբային դատմության հուժկու ազդեցությունը մարդու անձնական կենսագրությունը իմաստավորելու, այն ներկայացնող լեզուն ձևավորելու վրա:

2. 1950-ականներից սկիզբ առած Խորհրդային իշխանության բռնաճնշումների հանրային բարձրաձայնումը, անձի դաշտամունքի մերկացումն ու որոշ չափով հակախորհրդային մթնոլորտի ձևավորումը Նայաստանում հիմնականում ստանում է ազգային այլախոհության շարժման ձև և հասնում իր գագաթնակետին 1960-ականների կեսերին: Ն. Շիրվանյանի՝ հակախորհրդային այլախոհությանը ինշ-որ կերպ հարելու դատաճանաչման հիմքը նախ հոր արքությունն էր, առաջ Խորհրդային Միությունում հավատի, կրոնի ժխտման քաղաքականությունը: Այս դատաճանաչումով է, որ ի հակառակ խորհրդային քաղաքականության և դաշտոնական գաղափարական հոսանքի՝ Շիրվանյանը սկսում է իր դատկերացմամբ «վերականգնել» խաչքարագործությունը և հրաժարվում է քանդակագործության լայն հնարավորություններից: Թեև իր աշխատանքներն ըստ էության շատ ավելի քանդակագործություն են, քան խաչքարագործություն, քանի որ դրանցում դաժնացված չեն խաչքարագործության և ոչ մի կանոն, սակայն հեղինակը դրանք ընկալում է որդես խաչքար՝ ընդլայնելով վերջինիս ձևակերպման սահմանները: Այս աշխատանքների ստեղծման տարիներին, երբ խաչքարագործությունը մոռացված արհեստ էր, նման մեկնաբանությունը ոչ միայն ընկալելի էր, այլև հետաքրքիր շատերին և նույնիսկ շատ չէր խախտում եղած դատկերացումները, քանի որ խաչքարագործության կանոնի ո՛չ հանրային գիտելիք կար, ո՛չ էլ այն հնի դատճենով կրկնելու սղասելիք: Գերեզմանոցներում էլ արդեն մի քանի դար վերացել էր խաչքարը որդես տաղանաքար դնելու դրակտիկան:

Ֆիլմեր, հաղորդումներ, գրվել են հողվածներ: 1986 թ. «Սովետական Նայաստան» թերթում Բ. Արշակունին մի հողված է նվիրել Շիրվանյանի խաչքարերին՝ այն վերնագրելով «Խաչքարի վերածնունդը»³²: Իսկ 1987 թ. Կարեն Սիմոնյանը հրատարակում է «Նայ հնագույն արվեստի վերածնունդը» խորագրով հողվածը³³: Նետագայում այլ հեղինակներ շարունակում են անդրադառնալ Շիրվանյանի խաչքարերին տարբեր հողվածների ու ֆիլմերի ձևաչափով: Փաստորեն, Շիրվանյանի աշխատանքներն առիթ են դառնում նաև՝ ծավալելու խաչքարի վերածննդի շուրջ մի նոր խոսույթ, որն իր ներդրումն է ունենում խաչքարագործությունը վերաիմաստավորելու, այն նորից շրջանառության մեջ դնելու, հայ ինքնության խորհրդանշաններից թերևս ամենատարածվածը դարձնելու գործընթացում: Բավական է հիշել, որ հետխորհրդային առաջին տարիներին խաչքարը վերադարձավ հայ կենցաղ ոչ միայն հուշաքարի և շիրմաքարի, այլև առավել լուսանկարչական հուշանվերի տեսքով: Քանի որ դեռևս առավել տարածված էր հանգուցյալների հիշատակին տաղանաքարեր տեղադրելու սովորույթը, Ն. Շիրվանյանի ուղղածից կանգնեցրած խաչքարերը առավելագույնս էին աչքի ընկնում՝ մեն հետաքրքրություն առաջ բերելով առօրեական մակարդակում: Դաշտային հետազոտության ժամանակ Նորատուսի խաչքարագործ վարդեստներից մեկը, առանց Ն. Շիրվանյանի անունը հիշելու, նկարագրում էր նրա կանգնեցրած խաչքարերից մեկն ու իր ստացած տղավորությունները՝ խոստովանելով, որ չի կարող նման խաչքար կերտել՝ նկատի ունենալով աշխատանքի բարձր որակն ու բարդությունը: Շիրվանյանական խաչքարային արվեստը, թեև շեղվելով խաչքարի բուն կանոնից, ոգեշնչել է ինչդեռ իր ժամանակակիցներին, այնդեռ էլ խաչքարագործների նոր սերնդին:

³² Բ. Արշակունի, Խաչքարի վերածնունդը // Սովետական Նայաստան, 1986, թիվ 10, էջ 34:

³³ Կ. Սիմոնեան, Նայ հնագույն արվեստի վերածնունդը // Ջահակիր, 1987, 26 մարտ, էջ 3:



1



2



3



4

Նկար 1. Թաշար, 1976 թ.:

Նկար 2. Եղիցի լույս, 1976 թ.:

Նկար 3. Սֆինքս, 1980-ականներ:

Նկար 4. Վերածնունդ, 1982 թ.:

Լուսանկարները տրամադրել է
Գոռ Շիրվանյանը:



Նկար 5. Նայաստան, 1984 թ.:



Նկար 6. Յնդաստանություն, 1989 թ.:

ԸՈՂԻԱՄՈՒՐ ԾՐԱԳԻՐ՝ ԳՅ ԳԱՍ ԳՍԻ-Ի Բանավոր լուստմության կենտրոնի ուսուցողական ծրագիր

Էլեն Ստեփանյանի Օախագիծ՝ Լոնցված լուստմությունները խաչքարի լեզվով

Գարջագրույցի կարգավիճակ՝ բաց հանրային

Չրուցակցի ամուճ՝ Նելսոն Շիրվանյան

ՕՍՈՂյամ թիվ՝ 1944 թ.

Չրուցավարի ամուճ՝ Էլեն Ստեփանյան

Չրույցի տևողությունը՝ 6 ժ.

Գարջագրույցի վայր՝ զրուցակցի բնակարան

Չրույցի ամսաթիվ՝ 27 դեկտեմբերի 2017 թ.

Չրույցի լեզու՝ հայերեն

Վերծանողի ամուճ՝ Էլեն Ստեփանյան

Վերծանության ամսաթիվ՝ 1-7 նոյեմբերի 2018 թ.

Ձայնագրության ձևաչափը՝ MPEG-4

ՎԵՐԾԱՆՈՂԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Ձայնագրությունը լավ լսվում է, բայց բառերը երբեմն վատ են հասկացվում զրուցակցի վատառողջ լինելու դեպքում:

ՉՐՈՒՑԱԿՑԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Նելսոն Շիրվանյանը ծնվել է 1944 թ. Իրանում: Երբ ընտանիքը 1948 թ. տեղափոխվել է Խորհրդային Գայաստան, մախ աղբել են Սիսիանում, աղա տեղափոխվել Երևան: Շիրվանյանը սովորել է Փ. Թերլենեյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, աղա՝ Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտում՝ քանդակագործության բաժնում: Աշխատել է այդ ինստիտուտում՝ որդես քանդակագործության դասախոս: Մահացել է 2018 թ.:

ԱՍՓՈՓՈՒՄ

00:00:00 Օամրություն:

00:37:58 Կենսագրություն, խաչքարերի ստեղծման շարժառիթը:

00:51:00 Խաչքարերի մկարագրություն:

03:36:00 Գեղարվեստական գործունեության մեկնաբանություն:

– Իմ ներսում դայթող ժուճքը Սևակն էր: Դրա դատճառով ես խաչարար... [...]

Դու Կարեն Սիմոնյանին շես իմանում, չէ՞: Գրական Կամուրջներն էլ չէ՞ս տեսել: Կարեն Սիմոնյանի «Գրական կամուրջները» մեր հեռուստատեսության եթերում էր նրա համար, որ ազգին արթուն դառի: Եկել էր մի դպահ, որ սովետականացման, ռեժիմի ուժը հասել էր գազաթին, և մի օր այդ հաղորդման մեջ ինքը ասաց, որ խրախուսում են ռուսախոսներին բոլոր բուհերում, և նրանց թոշակը էսքանով ավել է, ու ինքը հարցնում էր դիտորդին. «Ես գտնում եմ, որ մենք ուժացվում ենք»: Ես մտածում էի, որ էդ մարդը գելի ջիգյար է կերել, որ սենց հաղորդում է ցուցադրում: [...]

Պատայի քարը դրված է Չարբալսի գերեզմանոցում, անելիքներ շատ ունեի, կիսատ մնաց Կոմիտասի խաչքարը, կարող ասեմ աշխարհում անեմ, և կիսատ մնաց Սևակի խաչքարը: Ստեղ դարի խիղճն եմ տվել քարին, քարը ամոթել աս [վարդեսը զուգահեռ ցույց է տալիս հոր՝ Սերոբ Շիրվանյանի հիշատակին կանգնեցրած խաչքարը, որտեղ խաչասալի կենտրոնի խաչը մերթընդմերթ լուսաված է ամոթեր հիշեցնող քանդակազարդերով]:

– Ի՞նչ նկատի ունեք դարի խիղճ ասելով:

– Ես գլոբալ մտածող մարդ եմ, դարը խորքից ծոված աս ամեն ինչով: Էն, որ Սարոյանը գոռում աս. «Ժամ կտուրն եմ ուզում», դրա մասին է խոսքը: Եկավ մի շրջան, երբ որ Սևակը մահացավ, Սևակից... [...] Էսքան տարի ես կերտարվեստի տարածքն եմ ուսումնասիրել: Փանոս Թերլեմեզյանում ավարտեցի գերագանց դիտլոնով, Գեղարվեստա-թատերական ինստիտուտը ավարտեցի գերագանց դիտլոնով, և մնացի էնտեղ, հիմա էն, ինչ որ տվել եմ իմ դասախոսները, գոհ ու շնորհակալ եմ, մարդը իրա կարողության գյորա աս տալիս, բայց էն ուսանողը, որ ուզում աս երկիրը բուքսիր անի, քաշի, իրանց ուժը չի հերիքում, ստիպված ձևացնում ես, որ հերիքում աս, որ էլ մարդը հացից չզրկվի: Առաջին խաչքարը ես արեցի փոքր հորեղբորս վրա, հայրս մահացավ փոքր հորեղբորիցս 6 ամիս հետո, դա 1976 թիվն էր:

– Իսկ դրանից առաջ խաչքար կանգնեցնող եղե՞ր էր:

– Ես ազնիվ լինեմ, էլ տղայի հետ մենք մի հաստ ֆիլմում էլ նկարվել ենք: Չեմ հիշում անունը, նա ինձնից առաջ արել էր [խաչքար], ուղղակի ինչ-որ մենք գիտենք խաչքարի մասին՝ անմտավորական բեռով: Մենակ օրնամենադը. էլ ողորմելի արվեստ աս դառնում, դուք ես արվեստը չնաշխարհիկ, որ ունեք, որ ոչ մի ուրիշ ազգ չունի, դուք բերում սարքում եք արհեստավորի գործ: Որովհետև, նախ ինչի՞ վերածնվեց. ես,

որ ասում են Սևակն ինձ դաստիարակեց, հորս մահից ես, որ դրոշմում էի, ասի՝ արա, ես դակա՞ս եմ Սևակից, ինքը հանճարեղ գործեր ա թողել, ես ի՞նչ նոր եմ մտել էս դաշտ, դիտի գործեր անեմ, բայց ինչի՞՞ տի ես դա անեմ: Ես աշխատում էի Գեղարվեստա-թատերական ինստիտուտում: Եթե դու առնչվում ես ուսանողի մտքի հետ, կերպարասաբքմանը, ուրեմն դու տիտի էլ ստանդարտների մեջ լինես, առաջին, երկրորդ՝ Սովետական Միությունը աթեիստական երկիր է, խաչքար, ռ՞՞նց անեմ, ստեղ ուշադիր եղի, որ խաչքարը չկորցնեմ, բայց ինձ էլ չկորցնեմ: Ես մտածեցի, մտածեցի՝ տիտի ընենց բան անեմ, նախ գերեզմանի վրա, եղի ողբի ցավն ա, 2-րդը ես ընենց տիտի խաչքարին բեռակիր սարքեմ վերքոտ Նայաստանի, որ մարդիկ երբ մոտենան, կարծեն՝ էղ ողբացյալի ողբն է: Ես բանդակագործ մարդ եմ, քանդակագործությունը գոհել եմ դրան, որդեսգի մարդկանց ճիշտ ճանադարի տանեմ: Ես տիտի իմանամ, որ էլ կարգին մարդ ա, որին դու խաչքար ես նվիրում, բարադի մարդու գերեզմանին տանես խաչքար դնես, խաչքարը թեթևացնե՞ս:

– Բայց ինչ-որ ազդեցություն ունեցե՞լ է իր արածը Ձեր վրա:

– Ազդեցությունը հետևյալն ա: Որ եթե մեկը ըսեղ խաչքար ա անում, ուրեմն էղ *դրոշուկը* [թույլտվությունը] կա, ոչ թե ազդեցություն ձևի, բովանդակության և այլն, այլ կարաս դու էլ անես, դրա համար ես հորեղբորս քարը արեցի ոնց ընդունվում ա էղ խաչքարերը, ուղղակի տակը մի հաստ կտունկ էի նկարել, որի կտուցի վրա էր խաչը, իսկ ինչի՞՞ կտունկի. որովհետև շատ տաղանդավոր մարդ էր հորեղբայրս, ու միշտ ընենց Արևմտյան Նայաստանի կարտոը աչքերին: Ես դա... է կլառնես, էլ ջութակ, էլ չգիտեմ ինչեր ասեմ, սարքում էր ձեռքով, հենց առնում էր էղ մանդոլինը կամ ջութակը, կողերի տակ արցունք էր գալի գոլ էր դառնում: Ես էղ հիշում եմ, որտև ինքը երևի էնտեղից եկող կտունկների հետ էր:

– Իրենք եկա՞ծ էին Արևմտյան Նայաստանից:

– Մենք բոլորս ենք եկած այնտեղից: Պարսկաստանից եմ ես, ես ընդդեղ ծնվել եմ, 2 տարեկան եկել ենք ստեղ: Եվ որ եկանք, դադային աքսորեցին, 5 տարի մնաց, Ստալինի մահից հետո ազատվեց, ահագին էղի քաշքշոց եղավ, բայց դե էղի ազատվեց: Լավ անցնենք էն թեմային, որը տիտի ես քեզ ասեմ: Ասում ա՝ թիթեռը մի օր ա աղորում, ես էլ ասում եմ՝ վայ էն թիթեռին, որ էղ մի օրը ձնախառն բուք ա, վայ էն թիթեռին, որ էղ օրը ամբողջ օրը անձրև ա: Մեր կյանքը տենց անցավ: Երբ որ ես հասկացա... էղ տղու գործերը մի հաստ, երկու հաստ տեսել էի, ուրեմն ըստեղից սկսվեց: Ես գոհեցի քանդակագործին իմ մեջ, դարձա խաչքարագործ էտղես ասած, բայց իրականում ականջիղ ասեմ, որ ես խաչքարը սարքեցի քանդակ, որովհետև էն խաչքարերը բոլորը կրոնական բնույթից են սնվում, իմ խաչքարերի ամեն մեկի բեռը երկրային է, ինքը համ Աստծո հետ է կադված, համ էլ երկրի, մարդկային բեռն է իմ խաչքարերի մեջ:

Նայրիկի խաչքարը Չարբախի գերեզմանոցում է, ես երբեք չեմ կրկնել իմ գործերը: Ազգային ոգի բարձրացավ, իսկ ես շղթայված էի, որով-հետև սովետական բուհում էի աշխատում, կասեն կա՛մ ես, կա՛մ են: Բայց ես դա լիտի լիտացանեի, մեր եղելության ամենակարևոր ներկայանալի բանը էր մեր խաչքարն ա եղել: Նիմա այստեղ իմ խելացիությունը, իմ խելոք տեղը էր էր: Ես գիտեի, որ ես աշխարհը [ԽՍՀՄ] չի սիրում «Աստված» բառը, չի ընդունում «Աստված» բառը, էլ իրանց ձեռք մեծ գեներ ա, որ բգիս դրել, խեղդում են, բայց հենց էլ տեղում գտա ելքը ու մտա էլ դաշտ: [...] Ես եղել եմ իմ մեջ միշտ քրիստոնյա հավատացյալ և անհերքելիորեն, գիտականորեն Աստծո գոյությունը կարող եմ ասել, ոչ սնոտիադաշտ գրեթով: Ստալինի մահից հետո մենք հիմնի մաման մեր հոգու խորքում ուրախ երգերով սկսեցինք լավ աղագայի մասին մտածել: [...] ԽՍՀՄ էր դրված, 16 ռեսուրսիկաներին [հանրադեմոկրատիաներին] ուծացնել ռուսական էլ տարածքում, ազգ չկա, կրոն չկա, էլ լիտի ոչնչացնեն, չէ՞, կրոն չկա, կրոնը դեկավարն ա, որդեսգի էլ իրանց բռնած ծրագիրը կայանա, էն ինչ որ խանգարում ա, դրան լիտի ոչնչացնես, ու ոչնչացնել ոչ թե... բայց ինձ ներել են մի բանի դատմառով. ընդել գնացողը տեսնում էր, որ գերեզմանաբար ա:

Երբ որ հերս մահացավ, ես մի մեծ տառադանքի մեջ էի, նախ 6 ամիս չեմ քնել, 2 տարի հիշողությունս կորցրեցի, հետո եկավ մի դահ, որ լիտի սթալինեմ, լիտի իմ ճանաչած Սերոբ Ծիրվանյանի հուշը թողնեն: Այստեղ գրած ա «Եղիցի լույս», ես մենք տվել ենք օտարի մշակույթի ներքո, ստեղ գուրեր [ատամներ] են, որոնք էդքան էլ հայկական աղերսներ չունեն: Ստեղի կառուցվածքը, ես համ ցույ ա, համ գորտ ա, համ էլ կնոջ սիմվոլ, որ ասում ա՝ թողնում եմ քեզ, որ ինձ սիրես, էլ կոտորենքի բացվածքը, ստեղ էլ գորտն ա նստած, բայց սաղ էտ ցույի գուլխն են:

– Իսկ ցույը ինչ ա՞ խորհրդանշում:

– Ցույը ուժի խորհրդանիշն ա, անհողողող ուժի: Ստեղ խաչն ա, ու թե-րի էս մասը էլ սիմվոլը ունի իր մեջը: Ստեղ մի հատ երկաթյա մոտիվով ոնց որ երկաթից ծուլած լինի, այ, որ նայես, ամողերի տակը խաչն ա, որը հենված ա էլ ուժի վրա, և որը, գիտես, ո՞նց ասեմ, որ բառս բեռնակիր դառնա իրան, անգամ էլ երկաթից ասքբած խաչը, որ հիմքում էս ուժը ունի, էլի ճաք ա տվել և հորիզոնական, և ուղղամիգ, որովհետև հակասությունները էն ժամանակ կրոն ընդունողների և չընդունողների, էս կերտ աղբյուր-շաղբյուր, ինչ կոչումով, մի խոսքով քաղաքացի տեսակը կողմնորոշված էր, արդեն իրար հակասում էին, իսկ հակասում էին այ էս ուժերի գոյության դատմառով: Սրանք, այ սրանք, այս ամողերի [ամողերը ցույց տալով], էս քարերը տեղ-տեղ մարդկային մասեր են հիշեցնում, և էլ մարդկային մասերը եթե էնոցիոնալ զգաս, ոնց որ սեռական կաղերով են, տղծել են խաչը, ես էս գործը շատ վախեցնալով եմ արել, որ կարող է քարկոծեն ինձ:

– Բայց ես ամենը միայն ձեր մտքում եք ունեցել, ոչ մեկին չե՞ք ասել:

– Իհարկե, իմ մտքում: Նավատը, եթե ուժեղ չի, էդ հավատ չի, էդ անդաման էդ ուժը դիտի լինի տակը, որ հավատը բոցկլտա, դառնա օջախ, դառնա ստեղծարար: Հիմա էդ ուժը կարա լինի և՛ բարի, և՛ չար: Իսկ բարի հիմա մի տեղ ավելի շատ ցույ ա, մի տեղ ավելի շատ կին ա, մի տեղ ավելի շատ սկիզբ ա, մի տեղ ավելի շատ գորտ ա՝ սովետական մարդկանց 90 տոկոսը ցերեկը սովետական էր:

– Գորտը սովետական մարդու սիմվոլն էր: Ինչու՞:

– Ինքը ցերեկը սովետական է, գիշերը Աստված գիտի ինչական ա: Էս ամբողջը հորս վրա է եղել: Էս խաչքարի մեջ համարյա ավանդական բան չկա, եթե չասենք էս ճկված գծերը, որ շատ տեղերում կարող ա հանդիդի: Դրանից բացի՝ ուրիշ բան չկա: Օրինակ, որ վարդյակ չամես, էլ խաչքար չի լինի: Նասկանում ես՝ էդ խաչը և էդ դիտի լինի, որ հիմքը խաչքար ա: Իրական խաչքարը էդ դիտի ունենա, սկիզբ, վերջ և այլն:

Այս մի խաչքարը իմ դվայտողնի մորթուրի համար էր: Իրա տղան շատ խնդրեց, ինքը չէր կարա դարտադրեր՝ ես ինչ անեմ, ես իմ մտքերով խաչքար արեցի: Սա էի ջանք ա թափած, որ Ֆոնում հայկականությունը մնա: Նավատի, էնքան ուժադառնության փուլ եկած վիճակ կա, որ խաչի փոխարեն, չե՞, ստեղ դիտի խաչ լինե՞ր՝ իր հարդարանքներով, ողնաշարն ա մնացել էդ գեղեցիկ ծաղկուն, ծաղկաշատ խաչերից, ու տաղակվող լանգետի մսի դեռ ամբողջ իրա գեղագիտական բանը հայել ա, թափել ա ցած: Ի՞նչն էր դատճառը սրա: Որ տարիների անհարթությունը և հակասությունը այ ստեղ բերել ա մատրիցայի, էս եթե համես չերտով, կմտնի սրա մեջ ու կդառնա ուղիղ տարածություն, էս համես դենս սրա մեջ, կդառնա ուղիղ տարածություն: Այսինքն հակասությունը էնքան ա ավելացել, որ ... *դայշեն նե կուդա* [էլ ասելու չէ]:

– Իսկ էս ի՞նչ ճեղք ա:

– Էս անմիջական արստրակտ ձև ա, էդ շես կարա նկարագրես, թե էդ հակասությունը ինչ ձև ուներ, որովհետև ժամանակի հետ էս գնում: Էդ հակասությունը, էսօրվա հակասությունը ո՞նց նկարագրես: Ամենահակիրճ բառերով: Դրա համար, որ էս հակասությունը ծոեց, բացեց բարը մեջտեղից, ստեղ ճղված ա, և առաջ էս բարը ընենց էր դրված Չարբախում, որ սրա միջից արևը դուրս էր գալիս: Ինչու՞ ըստեղից դիտի արև դուրս գար. որովհետև էս սարքել էի իրան ֆակել [ջահ]: Օլիմոլիական էդ ջահերը, որ փոխանցել են մեկը մյուսին: Ֆակելի գաղափարը ինքը ունի, ինքը լույս ա տալիս: Նենց էդ գաղափարն էլ ունեցել եմ անելիս:

Ստեղից էս ճեղքվածքից, որ արևը դուրս ա գալիս... Նակասությունների բովանդակ նոր թրթիռներով իրանից ծնել ա մի կրակալեզու, որը գիտություն ա նշանակում, մի ձեռքեր, որը գործարարություն ա նշա-

նակում, և մի բերան, որը ազահության սիմվոլն է: Այսինքն հիմա դեռ գտնվում ենք էս վիճակում, ասրտիքովկա [տեսակավորում] է անում գործարարությունը, ազահությունը և էլ էր արդեն [...], բայց էս կտորը կատարյալ կտոր ա: Արևելք-արևմուտք ուղղությունը դաժողանել են, դրա համար բարին շուտ են տվել հակառակ կողմ: Խաչքարը լիտի էն կողմից նայվի, որ ֆակել դառնա: Նոյատակը ի՞նչ ա. որ մենք էսքան կարացինք, մեր աղագա սերունդ սիրելի, մեր ֆակելը էս դաժան ճըշ-մարտությունն էր, տալիս ենք ձեզ, հղկե՛ք, ուղղե՛ք ծոությունը, հասկացե՛ք որտեղ ա մեր բացթողումները, արե՛ք ճիշտ եզրահանգումներ: Եթե էլ մարդը առիթ ա [մորաբորջ մասին է խոսքը, ում հիշատակին դրվել է խաչքարը], բայց էս լիտի գործ անեն, էս հեռանում են իրանից, էս լիտի իրան հայի դարդի մասին ասեն, հայի ցավի մասին խոսեն, առանց դրա անհիմաստ բան ա:

Այս մյուս խաչքարը, որի վրա երևում է արևածաղիկը, արևածաղիկից մի հատված, խորհրդանշում է Ղայաստանը, որը կարող է ծաղկել, եթե խնամվի, ջրվի, քանի որ մնացած հատվածը չորությունից ճաքճաքել է: Սա մի աղջկա համար են արել, որ մահացել էր: Իսկ էս մյուսը, էն-քան ծանր էր, ընկավ, չկարողացան տանել, սա մի տղայի մահվան կադակցությամբ էի արել, հրեշի գլուխ ա, ցեղատղանությունն է արտահայտում: Մյուսը Սֆինքս է, այս խաչքարը էս արեցի որդես կոչ իմ աղագա արվեստագետին, որ երբեք մակերեսին մի՛ տարվի, մակերեսով գործ չեն անում: Արվեստագետի միտքը ղետք ա լայնախոս լինի: Վիճա ի՞նչ կատարվեց, ստեղ ոտեր էլ կան, մի խոսքով, ի՞նչ ա խորհրդանշում. տակում ոչնչով չզարմացնող, մեր ավանդական խաչքարի ֆոնն ա, ոտերը ստերիլիզացված, ընդհանրացված առյուծի ոտքեր են, որը լիտի ունենար Սֆինքսի մարմին: Վիճա Սֆինքսի երեսը էս դահել են խաչքարի մակերեսին: Բայց էի մի հատ սովետական արգելք են վրեն դրել: Աչքերը ցանցկեն ա: Աչքերը սետկա [ցանց] ա, դա սիմվոլն է բանտարկության, հա՛, սաղ գիտեին, մենք զակատ [դահա-ծո] արած մարդիկ էինք: Ստեղ հողից, անհիմանալի անհասկանալի տարրերից առաջանում ա կյանքը, համաշխարհային մենք բառսից, գիտնականները էլ են ասում: էլ բառսից զալիս ա կանաց-կամաց կյանքն ա առաջանում, ստեղ կյանքի բողբոջն ա: Ղետո, հանդիմող էս Սֆինքսի դեմքին: Իսկ Սֆինքսը գիտե՞ս ինչ էր. Սֆինքսը առյուծի մարմնով, մարդու գլխով մի ոճն արարած, որը հունական առաստիղներում կանգնել էր էսինքն քաղաքի մուտքի մոտ և բոլորին հարցնում էր՝ այն ի՞նչն է, որ առավոտյան քայլում է 4 ոտքով, երիտասարդ տարիներին՝ 2 ոտքով, իսկ ծերության ժամանակ՝ 3 ոտքով: Ով որ չէր լուծում էր խնդիրը, ինքը հոշոտում էր, իսկ իրականում Սֆինքսը նշանակում է անլուծելի կամ դժվար լուծելի խնդիր, իսկ երբ որ, չեն հիշում՝ ով է գալիս, Սֆինքսին ասում ա՝ էս էլ մարդն են, քանդվում, մեռնում գնում ա: Ճանվին ազատվում ա: Այսինքն՝ նոր էդոլսա [դարաշրջան] է սկսվում, երբ որ մարդը հասկանում ա, որ ինչ-որ բան [...]: Ինքը սղասում էր

մեկին, որ գա, էլ ժամանակ ինքը ոչնչանա: Էդ ժամանակ որ եկավ, ինքը արդեն դետք չէր: Գնաց իրա գործերով:

– Բայց ինչո՞ւ խաչքարի հիմքում էդ անլուծելի խնդիրը:

– Անլուծելի խնդիր ա, որովհետև ես ուզեցել եմ, էլ անլուծելի դաշտը դատկերացնո՞ւմ ես՝ ինչքան մեծ ա, տամ էս աղագա ջահել տղերքին, էսքան անլուծելի մենք խնդիրներ ունենք, մենակ խաչքարի միջոցով սովետական ժամանակ կարայինք դրանց, չկորցնեինք մեր երկիրը: Նասկանո՞ւմ ես՝ այստեղ է թաքնված իմ ամբողջ արարմունքի կարևոր կետը. որ համ խաչքարը բռնում ես ազգովի, համ էլ քո մտքերը խաչքարի մեջ ես դնում: [...] Նիմա, էս՝ արծիվ թևերով և արևի ժամացույց որդես: Ես սրա մեջ ներբեռնել եմ բաներ, որ ստեղծագործողին հուշի իրա ազատության չափանիշերը, բայց ես, որ խաչքարը նորից նոր բովանդակություն ստանա, այսինքն՝ խաչքարի մեջ ես գտել եմ նոր բովանդակություն. որտեղի՞ց ենք, ո՞վ ենք, իսկ աչքերի ցանցկեղությունը էլ էն ա, որ սովետական ամբողջ ժողովուրդը բանտում ա աղորում, եթե ամբողջ մարդկությունը համախոհ դառնա իրար, իր ուժերը չվատնեն շարության ու էգոիզմի, էլ ժամանակ կարող ա մարդկությունը փրկվի: Նիմա Էնքան դատադարտող, գահավիժող, ցավալի բաներ կան մեր կյանքում, որ առանց էլ էլ աղոթել չի լինում...

ԳԼՈՒԽ II

ՆԻՇՈՂՈՒԹՅԱԳ ՔԱՂԱՔԱԿԱԳՈՒԹՅՈՒՆԳ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱԳՈՒԹՅԱԳ ՆԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԳ

- ԱՆՑՅԱԼԸ ՆԵՐԿԱՅՈՒՄ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԿԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ, ԵՐՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ
- ԿԻՐՈՎԱԲԱԴԸ ՀԻՇԵԼԻՄ՝ ՆՈՍԱԼԳԻԱՅԻ ՈՒ
ՏՐԱԿՄԱՅԻ ՄԻՋԵՎ (ՄԻ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ
ՊԱՏՍՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ)
- ՈՒՍՈՒՑՉԻ ԿԵՐՊԱՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆԻ ԵՎ
ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆԻ ՄԻՋԵՎ՝ ՄԵՎ ԴՊՐՈՑԻ ՕՐԻՆԱԿՈՎ

ԱՆՑՅԱԼԸ ՆԵՐԿԱՅՈՒՄ.

ՆԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ, ԵՐՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ

*Ե՛վ իրա ծնունդն էր, և՛ իրա մահն էր, և՛ իրա կյանքն էր:
Ատրիլի 24-ը ոնց որ դաջված լիներ իրա ճակատին,
[19]15 թվականը՝:*

Հողվածի գլխավոր նդատակն է վեր հանել Հայոց ցեղասպանության հիշողության «դաշտոնական քաղաքականության» դայնամներում տրավմայի միջսերնդային փոխանցման մեխանիզմները: Ներկայացված է, թե ինչդեպ է ցեղասպանության մասին հիշողությունն ազդում Արևելյան Հայաստան տեղափոխված վերադարձների երկրորդ և երրորդ սերնդի ընտանեկան և սոցիալական կյանքի վրա, ծնավորում նրանց աշխարհընկալումը և ինքնությունը, ինչ խորությամբ է փոխանցվում ու ինչ տարողությամբ է դրսևորվում ներկայի մեջ:

Դաշտային աշխատանքների արդյունքում հավաքագրված բանավոր դատմությունների վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայոց ցեղասպանության մասին գիտելիքի ու տրավմայի փոխանցումը արևմտահայ գաղթականների շրջանում տեղի է ունենում երկու միմյանց փոխլրացնող տեղեկատվական խողովակներով՝ հասարակական (ավելի լայն՝ ընտանեկան և համայնքային փոխհարաբերությունների միջոցով) և ինստիտուցիոնալ (ավելի լայն՝ կրթամշակութային դաշտոնական խոսույթի միջոցով):

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ՝ Հայոց ցեղասպանություն, երկրորդ և երրորդ սերունդ, հետսերունդ, հիշողություն, հետհիշողություն, հիշողության քաղաքականություն

Ցեղասպանությունը ինչ-որ դասի տեղի ունեցած ու ավարտված դատմական իրադարձություն չէ: Վերջինիս հետևանքները և ազդեցությունը շարունակություն ունեցող և սերնդեսերունդ փոխակերտվող գործընթաց է, որն ըստ էության հիմնված է անհատական և կոլեկտիվ հիշողության վրա:

Նենց այս համատեքստում էլ փորձել են անդրադառնալ Նայոց ցեղասպանության վերադրողների «երկրորդ և երրորդ սերնդի»² հիշողությանը և վերջինիս ազդեցությանն այդ սերունդների կյանքի վրա: Տվյալ հոդվածում «երկրորդ և երրորդ սերունդ» ձևակերտումը կիրառում են ոչ թե «սերունդ» հասկացության սոցիալական ընկալման իմաստով³, այլ նկատի ունեն Նայոց ցեղասպանությունը վերադրողի երեխաներին և թոռներին: Ակադեմիական դիսկուրսում այդ սերնդի հիշողությունն անվանվում է հետհիշողություն (post-memory)⁴, իսկ սերունդը, որն այդ հիշողության կրողն է՝ հետսերունդ (post-generation)⁵ կամ հետհիշողության սերունդ (postmemorial generation)⁶: Նամաձայն եզրույթի հեղինակի՝ դոկտոր Մարիանա Շիրշի՝ գոյություն ունի որոշակի կադ, հարաբերություն մշակութային և կոլեկտիվ տրավման վերադրողների անձնական փորձառության և նրանց երեխաների՝ այդ փորձառությանն առերեսվելու միջև: Տրավմատիկ փորձառությունը նրանք հիշում են որդես նարատիվ կամ որոշակի կերպարների միջոցով, որոնք ուղեկցել են նրանց մանկության շրջանից, բայց ևայնուհետև այդ տրավման այնպիսի խորությամբ է փոխանցվում, որ իրենք էլ ստեղ-

¹ Նամիկ Գրիգորյան, ԴԱՆ, Գավառ, 2018, Նամիկ Նարությունյան, 60 տարեկան:

² Նամիկ Նարությունյան, ծնվել է 1958 թ., բնակվում է Գավառում (երկրորդ սերունդ); Սամվել Մելքոնյան, ծնվել է 1953 թ., բնակվում է Գավառում (երկրորդ սերունդ); Աշոտ Գաբրյան, ծնվել է 1936 թ., բնակվում է Խաչաղբյուրում (երկրորդ սերունդ); Արա Գևորգյան, ծնվել է 1962 թ., բնակվում է Գավառում (երրորդ սերունդ); Առնակ Պետրոսյան, ծնվել է 1979 թ., բնակվում է Խաչաղբյուրում (երրորդ սերունդ); Սիրանուշ Մելքոնյան, ծնվել է 1951 թ., բնակվում է Ոսկեհասկում (երրորդ սերունդ), Սերոժա և Սուսաննա Սերոբյաններ (երրորդ սերունդ):

³ Մանրամասն տե՛ս K. Mannheim, The Sociological Problem of Generations, Essays on the Sociology of Knowledge, London: Routledge and Kegan Paul, 1952, pp. 163-195:

⁴ M. Hirsch, The Generation of Postmemory // Poetics Today, 29:1 (Spring, 2008), pp. 103-128.

⁵ Նույն տեղում:

⁶ M. Hirsch, Family Frames: Photography, Narrative and Postmemory, Cambridge: Harvard University Press, 1997.

ծում են իրենց հիշողությունը⁷: Երկրորդ և երրորդ սերնդի մոտ հիշողությունը դառնում է *post*, քանի որ անմիջական, օրգանիկ կառուցված տրավմատիկ իրադարձության հետ: Այն ենթարկվում է նոր մեկնաբանման, ձեռք է բերում ներկայացման նոր ձև, նորովի է վերարտադրվում, քանի որ դրան ավելանում են անմասկան հիշողություններն ու փորձառությունը:

Նայոց ցեղասպանության հիշողության խնդիրներով զբաղվող գիտահետազոտական խումբը⁸ ուսումնասիրություններ է արել Թուրքիայում և Նայաստանում, որի արդյունքում հանգել է այն եզրակացության, որ հետհիշողության կոնցեպտի տեսակետից Նայոց ցեղասպանության դարազայում տրավմատիկ հիշողության փոխանցումը հետսերնդին հասնում է մինչև չորրորդ սերունդ, որն այժմյան երիտասարդությունն է⁹: Այլ կերպ ասած՝ Նայոց ցեղասպանության հետհիշողության սերունդն իր սոցիալական իմաստով ընդգրկում է «երկրորդից չորրորդ սերունդները»:

Վերոնշյալի վրա հենվելով՝ հողվածում անդրադառնում են տրավմայի միջսերնդային փոխանցման մեխանիզմներին, մասնավորապես՝ սոցիո-մշակութային, և տրավմայի փոխանցման ընտանեկան կառույցի ու հաղորդակցման մոդելներին: Նեոագոտության նոդատակն է տեսնել, թե ինչպես է ցեղասպանության հիշողությունն ազդում երկրորդ և երրորդ սերնդի ընտանեկան և սոցիալական կյանքի վրա, ձևավորում նրա աշխարհընկալումը և ինքնությունը, ինչ խորությամբ է այն փոխանցվում ու ինչ տարողությամբ է դրսևորվում «ներկա»-ի մեջ:

Տվյալ հետազոտությունը հիմնված է բանավոր դատմության մեթոդաբանության վրա: Այն նդատակ շունի վերականգնելու դատմական իրադարձությունը կամ ստուգելու դատմվածի ճշմարտացիությունը, այլ առավել ուղղված է բացահայտելու դատ-

⁷ Նույն տեղում:

⁸ Տվյալ գիտահետազոտական խումբը գործում է “The Association for the Study of Sociology of Memory and Culture” հիմնադրամի շրջանակներում: Մանրամասն տե՛ս <http://en.memoryon.org/ermenistan/>:

⁹ D. Firat, B. Şannan, Ö. Muti, Ö. Gürpınar, and F. Özkaya, Postmemory of the Armenian Genocide: A Comparative Study of the 4th Generation in Armenia and Turkey // Oral History Forum d’histoire orale 37, Special Issue on Generations and Memory: Continuity and Change, 2017, p. 2.

Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում իշխանության եկած «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը համակարգված իրագործեց հայ ժողովրդի տեղահանությունն ու ոչնչացումը, որը հայտնի է որդես 20-րդ դարի առաջին ժամանակակից ցեղասպանություն¹³: Նայոց ցեղասպանությանը զոհ գնաց 1,5 մլ. հայություն, մնացած մասը բռնի արտաքսվեց իր տատնական հայրենիքից և սփռվեց աշխարհով մեկ՝ ստեղծելով կայուն համայնքներ, որոշ մասն էլ բնակություն հաստատեց Արևելյան Նայաստանում:

Այսօրվա Նայոց ցեղասպանությունից հետո հայ ժողովուրդը կամ նրա առանձին հատվածները հայտնվել են տարբեր սոցիալական միջավայրերում և հետևաբար տարբեր ազդեցություններ են կրել: Ընդհանրապես կարծիք կա, որ ցեղասպանության ազդեցությունը հայ հավաքական ինքնության, հոգեբանության և հասարակական կյանքի վրա շատ ավելի խորն է եղել Սփյուռքում, քան հայրենիքում՝ Նայաստանում: Սա որդես կանոն բացատրվում է կրթա-դաստիարակչական քաղաքականությամբ և ազատ կամարտահայտման հնարավորությամբ¹⁴: Եվ հիմնականում այս երկու գործոններով է տայմանավորված, որ Նայոց ցեղասպանությունը ոչ միայն չի դարձել համամարդկային (կամ

¹³ Նայոց ցեղասպանության ամբողջական դատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս V. Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus Providence*, RI, 1997; R. Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History*, New York: I.B. Tauris and CoLtd, 2011: Նայալեզու գրականությունից տե՛ս Ռ. Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920), Երևան. Լուսակն, 2009: Մինչև 1960-ականների կեսերն այս թեմայով կարելի էր գտնել միայն հատուկներ աշխատություններ: Մեն եղեռնի թեման հիմնականում շոշափվում էր գեղարվեստական գրականության մեջ և այլ գեղարվեստական դրսևորումներում, տե՛ս R. Peroomian, *The Armenian Genocide in Literature: Perceptions of Those Who Lived through the Years of Calamity*, Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2014; Ead., *The Armenian Genocide in Literature. The Second Generation Responds*, Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2015: Սկիզբ դրվեց նաև հայ ցեղասպանագիտության զարգացմանը 1965 թ. հաջորդող տարիներին. թե՛ սփյուռքում, թե՛ Նայաստանում հրատարակվեցին բազմաթիվ փաստաթղթային ժողովածուներ, աշխատություններ և հոդվածներ, որոնք գերազանցապես տատնագիտական նշանակություն ունեն: Նայոց ցեղասպանության թեմայով գրականության մասին մանրամասն տե՛ս S. Astourian, *Armenian Genocide Studies: Development as a Field, Historiographic Appraisal, and a Road Ahead // Շեկուցումներ կայացված էր "Origins of the Armenian Genocide. The Crucial Years" միջազգային գիտաժողովին (հղումն արվել է հեղինակի թույլտվությամբ): Նովում է քստ L. Արբահամյան, Գ. Ըազոյան, նշվ. աշխ., էջ 240, հղում 9:*

¹⁴ R. Peroomian, *The Armenian Genocide in Literature. The Second Generation Responds*, p. 383.

առնվազն համաներկողական) հիշողության մաս, այլև տասնամյակներ շարունակ մոռացության է մատնվել, որի դատաճառով հաճախ այն անվանում են «մոռացված ցեղաստղանություն»¹⁵:

Այս հետազոտության թիրախում գտնվում է ոչ թե որոշակի դատմական, սոցիալական կամ մշակութային կոնտեքստում դեռության կողմից ընտրվող, շրջանառվող և փոխանցվող հիշողությունը, այլ այդ քաղաքականության համատեքստում ներընտանեկան մակարդակում փոխանցվող հիշողությունը, որը փոխարացվում է սոցիալական գիտելիքով: Ընթերցողի համար ավելի հասկանալի լինելու համար միատակահարմար եմ զրտնում թռուցիկ ակնարկ տալ 1920-1980-ականների վերջերն ընկած ժամանակահատվածում Ղայոց ցեղաստղանության հիշողության վերաբերյալ եղած քաղաքականությանը:

Խորհրդային կարգերի հաստատումից ի վեր Ղայոց ցեղաստղանության շուրջ ստեղծվեց «մեծ լռություն», որը դայմանավորված էր մի շարք արտաքին ու ներքին գործոններով: Այն նախևառաջ թելադրված էր ԽՍՀՄ արտաքին քաղաքականությամբ ու գաղափարախոսությամբ՝ 1920-ականների սկզբից բոլշևիկա-քեմալական համագործակցությամբ, ադա ԽՍՀՄ-Թուրքիայի Ղանրադեություն բարիդրացիական հարաբերություններով: 1921 թ. Ամենայն Ղայոց Կաթողիկոս Գևորգ Վ-ի շրջաբերական հրահանգով ադրիլի 24-ն ընդունվում է իբրև Մեծ եղեռնի հիշատակի օր, և բոլոր հայկական եկեղեցիներում այդ օրը դատարագ է մատուցվում¹⁶: Սակայն ՂԿԿ Կենտկոմի 1926 թ. օգոստոսի 31-ի որոշմամբ Ար. Երզնկյանին հանձնարարվեց «բանակցություններ վարել կաթողիկոսության հետ համաշխարհային դատերագմի (24 ադրիլի) գոհերի հիշատակի օրը նշելը վերացնելու անհրաժեշտության մասին»¹⁷: Ղետաքրքրական է, որ Ղայոց ցեղաստղանության մասին խոսելու այս արգելքի մասին դատում են նաև արևմտահայ գաղթականները. «Ըստ Թուրքիայի հետ սահմանակից Շիրակի և Թալինի

¹⁵ Մանրամասն տե՛ս D. Boyajian, Armenia: The Case for a Forgotten Genocide, Westwood, New Jersey: Educational Book Crafters, 1972:

¹⁶ Ս. Բեհրույան, Ինչո՞ղ ե՞մ և երբ հաստատվեց ադրիլի 24-ը Մեծ եղեռնի նահատակաց հիշատակի օր // Էջմիածին. Պաշտօնական ամսագիր Ամենայն Ղայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, ԾԾ (Գ-Դ), 2003, էջ 165-169:

¹⁷ ՂԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 72: Ղզվում է ըստ Ա. Ղարությունյան, Ղայոց ցեղաստղանության 50-րդ տարելիցը և երկրորդ հանրադեությունը, Երևան. Ղորավանք, 2015, էջ 15:

բնակավայրերի թուրքահայ գաղթականների հիշողությունների՝ Յեղասպանության մասին խոսելու արգելանքը սկսվել է 1927-ից՝ զուգահեռվելով արևմտահայերի մեջ առավել հեղինակություն ունեցող անձանց, մասնավորապես ֆիդայիների նկատմամբ հետադարձումներին»¹⁸: Ազգագրագետ Նրանուշ Խառատյանը գրում է, որ «ԽՍՀՄ-ում, այդ թվում՝ Խորհրդային Նայաստանում, փաստացի արգելված էր գրել և խոսել Նայոց ցեղասպանության և Արևմտյան Նայաստանի մասին, նույնիսկ գտրված էր «Արևմտյան Նայաստան» անվան օգտագործումը»¹⁹:

Խորհրդային Միությունը վարում էր իր համար շահավետ «հիշողության քաղաքականություն»²⁰՝ ըստ իրավիճակի ակտիվացնելով և դասիվացնելով Նայոց ցեղասպանության մասին հիշողությունը: 1941 թ. օգոստոսի 25-ին «Պրավդա» թերթը տղազբեց մի հոդված, որով կոչ էր անում հայ ժողովրդին՝ մասնակցելու դատերազմին հանուն հայրենիքի: Եվ տվյալ դասի քաղաքականությունից դրդված՝ տասնամյակների լուրջությունից հետո աշխարհին, մասնավորապես հայերին «հիշեցրեց» Գերմանիայի մեղսակցությունը հայերի ֆիզիկական ոչնչացմանը²¹: Պատերազմից հետո Նայոց ցեղասպանության թեման կարծես կրկին մղվեց լուսանցք:

Իրավիճակը փոքր-ինչ մեղմվեց 1953 թ. Խորհրդային Միության առաջնորդ Իոսիֆ Ստալինի մահից հետո, որին հաջորդող «խրուշչյովյան ձևից»-ի ընթացքում (1950 թ. կեսերից մինչև 1960 թ. կեսերը) ԽՍՀՄ-ում ստեղծվեց որոշակի ազատականացման մթնոլորտ: Այս շրջանում Խորհրդային Միության վարած քաղաքականության մասին ազգագրագետ Նարություն Մարությանը գրում է. «...1950-ական թվականների երկրորդ կեսից խորհրդային դեկավարությունը ոչ այնքան արգելում էր ցե-

¹⁸ Ն. Խառատյան, Արևմտյան Նայաստանի հիշողությունը՝ որդես հայկական քաղաքական այլախոհության մեկնաբանություն ԽՍՀՄ քաղաքական բռնաճնշումներում // Նայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հատուցում: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան. Գիտություն, 2016, էջ 349:

¹⁹ Նույն տեղում, էջ 346:

²⁰ «Հիշողության քաղաքականություն» ձևակերպումը կիրառում են ըստ X. Вельцер, История, память и современность прошлого // Неприкосновенный запас, №2-3, 2005, <http://magazines.russ.ru/nz/2005/2/vel3-pr.html>, 01.11.2018:

²¹ Армянский народ – боевой участник освободительной войны Советского Союза, Правда, Орган Центрального Комитета и МК ВКП (б), Понедельник, 25 Августа, 1941, № 235 (8643).

թյան հաղթանակից և Նայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո հայ ժողովրդի վերածննդի նշանի ներքո»²⁵: Կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ՝ նվիրված Եղեռնի 50-րդ տարելիցին, իսկ աղբյրի 24-ին Երևանում տեղի ունեցան համազգային երթեր և հանրահավաքներ, որոնց մասնակցեցին հազարավոր մարդիկ²⁶: Նայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի կատարած մեծագույն դերի մասին Ն. Մարությանը գրում է. «1965 թ. ելույթներին հաջորդող Եղեռնի զոհերի հուշահամալիրի կառուցումը և ամենամյա հարյուրհազարանոց սգո երթերը նոյաստեցին ցեղասպանության հիշողության ամրադնդման ու դրա սերնդեսերունդ փոխանցման մեխանիզմի անխափան գործելուն»²⁷:

Նայոց ցեղասպանության թեման դատմական հիշողության մեջ վերարթնացավ Ղարաբաղյան շարժման համատեքստում 1988-89 թթ., իսկ Արցախյան դատերազմում տարած հաղթանակը մեծադեմ նոյաստեց մաս գոհի կարծրատիղի հաղթահարմանը²⁸: Նայ ժողովրդի նորագույն շրջանի դատմության մեջ 1960-ականները մնացին որդես «ազգային զարթոնքի» տարիներ:

ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈՒՄԱՆՑՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ

Այն հարցին, թե առաջին անգամ երբ են լսել Նայոց ցեղասպանության մասին, իմ զրուցակիցները դժվարանում են դատասխանել, քանի որ իրենք «անընդհատ առնչվել» են այդ թեմային²⁹: Ընդհանրադեմ նշում են այն տարիքը, որ տարիքից

²⁵ Մեջբերված է 1965 թ. աղբյրի 29-30-ին գումարված ՆԿԿ Կենտկոմի ընդլայնված լիցենումի ժամանակ Նայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Յակով Չարոբյանի զեկուցումից: ՆԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 2, թթ. 31-63: Նղվում է ըստ Ա. Նարությունյան, նշվ. աշխ., էջ 54:

²⁶ Մանրամասն տե՛ս Ա. Նարությունյան, նշվ. աշխ.; M. Lehmann, *Apricot Socialism: The National Past, the Soviet Project, and the Imagining of Community in Late Soviet Armenia* // *Slavic Review*, Vol. 74, No. 1, Spring, 2015, pp. 9-31:

²⁷ Ն. Մարության, Կոլեկտիվ և դատմական հիշողությունը մշակույթների երկխոսությունում // 21-րդ դար. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի համդես, 2007, թիվ 3, էջ 123:

²⁸ Մանրամասն տե՛ս Ն. Մարության, Նայ ինքնության դատկերագրությունը: Նատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան. Գիտություն, 2009:

²⁹ Նամիկ Գրիգորյան, ԴԱՆ, Խաչաղբյուր, 2018, Աշոտ Գաբրյան, 82 տարեկան:

իրենց հիշում են՝ մոտ 5-8 տարեկանը: Որոշես առաջնային աղբյուր եղել են մանկապարտեզը, բակը, տունը, գյուղի օդաները³⁰, որտեղ հասակակիցներից, տան անդամներից կամ գյուղի/համայնքի մեծերից լսած դատմություններին տարիների ընթացքում ավելանում է դաշտոնական կարգավիճակ ստացած հիշողությունն ու գիտելիքը՝ հիմնականում քաղված գրականությունից:

Չրուցակիցներից Սամվել Մելքոնյանը շատ հուզված, մի քանի վայրկյան լռելուց հետո ասում է.

«Իհարկե շատ վաղուց: Դեռ մանկուց, ուղղակի շենք հասկացել, շենք ըմբռնել, ինչքան էլ որ դատմել են, մեր համար դա թոռուցիկ բան ա թվացել: Վիճա ենք խորը հասկանում դա ինչ էր, չգիտեմ»³¹:

Իսկ իմ գրուցակից Արա Գևորգյանը նշում է՝ «*դա ոչ թե միանգամից է ինձ մատուցվել, աստիճանաբար է ձևավորվել*»³²: Այն հարցին, թե ինչն է աստիճանաբար ձևավորվել, գրուցակիցս սկսում է դատմել հայ ազգային հերոսների և իր վրա ունեցած նրանց ազդեցության մասին: Այսինքն՝ Նայոց ցեղաստղանության թեմային գրուցակիցս առնչվել է առաջին հերթին ազգային հերոսներին ծանոթանալու միջոցով:

Սկզբում՝ դեռ մանկահասակ տարիքից ձևավորվում են հայթորքական հարաբերությունների, թշնամու՝ «թուրքի» մասին դատկերացումները, հետո՝ դրոցահասակ տարիքից նոր որոշակի է դառնում, կոնկրետանում է գիտելիքը Նայոց ցեղաստղանության մասին: Արա Գևորգյանը ծնվել է 1962 թվականին, ինչը նշանակում է, որ գրուցակցիս մանկապարտեզի տարիները համադատասխանում են 1960-ականների կեսերին, երբ դեռ նորնոր էր սկսվել Նայոց ցեղաստղանության, ազգային հերոսների մասին գիտելիքի հանրայնացումը: Նետաքրքրական է, որ Արայի համար որոշես գիտելիքի աղբյուր հաճախ հանդես է գա-

³⁰ Օդա՝ գոմին կից սենյակ կամ հյուրասենյակ, որը հատուկ էր հայ ավանդական տանը 19-րդ դարի կեսին և 20-րդ դարի սկզբին: Գոմի օդան, ի թիվս այլ գործառնությունների, ծառայում էր նաև որոշես ժամանցի վայր: Մանրամասն տե՛ս Ա.Տ. Մարտյան, *Интерьер армянского народного жилища (вторая половина XIX – начало XX в.)*, Материалы к «Кавказскому историко-этнографическому атласу» // *Армянская этнография и фольклор, Материалы и исследования*, 17, Ереван: Издательство АН Армянской ССР, 1989, с. 76:

³¹ Նասմիկ Գրիգորյան, ԳԱՆ, Գավառ, 2018, Սամվել Մելքոնյան, 65 տարեկան:

³² Նասմիկ Գրիգորյան, ԳԱՆ, Գավառ, 2018, Արա Գևորգյան, 56 տարեկան:

լիս երգի ժանրը, որի հետ իր դաստնության ընթացքում մի բանի անգամ առնչվում ենք: Նույնիսկ անմեղ, մանկական երգի մեջ կա անցյալի «խտացված դաստնություն», որն իր յուրահատուկ դրսևորումն է գտնում առօրյայում³³: Եղեռնի մասին Արայի առաջին իմացությունը կառվում է Անդրանիկի հետ. «...դեռ մանկադարտեզից հիշում եմ նման բաներ, ոչ թե Եղեռն, այլ որ թուրքերը անընդհատ ջարդել են, ոչ թե ջարդել, սոխանել են հայերին: Նույնիսկ մանկադարտեզից, երբ կար՝ Անդրանիկը քաջ, մի շիշ խորոված, կրծելով գնաց թուրքերի առաջ...»³⁴:

Այսինքն՝ գրուցակիցը, դեռ չգիտակցելով բովանդակությունը, մանկական երգի միջոցով արդեն իսկ տեղեկատվություն է կրել թուրքի՝ թշնամի լինելու մասին: Վաղ դրոշմական հասակում մանկական երգերը փոխարինվում են բակի երեխաներից լսած հայրենասիրական երգերով, որոնց բովանդակությունն արդեն սկսում է նրա վրա հոգեբանական ազդեցություն թողնել և ստի-
դում է նրան մտածել.

«Ճամբարից եկան, սովորել էին խարույկ վառել, հայաթում խարույկ վառեցին, իրիկուն ա, ու խարույկի մոտ կանգնած երգում են: Ու ամենահետաքրքիրն էն ա՝ երգում են՝ բաժակները լցրե՛ք խմենք կենացն Նահիրի, Անդրանիկի, Սերոբ փաշի, Նայկ Բժշկյանի»³⁵: Անդրանիկ լսել եմ, էն ամենավաղ հիշողություններ որ կան, ըստ երևույթին մեր ժամանակվա բոլոր էրեխերի մոտ էլ կար, Անդրանիկը, քաջ Անդրանիկը: Քաջ Անդրանիկը որդես զինվոր, որդես ազգի զինվոր, ոչ թե այ էս գիտակցությամբ ազգի զինվոր, այլ որդես զինվոր, զորավոր մարդ, մենք էդ ենք էրեխա որդես իմացել»³⁶:

³³ Մանրամասն տե՛ս M. Bilal, Lullabies and the Memory of Pain: Armenian Women's Remembrance of the Past in Turkey // Dialectical Anthropology, Springer Nature B.V. (2018), (Author's personal copy): Ընդհանրապես եմ հայտնում հեղինակին անձնական օրինակը տրամադրելու համար:

³⁴ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՄ, Գավառ, 2018, Արա Գևորգյան, 56 տարեկան:

³⁵ 1914 թ. ստեղծվեցին հայկական կամավորական զնդեր Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակը համալրելու և Արևմտյան Նայաստանը թուրքական լծից ազատագրելու նպատակով: Թվարկված հայտնի ռազմական և քաղաքական գործիչները նաև այդ բանակի հրամանատարներն էին: Անդրանիկ Օզանյան (1865-1927), հայտնի է նաև որդես շորավար Անդրանիկ, Անդրանիկ փաշա, հայ կամավորական 1-ին զնդի հրամանատար, Նայկ Բժշկյանց (Գայ) (1887-1937)՝ հայկական 6-րդ կամավորական զրնդի հրամանատար: Սերոբ Վարդանյան (Աղբյուր Սերոբ) (1864-1899)՝ հայ ազգային ազատագրական շարժման հերոս, ֆիդայի:

³⁶ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՄ, Գավառ, 2018, Արա Գևորգյան, 56 տարեկան:

Այն խորը տողավորությունը, որ երգը թողել էր Արայի վրա, ևս մեկ անգամ կրկնվեց երեք տարի անց Նորադուզում, երբ հոր ընկերոջ տղան, ով իրենից 7-8 տարով մեծ էր, երգ երգեց Սերոբ փաշայի մասին՝ «Ելի՛ր, ելի՛ր, Սերոբ՝ ջան, վե՛ր կաց կանգնիր, փաշա՛ ջան: Ու զգում եմ, որ բանդվում աս ներսս: Բայց Սերոբն ով աս, Սերոբի մասին գաղափար չունեմ, չեմ իմանում Սերոբն ով աս: Սերոբ փաշա, ինձ ու ինձ հետո վերլուծում եմ՝ փաշա ... հայի անուն աս... փաշա... նշանակում աս սա կառյ ա ունեցել ուրեմն Արևմտյան Նայաստանի հետ, դրա համար: Ես վերլուծում էի, թե ինչի տղի էս երգերը սենց բաշեն: Ու մեկ էլ անցել են տարիներ «Երբ գալիս է սեղանները» կինոն եմ նայում, Արմեն Զիգարխանյանը երգում աս՝ Նա՛յ Ֆիդայիներ, ջա՛ն Ֆիդայիներ: Ու զգում եմ, որ էդ էլ աս վրես ազդում»³⁷:

Գիտելիքի մյուս աղբյուրը «ունեցիներն են»՝ բարեկամական, ազգակցական մեծ շրջանը, ինչդեռ բանասացներն են հաճախ նշում՝ «մեծերը», «մեր մեծերը», իսկ գիտելիքի ստացման տեղը՝ տունը:

Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի բնակիչ Առնակ Պետրոսյանը շատ դիտուկ է նշում. «Պատմում էին, սաղն էլ դատմում էին, որովհետև դա իրանց կյանքն էր, դաժանություն էր... դատմելով սենց փոխանցելով դատմությունն եկել աս էլի...»³⁸: Այս հանգամանքը դայմանավորված է թերևս նրանով, որ Խաչաղբյուրն ավելի կոմոյակա է բնակեցված վերադրողների ժառանգներով, ինչը հատուկ է նաև Շիրակի մարզի Ոսկեհասկ գյուղին, որտեղ բոլորը տեղյակ են միմյանց դատմություններից ու «բոլորը դատմում են»՝ կարծես ստեղծելով համայնքային հիշողություն: Պատմությունները դատմելու համար առիթ էին հանդիսանում նաև ազգակցական հավաքությունները, ինչդեռ օրինակ՝ Արայի ծննդյան օրը, երբ ազգի մեծերը դիմում էին Ռուբեն դադյան՝ դատմելու էրգրի մասին: Այդդիտով Արայի դադյանը դառնում է գլխավոր դատմողը և այդ գիտելիքի փոխանցողը. «Ես, անընդհատ շփումը փոքր ժամանակ որ դադյան հետ աս եղել, ես [իր] դատմածներն եմ շատ հիշում»³⁹: Այն մասին, թե ինչդեռ էին ազգի մեծերը հավաքությունների ժամանակ դատմում Եղեռնի մասին Սիրանուշ Մելքոնյանը դատմում է.

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՄ, Խաչաղբյուր, 2018, Առնակ Պետրոսյան, 39 տարեկան:

³⁹ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՄ, Գավառ, 2018, Արա Գեորգյան, 56 տարեկան:

«Մենք մի հատ քեռի ունեինք՝ մամայիս քեռին էր (Մանուկ), կհավաքվեին իրանց տուն: Շատ ժամանակ դատաս չէր թողնում, որ էթայինք մենք էլ լսեինք, բայց մենք գաղտնի կեթայինք մի անկյուն կնստեինք, ինքը կդատմեր: Կդատմեր, թե թուրքերը ինչ ձևի իրանց կնեղեին նախքան գաղթը...»⁴⁰:

Նավարություններին էրզրի, Յեղասպանության ժամանակ ունեցած փորձառության, ազգային հերոսների մասին դատմելը, այդ դատմությունները կենացներով ուղեկցելը արևմտահայ գաղթականների մոտ նմանվում է «ընտանեկան ավանդույթի»:

Գիտելիքի փոխանցման մյուս ձևը Նայոց ցեղասպանության կամ ինչդեպ հաճախ զրուցակիցներն են նշում՝ եղեռնի, գաղթի կամ փախստության դատմությունները հեքիաթի դեպքում դատմելն էր, որը կարծես ծիսականացվում էր: Երեկոները տան մի անկյունում թախտի վրա թիկնած դատմություններ դատմելը դառնում են յուրօրինակ ժամանցի և երկու տարբեր սերունդների հաղորդակցման ձև: Արան երեխա ժամանակ իր հասակակից ընկերոջ հետ ամեն օր լսել է թերևս նույն դատմությունները, որոնք «հեքիաթի» դեպքում անընդհատ դատմվել են⁴¹: Արա Գևորգյանը վերհիշում է.

«...ասենք, ես փոքր էի, էթում էի նստում էի, ասում էի՝ դատողի՛, մի քիչ դատմի էլի: Ես, իրանց հարևան տղա էլ կար... էթում նստում էինք իրիկուն թախտի վրեն: Դեմ առ դեմ թախտ էր դրած, ու էդ իրանց հարևանի էրեխեն, հասակակիցներ էինք, նստում էինք թախտի վրեն, հենվում էինք իրար, դատաս նստում էր էն մի թախտին, դատմում էր: Ու մենք էլ լսում էինք էդ դատմությունները իրանց էրզրի մասին: Քնում էինք ըստենց: Ներս որ գալիս էր տենում էր իրիկուն նստել ենք, դատողին ինչ-որ բաներ ա դատմում, ասում էր՝ հե՛յ, էթում ենք տուն, ինձ ասում էր՝ հե՛յ, էթում ենք տուն, ու՛չ ա, էթում ենք տուն: Մեր տները իրարից երևի 300-400 մետր ա հեռու, էթում էինք, ճամփեն ասում էր՝ մեղք ա, էդքան մի՛ խոսեցրեք, մի՛ հիշեցրեք, որովհետև, ասում էր՝ վրեն ազդում ա էլի, մեղք ա: Ասում էր՝ լավ, որ սաղով հավաքվում ենք իրան հարցնում ենք,

⁴⁰ Նամիկ Գրիգորյան, ԴԱՄ, Ոսկեհասկ, 2018, Սիրանուշ Մելքոնյան, 67 տարեկան:

⁴¹ Անձնական կյանքի փորձառությունը հեքիաթի ժանրով դատմելը ընդունված է նաև Նայոց ցեղասպանությունից հետո Ստամբուլում բնակվող հայերի մոտ: Տե՛ս Մ. Bilal, նշվ. աշխ.:

ինքը դատմում ա, դա այլ բան ա, բայց ասում էր՝ ամեն օր նստեցնում եք, ասում եք՝ դատդի՛ հլը դատմա՛, հլը դատմա՛ ձեր էրգիրը ինչ կար, ձեր էրգիրը ոնց էր, ասում էր՝ մեղք ա, վրեն ազդում ա»⁴²:

Զրուցակիցներիցս Առնակ Պետրոսյանը ինձ հանդիպեց դըր-սում՝ գյուղադատարանի բակում, հետաքրքրվեց, թե ինչ եմ անում իրենց գյուղում և լսելով Նայոց ցեղաստղանության մասին՝ ասաց. «Եթե բեզ Կարմիր գլխարկն են դատմել, մեզ դատմել են զաղթի ճանադարիի մասին»⁴³:

Պատմություններ դատմելու վայր էին նաև գյուղի օդաները, իսկ գիտելիքի փոխանցողը՝ գյուղի/համայնքի մեծերը: Նամա-ձայն գրուցակիցների դատմությունների՝ օդաներում հավաք-վում էին գյուղի մեծերը, գերագանցադես տղամարդիկ և քննարկում տարբեր թեմաներ, տարբեր դատմություններ դատ-մում: Օդաները կարծես դառնում էին հիշողության դահդան-ման և փոխանցման առանցքային նշանակության տեղեր: Երբեմն այդ հավաքներին ներկա էին լինում նաև երեխաները, երբեմն նրանց չէին թույլատրում: Այս զնահատականն են տա-լիս նաև այդ հավաքների ժամանակ մանուկ հասակում ներկա գտնվածները:

Սերոժա Սերոբյանը դատմում է.

«Առաջ, գա՛ն ջան, մեծ օդա կար, մեծ մարդիկ հավաքվում էին, մենք փոքր երեխա էինք. կերթայինք կնստեինք իրանց ոտների տակ, իրանք կդատմեին, կխոսային էրգրից, ինչ ձև է եղել, ինչ ձևի ... ես որ ջահել երեխա տղա չլսեի, էսօր իմ հիշողության մեջ կդահեի»⁴⁴ ինչ ըրին հայի զլուս, իրա դատմելը ի՞նչ կողեկ ար-ժեր: ...Ըտենց իրիկում չկար, էտ օդան դուի լցվեր: Ոչ թե մի օդա էր, տարբեր մայլերում տարբեր օդաներ էին»⁴⁴:

Փաստորեն, օդաները վերածվել են հիշողության ամրագրման մի հատուկ վայրի՝ Նայոց ցեղաստղանության հիշողության դահդանման և փոխանցման մի ֆիզիկական տարածքի, որը ձևավորում էր ոչ թե զուտ ընտանեկան, այլ արդեն՝ հանրային

⁴² Նամիկ Գրիգորյան, ԴԱՄ, Գավառ, 2018, Արա Գևորգյան, 56 տարեկան:

⁴³ Այս մասին տե՛ս Նամիկ Գրիգորյան, ԴԱՄ, օրագիր, 15.07.2018 թ., Խաչադրյուր, Վարդենիս, Գեղարքունիքի մարզ:

⁴⁴ Նամիկ Գրիգորյան, ԴԱՄ, Ոսկեհասկ, 2018, Սերոժա և Մուսաննա Սերոբյաններ:

(ոչ ֆորմալ), այս դեպքում՝ համայնքային հիշողությունը:

Ոսկեհասկի մեկ այլ բնակիչ Սիրանուշ Մելքոնյանն այս հանգամանքը լայնամասշտաբային է նրանով, որ բոլորը մի գյուղացի էին, ճանաչում էին միմյանց և տեղյակ էին միմյանց ճակատագրերին կամ միասին էին անցել գաղթի ճանապարհը: Զրուցակիցս լռում է:

«Մանավանդ որ մի գյուղից էին, անընդհատ կհիշեին, կնստեին իրար հետ կխոսային, կհիշեին, էս մեկի անունը կտային, էն մեկի անունը կտային, էս ձևի: Իրանը ունեցել են, էդդես կըսեն՝ օդա: Մի տեղ հավաքվել են ու դատմել: Էս մեր քեռին, որ կըսես՝ կոլատմեր, հերս չէր թողներ էրթայինը լսեինը: Չգար կըսեր, մենք մեծերս կնստենք, խորատա կընենք»⁴⁵:

Նայոց ցեղատղանության մասին գիտելիքի փոխանցման մեխանիզմների մասին այս հատվածում քննարկեցի յոթ գրուցակիցների հետ ունեցած գրույցները, որոնցից երեքը ներկայացնում են երկրորդ սերունդը, չորսը՝ երրորդ: Նետաքրքրական է, որ բովանդակային առումով թոռներն ավելի շատ են վերաբաղում իրենց ղաղթիկ/տատիկներից կամ ազգի մեծերից լսած դատմությունները, քան երկրորդ սերունդը: Վերադարձի երեխաները նշում են, որ իրենց ծնողները նախընտրում էին չխոսել Եղեռնի թեմայով, հիմնականում լուռ էին, և իրենք էլ շատ դեղքերում չէին տիրադատում մանրամասների: Նետաքրքրական է նաև, որ թե՛ Արա Գևորգյանի և թե՛ Սիրանուշ Մելքոնյանի դարազայում երկրորդ սերունդը նաև թույլ չէր տալիս կամ փորձում էր սահմանափակել, որդեսգի երեխաները (երրորդ սերունդը) չլսեն մեծերի խոսակցությունը կամ դատմությունները: Այսինքն՝ այն, ինչ երկրորդ սերունդը փորձում է մոռանալ, երրորդ սերունդը փորձում է վերականգնել:

Նարկ է նաև նշել, որ թոռները հիմնականում այն վերջին սերունդն են, ովքեր տրավմատիկ դատմությունը կրողի հետ անմիջական շփում են ունենում և այդ դատմությունները լսում են անմիջականորեն իրենցից: Սա լայնամասշտաբային էր նաև այն հանգամանքով, որ առաջին և երրորդ սերունդների ժամացային վայրը թե՛ տանը՝ ներընտանեկան միջավայրում, թե՛ համայնքում՝ հանրային միջավայրում, համընկնում էր, ինչը հատ-

⁴⁵ Նամիկ Գրիգորյան, ԳԱՆ, Ոսկեհասկ, 2018, Սիրանուշ Մելքոնյան, 67 տարեկան:

կաղես բնորոշ է ավանդական հասարակություններին: Երրորդ սերնդի համար տրավման փոխանցվում է դադիկ/տատիկների միջոցով: Այս ամենը կաղվում է իրենց մանկական հուշերի հետ և դառնում շափազանց անձնական ու զգայական: Մա այն սերունդն է, որն աղղել է եռասերունդ ընտանիքում և ունի կայուն ընտանեկան դատմություն, ինչը չի կարելի ասել երկրորդ սերնդի մասին, որը հիմնականում դուրս է մնում հանրային, ոչ ֆորմալ միջավայրից, հետևաբար նաև այդ դատումի հիմնական կրողը չէ: Նեոաբար երկրորդ և երրորդ սերունդների շրփման ձևաչափերը դայմանավորում են նաև հիշողության տարբեր շափաբաժնի փոխանցում և տարբեր հիշողությունների ձևավորում:

Երկրորդ սերնդի դարագայում իր անձնական ներգրավվածությամբ ընտանեկան դատմությունը սկսում է անմիջաղես իր ծնողից և հաճախ բացակայում է տատիկ/դադիկի կամ գերդատանի ավագների ինստիտուտը, ինչը Էվա Նոֆմանը անվանում է «փոխանցված կորուստ» (“transferred loss”)⁴⁶:

Իմ գրուցակիցներից Նասմիկ Նարությունյանը, ով երկրորդ սերնդի ներկայացուցիչ է, իր զգացողությունների մասին դատում է.

«Երևի թե չեմ էլ դատկերացրել դա ինչ ա: Էնդես որ ասեմ՝ սրտիս մոտ եմ ընդունել, ուղղակի հասկացել եմ, որ իմ հայրը օտար ափերից եկած մարդ ա, ոչ ալստեղի, արմատներ չի ունեցել, գարմանում էինք, մտածելու տեղիք էր տալիս, որ մենք բարեկամներ չունենք, ինչի՞^օ համար չունենք: Նետո, որ մեծացանք, հասկացանք, որ այդդես էլ դոտի լիներ, որովհետև էլ վայրագությունից ինքը փրկված մարդ էր...»⁴⁷:

Մանկության և դատանեկության տարիներին տարբեր տեղերից ստացված դատառիկային գիտելիքները հետագայում լրացվում են դողոցում, համալսարանում և տարբեր գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով:

Մրա Գևորգյանի դարագայում որքան նա հասակ է առնում, այնքան մեծանում է հետաքրքրությունն իր ընտանիքի, մասնավորաղես դադի դատմության նկատմամբ և սկսում է ալ աղ-

⁴⁶ E. Hoffman, *After Such Knowledge: Memory, History, and the Legacy of the Holocaust*, New York: Public Affairs, 2004.

⁴⁷ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՄ, Գաղառ, 2018, Նասմիկ Նարությունյան, 60 տարեկան:

բյուրներ որոնել տեղեկատվությունը լրացնելու, կամ ինչդեռ գրուցակիցս է ասում «ճշտելու» համար.

«Պատչա նաև հորոդոր տղա ուներ, որը Երևանում էր աղբում, նա ավելի ուշ մահացավ, քան դատչա: Ես, որ ուսանող էի, դատչա 83-ին է մահացել, նա մահացել է 82-ին: Չէ, ուղղակի ես ուսանող էի, արդեն ավելի շատ էր ինձ հետաքրքրում ջարդերը, Եղեռնը: Շատ էի էթում դատչիս հորոդոր տղին տենալու»⁴⁸:

Կրկին վերադառնալով այս թեմային՝ շարունակում է. «Իշխան: Նրան էի էթում տենալու, նա էլ էր անդրադառնում էր գրին, նա էլ էր շատ դատմում, ու ասենք երկուսի դատմածները ի մի բերելով...»⁴⁹:

Մանկության շրջանից սկսած՝ տարբեր տեղերից ստացված դատառիկային բանավոր դատմությունները, տարիների ընթացքում միահյուսվելով, դառնում են կայուն գիտելիք և հարբստանում են գրավոր տեքստերից: Սերոժա Սերոբյանը դատմում է այն մասին, որ դատույց լսած դատմություններն ավելի էին հզորանում, երբ դրանց մասին կարդում էր գրքերում.

«Ես «Ռանշտարների կանչը», լրիվ կարդացել եմ, «Մոսքե Նախատանի լեռներ»-ը, «Ինձ բահ տվեք» Գևորգ Չաուշի մասին է... Ռանշտարների կանչն էլ կտա Սերոբ փաշի մասին: ...Որ ես կկարդայի, Սովետի վախտ ես կկարդայի, 65-70-ականներից սաղ արդեն կկարդային: Էտ գրքերը կային, տակից կծախեին, չէին դնի խանութներ»⁵⁰:

Արայի դատմության մեջ կրկին հառնում է Անդրանիկի կերպարը բոլորովին այլ համատեքստում: Մանկական երգի միջոցով մանկատարտեզային տարիներին Անդրանիկի մասին «գաղափարը» դառնում է կայուն սոցիալական գիտելիք: Արան դատմում է.

«... Նարությունյան Բաբկենը Նայ ժողովրդի դատմություն էր կարդում ինձ, ուրեմն Ստեփան Կուրտիկյանին գիրք ուներ՝ «Վիշողություններ գորավար Անդրանիկի մասին», էդ գիրքը ընկել ա ձեռս, դասի ժամին սենց դառել եմ, կարդում եմ, Նարությունյան Բաբկենն էլ լեկցիա է կարդում: Եկավ կանգնավ

⁴⁸ Նամիկ Գրիգորյան, ԴԱՄ, Գավառ, 2018, Արա Գևորգյան, 56 տարեկան:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նամիկ Գրիգորյան, ԴԱՄ, Ոսկեհասկ, 2018, Սերոժա և Մուսաննա Սերոբյաններ:

գլխիս վերևը, ասավ՝ կանգնի՛, կանգնեցի, ասավ՝ տու՛ր ստեղ
 գիրքը, տվեցի, վերցրեց նայեց, ասավ՝ դու՛րս արի լսարանից,
 գիրքը վերցրեց, սենց ծալեց, վերնազիրը տեսավ, ասավ՝ հեն՛տ
 դարձի, նստի, բայց դասամիջոցին կմոտենաս ինձ: Չանգը
 տվեց, դասամիջոցին մոտեցա, ասավ՝ շատ լավ ես անում, որ
 էս գիրքը կարդում ես, բայց, ասեց՝ ինձ թվում ա իմ դասախո-
 սությունը ավելի վատ չի, քան էդ գիրքը: Նախ դասախոսու-
 թյունս լսի, վերջիվերջո ես Նայ ժողովրդի պատմություն եմ
 կարդում, սա սովորի, դրան գուգահեռ դա էլ կարդա»⁵¹:

Արայի վրա շատ մեծ ազդեցություն է գործել Խաչիկ Դաշտեն-
 ցի «Ռանշոյարների կանչը» գիրքը, որի հետ անձնական առ-
 բույններ են կառվում: Ինչո՞ւն գրուցակիցս է նշում՝ «Դա ըստ
 երևույթին նաև «Ռանշոյարների կանչ»-ից հետո ավելի
 նստվածք տվեց»: Իշխանի պատմության համաձայն՝ իրենք
 Ավետիս անունով հորեղբայր են ունեցել, որ եղել է թուրքական
 բանակի գեներալ: Ըստ պատմության՝ զորավար Սմբատը
 նրան առաջարկել է դաշնակցական դառնալ և մերժում ստանա-
 լուց հետո թունավորել է Ավետիսին: Նետաքրքրականն այն է, որ
 Արան այդ մասին իմանում է միայն ուսանողության տարինե-
 րին, և զարմանում, որ դառող չի դատմել այդ մասին: Այս պատ-
 մությունից Արան շատ է ազդվել.

*«Բանն այն է, որ գնացել եմ Էջմիածին, Գայանե վանքի հայա-
 թը, դե Մախլուտոն ընդեղ ա թաղած, խենթի գերեզմանը թզերով
 չափում եմ, ասում եմ յոթը թիզ աջ են թաղել խենթի գերեզմանից,
 տենց չափում եմ, տեսա իրոք յոթը թիզ չի էլի, մի քիչ տարբերու-
 թյուն կա, կամ կարող ա իրանց թզերը մեծ ա եղել: Նետս ընկեր-
 ներից որ կային, գնում եմ զորավար Սմբատին ասում եմ՝
 Մախլուտո՛, զորավար Սմբատ, ինչի՞ դու թունավորեցիր իմ հա-
 րազատին, որ իմ դատյու ախտերն էր, հորոդդոր տղեն, ինձ մե-
 դադրում ասում են՝ դրա մասին գիրք մի՛ կարդա: Ընկերս ասում
 ա՛՝ զժվե՛ր ես, էս ի՞նչ ես խոսում, ու ըստեղ դողոցականներ են
 եկել, Էջմիածին, ըստ երևույթին «Ռանշոյարների կանչ»-ն են
 կարդացել, եկել են, ինձանից հետո նրանք են թզերով փորձում
 չափել, ու զարմացած նայում են, որ ես կանգնել եմ գերեզմանի
 հետ խոսում եմ: Էս ընկերս ասավ՝ արի՛ էթանք, ախտե՛ր ջան,
 ասավ, դա բու տեղը չի, ասեց՝ Էրզրով Էնթան տարված ես, որ
 հանգուցյալների հետ փորձում ես խոսել»⁵²:*

⁵¹ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Գավառ, 2018, Արա Գևորգյան, 56 տարեկան:

⁵² Նույն տեղում:

Ներածության մեջ արդեն նշել եմ, որ հետհիշողությունը ենթարկվում է նոր մեկնաբանման և ձեռք է բերում ներկայացման նոր ձև, քանի որ դրան ավելանում են անհատի անձնական հիշողություններն ու փորձառությունը: Արա Գևորգյանի դատմության այս դրվագում շատ լավ երևում է այն տղնուճը, որ հետհիշողությունն ավելի զգացմունքային է, քան բուն հիշողությունը, քանի որ դրան ավելացած գաղափարախոսությունն ու երևակայությունն այնտեղ են ամրադրվում դեղքերը, որ տրավմատիկ իրադարձությունը շտեմած մարդիկ ավելի հուժկու են զգում դրանց ազդեցությունը և ձևավորում են իրենց հիշողությունը:

ԱՆԴՐԱՆԻԿԸ ՈՐՊԵՍ ԷՊԻԿԱԿԱՆ ՆԵՐՈՍ

Նայոց ցեղաստանությունը վերադարձների ժառանգների, հատկապես երրորդ սերնդի ներկայացուցիչների (ինչպես տեսանք Արա Գևորգյանի օրինակով), մաս Նայոց ցեղաստանությունը վերադարձի ժառանգներ չհանդիսացող գրուցակիցներիս մոտ մեծ տեղ է զբաղեցնում Անդրանիկի մասին նարատիվը: Որտե՞ս կանոն գրուցակիցներիս դառնալը կա՛մ եղել են Անդրանիկի զինվորը, կա՛մ որևէ ծառայություն են մատուցել Անդրանիկի կամավորական գնդին: Եթե նույնիսկ տարիքով փոքր են եղել, առաջ դարտադիր նշվում է, որ իրենց դատը կամ տատն անձամբ տեսել/լսել է Անդրանիկին:

Մարտունիում վարած հարցազրույցների ժամանակ գրուցակիցներս՝ Թաթուլ Կարապետյանը, Լյովա Պողոսյանը և Փայլակ Նարոյանը⁵³ (վերադարձի ժառանգներ չեն), Նայոց ցեղաստանության մասին գրույցը սկսում և ամբողջությամբ կառուցում են Անդրանիկի կերպարի շուրջ: Թաթուլ Կարապետյանը Անդրանիկի մասին մանկուց է լսել.

«Վրձնականում խոսակցությունը եղել ա Անդրանիկի մասին, Ֆիդայության մասին: ... Յեղաստանություն... չէ, դե հա... եթե առիթ բան լինում ա: Վրձնականում, մանավանդ էն մեր ժամանակ ամբողջովին Անդրանիկն էր»⁵⁴:

⁵³ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Մարտունի, 2018, գրուցակիցներ՝ Թաթուլ Կարապետյան, ծնվել է 1960 թ., Լյովա Պողոսյան, ծնվել է 1954 թ., Փայլակ Նարոյան, ծնվել է 1950 թ.:

⁵⁴ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Մարտունի, 2018, Թաթուլ Կարապետյան, 58 տարեկան:

Անդրանիկը մեծ հեղինակություն և սեր է վայելում հատկապես իր ջանքերով Յեղատյանությունից փրկվածների շրջանում, իսկ մարտունեցիների մոտ նրա փառաբանումը տայմանավորված է նրանով, որ համաձայն տեղական դատումի՝ նա Մարտունիով անցել է Չանգեզուր, նույնիսկ գիշերել է Մարտունիում: Չրուցակիցներիս երիտասարդության տարիներին կային մի քանի տարածված դատմություններ, որոնք բոլորը գիտեին: Այդ դատմությունները ժամանակին դատմվել են օդաներում: Փայլակ Նարոյանն ասում է.

«...առաջ մեր մոտ եղել են, էտ օդաներում որ նստել դատմել են, ոչ միայն տենց դատմել են, այլ Թաթուլին մի հատ հորոխուղեր կար՝ Ավետիք, ինքը երաժիշտ էր, ինքը դատմում էր նաև երգելով և նվագելով, հեքիաթների ձևի: Կնստեր, կարող էր ժամերով, դե էն ժամանակ լույս էլ չի եղել, նստել են ճրագի լույսի տակ, իրկվա ժամին, մթնել ա, դրանք հինգ-վեց ժամ նստել են անընդհատ երգել են, դատմել են»⁵⁵:

Փայլակ Նարոյանը շարունակում է.

«Մեր մոտով ա եկել, ստեղ մի գիշեր մնացել ա, ում տունը որ մնացել ա, նա կենդանի էր, երկու տարի առաջ ա մահացել: Դա էր դատմում, որ եկել ա, իրա առաջ գառ են մորթել, քեֆ-ուրախություն, ժողովուրդը ընդունել ա որդես ազգային հերոս: Նույն ձևի էլ ճամփու ա դրել: Մեր ժողովուրդը մինչև հիմա էլ դաշտում ա: ...էն ժամանակ մեր ժողովրդի մեջ կար նենց գաղափար, որ Անդրանիկին փամփուշտ չի կոչում»⁵⁶:

Անդրանիկի կերպարը ժողովրդի կողմից այնքան է հերոսականացվում և առատելականացվում, որ նրան վերագրվում են վերերկրային հատկանիշներ, ինչը հաճախ հատուկ է լինում եղիկական կերպարներին.

«Ես ասում ու նորից գայիս եմ Անդրանիկին: Անդրանիկը ժողովրդի հերոսն է, Անդրանիկը անտեր է: Անդրանիկը ո՛չ կուսակցական հերոս է, տեր չունի, նա անտեր է, ոնց որ ժողովուրդը [19]70-ական, սովետական տարիներին զլի կաթինկաներում տախեց էր անունը: Բա ինչի՞՞ Նժդեհի նկարը չէր կրողնում, ինչի՞՞ Գրոյի նկարը, Արամ Մանուկյանի նկարը չէր կողցնում: Չէ՛, նա գիտեր ով ա իր հերոսը: Այ, հերոսը նա է:

⁵⁵ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Մարտունի, 2018, Փայլակ Նարոյան, 68 տարեկան:

⁵⁶ Նույն տեղում:

Նրանք էլ են հերոս, բան չեմ ասում, բայց... տեսեք Անդրանիկին ո՛չ կոչումով են տվել դա, ո՛չ հրամանագրով են տվել, ո՛չ մեղալով են տվել: Ժողովուրդն ա, ինքը իրեն գտել ա իր հերոսին, իսկադեն այդդեն ա: Որ բերեցին Եռաբլուրում վերաթաղեցին, ես գրքերի մեջ գրել եմ՝ Անդրանիկը մեր նոր Էդուսի հերոսն է: Իսկադեն մեր Էդուսի հերոսն է: Եթե Սասունցի Դավիթը, Սասնա ծոերը մի բիշ մտացածին են կամ հնարովի են, սա իրական է, իրական»⁵⁷:

Չրուցակիցներս խոսում են այն մասին, որ Խորհրդային Միության շրջանում վախ կար, բանի որ ազգային թեմաներն արգելված էին: Մարդիկ գաղտնի դահում էին Անդրանիկի լուսանկարները⁵⁸ կամ նրա մասին երգերի ձայնագրությունները, որը նրանց ուժ և հայրենասիրություն էր ներշնչում: Վախի հաղթահարման մասին Փայլակ Նարոյանն ասում է. «...*Անդրանիկն էր, Անդրանիկը հաղթում էր էտ վախը, Անդրանիկի հետ միասին մենք հաղթահարում էինք*»⁵⁹:

Փաստորեն, շնայած Խորհրդային Միության վարած «հիշողության քաղաքականությանը» և Նայոց ցեղաստանության մասին դաշտոնական խոսույթին, որտեղ հայերը ներկայացվում էին բացառադեպ որդես զոհեր, «հանրային ոչ ֆորմալ դիսկուրսը» ծավալվում էր «հանրային դեմքերի, հերոսների» շուրջ, ընդ որում՝ հաղթանակած, այլ ոչ թե նահատակված հերոսի կերտարի: Այն հանգամանքը, որ Նայոց ցեղաստանության մասին գիտելիքը և հիշողությունը կառուցվում է Անդրանիկի կերտարի և նրա հերոսական վարքի շուրջ, թույլ է տալիս դիտարկել ցեղաստանության դաշտոնական և ոչ դաշտոնական՝ հանրային, ժողովրդական խոսույթների տարբերությունները: Իսկ Անդրանիկի կերտարի առաջնությունն ու նրա շուրջ հյուսված հերոսատյառումները ևս մեկ անգամ փաստում են, որ հետիշտությունը ստանում է նոր մեկնաբանման և ներկայացման ձև, որը շատ ավելի գաղափարախոսականացված է և ավելի էժոճիոնալ, բան հիշողությունը:

⁵⁷ Նամիկ Գրիգորյան, ԴԱՆ, Մարտունի, 2018, Թաթուլ Կարադեղյան, 58 տարեկան:

⁵⁸ Անդրանիկի լուսանկարները դահելու մասին տե՛ս նաև Լ. Արախանյան, Գ. Շագոյան, ԴԱՆ, Շիրակի մարզ, Երազգավորս գյուղ, 2012: Տեսագրությունը տե՛ս Լ. Արախանյան, Գ. Շագոյան, Սարիբեկ Գրիգորյան, «Կտեսես, որ Բերիան «հակա» դուրս կգա...», Գ. Շագոյան, 10.09.2017 <https://www.youtube.com/watch?v=pdR93TXHbzc>, 31.10.2018:

Արա Գևորգյանի դատը գաղթել է Ալաշկերտի Ամատ գյուղից⁶⁰: Արայի դատկերացումներում «...Ալաշկերտի դաշտը Նայկական լեռնաշխարհի ամենահարուստ դաշտավայրն և համարվում»⁶¹:

Արան դատմում է դատական ընտանիքի մասին՝ փորձելով վերականգնել տան, ընտանիքի դատկերը.

«...գյուղի ամենամեծ տունը մեր տունն էր, նույնիսկ տունը, որ նկարագրում էին՝ սղիտակ, երևի սղիտակեցված, երկար տուն էր, միհարկանի, երկար տուն էր, գետի ափին էր, գյուղի ամենամեծ տունն էր, ու ըստեղ աղյուրում էին մի քանի ախտերներ իրանց ընտանիքներով: ...Դա նաև տարբեր մուտքեր և ունեցել, ընտանիքները ամեն մեկը իրա մուտքով և մտել»⁶²:

Պատը միշտ մտածել է Էրզիր վերադառնալու մասին, նույնիսկ գաղթի ճանադասին չեն մտածել, որ ընդմիջտ են թողնում իրենց տունը: Այստեղ կրկին զրուցակիցս հայտնվում է առանցքային դերում, դատը հենց իրեն լուրջ է տաներ Էրզիր.

«Ասում էր՝ լաո՛, էրզրի դռները որ բացվավ, կեթանք մեր էրզիր, ես բեզի կտանեն ցույց կտամ մեր էրզիրը ինչքան լավ էրզիր էր, աղեկ էրզիր էր, անուշ էրզիր էր մեր էրզիրը»⁶³:

Արա Գևորգյանի դատկերացումը Էրզրի մասին կառված է դատու նկարագրության հետ: 1974-75 թթ., երբ ընտանիքով գնացել են հանգստանալու.

«Ավտոն կանգնացրինք, իջանք, կանայք սեղան են փռում, մենք էլ երեխա ենք, խաղում ենք, մեկ էլ տենանք դատը գնաց: Դեռի արևմուտք և գնում, շնզլներ և, շնզլները ժայռաքեկորներ են, էթում [ա] դեռի էդ յան: ...Գացել ենք ասում ենք՝ դատի՛, ու՞ր ես էթում, զա՛ն ջան, ասում [ա], էրզիր եմ էթում: Պատի՛, ասում եմ, ի՞նչ էրզիր: Պատի՛, ի՞նչ էրզիր, զա՛ն ջան, ասում [ա],

⁵⁹ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Մարտունի, 2018, Թաթուլ Կարադեղյան, 58 տարեկան:

⁶⁰ Ամատ՝ գյուղ Արևմտյան Նայաստանում (դատմ. Բագրևանդ), Արածանի գետի վերին ավազանում:

⁶¹ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Գավառ, 2018, Արա Գևորգյան, 56 տարեկան:

⁶² Նույն տեղում:

⁶³ Նույն տեղում:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԹՅՈՒՆԻ ԲԱՆԱԿՈՒ ՊԱՏՄԱԹՅՈՒՆԵՐԻՍ

ես սարերը որ անցնում ենք, ընդեղ դուրան աս, դուրան՝ դա Արարտյան դաշտավայրն աս, դուրանով, ասում էր, գետն աս հոսում, գետը անցնում ես, մեր էրգիրն աս, էթամ մեր էրգիրը»⁶⁴:

Ոսկեհասկում բնակություն հաստատած մշեցիներն ու սասունցիներն իրենց բնակության վայրն ընտրելու հարցում միայն մեկ դատճառ էին նշում՝ վերադառնալ էրգիր:

«[19]15 թվին են գաղթել, ողտովել են քանի տեղ, հետո եկել են այստեղ, թե սահմանին մոտիկ է, կարող աս մեր հողերը տան, գնանք մեր էրգիր: Կըսեին՝ էրգիր, էրգիր, էրգիր»⁶⁵:

Նասմիկ Նարությունյանը հոր՝ Տիգրան Նարությունյանի մասին դատմում է.

«Նայրենիքի կարոտով էլ ինքը գնաց, նոստալգիան իրան խեղդեց: Ինքը այստեղ ուներ լայն շրջատատ, հարզանք, տաստիվ, ժողովուրդը իրան շատ սիրում էին, բայց ինքը ամեն ինչում միայնակ էր: Սա իրա հողը չէր, ինքը չէր կարող համակերտվել... Մխոթ մարդ էր, էն ժամանակ «Ավրորա» սիգարետներ կային, տարտաղիր, չեմ չափազանցնում, տարտաղիր, ամեն անգամ տուփը դատարկվելիս, դե էլ ժամանակ ես 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ դասարան էի, Ֆիլտր չկար, ուղղակի էդդես էդ թուրունը, տարտաղիր կարորկայի վրա, տարտաղիր կերտով նկարում էր Միս, Մասիս, սա իրա նկարն աս, ես որ սովորել եմ իրանից, և երկու բարդի: Պարտաղիր սա վերջինը նկարում էր տուփի վրա, նոր գցում էր: Չարմանալի մի գզացողություն, որը տալիս էր իր սիգարետի տուփին»⁶⁶:

Նասմիկ Նարությունյանը դատմելիս թղթի վրա նկարում է Մխը, Մասիսը և երկու բարդի, որը դարձել էր «Էրգիր» խորհրդանիշը: Գեղանկարչությունից եկած և տիրաժապվորված այս դատկերը լավագույնս ցույց է տալիս, թե ինչդես է մարդու անձնական, նույնիսկ վիզուալ ընկալումը բխում հանրային խոսույթից⁶⁷:

⁶⁴ Նույն տեղում:

⁶⁵ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Ոսկեհասկ, 2018, Սիրանուշ Մելքոնյան, 67 տարեկան: Նմնո. Մուշ, քաղցր Մուշ, էջ 15-22:

⁶⁶ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Գավառ, 2018, Նասմիկ Նարությունյան, 60 տարեկան:

⁶⁷ Թե ինչդես է կոլեկտիվ դատկերը ազդում մարդու անձնական վիզուալ ընկալման վրա տե՛ս X. Вельдер, նշվ. աշխ.:

էթամ իրա տունն էլ գտնամ, որ տյադս կըսեր Էսմա, Էսմա է, իրո՞ք որ էդդես է, ու գնացի: Գնացի գտա: Վենց իմ տյադի տյատնելով, լատ, քսավ, գերեզմներն են, գերեզմների տակ ճամփին է, առաջին թաք տունը մերն է, նոր գեղը կսկսի: Գնացի քտեղ կայնեցի: ...Մսի ես դետք ա գնամ հող ու ջուր բերեմ, լցնեմ իրա գերեզմանին: ...Ոսկեհասկում աղորդները սաղ ցանկություն ունեին էթալու, բայց խորհրդային երկիր էր, չէին թողնի»⁷⁰:

Նայոց ցեղասպանության՝ ջարդերի ու փախեփախի վերադառնա՞ծ հիշողությունները զուգորդվում են էրգրի մասին տատկերացումներով, ադա տատնություններով՝ Արևմտյան Նայաստան կատարած ուխտագնացության փորձառությունից, որտեղից որդես կանոն ջուր և հող են բերում Ծնողների/դադեների գերեզմաններին լցնելու. կարելի է ասել, որ այստիստվ տեղի է ունենում հիշողության «նյութականացում»: Սակայն ի տարբերություն հիշողության թանգարանացման՝ այս «նյութականացումը» դառնում է հիշողության փերֆորմանսի/ծեսի մաս՝ գերեզմանին ջուրն ու հողը լցնելու արարողություն⁷¹:

Արան հաճախ է խոսում այն մասին, որ թոռներից միայն իրեն է հետաքրքրում դադու հայրենիքը, համենայնդեպս, զգայական առումով: Արայի դադը դատմել է, որ այնտեղ հարստություն են թողել, և գրուցակիցս համարում է, որ այն, ինչ իրենցն է, դետք է վերադարձվի: Նայրենիք վերադառնալու և իրենց ունեցածը վերադարձնելու, «արդարությունը վերականգնելու» դատասխանատվությունը Արան համարում է, որ ինքը դետք է կատարի: Իր «հերոսականությունը» շեշտելու համար ասում է, որ դեռ Սովետական Միության տարիներին է ուզել դա անել, այսինքն՝ մի ժամանակաշրջան, երբ դա «չէր խրախուսվում»: Այստեղ կա ինչ-որ բան հաղթահարելու, արգելվածն անելու միտում: Սա հիշեցում է հեքիաթների սյուժեները, որտեղ հերոսն արգելքներ է հաղթահարում: Պատմության վերջում տեսնում ենք, որ «հերոսի» քոլադս է տեղի ունենում, քանի որ դեռ դատարաստ չէ. ևս մեկ «առաստելական» մոտիվ՝ դեռ ժամանակը չի եկել:

«Մեր նոտարը ասում ա՝ արի՛ գնանք էրգիր, ամեն տարի ասում, ասում են՝ ես քո հետ կգամ մինչև Անիի ավերակներ,

⁷⁰ Նասմիկ Գրիգորյան, ԳԱՆ, Գավառ, 2018, Սերոժա և Սուսանա Սերոբյաններ:

⁷¹ Նճմտ. Ա. Юрчак, Это было навсегда, пока не кончилось, Последнее советское поколение. Москва: Новое литературное обозрение, 2014, с. 223-233:

կնստեմ Անիի ավերակներում քո հետ մի հիսուն զրամ կիսմեմ, լաց կլինեմ, մոմերը կվառեմ, էլ չեմ կարա ճամփես շարունակեմ: Ասում եմ՝ գալիս եմ ի՞նչ անեմ: Չէ՛, ասում եմ, տղասի՛, համբերա, երբ տատրաստ կլինեմ, կեթանք, բայց բանի էրում, ավելի փուխը եմ դառնում: Ինձ թվում ա, ես չեմ կարա էլ էրզիր տենա: Ես կարամ քնեմ գիշերը երագիս տենամ, որ ես էրզրում եմ, մանավանդ ուսանող ժամանակ, քնում էի, ու ինձ թվում էր թռնում եմ: ... որ քնում էի ու ինձ թվում էր թռնում եմ, էրում եմ էրզիր: Սսենք, Արաքսի վրայով անցնում եմ սավառնելով: Նենց հետաքրքիր զգացողություն ա էդ թռնելը, որ մենց ազատությունը լրիվ զգում ես, ու էդ թռնելը, ու ասենք Արաքսի վրայով անցնում էի: Ու էրում էի ընդեղ շշկում էի, ասում եմ՝ ես մեր տան տեղն էլ չեմ իմանում, չգիտեմ ստեղ որտեղ իջնեմ, ինչ անեմ...»⁷²:

Կարծես երկրորդ և երրորդ սերնդի մոտ կարոտախառ լինի դեռի այն հողը, որը երբեք չեն տեսել: Չրուցակիցներիցս մեկը՝ Աշոտ Գաբրյանը, շատ դիպուկ է ասում.

«...ես ընդեղ չեմ ծնվել, բայց ինչ որ մի կարոտ կա իմ մեջ... Ասում ա հին տունը չեն քանդել թուրքերը, մեր տունը, ասում ա, կողոպտեք ժանգոտել ա, ոնց որ փակել փախել եկել են, տենց էլ դուռը փակ մնացել ա... Արևմտյան Նայաստան, Բասենի տունը»⁷³:

Սուսաննա Սերոբյանը սկեսրայրի՝ հայրենիք վերադառնալու ցանկության և նրա կարոտի մասին արցունքն աչքերին է դառնում. «Կեսրարս կըսեր, ես որ մահացա, կըսեր, իմ ձեռքս՝ արձանս, կհանեք դեռի Արևմտյան Նայաստան»⁷⁴:

«Էրզրի» մասին հիշողությունները հատկապես երրորդ սերնդի մոտ ստեղծում են «կորսված հայրենիքի» կենսունակ զգացողություն, ռոմանտիկացվում են և գաղափարականացվում՝ վերածվելով շատ զգայուն տատկերների և հույզերի: Եվ նույնիսկ այդ կարոտի մասին տեքստերն են դառնում հուզմունքի առարկա, ինչպես Սուսաննայի դարագայում է, երբ սկեսրայրի կարոտն ինքնին դառնում է իր համար հույզերի և արցունքների հիշողության տիրույթ:

Մի մասի մոտ հիշողությունը վերածվում է տախանջատիրու-

⁷² Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Գավառ, 2018, Արա Գևորգյան, 56 տարեկան:

⁷³ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Խաչաղբյուր, 2018, Աշոտ Գաբրյան, 82 տարեկան:

⁷⁴ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Ոսկեհասկ, Սերոժա և Սուսաննա Սերոբյաններ:

թյան կամ այնտեղ թողնված հարստությունը որևէ կերպ կադի-տալացնելու հույսեր է առաջացնում, իսկ մյուսների մոտ այն գաղափարականացվում է: Սա խոսում է այն մասին, որ շնայած տեղի է ունենում հիշողության ընդհանուր փոխանցում, բայց յուրացնում, ազդվում են հատուկ ենտները: Այսինքն՝ հիշողության փոխանցման համար ավելի կարևոր են լսողների կարողու-թյունները, դատկերացումները, կրթությունը, անձնական հատ-կանիշները, քան դատմողինը⁷⁵:

«ԽՈՐՆՐԴԱՎՈՐ ԱՆՑՅԱԼԸ» ԽՈՐՆՐԴԱՅԻՆ ՆԵՐԿԱՅՈՒՄ⁷⁶

Այն, որ Խորհրդային Միության տարիներին արգելված էր կամ չէր խրախուսվում խոսել Նայոց ցեղաստանության մասին, վկայում են նաև գրուցակիցներս: Նասմիկ Նարությունյանը դատմում է.

«Ցեղաստանությունից մազադուրծ փրկված եղել է հայրս՝ Տիգրան Նարությունյանը: Արդեն իսկ, երբ հասկացել եմ որոշ բաներ, լսել եմ հորիցս [19]15 թվականի ցեղաստանության մասին, բայց բոլորին էլ հայտնի էր, որ այդ ժամանակաշրջանում ընդ-հանրադեպ արգելված թեմա էր»⁷⁷:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ մյուս գրուցակիցներս առանձ-նադեպ չեն կենտրոնանում այն հանգամանքի վրա, որ Խորհր-դային Միության տարիներին չէր խրախուսվում դատմել: Տանը, գյուղամիջում կամ օդաներում ջարդի, գաղթի ճանադարիի կամ ֆիդայական շարժման մասին դատմությունները դատմվել են: Նասմիկ Նարությունյանի դեղքը թերևս դայմանավորված է նրա-նով, որ հայրը դաշտոնյա է եղել. դատմում էր, բայց ծածուկ.

«Ուղղակի շատ ծածուկ կերտով: Ես ասում եմ՝ թեման արգելված էր, ինքը ղեկավար դրստերում էր աշխատում... Ինքը աշխատել է գործկոմի նախագահի տեղակալ, ՄՏՍ-ի (Машино-тракторная станция-ՄՏ) տնօրեն, գազի վարչությունում որդես տնօրեն, գյուղ-բաժնի վարիչ: Ուզում եմ ասել, որ ինքն էլ էր դիրքն էր զբաղեցնում,

⁷⁵ Ընորհակալություն եմ հայտնում ազգագրագետ Գայանե Եազոյանին գիտական խորհրդատվության համար:

⁷⁶ Նայոց ցեղաստանության թեմայի՝ որդես հանրային դիսկուրսի կարգավիճակի փո-փոխության մասին տե՛ս ներածությունը:

⁷⁷ Նասմիկ Գրիգորյան, ԴԱՆ, Գավառ, 2018, Նասմիկ Նարությունյան, 60 տարեկան:

էղբան հնարավորություն չէին տալիս: Մենակ հիշում եմ Շիրազի էղ շարժերի ժամանակ իրա մեջ մի տեսակ սենց տոնական տրամադրություն էր լինում: Նա հասկանում էր, որ ինչ-որ մի բան կա, ինչ-որ մի բայլ կա: Բայց չէր արտահայտվում, էի չէր արտահայտվում: Իր մտքերի մեջ ինքը շատ փակ մարդ էր»⁷⁸:

Արա Գևորգյանի ուսանողական կյանքը սկսվում է «Լավ է մեռնել կանգնած, բան աղբել ծնկաշոք» կարգախոսով: 1980 թ. Երևանի Պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հայոց լեզվի ընդունելության քննության թեման էր: Արան դատմում է.

«Ես ազատ թեման Նայոց լեզվից գրեցի «Լավ է մեռնել կանգնած, բան աղբել ծնկաշոք», որտեղ ամբողջ ֆիդայական շարժումն էի նկարագրել: Դա 1980 թիվն էր: Որ դուրս եկանք, Դուք, եթե մի քիչ ուշադիր եք քաղաքական իրադարձություններին, մենք դատավոր ունենք՝ Մարտիրոսյան Մնացական, որ մարտիմեկյան դեղքերը ինքն էր քննում, քյավառցի ա, հասակակիցներ ենք, իրար հետ մենք քննություն էինք տալիս: Ասի՝ սենց բան եմ գրել, ասավ՝ գժվե՞՞լ ես, ասավ՝ քեզ անմիջադեմ երկուս կնշանակեն, հլը կսկսեն հետատյնդումներ, էդ ի՞նչ ես գրել»⁷⁹:

1982 թ. արդեն ուսանող ժամանակ Արան համալսարանի կոմերիտական օդերատիվ շտաբի ղեկավար էր, սակայն երեկոյան ժամերին շտաբում շարունակում էին հնչել ֆիդայական շարժման երգերը, որի համար Արան կանչվում է կուսկոմիտե, զգուշացվում, բայց նկատողություն չի ստանում:

Արա Գևորգյանի ուսանողության տարիները համընկնում են 1980-ականների սկզբի հետ, երբ Խորհրդային Նայաստանում ոչ թե արգելված էր խոսել Նայոց ցեղաստղանության մասին, այլ չէր խրախուսվում: Այս «կարգը» խախտողներին որդես տույժ հնարավոր էր դաշտոնանկ անելին որդես «այլ հակումներ» ունեցողի: Այդ «այլ հակումները» Արան հետևյալ կերպ է բացատրում.

«Այլ հակումներ ասելով՝ նկատի ունեին այնդիսի բաներ, որը... այն ժամանակ գոյություն ուներ կոմունիզմ կառուցողի բարոյական կողմեր, չի համադաստասխանում կոմունիզմ կառուցողի, երիտասարդ կոմունիստի, այսինքն՝ կոմերիտականի

⁷⁸ Նույն տեղում:

⁷⁹ Նամիկ Գրիգորյան, ԴԱՆ, Գավառ, 2018, Արա Գևորգյան, 56 տարեկան:

բարոյական կողերսին չի համադատասխանում: Որովհետև դա կարային դիտեին, եթե դա լիներ 30-ական թթ.՝ ստալինյան ժամանակաշրջանը, դա կարային դիտեին որդես թշնամանք սերմանել հարևան եղբայր թորթ ժողովրդի նկատմամբ, շեմ իմանում ինչ, մման բաներ կարային լինեին»⁸⁰:

Արան սեփական կենսագրությամբ վերահաստատում է Ալեքսեյ Յուրչակի՝ ուշխորհրդային հասարակություններին բնորոշ «այլակեցության» («внеаходимость»)⁸¹ կոնցեպտը, համաձայն որի՝ կարելի էր, առանձնադեպ չմարտնչելով իշխող գաղափարախոսության հետ, աղքեղ զուգահեռ իրականությունում, որտեղ գործում են բացարձակ այլ կանոններ՝ երբեմն ուղիղ հակառակ հայտարարված դաշտոնականին: Ուշխորհրդային Նայաստանի դարագայում «այլակեցության» դաշտերը հաճախ հատում էին ազգային ազատագրական, ցեղասպանության կամ ազգային մշակույթի խոտոյթները:

ԵՂԵՌՆ. ՆԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նետհիշողությունն ինքնին «վճռական իրադարձության» (“crucial event”⁸²) մասին հիշողությունը չէ, այլ երեխաների վերակառուցած հիշողությունն է իրենց ծնողների փոխանցած հիշողության մասին⁸³:

Այս համատեքստում թերևս դատահական չէ, որ Արա Գևորգյանը, երբ սկսում է դատմել եղեռնի մասին, անմիջապես հղում է կատարում դատի խոսքին՝ «ինքը դատմում ա» և անընդհատ, նույնիսկ նախադասության մեջ մի քանի անգամ կրկնում է՝ «ասում [ա]», որով իր ամբողջական միտքը բազմիցս ընդհատվում է: Սրանով զրուցակիցս կարծես անջրդեհ է դնում իր և իր դատի դատմության միջև՝ անընդհատ ցույց տալով, որ ինքն այդ դատմության անմիջական կրողը չէ, բայց և այնպես այդ դատմության մի մասնիկն է, իր ձևակերպմամբ՝ նրա «գեներտիկ

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ А. Юрчак, *Գլ. աշխ.*, էջ 255-310:

⁸² «Վճռական իրադարձության» հայեցակարգի հեղինակն է Ալեսանդրո Կավալին: Shu A. Cavalli, *La mémoire comme projet: les mémoires des communautés après une catastrophe // M. Halbwachs, Espaces, mémoires et psychologie collective*, ed. Yves Déloye and Claudine Haroche, Paris: Publications de la Sorbonne, 2004:

⁸³ D. Firat, B. Şannan, Ö. Muti, Ö. Gürpınar and F. Özkaya, *Գլ. աշխ.*, էջ 6:

կրողը»: Արան լուսավորում է ոչ թե իր հիշողությունները եղեռնի մասին, այլ իր հիշողությունները լուսավորող հիշողության մասին. «...Ինքը ասում ա՛ր՝ լուսավորվածը սկսեց, տղամարդիկին տալու, բոլոր տղամարդկանց տարան լուսավորված, մնում են, գլուղում մնում են կանայք, էրեխեքը»⁸⁴: Չրուցակիցս լուսավորությունները լուսավորում ասում է՝ «իրա մոտ նաև նույնիսկ սենց մի դրվագ կար, լուսավորության մեջ», «բրոջ հետ էլ հետաքրքիր լուսավորություն ա կատված»: Սա խոսում է այն մասին, որ լուսավորող լուսավորությունը ոչ այնքան ժամանակագրական կառուցվածք ունի, այլ դրվագային, որոշակի կոնկրետ լուսավորություններ ինչ-որ եղելությունների մասին, որոնք հիշվում և ակտիվանում են ըստ իրավիճակների: Նետաքրքրական է, որ առաջին «ամբողջական դրվագը» վերաբերում է առաջին սղանությանն ակամատես լինելուն և իրենց ընտանիքի կանանց ու երեխաների ողջ մնալուն: Այս դրվագը լուսավորում վերջում գրուցակիցս ասում է՝ «ու մնան դեղքեր»: Արան ինքն էլ իր հերթին ընտրում է ինչ լուսավորում, կամ իր հիշողության մեջ ևս սելեկցիա է տեղի ունեցել՝ ինչը հիշել, ինչը չհիշել: Արա Գևորգյանը մեր գրուցի ընթացքում էլ ընտրում է ինչ հերթականությամբ լուսավորել: Պատմությունը սկսում է Առաջին աշխարհամարտով, որից անմիջապես հետո խոսում է հայ-քրդական հարաբերությունների մասին, անցում կատարում մի դրվագի, որը եղել է գաղթի ճանապարհին, նոր վերադառնում «սկզբին»՝ թե գաղթի ճանապարհը երբ է եղել ու ինչդեպ: Թեմաները շափագանց միահյուսված են և անընդհատ վերադառնում են նախորդ թեմային: Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ շնայած Արա Գևորգյանն արդեն ձևավորված հստակ լուսավորություններ ունի, բայց դրանք դրվագային են և միահյուսվում են ներկայի կամ ոչ վաղ անցյալի հետ, ինչը նաև լուսավորված է իմ հնչեցրած հարցերով: Արան չի հիշում քրդական անձնանունները, տեղանունները, որոնք լուսավորում են, բայց ինքը մոռացել է. «Պատմությունս էր նաև էլ քրդի անունը, ուղղակի ես չեմ հիշում»⁸⁵:

Առաջին ամբողջական դրվագը հետևյալն է.

«Իրա մոտ նաև նույնիսկ սենց մի դրվագ կար, լուսավորության մեջ, որտեղ ասում էր, որ փախնում են արդեն, գաղթում են, գաղթի ժամանակ, գալիս են ճանապարհին ինչ-որ, ասում [ա]՝

⁸⁴ Նամիկ Գրիգորյան, ԳԿՆ, Գավառ, 2018, Արա Գևորգյան, 56 տարեկան:

⁸⁵ Նույն տեղում:

դեզերի տես բաներ տեսանք, ասում [ա]՝ մոտեցանք, գիշեր էր, ասում [ա]՝ մեզ թվաց դեզեր ա. մոտենում տենում են աթարից ամրոցներ ա շարած: Այ էդ ամրոցների մոտ, դե բրդերն իրանք անասնադահ ժողովուրդ են, իրանց օբա տեղերը, այսինքն յայլաները, որտեղ որ իրանք ամառները մնում էին, էդ մասում մաս գոյացած գոմաղբից իրանք ամրոցներ էին շարում, որը հետագայում՝ ձմեռվա ընթացքում տեղափոխում էին, տանում էին գյուղ, որտեղ որ աղյուր էին, ընդդե: Գալիս տեսնում են ընդդեդ տախակ էլ կա, էդ բաների մոտ, ասում [ա]՝ տախակը հրացանով էր: Նրացանը բաշեց վրներս, թե՛ ով ա՞ զգալիս, բրդերեն հարցնում ա: Բան են անում՝ թե գաղթական ենք էլի, փախնում ենք ռուսի երկիրը, մեզ մի՛ սղանեք, ինչ կլինի: Դե կին արմատներ են լինում, մեկ էլ էրեխեք են: Ասում [ա]՝ ո՞ր գյուղից եք: Ասում են՝ Ամատից ենք, ասում [ա]՝ դե որ Ամատից եք, հլը մոտիկ եկեք տենամ ովքեր կան մեջներդ, ասում [ա]՝ ես Ամատում ծանոթներ ունեմ: Որ մոտեցանք, ասում [ա], հենց տեսավ ասավ՝ Ռուբեն, էս դու՞ ես: Ասում [ա]՝ մեր տան բուրդն էր, ասում [ա], որ մեր տանը հոտաղ էր: Ասեց՝ Ռուբեն դու՞ էլ էս ստեղ, ասում [ա]՝ ասեցի հա, ասեց՝ արի, բան չեմ անի ձեզ, ոչ մեկիդ չեմ վնասի, ասում [ա]՝ կրակ վառեց, մտեցրեց էդ կրակի շուրջը, ու ասում [ա]՝ էդ մոմենտին տեսավ մեր հարևան, ասում [ա]՝ ինձանից մեծ ջահել տղա էր, որ հլը բանակի տարիքի չի եղել, բանակ տարած չեն եղել, ասում [ա]՝ դրան տեսավ, անունը Արմենակ էր, ասավ՝ Արմենակ, դու՞ էլ ես ստեղ, ասում [ա]՝ ասեց հա՛: Պատյս տալիս էր մաս էդ բրդի անունը, ուղղակի ես չեմ հիշում, ասում ա՛ ասեց մտեք կրակի շուրջ, ասում [ա]՝ ինքը մտեղ էր էդ Արմենակի դեմ դիմաց, ու ասում [ա]՝ հրացանը ձեռն էր, ու ասում [ա]՝ էդ կրակի շուրջ մտած էինք, ասում [ա]՝ միանգամից հրացանով կրակեց Արմենակի վրեն: Մղանեց Արմենակին, ու ասում [ա]՝ մնացածիս ասեց, մենք դժացինք, էրեխա ենք, կանայք սկսեցին լացուկոծ, ասավ չէ, ասավ, սա նրա համար, որ ասում [ա]՝ էն ժամանակ Արմենակը կազմակերպել էր, ուզում էին ինձ սղանեին, ասում [ա]՝ ձեզ ձեռ չեմ տա նրա համար, որ Ռուբենը փոքր էրեխա էր, տառկել էր իմ վրեն, լաց էր լինում, ասում էր՝ մեր բրդին մի՛ սղանեք, անունը տալիս էր, ասում [ա]՝ շտղանեք, մեր բրդին շտղանեք, ասում ա՛ Ռուբենը, որ շթողեց ինձ սղանեն, ես ձեզ բան չեմ ասի, բայց Արմենակը ուզում էր ինձ սղաներ, Ռուբենը շլիներ, ինձ տիտի սղանեին: Ու նման դեղեր»⁸⁶:

Չբուցակիցս դատլի դատմությունը զուգորդում է իր դատմա-

⁸⁶ Նույն տեղում:

կան գիտելիքի հետ: Փորձում է դադարի դատմածի հիման վրա ենթադրություն անել, թե որ ժամանակաշրջանի մասին է խոսքը.

«Գաղթի ճանադարի, ասենք, ինքը դատմում ա, իրանք հիմնականում գաղթում են ձմեռը: Չմեռ ա եղել, գարնուրելի ցուրտ ա եղել, դա ըստ երևույթին եղել ա [19]15 թվին, որ տատվում դեղի [19]16 թիվը, ըստ երևույթի այ էդ ժամանակաշրջանի հետ ա համընկել: Չնայած դա կարար ավելի ուշ էլ լիներ, որովհետև [19]16 թվին ռուսական գորքերը առաջ անցան Վան մտան, մինչև Վան մտան: Նշանակում ա դրանից հետո՝ [19]16, դեղի [19]17, այ էդ ձմեռն ա եղել, որովհետև դե ինքը ասում ա էլի՝ մեկ ռուսներն էին առաջ խաղում, մեկ թուրքերն էին առաջ խաղում: Իրա դատմելով ձմեռ ա եղել, ցուրտ ա եղել»⁸⁷:

Տանից դուրս են եկել դադը՝ Ռուբենը, իր փոքր եղբայրը, որին ճանադարիին կորցրել են, բույրը՝ Աշխենը, հորեղբոր կինը՝ Ալմաստը, Ռուբենի մայրը և Ռուբենի տատը: Թե ընտանիքի անդամներն ինչ դայմաններով են տանից դուրս եկել, ինչ են կարողացել իրենց հետ վերցնել, Արա Գևորգյանը, որոշ դրվագների վրա հիմնվելով, ենթադրություններ է անում.

«Պատյիս հորոդդոր սողեն դատմում էր, ասում էր՝ ես փոքր էրեսխա էի, ասում էր, ինձ ուղարկեցին, էդ երկար տունը որ ըլել ա, դա նաև տարբեր մուտքեր ա ունեցել, ընտանիքները, ամեն մեկը իրա մուտքով ա մտել: Ասում՝ ինձ ուղարկին, ասին, գնա տատին ասա շուտ արեք, թուրքը գալիս ա, թուրքի գորքը գալիս ա, շուտ արեք, որ էթանք: Ասում էր՝ ես հասա էն մոմենտին, որ ասում, զոմում մեծ եզան տակի սալը բարձրացրել էին, ամաններով ոսկեդենն էին իջեցնում, սալի տակ փոսի մեջ դրեցին: Ասում [ա]՝ սալը դրին վրեն, փակին, զոմադըր լցրեցին, տավարը էլի տենց գոմի մեջ թողեցին վրեն: Ու ասում [ա]՝ տատս ինձ կանչեց, ձեռնոցներիս մեջ ոսկեդեն լցրեց, ձեռնոցներիս մեջ, մեկ էլ ասում [ա]՝ շալ էր մեջքիս փաթաթած, լցրեց մեջը, ասավ՝ դու վազի հասի ձեր տնեցիներին, հետները գնա, մենք դուրս ենք գալիս հեսա: Դե ես էլ մտածում եմ հարուստ տուն էր, ոնց էլ լիներ գոնե մի հատ սել՝ սայլ, մի հատ մեծ սայլով, որովհետև ծանրացած, այսինքն՝ հղի կին կար, դառավ կին կար, գոնե դրանց, ինչ որ բաներ, վեշեր...»⁸⁸:

Գաղթի ճանադարիին տեղի ունեցած առաջին տրավման եղել

⁸⁷ Նույն տեղում:

⁸⁸ Նույն տեղում:

է տատու, մոր և նորածին եղբոր կորուստը, որը կառավում է մեկ այլ լուսատուի հետ և ամբողջ կյանքի ընթացքում հետադարձ-դրամ Ռուբենին: Այս մասին գրուցակիցս խոսում է՝ ձայնը իջեցնելով, կարծես տատանվելով: Ասում է, որ ռուսական գործի և հայ կամավորների մուտք գործելուց հետո ինչ-որ բնակավայր, որի անունը չի տալիս, հայերի տներում տեղավորված քրդերը փախչում են: Արա Գևորգյանը սրտի ցավով լուսատու է, ձայնի մեջ խղճմտանք լայնացնող ելևէջով.

«Ասում [ա]՝ դռները բացինք, որ մտնենք տները տարանանք, ասում [ա]՝ թոնիրը վառն էր, մի հատ էրելսա, սիրուն էրելսա էր թոնրի շուրթին նստած, ասում [ա]՝ աղանձ էր ուտում: Ասում [ա]՝ որ հարց տվեցի, թե ումնցի՞ց ես, ո՞վ ես, ասում [ա]՝ էսի քղեբեն դաստասխանեց, ասում [ա]՝ մերս, որ մեռել էր, տաստս մեռել էր, նորածին ավտորս, ասում [ա]՝ սղանեցին, դրեցին դիակների հետ թաղեցին, ասում [ա]՝ էդ ջղայնությունից, ասում [ա], էդ էրելսուն բրթեցի գցեցի թոնիրը, ասում [ա]՝ թոնրի խուփը քաշեցի վրեն ու փախա: Բայց ամբողջ կյանքում, ամբողջ կյանքում ասում էր՝ Էն անմեղ էրելսուն ես ո՞նց գցեցի թոնիրը»⁸⁹:

Արան այս դրվագը լուսատուից անմիջադեպ հետո շարունակում է իր մանկության հուշերից լուսատու, որը կարծես գալիս է՝ արդարացնելու լուստի անթույլատրելի արարքը:

«... մի հետաքրքիր բան լուստմեմ: Ուրեմն, լուստ, ես էրելսա էի, իրանց հայաթն էինք, ինքը գառներ էր լուստում, ոչխար էր լուստում: Էրգրից եկած սովորություն էր, ամբողջ կյանքում ինքը անասնադաստարածք ա գրադվել: Մեծ հայաթ ուներ ստեղ՝ Բյավառում, նաև ոչխար էր լուստում, ինքը գցում էր դեմը տանում էր դաշտերը, հետո էլ հետ էր դարձնում: Ուրեմն, որ ինքը ինձ միշտ ասում էր՝ գա՛ն ջան, ես մտածում էի, դե էրելսա էի, մտածում էի լուստը Էնքան գառ ա լուստել, որ ինձ էլ ա ասում՝ գա՛ն ջան: Ուրեմն, հայաթում նստած, իրանց հայաթում սանդ կար, սանդը գիտե՞ս ինչ ա, քար ա մեծ, որի մեջ փոս կա, ըստեղ ձավար, բան լցնում են, ծեծում են: Մտած էր սանդի քարի վրեն, հացի փշուրները լցրել էր ձեռի մեջ գառներին իրա կերակրում էր: Ուրեմն, ամենահետաքրքիրն էն էր, ծիտը, սովորական ծիտը՝ ճնճղուկը, եկավ նստավ ձեռի մեջ, կտցում ա: Մերս ասավ՝ Աստված ջան, սենց բան ես չէի տեսել, ասավ՝ հըր տեսե՛ք ինչքան արդար մարդ ա, ինչքան մարդ մարդ ա, որ ծիտը, ծիտը նստել ձեռի մեջ, փշուր ա ուտում: Ու ես էլ վազելով

⁸⁹ Նույն տեղում:

մշակութաբան Կ. Կարուտի՝ Ղոյքոստը տրավմատիկ դարձավ ոչ միայն լագերային իրադարձություններով, այլև նրանով, որ աշխարհը մերժում էր վկայել, ինչդեռ նաև՝ ընթերցողի ու ընկերների հավատալու անընդունակությամբ⁹³:

Նայոց ցեղաստանության հիշողության խնդիրներով զբաղվող արդեն հիշատակված գիտահետազոտական խումբն իր համատեղ հոդվածում գրում է. «Թուրքիան վաղուց է ժխտում, որ տեղի է ունեցել ցեղաստանություն: Այս մշտական ժխտումը հայերի սոցիալական ինքնության շարունակականության վերականգման համար հիմնական խոչընդոտն է եղել. ինչ-որ իմաստով ցեղաստանությունը դեռ շարունակվում է. ո՛չ ճանաչման, ո՛չ էլ հաշտեցման (reconciliation) որևէ փորձ չի արվել»⁹⁴:

Այն հարցին, թե որոնք են հաշտեցման եզրերը, գրուցակիցներս տարբեր դատասխաններ էին տալիս, և այս առումով կարծես թե դժվար է ընդհանրական մոտեցման մասին խոսել: Յուրաքանչյուր օրինակի դեպքում մոտեցումը խիստ անհատական է, կաղվում է մարդու ընդհանուր ընկալումների և զգայական դաշտի հետ: Չրուցակիցներիցս Արա Գևորգյանը նշում է, որ այն դահից, երբ հասկացել է, թե ինչ է տեղի ունեցել իր ժողովրդի հետ, «թուրք» անունը լսել չի ցանկացել և չի կարողացել: Սակայն, ժամանակի ընթացքում վերաբերմունքը փոքր-ինչ մեղմվել է՝ դայմանավորված նրանով, որ որոշ թուրք բաղաբաղական և մշակութային գործիչներ խոսում են Նայոց ցեղաստանության մասին և ընդունում են այդ իրողությունը: Իմ հարցին Արա Գևորգյանը հետևյալ կերպ դատասխանեց.

«... Գիտեք ոնց, եթե ներկայիս Թուրքիայի կառավարությունը ընդունի Եղեռնը, ես չեմ ասում, հա, փոխհատուցում տա, չեմ իմանում ինչ: Ուղղակի իրանց կատարած մեղքը եթե ընդունեն, եթե զգամ, որ իրանք ցիվիլ մարդիկ են, ինձ թվում ա ես էլ կներեմ ինչ-որ տեղ: Դե հիմի կատարվել ա, հա, Ջեմալի թոռը, եկավ ստեղ իրա դատին սղանողի թոռան հետ հանդիպում ունեցավ: Դե արյունը արյունով չեն լվանում, մեզ նաև մեր հոգևոր հայրերն էլ են սովորեցնում, որ չի կարելի արյունը արյունով լվանալ, դա նաև մեզ ժողովրդական իմաստությունն ա

⁹³ К. Карут, Травма, время и история // Травма: Пункты: Сборник статей, сост. С. Ушакин и Е. Трубина, Москва: Новое литературное обозрение, 2009, с. 576.

⁹⁴ D. Firat, B. Şannan, Ö. Muti, Ö. Gürpınar, and F. Özkaaya, նշվ. աշխ., էջ 5:

սովորեցնում: Ես կողմ եմ, որ ասենք՝ հո մենք հավերժական թշնամիներ չենք լինելու, հո անընդհատ իրար չենք կոտորի, իրանք մեզի, մենք՝ իրանց: Բայց ասում եմ՝ կար դերիդո, որ «թուրք» լսում էի, վատանում էի»⁹⁵:

Նամածայն մեկ այլ զրուցակցի՝ Առնակ Պետրոսյանի.

«Այ տենց բաներ ա եղել, էտ մարդը [զրուցակցիս դատը]՝ Բագրատ Պետրոսյանը - ՆԳ] կյանքում չի բարիչել թուրքի հետ, ամեն առիթով, որովհետև ասենք էսօր մենք էլ չենք բարիչում՝ լսելով էտ դատմությունը, հասկանալով»⁹⁶:

Զեղատանության տրավմատիկ ազդեցությունը հաջորդ սերունդների վրա, բացի ընտանեկան ողբերգությունից, վեր է ածվում քաղաքականության խնդրի: Անցյալում կատարվածը դուրս է գալիս «դատմական փաստ» կարգավիճակից և մտնում այսօրվա քաղաքական օրակարգ՝ դարտադրելով դիրքավորվել կան որդես ժխտողականության, կամ դրա հանդեպ դիմադրության համակիր: Այն դեպքերում, երբ տրավմատիկ հիշողության կրողը փորձում է ռացիոնալ լուծում գտնել՝ հաղթահարելու ընտանեկան տրավման, նա բախվում է ներկայում իր որդեգրած գաղափարախոսական և բարոյական օրակարգին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսդիտով, Դաշտային աշխատանքների արդյունքում հավաքված բանավոր դատմությունների վերլուծությունները ցույց են տալիս, որ Նայոց ցեղատանության մասին գիտելիքի փոխանցումը արևմտահայ գաղթականների շրջանում տեղի է ունենում երկու միմյանց փոխրացնող տեղեկատվական խողովակներով՝ հասարակական (ավելի լայն՝ ընտանեկան և համայնքային փոխհարաբերությունների միջոցով) և ինստիտուցիոնալ (ավելի լայն՝ կրթամշակութային տաշտոնական խոսույթի միջոցով):

Առաջինի դեպքում իրազեկողը գերազանցապես Նայոց ցեղատանությունը վերադրողներն են՝ տատիկներ/դատիկներ, մեծահասակ ազգակցականները կամ «գյուղի մեծերը», գիտելիքի փոխանցման վայրը՝ հիմնականում տունը, գյուղական համայն-

⁹⁵ Նամիկ Գրիգորյան, ԴԱՆ, Գավառ, 2018, Արա Գևորգյան, 56 տարեկան:
⁹⁶ Նամիկ Գրիգորյան, ԴԱՆ, Խաչատրյուր, 2018, Առնակ Պետրոսյան, 39 տարեկան:

քի դարազայում՝ գյուղամեջը և օդաները: Մանկության և դաստանեկության տարիներին բակի կամ մանկադարձեցի հասակակիցների մեջ շրջանառվող երգերը նույնպես օրինակ են հասարակական փոխհարաբերությունների միջոցով փոխանցվող հիշողության: Այս և ինստիտուցիոնալ միջոցների տարբերությունն այն է, որ եթե առաջինի դեպքում հիշողության փոխանցումը լինում է վերադարձից երրորդ սերունդ, առաջինստիտուցիոնալ փոխանցումը համահարթեցնում է սերնդային հիշողությունը, այն փոխանցվում է՝ անկախ նրանից, թե վերադարձների որ սերունդն է, կամ նույնիսկ՝ կան վերադարձներ, թե ոչ: Նամաձայն գրուցակիցներին՝ իրենց գիտելիքները հետագայում լրացվել են գեղարվեստական գրականության և ֆիլմերի միջոցով, հատկապես այն սերնդի դարազայում, որոնց երիտասարդության տարիները համընկնում են 1980-ականներին:

Իտրիդային Միության կողմից դաշտոնական և ոչ դաշտոնական արգելքը, ինչպես նաև միջազգային լռությունը և Թուրքիայի Նանրադեպարտմենտի որդեգրած ժխտողական քաղաքականությունը, գոհի կարգավիճակը նոդաստեցին, որդեսգի Նայոց ցեղատանության մասին հիշողությունը մնար ներընտանեկան կամ ներհամայնքային արթուն հիշողության շրջանակներում:

Ներընտանեկան և ներազգակցական շրջանակներում այն փոխանցվում էր մի քանի մեխանիզմներով՝ հավաքությունների ժամանակ երգում աղբյուր փորձառության ու ազգային հերոսների մասին դատմելով, այդ դատմությունները կենացներով ուղեկցելով. արևմտահայ գաղթականների մոտ այս ամենը դառնում է «ընտանեկան ավանդույթ», առօրյա դրակտիկաների մաս է կազմում:

Գիտելիքի փոխանցման մյուս ձևը եղեռնի, գաղթի կամ փախեփախի դատմությունները հեքիաթի դեպքում էլ, որը որոշ իմաստով ծիսականացված էր: Պատմությունները հեքիաթի դեպքում վայր էին գյուղի օդաները, որի դարազայում գիտելիքի փոխանցողը գյուղի/համայնքի մեծերն էին: Օդաները, այսպիսով, դառնում էին հիշողության դահլիճ և փոխանցման առանցքային նշանակության տեղեր, որտեղ ձևավորվում էր ոչ

թե զուտ ընտանեկան, այլ արդեն՝ հանրային (ոչ ֆորմալ) համայնքային հիշողությունը:

Նույն մեխանիզմը գործում էր նաև ընտանիքի ներսում. երեկուները տան մի անկյունում թախտի վրա թիկնած դատմություններ դատմելը դառնում է յուրօրինակ ժամանցի և երկու տարբեր սերունդների՝ դադիկ/տատիկների և թոռների հաղորդակցման ձև:

Ընդ որում, թոռներն ավելի շատ են վերարտադրում իրենց դադիկ/տատիկներից կամ ազգի մեծերից լսած դատմությունները, քան երկրորդ սերունդը: Այսինքն՝ այն, ինչ երկրորդ սերունդը փորձում է մոռանալ, երրորդ սերունդը վերականգնում է: Նարկ է նաև նշել, որ թոռները հիմնականում այն վերջին սերունդն են, որ տրավմատիկ դատմությունը կրողների հետ անմիջական շփում են ունեցել և դատմություններն անմիջականորեն լսել նրանցից: Սա դայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ առաջին և երրորդ սերունդների ժամանցային վայրը թե՛ տանը՝ ներընտանեկան միջավայրում, թե՛ համայնքում՝ հանրային միջավայրում, համընկնում էր, ինչը հատկապես բնորոշ է ավանդական հասարակություններին: Սա այն սերունդն է, որն աղյրել է եռասերունդ ընտանիքում և ունի փոխանցվող ընտանեկան դատմություն, ինչը չի կարելի ասել երկրորդ սերնդի մասին, որը հիմնականում դուրս է մնում հանրային, ոչ ֆորմալ միջավայրից, հետևաբար նաև այդ դատումի կրողը չէ: Երկրորդ և երրորդ սերունդների շփման ձևաչափերը դայմանավորում են նաև հիշողության տարբեր չափաբաժնի փոխանցում և տարբեր հիշողությունների ձևավորում:

THE PAST IN THE PRESENT: SECOND AND THIRD
GENERATIONS OF ARMENIAN GENOCIDE SURVIVORS

The article primarily looks at the mechanisms of intergenerational transmission of trauma in the context of the "official memory politics" of the Armenian Genocide. It presents how the memory of genocide affects family and social life of the second and third generations, shapes their worldview and identity, the depth of its transmission and breadth of its manifestation in the "present". The research mainly covers current perceptions and interpretations amongst second and third generations of genocide survivors, who settled in Eastern Armenia.

The analysis of oral history interviews shows that the transfer of knowledge about the Armenian Genocide among the Western Armenians involves two complementary information channels: (a) social, through family and community; and (b) institutional, through educational-cultural official discourse.

KEYWORDS: The Armenian Genocide, the second and third generation, post-generation, memory, post-memory, memory politics.

АСМИК ГРИГОРЯН

ПРОШЛОЕ В НАСТОЯЩЕМ: ВТОРОЕ И ТРЕТЬЕ ПОКОЛЕНИЯ
ПЕРЕЖИВШИХ ГЕНОЦИД АРМЯН

Основная цель данного исследования – выявить механизмы передачи травмы из поколения в поколение с учетом «официальной политики памяти» относительно Геноцида армян. В статье рассматривается как память о геноциде влияет на семейную и общественную жизнь второго и третьего поколений переселившихся в Восточную Армению очевидцев этой трагедии, формирует их мировоззрение и идентичность, а также в какой мере она передается следующим поколениям и в каком объеме отображается в «настоящем».

Анализ устных историй, собранных во время полевых исследований, показывает, что трансляция травмы и знаний о Геноциде армян среди беженцев из Западной Армении происходила посредством двух взаимодополняющих информационных потоков: социальных (в широком смысле – посредством родственных и общинных отношений) и институциональных (в широком смысле – посредством официального культурно-образовательного дискурса).

КЛЮЧЕВЫЕ СЛОВА: Геноцид армян, второе и третье поколения, постпоколение, память, постпамять, политика памяти

Ընդհանուր ծրագիր՝ ԳԱԱ ՀԱԻ-ի Բանավոր լուստնության կենտրոնի ուսուցողական ծրագիր

Հասմիկ Գրիգորյանի մախագիծ՝ Հայոց ցեղասպանությունը վերադրող-ների երկրորդ, երրորդ սերունդները

Հարցազրույցի կարգավիճակ՝ բաց հանրային

Հրուցակցի անուն՝ Արա Գևորգյան

Ծննդյան թիվ՝ 1962 թ.

Հրուցավարի անուն՝ Հասմիկ Գրիգորյան

Հրույցի տևողությունը՝ 1 ժ. 27 ր.

Հարցազրույցի վայր՝ զրուցակցի աշխատատեղ, Գավառի քաղաքադե-տարան

Հրույցի ամսաթիվ՝ 19 հուլիսի 2018 թ.

Հրույցի լեզու՝ հայերեն, հիմնականում՝ գրական, մասամբ՝ Գավառի բարբառ

Վերծանողի անուն՝ Հասմիկ Գրիգորյան

Վերծանության ամսաթիվ՝ Օգոստոս 2018 թ.

Ձայնագրության մեթոդ՝ Mp3

ՎԵՐԾԱՆՈՂԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Ձայնագրությունը լավ լսվում է:

ԶՐՈՒՑԱԿՑԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Արա Գևորգյանը ծնվել է Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում 1962 թ., բնակ-վում է Գավառում:

ԱՄՓՈՓՈՒՄ

00:00:00	Ներածություն:
00:01:00	Ունից և երբ է լսել եղեռնի մասին:
00:09:00	Հայոց ցեղասպանության թեման ԽՍՀՄ շրջանում:
00:15:30	Եղեռն, գաղթ:
00:30:13	Հայրենիք/Երգիր:
00:55:05	Տեղացի/գաղթական:
01:05:06	Թուրք/ադրբեջանցի:

ՀԱՍՏՈՂ ՁԱՅՆՆԵՐ. ԴԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԵՏԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԸՆԿՎՈՐ ՊԵՏԱԿՈՒՆԵՐՈՒՄ

– Պարոն Գևորգյան, կոդատմե՞ք՝ առաջին անգամ երբ եք լսել Եղեռնի մասին:

– Եղեռնի մասին... կոնկրետ ժամանակաշրջան չեմ կարա ասի, բայց փոքր ժամանակվանից, ըստ երևույթին դեռ մանկադարսեզից հիշում եմ նման բաներ, ոչ թե Եղեռն, այլ որ թուրքերը անընդհատ ջարդել են, ոչ թե ջարդել, սղանել են հայերին: Նույնիսկ մանկադարսեզից, երբ կար՝ *Անդրանիկը քաջ, մի շիշ խորոված կրծելով գնաց թուրքերի առաջ, ի՞նչ...* նմանատիպ երգ կար: Ու էդ ժամանակվանից թուրքերի հետ կառված մենք թշնամություն ենք ունեցել, բայց կոնկրետ ինչ վերաբերում է նրան, որ Եղեռն է տեղի ունեցել ըստ երևույթին արդեն դոյրոցահասակ եմ եղել, որ Եղեռնի մասին գաղափար եմ ունեցել:

– Ումի՞ց եք լսել:

– Տնեցիներից, տնեցիներից: Ես, որ փոքր էի, ինձ անընդհատ ծնունդ էին անում, ամեն տարի ծնունդ էին անում: Ծնունդի ժամանակ հավաքվում էին բնականաբար հարազատները՝ տառը, տատը, հորեղբայր, քեռի, հավաքվում էին: Ու էդ ժամանակ մեծերը, այսինքն՝ տատան, հորողերները, քեռին, դիմում էին տատիխա, ասում էին՝ *հլը մի քիչ տատմի՛ ձեր երկրից, էն, ինչ որ կատարվել ա ձեր հետ: Փոքր էրեխա էի, այ էդ ժամանակվանից ա իմ մոտ ձևավորվել այ էդ գաղափարը, որ տեղի ա ունեցել ջարդեր, տեղի ա ունեցել Եղեռն:*

– Ձեր տատի անունն ի՞նչ է:

– Ռուբեն Նակոբի Գևորգյան: Դե, Գևորգյանը խիստ սիմվոլիկ ազգանուն ա, էն առումով, որ փոքր են եղել, որ փախել եկել են, ասում է՝ դե որ գցում էին որբանոցները, այնտեղ հարցնում էին մեծերից ու՞մ եք հիշում, ձեր մեծերից, որևիցե մեկի անունը տվեք, իրանք, ասենք, տվել են իրանց հորողոր, տատի, չեմ իմանում ում անունը, ու տենց գրել են Գևորգյան: Իսկ Գևորգը ով է եղել տատիս համար, ես չեմ կարա ասի:

– Ձեր տատերը որտեղի՞ց են եղել:

– Ալաշկերտի Ամատ գյուղից: Պաղա ասում էր Նամատ: Նամատ, «Ն»-ով էր ասում: Ուղղակի ես ինտերնետում [համացանցում] անընդհատ փորփրեցի, Նամատ «Ն»-ով չկար, Ամատ գյուղը, ըստ երևույթին բարբառային էի, Նամատ էր ասում, բարբառով էր ասում Նամատ:

– Իսկ ի՞նչ էին տատնում հավաքների ժամանակ:

– Նավաքների ժամանակ նախ տատնում էին իրանց ընտանիքի մասին: Պաղա նաև հորողոր տղա ուներ, որը Երևանում էր աղյուր, նա ավելի ուշ մահացավ, քան տատը: Ես որ ուսանող էի, տատս [19]83-ին է մահացել, նա մահացել է [19]82-ին: Չէ, ուղղակի ես ուսանող էի,

ԼՍաշիկ Դաշտենցի «Ռանշոդարների կանչը» գիրքը: [19]79 թիվն էր, հա, հլը ես չէի ընդունվել: «Ռանշոդարների կանչը» կարդացել եմ, ես ընդունելության քննություն որ համձնեցի Երևանի Պետական Նամալ-սարանում, ազատ թեման ընկել էր «Լավ է ձեռնել կանգնած, բան աղ-րել ծնկաշոր»: Ես ազատ թեման Նայոց լեզվից գրեցի «Լավ է ձեռնել կանգնած, բան աղրել ծնկաշոր», որտեղ ածորոջ ֆիդայական շար-ժումն էի նկարագրել: Դա 1980 թիվն էր: Որ դուրս եկանք, Դուր, եթե մի քիչ ուշադիր եք քաղաքական իրադարձություններին, մենք դատավոր ունենք Մարտիրոսյան Մնացական, որ մարտիմեկյան դեղքերը ինքն էր քննում, քյավառցի ա, հասակակիցներ ենք, իրար հետ մենք քննու-թյուն էինք տալիս: Ասի սենց բան եմ գրել, ասավ՝ գծվե՞լ ես, ասավ՝ քեզ անմիջադեմ երկուս կնշանակեն, հլը կսկսեն հետադիմացություն, էլ ի՞նչ ես գրել: Դե ասենք, դա նենց բան ա, որ եթե անհրաժեշտություն լինի, հիմի էլ կարելի է բարձրացնել արխիվները Երևանի Պետական Նամալսարանի [19]80 թվի ընդունելության քննության, Իրավաբանա-կան ֆակուլտետի, այնտեղ իմ շարադրությունը կա: Ես մաս խոստա-ցա, ասեցի՝ եթե որևիցե մեկը հինգ ստացավ, ես հինգ չստացա, ես բողոքարկելու եմ: Բայց մեր դատուկը [հոսքը], իրավաբանական քնն-նության, հինգ ստացող չեղավ, ես էլ չորս էի ստացել: Ասի, եթե բողո-քարկեմ, թե ինչի՞ համար եք չորս դրել, կարող ա ինձ մաս ասեն՝ հլը արի տեմանք ես ի՞նչ ես գրել, ինչի՞ մասին ես գրել: Չ՞ որ նման թե-ման, ճիշտ է [19]80-ականներին ոչ թե չէր թույլատրվում, այլ ուղղակի չէր խրախուսվում, որ նման բան անեին: Տեսե՛ք, 1982 թվին Երևանի Պետական Նամալսարանի օդերատիվ շտաբը կոմերիտական ես էի դահում, այսինքն՝ շտաբի ղեկն էի: Ձևավորվել էր որոշակի խումբ ուսանողների, որոնք տարված էին այ էլ հայրենասիրական երգերով, ֆիդայական շարժումով: Իրիկուն էր, դե քննությունների դերիդոն [շրք-ջանն] էր արդեն, տվյալ օրվա աշխատանքը դրծել էր, Իրավաբանա-կան ֆակուլտետի առաջին հարկում մեր շտաբն էր, ընդունելության քննությունների դրուժինայի շտաբն էր, ըստեղ մտած, դե արդեն օրվա վերջ էր, մի կտոր հաց ենք ուտում, բան: Լավ երգող տղերք կային: Պավլիկը, որ գրավեցին, Մասնա ծոերի Պավլիկը, եթե չեմ սխալվում Պավլիկը էն դրուժինայի շտաբից էր, էլի էն ժամանակ սենց բեղերով, որովհետև ինչքան մայում եմ, ասում եմ՝ Պավլիկը իմ դրուժինայի Պավլիկն ա: Երգում էր, իրար հետ մտած էինք, երգում էր, ես մեջքով էի մտած դռանը, դուռը բացվեց, սաղ մտած են, աղջիկներ, տղաներ էլի, շտաբի թևկադներով դրուժինների, որ քննությունների ժամանակ, հիմա չգիտեմ կա դա, թե չէ, էն ժամանակ հերթադահում էին, կարգ էին դահողանում, էլ դրուժինայի էրեխերը մտած էին: Դուռը, որ բացվեց, զգացի, որ ինչ որ մեկը, որ իրենից բան ա ներկայացնում, տենց մարդ մտավ ներս, որովհետև էան կայնան, շուռ եկա: Գոյություն ուներ, հա-մալսարանը ուներ իր կուսակցական կոմիտեն, կուսկոմիտեի բարտու-դարը, առաջին բարտուդարը Ենգիբարյան Ռոբերտ Վաչագանովիչն էր, երկրորդը՝ Մարգարյան Գագիկ Չարգանդիչ: Մարգարյան Գագիկը

մտավ ներս, ասավ՝ ես ի՞նչ ա կատարվում, ես ի՞նչ երգեր եք երգում: Եթե չեմ սխալվում, Գևորգ Չառուչի երգն էր երգում: Նայեց, ասավ՝ Արայիկ, առավոտ կբարձրանաս կուսկոճիտ: Առավոտ բարձրացա, մտա կոճսոճուղի կոճիտե, մտա Նրանուշի մոտ Նակոբյան, նա կոճսոճուղի կոճիտեի առաջին քարտուղարն էր, ասավ՝ սիրուն ջան, էդ ի՞նչ ես արել երեկ: Արդեն տեղյակ եմ, բայց ասի՝ ի՞նչ եմ արել, ասավ՝ էդ ի՞նչ երգեր եք երգել: Դե ասի՝ Նրանուշ Նրանտովնա, ասի՝ տղերքով նստել էինք, իրիկուն էր, գործը ողործել էր, երգրի երգերն էինք երգում, ի՞նչ էր եղել, ասավ՝ սիրուն ջան, ախր, չի կարելի, է, լավ, ոչինչ, ոչինչ, ես արդեն համոզվել եմ Գագիկ Չարզանդիչին, քեզ տույժ-մույժ չեն տա, ու տենց ողործավ:

– Ի՞նչ տույժ էին տալիս:

– Դե ասենք, նկատողություն ենթադրենք:

– Գրավո՞ր:

– Նմարավոր ա, հնարավոր ա: Շատ հնարավոր ա Նրանուշին ասելին՝ էդ մարդին ազատի դրուժինայի շտաբի տետի ղաշտոնից, որովհետև էդ մարդու մոտ ինչ-որ այլ հակումներ կան:

– Այլ հակումները որո՞նք են:

– Այլ հակումներ ասելով նկատի ունեի այնտիպի բաներ, որը, այն ժամանակ գոյություն ուներ կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքս, չի համադատասխանում կոմունիզմ կառուցողի, երիտասարդ կոմունիստի, այսինքն՝ կոմերիտականի բարոյական կոդեքսին չի համադատասխանում: Որովհետև դա կարային դիտեին, եթե դա լիներ [19]30-ական թթ.՝ Ստալինյան ժամանակաշրջանը, դա կարային դիտեին որդես թշնամանք սերմանել հարևան եղբայր թուրք ժողովրդի նկատմամբ, չեմ իմանում ինչ, նման բաներ կարային լինեին:

– Իսկ եթե վերադառնանք Ձեր դադաի դատմությանը, կիիշե՞ք ինչ դատմություններ կային, ո՞նց է սկսել Եղեռնը, կոտորածները, ի՞նչ ճանադարի են անցել, ո՞նց են անցել:

– Դե իր ձայնագրությունն էլ կա, ինքը ասում ա՝ դատերազմը սկսեց, տղամարդիկին տարան, բոլոր տղամարդկանց տարան դատերազմ, մնում են, գյուղում մնում են կանայք, էրեխերը: Ինքը նաև Առաջին աշխարհամարտ, նման բաներ չէ, նա մտածում էր դա ռուս-թուրքական դատերազմ ա, ռուս-թուրքական, և նա ներկայացնում էր, որ փոխաջողություններով էր ընթանում՝ մեկ ռուսներն էին առաջ գալիս, մեկ թուրքերը, իրա մոտ տենց ա տղավորվել: Ստում ա՝ էն ժամանակ, որ ռուսական բանակն էր առաջադադացում ունենում, ասում՝ էն ժամանակ քրդերը կամ փախնում էին, դե տարածքը նաև քրդաբնակ էր: Կամ քրդերը փախնում էին, կամ ովքեր էլ որ մնում էին, բերում դահում էինք մեր տներում քրդերին: Իսկ երբ, ասում, թուրքական բանակն էր առաջ-

խաղացում ունենում, էլ ժամանակ, ասում, քրդերն էին գալիս, մեր հայերն էին փախնում, ուլքեր էլ մնում էին, քրդերը տանում էին իրանց տներում դահում էին:

– Ձեր տաղը բանակում եղե՞լ է:

– Չէ, տաղը էրելսա է եղել էլ ժամանակ, իմ տաղը էրելսա ա եղել, ինքը իրա հիշողությամբ ա ասում, որ թուրքերն էին գալիս, իրանք էին հայերին դահում, որ ռուսներն էին գալիս, տարածքը գրավում, էլ ժամանակ, ասում, մենք էինք քրդերին բերում դահում, որ ռուսները բան չանեին կամ հայ կամավորական խմբերը, բաները քրդերին բան չասեին: Իրա մոտ մաև նույնիսկ սենց մի դրվագ կար, լատմություն մեջ, որտեղ ասում էր, որ փախնում են արդեն, գաղթում են, գաղթի ժամանակ, գալիս են ճանապարհին ինչ որ, ասում, դեզերի դես բաներ տեսանք, ասում, մոտեցանք, գիշեր էր, ասում, մեզ թվաց դեզեր ա, մոտենում տենում են աթարից ամրոցներ ա շարած: Այ էլ ամրոցների մոտ, դե քրդերն իրանք անասնադահ ժողովուրդ են, իրանց օրա տեղերը, այսինքն յայլաները, որտեղ որ իրանք ամառները մնում էին, էլ մասում մաև գոյացած գոմադրից իրանք ամրոցներ էին շարում, որը հետագայում՝ ձմեռվա ընթացքում տեղափոխում էին, տանում էին գյուղ, որտեղ որ աղորում էին, ընդեղ: Գալիս տեսնում են ընդեղ դահակ էլ կա, էլ բաների մոտ, ասում՝ դահակը իրացանով էր: Նրացանը բաշեց վրենբա, թե ով ա՞ր գալիս, քրդերեն հարցնում ա: Բան են անում, թե գաղթական ենք էլի, փախնում ենք ռուսի երկիրը, մեզ մի՞ սոլանեք, ինչ կլինի: Դե կին արմատներ են լինում, մեկ էլ էրելսեք են: Ասում՝ ո՞ր գյուղից եք: Ասում են՝ Ամատից ենք, ասում՝ դե որ Ամատից եք, իլը մոտիկ եկեք տենամ ուլքեր կան մեջներդ, ասում՝ ես Ամատում ծանոթներ ունեմ: Որ մոտեցանք, ասում, հենց տեսավ ասավ՝ Ռուբեն, էս դու՞ ես: Ասում՝ մեր տան բուրդն էր, ասում, որ մեր տանը հուտաղ էր: Ասեց՝ Ռուբեն դու՞ էլ էս ստեղ, ասում՝ ասեցի՝ հա՛, ասեց՝ արի՛, բան չեմ անի ձեզ, ոչ մեկիդ չեմ վնասի, ասում՝ կրակ վառեց, մատեցրեց էլ կրակի շուրջը, ու ասում էլ մոմենտին [դահին] տեսավ մեր հարևան, ասում՝ ինձանից մեծ ջահել տղա էր, որ իլը բանակի տարիքի չի եղել, բանակ տարած չեն եղել, ասում՝ դրան տեսավ, անունը Արմենակ էր, ասավ՝ Արմենակ, դու՞ էլ էս ստեղ, ասում՝ ասեց՝ հա՛: Պատա տալիս էր մաև էլ քրդի անունը, ուղղակի էս չեմ հիշում, ասում ա՝ ասեց՝ մատե՛ք կրակի շուրջ, ասում՝ ինքը մատել էր էլ Արմենակի դեմ դիմաց, ու ասում՝ հրացանը ձեռն էր, ու ասում՝ էլ կրակի շուրջ մատած էինք, ասում՝ միանգամից հրացանով կրակեց Արմենակի վրեն: Մղանեց Արմենակին, ու ասում՝ մնացածիս ասեց, մենք դժացինք, էրելսա ենք, կանայք սկսեցին լացուկոծ, ասավ՝ չէ, ասավ, սա նրա համար, որ ասում՝ էն ժամանակ Արմենակը կազմակերպել էր, ուզում էին ինձ սոլանեին, ասում՝ ձեզ ձեռ չեմ տա նրա համար, որ Ռուբենը փոքր էրելսա էր, դառնել էր իմ վրեն, լաց էր լինում, ասում էր՝ մեր քրդին մի սոլանեք, անունը տալիս էր, ասում՝ շտանե՛ք, մեր քրդին շտանեք, ասում ա՝ Ռուբենը, որ

Աշխենին եմ կանչում: Ճիշտ և էլ յերիողին [ղահին] ասել էր՝ ես քույր չունեմ, բայց հետո անընդհատ բան էր անում էլի բրոջը: Մոր անունը Մարգարիտ և եղել, հոր անունը Նակոբ և եղել, ավտոր անունը չեմ հիշում, հորեղբոր կնոջ անունը Ալմաստ, որովհետև գաղթի ճանաղարհին անընդհատ Ալմաստն և իրանց տերություն արել: Գաղթի ճանաղարհին մահանում և ղաղուս մերը, ղաղուս մերն ու տատը մահանում են:

[...]

– Մինչև վերջերս, հա՞: Որ ողջ էր, խոսու՞մ էր հետ վերադառնալու մասին:

– Անդայման: Ասում էր՝ լաո՛, մեր էրգրի դռները որ բացվալ, կեթանք մեր էրգիր, ես քեզի կտանեմ ցույց կտամ մեր էրգիրը ինչքան լալ էրգիր էր, աղեկ էրգիր էր, անուշ էրգիր էր մեր էրգիրը:

– Նայաստանն ընկալու՞մ էր որդես հայրենիք:

– Չեմ իմանում, չեմ կարող ղատասխանել ընկալում էր, թե չէ: Ինքը Երկրորդ աշխարհամարտին գնացել մասնակցել էր, հաշմանդամ էր դարձել, հետ էր եկել էլ ղատերագմից: Ուզեր-չուզեր ղտի ընկալեր, ես չգիտեմ, դա որդես հայրենիք, թե դա որդես ղետություն որտեղ ատրում և էլ էր ընկալում: Նրա ամբողջ բանը էրգիրն էր: Ես էլ ժառանգորեն, ինձ և ըստ երևույթին անցել, որովհետև ես էլ կարող և քնեմ գիշերը երագիս տենամ էրգրում եմ: Ուրեմն գնացել ենք սար, ըստ երկվույթին, [19]74-75 թվերն և, էլ ժամանակ ես 12-13 տարեկան երեխա էի, հորողբերս և իրա ընտանիքով, ես եմ, մերս և, երկու քույրերս են, հերս գործի էր, ղատս էր: Պատուս հետ երկու ավտոր ընտանիքներով սար ենք գնացել: Դե ինչ որ տեղ հորողբերս նախատեսել էր, որ ղտի մի տեղ նստենք հաց ուտենք: Ավտոն կանգնացրինք, իջանք, կանայք սեղան են փռում, մենք էլ երեխա ենք, խաղում ենք, մեկ էլ տենանք ղատը գնաց: Դեղի արևմուտք գնում, չնզլներ և, չնզլները ժայռաբեկորներ են, էթում դեղի էլ յան: Նորողբերս ասավ՝ ղատին էն ուր ա՞ էթում, էրեխե՛ք, գացե՛ք բռնեք, հետ դարձրեք: Գացել ենք ասում ենք՝ ղատի ու՞ր ես էթում, գա՛ն ջան, ասում, էրգիր եմ էթում: Պատի՛, ասում եմ, ինչ էրգիր: Նիմա, որ ասենք էրգիր փոքր սերունդ կարող և հասկանա, որ էրգիր ասելով մենք նկատի ունենք էն, ինչը Արաքսից էն կողմ և, էրգիրը, էրգիրը էն և, սա հայրենիք և, բայց էնի էրգիր և: Էնի մեր էրգիրն և: Պատի՛, ի՞նչ էրգիր, գա՛ն ջան, ասում, էս սարերը որ անցնում ենք, ընդեղ դուրան և, դուրան դա Արարատյան դաշտավայրն և, դուրանով, ասում էր, գետն և հոսում, գետը անցնում ես մեր էրգիրն և, էթամ մեր էրգիրը: Դե ես էլ հեկել եմ ասում եմ՝ ղատին գնում և էրգիր, հորողբերս էլ լսմող մարդ էր, բերեց, նստեցրեց, արի՛ ղատի, հեսա լսմենք, իրար հետ կգնանք էրգիրը: Իսկ հերս, ասենք ես փոքր էի, էթում էի նըստում էի, ասում էի՝ ղատի՛, մի քիչ ղատմի էլի: Ես, իրանց հարևան տղա էլ կար, հիմի օդորմածիկ և, ջահել տղանին էլ տղուն, էթում նըս-

տում էինք իրիկուն թախտի վրեն: Դեմ առ դեմ թախտ էր դրած, ու էլ իրանց հարևանի էրեխեն, հասակակիցներ էինք, նստում էինք թախտի վրեն, հենվում էինք իրար, դադա նստում էր էն մի թախտին, դատմում էր: Ու մենք էլ լսում էինք էլ դատմությունները իրանց էրգրի մասին: Զնում էինք քտենց: Ներս որ գալիս էր տենում էր իրիկուն նստել ենք, դադա ինչ-որ բաներ ա դատմում, ասում էր՝ հե՛լ, էթում ենք տուն, ինձ ասում էր՝ հե՛լ, էթում ենք տուն, ուշ ա, էթում ենք տուն: Մեր տները իրարից երևի 300-400 մետր ա հեռու, էթում էինք, ճամփեն ասում էր՝ մեղք ա, էղբան մի՛ խոսեցրեք, մի՛ հիշեցրեք, որովհետև, ասում էր՝ վրեն ազդում ա էլի, մեղք ա: Ասում էր, լավ, որ սաղով հավաքվում ենք իրան հարցնում ենք ինքը դատմում ա, դա այլ բան ա, բայց ասում էր՝ ամեն օր նստեցնում եք, ասում եք՝ դադա՛ ի՞նչ դատմա, ի՞նչ դատմա ձեր էրգիրը ինչ կար, ձեր էրգիրը ոնց էր, ասում էր՝ մեղք ա, վրեն ազդում ա:

– Իսկ չէ՞ր լինում, որ հենց ինքը ասեր՝ եկեք դատմեն:

– Չէ՛, չէ՛: Օրինակ, իմ մերը ասել ա, որ դադա քրդերեն հոյակապ էրգում էր: Ես չեմ լսել երբեք: Ես ոնց ինձ գիտակցել եմ, երբեք բան չեմ արել, որ դադա էրգի: Ես ինքս բաղաձայն եմ, ես հայրենասիրական բոլոր երգերը գիտեմ, բառերը կարամ ասեմ, նույնիսկ, որ ինչ-որ մեկը սխալվում ա, ես նեղվում եմ, նեղվայնանում եմ, ասում եմ՝ չեղավ, չես կարում երգես, տենց չի, բայց ես ինքս չեմ կարում երգեմ: Բայց մերս ասում էր՝ դադա՛ հոյակապ քրդերեն էր երգում: Իմ դադը երբեք չի օգտագործել [ձեռքով լսմելն է ցույց տալիս - ՇԳ], լավագույն դեղքում կարող ա մի բաժակ լսմեր, բայց մերս ասում՝ քո ծնունդներին, այսինքն՝ իմ ծնունդներին, որ տենց հավաքվում էինք, էն մյուս՝ մորական կողմի դադադուս ախտերը, ասում՝ դադա՛դու՛ միշտ ասում էր՝ Ռուբեն, մի հատ երգա՛ քրդերեն, մի հատ երգա՛: Ասում՝ դադա՛ շատ հոյակապ էրգում էր: Դադա խոսում էր մաև քրդերեն, ինքը իրա դատմությունների մեջ մեկ էլ տենայիր քրդերեն բառեր կօգտագործեր, կասեր՝ բուրդ ընձի սենց ասավ, ես էլ սենց ասեցի: Ասում էի՝ դադա՛, էլ ի՞նչ էր նշանակում, բուրդը որ քեզ սենց ասեց, դու սենց դատասխանեցիր: Ասում, եկել հասել եմ Կարս: Ընդեղ ա մնացել ահագին ժամանակ: Փորձել ա հետ փախնի, էթա էրգիր: Դե մերը չկար, տատը չկար, ախտորը կորցրել էր, բրոջը կորցրել էր գաղթի ճամփին:

– Ինքը մենա՞կ է մնացել:

– Ասում՝ մնացել էի Ալմաստի խնամքին. Ալմաստ հորողոր կնիկն էր:

– Իսկ Ալմաստի ընտանիքից ո՞վ էր մնացել:

– Չեմ իմանում, որովհետև դադա Ալմաստի մասին լավ չէր արտահայտվում էն առումով, որ իրան լավ չի մայել էի: Չնայած ասում էր Կարսում չեմ իմանում ում տանը Ալմաստի հետ էին մնում, Ալմաստը լվացք էր անում, ես էթում էի մուրացկանություն էի անում, որ կարայինք գլուխներս դահեխներ, Ալմաստի հետ, ինքն ու Ալմաստը: Ըստ երևույ-

թին Ալմաստի էրեխեքին կորցրել գաղթի ճամփին, ինչ: Դե եթե ես ես գիտակցությունն ունենայի, էն ժամանակ տենց ամեն ինչով կհետաքրքրվի: Ուղղակի ինքը ինչ դատմում, մանավանդ, որ ամեն անգամ հերս ասում էր էդքան մի խորացի, մեղք ա, տանջվում ա, ես էլ տենց:

– Նետո Կարսից ու՞ր են գնացել:

– Կարսից եկել են Ալեքսանդրապոլ, ընդեղից եկել են Էջմիածին, Էջմիածնից իրան բերել են Քյավառ, Քյավառի երևի մանկատուն, ըսեղ արդեն չափահաս ա դարձել, հելել սրա-նրա տանը սկսել մշակություն անել:

– Գյումրիի որբանոցում էլ Լ՞ եղել:

– Չէ՛, ըստ երևույթին, ըստ երևույթին տարել են որբանոց, տեղ չի եղել, որոշ մասի ուղարկել են ստեղ, թե չէ էլ էրեխեն ո՞նց էր հայտնվում Քյավառում, գալիս էր Քյավառ ի՞նչ աներ: Իրան հորեղբոր աղջիկ ուներ, որ Երևանում Այգեստանում էր մնում, հորեղբոր տղեն:

– Ուրիշ հորեղբայր է հա՞, Ալմաստի ամուսինը չէ:

– Նորեղբայրները շատ-շատ են եղել, բայց կոնկրետ քանի հաստ ես չեմ կարա ասի:

– Իսկ գաղթի ճանադարհից էլ ի՞նչ դրվագներ եք հիշում, որ դատմում էր:

– Գաղթի ճանադարհից, ամենահետաքրքիրն էն ա, որ քրդական որևէ բնակավայր եթե մտել են, հետաքրքիրն էն ա, ասում են էսի Ղակոբի տղա Ռուբենն ա, ըստ երևույթին Ղակոբը տեղը-տեղին մարդ ա եղել, որ ճանաչել են: Ասում՝ եկանք բնակավայր, ինքը անուն էլ չէր տալիս, ասում, եկանք մի տեղ, քրդական բնակավայր ա եղել, ասում՝ հարցրին որտեղից եք, ասեցին, որ Ամատից ենք, ասում գնացին իրանց խանումի, ըստ երևույթին իրանց քրդական աշիրեթադետի կին ա եղել, ինչ: Խանումը ճամփել էր իրա դուլադներին, ասել էր՝ գնացեք տեսեք ովքեր են, որտեղից են եկել գաղթականները: Ասում՝ որ ասեցինք Ամատից ենք, խանումը ասավ՝ հլը հարցրեք տեսեք Ղակոբի ընտանիքից ով կա: Ասում՝ էս կնանիք ասեցին՝ Ղակոբի տղեն ա ստեղ, ասում՝ ասել էր՝ բերեք: Ասում՝ ես էլ էրեխա եմ, մտածում եմ ինձի տանում են մորթեն: Ասում՝ դժում էի, լաց էի ըլնում, ասում՝ կոդել էի էլ կնանիքի փեշերին, ասում՝ ինձի գոռով դոկեցին տարան, ասին խանումը կանչում ա: Ասում՝ հանեցին տուն, իրա ասելով՝ հանեցին վերև, թե բարձրահարկ տուն ա եղել, թե ինչ, ասում՝ Խազար խանում էր ասում ինքը, հիմի չեմ իմանում, անունն էր, ինչն էր, ասում՝ Խազար խանումը ասավ՝ լողացրեք Ղակոբի տղին: Ասում՝ ինձի լողացրին, թագա շորեր հագցրին, բերեցին, Խազար խանումը ասավ՝ դու չվախենաս, դու մեր քիովեն ես, քիովի էրեխեն ես, քեզի ոչ մեկը բան չասա, բայց ասում՝ իրիկուն մեկը եկավ: Ու դատյա նենց նկարագրում էր՝ սիրուն, ասում, տղամարդ էր, եկավ, ասավ՝ էս ո՞վ ա էս լամուկը: Ասավ՝ Ղակոբի տղեն

ա, ասում՝ ասավ՝ Նակոբի տղա, բան-ման չեմ իմանում, ու՛րդ արա, թող էթա: Ու ասում՝ ինձի հանեցին ճամփին էղ գաղթականների մեջ:

– Գնացել միացել է իր ընտանիքի անդամների⁶ն:

– Նա, ասում էր, դե եկել են գաղթականները, որդեսգի գոնե շունչ առնեն, հանգստանան: Ըստ երևույթին, ես մտածում եմ իրար հետ կաղ են ունեցել մաս քրդերն ու հայերը: Ճիշտ ա, քրդերն շատ-շատ օգտվեցին հայերի վատ վիճակից, բայց մաս մարդկային բաներ էլի լախել են մեջները: Ասենք, որ եկել են տեսել են, շփումներ մինչև լախերազմ, որ եղել ա բնակավայրերի միջև, ըստ երևույթին մաս խղճահարություն ա մտներն առաջացել, թե ինչ, տեսել են էղ վիճակում են, տարել են լախել են:

– Ես ոնց հասկանում եմ Ձեր լախը մոտավոր 13-15 տարեկան է եղել, հա⁷:

– Երևի: Երևի էղ սահմաններում:

– Որովհետև ասեցիք, որ [19]75 թվին լախը է որ 75 տարեկան էլ լիներ:

– Որովհետև իրա կոնկրետ ծննդյան թիվը մենք չենք իմանում:

– Իսկ ինքը իր աչքերով որևէ աղանության դրվագ, որևէ տանջելու դրվագ, որ թուրքերը կամ քրդերը հարձակվեն քարավանի վրա, մեան բաներ տեսե՞լ է, լախում⁸ էր:

– Չէ, ինքը լախում էր [մայնը իջեցնում է - ՆԳ] ոնց է մի հատ քրդի էրխու գցել թոնիրը:

– Ե՞րբ:

– Նը աղասի՛, աղասի՛ [վերհիշելով - ՆԳ], մա մաս լախում էր, ուրեմն ասում էր՝ եկանք մի հատ գյուղ, Անդրանիկը գրավել էր գյուղը, ասում՝ Անդրանիկը գրավել էր գյուղը, ասում՝ սենց գյուղի միջով ձոր էր էթում, ձորի էս մի լանջին հայկական թաղամասն էր, էն մի լանջին քրդական տներն էին: Ասում՝ այ էղ բուրդ բնակչությանը տվեց սրի բաշել: Ու ասենք, լախ, ես գիտեմ, որ թուրքերեն, քրդերեն դա հայհոյանք է, ասում՝ Անդրանիկ թուրք բաշեց, ու տենց հայհոյելով, ասում, ասավ՝ կոտորե՛ք: Ասում՝ մենք Անդրանիկի գորքի հետևից, եկանք, ասում, տեսանք քրդերը հայերին, գյուղի հայերին աղանել են, մորթել են, ասում: Անդրանիկը, որ տեսավ, ասում, կատաղեց, ասում, թուրք հանեց, ու ... [սահասականալի բառեր է ասում մեանեցնելով թուրքական կամ քրդական հայհոյանքի - ՆԳ] տենց քրՖեց ու ասավ՝ կոտորե՛ք, բուրդ բնակչությանը, կոտորե՛ք: Ու ասում՝ իրանք կոտորել էին հայերին լցրել էին էղ ձորը, ասում, մա էլ քրդերին կոտորեց լցրեց, իրա ջոկատով, ասում, դրանց կոտորեց լցրեց:

– Ինքը տեսե՞լ է անձամբ Անդրանիկին:

– Նա՛, ու ասում էր, եկանք քրդական բնակավայր, գիտե՞ք ոնց, ինքն էլ

նենց կտրոն-կցոնով էր դատմում, ասում էր՝ քրդերը փախել էին, ասում, սենց էր, բանի որ հայկական գյուղ էր, քրդերն եկել տեր էին կանգնել, հետո ռուսական զորքը, թե հայ կամավորները, վերջը, մերոնք, որ մտնում են էս գյուղը, քրդերը փախան, ասում՝ տեղավորվել էին հայերի տան մեջ: Ասում՝ դռները բացինք, որ մտնենք տները տաքանանք, ասում՝ թոնիրը վառն էր, մի հատ էրելսա, սիրուն էրելսա էր թոնրի շուրթին մատած, ասում, աղանձ էր ուտում: Ասում, որ հարց տվեցի՝ թե ումոնցի՞ց ես, ո՞վ ես, ասում՝ էսի քրդերեն դատասխանեց, ասում՝ մերս, որ մեռել էր, տատս մեռել էր, նորածին ավաղորս, ասում, տղանեցին, դրեցին դիակների հետ թաղեցին, ասում, էդ ջղայնությունից, ասում, էդ էրելսուն բրթեցի գցեցի թոնիրը, ասում, թոնրի խուփը բաշեցի վրեն ու փախա: Բայց ամբողջ կյանքում, ամբողջ կյանքում ասում էր՝ էն անմեղ էրելսուն ես ո՞նց գցեցի թոնիրը:

Ասում, մի հետաքրքիր բան դատմեմ: Ուրեմն, դադս, ես էրելսա էի, իրանց հայաթն էինք, ինքը գառներ էր դաժում, ոչխար էր դաժում: Էրգրից եկած սովորություն էր, ամբողջ կյանքում ինքը անասնադաժություն չաճք աս գրադվել: Մեծ հայաթ ուներ ստեղ՝ Քյավառում, նաև ոչխար էր դաժում, ինքը գցում էր դեմը տանում էր դաշտերը, հետո էլ հետ էր դարձնում: Ուրեմն, որ ինքը ինձ միշտ ասում էր գառ ջան, ես մտածում էի, դե էրելսա էի, մտածում էի դադը Էնքան գառ ա դաժել, որ ինձ էլ ա ասում՝ գառ ջան: Ուրեմն, հայաթում մատած, իրանց հայաթում սանդ կար, սանդը գիտե՞ս ինչ ա, բար ա մեծ, որի մեջ փոս կա, ըտեղ ձավար, բան լցնում են, ծեծում են: Մտած էր սանդի բարի վրեն, հացի փշուրները լցրել էր ձեռի մեջ գառներին իրա կերակրում էր: Ուրեմն, ամենահետաքրքիրն էն էր, ծիտը, սովորական ծիտը՝ ճնճուկը, եկավ մատավ ձեռի մեջ, կտցում ա: Մերս ասավ՝ Աստված ջան, սենց բան ես չէի տեսել, ասավ՝ հլը տեսեք ինչքան արդար մարդ ա, ինչքան մաքուր մարդ ա, որ ծիտը, ծիտը մատել ձեռի մեջ, փշուր ա ուտում: Ու ես էլ վազելով ասում եմ՝ դարդ, բռնա՛ տուր ընձի: Գառ ջան, ասում է՝ էդ էլ Աստծու ստեղծած էակ ա, ասում, մի՛ վախցրա, մի՛ թոցրա, մի՛ սղանա: Ստեղք, որ ես որդ, բան էի տեսնում, փետով ուզում էի բան անելի, ասում էր՝ գառ ջան, դրան էլ ա Աստված ստեղծել, մի՛ սղանի: Այ տենց մարդ էր: Ու դրանք գումարած, որ ինքը էդ էրելսուն տենց բրդել գցել էր թոնիրը, թե էդ ի՞նչն էր, իրա արքունները ի՞նչ արդարներ էին, ու տենց սաղ կյանքը ասում էր, ասում էր՝ ես էն բրդի էրելսուն ո՞նց գցեցի թոնիրը, ո՞նց գցեցի թոնիրը [ձայնը իջեցնում է - ՎԳ]:

– Ուրիշ այդպիսի դրվագներ հիշու՞մ եք, որ ինքը շատ տղավորված լիներ ու տղատեր: Չմեռ է եղել, ցրտի մասին: Կարողացե՞լ են հագուստ գտնել, թե՞ չէ, բանի՞ ամիս են քայլել այդ ճանապարհով:

– Չեմ հիշում, տե՛ս, ես երկար ժամանակ իրա դատմածները բան չեմ արել, [20]15 թիվն էր՝ հարյուրամյակը, դրեցի կեսը լսեցի, չեմ կարում, միացնում եմ վրես ազդում ա, նետվայնանում եմ, կարող ա հանկարծ

էղ նեռվայնությունը փոխանցվի, ասենք Դուք էլ հարց տար, սկսեմ նեռվայնանալ, դրա համար ես խոսափում եմ:

– Այսինքն՝ այն, ինչ հիմա ղայտմում եք, ավելի շատ հիշում եք Ձեր մանկության շրջանից, հա՞:

– Նա՛, հա՛: Էդ եմ հիշում, իրա [ձայնագրությունը] մի 15 բողոք լսում եմ, դրանից հետո չեմ կարում արդեն:

– Իսկ որ լսեցիք առաջին անգամ, ի՞նչ զգացողություններ ունեցար:

– Դա ոչ թե միանգամից է ինձ մատուցվել, աստիճանաբար է ձևավորվել:

– Աստիճանաբար ի՞նչ է ձևավորվել:

– Օրինակ, տեսե՛ք, ես կամ առաջին դասարան էի կամ մանկադարսեղի երեխա էի, մեր հարևանի երեխեքը, գնացել էին ճամբար, ուղիներական ճամբար: Ճամբարից եկան, սովորել էին խարույկ վառել, հայաթում խարույկ վառեցին, իրիկուն ա, ու խարույկի մոտ կանգնած երգում են: Ու ամենահետաքրքիրն էն ա երգում են՝ «բաժակները լըցրե՛ք, խմենք կենացն Նաիրիի, Անդրանիկի, Սերոբ փաշի, Նայկ Բժըշկյանի»: Անդրանիկ լսել եմ, էն ամենավաղ հիշողություններ որ կան, ըստ երևույթին մեր ժամանակվա բոլոր երեխեքի մոտ էլ կար, Անդրանիկը, քաջ Անդրանիկը: Քաջ Անդրանիկը որդես զինվոր, որդես ազգի զինվոր, ոչ թե այ էս գիտակցությամբ ազգի զինվոր, այլ որդես զինվոր, գորավոր մարդ, մենք էլ ենք երեխա որդես իմացել: Ես Սերոբ փաշա չեմ իմացել ինչ ա, բայց ընենց զարհուրելի տղավորություն թողեց էդ երգը վրես: Ես զգում էի, որ էդ երգը խիստ ներաշխարհիդ վրեն ազդում ա: Սերոբ փաշա, ես գաղափար չունեի, դրանից երևի երեք տարի հետո, Նորադուզ գյուղում, ես ձմեռային արձակուրդները, ընդեղ հորս ընկեր կար, իրա երեխեքն էլ իմ հասակակից էին: Մրանց երեխեքից մեկը, որ ինձանից երևի 7-8 տարով մեծ էր, ահագին տղա էր էն ժամանակ, սա երգում էր էլի Սերոբ փաշի մասին երգ՝ ելի՛ր, ելի՛ր, Սերոբ՝ ջան, վե՛ր կաց կանգնիր, փաշա՛ ջան: Ու զգում եմ, որ քանդվում ա ներսս: Բայց Սերոբն ո՞վ ա, Սերոբի մասին գաղափար չունեմ, չեմ իմանում Սերոբն ով ա: Սերոբ փաշա, ինձ ու ինձ հետո վերլուծում եմ՝ փաշա, հայի անուն ա, փաշա նշանակում ա սա կաղ ա ունեցել, դե էն ժամանակ էրգիր ասում եմ հասկացողություն իմ մոտ չկար, սա կաղ ա ունեցել ուրեմն Արևմտյան Նայաստանի հետ, դրա համար: Ես վերլուծում էի, թե ինչի դուրս է երգերը սենց քաշեն: Ու մեկ էլ անցել են տարիներ «Երբ գալիս է սեղտեմբերը» կինոն եմ նայում, Արմեն Զիգարխանյանը երգում ա՝ հայ ֆիդայիներ՝, ջան ֆիդայիներ: Ու զգում եմ, որ էլ էլ ա վրես ազդում: Դա ըստ երևույթին գեներտիկորեն, չեմ իմանում: Մեր մեծերից մեկին ասում են՝ դու ո՛չ ջարդ ես տեսել, ո՛չ Եղեռն ես տեսել, Էդքան ո՞նց ես կարում գրես Եղեռնի, ջարդերի մասին, ասում՝ որովհետև հորս երակների արյունն էի: Ըստ երևույթին ես էլ տարտուս երակների արյունն եմ ըլել, էդ ամեն ինչը վրես ազդում են: Թոռներից մեկն էլ երևի իմ վրեն ա

ազդել: Որ ասում եմ «Էրզիր», հորոդոբոս տղերքը հա, ասում եմ՝ գնանք
դադարու ոսկիները բերենք, արա՛, ասում եմ, ոսկիները չի էականը, հա,
որ հասնենք ընդեղ էլ էլ կբերենք, բայց ասում եմ Էրզիրը է՛: Մեր նոտա-
րը ասում՝ արի գնանք Էրզիր, ամեն տարի ասում, ասում եմ՝ ես քո հետ
կգամ մինչև Անիի ավերակներ, կնստեն Անիի ավերակներում քո հետ
մի հիսուն գրամ կլսմեն, լաց կլինեն, մոմերը կվառեն, էլ չեմ կարա ճամ-
փես շարունակեմ: Ասում եմ՝ գալիս եմ ի՞նչ անեմ: Չէ՛, ասում եմ, սղա-
սի, համբերա, երբ դատրաստ կլինեն, կեթանք, բայց քանի էթում, ավելի
փուխը եմ դառնում: Ինձ թվում ա, ես չեմ կարա էլ Էրզիր տենա: Ես կա-
րամ քնեն գիշերը երագիս տենամ, որ ես Էրզրում եմ, մանավանդ ուսա-
նող ժամանակ, քնում էի, ու ինձ թվում էր թռնում եմ: Նոդված կար, էն
ժամանակ թերթերում գրեցին, խորհրդավոր, թե ինչքանով էր իրակա-
նությանը համադաստասխանում ինչքան՝ չէ: Ռուսաստանում բիճա
մարդ ա, որ դայծառատես ա, սա, էլ գրվածքում ասում ա՝ ես երբ քնում
եմ, երբ ցանկանում եմ ավելի ճիշտ, ոչ թե երբ քնում եմ, երբ ցանկա-
նում եմ ես կարում եմ տեղափոխվեմ Էրզիր, էթամ Էրզիրը, որտեղ մերս
հաց էր թխում, էթամ էլի հանդիդեմ մորս: Ուրեմն դա էնքան էր սղա-
վորվել, որ քնում էի ու ինձ թվում էր թռնում եմ, էթում եմ Էրզիր: Ասենք,
Արաքսի վրայով անցնում եմ սավառնելով: Նենց հետաքրքիր զգացո-
ղություն ա էլ թոնելը, որ նենց ազատությունը լրիվ զգում ես, ու էլ թոնե-
լը, ու ասենք Արաքսի վրայով անցնում էի: Ու էթում էի ընդեղ շշկում էի,
ասում եմ՝ ես մեր տան տեղն էլ չեմ իմանում, չգիտեմ ստեղ որտեղ իջ-
նեմ, ինչ անեմ, նմանատիպ բաներ:

– Իսկ Դուք ձեր երեխաներին դատմե՞՞ր եք այդ դատմությունները:

– Նա, օրինակ, տղուս համար միևնույնն ա: Տղուս համար միևնույնն
ա, նա ըստ երևույթին մորական կողմին ա բաշել, նրանք էլ աղորում-
ները չեն ունենում:

– Տեղացի՞ եմ:

– Տեղացի եմ, բայց ես տեղացիներն էլ չէ. որ գաղթել եմ, 150 տարի
առաջ էլ նրանք են գաղթել եկել:

– Ձեր տատը չէ՞ր դատմում՝ որ գաղթել եկել եմ, այստեղ արդեն հաս-
տատված բնակիչներն իրենց ո՞նց են վերաբերել:

– Չէ՛, ուրեմն տե՛ս, միակ վատ բանը էն ա եղել, որ «գաղթական» մակ-
դիրն են կոցրել: Թե չէ վերաբերել են շատ լավ: Պատյս չի դժգոհել, եր-
բեք չի ասել մեզ վատ են [վերաբերվել]: Ուղղակի «գաղթական»
մակդիր են կոցրել: Ու որ ինձ ասում էին գաղթական Ռուբիկի թոռն ա,
ես նենց վատ էի զգում, որ Էրեխա էի, նենց վատ էի զգում: Իսկ հիմի
հոլարտորեն ասում եմ «ես գաղթական եմ», ավելի լավ՝ էն Էրզրացի
եմ, քան դուք: Դուք 200 տարվա գաղթական եք, դուք արդեն մոռացել
եք էն երկիրը, ես չեմ մոռացել, էնի իմն ա: Նույնիսկ որ ստեղ սարե-
րում, ես սեփականաշնորհման հանձնաժողովում էի հողերը բաժանում

էինք ժողովրդին, ասում էին՝ լավ, դու ինչի՞ ես հելե սարերը, ասում էի՝ որակատիկա եմ անցում, սովորում եմ, որ դոյի էրգրում հողերը բաժանեմ հողերի տերերին, որակատիկա եմ անցնում ստեղ: Դա ըստ երևույթին նաև «Ռանչոյարների կանչ»-ից հետո դա ավելի նստվածք տվեց:

Նարոությունյան Բարկենը Նայ ժողովրդի տատնություն էր կարդում ինձ, ուրեմն Ստեփան Կուրտիկյանին գիրք ուներ՝ «Հիշողություններ գորավար Անդրանիկի մասին», էլ գիրքը ընկել և ձեռս, դասի ժամին սենց դասիկ եմ, կարդում եմ, Նարոությունյան Բարկենն էլ լեկցիա է կարդում: Եկավ կանգնավ գլխիս վերևը ասավ՝ կանգնի՞, կանգնեցի, ասավ՝ տո՛ւր ստեղ, գիրքը տվեցի, վերցրեց նայեց, ասավ՝ դո՛ւրս արի լսարանից, գիրքը վերցրեց, սենց ծալեց, վերնագիրը տեսավ, ասավ՝ հե՛ն դարձի, նըստի՛, բայց դասամիջոցին կմոտենաս ինձ: Չանգը տվեց, դասամիջոցին մոտեցա, ասավ՝ շատ լավ ես անում, որ էս գիրքը կարդում ես, բայց, ասեց, ինձ թվում և իմ դասախոսությունը ավելի վատ չի, բան էլ գիրքը: Նախ դասախոսությունս լսի, վերջիվերջո ես Նայ ժողովրդի տատնություն եմ կարդում, սա սովորի, դրան զուգահեռ դա էլ կարդա: Ես ուսանող եղած ժամանակ ըստ երևույթին ամենախորությամբ Նայ ժողովրդի տատնությունը սովորեցի, դրանից հետո շատերը մտածում էին՝ ես մասնագիտությամբ դաստնաբան եմ, բայց չէ: Ասենք, եկել եմ դոկտորում կանչել են դաստնություն եմ դարադեյ, են ժամանակ ՍՄՄՄ դաստնություն էր, բայց ես և՛ ՍՄՄՄ, և՛ Նայ ժողովրդի տատնություն էի դարադում: Օդորմած Մայլասայան Նովիկը երաժշտական ուսումնարանում, ասեցի բեր լրիվ Նայ ժողովրդի տատնություն էրեխեքին դարադեյ, ասավ՝ դարադեյ: Ու դա ինձ բավարար էր, ես սկսեցի էրեխեքին, առաջինը կանգնեցնում էի էրեխուն, ասում էի՝ դոյի Նայոց 15 աշխարհի անունները ասես:

– Որ թվերի՞ն:

– Դա [19]90 թիվն էր: [19]89-90 էլ թվերին եմ ես ուսումնարանում դաս տվել:

– Բայց անցնում էին չէ՞ արդեն Նայ ժողովրդի տատնություն:

– Սովետական Միությունը դեռ կար, անցնում էին նաև ՍՄՄՄ դաստնություն, անցնում էին ՍՄՄՄ դաստնություն, Նայ ժողովրդի տատնություն, ես տնօրենի հետ դայմանավորվեցի, ասի՝ գրեմ ՍՄՄՄ դաստնություն, բայց Նայ ժողովրդի տատնություն դարադեյ էրեխեքի հետ, ասեց՝ հա:

– Իսկ մինչև հիմա ասու՞մ եմ ձեզ գաղթական:

– Հիմի որ ասեն գաղթական, էդքան, մեծերից, իմ դատի թայ մարդկանցից կամ իմ հոր հասակի մարդկանցից եթե հանդիպում աս, ինձ հարցնում են ով ես, ես ասում եմ, որ գաղթական Ռուբիկի թոռն եմ:

– Իսկ տեղի բնակչությունը, որ ավելի վաղ է բնակություն հաստատել,

[19]15 թվից հետո գաղթածներին չի՞ ասում գաղթական:

– Դե մեծ սերունդը ղտի մնար, որ ասեր գաղթական, ջահել սերունդը չի ասում:

– Նիմա, որ Դուք ինձ այս դրվագները ղատմում եք, որ հիշում եք Ձեր ղատի ղատմածները, Դուք մման հավաքներ անու՞մ եք, Ձեր երեխաներին ղատմու՞մ եք: Տղային, ասացիք, հետաքրքիր չէ:

– Տղայիս ոնց որ հիմիկվա բոլոր, տղես դեռ դղորոցահասակ է, նրանց հետաքրքրում ա այՖոնը, ոլլանշետը, չեմ իմանում ինչը: Որ Եղեռնի օրերին ցույց են տալիս «Նահաղետը», ցույց են տալիս «Ձորի Միբրուն», մմանատիղ ֆիլմեր որ ցույց են տալիս, չեն նայում էս էրեխեքը: Պայթում եմ, ճիշտ ա էս էլ կեսից արդեն սիգարետը կոցնում եմ, փորձում եմ չնայել, որ չնեովայնանամ, բայց էս էրեխեքը ընդհանրաղես չեն ուզում նայեն: Աղջիկներս աճուսնացած են, նրանց հետաքրքրում ա, տղուս՝ չէ: Իսկ էս կուգեի, որ հակառակը լիներ, տղուս հետաքրքրեր դա:

– Աղջիկներին ղատմե՞լ եք, իրենք գիտե՞ն այդ ղատմությունները:

– Ոչ թե ղատմությունները գիտեն, դրվագներ, որ իմ ղատը գաղթական ա, իմ ղատը էրգրում տուն ա թողել, որ իրանց ղատղան միշտ ասում ա, միշտ՝ էթալու եմ էրգիր, եթե ոչ մի բան չէ, մի բուռ հող եմ բերելու, միայն գյուղի տեղն իմանամ, Ալաշկերտի այ էդ գյուղի հողը բերեմ ւցնեմ ղատղիս գերեզմանին, որ ինքը հանգիստ ըլնի: Ու ասենք, հա, խոսակցության ժամանակ էլ ասում եմ՝ ղատղս ղատմում էր, որ իրա մերը գաղթի ճանաղարհին ծննդաբերեց, մահացավ, էրեխուն էլ հետը դրեցին, թաղեցին, տատը գաղթի ճամփին մեռավ, որ իրանց ընտանիքը 39 ջվալ ա ունեցել, այսիմբն՝ 39 տղամարդուց ա կազմված եղել: Իրանք ունեցել են նաև հորեղբայր Ավետիս անունով, ասում՝ ամի Ավետիս էին ասում իրան:

Ուրեմն, որ «Ռանշղարների կանչը» լույս տեսավ, ավելի ճիշտ արդեն երկրորդ հրատարակության ժամանակ տարա ղատղիս հորողբոր տղուն, Երևանում որ էս ուսանող էի, ասի՝ կարդա՛, դե դա հիմնականում Մախլուտոյին ա վերաբերում, գորավար Մմբատին ա վերաբերում: Նետո որ գնացի՞ հը՞ն, ղա՛մղ, ասում եմ, ո՞նց էր էս գիրքը: Ասավ՝ դրա մասին դու ինչի՞ ես կարդում, ասում եմ՝ ինչի՞, ասում՝ դա մեր ընտանիքի թշնամին ա: Ռ՞վ, ասում եմ, գորավար Մմբա՞տը, ասում ա՝ հա՛, ղատղը քեզ չի՞ ասել: Ասում եմ՝ չէ՛, ի՞նչ ղտի ասեր, ասում՝ մենք ունեինք հորեղբայր կամ հորեղբոր տղա, հորեղբայր, անունը Ավետիս էր, ասում, թուրքական բանակի գեներալ, երևի գնվորական ա եղել, տասնաղետ ա եղել, հարյուրաղետ ա եղել, կարող ա նաև իրոք գեներալ ա եղել, չգիտեմ, որովհետև էդ բիձեն, էղ տարիքով մարդը ասում էր թուրքական բանակի գեներալ: Ասում՝ գորավար Մմբատը եկավ մեր տուն, համոզում էր, որ դաշնակցական դառնան, ասում՝ ամի Ավետիսը եկել էր գյուղ, գորավար Մմբատը եկավ, համոզում էր, որ դառնա

արել, մեկ մեկու տուն գնալ-գալ, ամեն, իմանում աս, որ ինչ տեսակ ժողովուրդ են: Մեր դիմացն էլ էլի մի հատ թուրք աս մնում, անունը ի՞նչ էր կտրվածի, վերջը, էլ էլ ամեն օր հաց էր տալի: Աղչի, ասում են մեմակ հոգին ինչ են անում էլ հացը, դու հայտարարությունը չե՞ս տեսել, ասում աս՝ ջհանդամը գյոռը, էնքան ասեն, որ հաչան, ասում աս, էլ եկողներն են, հաչում են, ասում աս, ինձ ի՞նչ ոլիտի անեն: Ինքն էլ բայեվոյ [համարձակ] կնիկ էր, տուշոնկա աս, ձու աս, հաց աս: Մեզ ունենք է, տուշոնկա-մուշոնկա ամեն ինչն էլ ղաղվալը լիքը ունենք, դոռոտը կնիկ աս դե հիմի, ասում աս որ չենք կարում դուրս գանք, օգնություն ցույց աս տալի: էլ էլ տյա, հիմա Ղայկը մնացել աս ըտեղ, չի գալի ընդեղ, դե Ղայկին ծանոթներ ունի: Մենք դողում ենք, այ սենց, ուռենին, որ վերջանում աս բամին, դողում աս, այ տենց դողում ենք: Վիմա Ղայկը գոռում աս՝ Լուսիկ, արի՛, Վու՛յ, ասի՛ չէ՛, ես չեմ գալիս, հիմի ես ոստիկանը գոռում աս, ասում աս՝ Լուսիկն բաջի, գյալ, արի, մի՛ վախենա, ես ստեղ եմ, խի՞ ես վախենում: Այ սենց դողում ենք: Վերջը, աստիճանները դրիմք... ոլիտի հարցաքննեն էլի, ոնց որ դու ես հարցաքննում, իրանք էլ մեզ ոլիտի հարցաքննեն: Որ դուրք բաց անենք, մտենն, ինչ են անելու, չգիտեմ, վերջը, եկանք, Ղայկին ասեցի՝ գնա կառլի բեր խմեմ, ուժե սիրտս գործ չի անում: Էդ երկու Ֆլակոն [չիշ] կառլին էլ կես ժամվա ընթացքում ես խմեցի: Վիմա էղի էլի թողեց գնաց, էլ իրեք մարդին ըտե նստըցրեց: Վիմի քչիչում են դրանք, ասում են ինչ-որ ստե հոտ աս գալիս: Ղայկին ասում են՝ Ղայկ, մի վեղոր ջուր նրանց որ տանես հայաթը, խոսցնես, ես մի վեղոր ջուր տանեմ էլ օղիի վրա ածեմ, ոնց որ ջուր աս էլի, ոնց որ հոտը ավելի շուտ կկորչի: Վիմա նստել են աստիճանին, դրանց կարում չի որ տանի, սենց կարում չեմ, շունչս կտրվում աս, սիրտս լավ չի աշխատում, վայ-վայ են անում: Ասում աս՝ բաջի, լավ չե՞ս: Ղայկը ասում աս՝ լավ չի, մի հատ կառլի-մառլի ոլեր: Ասում են՝ Ղայկ, կառլին հեն աս, առտեչկայում աս [դեղարկղ], վերս աս: Գնաց բերեց խմեցի, դրանք դուրս եկան, հայաթը գնացին: Բալկոնի տակից, հելան հայաթ: Ղելան որ հայաթը, Լուսիկ, սարի ծաղիկ, հելա հո մի վեղոր ջուր տարա շփեցի էլ արաղի վրա, արաղը կորչի: Վիմա էլ էլ նորից էլ բարձր աստիճանի ոստիկանը եկել աս, դուրք ծեծում աս, Ղայկ, աչ, դուրք բաց արա, գալիս են: Դուրք բացեցին, դու ղատկերացո՞ւ էն ինչ էին, հը՞ն, էն ի՞նչ էին: Այ սենց, մըջումնի նման թափվեցին հայաթը: Մեկը ընգավ ղաղվալը, մեկը ընգավ հայաթի մեջը գարածն [ավտոտնակ] աս գնում, մեկը ոչ էլի, մի քանի հոգի գառածը, մի քանի հոգի կոիշը բարձրացան, մի քանի հոգի սենյակները, հիմա ես էլ, էլ ասիտոս եկավ, 3 հատ բալոնի միջի թթան արաղ ունեմ, ղաղաձայնիկների [անկողնու ծրար] մեջին փայթաթել են, գյոզերով հավաքած աս: Մեկ էլ տեղաշորը սարքած աս, վրեն ղակոճվալը [ծածկոց] քցած, որ Ղայկն ասի մեքենան բերել են, փայթաթենք ու ոնց որ դուրս գանք: Էդ ղաղաձայնիկները փայթաթեցի ու քցեցի շֆանարկի [խոսքը ռուս. шифонерья – զգեստադահարանի մասին է] էլ բաները դե բաց աս, մեջը ու մի քանի խառը-խշտիկ սենց, քնճճնճած լինի էլի, որ ոչ մի բան չհասկանան, դրի վրեն,

որ բացեն, ձգեն չեն հասկանա, կասեն շորեր աս էլի, ասի ավիստ աս 3 բալոնը տանենք [ծիծաղելով]: Վերջը, հիմա եկել են, հա որ շմտան, որ շքարձրացան դրանք վերև-ներքև գնացին, էս մեկը կար, ասեց՝ յաման բայելոյ կնիկ ես, ասում եմ՝ ինչի՞, ինքն էլ հայերեն աս խոսում, ստեղից եկած աս, իմնանից լավ աս հայերեն խոսում, էնքան գրական բան, մալադեց, ասում աս՝ կրկըլալան, ինքն աս ասում է՝ կրկըլալան թափում էր ամուսինդ, դու էլ ջուրը լցնում էիր, կրկըլալան թափում էր, դու էլ ջուրը լցնում էիր: Թե դու եկար, խոսացիր, էս էլ նմանադես, բերանս փակած նստեցի, ոչ մի բան չխոսացի, էլ ի՞նչ ասեմ, որ մեղավոր եմ: Վերջը, դրանք բարձրացան վերև, սաղոմոնիկի [կոշկակարի] դանակներ աս, տեգորս տղան սաղոմոնիկություն աս սովորել, այ սենց երկաթ աս, քիթը սենց սուր աս, կաշին կտրելու համար, իրեք հատ դանակ աս, իջցրել են, հո չեն գոռում, բու սիլհարդե, առուժյա [զենք] աս, առուժյա աս: Ուրեմն գրում են, դոստակոլը [արձանագրությունը] գրում են, որ Նայկին տանելու են: Հիմա էդ գրեցին, ասի՝ էս սաղոմոնիկի դանակ աս: Տեգորս տղան սաղոմոնիկ [կոշկակար] աս սովորել, դանակ աս, հիմա որ ինքը չկա, մահացել աս, էդ դանակները կոռնեն ենք անել, դե հիմա հո չե՞նք բերելու դադվալում դահենք, կոռնեն ենք քցել: Դե էդ դադվալումն էլ էլի տենց բալոններ կային՝ կիսատ, դոստ տենց, արադ-մարադ էլի քաշած աս, հիմա որ բերան շարեցին ըտեղ, սենց դուռուր սեղանը դրած աս, նստած գրում են, շարեցին բալոնները, ասեցի, ասում աս՝ սա տանենք, ստուգելու ենք, տենանք սա ինչ աս, ասեցի՝ օղի աս, քաշել եմ, էս եմ քաշել: Ասի՝ էս երկու լիտրանոցը թող մնա, դատուհանները լվամ, հետս տանեմ Նայաստան, որ ընդե դատուհանները լվանամ: Մա բան աս, ոնց որ 40 աստիճան աս, դե չենք խմում 40 աստիճանը, դատուհաններ աս, էս լյուստր-մյուստրը տենց բաները լվանում ենք: Ասեց՝ չէ, կտանենք էքստերսիգա դիտի անենք, որ տենանք ինչ աս, կարող աս թույն աս ըսի: Նա վերջը, գրեցին, ասում աս՝ բա ո՞նց էս քաշում, ասի՝ սովորական քաշում եմ, բա՝ իրավունք չկա, ասի՝ մարդս շաքարով հիվանդ աս, բժիշկը ասել աս դիտի թթան օղի խմես, բա ասեցի 4-5 ծառ ունեմ թթան, էդ թույթը ի՞նչ եմ անելու, դրել եմ, որ օղի քաշեմ, ամուսինս խմի, հիվանդությանը էդ օգուտ աս: Վերջը գրեցին, հիմա ասում աս բա տղեղ ուր է, դաստորոտը բեր, ասեց տղես տանը չի, բերանք դաստորոտ սովինք իրան: Էդ մեծը քթի տակին փնթփնթաց, Նայկին ասեց տուր, հետո մենք կվերցնենք, չտվեց դաստորոտը, վայեննի բիլետը [զինվորական գրքույկը] տվեց, ասեց, դաստորոտը չկա, չգիտեմ ինքը որտեղ աս դրել, իրան ձեռին աս, ինքը տունը չի: ...բարձրացել են հիմա տունը: Դոտավերկեր [ստուգումներ] են անում, էս սերվանտը [սոցալաբաղադարան] բացել են, օղիի էտիկետկաներ աս, ասում աս՝ դե սրա մեքենան սովեք, որ օղի եք փակում: Ասի, մենք օղի չենք փակում, որ տեգրս մահացել էր, ասում եմ, էն ժամանակ տեգրս տղեն մեր դադվալումը փակել աս: Թե ումից աս բերել, կոռնկաներ [բերանակալ] էլ կար մի բանի հատ, թե ումից աս բերել, ինչ աս արել, չգիտեմ: Էն ժամանակ չէին առնում մարդիկ, բոլորն էլ գիտեին, որ փակում էին, սեղանին դնում, շա-

րում էին: Վա՛, չէ, դետք ա տաս: Ասեցի, որ շունեմ, որդեից տամ, դոս-վերկեր են անում: Վերջը, էդ էլ գրեցին: Կոնյակ ա, գրքո՞ ա, գիբիլ ա, ինչ կա, հավաքեցին, տարան: Ոնց որ իրանց համար էր առած-դրած ըտեղ: Բերին հավաքեցին: Ես սենց մի հատ կոլոտ տղա կար, այ սենց, այ սենց կոլոտ, էի էլ կարմիր բանը փակած: Կանգնած էր էլ շֆանար-կի մոտ, ուզում ա բացի, չի ուզում բացի, ուզում ա բացի, վերջը մի երկու հոգի էլ որ եկան, ես հայերեն բան էի ասում, ասում եմ՝ Ես ինչ տեսակ ժողովուրդ են, ստեղի թուրքերը ավելի լավն են, քանց թե էդ ե՛կվորները: Մենք եսքան տարի ստեղ աղբյու ենք, էս թուրքերիցը ոչ մի վատ բան չենք տեսել, հարևանն էլ ա, կողքինն էլ ա հարևանը, մի նենց ցուրտ բառ նրանցից չենք լսել: Էս սրանք եկել են սաղ աճրոջ տունը սենց տակն ու վերև են [արե], էդ վերմակները բանը լրիվ տափին թափել են, դոս-վերկա են անում: Էդ մեկը եկավ որ շվանեյկեն [ղահարանը] բացի, ասեց՝ ես դոսավերկա եմ անում, ոչ մի բան չկա: Ասեց՝ ինչ ա, դու դրանց դաշտոդանու՞մ ես, ասեց՝ ես էլ եմ քո նման եկվոր, ինչի՞ եմ դաշտոդանում, ասում եմ՝ ես նայել եմ, էլ դու ինչի՞ ես նայում: Նասկացար, ասեցի՝ փառք Աստծո, էս մինն ա, որ լավ էր, իրեք բալոն, չէ, չորս բալոնս մնաց ինձ [ծիծաղ]: Էդի փրկվեց, հա: Վիճա, էն կողմով որ գնում են էդ Ֆիքրատանց տուն, փողոցի էն մի ծերով գնում են Ֆիքրատանց տուն, դուռը բացում են, մտնում են տեսնում մամաս, Ամայիկը՝ տեգորս կնիկը, բանը իրանց տանը նստած: Բա էս ովքեր են, ասում ա՝ հարևաններն են, եկել են: Նակոբին, Եղիշին՝ Սուրիկի, Նայկի հրնգերն ա, Եղիշն էլ ա ըտե, Եղիշին, Կարենը Ամայիկի ախոյերն ա, Կարենին, Նակոբին, Եղիշին, դրանց բոլորին բռնում տանում են միլիցիայություն ու բաց չեն թողնում: Վերջը բաց թողեցին, մի բանի օրից հետո բաց թողեցին, դրանք եկան տուն: Դրանք եկան տուն, դրանից հետո էլ միլցեքը բանը մեկ էլ տեգորս, սկեսուրիս տունն էին դոսավերկեր էին անում:

– Ինչքան հայ կա՝ ստուգու՞մ էին:

– Էդ մենք ենք մնացել, ասում եմ՝ ես եմ, տեգորս կնիկն ա, ամուսինը մահացած ա, ու մեկ էլ սկեսուրս ա, մեկ էլ էլի տեգորս կնիկն ա: Տեգորս կնիկը բանը դրանք դուրս են եկել, տեգորս ա ըտե մնացել: Դիմացն էլ էլի նոր են առել, ինքը դասատու ա, հայերեն ընենց խոսում ա, որ իմասաս թե հայի դորտից ա ծնված:

– Մտեղից եկա՞ծ:

– Նա, ստեղից եկած: Վիճա էդ բանը բարձրացել ա վերև, Կարենը, կոի-շի գլուխը ու իրան որսորդական թվանք ունի, դակումենտով էի, իրավունք ունի, սենց բոլորիդ էլ կրակում եմ, ասում ա: Թուրքերին ա ասում, եկածներին: Կաղնու տակ են: Էդ մարդն էլ՝ էդ դասատուն, ասում ա՝ բան միք արեք, բու դայիդի, էսի գիժ ա, ասում ա, դե նհենց ա ասում էի, որ դրանք ժողովուրդը, ոնց որ ասում ա՝ բռնեք, հա բռնեք, սա գիժ ա, ասում ա, դրան բան միք արեք: Դե ճանաչում ա, որ էդ մարդն էլ ա ոնց որ մի վեց ամիս առաջ ինքը էր տունը առել ա: Վերջը ինչ ասեմ, Նայկն

ասում աս՝ Կարեն իջեցրու թվանքդ, միլիցեն ասում աս՝ իջեցրու, ոչ մի բան չենք անելու: Իջիր, թող ժողովուրդը հանգստանա, որ գիտան իբր բռնում ենք, տանում ենք: Վերջը, ուզում եմ ասեմ՝ թուրքերի մեջին լավն էլ կա, վատն էլ կա: Այ տհե՛նց: Ղիմա ուզում աս, որ Նայկը, բանը ինձ ճամփա դնեն, ասում եմ՝ չէ, մենք որ գնանք, միասին տենք գնալ: Էդ էն աս էդ միս մորթող էր թուրքը Նայկին ասում աս՝ իրանց ճամփա դիր: Ղիմա դե մաշինը [մեքենան] բռնում ենք, վայե՛ննին կանչում աս, տիրում աս, վեշերը հավաքում ենք դնում ենք ըստեղ մեջին ու գնում ենք Տամարանց տուն ըստեղ մնանք, էլ կնգա անունն հի՞նչ աս, Տամարանց հարևանը՝ [ինքն իրեն է հարցնում], թուրքը, անունը մոռացել եմ: [...] Վերջը, դրանց տանը տխրի մնանք, էլ մեքենան էլ ըստե, հմի էլի հայտարարություն աս արել, եթե մի հատ մարդի դահեք ու ճանադարհեք, ձեզ գյուլիլ տխտենք, զնդակահարելու ենք, դե իրանք գյուլել են էլի ասում: [...] վերջը տեղաշորը, բանը բցել աս, դատկում ենք, որ քնենք, հիմա դե Նայկը բանը բնում չեն, դե մենք էլ ինչքա՞ն մտտենք, մտած մնջում ենք բան, վերջը, դատկել ենք ու քնուվը անցել, մամես աս, Ամալիկն աս, ես եմ, էլ ո՞վ էր, վերջը էդքանս ենք: Ղիմա էրագիս ոնց որ ասում եմ՝ վա՛յ, թուրքերը եկան, սղանում են մեզ, թուրքերը եկան: Ազատեցեք մեզ, թուրքերը մեզ սղանում են, խեղդում են: Եկել աս ասում աս՝ Լուսինե բաջի, Լուսինե բաջի, վեր էլ, էլի, ես թուրք եմ, մեր տանն ես քնած, քեզ սղանող չկա [ծիծաղելով]: Վերջը հեկանք ու ժամը 5-ին էն աս դուրս եկանք: Դուրս եկանք, էն աս Նայկը խոսացել աս մի 2 ոստիկանների, իրանց մեքենայով մեկը առաջին գնա, մեկը հետևից, մեր էլ մեջտեղից, դե մենք ենք մնացել, ուրիշ հայ չկա, լրիվ թուրքեր են: Էդ աստիճանի տակ եկանք հասանք էս Ղազախ աս ինչ աս, ըստեղից նոր իրանք ոնց որ բաժանվում են: Չգիտեմ, թե որ տղասն էր, որ մեկ էլ մեր հայկական բանն էր, Նայկը հանցեք որ փող տա, ասեց ես չեմ ուզում, եթե տաս էդ 2-3 ոստիկանի կարաս տաս, վերջը էդ 3 ոստիկանին էլ դրանց տվեց, դրանք էլ չվերցրին, ասեց տխրեք չի փողը մեզ: Վերջը հեն աս, մենք եկանք հասանք, իրանք էլ հետ դառան գնացին: Այ էդ ձևի եկանք հասանք մեր Նայաստանը:

Բայց աղորում էինք կոմունիզմի մեջ, չէինք իմանում, որ կոմունիզմի մեջ էինք աղորում: Լավ աղորում էինք, շատ լավ աղորում էինք, լավ էին մեզ հետ, շատ լավ էին, դե եսիմ, Գորբաշովը, ինչ արեց շարեց Գորբաշովը վերևը արեց: Շատ լավ աղորում էինք, ինչ-որ իրանց էն մախազահը, մախազահն էր, թե մախարարն էր, որ ասեց՝ ոսկի ատամները տվին, ոսկի ձեռքերը բան արեցին, իրանք փոշմանել էին: Լրիվ ընդդեք բան էր, Գայանի քեռին երկրորդ սեկրետարն էր [քարտուղար], մեր Գայանի քեռին, Սվետիկի ախտերը: Թե՞ն՝ ախտոր տղեն էր, վերջը, կամ ախտոր տղեն էր, կամ թե չէ քեռին էր, մոռացել եմ, երկրորդ սեկրետարն էր, հայ էր, ուզում եմ ասեմ՝ էն զավոդում [գործարան] էլի մեր հայերն էին աշխատում, լրիվ: ...Լրիվ մեր հայերն էին, ի՞նչ սարքում էին մեր հայերն էին, իրանք ոչ մի բան չէին կարում անեին, իրանք չկար, ասում աս

ատամները մեր ոսկի ա, մենք ուտում ենք, բայց հայի ձեռքերը, ասում
ա, մենք բաց թողեցինք, մենք մեր ձեռով բաց թողեցինք, աշխատող ու-
ծը մենք բաց թողեցինք:

[...] Շատ լավ էր, շատ լավ էր, աղբյուր էինք, բայց... եթե հիմա մի մի-
լիոն էլ տան, էդ դեռքերից հետո չեմ գնա:

– Չծախեցի՞ր տունը, տենց էլ մնա՞ց:

– Ծախեցինք, բայց էն չծախեցինք... նենց ոնց որ շղթաես էլի: Էդ էլ... ձրի,
ոնց որ ավելի լավ ա չծախեիր, քանց թե անունը ծախածի ա մնաներ:

[...]

– Ո՞ր թվին եք ծնվել:

– Ե՞ս, [19]41 թվին՝ օգոստոսի 19-ին, Կիրովաբաղում:

– Կիրովաբաղում, թե ուրիշ տեղ:

– Չէ, Կիրովաբաղում: Մամա Չարդախլու գյուղից ա, դադաս Վա-
նեցի ա: Պառայիս ոնց որ ասում ա, գեներով գնում ա, դադաս էլ ա
փախստական եղել, փախել են եկել, իրանք եկել են Չարդախլու հա-
սել, իմ կեսրարը, դե էն ժամանակ չի իմանում, որ իմ կեսրարն ա, Չար-
դախլուից, իրան բան ուներ՝ րաբա ուներ, րաբով իրան մամային՝
տատիկիս, դադաս, հորեղբորս էդ բանով կեսրարս բերել ա: Որ եկան
ինձ նշանելու, որ կեսրարս տուն մտավ, դադասիս որ չնայե՞ց, ասեց՝
Սրա՞ն, էդ դու՞ ես: Պառաս սենց ըրավ՝ չէ, չեմ ճանաչում, ասում ա՝
ո՞նց չես ճանաչում, որ Չարդախլուից րաբով քեզ բերա՞ մամայիդ, քեզ,
Սրտաշին, հորեղբորս անունը Սրտաշես էր, հա, նոր ասում ա՝ հա՛, նոր
ճանաչեցի: Ասում եմ, դե դադաս էլ ա փախստական, Վանից ա փա-
խած եկած, նրանք էլ են փախստական, եկել են Նայաստան, Նայաս-
տանից եկել Չարդախլու, երևի էն բանով... ըըմ... կարճ ճամփով էլի, որ
գայիս են, Վարդենիս ա, ինչ ա, Վարդենիսով որ գայիս են, վերջը ըտե-
ղով գայիս են, հասնում Չարդախլու, Չարդախլուից էլ կեսրարս բերում
ա Կիրովաբաղ: Կիրովաբաղ էլ, մամաս գայիս ա իրանց բարեկամի
տուն, ըտեղ տեսնում ա, մամա 13 տարեկանում ամուսնանում ա: Բա,
այ տենց: Ու ծնվում են 6 երեխա՝ 4 աղջիկ, 2 տղա: Բույրս մեկը Բաբոս
ա եղել, էն էլ ա Բաբվից փախել եկել, ոնց որ Կարինեն ա աշխատում,
սբերկասայում [խնայորսամարկղ], ինքը առանց սովորելու որ ամուսնա-
ցավ, գնաց Բաբոս գործի էր ընդունվել: Իրան դիրեկտորը [տնօրենը]
ասեց, Ռոզա ջան, դե թուրք ա էլի, եթե մեկը դիտլոմով գա, թեկուզ ոչ մի
բան չիմանա, ես էդ դիտլոմով մարդուն ընդունելու եմ, էն ժամանակ դու
մնալու ես գործագուրկ, ավելի լավ ա կարդա, որ դիտլոմ ունենաս: Վեր-
ջը կարդաց խեղճ քուրս, դիտլոմ առավ, ոտը դնողըրավ, ըտեղ գործ էր
անում, բոլորն էլ հարգում էին, վերջը էն էլ մորքուրիս աղջկա հետ, իրան
տղու հետ թողնում ա տունը ու գայի, գայիս ա ստեղ տուն ա առնում, էս
բանի՞ Գումից որ ուղիղ բարձրանում ես, ըտեղ սբերկասա կա, ըտեղ

զայիս ա, աշխատում ա: Վերջը, մահացավ խեղճ բուրս, ոչ մի բան չտեսավ էդ թուրքերի ձեռից, վախից: Էդբան բան աղջիկ ջան:

[...] Տեգրս որ ուղարկել ա, մեքենան բարձել ա, ուղարկել ա, ոնց որ մեզանից 2 օր առաջ, որ լիտի Բերդ ուղարկե՞ր՝ Շամշադին, իրան կինը Շամշադնեցի էր էլի, բայց իրանք էլի մեր Կիրովաբադ էին աղորում, բանի տեղից կրակել էին, էդ մեքենան բանը, ղալատկեքը [ղաստատ] լրիվ, էդ դե բանով էր ծածկված, լրիվ ծակոտիներով: Որ Սուրիկին, բանին ուզում էին որ բռնեն, միլցա կար Խանլար, եկավ դուռը ծեծեց, ասեց՝ բացի, ես եմ, Խանլարն եմ, դե էլի ոնց որ ինքն էլ ա միլցա, ոստիական ա, էլի Նայկին ոնց որ մոտիկ ա, մեր տուն գնացել ա եկել, ոնց որ ազատ բացում եմ էլի, գիտեմ, բացեցի, ասում ա Սուրիկը ստեղ եկավ մտավ, ասի չէ, բայց իրոք եկավ մտավ: Ասեց՝ դուռը փակեք, հետևիցս են ընգել, ուզում են բռնած լինեն, տանեն: Վերջը, բացեցի, ասում եմ՝ չէ, ստեղ չի եկել: Ասում ա՝ բա ոնց որ ասեցին բրոջ տանիցը իջավ ձեր տունը: Ասի արի տես, ղռավերկա արա, չկա: Վերջը էլի որ գնաց, էն մի փողոցով բան արցեցինք, դուռը բացեցի, Սուրիկը ասեց դե բացի, դուրս գամ, քյամ Տամարանց տուն: Դե Տամարանց տունը էն թուրքն ա առել, որ հետին մոտիկ ա, կարող ա տուն մտնի ընդեղ սկի էլ բան չանի, վերջը փախ-փախ էր անում խեղճ տղուն, որ չբռնեն: Վերջը տենց փախ-փախ անելով էն ա փախանք եկանք էլի: Էն Անուշի այնաբանը էն ինչ արեցին, ոնց էին ջարդում, փշրում էին, դե լրիվ այնաբանդ ա, շուշեք ա էլի, խոմ չէին ջարդում, էդ էլ ամուսին չունեք, թոռան հետ էր աղորում, թողը գնացել էր, ինքը մենակ էր մնացել, խեղճ կնիկը: Ավիրեցին, ընդեղեքը ավիրեցին:

[...] Վերջում մենք եկանք, ուրիշ չկար, դե բանն էլ, գիտես ինչ, ես հորեղորս կինը մետիս [խառնածին] ա էլի, խառնուրդ ա, որ հորեղբայրս լավ չէր, լիտի մահանար, ասեց որ բերեմ, ձեր գերեզմանոցում թաղեմ, կլինի՞, չհասցնեմ Նիզամին, ղաղայիս մոտ տանեմ, դե թուրքերի մոտ Նիզամին ա, իրանց ընդեղ գերեզմանոցը: Մամաս ասեց՝ դե մեծ գերեզմանոց ա, բեր, ի՞նչ ա լինելու, բայց ինքը ռուս ա, ու իրան հայրը տերտեր ա, էլի մետիս ա տենց, էլի ոնց որ, դե խառնուրդը ոնց որ մետիս ա կոչվում: Ասեց բեր, բերանք գերեզմանոցում մեր թաղեցինք: Նիմա որ մաման մահացավ, մաման էլ եքս մեծ կնիկ էր, ասեց՝ կլինի՞, Մարութն ասել ա, մամաս ասել ա, որ Արտաշեսի՞ փեսայիս մոտ ինձ թաղեն: Մամաս ասում ա՝ որ մեր հարևանիքն էլ ուզեն, մեր գերեզմանոցը մեծ ա, բոլորն էլ թող բերեն ընդեղ, բան չունեմ ասելու: Նիմա, որ մահացավ էդ կնիկը, մամաս Երևան էր, տ ամուսինս էլ դրան չէր սիրում, ինքը դոցենտ կնիկ էր, 4 սենյականոց ունեք, կուխնին [խոհանոց] էր դե հեչ եմ անում, բաղնիք, կուխնյան հեչ, 4 սենյականոց ունեք, Ալյումինատրոյի, ղրիեզդի, ընդեղ էր մնում ինքը: Ասում էր, արի բան արա, ամուսինս ոլոտնիկ [հյուսն] էր, դուռը սարքի կամ ղաստուհանը վերանորոգենք, իրա հետ գինի մեջին չէր բան անում, ասում էր՝ Սերոժ, փող չունեմ է, չկա, փող չկա, աշխատանք չկա: Ասում ա՝ հենց

զնում ես տուն, ասում ա, գալում 2 հոգի նստած, էն մի սենյակում 2 մարդ նստած, էն մի սենյակումը 2 հոգի, ամեն սենյակն էլ գբաղված են, դարարդում ա հետրները ու ասում ա՝ փող չկա: Չէր սիրում, ասի դե մահացել ա բանը՝ իրա մաման, արի գնանք, ասեց՝ չեմ գայիս, ես նրան չեմ սիրում: Վերջը, գնացի դուռը բաց էր, մտա տուն, տեսա գետինը դրած, դե դրանք գետին են դնում չէ՞ մարմինը, բանով սենց սարքում են ու դնում գետնին: Ասեց՝ Լուսինե՛, մամաս ասեց կտանես ամուսնուս մոտ կթաղես՝ Նիզամի, ասի՝ դե ասել ասել ա, շատ լավ ա ասել, ու մտա: Ինքը բարեկամություն չէր անում, իրան բարեկամները դե որ թուրք են, չէ՞, մետիս են, խառնուրդ են, իրան հետ, որդես հայի ա գնացել, բարեկամություն չէին անում, դե ինքն էլ դոցենտ կնիկ ա: Մտա տուն, տեսա նստոտած են, սիրուն-սիրուն, փաշա-փաշա կնանիք են, ծանոթացրեց, որ տեգորս աղջիկն ա: Վերջը, էլ էլ տարավ, ընդդեղ թաղեց: Վիմա լիմոնջիկ եմ թխել, նառյալեոն եմ թխել, որ յոթին, բանին տանեմ, հիմա ինձ գովաբանում ա, գովաբանում ա ինձ: Նստո որ ես փախստական դառա, եկա ստեղ, վեր եմ հիշում, ասում եմ, բա որ ես գնացի, ազգանունը չկար գրած, որ մաման իրա մահացել էր, էլ [19]88 թվի բանը, անունը ինչ ա, Սումգայիթի էլ կոնվը [19]88 թվին եղավ չէ՞, հա, էլ կոմից հետո ինքը դոցենտ կնիկ ա, լավ ա իմացել, որ ես դեռքը լիտի տաստահի, ես գործողությունները լիտի տաստահի: Վիշում եմ, որ գնացի, դռան վրա ազգանունը չկա, հանած ա, դե հայ ա, չէ՞, ինքը, Գալստյան, հայ ա ինքը: Դե որ գան, տենան հայ ա, ուզած-չուզած մի բան անելու են, կոտրելու են, եսիմ, էլ շենքերին ինչքան են բռնաբարություններ ա, ինչքանին շենքերից քցել են, ջահելներին, փոքրերին, ծեծել են, 100 ձևի բաներ են արել: Ազգանունը չկա գրած, նոր վեր եմ հիշում, ասում եմ տենց հորեղբոր կնիկը թող ընդդեղից էլ էի մի 7 մետր խոր գնա: Ժամանակին, էլ [19]88 թվին Սումգայիթը, որ տենց են արել, ասեիր՝ տեգոր կնիկ, ա շուն, ա գել, դուրս եկ, ծախեք: Դե մենք սեփական տուն չենք ունեցել, ես որ ամուսնացել եմ սեփական տուն ենք ունեցել, բայց մերը ԺԷԿ ա եղել, բայց 2, 3, 4 սենյականոց էի տենց բան ա եղել, ծախեք կամ մեկ ու մեկի վրա փոխանակի, ինչ ես անում, ստեղից դուրս եկեք, բայց ոչ ոքի բան չասեց: Չասեց ինձ: [...] Վերջը, ուզում եմ ասեմ թեկուզ բարեկամ ա, հորեղբորս կինն ա, էն էլ միս վաճառող էր, թուրք էր, առաջին մասից եկել էր երկրորդ մաս տուն առել հայերի մեջ, ասում ա՝ ես գիտեի, որ հայերը լավն են, ես լիտի ստեղ ոնց որ առևտուր անեմ, թե չէ իմ տունը ընդդեղ չէի ծախի, զամ ստեղ տուն առնեմ: Ես, որ իմանայի ես թուրքերը լիտի գային, ես իմ տունը էն ա չէի ծախի, ես չէի զա ստեղ մտնեմ: Դե ուժե իրանք, էլ թուրքերն են, չէ՞, մտնում ըստեղ, նրանց հետ ինքը չի կարում հարմարվի, էս եկվորների հետ: [...] Ուզում եմ ասեմ տարբերություններ շատ կան, որ հիշում եմ. եթե նա ասած լինեք, հիմա մենք Նայաստանում Երևանի միջին տուն կունենայինք, երևես էլ, թոռս էլ էս [...] գյուղը չէր սիրում, ասում ա գյուղ ա, գյուղ ա, ես քաղաք եմ գնում, քաղաքում եմ ուզում: Քաղաքում կլինի, նորմալ կլինի ամեն ինչը: [...] դե հիմա նորմալ չենք

ծախել, մեր ձեռին էլ փող և եղել, վրեն ենք դրել, հողամասը առել ենք, ծառերը կտրտել ենք, գրոյից սկսել ենք սարքել:

[...] զնացել ենք էրեբունի, եկել ենք տալանս տանն ենք մնացել, զնացել ենք Արտաշատ աղջկանս տանն ենք մնացել, բայց մեր վեշերը տարել ենք տալանս հարսի տուն, Արևշատ ենք տարել: [...] Արևշատից նոր որ տալս մեզանից ստե մի 2-3 տուն բարձր տուն առավ, դրանց տանը մնացինք, Նայկը դե իրանց տանը, ինքը դե ասում եմ ղոլտնիկ էր, գործ էր անում, մինչև մենք տունը սկսել ենք: Ղենա առաջին հարկը սկսեցինք, առանց սվաղիլի մի տարուց հետո, ուղիղ 31-ի իրկունը ստեղ ենք եղել:

– Ո՞ր թվականի:

– [19]89 թվին, որ եկել ենք, [19]90 թվին էլի, հա՞, [19]89 թվին եկել ենք, մի տարի անց սարքել ենք էլի առաջին հարկը: Մի սենյակի մեջ մի հատ փետից սեղան էր սարքել, նոր տարին եկանք մեր տանը արեցինք: Բա, էդքան բան, իմ աղջիկ:

[...] հորեղբորս աղջիկը, որ հերդբայրս ղիսի մահանար, հորեղբայրս ասեց, ընենց կանեք, որ աղջկան, Մաբինա էր անունը, Մաբինայիս հայի տաք: Ու իրանց 4-րդ հարկն էր, թե 5-րդ հարկը, չեմ հիշում, ասեց մեր հարկի վերևում հայ են աղյրում, էն տեղեն ուզում աս, ընենց արեք, որ Լեյլա Չաբբայիլովան իրան տա: Լեյլա Չաբբայիլովան հայի՞ կտա: Տարավ էլի մետիսի տվավ, հիմա ինքը Կիրովաբադ աս: Հիմա որ սրանից մի քանի տարի առաջ, մի քանի տարի առաջ ոչ էլի, հա էլի, Նայկ չկար, հա, Նայկը չկար, Նայկին [թոռանը] ասեցի՝ Նայկ, մի հատ ղոխակ [ոբոնում] տուր Գալստյան Արամ կամ Անդրանիկ [...] տենանք որտեղ են էլի, իրանք դե մնացել են ըստեղ, հորեղբորս կինը մնացել աս ըստեղ, ինքը մետիս աս, ազգանունը հանել աս, դե չեն իմանում, որ... ինքը դոցենտ կնիկ աս, ի՞նչ ղիսի անեն, հա, հետո ինքը էլի թոչել աս, զնացել աս, Բաբու աս զնացել: Մեծ տղեն՝ Արամը, էլի մետիսի աս ուզել, լրիվ իրա մերը, հորեղբորս կինը լրիվ դասավորել աս մետիսի էլի, որ հայ շլինեն ու ինքն էլ զավոդի դիրեկտորն աս եղել՝ հորեղբորս տղան, կինն էլ բժշկուհի աս եղել, էն Անդրանիկին՝ փոքր տղային, նրան էլ աս մետիսի տվել, ինքը Մոսկվա աս: Մեծը Բաբու, փոքրը Մոսկվա աս եղել: Էլի կինը բժշկուհի աս, հիմա Նայկին ասեցի, Նայկ ջան, մի հատ տուր էլի, ղոխակ տուր տենանք: Տվավ, ասեց Գալստյան Կանաղայում մի հատ ազգանուն կա, ասի դե մի հատ գրի ասա, բո տատիկի անունը Լեյլա Չաբբայիլովան, ղաղայիդ անունը Անդրանիկ աս, վերջը տենց գրի: Գրեց, ասեց՝ հա, ասեցի՝ հորեղբոր աղջկա անունը բան աս Մաբինա աս, ինքը մնացել աս Կիրովաբադ: [...] հիմա ղոխակ տվեցինք, տենց ասեց՝ հա, ես եմ, հետո սկայոդով իրա հետ խոսացինք, խոսացինք, ասում աս՝ «Я вас не знаю» [Ես Ձեզ չեմ ճանաչում], ասում եմ՝ դե ինձ որդե՞ ես տեսել, թոռն աս, հորեղբորս թոռն աս, ինքը Մոսկվա աս ծնվել, ասում աս, բայց Անիկին ճանաչում եմ, Անյային ես ճանաչում եմ, քրոջս

ճանաչում ա: Անյան, ասում ա, «Когда приехал в Москву» [կրք Մոսկվա եկավ], մեր տուն ա եկել: «Она очень хорошо готовит» [Մա շատ լավ դաստրաստում է], շատ լավ եփում ա, թափում ա, ասում ա, մենք իրան հիշում ենք: [...] իրան ճանաչում ենք, բայց ինձ ճանաչում չենք, ասի ես էլ մեծն եմ, իրան բույրն եմ, Լուսինեն եմ, ասում ա՝ ես հիշում եմ, դադադա դատմել ա, որ ունենք սենց բարեկամ՝ Լուսինե, Սերոժ, ախտորս անունն ա, Ղակոբ, Անյա, Ռիմա, Ռոզա, տենց ունենք բարեկամներ էի: Ասում ա՝ դե ես նոր եմ եկել, ծրագրավորող եմ, տենց մի քանի հետ խոսացիք, ես Ղակոբը հոգիս հանում էր, նստում ա, ընդեղ խաղում ա, [...] նորից էի կաղը կտրեցիք, ասում եմ՝ մարդիկ «ժդի մենյա» «Ինձ սոյափր» ռուսաստանյան հեռուստահոդորդում] եմ տալիս, ճարում եմ, հարևանը հարևանին ճարում ա, դու անվճար ես ճարել, վերջը գրեցի, դե որ խառնուրդ ա, մի քիչ ձգում ա տատու կողմը, ասեցի՝ դե կուգեմ դադադային մի հատ բան անեմ, կարա՞ս բանը տաս, Սարփնային չեմ ասում, հորեղբորս աղջկան չեմ ասում, որդեսգի Կիրովաբաղ ա աղորում, չեմ ուզում էի նեղություն բան տամ: Բայց ինքը ասեց, որ Սարփնան մի հատ աղջիկ ունի, բան ա անուրը, ինչ ա անուրը, է տառով ի՞նչ անուն կա: [...] իրանց թուրքի անուն դիտի դենն էի, չէ՛, Լեյլա: Էդ փոքր տղի հետ էնքան բան չունենք, որ ինքը Մոսկվա ա գնացել, որ գալիս էր Էդբան կառ շունեիք էի, չէին կանչում ինձ, որ ասեն եկել ա, բայց որ մեծ տղեն գալիս էր, Մրամը Բարվից, ինքն էր գալի մեր տուն Կիրովաբաղ, ու մենք ռովեսնիկներ [հասակակիցներ] էինք: Որ իրան դադա՞ն մահացավ, եկավ, իրար հետ ենք գնացել առևտուրը ըրել, էլ ամեն ինչ էլ առել, ռոտով գնում էինք, դե ըսեղ բազառը մոտիկ էր, չէ՞, իրանցից, Այյումինստորյին մոտ: Վերջը, շատ դրուժիլի [ընկերներ էինք], հիմա ասում եմ՝ դե հորեղբորս մի հատ նկար ցույց տուր էլի, ունե՞ս ըսեղ, ասում ա՝ չունեմ, ասում եմ՝ դե մի համարը տուր, հետը խոսամ: Ասեց՝ դե ես բանին, անունն ի՞նչ ա աղջկա, աղչի, հորեղբորս թոռան աղջկանը, Կարինե ա, հա էլի Կարինե ա, ասեցի համարը տուր, խոսամ հետը, ասեց՝ ես հեսա կգրեմ իրանց, իրանք թեզ հետ կկառնվեն: Անդրանիկը տոչի իրան մամեն ա, կկառնվի՞: Վերջը տե՞նց էլ չկառնվեցին: [...] Վերջը կառ չհաստատեցին, հետո բան արեցի, ասեցի բա Մրամը որսեղ ա, որ հետը խոսում էի, ասում ա՝ Մրամը մահացել ա, ուրեմն մենք որ եկել ենք, 14 տարի առաջ մահացել ա: էլի ոնց որ ազգանունը դռան վրա հայ ա եղել գրած, ինչ-որ դագրո՞մ-մագրո՞մ եմ արել թուրքերը, ըսեղ մահացել ա, բայց շասեց ոնց ա մահացել: Տատս, ասում ա, 9 տարի առաջ, ուրեմն Մրամը մահացել ա, նոր ա ինքը մահացել: Ինքը կմահանար [...], որ Էն Բարվից բախին հաներ, Մոսկվա քցեր: Իրան տղեն ա, իրան տղին էլ չի ասել, որ էղ շնեթի ձեռիցը դուրս եկ, տունդ ծախի կամ փոխանակի, ինչ ուզում ես արա, կամ թող ըրա, տունդ տենց չի ծախվում, դուրս եկ, գնա, էղ Մումգայիթից հեռու: Իրան տղեն ա, ես նեղանում եմ, հլա ես իրան տեգոր աղջիկն եմ չէ՞, նեղվում եմ, որ ինձ բան չի ասել, ինքը դոցենտ կնիկ ա, ամեն ինչ էլ իմացել ա: Բարձր աշխատողները, կար-

զի աշխատողները չեն իմանա՞, որ ինչ ա լինելու, ինչ չի լինելու, լավ են իմացել: Իրան տղին էլ չի ասել, որ գնա Մոսկվա: Թեկուզ վարձով աղբի: Փող ունի սենց ոչ, որ մտնում էիր բանի մեջը, գրքերը որ տեճաաս հատորներով դրած: Նայկն ասում ա՝ էլ գրքերը որ ծախի, ով ա զիդում միլիարդեր կդառնա: Էն որ ասում են լիմոնչիկ է, լիմոնչիկ կդառնա: Ու, ասում ա, լացում ա, ասում ա՝ փող չունեմ: Վերջը ասեց 2 երեխա ունի, Նյու Յորք են մնում իրանք, Նյու Յորք են գնացել, Էն մեկը ամուսնացել ա, նրան էլ երեխա ունի, վերջը տենց, էլ էլ բան ըրեցի, դե ինձ չեն ճանաչում, ես մենակ իրանց եմ ճանաչում, նոր ծնվածներին չեմ ճանաչում: Բայց էլի ղոխակ տվեցինք, էլի տեճ գրեցինք, որ մենք տոայուոողնի ոնց որ բարեկամ ենք էլի: Դե տենց էլ կորան, գնացին, էլ հարաբերություն չկա:

– Խառնամուսնությունները շա՞տ էին:

– Նա, շատ-շատ էր, օրինակ իմ բանի, անունը ինչ ա, սկեսուրիս ավտոր աղջիկը, Էլիզկի աղջիկը, թուրքի չի՞ր քինացել, հիմա Էն ա Կրասնոդար ա մնում, էլի Էն թուրքի ձեռին ա: [...] Ու ինքն էլ մասվածառությանմբ ա զբաղվում, որ հայի հետ չես կարա փոխես էլ թուրքին, որ ասում եմ էլ որ սկեսուրիս ավտոր աղջկա ամուսինը: [...] էլ մեր բարեկամը որ ըտենց գնացել ա, սկեսուրիս ավտոր թոռը, առանց հարսանիքի ա, փախել ա գնացել, դե ծնողները համաձայն չեն եղել. ո՞ր ծնողը համաձայն կլինի, որ թուրքի հետ գնա: Երևի ոնց որ մի դորոցն են կարդալիս եղել, դե կան չէ՞, որ ռուսական դորոցում կարդում են թուրքերիցը, երևի տենց սիրահարվել են ու նրանց ծնողներն էլ չեն համաձայն եղել, երկու կողմանի էլ չեն համաձայնվել, իրանք փախել են: Բայց հիմա շատ էլ լավ աղբում են, Կրասնոդար են:

[...]

– Իսկ Դուք բանի՞ տարեկանում եք ամուսնացել:

– Ե՞ս, 22:

– Ամուսնուն Ձեր որտե՞ղ եք հանդիպել:

– [Երեխա] Ոչ մի տեղ էլ ա, տալս ա ամուսնացրել ինձ, էս տալս, մենք էս փողոցում ենք եղել, մե՛ծ տալս Էն մի փողոցումն ա եղել, մեզանից էլ ոնց որ էս մեր տունն ա, Էն մի 8 մետր կլինեք կամ 5 մետր, դադյեզդով [մուտք] էլի ժակի [նկատի ունի՝ жилищно-эксплуатационная контора (ЖЭК)] տուն էր, մամայիս հորեղբոր կինն էր ըտեղ աղբում, հորեղբոր տղայի կինը, հորեղբորս տղան էլ, համ հերն էր ոստիկան, համ իրան՝ մամայիս հորեղբոր տղեն էր ոստիկան: Նրա քույրն էլ իմ տալանս հարևանն էր, այ էլ երկու բաները՝ իրանք դասավորեցին մամայիս, որ ամուսնացներ: Ասում էր, Վարինգա էին ասում, Վարինգա տոտենն ասում էր՝ աղջի Արուայակ, աղջիկդ էլ ա ամուսնացրու, ասում ա՝ մագի համբարքին ուզող կա, ես ու՞մ տամ, մի մարդ ունեմ, Էն ա

գործի և քինում, գալիս տանը նստում, երկրորդ սմեն [հերթ] էլ և աշխատում: Ու ոչ ռեստորան կզնա, ոչ յիվկոյ [զարեջրատուն] կզնա, ոչ մի, ոչ ընգեր ունի, ոչ բան ունի, մի իրան տունն և, իրան գործն և, էդ և ճանաչում: Ասում և՛ հենց դրա համար էլ ասում եմ՝ լավ տղա և, ասում և՛ բա որ լավ տղա և, ինչ և անու՞մ, կարդու՞մ և, ասում և՛ չէ, թղթերը տալիս և Ստրայիծելնի [չինարարական] տեխնիկում: Քեռիս էլ 14 տարեկանում եկել և Չարդախուից, մեր տանն և մնում ու մամաս թղթերը սարքել և, տվել և, կարդացել և, կարդացել, ժամանակի ընթացքում բանակն էլ և մեր տնից գնացել, ու Ստրաիծելնի տեխնիկում և տվել, դասավորել և մամաս, էդ մայթեմատիկայի դասատու էր, Արշա՞կ էր, հա էլի Արշակ էր անունը, բանը Պասյուկի Իտեռում, Սոնիկանց տանից բարձր, ընդդեմ էր մնում էդ մարդը, մամես գնում և, դրան ախտեր և բռնում, ասում և՛ 2 ախտեր չունեմ, 3 ախտեր ունեմ, ախտորոս լիտի ընդունես, որ սովորի, դիոլում ունեցա: ... հիմա քեռիս սովորեց, հետո Արշակը ասում և՛ բան արա, յիբի Լուսինեիս էլ տուր դաշկոյնի: Դորոցական էի, մինչև 4-րդ դասարանը կարդալ... ասում և՛ չէ, կտամ... հորեղբորս կինն էլ ըտեղ և աշխատում էլի, մամաս ասում և՛ կարա՞ս Լուսինեիս ընդունես: «Չէ՛, ինքը հայերեն և ողբել, չի կարա, – ասում և, – կարդա»: Քեռիս հայերեն և ողբել, գյուղից եկել և, կարում և կարդա, ես բաղաբում, ես չեմ կարա կարդամ, վերջը, բան արեց, մամաս ասեց՝ Արշակ ջան, չեմ կարա տամ, թուրքերի մեջին փախցնեն, մնամ գյունաբա՞ր, ես չէ, չէ, չէ, չեմ տալ իմ աղջկանը կարդալ, թող էն և մարդի կտանք, կորչի գնա: Վերջը էն և տհենց, էդ Սիրանուշը, Վարինգեն, երկու քույրեր են, տալս ու Մարգուշն են, մեծը, դրանք դասավորեցին, սուտ-սուտ խաբեցին մամայիս, ասեցին թղթերը տվել և Ստրայիծելնի տեխնիկում: Այ էդքան բան: Վիմա մեզանից բարձր մի հատ մարդ կար, տղեն շոֆեր և, շոֆեր չի, չգիտեմ ինչ և ոլործել, թե վերջացրել չի ինչ և, էդ առաջ էդ վոլգաները մոդա էր էլի, վոլգա ունեին, բշում էր, եկել էին որ ուզելու, մամաս ասում և չեմ տալիս, հիմա որ... ասում և՛ շոֆեր և, շոֆերություն ես անում, քյաս ավարիա անես, աղջիկս մնա մհենց: Վիմա, էս որ ամուսինս ինձ ուզել են, ասում և բա էդ տալիս ես, ու՞մ ես տալիս, ոլլտոնիկի՞ր՞, [ծիծաղելով] կոիշիցը վեր ինկիմի, ոտը կտորի, ջարդվի՞ր: Վիմա որ մեքենա առանք, էդ ժիգուլին, էն փորքերից հետո էն մեծը առանք, ասում և էն հանգի վոլգեն տակին չտվիր, տարար տվիր... ասեց դե ճակատագիր և, ինչ գրած և, էն էլ բաշելու են, բա:

– Աղջիկները շա՞տ էին տալիս բարձրագույն:

– Դուրսը շատը, օրինակ՝ քույրս եկավ բանը, եկավ Նայաստան սովորեց, ամեն մարդ չէր տալիս էլի, հազարից մեկը, դե Գայանը ըտեղ սովորեց, բանում էլի, դաշկոյնին ըտեղ, մեծամասնությունը տղաներն էին տալիս, բայց աղջկերը Նայաստան էին գալիս, Ստեփանակերտ էին գնում:

[...]

– Որ եկաք Էստեղ, ո՞րնց հարամարվեցիք, տարբե՞ր էր կյանքը:

– Մինչև հարմարվեցիք, ձեզ, ասում ամ, ձեր հետևից կարմիր խնձոր էլ կուղարկեն մեր հայաստանցիք, մինչև հարմարվեցիք, դե փառք աստծու: [...] Դժվար էր, գերոյից տուն ես սարքում, հե՞ջտ ամ, ընդեղ էլ ամ ինքն [ամուսինը] ամ սարքել էի, գրոյից: [...] փոքրուց աշխատել ամ ինքը, 13 տարեկանից աշխատել ամ:

[...]

Պատաս քննեց մարդ ամ եղել որ... գողոյություն բառը չի սիրել, եթե էս բանը դու էս-էս-էս լուցկին գողացել էս, էնի իրան վատ էր գգում, ոյիտի տանես դնես տեղը: Քեռիս որ գնաց բանակ եկավ, մամաս աշխատանքի դիմեց իրան, ոյիտի կարդար, աշխատանքի ժամանակ, որտեղ որ աշխատում էր, ընդեղից մեխ ամ բերել: Մամաս ասում ամ՝ Արամ, դե դատաս իրիկունը որ եկել ամ, ասում ամ՝ գիտե՞ս Աշոտը ինչ ամ արել: Ասում ամ ի՞նչ ամ արել, ասում ամ՝ աշխատանքի տեղից մեխ ամ բերել: Աշոտին կանչում ամ մտըր՝ արի ստեղ, քանի հատ մեխ բերել էս, էղ մեխը կտանես, կդնես նույն տեղը: Դե ինքը ուրիշ տեղ ամ աշխատում, նա ուրիշ տեղ ամ բան, դատաս ուրիշ տեղ ամ, զավոդում ամ, էղ ստրումենտաշիկ ամ, նաշալնիկն ամ, մեծն ամ ըստեղի, իրան լրիվ ձեռին ամ, բանալին ինքը ոյիտի սկաղի բաց անի, ինքը ուգողներին տա, սկաղը փակի, բանալին դնի գրդանում, քեռիս էլ ուրիշ տեղ ամ աշխատում: Առավոտ մեխը դնում ամ ձեռին, ասում ամ՝ գնա աշխատանքի ու մեխը տար դիր տեղը: Դե հիմի տղա ամ, գյուղից եկած տղա ամ [ծիծաղելով], մեխ ամ էի, ասել ամ, տուն տանեմ, մի բանի կօգտագործենք, էն մարդն էլ ասավ տար դիր տեղը: Բա... Էդքան աղբանքը ձեռին մարդը, ուրիշի ձեռին, Ղայկն ասում ամ իմ ձեռին լիներ, էս հիմի վաղուց էի միլիոնչիկ դառել: Ամեն մի տրուբեն մետրի տակ գազ են քաշում, ուգունիկներ ամ, զբրթ գիբիլ ամ, ջուր են քաշում, բան են անում, տանում են, սկաղից [դահեստից] են տանում լրիվ, ամեն մեկի մետրի մեջին որ աշխատի, ինչքան հարուստ մարդ կլիներ: Տասս փախստական ամ, Վանից եկել ամ, ի՞նչ ամ բերել: Սենց, չգիտեմ ողիմն ամ, ողիմն չի, էս չեն հասկանում, սենց մի հատ կաստոռուկա [կաթսա] ամ, մեկ էլ տկուշ են ասում, ինչ են ասում սենց, կուվչիմի [կուժ], էի դրա նման ողիմն ու կթո՞վ. ասում են ինչ-որ դա ոսկի ամ, էղ էլ վրեն ձուլել են, որ ոսկին չերևա, էս խեղճ ախտերս էնքա՞ն տաշել ամ, տաշել ամ, տենա որ ոսկի ամ, ոչ մի ոսկի ոչ մի բան չկա: Դու մի ասի ոսկին բերել ամ, հատիկներով, դե ժակտի տուն ամ եղել, էս ողըր փետի ամ չէ՞, ողերը, անցքեր ամ եղել: Էղ անցքերով լրիվ լցրել ամ տակը, հիմա որ ռեմոնտ ենք անում, ինքը ուժե մահացել ամ, որ ռեմոնտ են անում, դե ժակտից մարդ են ուղարկում, գալիս են որ ռեմոնտ անեն, ողլերը բանդում են, բանդում են, մի բանի ոսկի վերցնում են, մենք չգիտենք: Ու մեկ էլ 2 օրից հետո շուխուռը վեր ամ ընկնում, որ Արուայակի... Արամ չեն է ասում, Արամին ճընաչում չեն, Արուայակ ու Ազիզին են ճընաչում: Մի կնիկ ամ, 2 անուն ունի համ Ազիզ, Ազիզ են դրել, իմացել ամ

թե տա հայրիկս էդ մի երեխեն ա եղել, մենն ա ինքը եղել, Ազիզ տղիզ ա, Ազիզ են դրել, հետն էլ շի իմացել 9-ը բերելու ա, մեկ էլ Արուսյակ են ասում.. որ ոսկի են տարել: Մեզ ոսկի որդի՞ց ա, նոր որ մեկ էլ մամաս ասում ա, որ մեկ էլ են մի կողմից են փետերը քանդում, կաղնեցի, կաղնեցի, մի 3 հատ ըտեղից քտա, վեր կալա: Ուրեմն սկեսուրս թիրել ա, ոնց որ մինչև ամուսնանալը, որ տուն են տվել, ժեկի տուն ա եղել, էդ որդեսզի չգողանան, բան չանեն, փախստական են էլի իրանք եկած, էդ անցքերով քցել ա: Լրիվ տարան, թե չէ մենք էլի հարուստ կլինեինք, Է՛հ, քյասիքը որդեղ ա, միշտ էլ քյասիք մնում ա: Էնքան ոսկի տանիլ, մի տես ինչքան ոսկի կիլեր մեզ: Էդ էլ էդ էր:

ՈՒՍՈՒՑՉԻ ԿԵՐՊԱՐԸ ԽՈՐՆՐԴԱՅԻՆԻ ԵՎ ՆԵՏԽՈՐՆՐԴԱՅԻՆԻ ՄԻՋԵՎ՝ ՄԵԿ ԴՊՐՈՑԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Հետազոտության նպատակն է վեր հանել ուսուցիչների ընկալումներն ու վերաբերմունքը իրենց աշխատանքի նկատմամբ: Հաշվի առնելով հասարակական բննարկումները մանկավարժական միջավայրի վերաբերյալ՝ խնդիր է դրվել հարցը դիտարկել ներսից՝ ուսումնասիրելով հենց իրենց՝ մանկավարժների տեսանկյունը իրենց մասնագիտական գործունեության վերաբերյալ: Կենսագրական հարցազրույցների և դիտարկումների (նաև ներգրավված) միջոցով մեկ դրոշմի սահմաններում բննարկվել են մասնագիտության ընտրության, աշխատանքի անցնելու շարժառիթների և մանկավարժի դիրքին ու հեղինակությանը վերաբերող հարցեր՝ փորձելով ցույց տալ մանկավարժի կերպարի փոփոխության դինամիկան խորհրդային տարիներից մինչ այսօր: Հասարակության տարբեր շերտերի և տարբեր ժետական մարմինների բազմազան ու հակասական ակնկալիքների և ղախանջների լայնամասշտաբային մանկավարժները զբաղեցնում են այնպիսի միջանկյալ դիրք, որ համադաստասխան են այդ սղատումներին: Հանրային ուշադրության կենտրոնում լինելը, ամդադար վերահսկողության տակ գտնվելը ստիղում են համադաստասխանել որոշ չափանիշների և որոշակի կերպարի, իսկ վերջիններս ղարունակում են խորը հակասություն ուսուցչի մասին խորհրդային ղատկերացումների և ժամանակակից ընկալումների և ղախանջների միջև:

որհրդային հայտնի՝ «Ճակատագրի հեզմանքը կամ բաղնիքը անուշ» ֆիլմում մանկավարժ հերոսը, խոսելով իր մասնագիտության մասին, նշում է, որ թեև ուսուցիչների սխալները բժիշկների սխալների համեմատ թվում են ոչ կարևոր, բայց մարդու համար կարող են լինել ոչ տրակաս ճակատագրական¹: Շաշվի առնելով այս տարածված կարծիքը, որ դոկտորը զգալիորեն ազդում է մարդու ձևավորման վրա, հանրակրթության ոլորտը սոցասարկող այս մասնագիտական խմբի ներկայացուցիչներն առանձնառես մեծ ազդեցության հնարավորություն ունեն նաև երկրի հասարակական կյանքում: Նրանցից յուրաքանչյուրն իր գործունեության ընթացքում շփվում է հարյուրավոր, եթե ոչ հազարավոր երիտասարդների հետ և շփվում է ոչ սովորական, այլ ուսուցանողի, ուղղորդողի դիրքից:

Ի տարբերություն ուսուցչի նկատմամբ խորհրդային շրջանում ձևավորված վերաբերմունքին, որը դրական իմաստով առանձնահատուկ էր, շատ հարցերում տաբուացված և դիստանցավորված՝ այսօր ուսուցիչներն հանրայնորեն ամենաշատ քննադատվողներից են: Ամենատարածված քննադատությունները իրար հակադիր տատանումներով են ներկայացվում. մի կողմը մեղադրում է, որ նրանք այլևս նույն որակների, նույն դիրքի ու օրինակելի կերպար ունեցող մասնագետները չեն, մինչդեռ մյուսները քննադատում են ուսուցիչներին այն բանի համար, որ նրանք շարունակում են աշխատել հին տրամաբանությամբ ու գործիքներով, ինչը համահունչ չէ ժամանակակից կյանքին, հետևաբար նրանց աշխատանքը գնահատում են ոչ արդյունավետ:

Մի կողմ թողնելով կրթական քաղաքականությունը, դրա իրականացման մեթոդները՝ այս հետազոտությամբ ուսումնասիրել են մեկ գյուղական դոկտորի ուսուցիչների կյանքն ու գործունեությունը աշխատանքի մեջ և աշխատանքից դուրս՝ փորձելով հասկանալ, թե ովքեր են նրանք, ինչ կյանքով են ապրում, ինչ խնդիրներ, սահմանափակումներ և ազատություններ ունեն իրենց մասնագիտական և ոչ մասնագիտական գործունեության մեջ: Նոյառաջ է բացահայտել այն տրամաբաններն ու հանգամանքները, որում ձևավորվում են աղազա սերունդներ դաստիարակող կերպարները:

Այս հետազոտությունը սկսելու ոչ տրակաս ազդեցիկ առիթ էր

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՅՈՒՄՆԵՐԸ

¹ «Ճակատագրի հեզմանքը, կամ բաղնիքը անուշ», ռեժ. Է. Ռյազանով, 1975:

անձնական հետաքրքրվածություն: Իմ դրոշակակա տասը տարիները, մեկ ամսվա աշխատանքային փորձառությունը նույն դրոշակում և առհասարակ այս կամ այն ձևով դրոշակի հետ կադ ունենալը ստիպում է ինձ անդադար արժևորել և վերարժևորել դրոշակում անցկացրած ժամանակը, հասկանալ, թե ինչ է փոխվում այնտեղ և ինչի ազդեցությամբ:

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ՆԱՄԱՐՎՈՂ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Նետագոտությունը մեկ գյուղի դրոշակի սահմաններում է կատարվել: Գյուղը մոտ 1900 հաշվառված բնակիչ ունի, որից մեկ երրորդը գյուղում չի աղյուր: Այն Երևանից 45 կմ, իսկ մարզկենտրոնից 10 կմ հեռավորության վրա է գտնվում: Շատ կադված չէ մայրաքաղաքին, բայց միևնույն ժամանակ կտրված էլ չէ, բանի որ այնդիսի հեռավորության վրա է, որ բնակիչները կարողանում են ամեն օր գնալ Երևան և վերադառնալ: Բնակիչների հիմնական շարժը դեղի մարզկենտրոն կատարվում է հանրային տրանսպորտով, որը սկսել է գործել միայն վերջին 10-15 տարվա ընթացքում:

Այս դրոշակը գյուղի միակ դրոշակն է, և նրա առանձնահատուկ անկյունը, որն անգամ արտաքին տեսքից կարելի է տարբերել՝ որդես ավելի խնամված և կանաչ հատված: Նակառակ գյուղի դրոշակը հանրային կյանքի՝ այստեղ միշտ իրադարձություն կա: Երբեմն դրոշակակա միջոցառումները դառնում են համագյուղական տոներ, ինչդես օրինակ սեդտեմբերի մեկը և վերջին գանգի արարողությունը: Ուսուցչական կազմն այստեղ հիմնականում բաղկացած է տեղացիներից, իսկ մի մասը գալիս է հարևան քաղաքներից: Շախկինում՝ 1990-ականներից մինչև 2010-ականներ, աշխատում էին բացառադես գյուղի բնակիչները և հարևան ամենամոտ քաղաքից եկող ուսուցիչներ, որոնք անհրաժեշտության դեդքում աշխատանքի կարող էին ոտքով հասնել: Նետագայում՝ կանոնավոր հանրային տրանսպորտի հայտնվելուց հետո, դրոշակը գրավիչ դարձավ նաև այլ քաղաքներում աղող ուսուցիչների համար: Դրոշակը բավականին ակտիվ է օլիմպիադաներին, հանրադեսական և միջազգային ծրագրերին, ինչդես նաև դրամաշնորհային ծրագրերին մասնակցության առումով: 2010 թ. ճանաչվել է մարզի լավագույն

դոյրոց, իսկ տնօրենը 2017 թ. դարձնաւորվել է՝ որդես մարզի լավագոյն տնօրեն:

ՆԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նետագոտությունն իրականացնելու համար օգտագործվել է բանավոր դատմության մեթոդը, կատարվել են խորացված կենսագրական հարցազրույցներ հինգ ուսուցիչների, դոյրոցի տնօրենի և մեկ աշակերտի մասնակցությամբ, վերջինս մի քանի տարի շարունակ եղել է աշակերտական խորհրդի նախագահը: Ընտրվել են միջին տարիքի ուսուցիչներ, որոնք չեն աշխատել խորհրդային տարիներին: Բացառություն է միայն դոյրոցի տնօրենը: Կատարվել է վիզուալ նյութի վերլուծություն, որը ներառում է դոյրոցի ներքին և արտաքին հարդարանքը և համացանցում հրատարակված լուսանկարները: Նետագոտությունն ուղեկցվել է ներգրավված դիտարկմամբ: Լայնորեն օգտագործվել են ոչ ֆորմալ շփումները, քննարկումները, հաշվի են առնվել հեռախոսազրույցներն ու փոքր հավաքույթները, որոնց մասնակցել են որդես յուրային, թեև բոլորը տեղեկացված են եղել իմ հետազոտական նախաձեռնության մասին: Նմարավորություն են ունեցել հետևել դասադրոցեսին, աշակերտական խորհրդի ժողովներին, ուսուցչական ժողովներին, միջանցքի անցումարձին և ուսուցչանոցում կամ այլ սենյակներում ծավալվող զրույցներին: Տեղեկատվության ևս մեկ կարևոր աղբյուր է եղել դոյրոցի ֆեյսբուքյան էջը, որը վարում է տնօրենը: Ուսուցիչների և աշակերտների փոխհարաբերություններին հետևելու հետաքրքիր հնարավորություն էին վերջիններիս (հատկապես համատեղ) ֆեյսբուքյան հրատարակումները, որոնք ուսուցիչաշակերտ շփումների միանգամայն մոր ձևաչափ են առաջ բերում: Եվ վերջապես, հետազոտության արդյունքների վրա ազդել են նաև իմ հիշողությունները և իմ անձնական փորձառությունը որդես նախկին աշակերտ, նախկին ուսուցիչ նույն դոյրոցում և նախկին համագյուղացի: Այնպես որ կարելի է նշել, որ գործիքակազմիս ոչ վերջին տեղում է ինքնագագազրույթությունը²: Դաշտային նյութի հավաքագրումը սկսվել է 2018 թ. հունիսից և տևել մինչև նույն տարվա սեպտեմբերը, թեև սոցիալական ցան-

ՊՆԱԿԱՐԱՅԻՆՈՒՄ. ԹՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԵՎ ՊՆԱԿԱՐԱՅԻՆՈՒՄ

² Այս մեթոդաբանության մասին տե՛ս, օրինակ, E.A. Tony, S.H. Jones, C.Ellis, Autoethnography, Oxford University Press, 2015:

ցերից վերցված նյութերն ու անձնական փորձառության ար-
դյունքում հավաքագրված նյութն ընդգրկում է ավելի մեծ ժամա-
նակաշրջան:

Տեքստում գրուցակիցների անունները փոխված են, տեղանուն-
ները՝ հանված: Խոսքը աննշան խմբագրման է ենթարկվել հենց
իրենց կողմից, ինչը ավելի շուտ ոճական շտկում է, քան բովան-
դակային:

ՈՎՔԵՐ ԵՎ ԻՆՉՈՒՒ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ ՈՒՍՈՒՑԻՉ.

Մանկավարժի աշխատանքը՝ որդես հարկադիր ընտրություն

Մանկավարժությունը հենց ուսուցիչները բավական հաճախ ըն-
կալում են որդես «հարձար աշխատավայր», քան մասնագիտա-
կան կոչում, և այս աշխատանքը գրավիչ է դառնում ոչ միայն
նրանց համար, ովքեր որակավորված են որդես ուսուցիչ, այլ
նաև որոշակի սոցիալական խմբի համար, որը, ելնելով առա-
ջարկվող աշխատանքային դայնամներից, նոյառականհարձար
է գտնում դրոյրոցում աշխատել: Կա նաև այն խնդիրը, թե ով կա-
րող է աշխատել դրոյրոցում, քանի որ, գոնե իմ դաշտային դիտար-
կումները թույլ են տալիս ասել, որ առնվազն վերջին 15 և ավելի
տարիների ընթացքում դրոյրոցում աշխատանքի ընդունվելու հա-
մար, բացի յոսհանջվող որակավորումից, կարևոր դեր էին խա-
դում սոցիալական կադերը և կաշառքը, իսկ ավելի հաճախ՝
երկուսը միասին: Նաշվի առնելով միջինից ցածր աշխատավար-
ձը՝ կարելի է նշել, որ այս աշխատանքը հիմնականում ադրոյստ
վաստակելու ինքնաբավ միջոց չէ, այլ օժանդակ զբաղմունք:
Կարելի է նկատել նաև, որ ուսուցիչներից շատերը ֆինանսադես
ադահովված ընտանիքներից են, և այս աշխատանքը իրենց հա-
մար կարգավիճակի խնդիր է լուծում: Այն ուսուցիչները, ում
եկամտի միակ կամ հիմնական միջոցը աշխատավարձն է, ադ-
քատ կամ ծայրահեղ ադքատ են: Պատահական չէ, որ ուսուցիչ-
ների ճնշող մեծամասնությունը կանայք են, ինչը համընկնում է
հասարակության գենդերային այն ընկալումներին, ըստ որի՝
կնոջ դերն ավելի կարևոր է ընտանիքում, քան ընտանիքից
դուրս: Կարևոր է նաև այն, որ վերջիններից չի ակնկալվում կրել
ընտանիքի ֆինանսական բեռը, փոխարենն առաջնային են
տնային գործերը, երեխաների խնամքը և այլն: Մանկավարժի

մար»⁵ կամ «օժիտի դիտում»: Նեոխորհրդային Վրաստանի ուսուցիչների վերաբերյալ «Ты еще в Советском Союзе живешь!»: Стратегии адаптации Советских учителей в Грузии» հետազոտությունից երևում է նաև, որ ամուսնու առկայությունը կամ բացակայությունը ազդում է ոչ միայն ուսուցչի ֆինանսական դրության, այլ նաև ստատուսի վրա⁶: Մա ներկայիս հայաստանյան կոնտեքստում նույնդեպ նկատելի է:

Ուսուցիչ դառնալու դատմություններում ամենահաճախ կրկրվող պոլոսներն իրավիճակի բերումով դոդրոցում հայտնվելն է: Իհարկե, ակնհայտ է, որ մանկավարժները միակ խումբը չեն, որ այդդեպ են աշխատանքի ընդունվում: Սահմանափակ աշխատաշուկան, հատկադեպ գյուղական վայրերում, ստիդում է հաստատվել այնտեղ, որտեղ հնարավոր է, որտեղից կա առաջարկ, կամ որտեղ կան սոցիալական կադեր, որոնք հնարավոր կդարձնեն իրենց մուտքն այդ բնագավառ: Մեկ այլ դոդրոցի ուսուցչուհի իմ հարցին, թե ինչու վերջինս որոշեց աշխատել դոդրոցում, դատասխանեց՝ «Էստեղ ուրիշ գործ չկար. բանկ չէի ուզում, մնում էր դոդրոցը, որն էլ իմ դիտումին համատատասխան էր: Ուրիշ գործ չկար մեր քաղաքում»⁷: Այս աշխատանքի մյուս գրավչություններից են երկարատև արձակուրդները և ոչ մրցակցային իրավիճակը⁸:

«... բախտս բերեց, այսինքն համատոյություն մի քիչ դրսևորեցի, տարիների շարածը արեցի, ստացվեց, 51 միավորով անվճար ընդունվեցի, ու համալսարան: Ինձ ընկեր Մինասյանը Մանկավարժական էր ուղղորդում, ասում էր՝ ես որ Մանկավարժականն եմ ավարտել, տնօրեն չե՞մ: Ես էլ համալսարանի երազանքներ ունեի, էդ մի հարցում հորս շատ եմ դարտական: Ինքը մի քիչ չեզոք ա էր հարցերում, ինքը միշտ չի ուղղորդել մեզ, առանձնատեպ չի մղել առաջ, բայց էդ օրը, տեսնելով, որ իմ սիրտը կախա, որ տիտի արդեն դիմում հայտ լրացնեի, չկանգնեց Մանկա-

⁵ Նույն տեղում, էջ 145:

⁷ Աշխեն Նակոբյան, ԴԱՄ, 2018, ուսուցչուհի, 45 տարեկան:

⁸ Եթե որևէ մեկն ընդունվում է դոդրոց աշխատելու, ադա մեծ հավանակաոյաոյաոյանր նա այնտեղ կշարունակի աշխատել այնքան ժամանակ, որքան ինքն է ցանկանում, եթե աշակերտների թվի հետ կադրված կրճատումներ չիկեն: Նշված կրճատումների առիթի դեդրոցում շատ հաճախ միայն դրույթն է փորքանում: Աշխատանքի որակի դատճաոոով գրեթե չեն լիմում կրճատումներ: Ելնելով այն դայամաներից, որ մարդեղետարանն է ուսուցչին ընտրում և այնս չի աոնչվում նրա հետ՝ դոդրոցի տնօրինոյաոյանը այլ բան չի մնում, բան աշխատել տվյալ ուսուցչի հետ՝ անկախ նրա մասնագիտական որակներից:

վարժական, զնաց ուղիղ համալսարան: Էնտեղ տվեցի, ու ստացվեց:...Իսկ ինչի՞⁹ եմ ես դողոց զնացել: Ես ինձ այլ բնագավառում չիի տատկերացնում աշխատել: Միակ բնագավառը, որ գրավում ա ինձ, դա երևի բանն ա, ասենք հրատարակչությունը, լսմբագրական աշխատանքը, անզամ գրախանութ ունենալը [Երծաղում է]: Վիմա արդեն դա ա ինձ գրավում, որտեղ, որ մոտ կլինեմ աստարեզին: Բայց, բանի որ երեխաներս փոքր էին և սկիզբ որդես, լավ սկիզբ, ես համարում եմ, որ դա ճիշտ սկիզբ ա դողոցից զնալ դեղի այլ ոլորտներ: Նետագայի համար, չգիտեմ:...Չգիտեմ ինչ նվիրյալ տիտի լինի սենց ի բնե, ի ծնե, որ սենց շատ ուզենա [ուսուցիչ աշխատել], բայց եղդես էնքան քիչ ա լինում: Դու տիտի առնչվես ոլորտին, որ սիրես: Ես երբեք չէի կարող մտածելի, որ ես կսիրեմ բուն դողոցը, եւթյունը, եղ ընթացքը: Ժամանակներ կային, որ ես ձգտում էի տեղափոխվել Եստեղից:... Նախ ուրիշ դողոց էի ուզում, հետո ծնվեց նաև էն միտքը այլ աշխատանքի տեղափոխվելու: Գիտե՞ս ինչից ա ծնվում իմ եղ մտահոգությունը... Աշխատավարձի մասին մտածում եմ ամսվա մեջ երկու-երեք անգամ: Շատ չեմ մտածում եղ տախերին: Իրոք, որ մտնում եմ դասարան, ժամն էլ չեմ հիշում: Տես, Էսոր երևի նկատեցիր՝ ինչքան ինձնից տախանջարկ կա, եղքան կարող եմ տալ, չեղած տեղն էլ եմ շատ տալի, բայց ոչինչ չեմ ստանում հաճախ: Ես մի տեսակ իմ գործը անհիմաստ եմ համարում հաճախ: Ոնց որ տիտանի չի»⁹:

Նամալսարան ընդունվելն ու հաջողությամբ ավարտելը՝ բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով, իր ձեռքբերումն է: Նաջողության տատմությունից սահուն անցում է կատարվում դեղի ձախողում: Դրանից հետո դողոցում աշխատանքը սկսելն է հաջողությունը, թեև այստիտի մասնագիտական ընթացքը նախատես ոլանավորված չի եղել: Խոսվում է աշխատանքը հաճույքով անելու մասին՝ անկախ աշխատավարձից, աշխատանքի մեջ շատ ջանք և էներգիա ներդնելու մասին՝ առանց որևէ բան ստանալու ակնկալիքի: Շեշտվում է այն, որ իր համար դասարան մտնելն ու աշակերտների հետ աշխատելը մեծագույն հաճույք է, որին ոչ մի վարչական աշխատանք չի կարող փոխարինել: Իմ գրուցակիցը մանկավարժական գործունեությունը համարում է նաև լավ սկիզբ այլ բնագավառներ զնալու համար:

Նատկանշական է Մանկավարժական համալսարան չզնալու տրամադրվածությունը, որը բավականին տարածված կարծիքի

արդյունք է, ըստ որի՝ դիմորդները առաջին հերթին ձգտում են ընդունվել առավել որեւստիժային համարվող Երևանի Պետական համալսարան, իսկ նրանք, ովքեր չեն հավաքում անհրաժեշտ միավորները, ընդունվում են Մանկավարժական համալսարան, որտեղ մրցակցությունն ավելի թույլ է: Կարող ենք անգամ հետևություն անել, որ այնուամենայնիվ սա այն ցանկալի աշխատանքը չէ, վերջնական նոդատակ չէ, այլ մի փուլ, որն արժե անցնել, բայց դրանից հետո մասնագիտությունը ղետք է փոխել, որքան էլ որ կյանքի այս-դիսի ընթացքը համարվում է հաջողված: Եվ շատ ամառասելի անցում է կատարվում այն փոխելու անհնարիմությանը, քանի որ ցածր աշխատավարձը տարածք չի թողնում այլ հմտություններ զարգացնելու և ոլորտը փոխելու համար: Վերջում արդեն խոսում է մոտիվացիան կորցնելու, դորոցից բարոյադես ոչինչ չստանալու մասին: Ակնհայտ է, որ գրուցակիցս չի կարողանում ինքն իր համար կողմնորոշվել՝ իր աշխատանքը որակել որդես հաջողված, թե՞ անհաջող: Երևում են նաև վերոնշյալ հանրային զենդերային ընկալումները, մանկավարժությունը՝ որդես ընտանիքի կնոջը, երեխաների մորը համադատասխան զբաղմունք: Դորոցում մեկուսանալը, աճելու, զարգանալու հնարավորությունների փակվելը դայմանավորվում է նաև նրանով, որ ուսուցիչը կին է, ով խնդիր ունի երեխա խնամելու, տնտեսություն վարելու, գյուղատնտեսական աշխատանքներ անելու: Այսինքն՝ ուրիշ բանով զբաղվելու ժամանակ շունի, շնայած որ դորոցում մինչև ժամը 4-ն է անցկացնում, իսկ ցածր աշխատավարձը սահմանափակում է նրանց ներգրավումն այլ գործընթացների մեջ: Ուշագրավ է, որ մանկավարժն իր մասնագիտական աճը չի տեսնում որդես ինստիտուցիոնալ կերդով կազմակերդվող գործընթաց, այլ դատկերացնում է, որ դա կարող է տեղի ունենալ իր սեփական նախաձեռնությամբ, սեփական միջոցներով և ջանքերով:

Մեկ այլ գրուցակցիս համար նույնդես մանկավարժի գործունեությունը շղյանավորված գործընթաց է եղել: Այս դեդքում բացակայում է նաև գոհունակությունն արդեն արվածի վերաբերյալ, և կա ափսոսանք: Նարցին, թե արդո՞ր մինչև դորոց ընդունվելը ցանկացել է դառնալ մանկավարժ, դատասխանում է.

«Չէ, բողրովին: Ես երևի սկզբնական շրջանում ճարտարադետ եմ ուզեցել դառնալ՝ ոգևորված լինելով, թե ոնց են գծագրում: Նետաքրքիր հարց ես տալիս: Մեկ-մեկ մտածում եմ, որ եթե հնարավոր լիներ ժամանակը հետ դատտեինք, չգիտեմ, երևի

ավելի շատ հնարավորություն եթե լիներ, ես ուրախ կլինեի ընտրել հոգեբանի, մարզական մեկնաբանի, բայց ոչ ուսուցչի մասնագիտությունը»¹⁰:

Դոկտրինի վերաբերյալ իմ անձնական հիշողություններից դատելով՝ այս ուսուցչի գործունեությունը լիարժեք կարող էր հաջողության դաստնություն լինել: Ես նրան հիշում եմ որդես բավականին ակտիվ և նախաձեռնող ուսուցիչ. բազմաթիվ նախագծեր էր իրականացնում դոկտրինում, անգամ երեկոները, երբ ազատ էր լինում, գալիս էր դոկտրինի բակ՝ ստուգելու, թե արդյոք այգում որևէ ճյուղ չի վնասվել, կարգավորելու մագլցող բույսերի ուղղությունը: Իմ ակնարկին, որ նրա ներդրումը դոկտրինում շատ տեսանելի է, դաստասխանում է՝ «բայց կարող էի և չանել»: Նավանաբար ինչ-որ տրամաբան կամ ինչ-որ փուլից սկսած՝ ջանք թափելն իր համար իմաստագրվել է: Այստեղ նորից մոտիվացիայի խնդիրն է առաջ գալիս:

«...Երբ որ ամենաբարձր աշխատավարձը դոկտրինում 100 կամ 90 հազար է, դա ոչ մի մոտիվացիա չի կարող բերել, որովհետև ուսուցչի ամբողջ ուշք ու միտքը ժամ, րոդե առաջ գործը վերջացնելն է, որդեսգի իր հանգստի հաշվին մի այլ բանով զբաղվի, որդեսգի ընտանիք տրամաբան հարց լուծի: Երբ որ աշխատավարձը ստանալուց հետո բո կոմունալ ծախսերը, ինչու չէ՞ նաև, բոլորս էլ գիտենք, ուսուցիչները բանկերի հետ խնդիրներ ունեն, դրանք փակելուց հետո տեսնում ես, որ բան չի մնում, դու ինքդ քեզ արդեն մի տեսակ վիրավորված ես զգում: Աշխատում ես միայն կոմունալը և ինչ-որ տարտեր փակելու համար: Դու արդեն ոչ մի դեմքում սրտացավ չես մոտենում: Օրինակ շատ ուսուցիչներ ասում են՝ ես իմ հասանելիք նյութը կներկայացնեմ, հիմա կընկայեմ, կսովորեմ, թե չեն սովորի, էլ ինձ չի հետաքրքրում, իսկ դա ամենավատ բանն է, երբ որ ուսուցիչը միայն հրամցնողի դերում է լինում: Ոնց են ասում՝ հոգի չի դնում իր աշխատանքի մեջ:

...Աշխեն ջան, մենք, ճիշտ է, վեհ գաղափարի ենք ծառայում դոկտրինում, բայց միևնույնն է, գնում ես տուն, տիտի հաց ուտես: Գնում ես տուն, տիտի այնտեղ անես, որ լույսդ չանջատեն: Այ հենց ամբողջ խնդիրը դրա մեջ է: Ցանկացած ուսուցիչ, նույնիսկ մեր ազգաբնակչության, ես հաստատ ասում եմ, ինձստեղ տոկոսից ավելին միայն դա է ուզում՝ ինքը մի քիչ խիղճը հանգիստ տալի, գոնե տրորելներ շունենա: Նրանց մեջ էլ մասնակի նաև ուսուցիչը, որովհետև մտավոր դաշտում զբաղվելը...

Ես միշտ այս օրինակը բերում եմ, երբ հայաստանյան դոկտրոցում դահակը ստանում է 90 հազար, իսկ հայոց լեզվի դասատուն, որ ավարտել է ինստիտուտ, բակալավրիատ, մագիստրատուրա, ու ստանում է 70 հազար, դա ուղեղի մեջ չի տեղավորվում, որովհետև 100 մարդու կանգնեցնես՝ 99-ը տահակ կարող է աշխատել, իսկ 100 մարդուց ընդամենը 1-2-ը կարող է դառնա հայոց լեզվի լավ մասնագետ: Երևի դա է տատճառը, որ հիմա, երբ մեր մարզային թերթը բացում ես, առաջի էջից մինչև վերջի էջը ուսուցչի թափուր տեղի հայտարարություններ է»¹¹:

Երկու օրինակներից երևում է աշխատանքի տատճան կերտով շարժվելու խնդիրը, ինչ-որ տեղ ձախողված լինելը, ասիտասանքն ու հուսահատությունը: Մանկավարժին համեմատելը դահակի հետ ուղղակիորեն ցուցում է մասնագիտական աշխատանքի չգնահատված լինելու զգացողությունը մանկավարժների շրջանում:

Մեկ այլ զրույցում ոչ թե սեփական մոտիվացիայի, այլ լիարժեք կերտով աշխատանքին նվիրվելու մասին է խոսքը: Բացի աշխատանքի գնահատված լինելու խնդրից, որը կարծես մանկավարժը դատարաստ է անտեսել, նա ունի նաև իր հմտությունները գործին լավագույնս ծառայեցնելու դժվարություն:

«Ուսուցիչը իրա վրա էներան տետք ա աշխատի, որ ենթադրենք հաջորդ օրվա իրա դասը կարողանա հետաքրքիր կազմակերպի, չէ՞: Կամ, ասենք, էրեխեքին արդեն ծանոթ լինելով, դասարանին, ամեն մի էրեխու առանձնահատկություններին, իմանա ինչ ձևով կազմակերպի, որ բոլորի համար, չէ՞, հետաքրքիր լինի: Բա ինչ ենք անում մենք... Մենք էլ ժամանակը չունենք տրամադրելու հաջորդ օրվա դասին, այ ամեն ինչը գալիս ա ըտեղից... Ուզենք, թե չուզենք, մտնում ենք դոկտրոց... Օրինակ, կոնկրետ ես մտնում եմ դոկտրոց, իմ հոգսերի մասին մոռանում եմ: Ենթադրենք մտա, դասս դարատեցի և այլն, և այլն: Իհարկե 20 տոկոս դեդոքում եմ ես իմ դասից գոհ մնում: Ոչ թե... Դասարանը կարողանում եմ դահեմ, էլ առումով ոչ մի խնդիր չի լինում, բայց էն, ինչ որ ուզում ես ստանաս, էն դասը, ինչ ձևով որ դատկերացնում ես, ուզում ես կառուցես, ընդամենը երևի 20 տոկոս դեդոքերում ա ստացվում: Շատ քիչ դեդոքերում ա, որ ես նստում եմ, հաջորդ օրվա դասը նախադատարաստում եմ: Նա, սիրով մտնում եմ դասարան, էրեխեքին տենում եմ, մոռանում

¹¹ Նույն տեղում:

եմ ամեն մի հոգս, բայց գայիս ես տուն, ու դու ունես ընտանիք ու դու ստիղծած ղեկեր և հոգաս քո ընտանիքի հոգսերը, շե՞: Նիմա, տեսեր, ամբողջ ամառ ուսուցիչը ինչի վրա ղեկեր և օգտագործեր ամառը, ղեկեր և համ հանգստանար, համ էլ, քանի որ ժամանակ և տրամադրվում, շե՞, ինքնակրթությամբ զբաղվեր, ստեղծագործական... հա, միշտ ես մտածում եմ, տարվա վերջում մտածում եմ՝ հեսա, ամառը սենց մի բան կմտածեմ: Օրինակ թարմություն կմտնի, և այլն, և այլն, բայց հիմա արդեն վախենալով մտածում եմ, որ ամառը հեսա վերջանում և ու ես իմ հանգստից... Ես չեմ հանգստացել բացարձակ, ես կողմնակի աշխատանքի եմ գնացել»¹²:

Այստեղ բավականին «հեղափոխական» դիրքորոշում կա: Աշխատանքային անբավարար ղայմաններից գատ՝ կին ուսուցիչը բողոք ունի կնոջ, մոր ընտանեկան ղարտավորություններից և լիարժեք որդես մասնագետ դրսևորվելու անհնարինության դեմ, որոնք եմ՝ աշխատանքից դուրս մասնագիտության հետ կաղ շունեցող ղարտավորությունները: ԸՄնդիրը բարձրաձայնում են ոչ միայն կին մանկավարժները, իմ զրուցակիցների մեծամասնությունը լսոսում է աշխատանքից դուրս ծանրաբեռնվածության մասին՝ կողմնակի աշխատանք, գյուղատնտեսական բնույթի գործեր, ընտանիքի մասին հոգալու դժվարություններ, որոնք գրեթե բացառում են դասաղրոցեսից դուրս մտավոր աշխատանքը և ինքնագարգացումը: Մյուս կողմից, կրթական համակարգն իր հերթին շի նախատեսում ուսուցիչների համար վարձատրվող մի ժամանակ, որը հնարավորություն կտար և կղարտաղրեր ուսուցչին թարմացել իր կրթական ծրագիրը, մշակել առարկան մատուցելու ձևերը, թեև ուսուցիչները, փաստորեն, ունեն և՛ նման ցանկություն, և՛ զգում են դրա անհրաժեշտությունը: Մակայն, քանի որ գործող համակարգը երբևէ այդ լսնդիրը շի ձևակերղել, աղա ուսուցչին թվում է, որ այդ ամենը նա ղիտի անի իր «ազատ ժամի» հաշվին:

Պետք է նշել, որ այս հուսահատական տրամաղրությունն ու դիրքորոշումը բացակայում են դղրոցի տնօրենի և բավականին երիտասարդ, ոչ երկար տարիներ աշխատած ուսուցչուհու լսութրում: Մույն ժողովածուում զետեղված տնօրենի հետ հարցազրույցում ակնհայտ են շմարող ոզևորությունն ու աշխատանքից բավարարվածությունը, ինչը մի քանի գործոններով կարելի է

բացատրել: Նախ՝ որ տնօրենը, թեև միաժամանակ ուսուցիչ է, բայց ավելի շատ հանդես է գալիս որդես վարչարար, որդես կառավարիչ և այս ոլորտում բավական հաջողակ մեկը: Բացի դրանից՝ նա ունի մեծ փորձ աշխատանքը կազմակերպելու և այն լավագույնս ներկայացնելու: Աշխատած լինելով խորհրդային շրջանից մինչ այսօր՝ նա բավականին հմուտ ձևով կարողացել է յուրացնել բոլոր ժամանակների, իրավիճակների դասակարգումները և գործել դրանց համադաստասլան: Ինձ հետ գրույցները իր համար աշխատանքի մի մասն էին, որտեղ կարևորը դոկտրինայի տնօրինության, ուսուցչական և աշակերտական կազմի հաջողությունների շղթան ներկայացնելն էր: Իր աշխատանքի հանդեպ հանրային ուշադրությունն ու հավանությունը կարծես այս գործն անելու իր մոտիվացիաներից են:

Իսկ իմ գրուցակից երիտասարդ ուսուցչուհիներից մեկի մոտ հուսահատության բացակայությունը, ի թիվս այլ դատաճառների, կարելի է նաև կաղել ոչ միայն իր նախադաս ուսանավորած մասնագիտական ընտրության հետ, այն է՝ աշխատել որդես մանկավարժ, այլև իր անձնական-ընտանեկան կյանքում ունեցած դարտավորությունների սակավության հետ՝ ի տարբերություն այլ մանկավարժների:

ՈՒՍՈՒՅՉԻ ԿԵՐՊԱՐ, ԴԻՐՔ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՐԱՐԻՄԻԱ

Նայաստանում ուսուցիչների ճնշող մեծամասնությունը կանայք են: Օրինակ, 2011-2012 թթ. ուսուցիչների վիճակագրության համաձայն՝ Նայաստանում ուսուցիչների 84.1%-ը կանայք են¹³, հազիվ թե իրավիճակն այսօր շատ փոխված լինի: Գոնե այս դոկտրինայի օրինակով կարելի է արձանագրել, որ ուսուցիչը որդես կանոն կին է, հետևաբար մանկավարժի կերպարի մասին խոսելիս հիմնականում նկատի կունենամ ուսուցչուհուն: Ողջ մանկավարժական կազմից արական սեռի ներկայացուցիչներ են միայն տնօրենը, ֆիզկուլտուրայի, ռազմագիտության և աշխատանքի ուսուցման (տղաների խմբի) ուսուցիչները: Պատմության ուսուցչուհու խոսքով՝

¹³ Ո. Օստոյան, Գեղեթային խնդիրները մանկավարժական (դասախոսների, ուսուցիչների և աղագա մանկավարժ ուսանողների) միջավայրում // Բաց հասարակության հիմնադրամներ – Նայաստան, էջ 17-18, https://www.osf.am/wpcontent/uploads/2014/01/Policy_paper_Ruzanna_Tsaturyan.pdf:

«Երեխաները չեն ընդունի տղամարդ գրականության ուսուցչի: Երեխաներից շատերն ասում են՝ տղամարդը լիքի ԵՇԳ¹⁴ տա»¹⁵: Այսինքն՝ կանանց մեծ ներգրավվածությունը այս բնագավառում դայանանավորված է ոչ միայն ընտանիքում կնոջ գործառույթներով, այլև մանկավարժության՝ որդես ֆեմինին մասնագիտության ընկալմամբ: Նտուաբար ուսուցչի կերտարում առանցքային են կնոջը բնորոշ հատկանիշները, շեշտված կանացիությունը՝ միևնույն ժամանակ սեռականության բողարկմամբ:

Կրթական միջավայրը դատմականորեն կիրառել է հագնվելու ավանդույթներ (ակադեմիական հագուստ, խիստ դրես կոդ, համազգեստներ), որոնք միտված են թաքցնելու, ծանկելու մարմինը, որ կենտրոնանան միայն մտքի վրա, մինչդեռ նույնիսկ եթե բոլորը միանման հագնված լինեն, նրանք դասավանդում են իրենց մարմնի միջոցով¹⁶: Նտուագոտությունը ցույց է տալիս, որ ըստ մանկավարժների՝ իդեալական ուսուցչուհին դեռ է դրսևորվի որդես օրինակելի կին, այն է՝ խնամված, բարետես, զուտ, կոկիկ, հոգատար վարվեցողությամբ և այլն: Իսկ տղամարդ ուսուցիչը կոստյումով և վերնաշառիկով մարդն է՝ խիստ կեցվածքով, ազդեցիկ դիրքով: Պատահական չէ, որ դրոցոցի տնօրենը և ուսումնական մասի վարիչը տղամարդիկ են, իսկ գործող տնօրենի թոշակի անցնելուց հետո նոր տնօրեն ընտրելու մասին խոսակցություններում շրջանառվում է դարձյալ տղամարդ թեկնածուի անուն՝ որդես համադասալսանության անառարկելի դրույթ նշելով հենց սեռը:

Ռուզաննա Ծատուրյանը «Գեներային խնդիրները դասախոսների, ուսուցիչների և աղագա մանկավարժների միջավայրում» հետազոտությունում դարգում է, որ դրոցոցում շրջակա միջավայրի մաքրման աշխատանքների կազմակերպման սկզբունքների մշակման, դասարանում աշակերտների տեղաբաշխման հետ կաղված հարցադրումներում ուսուցիչները առաջարկում են դատրաստի արական կամ իգական վարքի մողելներ: Դրանք որդես կանոն կրկնում և վերարտադրում են հասարա-

¹⁴ ԵՇԳ - Նախնական գիմվորական դատրաստվածություն:
¹⁵ Աշխն Նակոբյան, ԴԱՆ, 2018, ուսուցչուհի, 25 տարեկան:
¹⁶ C. Mitchell, S. Weber, Reinventing Ourselves as Teachers. Beyond Nostalgia, London: Taylor & Francis Group, 1999, p. 127.
¹⁷ Ռ. Ծատուրյան, Գեներային խնդիրները մանկավարժական (դասախոսների, ուսուցիչների և աղագա մանկավարժ ուսանողների) միջավայրում, https://www.osf-am/wp-content/uploads/2014/01/Policy_paper_Ruzanna_Tsaturyan.pdf, էջ 35:

կական ընկալումներում ընդունված մոդելները¹⁷: Ուշ Խորհրդային Չեխոսլովակիայի դոկտրինայի և առօրյային վերաբերող մի հետազոտությունում նկարագրվում է դեռք, որտեղ աշակերտներին առաջարկվում է մասնակցել հեծանվավազքի մրցումներին՝ նախադեպ դիմելով և՛ տղաներին, և՛ աղջիկներին, սակայն երբ ոչ ոք ցանկություն չի հայտնում մասնակցելու, ուսուցչուհին սկսում է քաջալերել տղաներին համարձակորեն գրանցվել և մասնակցել մրցմանը¹⁸: Ստացվում է, որ շնայած չկա դաշտոնական տարբերակված դասանց տղամարդկանց և կանանց՝ վարքի վերաբերյալ, հանրային ընկալումները ձևավորում են դա:

Այդ տարբերակվածությունն ընկալումներում ազդում է ոչ միայն կերպարի ձևավորման կամ հագուստի ընտրության վրա, այլ նաև մեծ դերակատարում ունի մանկավարժների մասնագիտական ընտրության ժամանակ: Իմ հետազոտության մեջ ներգրավված երիտասարդ ուսուցչուհու մեկնաբանությամբ՝ ինքը չի կարող լինել դոկտրինայի տնօրեն, քանի որ ավելի տարեց ուսուցիչները չեն ընդունի իրեն՝ որդես վերադասի, իսկ ահա տղամարդ ուսուցչի դեռքում ընդունելի է: Ոչ միայն սեռերի հասարակական վարքային մոդելներն են աշխատում, այլ նաև դերերն՝ ըստ տարիքային խմբերի: Որոշ դեռքերում ամուսնական կարգավիճակը ևս ազդում է ուսուցչի ստատուսի վրա: Կարելի է արձանագրել, որ գեներային դերերի, տարիքային խմբերի և սոցիալական կարգավիճակների վերաբերյալ հասարակական մոդելները առանցքային դեր ունեն ուսուցչի կերպարի ձևավորման, ինչդեպ նաև նրանց ինքնընկալման հարցում: Ուսուցիչները համոզված են, որ քաջատեղյակ են այլոց՝ ուսուցչի կերպարի մասին ունեցած դատկերացումներին¹⁹:

Ես հիշում եմ իմ դասղեկին, որ Երևանից եկել էր գյուղ դասավանդելու, աղա ամուսնացել և մնացել էր գյուղում, մի ամբողջ կյանք աշխատել նույն դոկտրինայում: Երբ արդեն ավարտական դասարաններում էի սովորում, նա ինձ դատմեց, որ իրենց ընտանիքում եղել են դժվար դասեր, երբ ինքը ստիպված է եղել ներգրավվել գյուղատնտեսական գործերում՝ մշակել տանը կից հողակտորը: Եվ

¹⁸ L. Oates-Indruchova, *A Dulled Mind in an Active Body: Growing Up as a Girl in Normalization Czechoslovakia // Childhood and Schooling in (Post) Socialist Societies, Memories of Everyday Life*, ed. Iveta Silova, Nelli Piattoeva, Zsuzsa Millei, Cham: Palgrave Macmillan, 2018, p. 45:

¹⁹ C. Mitchell, S. Weber, op. cit., p. 125.

նա դա արել է միայն զիջերները, որոշեցի ոչ ոք նրան չտեսնի իր դիրքին և կերտարին ոչ համադատասխան աշխատանք անելիս: Ինչ-որ արտոնյալ, առանձնադեպ հարգված, անգամ ակնածանքի արժանացող կարգավիճակ ունեւր ուսուցիչը, և այս մասնագիտական խմբից շատերն էին դա կարևորում ու փորձում կրել հնարավորինս «արժանադատիվ ձևով»: Այս ուսուցիչները մինչ օրս հետևողականորեն փորձում են համադատասխանել մանկավարժի ընդունելի կերտարին: Շույնիսկ այնուիսի հանգստի գնալիս, որը ենթադրում է սոդորտային կամ կիսասոդորտային, ազատ ոճի հագուստ, խորհրդային տարիներից մինչև այսօր դասավանդող ինձ հայտնի ուսուցիչներից շատերը դժվարությամբ են հրաժարվում շոյարից և տոնական սանրվածքներից, քանի որ իրենց տատկերացմամբ առօրյա հագուստով և առանց շոյարի ներկայանալը խախտում է ուսուցչի կերտարը: Որքան ինձ թույլ են տալիս դորոցից դուրս արված դիտարկումներս, կարող եմ ասել, որ ոչ միայն դորոցում, այլև առհասարակ նրանք նախընտրում են ներկայանալ հիմնականում այդ կերտարով:

Նետխորհրդային ուսուցիչը բավականին ազատ է այս կադադարներից, բայց ոչ ամբողջությամբ: Կարծես, այդ կերտարը կորցնելու ճանադարհին լինի, թեև հնարավորինս փորձում է փրկել վերջնական կորստից: Դիմադրելու միջոցները տարբեր են, դրանցից երկուսը վերաբերում են արտաքին տեսքին և աշակերտների հետ շփման մեջ հիերարխիայի դաստիարակմանը: Նաճախ այս երկուսը փոխարացնող են:

Ուսուցիչներն աչքի են ընկնում իրենց հատուկ խնամված տեսքով: Նիմնականում շրջագգեստներով և կիսաշրջագգեստներով են, որոնց երկարությունը միջին տարիքի և երիտասարդ ուսուցիչների մոտ կարող է ծնկից մի փոքր վեր բարձրանալ, առանց աչք գարնող լանջաբացվածքների: Ավելի տարեցների մոտ ծնկներից վար իջնող կիսաշրջագգեստներ են և ուսերն ամբողջությամբ ծածկող վերնաշադիկներ: Կոշիկը և շոյարը ամենակարևոր ատրիբուտներն են, որոնց միջոցով նրանք նկատելիորեն տարբերվում են աշակերտից: Աշակերտները կարող են կրել նմանատիղ գգեստներ, վարսերը հարդարել նույն ոճով (շատ հաճախ բարձր դասարաններում այդդես էլ անում են), սակայն բարձրակրունկ հագնել և շոյարվել չեն կարող: Ա. Գուսեյնովան նշում է, որ եթե

²⁰ А. Гусейнова, նշվ. աշխ., էջ 142.

աշակերտը ավելի թանկարժեք է հագնված, դա նվաստացնում է ուսուցչին²⁰: Ըստ էության այս բոլոր տարբերանշանները խոսում են շեշտված աստիճանակարգի մասին:

Վերջին ամիսներին, հատկապես քաղաքական իրավիճակի փոփոխությունների Ֆոնին, ակտիվ քննարկման և կատակելու նյութ էին դարձել ուսուցչի կամ դոկտորի տնօրենի սանրվածքները: Ֆեյսբուքյան մի գրառման մեջ ասվում է. «Նետարքիր է, երբ գնում են վարսահարդարում սովորելու՝ որդես առանձին ոճ, ուսումնասիրում են նաև «դոկտորի դասատուի սանրվածք» առարկա²¹»: Իսկ իմ գործընկեր Մանանա Մովսեսյանը, որ նաև հագուստի խանութում աշխատելու փորձ ունի, տատանում է, որ իրենք մանկավարժներին երբևէ չեն առաջարկում ուսերի և լանջի մեծ բացվածքով զգեստներ, քանի որ գիտեն, որ վերջիններս այդդիսի հագուստ չեն ընտրի: Այս բնորոշումները դուրս են մեկ դոկտորի սահմաններից և տարածվում են շատ այլ դոկտորների մանկավարժների վրա ևս:

Երբ մի առիթով գրուցում էի ոսկյա և արծաթյա զարդերի արտադրությանը և վաճառքով զբաղվող մի կնոջ հետ, նա ասաց, որ *իր հաճախորդները ուսուցիչներն ու բժիշկներն են, այն կատեգորիան, ով չի կարող իրեն թույլ տալ շատ թանկարժեք զարդեր, բայց նաև կարևորում է իր ամենօրյա տատանած տեսքը: Ամեն օր տարբեր արդուզարդով ներկայանալու համար նախընտրում է արծաթյա կամ արծաթյա ոսկեջրած զարդեր գնել* [չարադրանքը՝ Ա.Ն.]: Ուսուցիչներից մեկը գտնում է, որ իրենք լիքեր է արտաքինով տարբերվեն աշակերտներից, իսկ մեկ այլ դոկտորի ուսուցչի խոսքով՝ աշակերտները իրեն չեն հարգի, եթե ինքը համադատասխան հագուստով ու շղարով չներկայանա²²: Այս զգաստությունը, ուսուցիչ – աշակերտ տարածության մեծացումը օգտագործվում է դասարանն ավելի կառավարելի դարձնելու համար²³: Այսինքն՝ արդուզարդը գործիք է հիերարխիան շեշտելու, ինչը ծառայեցվում է վերահսկողություն ադաիտվելու համար:

²¹ Մեհառ օգտատիրոջ ֆեյսբուքյան գրառում, 13.10.2018, վերջին դիտումը՝ 20.10.2018:

²² Դատելով գրուցի կոնտեքստից՝ «համադատասխան հագուստ» արտահայտության տակ հասկացվում է խիստ, բայց միևնույն ժամանակ կամացիություն ընդգծող հագուստ, շղար և արդուզարդ:

²³ Դասարանը կառավարելն ուսուցիչների մոտ երբեմն այնքան է կարևորվում, որ գրեթե գլխավոր նշանակում է դառնում, երբեմն էլ ցուցամիջ՝ գնահատելու ուսուցչի մասնագիտական որակները:

ները: Եթե նախկինում յուրաքանչյուր ընտանիք իր առանձին տնտեսությունն էր վարում՝ առանց վարձու աշխատողի ինստիտուտի, առաջադասարար ավելի հակված են մեծ տնտեսություններ վարելու՝ վարձու աշխատողների ներգրավմամբ, որտեղ մեծ դեր ունի հենց դոկտրինային երեխաների, մասնավորապես՝ տղաների մասնակցությունը, որոնք ընդգրկվում են որդես վարձու աշխատողներ: Այսինքն՝ դոկտրինայի դուրս կա տարածք, որտեղ ուսուցիչն ու աշակերտը մի կողմ են դնում ֆորմալ շփումները, մտնում են տնտեսական հարաբերությունների մեջ: Իհարկե, սա կտրում է ուսուցչի մասին առաստիակականացված դատկերացումները, վերացնում է շփման մեջ առկա տարածությունն ու զգուշավորությունը:

«...Ես չեմ հանգստացել բացարձակ, ես կողմնակի աշխատանքի եմ գնացել, որը նույնիսկ ամոթ ա ուսուցչի համար: Նա, օրինակ ես տեևց եմ մտածում, ասենք, իմ բախտը բերել ա, ես գնում եմ իմ դատարարի մոտ աշխատանքի [...]: Տես ուր ա գնում, ծայրահեղությունից ծայրահեղություն ա գնում: Ես ոչ մի աշխատանք չեմ թերագնահատում, բայց ամեն դեպքում ուսուցիչը ուրիշ, չէ՞, դետք ա լինի, լրիվ ուրիշ մակարդակի դետք ա լինի, ուրիշ բարձրության վրա դետք ա լինի»²⁴:

Նաջորդ գործոնը, որ «մոտեցնում է» ուսուցչին և աշակերտին, նոր տեխնոլոգիաներն են: Ուսուցիչներն ավելի հասանելի են դառնում սոցիալական ցանցերի շնորհիվ, ֆեյսբուքյան էջեր են վարում, որտեղ կարելի է հետևել նրանց ընտանեկան կյանքին, ժամանցին և այլն: Աշակերտներն ու ուսուցիչները անկաշկանդ ձևով փոխադարձաբար հավանում («լայքում») և մեկնաբանում են միմյանց գրառումներն ու լուսանկարները: Այս դաստիարակող կոտրվելը բոլորովին զարմանալի չէ, քանի որ երեխաները մեծերից ավելի արագ են յուրացնում համացանցային տիրույթն օգտագործելու հմտությունները, հետևաբար ինչ-որ տեղ կարող են հայտնվել փորձագետի և սովորեցնողի կարգավիճակում՝ լսախտելով սովորական հիերարխիան, ու միևնույն ժամանակ լինել ավելի բաց և անկաշկանդ: Մա հանգեցնում է նոր տեսակի շփումների՝ համատեղ լուսանկարների տարածում, սեֆիներ ուսուցիչների հետ և այլն:

Դասադրոցեսում նույնդեպ կա հարաբերությունների «հեղաշրջում»: Եթե նախկինում աշակերտի հետ ֆորմալ շփումը օգ-

²⁴ Աշխեն Նակոբյան, ԴԱԵ, 2018, ուսուցչուհի, 44 տարեկան:

Աշխատանքի ձևաչափը թույլ չի տալիս անդրադառնալ բոլոր այն գործոններին, որոնք ազդում են ժամանակակից ուսուցչի կերպարի վրա, ուղղորդում նրան իր գործունեության ընթացքում՝ ընդհանրացնելով դասկերը ողջ հանրադասության համար, այնուամենայնիվ, փորձեմ ամփոփել դրանցից առանցքային դերակատարություն ունեցողները, որոնք նշմարվեցին ուսումնասիրածս դեղքի օրինակում: Պետք է նշել, որ խորհրդային տարիներից ժառանգած դասընթաց ուսուցչի կերպարի նկատմամբ, «անձեռնմխելիությունը» և ակնածանքը շարունակում են արդիական մնալ մանկավարժական միջավայրում և վերարտադրվում են առավելադեպ հենց իրենց՝ մանկավարժների կողմից: Այս ինքնության նշանները նկատելի են՝ անկախ ուսուցչի տարիքից. երբեմն ավելի շեշտված են երիտասարդների մոտ, քան համեմատաբար տարեց մանկավարժների շրջանում: Նկատելի է, որ այս կադադարը բավականին սահմանափակում է ուսուցչի ինքնադրստորումը:

Նաջորդ գործոնը վարձատրության խնդիրն է: Սա իմ գրուցակից մանկավարժների միջավայրում ամենաշատ քննարկված խնդիրն է, որը սահմանափակում է ուսուցչի գործունեությունը՝ դրդելով նրան առօրյայում ավելի կարևորել ոչ մասնագիտական աշխատանքները, որոնք ընտանիքի հիմնական եկամտի աղբյուրն են: Ցածր վարձատրությունը առաջացնում է նաև որդես մասնագետ արժևորված շիներու զգացողություն: Դրա հետ մեկտեղ աշխատանքի ընդունվելու տարբերակները, աշխատանքի կազմակերպման ձևը, վարչարարությունը, որն ավելի շատ հիմնված է ստուգելու և վերահսկելու վրա, քան օգնելու, զարգացնելու ուսուցչի հմտություններն ու կարողությունները, չեն նդաստում նրա ազատ գործունեությանն ու աճին:

Եվ վերջին, թերևս ամենաազդեցիկ գործոնը աշակերտներն են: Քանի որ արդի կյանքի դահանջները չեն զուգահեռվում վերոնշյալ գործոնների հետ, ստեղծվում են զուգահեռ իրականություններ կամ ինչ-որ անցումային իրավիճակ, որտեղ բախվում են խորհրդային արժեքները, հետխորհրդային կոռուդացված վարչարարությունը (ոչ ուսուցիչ - աշակերտ, այլ դոկտոր և վերադաս կառույցներ) և ժամանակակից տնտեսության, աշխատաշուկայի, կյանքի կազմակերպման առօրյա դահանջները: Վերջինի կրողը աշակերտներն են, որոնց դահանջներն ու արժեքները դար-

տաղրում են ուսուցչին մի կողմ դնել նախկին աշխատելաձևն ու գործիքակազմը և ինքնուրույն տարբերակներ փնտրել՝ բավարարելու թե՛ իր աշխատանքը ստուգող ու գնահատող մարմիններին և թե՛ դրա անմիջական շահառուին՝ աշակերտին: Մա դժվարանում է հատկապես այն հանգամանքով, որ վերադասի ղահանջները քիչ են ադերսվում շահառուի կարիքներին:

Ինչդեռ ցույց է տալիս ուսումնասիրված դրոյրոցի օրինակը, արդյունքում ունենք մասնագետներ, ովքեր ինքնուրույն են փընտրում մեթոդներ, մշակում ծրագրեր և հնարավորությունների սահմաններում լուծում իրենց առաջ դրված խնդիրները: Միևնույն ժամանակ նրանք ուղղորդված և դարտադրված են՝ հետևելու ղաշտոնաղես ընդունված ծրագրային և վարչական ղահանջներին: Ուսուցիչների իմ ուսումնասիրած կենսագրությունները փաստում են, որ ի վերջո յուրաքանչյուրն այս խընդրահարույց իրավիճակից դուրս է գալիս՝ հենվելով իր մասնագիտական, սոցիալական նախասիրությունների և արժեքային համակարգի վրա: Ղատկաղես երբ խոսվում է գյուղական դըդրոցի մանկավարժական կազմի մասին, որոշիչ են դառնում կենցաղի կազմակերղման և սոցիալական հարաբերությունների որոշ առանձնահատկություններ, որոնք գրեթե բացառում կամ սահմանափակում են մանկավարժի, հատկաղես կին մանկավարժի ներգրավվածությունը մի շարք մասնագիտական գործընթացներին (օրինակ՝ հետագոտական աշխատանք, մասնագիտական կարողությունները գարգացնելուն միտված այլ քաղաքներում կազմակերղվող դասընթացներ և այլն), որոնք կարող են ոչ միայն խթանել մասնագիտական աճը, այլ նաև կոտրել ընդհանուր հիասթափությունը: Աշխատանքի ընդունվելիս մասնագիտական որակի երկրորդային դերը և ուսուցչի ողջ գործունեղյան ընթացքում կոռուղյոն և հովանավորչական սխեմաները չեն նղաստում մրցակցային ղայմանների ձևավորմանը: Մրան գումարվում է կանանց ծանրաբեռնված տնային աշխատանքը (ղայմանավորված ընտանիքում աշխատանքի սեռային դերաբաշխմամբ), և արդյունքում ունենում ենք հիմնականում մոտիվացիա չունեղող և իրենց աշխատանքում հետանկար չտեսնող մանկավարժներ:

The article is aimed at revealing the perceptions and attitudes of teachers towards their job. Taking into account the ongoing public discussion of teachers' work environment, the research intended to observe the issue from inside, scrutinizing teachers' own perception of their professional activity. Through biographic interviews and observations (including participant observation) conducted in a single school, the article discusses issues related to professional choice, employment motivation, as well as teacher status and reputation, in an attempt to show the change dynamics in the image of teacher from Soviet times until now. In a situation of numerous contradicting expectations and demands of different social groups and state institutions, the teachers are in an intermediate position of meeting the expectations. The constant public attention and control force them to stick to some standards and stay within an accepted image. These standards and the boundaries of the mentioned image include a deep contradiction between the soviet and modern perceptions of a teacher.

KEYWORDS: Teacher, pedagogue, status, reputation, profession

АШХЕН АКОПЯН

ОБРАЗ УЧИТЕЛЯ МЕЖДУ СОВЕТСКИМ И ПОСТСОВЕТСКИМ ВРЕМЕНЕМ НА ПРИМЕРЕ ОДНОЙ ШКОЛЫ

В исследовании делается попытка изучить восприятие своей профессии педагога и отношение учителей к ней. С учетом активных публичных дискуссий об учителях, была поставлена задача рассмотреть проблему изнутри, ознакомиться с позицией самих преподавателей относительно своей профессиональной деятельности. Исследование основано на биографических интервью и наблюдениях в одной из сельских школ Армении. Формат интервью позволил обсудить вопросы, связанные с выбором профессии, мотивацией устройства на работу в школе, положением и репутацией учителя, а также обозначить динамику трансформации образа учителя от советских времен до наших дней. Различные, подчас прямо противоположные ожидания отдельных слоев общества и гос. чиновников принуждают учителей занять некую усредненную позицию, чтобы в той или иной степени соответствовать всем этим ожиданиям. Будучи в центре общественного внимания и под постоянным контролем, учителя вынуждены соблюдать некоторые профессиональные стандарты и соответствовать определенному образу, что создает глубокие противоречия между советскими представлениями об учителях и современными ожиданиями и требованиями к ним.

КЛЮЧЕВЫЕ СЛОВА: педагог, учитель, статус, престиж, профессия

ԸՈղիամուր ծրագիր՝ ԳԱԱ ՀԱԻ-ի Բանավոր լուստնության կենտրոնի ուսուցողական ծրագիր

Աշխեմ Հակոբյանի Օսթրալիա՝ *Ուսուցչի կերպարը խորհրդայինի և հետխորհրդայինի միջև՝ մեկ դարոցի օրինակով*

Հարցազրույցի կարգավիճակ՝ բաց հանրային

Հրուցակցի ամուժ՝ Իշխան Պետրոսյան

Օժոնդամ թիվ՝ 1953 թ.

Հրուցավարի ամուժ՝ Աշխեմ Հակոբյան

Հրույցի տևողությունը՝ 42 ր.

Հարցազրույցի վայր՝ դրոց

Հրույցի ամսաթիվ՝ 5 հունիսի 2018 թ. և 4 օգոստոսի 2018 թ.

Հրույցի լեզուժ՝ հայերեն

Վերծամողի ամուժ՝ Աշխեմ Հակոբյան

Վերծամության ամսաթիվ՝ 10-20 սեպտեմբերի 2018 թ.

Ձայնագրության ձևաչափը՝ M4a

ՎԵՐԾԱՆՈՂԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Հրույցն ընթացել է դրոցի միջանցքներում և դասարաններում շրջելով, այդ ընթացքում գրուցակիցը ներկայացրել է մաև դատերին փակցված լուսանկարներն ու դաստառները: Տեքստը ձայնագրվել է ազատ խոսակցական լեզվով, այնուհետև մասամբ խմբագրվել, փոխարինվել գրականով:

ԶՐՈՒՑԱԿՑԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Իշխան Պետրոսյանը հետագուտվող դրոցի տնօրենն է: 1961-1968 թթ. սովորել է Արմավիր քաղաքի N17 գիշերօթիկ դրոցում, այնուհետև տեղափոխվել մույն քաղաքի N4 միջնակարգ դրոց: 1971-ին սկսել է աշխատել քաղաքային դիոններ տանը՝ որդես խմբավար, իսկ 1973-ին՝ N6 դրոցում՝ որդես ջոկատավար: 1975-1979 թթ. սովորել է Մանկավարժական ինստիտուտի Պատմության ֆակուլտետում: 1979-1981 թթ. սովորել է Յաթայի Հասարակական գիտությունների համալսարանի Դաստիարակչական բաժնում, որն ավարտելուց հետո վերադարձել է Հայաստան և աշխատել Արմավիր քաղաքի N1 միջնակարգ դրոցում՝ որդես փոխտնօրեն: 1988 թ.-ից մինչ օրս աշխատում է Մայիսյան գյուղի դրոցում՝ որդես տնօրեն:

ԱՍՓՈՓՈՒՄ

Հարցազրույց 1 (05.06.2018)

Ձայնագրություն 1

00:01:20-00:13:15 Կրթություն և կարիերա:

00:13:15-00:15:19 Աշխատանքը դրոցում, դրոցի ձեռքբերումները:

Ձայնագրություն 2

00:11:33-00:19:21 Մանկավարժական գործունեություն:

Ձայնագրություն 3

00:00:00-00:07:50 Մանկավարժության հետ կապված դիտարկումներ:

ՀԱՍՏՈՒՅՑՆԵՐ. ԳՐՈՂՈՒԹՅՈՒՆ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԵՏԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԾԱՆՈՒՄ

– Նիմա ինչի՞ց սկսենք:

– Ես ուզում եմ շատ հեռվից սկսենք [ծիծաղելով]:

– Աշխեն ջան, սկսի առաջին դասարան գալուց:

– Չէ՛, Ձեր առաջին դասարան գալուց:

– Իմ առաջին դասարանն ու քո առաջին դասարանը բռնում ա իրար էլի, դուք ո՞ր թվի ծնվածներն ե՞ք:

– [19]91:

– Չէ՛, [19]91-ի ծնվածներն ե՞ք դուք: Ի՞նչ կարևոր տարի ա...

– Բայց ես [19]90-ների հետ եմ ավարտել:

– Նա, հասկացա:

– Ուզում եմ իմանամ՝ Դուք ո՞նց եք որոշել, որ դոդոցը Ձեր տեղն ա, դոդոցի ժամանակ, որ Դուք աշակերտ էիք, ո՞նց էր դոդոցը: Սենց չէր, չէ՞:

– Ես... հա՛, հասկացա ինչ ես ուզում... Ուղղակի իմ ամբողջ ճանադար-
հը ուզում ես՝ ես քեզ ներկայացնեմ, անցման շրջաններում, թե դոդո-
ցը ինչդես է կայացել:

– Թեկուզ էն կարևոր կետերով, բայց դեմ չեմ. ինչքան մանրամասն,
էնքան ես ուրախ եմ:

– [ծիծաղում է] Միացրած ա՞:

– Նա:

– [19]50-ական թվականների վերջում և [19]60-ական թվականների
սկզբում Խորհրդային Միությունում սկսվեց գիշերօթիկ դոդոցների
կառուցումը: Դա հատուկ ծրագիր էր, որտեղ ընդգրկված էին և՛ սոցի-
ալադես անադախով երեխաները հետադատերագմյան շրջանի, և՛
առանձին բացառիկ ընդունակություն ունեցող երեխաները: Արմավիր
քաղաքում 1961 թ. բացվեց համար 17 գիշերօթիկ դոդոցը: Առաջին
շրջանավարտը էր դոդոցի էղել եմ ես: Ըստ քչերից միակը ես եմ էղել,
որ ընդունվել ու ավարտել է, որվիետև 61 թվականին 7 տարեկան երե-
խաները ընդունվեցին, [19]68-ին ավարտեցին 8-ամյա. նա 8-ամյա կր-
թություն էր տալիս: Ինձ բախտ վիճակվեց նաև լինել մի դոդոցում,
որտեղ աշխատում էին նվիրյալ մանկավարժներ բառիս բուն իմաստով,
որտեղ ընդգրկում էին նաև բացառիկ ընդունակություններով ուսուցիչ-
ների, որովիետև դա առաջինն էր, և էդ ութ տարիների ընթացքում ես
ստացա համակողմանի կրթություն, որովիետև էր դոդոցում ստեղծ-

ված էին, գուցե հանրադատությունում միակը, բոլոր դայմանները, որ աշակերտը մնում է դոկտրոցում, դաս է դատարաստում, բնում է, և էդ ուսուցիչների մի մասը նրան նաև ծնողին փոխարինեցին այդ տարիների ընթացքում:

– Երազանքի դոկտրոց ա:

– Ես անցել եմ էդ երազանքի դոկտրոցը: Բազմակողմանի կրթություն տվեց, որվհետև այդ դոկտրոցում ստեղծված էին այն բոլոր դայմանները, որոնք ցավոք սրտի այսօր... [երեխաներ են բարևում] Դքսում աղասե՛ք, էրեխե՛ք: Յավոք սրտի, այսօր հենց դոկտրոց էդ կարիքն ունի, այսօրվա դոկտրոցը, որ երեխան ստանա համակողմանի, բազմակողմանի կրթություն սկսած նրա մոտ տարբեր գեղագիտական, մարզական բացահայտումներից, սկսված ուսումնական կրթությունը: Եվ ես էդ բախտավորներից մեկն եմ, որ ստացա էդ ամեն ինչը:

– Ուրտեղի՞ց էլ մասնագետները էլ ժամանակ:

– Նանրադատության բոլոր տեղերից հրավիրեցին լավագույն մասնագետներին: Այդ ուսուցիչները նույնդես բնակվում էին դոկտրոցում:

– Իրանց տնից հեռու՞:

– Իրենց տներից հեռու էր, և այդտեղ բոլորին տեղ էին տվել, որ ուսուցիչները աղորում էին նաև երեխաների հետ: Մենք ունեինք դասավանդող ուսուցիչներ և ունեինք դաստիարակ ուսուցիչներ: Այսինքն դասերը ավարտելուց հետո ուսուցիչները վերջացնում էին, գալիս էին դաստիարակները փոխարինելու, և մինչև երեկոյան ժամը 8-ը կատարվում էր մարզական, սպորտային, դասադատարաստումներ: Դոկտրոցը հագեցված էր ամեն ինչով, այդդիսի խմբակ չկար, որ դու ուզենայիր ու շլիներ էդ դոկտրոցում: Եվ էդ տարիներին ես երախտավորներից մեկն էի: Ութերորդ դասարանում ինձ՝ որդես լուսանկարիչների, ինչդես ասում էին, Ֆոտո խմբակի ղեկավար, դոկտրոցն ավարտելուց հետո դասեցին էլ դոկտրոցում նաև աշխատող: Ես տեղափոխվեցի քաղաքի համար 4-րդ միջնակարգ դոկտրոց՝ ուսումը շարունակելու, բայց շարաթը 2 անգամ գալիս էի իմ դոկտրոց և երեխաներին լուսանկարչական խմբակն էի դարադրում: Այդ տարիների ամենամասսայական թերթերից մեկը «Պիոներ Կանչ» թերթն էր, էսօր դա կոչվում է «Կանչ», և այդտեղ հատուկ մի հոդված գնաց դոկտրոցի և այդ խմբակի մասին: Նստո բոլորս, դասարանում հավաքված էին հանրադատության բոլոր տարածաշրջաններից երեխաներ, և էսօր ես երջանիկներից մեկն եմ, որ սկսած մեր հյուսիսային շրջաններից մինչև Մյունիք ունեմ դասընկերներ, որովհետև այդտեղ եկել էին նաև այդ երեխաները՝ ուսումը շարունակելու: Մրձավիր քաղաքի ու շրջանի մասին էլ չեմ ասում: Ուղղակի էլ մեր բախտավորությունն էր, որ մենք Նայաստանի բոլոր շրջաններից ունեինք դասընկերներ: Դոկտրոցն ավարտելուց հետո 1971 թ. քաղաքի համար 4-րդ դոկտրոցի միջնակարգ կրթություն ստանալուց հետո սեղ-

տեմբերի մեկին ինձ նշանակեցին, նույն տարվա սեպտեմբերի մեկին, քաղաքային թիֆոներ տանը՝ որդես խմբավար, հիմա՝ կինո և լուսանկարիչների խմբակ: Եվ թիֆոներ տանը աշխատելու տարիներին ես ահագին մոտիկից ծանոթացա, լավ գիտեի, բայց ավելի մոտիկից ծանոթացա նաև այ էդ հասարակական կազմակերպություններին, այ էդ թիֆոներական, կոմերիտական կազմակերպություններին, որովհետև այդ տարիներին դրանք մասսայական կազմակերպություններն էին դարձրում: Իր գաղափարախոսությամբ դա էր և դա էլ կար: Բայց էդ կազմակերպություններն ունեին շատ լավ նաև կազմակերպչական... և երևյալան բացահայտում էր իր բոլոր ընդունակությունները: Եվ 1973 թ. ես տեղափոխվեցի, սեպտեմբերին, քաղաքի համար 6 միջնակարգ դպրոց՝ որդես ջոկատավար: Էդ ժամանակ էր... հիմա էլ կա էդ հաստիքը, բայց էն ժամանակ մի քիչ ավելի լայն իմաստով էին էդ աշխատանքները կազմակերպվում: Ես բախտ ունեցա նաև աշխատելու քաղաքի այդ տարիների լավագույն ուսուցիչների կոլեկտիվի հետ, որոնք աշխատում էին 6 դպրոցում: Նախ Արտավազդ Սարգսյանը՝ որդես տնօրեն, նրան փոխարինեց Վրեժ Փիլոյանը: Եվ այդ 8 տարիները ինձ համար եղան կայացման տարիներ դարձրում, և վերջնականապես որոշեցի, որ իմ կյանքը կաղելու եմ մանկավարժության հետ: Էդ ժամանակից և անմիջապես 2 տարի հետո ընդունվեցի Մանկավարժական, էսօր՝ համալսարան, Էն ժամանակ՝ ինստիտուտի Պատմության ֆակուլտետը: 1979 թ. գերազանց, հեռակա-գերազանց, այդոյիսի հասկացողություն չկա, բայց ես մեր կուրսի միակն էի, որ բոլոր քննությունները հանձնել եմ 5-երով: Այնուհետև 1976 թ. Խորհրդային Միությունում տեղի ունեցավ ավագ ջոկատավարների առաջին միութենական հավաքը ամբողջ Խորհրդային Միությունից, և Նայաստանի դատվիրակության կազմում միակ ավագ ջոկատավարը, որովհետև 10 հոգի էր դատվիրակությունը, ինձ բախտ վիճակվեց Մոսկվայում մասնակցել այդ հավաքին, և այնտեղ շփվեցի բազմաթիվ իմ կոլեգաների հետ: Խորհրդային Միությունում այդ աշխատանքները բավականին լավ էին կազմակերպվում, հատկապես Ռուսաստանում: Եվ այնտեղ առաջին անգամ ես ծանոթացա նաև Արտեկ համամիութենական թիֆոներական ճամբարի դատվիրակությանը: Եվ 1979 թ. Նայաստանից 2 հոգով մեկնեցիք Արտեկ՝ Դրիմ, Նամամիութենական թիֆոներական ճամբարում այդ աշխատանքները կատարելագործելու և ծանոթանալու համար: Իմիջիայոց, իմ երկրորդ ընկերը իմ դասընկերներից էր՝ Նունե Մանուկյանը, այսօր Մեծամոր քաղաքի ավագ դպրոցի ուսուցչուհի է: Եվ երկուսով... Բայց Արտեկի դատմության մեջ միակն եմ էղել, որ 3 տարի անընդմեջ մնացել եմ այնտեղ աշխատելու, որովհետև զայիս էին, գնում էին... Էդ դայամանները շատ խիստ տայմաններ էին:

– 3 տարի Դրիմում:

– 3 տարի Դրիմում: Եվ այդ տարիներին էդ աշխատանքներին ավելի մոտիկից ծանոթացա, Դրիմում էլ՝ Յալտայում էլ ավարտեցի Նասա-

– Երկրաշարժի օ՞րը:

– Բայց, երկրաշարժի օրը, դա առավոտյան ժամը 9-ն էր, դեռ ոչ մեկը չգիտեին, դա 11-ը չէր ժամը, հասկանալի՞ ա, բայց դեռքերը ընենց զարգացան, որ հրամանը ստացա [19]89 թ. հունվարի 2-ին: Փաստացի, ոչ լուրջաբանաբար տնօրենն էի և առաջի դրոշմում ուսմասվար էի, համատեղում էի էլ երկու աշխատանքները:

[...]

– Ես ուղղակի ասեմ մի բան. Դրիմի բնությունը դա շքնաղ մի բնություն է՝ մշտադալար, արևադարձային բույսերով, և իմ նոդատակն էր՝ որտեղ գնամ աշխատելու, էլ բնությունը ստեղծել: Դա նոդատակ է եղել ինձ [ժողիտով]: Եվ երբ որ եկա Մայիսյան և տեսա էս ծառուղին, կարծես թե ինձ հիասթափեց էր, որովհետև Մայիսյանը, կամ Ժդանովի, կամ 2-րդ սովխոզի նշանաբանն էր ծառուղին, հա՞: [19]88 թ. սկսվեց համազգային շարժումը, [19]89 թ. սկսվեց ռազմական գործողությունները, [19]90 թ., իսկ 1993 թ. խիստ ձմեռը կտրել տվեցին ամբողջ էլ ծառուղին: Եվ ես տեսնում էի, թե էլ ծառերը ոնց էին լացելով տաղավա՞լում գետնին, էլ հսկա ծառերը: Բայց սրտիս խորքում ղահեցի մի նոդատակ, որ ինչ գնով էլ լինի, ղտի էս ծառուղին ես վերականգնեմ, և 2006 թ. սկսվեց և՛ ծառուղու վերականգնումը, և՛ դրոշմի կանաչադա՞տումը, և՛ մշակույթի տան բակում, դուք առաջի շրջանավարտն էիք, որ առաջի ծառերը տնկեցինք:

– Նա, հիշում եմ:

– Նիմա տեսնու՞մ ես ինչ ծառեր են դառել, հա՞, իսկ էն ժամանակ մի քիչ...

– Փոքր էին, մոք էինք անկել:

– Չէիք տատկերացնում էլի, թե ինչ են: Բայց ձեր 10-րդ դասարանի, էլ 9-ի և 10-րդ դասարանի անցման կետում մենք սկսեցինք այ էլ տեղից, հետո դրոշմի շրջակայքը սկսվեց և սկսվեց, 2000 թթ.-ից հանրադե՞տություն մտան միջազգային կրթական ծրագրերը, և առաջին ծրագիրը... Արի գնանք էն նկարների մոտ, որ ես ավելի հեշտ խոսեմ, հա՞:

– Գնանք:

– Առաջին ծրագիրը հանրադետությունում դա դրոշմների բարելավման ծրագիրն էր, ծրագրի արժեքը 4000 դոլար էր:

– Էդ ո՞ր թիվն էր:

– Դա 2000 թվականն էր, առաջին ծրագիրն է Նամաշխարհային բանկի հետ միասին, որ մենք սկսեցինք իրագործել: Եվ ծնողների ներդրումը 400 դոլար էր:

[Ճայնագրությունն ընդհատվում է, գրույցը շարունակվում է դրոշմի դահլիճում]

- Խո ղատահական շե՞նք կոցրել:
- Դե որդես երաժշտական լխոսքը ղատերին փակցված սկավառակների մասին էլ:
- Չէ՛: Երեք սերունդների միասնությունն է. սները դրանք իրենց ղաղերն են, կաղոյսները իրենց հայրերի ժամանակաշրջանն է, DVD-ն էլ իրենց ժամանակաշրջանն է:
- Էս կաղոյսները սներից տարբեր ե՞ն:
- Դրանք ժաղավեն, դրանք ձայնագրություններ են:
- Սները գիտեն, բայց կաղոյսները...[լավելի փոքր սկավառակներ են]
- Մհ, կաղոյսները դրանք ծնողների ժամանակվա նորություններն են, [19]80-90-ական թվականներինն են:
- Էն էլ [19]70՞:
- Չէ՛, [19]40-50-60 ական... ում տունը հիմա մոնես, մի բան կգտնես էղ ձայնաղմակներից: [...] Երելսաները միշտ հարց են տալիս, ասում են՝ դա ձեր ղաղերն են, ձեր հայրերն են, ձեր հայրերի և ձեր ժամանակաշրջանն է: Մանավանդ, որ դահլիճն էլ երաժշտական ուղղվածություն ունի, որոշեցի՞նք ձևավորել էղ տեսքով: Էս էլ մեր նախակրթարանն է՝ տաք ու սառը ջրով, բոլոր ղայմաններով: Գյուղաղետարանն էլ մի խումբ իր կողմից է բացել, ղահում: Մենք մի նախակրթարան ունենք, նախաղորոցական, իսկ գյուղաղետարանը ֆինանսավորում է նաև մեկ խումբ 3-4 տարեկանների:
- Մոտավորաղես տարին մեկ միլիոն, հա՞՞:
- Մեկ միլիոն 400 հազար աշխատավարձի և մնացած ծախսերի համար գյուղաղետարանը տալիս է: Շատ լավ է, մենք շատ գոհ ենք: Ես դրա համար էլ ասեմ, Մովսիսյանի հետ մենք աշխատում ենք արդեն... արդեն 28 տարի, հա՞, և էղ նաև խոսում է դրա մասին, թե ինչքան է համագործակցությունը, որ 28 տարի երկու մարդ կարող են միասին աշխատել, որովհետև հանրաղետությունում դու չես գտնի ուրիշ տեղ, որ գյուղաղետն ու դրոցի տնօրենը 28 տարի համերաշխ լինեն, որովհետև նրանք միշտ ինչ-որ մի տեղ ընդդիմություն են մեկը մյուսին դուրս գալիս տարբեր ղատձառներով: Բայց ես գոհ եմ իրենից, որ շատ համեստ, խելոք, սուս, հնարավորոթյան սահմանում անում է: Ինչքան ուզում են, թող դժգոհեն, բայց ես իրատես մարդ եմ, տեսնում եմ թե ինչ է անում: Գուցե շատ չի, բայց էղբան է հնարավորությունը: Եթե մի բան ես տալիս, դա էլ մեծ թիվ է, էղ թիվը չի, որ որոշում է ամեն ինչը:
- Գյուղի բյուջեն փոքր է:
- Կիմա էղ մարդը տալիս է, էղ մարդը մի խումբ էղ ղահում է: Մոտավորաղես 45 երելսա փողոցից կտրվում, գալիս են մանկաղարտեղ: Եվ

դա արդեն մեծ բան է իրենց սնունդով, ամեն ինչով: Եղար՞վ, Աշխեն ջան: Աշխեն ջան, ի՞նչ մնաց բեզ: Նա, ասեմ, 2010 թ. դոկտոցը Արմավիրի մարզի լավագույն դոկտոց է ճանաչվել:

– Նա, հիշում եմ:

– 2017 թ. դոկտոցի տնօրենն է ճանաչվել մարզի լավագույն: Ես ասեմ, ուղղակի շատ լավ կլներ, որ վերանորոգված... Այս ներքին հարդարման աշխատանքները լրիվ մեր ձեռքով են արվել, բայց 2013 թ. տանիք, լատուհաններ, ջեռուցում: Իմիջիայլոց, մարզում առաջիններից մեկն է, որ դոկտոցը ունի ջեռուցման համակարգ:

– Ըստ լավ ա, որ աշակերտը սենց լայման ունի:

– Սա էլ մեր 85 ամյակն է, 2017 թ. դոկտոցը նշեց իր ծննդյան 85 ամյակը: Մենք վերցրել ենք ամբողջը: Բոլոր դասառիկներով ներկայացրել ենք անցած 80 տարիների, 85 տարիների մեր աշխատանքը:

[...]

– Սա մեր առողջ աղբյուրակերտի սենյակն է: Սա առողջ աղբյուրակերտի ծրագրով ենք շահել: Դոկտոցի աշակերտները դահում են մահ 14 հատ հորթեր:

– Աշակերտները:

– Ահա, Նեյֆեր կազմակերպությունը դոկտոցում բացեց 2012 թ. 7 խմբակներ: Մեկը գյուղատնտեսական ուղղվածություն ունեք: Բերեցին, հորթեր տվեցին սոցիալադես անադառովներին՝ լայմանով, որ ծնված հորթը փոխանցելու է հաջորդ աշակերտին: Եվ հիմա արդեն երկրորդ սերունդն է, արդեն երրորդ սերունդն է, որ փոխանցում են: Դե դատկերացրու, սկսել ենք 7-ից, հիմա 14, հիմա մի հատ էլ կլնի, կլնի 21 հորթեր ընտանիքներին տվել ենք:

– Այսինքն կովեր ունեն իրանք:

– Մենք հորթն ենք տվել, կով է դառել, ծնել է, փոխանցել է հաջորդ սոցիալադես անադառով ընտանիքին, և դրանք օգնում են էլի մեկը մյուսին:

[...]

– Ուզում էի իմանալի էրեսեքին որդես անհատ գարգացնելու Ձեր մտեցումը:

– Ուղղակի ասեմ, որ ուսումնական բնագավառը միշտ կայուն տեղ ա ունեցել: Դոկտոցի աշակերտներից 15-20 տոկոսը ամեն տարի ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություն:

– Իսկ լավագույնը Դուք ո՞նց եք դատկերացնում, առանց թվերի, ո՞նց եք դատկերացնում, որ դոկտոցից դուրս գա աշակերտը:

– Դոյրոցի հիմնական խնդիրը՝ երեխային դաստիարակել հայրենասեր քաղաքացիներ: Վիճակական խնդիրը դա է, իսկ սովորելը, դա բնությունից տված է, ուղղակի դոյրոցը լուրի հնարավորություն տա էր երեխայի մոտ զարգանա էր ուղղությունները, ինչ որ նրա մեջ կա: Եվ դոյրոցում մենք ստեղծում ենք էր յայնանները, էթե երաժիշտ է, երաժիշտ է, էթե նկարիչ է, նկարիչ, բացահայտվի իր մեջ էր լավ կողմերը:

– Իսկ էր հայրենասերը...

– Նայրենասիրությունը, ռուսական երգ կա մի հատ՝ «С чего начинается родина», ինչից է սկսվում հայրենիքը, տնի՞ց, հա՞ր, ծնողներից, հարևաններից ու հերոսներից: Էդա՞վ: Էդ առումով մեր գյուղը բացառիկ է, որովհետև ազգային ազատագրական շարժման ժամանակ՝ Արցախյան, մեր գյուղը միասնական ոտքի է կանգնել, և ամենաշատ զոհերը, համեմատաբար, էթե համեմատենք, մեր գյուղն է տվել: Էդա՞վ: իսկ 2014 թ. սահմանների յաշտոյանության ժամանակ զոհվեց նաև Սարգսի Մովսիսյան: Դու տեսել ե՞ս նրանց կաթինետները:

– Չէ [զնում ենք՝ նայելու]:

– Նրանց հիշատակը վառ յահելու համար մենք երկու կաթինետներ իրենց անումով կոչելուց վերանորոգել ենք ամբողջովին, և վերանորոգել են այդ տարվա շրջանավարտները՝ 2015-16 թթ. շրջանավարտները ու նվիրատվություն են արել՝ ի հիշատակ զոհված մեր տղաների: Էս Սարգսի սենյակն է, իր ընկերներն են արել:

– Ովքեր են արե՞լ:

– Սարգսի դասընկերները, հա, ամբողջը վերանորոգել են ու արդեն 4-րդ տարին է, որ դասարանը օգտագործվում է: Սարգսի մասին յատմող նյութերն են, հեսա կիջենք ներքև, իրա մասին կայքում էլ կա: Սա անկախության 29 ամյակին, նա՝ դարաբաղյան և բանակի 29 ամյակին, էս էլ Սարգսի մանկությունը՝ յատի թերթերով: Բայց իրա մասին մենք Էնթան նյութեր ունենք, հեսա կբացեմ մեր կայքը, կնայես, տեսնես կայքում ինչքան բաներ կան:

[...]

– Էս ռազմագիտության կաթինետն է:

– Ինքն ինչ ա՞նում ստեղ [կաթողիկոսի նկարը]:

– Գիտե՞ս ինչ կա, խորհրդանիշ որոյես: Միայն խորհրդանիշ: Վիշու՞մ ես ինչ տեղի ունեցավ Սարդարադատում, երբ Բաբոյանին չիկն կանչել: Խորհրդանիշ: Եկեղեցին միշտ, հատկադես միշտ մեր կողքին է էղել դարերում: Երեխան յատի իմանա նաև դա, որոյես խորհրդանիշ:

– Բայց ինքը... յետականության մա՞ս եք իրան համարում:

– Մեր յատմության մեջ յետականություն չունենալու յատմառով

եկեղեցին 500 տարի լայն է և ժողովրդին՝ որդես ղեկավարության խորհրդանիշ, եղա՞վ: Մենք շատ ղարտական ենք հայ լինելու համար մաս եկեղեցուն:

– Ես մի քիչ ուրիշ կարծիք ունեմ:

– Եթե Վազգեն Առաջինի նկարը փակցված լիներ, դու էդ հարցը չէիր տա:

– Չէ՛, ես հոգևորականին չեմ ասում, նկատի ունեմ՝ կրոնը ղեկավարության հետ ի՞նչ կադ ունի:

– Էն կադ ունի, որ դորոցում անցնում են մաս հայ եկեղեցու ղատմություն առարկան, մաս:

– Ո՞նց եք վերաբերվում դրան:

– Գիտե՞ս ինչ կա, ես դրան ղարտադրանք չեմ անում, բայց երեխան ինքը ղիտի ընտրի էդ ամեն ինչը էլի: Էդ հոգևոր... Նրան չես կարող էլի սեղմել: Ուղղակի երեխան ղտի իմանա իր եկեղեցու ղատմությունը. լավ, էդդես ասեմ: Որդես առարկա՝ 6-րդ դասարանից սկսած մինչև 12-րդ դասարան անցնում են ղետական ծրագրով: Էդ իմ կամքը չի արդեն:

[...]

– Ուրեմն, ես մեր մայիսյանցիները Արցախյան ղատերազմում, ամբողջը [ցույց տալիս է տալիս մի ալբոմ]:

– Նա՛, ես ինչ լավ բան ա:

– Ամբողջը, ոչ թե մենակ գոհվածների, այլ բոլոր մասնակիցների: Ստեղ իմ ու բոնը չկա էլի, «ոչ ոք չի մոռացել, ոչինչ չի մոռացել» ու սկըսվում է տղաներով: Սա էլ Ղայրենական մեծ ղատերազմի գյոտի մասնակիցները: Ճիշտ է, նրանք շատ չեն, բայց բոլոր դեղքերում երեխան ղետք է իմանա, որ իր գյոտից էլ Ղայրենական մեծ ղատերազմի մասնակից են: Կան, լրիվ նկարները կան: Ամբողջ ալբոմը ձևավորված է բոլորի մասին: Ղուշարձանի ձախ, եթե հուշարձանի մոտ կանգնում ես, դիմացը՝ ձախ կողմը, Ղայրենական ղատերազմի գոհվածներն են, աջ կողմը՝ Արցախյան ղատերազմի: Իսկ էստեղ բոլորը, մաս այն մարդիկ, որոնք կենդանի են մնացել: Ղիմա մանավանդ, որ ոչ մեկը չկա:

– Ղա, այսինքն էն հուշարձանը համատեղ ա Ղայրենականի հետ:

– Բա ո՞նց, բա ո՞նց: Ձախ կողմը Ղայրենական ղատերազմի մայիսյանցի գոհվածներն են, աջ կողմը՝ նրանք: Մեր մարգղետի մասին էլ ասեմ, մարգղետը մաս ոչ թե մենակ մարգղետ ա:

– Դահրամանյանն ա՞:

– Ոչ թե մարգղետ է, մաս նա գինվորական է և Դարաբաղյան ղատե-

րագմի մասնակից: Եվ գումարած, որ ոստիկանության գեներալ-մայոր: Երեխան ողտի իմանա իր մարզոթետի մասին: Ճանաչողական խնդիր է էլի, գոնե այստեղ: Բայց իմիջայրոց, մարզոթետը ամեն տարի, բացի էս տարվանից, մեր վերջին գանգին միշտ եկել է, միշտ մասնակցել է: Իսկ 2015-16 թթ. հատուկ, իսկ անցած տարի էլ՝ 85 ամյակին, 80 ամյակին... առանց իրեն մեր դորոցում... Ինքն է ասել՝ առանց ինձ ձեր դորոցում ոչինչ չաներ: Էդքան ցանկություն կա մասնակցելու: Ուզում ես դասարան մտնես:

– Ես հետո մի հատ էլ կրարձրանամ, կնկարեմ:

[...]

– Ամենաբարդը մանկավարժական կոլեկտիվում ուսուցիչների, տատմության ուսուցիչների վիճակն է: Ավարտել են սոցիալիստական հասարակարգում, դասավանդում են շուկայական հասարակարգում: Այն, ինչ որ սովորել էին Մանկավարժական համալսարանի Պատմության ֆակուլտետում, դա լրիվ այլ գաղափարախոսություն էր, և հիմա տատմության ուսուցիչներին արագ ղետք է վերադաստրաստել, նոր առաջ քաշված ժամանակաշրջանի համաձայն կարողանան իրենց գիտելիքները հաղորդել: Բայց բոլոր դեղքերում տատմության ուսուցիչները ուսումնական տարիների ընթացքում իրենց սովորած համալսարաններում անցել են նաև կադիտալիստական հասարակարգը, նրա առավելությունն ու թերությունները:

– Մովետի ժամանակ:

– Անոլայման, բա ընդդեմ Կարլ Մարքս, Կադիտալ ենք անցել չե՞, որի մեջ ամբողջովին բացահայտվում է կադիտալիստական աշխարհի և՛ դրոյունները, և՛ միևնույնը: Ընենց որ տատմության ուսուցիչները այսօր շուկայական հարաբերությունների դայմաններում ղետք է ցույց տան սոցիալիստական հասարակարգի նկատմամբ կամ կոմունիստական մենիշխանության ժամանակաշրջանում թույլ տրված սխալները, որ սոցիալիզմը 70 տարուց ավել շկարողացավ գոյատևել, հա՞: Սակայն էստեղ մի նրբություն կա՝ Չինաստանի օրինակը: Չինաստանը, լինելով կոմունիստական երկիր, կարողացավ շատ լավ ներքաշել նաև կադիտալիստական շուկայական հարաբերությունների էդ ամբողջ գործընթացը, և արդյունքը մենք տեսնում ենք, որ Չինաստանը վերջին 20 տարվա ընթացքում իր զարգացման տեմոդերով, լինելով սոցիալիստական-կոմունիստական երկիր, կարողացավ առաջ անցնել շատ զարգացած երկրներից: Ուղղակի մեր ժամանակահատվածում ուսուցիչները ղետք է կարողանան ճիշտ բացատրել երեխաներին և՛ անցած հասարակարգի, և՛ այս հասարակարգի... Եթե նախորդ հասարակարգում առողջադաստիությունը, կրթությունը, ամեն ինչը անվճար էր, հա՞, և դա առավելություն է: Այսօր էլ բոլորը ընդունում են, որ դա առավելություն է: Յավում եմ, որ այսօր Ղայաստանի Ղան-

մերն է» կարգախոսը տարածվեց վերևից՝ սկսելով մրցակցել նախորդի հետ և հարուցելով ոստիկանի կերպարի որոշակի փոխակերպում: Չնայած նրան, որ այդ խոսույթը տարածվեց շնորհիվ հիմնականում Ն. Փաշինյանի, այնուամենայնիվ, որոշ ակտիվիստներ այդ գաղափարի ինքնուրույն կրողն էին, և յուրաքանչյուրն իր ուժերի շափով փորձում էր այդ միտքը տարածել: Չրուցակիցս նկարագրում է այդ կարգախոսը ցուցարարների մեջ ներդնելու բարդ գործընթացը.

«Նենց առաջին գիշերը մի քանիսը խանգարում էին, առաջին գիշերը մնացինք Ֆրանսիայի հրատարակում:...Մոտակա երեք օրը մենք մեզ ճղում էինք ասելով, որ ժողովուրդ, եթե դուք խփելու եք, եկեք տարանջատենք դայքարի մենք... դայքարողների անունները: Մենք ասում ենք՝ եթե ստեղ ես, մեր հետ ես, ես խաղի կանոնները դա՛հի: Եթե մեր հետ չես, դու ասա, որ մեր հետ չես, չգիտեմ, մեջքիդ մի հատ տխրակ խփի, որ դու մեր հետ չես: Վիճա բո արածը մեր անունի տակ ա \$ռում:...Ու երբ որ բո մոտ ստացվում էր էդ տարանջատումը դնեիր, ու իրան բեռնացնում էիր քեզանից, ինքը, եղավ դեղքեր, որ էդ տղեն իրան շատ բան զգաց, վատ զգաց ահավոր, ու շատ հեռու մեզանից: Երբ որ մենք ասեցինք, որ երբ որ դու խփում կամ քՖուր ես անում, դու մեզանից չես, մենք էդ չենք անում»³⁷:

Այս կարգախոսով ջնջվում է հանրության ու ոստիկանների միջև գծված սահմանը. «թուրքի» փոխարեն նրանք այլևս հայտարարված են «մերը»: Չրուցակիցներիցս մեկը նկարագրում է, թե ինչպես ինքն ու ընկերուհին երթի վայրը փորձում են ճշտել ոստիկաններից.

«Ոստիկանների հետ իմ հարաբերությունները լավ ա եղել.. մենք Նիկոլին չէինք կարողանում գտնեինք... Գնացինք, մի հատ ոստիկանի ասում ենք՝ տեղյա՞կ եք՝ ուր են Նիկոլ Փաշինյանենք, ասում ա՝ Էրեբունիում: Ո՞նց Էրեբունիում: Տենց... Էն որ՝ լաավ, շնորհակալություն»³⁸:

Ըստ էության, ցուցարարների գտնվելու վայրի մասին հարցը նույն հաջողությամբ և ավելի շուտ կարող էր տրվել փողոցում գտնվող այլ անձանց, բայց ոստիկանից այդ տեղեկությունը ճշտելը ենթադրում է նրան որդեա յուրային ընկալելը:

³⁷ Սիդա Պառլիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Ա.Ա., 23 տարեկան:

³⁸ Սիդա Պառլիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Գ.Լ., 23 տարեկան:

Նամբարձույանից, Մարտիրոս Սարյանով, Մինաս Ավետիսյանով, բոլոր տարիների նկարահանված կինոնկարներով՝ «Նահադետ»-ով, թե «Նյուսիսի աստղը», ֆիլմեր, որոնք մասշտաբային էին մեր դաստնության մեջ: Էլ չեմ ասում, որ սիյուռքը հնարավորություն ունեցավ մեր օրերում, եթե նախորդ հասարակարգում այդդեպ ակտիվ չէր կարողանում, մեր օրերում շատ ակտիվորեն մասնակցում է երկրի ներդրումներին և այլն, և այլն: Դա ոլյուս է էսօրվա մեր հասարակարգի համար: Սկսած Զըրք Զըրքոյանից, Ջինիշյան հիմնադրամ, սկսած մեր մնացած բոլոր մեծահարուստներով, որոնք բավականին մեծ դեր կատարեցին նորանկախ Նայաստանի դատնության համար, չհաշված նաև սիյուռքահայերին, որոնք մասնակցեցին Դարաբաղյան դատերազմին հանձնին Մոնթե Մելքոնյանի և իրենց կյանքը տվեցին հայրենիքի ազատության համար: Պատմության դասատուի համար նաև մեծ հնարավորություններ կա լավ ներկայացնելու, ուղղակի դատնության ուսուցիչները դեռ քիչ են օր ծանոթ լինեն օրվա իրադարձություններին:

– Ես հիշում եմ, որ Դուք կադում էիք էսօրվան անդաման:

– Առավոտը լրիվ ուրիշ բան է, գիշերը՝ ուրիշ բան: Նատկադես մեր օրակարգում, էսօրվա նոր կառավարությունը, որ կազմվել է, ամեն օր նորություններ կան: Պետք է օգնել մեր իշխանություններին, բոլոր դեղքերում, անկախ կուսակցականից: Մենք տարիներ շարունակ կուսակցությունները առաջ ենք մղել, դրա համար էլ շատ վատ բանի ենք հանգել վերջում: Ժողովրդի շահը դա ամենաբարձրն է և դեռտության անվտանգությունը: Այստեղ երկխոսություն կամ բանավեճ լինել չի կարող: Մայիսյան հերոսամարտերը ցույց տվեցին, որ մենք և՛ Ավարայրում, և՛ Մայիսյան հերոսամարտերում թողեցինք մեր կուսակցական դատկանելիությունները և հայրենիքի փրկության համար... Էսօր էլ նույն ձևի: Էսօր էլ շատ բարդ իրավիճակ է տարածաշրջանում, ամեն բողե ամեն ինչ կարող ա տեղի ունենալ: Ընենց որ, դատնության ուսուցիչը մարտիկ տիտի լինի, ոչ միայն աշակերտների համար, այլ նաև մանկավարժական կոլեկտիվի համար, որովհետև երեխան առավոտ շուտ գալիս է նորությունով: Կարևոր չի, որ մաթեմատիկայի ուսուցիչ է, կարևոր չի նկարչության, դեռ քիչ է նա դատարաստ լինի երեխայի յուրաբանչյուր... Իսկ բոլոր դեղքերում դատնության ուսուցիչը հենարան է:

ԳԼՈՒԽ III

ԼՈՒԵՑԿԱԾ ՊԱՏԱՌՈՒԹՅՈՒՆԵՐ

- ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ
ԶԻՆՇԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱԶԲԵՐՈՎ
- ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ»

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱՁՄԸ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՉԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Հոգվածում փորձ է արվում վեր հանել 2016 թ. ապրիլին «Քառորյա
դատերազմ» անուն ստացած հայ-ադրբեջանական ռազմական
գործողություններից մասնակցած հայկական բանակի զինվորների
հիշողություններն ու կարծիքները կատարվածի շուրջ: Չինծառայող-
ների հետ ամանության տայմանով անցկացված կենսագրական
հարցազրույցները հնարավորություն տվեցին որոշակի տատկերա-
ցում կազմելու դատերազմական իրավիճակում հայտնված զինվոր-
ների՝ սեփական դերի, տայքարելու հիմնական շարժառիթների,
հրամանատարական կազմի հետ փոխհարաբերությունների, վեր-
ջիններիս նկատմամբ ունեցած վերաբերմունքի փոխակերպումների
և մի շարք այլ խնդիրների մասին: Հոգվածի նդատակն էր բարձրա-
ձայնել այս դատերազմին մասնակցած, բայց անհայտ մնացած չիե-
րոսացված շարքային զինծառայողների ադրումները, մտորումներն
ու հույզերը:

Բանալի բառեր՝ Ադրիյան կամ Քառորյա դատերազմ, ժամկետային
զինծառայող, զինծառայություն, հիշողություն, Ղարաբաղ, սահման,
դավադրության տեսություն

Էդ օրերը կոնկրետ իմ ներսում են բան փոխել: Մի քիչ չէ, 180 աստիճան կյանքս փոխվել ա»¹, – ինձ հետ գրույցում նշում է 2016 թ. ադրբեջանական լայնամասշտաբ հարձակումների ընթացքում (որը հետո անվանվեց «Ադրիլյան կամ Քառօրյա դատերազմ») հայ-ադրբեջանական սահմանին զինվորական ծառայություն իրականացրած Արամը²: «Դատերազմը փոփոխության է ենթարկում ոչ միայն քաղաքական իրադրություններ, սահմանների տեղադրություններ, տնտեսական և միջազգային հարաբերություններ, այլև ու նախևառաջ՝ մարդկային կյանքեր:

ԽՍՀՄ փլուզումից և անկախ Ղայաստանի հռչակումից ի վեր ծագած արցախյան կոնֆլիկտը տարբեր արտահայտումներ է ստանում գրեթե երեսուն տարի շարունակ: Եկող ամեն սերունդ ստիպված է առերեսվել այս խնդրին, իր սեփական մաշկի վրա զգալ դրա ծանր հետևանքները: 1994 թ. մայիսի հրադադարից հետո կոնֆլիկտային իրադրության սրացումները բազմաթիվ էին, բայց չէին վերածվել լայնամասշտաբ ռազմական գործողությունների մինչև 2016 թ. ադրիլ ամիսը: Ադրիլի 1-ին լույս 2-ի գիշերը՝ ժամը 03:00-ի սահմաններում, արցախա-ադրբեջանական գծի ողջ երկայնքով սկսվեցին ռազմական գործողությունները՝ հրետանու, զրահատեխնիկայի և ավիացիայի ներգրավմամբ: Մարտերն առավել թեժ էին արցախա-ադրբեջանական շփման գծի հարավային, հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններում: Ռազմական ինտենսիվ գործողությունները շարունակվեցին շուրջ չորս օր՝ մինչև ադրիլի 5-ը, երբ երկու կողմերի միջև ձեռք բերվեց հրադադարի համաձայնություն:

Այդ օրերին արցախյան կողմից առաջնագծում դատերազմական գործողություններին մասնակցում էին ժամկետային զինծառայողները, հրամանատարական կազմը, Ղայաստանից և Արցախից ճակատ մեկնած կամավորները, ինչդեռ նաև տեղի բնակչությունից հավաքագրված նախկին զինծառայողները, որոնց այդ դրախին ծառայության մեջ գտնվողներն անվանում են՝ «մոբ» (մոբիլիզացիա բառից): Արցախի Ղանրային հեռուստատեսությունն ադրիլի 3-ին հրադարակում է տեսանյութ, որում նշվում է, որ մոտ 200 կամավոր հավաքվել է Ստեփանակերտում՝ մեկնելու Արցախի առաջնա-

¹ Մամանա Մովսեսյան, ԴԱՄ, Երևան 2018, Արամ, 22 տարեկան:

² Այս և հողվածում առկա մյուս բանախոսների անունները փոխված են:

գիծ³: Ռազմական գործողությունների արդյունքում երկու կողմերն էլ ունեցան կորուստներ: Ըստ հայկական դաշտոնական տեղեկատվության՝ ադրիլ ամսվա ընթացքում հայկական զինված ուժերից զոհվել է 74 զինծառայող և 17 կամավոր⁴: Իսկ հայկական մամուլի որոշ հրատարակումների համաձայն՝ միայն այդ շորս օրվա ընթացքում հայկական կողմից զոհվել է ավելի քան 100 մարդ⁵:

Չնայած նրան, որ հրադադարից հետո էլ կային կրակոցներ, և վերջին տարիների ընթացքում բազմաթիվ զոհեր են եղել երկու կողմից էլ, այնուամենայնիվ, դատերազմի վերսկսման լուրը սարսափելի էր բոլորի համար: Նայաստանի, Արցախի բնակչության համար այս շորս օրերին կյանքը կանգ էր առել: Տարբեր վերլուծաբանների կարծիքով դատերազմական այս իրադրությունը էական ազդեցություն ունեցավ նաև հետագա հասարակա-քաղաքական զարգացումների վրա:

«UWC -ն ունի 17 դպրոց աշխարհի տարբեր անկյուններում: Նայաստան գալը մի տեսակ տատահական ստացվեց. ես գնացի հարցազրույցի՝ մտածելով, որ Չինաստան եմ գնալու: Ինձ հետ մի փոքր զրուցելուց հետո ասեցին՝ կարող եմ գնալ. շատ կարճ հարցազրույց էր, և դրանից 2 շաբաթ հետո ես հայտնվեցի Նայաստանում»:

14 տարեկանում Այլինը ընտանիքի՝ հոր և մոր հետ Անկարայից տեղափոխվում է Իզմիր: Նա փոխանակման կրթական ծրագրով մեկնում է Միացյալ Նահանգներ և այնտեղ ուսումն ավարտելուց հետո Թուրքիա վերադառնալով՝ շատ է ցանկանում նոր մշակույթ, միանգամայն տարբեր միջավայր բացահայտել: Այլինը սրտի խորքում փափագում էր, որ իրեն ուղարկեին ինչ-որ հեռավոր տեղ, ինչուես օրինակ՝ Չինաստան, բայց երագելով գնալ շատ հեռու՝ վերջիվերջո հայտնվեց հարևան երկրում:

Այլինի՝ Նայաստան գալու դատճարմներից մեկն էլ ֆինանսական էր. Դիլիջանի դպրոցը, ի տարբերություն UWC-ի մյուս դպրոցների, թուրք ուսանողների համար տրամադրում է բարձր կրթաթոշակներ: Այլինի ընտանիքը ֆինանսադես չէր կարող հոգալ ուսման հետ կառված ծախսերը, եթե օրինակ՝ ինչուես Այլինն է նշում, ինքը գնար Նորվեգիա կամ Ամերիկա: Մոտ երկու ամիս Այլինը փորձում էր հասկանալ՝ արդյոք արժե Նայաստան գալ՝ ինքն իրեն նույն հարցը տալով. «Նամոզվա՞ծ ես»:

Այլինի ծնողների համար հեշտ չէր իրենց դստերը Նայաստան ուղարկել: Դստեր մեկնելուց առաջ UWC-ի կողմից կազմա-

⁸ UWC-ն 17 տարբեր երկրներում, այդ թվում նաև Նայաստանում ունի դպրոցներ: Այն կրթության միջոցով փորձում է միավորել տարբեր ազգեր և մշակույթների՝ համուն խաղաղության և կայուն աղագայի: Ըստ UWC-ի ընդունելության ընթացակարգի՝ դիմորդները կարող են դիմել UWC-ի Բակալավրի միջազգային դիվիզիոն ծրագրին UWC-ի Ազգային հանձնաժողովների կամ Գլոբալ գնահատման ծրագրի միջոցով: Վերջինիս դեպքում կրթաթոշակներ չեն տրամադրվում, և դիմորդները կարող են ընտրել, թե որ երկրում են ցանկանում կրթություն ստանալ, իսկ առաջինի դեպքում դիմորդը կարող է դիմել կրթաթոշակի և թեև կարող է նշել UWC-ի՝ իր նախընտրած երկրի դպրոցը, բայց հանձնաժողովն ինքն է ընտրում դպրոցը: Դիմորդին առաջարկվում է որևէ կոնկրետ դպրոց, և նա կամ ընդունում է առաջարկը, կամ ոչ. այլընտրանք չկա: UWC-ի մասին ավելին տեղեկանալու համար տե՛ս www.uwc.org:

կերտված կողմնորոշիչ հանդիտման ժամանակ Այլինի մայրը անընդհատ ինչ-որ հարցեր էր տալիս՝ փորձելով հասկանալ բուրյուր հնարավոր ռիսկերը: «Նրանք չզիտեին՝ ինչ ակնկալել [Նայաստանից], ուստի և անհասկաստանում էին», — հիշում է Այլինը: Այլինի հայրը սկսում է դոկտրոցի մասին տեղեկատվություն փնտրել, սակայն քանի որ, ինչդեռ Այլինն է նշում՝ «բոլորի համար ավելի հեշտ է ստելը», նա սկսում է մտածել՝ «Նայաստանն ինչու՞ տեղ է կրթաթոշակ տրամադրի թուրք ուսանողներին»:

«Իմ ծնողների համար անհասկանալի էր դա, հետո տարզեցին, որ դա ինչ-որ տատահական դոկտրոց չէ, այլ UWC-ին, որը խաղաղության վրա է հիմնված, և ո՞րն է աշխարհում խաղաղություն ունենալու ավելի լավ տարբերակը, եթե ոչ հարևան երկիր գնալը, երկիր, որի գոյությունը [Թուրքիայում] ոչ որ չի ընդունում: Կարծում եմ՝ սա խաղաղության իրական իմաստն է, այդդեռ չէ՞»:

Ի տարբերություն Այլինի՝ հիսունամյա Էմրեն և նրա կինը մի շարք երկրների ցանկից մտադրված ընտրել են հենց Նայաստանը: Էմրենի կինը աշխատում է Նայաստանում Եվրամիության դատավիրակությունում, և մինչև Նայաստան գալը նրան առաջարկել են ընտրել գործուղման երկիրը:

«Մենք ընտրեցինք Նայաստանը: Նայաստանը հետաքրքիր էր ինձ համար, քանի որ այն մեր հարևանն էր, բայց մենք ոչինչ չզիտեինք դրա մասին: Կնոջս համար հետաքրքիր էր այս տարածքի աշխարհագրությունը, բացի այդ՝ Նայաստանի դատավիրակությունը փոքր էր, և կինս մտածեց, որ հեշտ կլինի այստեղ աշխատելը»:

Արդյունքում 2014 թ. Էմրեն և իր ընտանիքը՝ երկու զավակն ու կինը, տեղափոխվում են Նայաստան՝ շոք տարվա դայմանագրով:

Էմրեն ծնվել և մեծացել է Անկարայից ոչ հեռու՝ Չորումի տարածաշրջանի Իսքիլիի ավանում: Նրա ընտանիքն ստրել է, Էմրենի բնութագրմամբ՝ «խսկական գյուղական» կյանքով. նրա հայրը հացթուխ էր, իսկ մայրը՝ տնային տնտեսուհի: Նրանք զբաղվում էին գյուղատնտեսությամբ ու շատ անասուններ և այգիներ ունեին: Էմրեն մասնագիտական կրթությունը ստացել է Անկարայում: Նա մեկ տարուց ավել աշխատել է Մալաթիայում՝ այնտեղ իրականացնելով տեղական ժողովրդավարության զարգացմանն ուղղված ծրագիր: Չորս տարի շարունակ բնակվել է Ստամբուլում՝ աշխատելով տեղական մի ձախակողմյան քաղաքական

կազմակերպությունում: Այնուհետև Էմբեն նորից տեղափոխվում է Անկարա, որտեղ իր աշխատակիցներից մեկն էլ ծանոթացնում է նրան իր աղագա կնոջ հետ: Ուսանողական տարիներին Էմբեն շատ օտարերկրացի ընկերներ է ձեռք բերում, և ըստ նրա՝ դատաստանական չէր, որ նա 2008 թ. ամուսնանում է օտարերկրացու հետ. Էմբեի կինը հունգարացի է: Նախքան Նայաստան գալը Էմբեի ընտանիքը բնակվել է Լյուքսեմբուրգում՝ մեկ տարով, Արգենտինայում՝ երեք տարով, Նուրգարիայում՝ մեկ տարով և Բելգիայում՝ մեկուկես տարով: «Մենք մտածում էինք, որ այստեղ մի փոքր ցուրտ կլինի, բայց այստեղ ամեն իրավիճակ ավելի լավ է, քան Բելգիայում», — ծիծաղելով նշում է Էմբեն: Նա այժմ աշխատում է որդես լրագրող մի շարք լրատվամիջոցներում, մասնավորապես նյութեր է տատրաստում մի քրդական թերթի և Բելգիայում գտնվող մի հեռուստաալիքի համար:

ՆԱՐԵՎԱՆԻ ՏԱՆ ՃԱՆԱՊԱՐՏԻՆ

Մինչև Չինաստանից ավելի «հեռու» և Բելգիայից ավելի լավ դայմաններով Նայաստան գալը թե՛ Այլինը և թե՛ Էմբեն փորձել են տեղեկություններ հավաքել Նայաստանի և հայերի մասին, ինչը ենթադրվող երևույթ է արտասահմանում կարճաժամկետ, առավել ևս երկարաժամկետ կացության դարազայում: Սակայն սովորաբար եթե հարևան երկիր ես ճանադարհորդում, գոնե ինչոր չափով արդեն իսկ ճանաչում ես այդ երկիրը, բայց Նայաստանի և Թուրքիայի դեպքում դատկերը միանգամայն այլ է. մենք իրար չենք ճանաչում, և առկա իմացությունն էլ սահմանափակված է հիմնականում դատմական իրադարձություններով և դրանցից ծնված վախերով ու կարծրատիղերով: Նույնը վերաբերում է նաև հարևան Թուրքիայում աղողղ և՛ Այլինին, և՛ Էմբեին:

Էմբեն մի փոքր ջանք է գործադրում՝ վերհիշելու, թե ինչ գիտեր Նայաստանի մասին մինչև այստեղ տեղափոխվելը. «Շատ քան չգիտեի, բայց միայն այն, որ սովետական երկիր է, աղքատ երկիր է... նաև Ղարաբաղի իրավիճակի մասին...»: Էմբեի՝ Նայաստանի մասին ունեցած դատկերը ասես ենթադրում է, որ Խորհրդային Միության փլուզումից հետո Նայաստանը, ինչդեռ նաև այլ նախկին սնդամ դետությունները, դետք է որ հայտնված լիներ դժվար կացության՝ աղքատության մեջ, և «սովետա-

կանը» դառնում է ոչ միայն դատմության անցած մի շրջանի բնորոշում, այլև երկրի ներկա որակի բնութագիր՝ խորհրդային ծանր ժառանգությամբ: Մյուս կողմից Թուրքիայի հասարակությունը Նայաստանը ճանաչում է հիմնականում, ինչդեռ ընդունված է Թուրքիայում անվանել՝ «այսդեռ կոչված Յեղաստանության» և այդ ժամանակահատվածում հայերի կազմակերպած մի շարք ատյատամբությունների միջոցով, բայց 1990-ականներին նրանք առիթ ունեցան ևս մեկ «բացասական» փաստ գրանցել հայերի մասին՝ Ղարաբաղյան դատերազմը Ադրբեջանի հետ, ինչն այնտեղ բուռն քննարկումների ալիք էր ստեղծել:

Էմրեի՝ Նայաստանի մասին տեղեկատվությունը կաղվում է նաև Թուրքիայում քրդական հարցի հետ. «*Լսել էի նաև Երևան ռադիոյի մասին, այն մի տեսակ հայտնի էր Թուրքիայում, հատկադեռ քրդերի շրջանում. նրանք մասնավորապես լսում էին քրդերեն երգերը, դրանք ունեն հատուկ ոճ. Նայաստանը նրանց համար մշակութային երկիր է, և նրանք լսում էին այստեղից, քանի որ չէին կարող դա անել Թուրքիայից, կարող են ասել, որ հիմա էլ չկա ոչ մի տաշտոնական կայք [քրդերի համար]*»: Թուրքիայում քրդերը, ինչդեռ այլ փոքրամասնություններ, տուգանվում էին իրենց լեզուն կիրառելու համար: Նրանք իրավունք չունեին իրենց լեզվով ռադիոհեռարձակումներ և հեռուստահաղորդումներ թողարկել, ինչը թուրք ազգայնական խմբերը ամրագրել էին մի շարք քարոզարշավներով: Դրանցից էր, օրինակ՝ 1930-ականներին մի խումբ ուսանողների կողմից գործարկված «*Vatandaş, Türkçe Konuş*»⁹ («*Քաղաքացի՛, թուրքերեն խոսի՛ր*») շարժումը, որ Թուրքիայում աղբորդներին հրահանգում էր թուրքերեն խոսել՝ անկախ էթնիկական դատականությունից: Նրանց աջակցում էին նաև իշխանությունները: Առաջին անգամ քրդերին թույլ տրվեց իրենց լեզվով ռադիո և հեռուստահաղորդումներ հեռարձակել 2003 թ., իսկ մինչ այդ մարդիկ անգամ ձեռքակալվում էին իրենց լեզվով հանրային ելույթներ ունենալու դատաճառով: Եթե Էմրեն շլիներ ձախակողմյան տեսակետների կրող, դժվար թե քաջատեղյակ լիներ քրդական հարցից և Ղարաբաղյան խնդրից:

«Նայաստանում որոշ ծանոթ մարդիկ կային, նրանցից հարցնում էի Նայաստանում ուտելիքի, մշակութային և վարքագծային տար-

⁹ A. Labru, 1934 yazında İzmir: “Vatandaş Türkçe konuş”, AGOS, 08.12.2017, <http://www.agos.com.tr/TR/YAZI/19847/1934-YAZINDA-IZMIR-VATANDAS-TURKCE-KONUS>, 27.10.2018.

բերությունների մասին: Նաև այնուհետև հարց եմ տվել, թե արդյոք Նայաստանում հեռախոսային կառուցվածքի օգտերատորներ կա՞ն, թե՞ ոչ», — Նայաստանի մասին սակավ իմացությունը շթաբցնելով և իր իսկ ունեցած հարցերի վրա ծիծաղելով՝ հիշում է Էմբեն: Թեև Եվրամիությունը Նայաստանի մասին զեկույց էր տրամադրել Էմբենի կնոջը, որտեղ կային որոշ մանրամասներ, բայց դա բավարար չէր: Նավելյալ տեղեկատվություն Էմբեն փորձել է դարձել ընկերներից, թե Նայաստանում ինչ կարելի է հեշտությամբ գրտնել, ինչը՝ ոչ, գնումներ անելը հե՞շտ է արդյոք, կարո՞ղ է թուրքական թեյ և զեյթուն գնել և նման այլ հարցեր: Ըստ Էմբենի՝ ամեն ինչ չէր, որ Ֆանտաստիկ էր, բայց նա մոտավորապես գիտեր՝ ինչ կյանք է իրեն սղասվում: «Միայն մի բան կար, որ այնքան էլ վրստահ չէի. միգրոցե հասարակ մարդկանց հետ խնդիր ունենամ, քանի որ Թուրքիայի քաղաքացի եմ, միգրոցե սա Ձեզ համար անհասկանալի է»: Էմբենի այս վերջին արտահայտությանն ի դատասխան՝ ես սասցի, որ իհարկե հասկանում եմ: Եվ այդ, կարող էի հասկանալ, քանի որ ես ինքս ժամանակին նման աղորումներ ունեցել եմ, երբ Թուրքիա դիտի մեկնեի, և այդ աղորումը կոչվում է վախ: Ցեղաստանությունից հետո երկու հարևան ժողովուրդների միջև անհերքելիորեն կար և շարունակում է գոյություն ունենալ վախ կամ առնվազն զգուշավորություն¹⁰: «Փողոցում ոչ բոլորը կարող են հասկանալ, որ ես Թուրքիայից եմ... երբ դրսում ես [Նայաստանից դուրս] այդ կերպ շեռ մտածում: Ես կարծում էի, որ բոլորը... նորմալ է, քանի որ եթե եղել է ցե... ինչ-որ ցեղաստանություն կամ նման այլ բան, մարդիկ իրենց մտքում կարող են ունենալ թշնամու կերպար, ուստի կարող են իրենց վատ դահել: Այժմ շատ մարդիկ ինձ հետ միանգամից հայերեն են խոսում, այսինքն՝ ես նրանց համար օտարական չեմ», — դատում է Էմբեն: Թուրքիայում 1915 թ.-ի դեղբերը որդես ցեղաստանություն որակելը միշտ էլ խիստ քննադատվել է և արգելվել, ուստի մարդկանց գիտակցության մեջ, անգամ եթե նրանք դա ցեղաստանություն են համարում, դեռևս վարժեցված նստած են այդ բառի իսկությունը չեղարկող կամ փոփոխող բառերը՝ «այսուհետ կոչված», «ինչ-որ»:

Էմբենից ջանքեր չեն դահանջվում հիշելու Նայաստանում իր առաջին օրերի տղավորության մասին.

¹⁰ A. Nikoghosyan, Fear, Moush, Sweet Moush: Mapping Memories from Armenia and Turkey, dvv international 2013, p. 82.

«Երբ երեկոները քայլում էինք փողոցներով, այն տղավորությունն էր, որ ծովափնյա վայրում ենք, քանի որ մարդիկ այնքան հանգիստ են: Կինս էլ նույն տղավորությունն ուներ, քանի որ նման բան չես կարող տեսնել եվրոպական երկրներում կամ առնվազն Թուրքիայում: Մենք մեզ զգում էինք ինչդեռ ծովափում»:

Այլինի համար դժվար չէր հիշել, թե ինքը ինչ գիտեր Նայաստանի մասին մինչև այստեղ գալը.

«Կարծում եմ՝ Սփյուռքը ինչ-որ առումով հեռու է Նայաստանից, ու թեև Թուրքիայում հայեր կան աղողող, Նայաստանի մասին լսելը իրականում շատ դժվար է, այդ իսկ դատճառով ես շատ բան չգիտեի և հիմա ետ նայելով՝ կարծում եմ՝ ես ընդհանրադեպ բան չգիտեի: Միշտ միևնույն կողմնակալ... «Վա՛յ, եթե գնաս Էնտեղ, նրանք քեզ կտղանեն»: Անհեթեթություն է: Բայց մարդիկ մտածում են, որ բոլորն իրարատում են, սահմանը փակ է, և դետք է որ ոչ մի հարաբերություն չլինի [երկրների միջև], մարդիկ չեն գիտակցում, որ այն [հարաբերությունը] կա: Կարծում եմ՝ կուրություն էր. մարդիկ չէին ցանկանում տեսնել իրականությունը, ավելի հեշտ է ատելը, գիտեք, դետք չէ մտածել այդ տարածքում աղողող մարդկանց մասին, դետք չէ մտածել, թե ինչ է եղել անցյալում, դետք չէ մտածել քո երկրում աղողող այն մարդկանց մասին, ովքեր քեզ հետ են աղողում, հենց քո կողքին»:

Թեև Այլինը Թուրքիայում աղողող հայերին համարում է սփյուռք, տեղացի հայերն այդ կարծիքը չեն կիսում, քանի որ նրանք այդ երկրում են ծնվել, և եթե անգամ մի քաղաքից մյուսն են տեղափոխվել ցեղասպանության ժամանակ, դարձյալ նրանք աղողում են իրենց հայրենիքում: Այլինի շրջադաստում հայեր գրեթե չեն եղել, և ինչդեռ ինքն է նշում, Թուրքիայի հայկական համայնքը շատ փակ է, և մինչև լիարժեք չներգրավվես այդ համայնքի կյանքի մեջ, դժվար կլինի այդ մարդկանց շրջադաստում նկատելը: Իսկ հայկական համայնքի փակ լինելու արձատները, Այլինն ինքն է նշում, որ գալիս են դատմության դառը էջերից, երբ հայերը վախենում էին բարձրաձայնել իրենց ինքնության մասին, քանի որ «*ոմանք նրանց կարող էին դիտել որդես թշնամի*»¹¹:

Ի տարբերություն Էմբեի՝ Նայաստանի մասին Այլինին հուզող առաջին հարցերը եղել են թուրքերի հանդեպ հայաստանցիների վերաբերմունքն ու ընկալումները: Նրան հետաքրքրել է, թե

¹¹ A. Nikoghosyan, Fear, Moush, Sweet Moush: Mapping Memories from Armenia and Turkey, divv international 2013, p. 81.

որի հեղինակը՝ Էջե Թեմելքուրանը, լինելով Նայաստանում, հետո մեկնում է Ֆրանսիա և ԱՄՆ՝ սփյուռքահայերի հետ խոսելու, և վերադառնալով Թուրքիա՝ շարունակում է Նայաստանի մասին գրել: Նեոց այս գրքի էջերն էլ Այլինին օգնում են ծանոթանալ Նայաստանի հետ:

«Ես ունեմ նրա գիրքը: Կարծում եմ՝ այդ ժամանակ էր, երբ ես որոշեցի գալ Նայաստան, քանի որ շատ ավելի քան կա տեսնելու, քան ուղղակի հարցնելը, թե ինչդիսին է եղանակը, մշակույթը, ուտելիքը, ինչքան զարգացած է երկիրը, կամ ինչքան ազդեցություն... կամ քանի փոքրամասնություններ... գիտե՞ք՝ մնացած բոլոր հարցերը խաղից դուրս են գալիս, քանի որ մեն ինչիս կա [Նայաստանը] բացահայտելու, առնվազն ինձ համար»:

Թեև Նայաստանի և հայերի մասին գիրքն Այլինին օգնում է Նայաստան գալու որոշումը կայացնել, բայց այնուամենայնիվ մինչև Նայաստան հասնելը նա դեռ կասկածների մեջ էր. «Ես տարակուսում էի, մինչև էն դահը, երբ ժամանեցի Նայաստան. այնքան շատ հնարավորություններ ենք ունեցել գնալ տարբեր համայնքներ, Դիլիջանից դուրս գնալ, տեսնել և հանդիպել շատ մարդկանց, և դրանից հետո դու ազատագրվում ես այն վախից, որ քեզ [Նայաստանում] չեն ընդունի»: Այլինը վախեցել է, որ իրեն Նայաստանում չեն ընդունի, և այդ վախը հողս չի ցնդել մինչև հարևանի հետ դեմ առ դեմ հանդիպելը և նրա հետ ամփոփանքով շփվելը: Անկախ ամեն ինչից՝ մեր ընդհանուր անցյալի վախի շվանները դեռ կտրված չեն, և վախը շարունակում է փոխանցվել մի սերնդից մյուսին:

«ԹՈՒՐԲԱԿԱՆ ՆԱՄԱՅՆՔԸ» ՆԱՐԵՎԱՆԻ ՏԱՆԸ

Էմրեի «թուրքական համայնքն» ընդգրկում է բոլոր այն մարդկանց, ովքեր գիտեն թուրքերեն, այսինքն՝ նրանք են, ում հետ նա կարող է ազատ հաղորդակցվել: Ըստ Էմրեի՝ իր համայնքը լեզվական համայնք է, որն ընդգրկում է Թուրքիայից Նայաստան եկած գրոսաշրջիկներին, Նայաստանում աղյուղ դոլսահայերին և սիրիահայերին, ինչդեռ նաև այն քրդերին և հայերին, ովքեր թուրքերեն գիտեն: Պատահական չէ, որ ինքնության դայքարն աչքի առաջ ունենալով՝ Էմրեն իր համայնքում ընդգրկել է տարբեր էթնիկ ինքնությամբ մարդկանց: Մինչև Նայաստան գալը Էմրեն, աղյուղով Թուրքիայից դուրս, ունեցել է իր թուրքական համայնքը՝ բաղկացած էթնիկ ինքնությամբ իրենց թուրք համարողներից,

հատկադես Արզենտինայում և Նունգարիայում: Սակայն Նայաստանում, դատածական և քաղաքական դատաճանդներով, նրա հնարավորությունները սահմանափակ են.

«Նամայնք ունենալու կարևոր հնարավորությունը, կարծում եմ, լեզուն է, որ կարողանա նրանց հետ հաղորդակցվել: Այս առումով, այստեղ էլ ես ինձ մենակ չեմ զգացել, որոշ մարդիկ գալիս են Թուրքիայից և նրանք գիտեն թուրքերեն, սիրիահայերը նույնդես թուրքերեն գիտեն, Թուրքիայից շատ մարդիկ են գալիս-գնում, ուստի գրեթե միշտ, երբ ցանկանամ, կարող եմ թուրքերեն խոսել, և իսկադես այստեղ ես ինձ մենակ չեմ զգացել: Ինձ համար ինչ-որ բան թուրքերենից բացի այլ լեզվով բացատրելը դժվար է»:

Էմրեի կարծիքով՝ շատ ավելի Թուրքիայի քաղաքացիներ կան Նայաստանում, քան տեսանելի է առաջին հայացքից: Ըստ նրա՝ ոմանք թաքցնում են իրենց ինքնությունը՝ Նայաստանում խընդիրներից խուսափելու համար.

«Նրանք ուղիղ չեն ասում, որ իրենք թուրք են, բայց ըստ իս, եթե ինձ հարցնեք, նրանք թուրք են, ինքնությամբ թուրք են: Օրինակ՝ մեկը Սև ծովի տարածաշրջանից է՝ Նամշենի կողմերից, նա ասում է, որ ինքը հայ է, նա փոխել է իր անունը, ինքնությունը, բայց իրականում ես հասկանում եմ, որ նա սերուն է թուրքական մշակույթից, դատաճառը այն չէ, որ նա շատ տարբեր մշակույթ ունի, այո, կարող եմ ասել՝ [Թուրքիայի] տարբեր շրջաններում մենք ունենք որոշ տարբերություններ, բայց կա մի մեծ տատկեր, և նրանք դրա մեջ են: Նույնը Թուրքիայի հայերն են: Ես վստահ եմ, որ նրանք ունեն որոշ տարբերություններ, օրինակ՝ նրանք գիտեն հայերեն, հայկական դորոց են հաճախել, բայց ես կարծում եմ, որ մտածելակերպով նրանք հիմնականում թուրքական մշակույթի մեջ են, եթե Թուրքիան ունի ընդհանուր ինչ-որ մշակութային բան, նրանք դրա մեջ են»:

Այստեղ Էմրեն ազգային դատկանելիությունը որոշելու իր չափումն է առաջարկում՝ ըստ մշակութային ընդհանրության: Նրա ղեկումնաճք ստացվում է, որ նույնիսկ մարդու ինքնության գիտակցված ընտրությունն ու դրա համար թերևս հիմք ծառայած մշակութային տեղական տարբերությունները բավարար չեն այլ էթնիկ ինքնություն ունենալու համար: Մինչդեռ, ըստ մարդաբանների՝ ինքնությունը փոփոխական է, այն միաժամանակ կարող է լինել բազմակի և ըստ իրավիճակի փոփոխվել¹²: Բազմակի էթնիկ ինքնության օրինակներ հաճախ կարելի է հանդիպել հատկադես

Թուրքիայում: Նորաստեղծ Թուրքիայի բնակչության ազգային արդիականացման քաղաքականության համար կիրառվող գործիքը հաճախ եղել է էթնիկ գտումները,¹³ ինչը շատերին է ստիպել ձևավորել այլընտրանքային էթնիկ ինքնություններ, զուգահեռել եղածի հետ, ըստ իրավիճակի դիրքավորվել որդես տարբեր խումբերի ներկայացուցիչ:

Էմրեն մի փոքր ցավով է նշում, որ երբ Նայաստանում Թուրքիայից եկած զբոսաշրջիկների է հանդիպում, հատկապես երիտասարդների, նրանց հաղորդակցությունը սովորաբար շատ սահմանափակ և կցկտուր է լինում, քանի որ նրանք վախենում են շատ ընդլայնվել խոսակցության մեջ.

«Այստեղ՝ Կասկադում, ես մի քանի երիտասարդների տեսա, որոնք թուրքերեն էին խոսում «Օ՛, բարի գալուստ» կամ նման մի բան, բայց ես հասկացա, որ նրանք վախենում են, քանի որ կարծում են, որ իրենք Նայաստանում են, և ո՞վ է այս մարդը, որ բարևում է: Բայց ինձ համար հիմնականում, երբ թուրքերեն եմ լսում, ոչ միայն այստեղ [Նայաստանում], ես սովորականից ավելի ուրախ եմ ինձ զգում: Միզուցե նրանք մտածում են, թե ես ով եմ, նրանք վախենում են, քանի որ նրանց համար աղա-հով չէ, նրանք չգիտեն՝ ինչ կարող է այստեղ դատահել»:

Նազվադեդ լինում են նաև դեղքեր, երբ Թուրքիայից ժամանածները իրենք են փորձում Էմրեի հետ կադ հաստատել, խորհուրդ հարցնել՝ որդես Նայաստանում արդեն բնակչության փորձ ունեցողի: Նման դեղքերում Էմրեն իրեն տանտիրոջ կարգավիճակում է զգում և փորձում է օգնել իր խորհուրդներով.

«Մոտավորապես 10 հոգի տարբեր ժամանակներում եկել են, և մենք հանդիպել ենք, նրանք դատմել են, թե ինչ են անում այստեղ, նրանցից երկուսն էլ մեր տանն են մնացել: Մենք փորձում ենք նրանց օգնել, հատկապես նրանց, որ կարճ ժամանակով են գալիս, օգնում ենք գտնել հոսթել կամ այլ բան: Ես հյուրընկալ կողմն եմ, ես այս երկրից եմ, ես Նայաստանից եմ, սա իրակա-նությունն է, եթե մտածեք, իմ կյանքի մոտ 10%-ը ես այստեղ եմ

162; Idem, What is Anthropology, London, Ann Arbor: Pluto Press, 2004, pp. 156-169; G. Elwert, Switching of We-Group Identities: The Alevis as a Case Among Many Others: In Kehl-Bodrogi, Krisztina – Kellner-Heinkele, Barbara –Otter-Beaujean, Anke (eds.): Syncretistic Religious Communities in the Near East, 1997, Koninklijke Brill, Leiden, pp. 65-87.

¹³ M. Mann, The Dark Side of Democracy. Explaining Ethnic Cleansing, Cambridge University Press, 2005, pp. 70-179.

անցկացրել, կարելի է... երբ որ գնամ [Նայաստանից], ես դարձյալ խորհուրդներ կտամ մարդկանց: Վիճա էլ ես Արգենտինայից մարդկանց խորհուրդներ եմ տալիս, եթե ինձ հարցնում են, թե ինչ կարող եմ էնտեղ անել: Եթե դու բաց մարդ ես, դու կարող ես զգալ, որ սա նաև բո երկիրն է, աշխարհը շատ փոքր է»:

Նաղորդակցությունը ոլոսահայերի հետ, ըստ Էմրեի փորձի, կարելի է համարել միջին մակարդակի և կախված է նրանց գրավածության և հետաքրքրությունների շրջանակից.

«Նրանցից շատերը ժամանակ չունեն հանդիպելու, աշխատում են, ոմանք ինչ-որ քաղաքական, ինչդեպ ասեմ, գործունեություն կամ նման բանով են զբաղվում, ուստի միայն երբ իրար տեսնենք լինում, կարող ենք հանդիպել, բայց որոշների հետ ընկերություն ենք անում, որոշների հետ՝ ոչ, նրանց [մարդկանց, ում հետ ընկերություն չի անում] հայացքները տարբերվում են իմից, օրինակ՝ նրանցից ոմանք ազգայնամոլ հայեր են, ուստի նրանք իրենց հետու են դասում»:

Պոլսահայ ընկերների հետ Էմրեն սիրով է հաղորդակցվում, քանի որ նրանք կարող են խորհուրդներ տալ Նայաստանում աղբյուր վերաբերյալ, ինչդեպ նաև նրանց հետ հնարավոր է քննարկել Թուրքիայի քաղաքական իրավիճակը: «Երբեմն մենք հանդիպում ենք, սուրճ խմում, խոսում Թուրքիայի մասին, գիտեք, հատկապես այս տեղեկատվությունը նրանց հետաքրքիր է, նաև ես նրանցից եմ փորձում Նայաստանի մասին տեղեկանալ, քանի որ նրանք ավելի շուտ են եկել Նայաստան, ավելի լավ գիտեն, կարող են հայերեն խոսել: Ես նրանցից փորձում եմ տեղեկանալ Նայաստանում քաղաքական նաև ընդհանուր իրավիճակի մասին, օրինակ՝ որտեղից կարող եմ լավ միրգ գնել կամ նման այլ բաներ»:

Սիրիահայերի հետ հաղորդակցությունը ավելի ճկուն է, և քանի որ նրանք Նայաստանում ունեն սննդի կետեր, խանութներ, նրանց հետ շփումը ավելի անմիջական է: Էմրեն տան համար անհրաժեշտ շատ բաներ սիրիահայերից է գնում.

«Փողոցում մենք հաճախ չենք հանդիպում, բայց երբ ես գնում եմ նրանց մոտ, մենք շատ ընկերական ենք. մենք թուրքերեն ենք խոսում, վիճաբանում Սիրիայում տեղի ունեցող իրավիճակի մասին, մենք խոսում ենք նաև Թուրքիայից, քաղաքականությունից, Նայաստանից շատ բիչ ենք խոսում, նրանք ավելի շատ հետաքրքրված են, թե ինչ տեղի կունենա Թուրքիայում»:

Ինչո՞ւն արդեն նշեցինք, Էմբեի լեզվական համայնքի ներկայացուցիչներին են նաև նրանք, ովքեր գիտեն թուրքերեն՝ ներառյալ հայաստանցիները: Թուրքերենի ուսուցումը բավականին տարածված է Նայաստանում, ինչին նույնպես է նախ և առաջ Երևանի ոչնական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի Թուրքագիտության բաժինը: Բացի այդ՝ այն ընտանիքները, որոնց արձատները Արևմտյան Նայաստանից են, ունեն թուրքերենի որոշ բառադաշար, որ ժառանգել են Յեղաստանությունից փրկված նախնիներից:

Նայաստանցիների՝ թուրքերենի ուսուցման աղբյուրներից մեկն էլ թուրքական սերիալներն են: Թուրքերենին տիրադատողները դարձյալ վերադառնում են շփվում Նայաստանում աղող թուրքերի հետ, և դրա դատճառը, կարծում եմ՝ վստահության դաշտն է:

«Նայեր, որ խոսում են թուրքերեն, այո, սա... հետաքրքիր է ինձ համար, նաև ես ճանաչում եմ շատ մարդկանց, որոնք այստեղ ավարտել են Թուրքագիտության բաժինը, սակայն նրանք չեն կարողանում աշխատանք գտնել, բայց օրինակ՝ ռեստորաններում, երբ նրանք լսում են, որ ես խոսում եմ թուրքերեն, փորձում են թուրքերեն հետս խոսել: Ես փորձել եմ նրանց հետ ընկերանալ, սակայն դա էլ չի աշխատում: Ոմանք շատ լավ գիտեն [թուրքերեն], գիտնականներ են, նրանց հետ ևս մենք երկխոսության մեջ ենք մտնում, բայց չեմ կարող ասել, որ նրանք իմ լավ ընկերներն են կամ մեզնից այլ բան, բայց կարծում եմ, որ սա նրանց նախընտրությունն է, ինձ համար լավ ընկերներ լինելը միշտ էլ... ինչու՞ չփորձել»:

Լեզվական համայնքի մյուս ներկայացուցիչները Նայաստանում աղող քրդերն են, եթե իհարկե տիրադատում են թուրքերենին: Նատկանշական է, որ կան նաև քրդեր, ովքեր, Թուրքիայից խուսափելով, քաղաքական աղաստան են գտել Նայաստանում: Թեև որևէ վիճակագրություն չհաջողվեց գտնել՝ նրանց թվի հետ կադված, կարելի է ասել, որ Նայաստանում նրանք թվով շատ չեն: Նրանց հետ Էմբեի հաղորդակցումը դյուրին է, քանի որ կիսում են գրեթե նույն քաղաքական հայացքները, և եթե քաղաքական աղաստանի կարիք ունեն, ենթադրաբար ձայնակողմյան հայացքների տեր են, ինչո՞ւն և Էմբեն: Իսկ Նայաստանը, որդես քաղաքական աղաստան ընտրելը, ըստ Էմբեի, ունի երկու դատճառ. առաջինը, որ կողք կողքի գտնվող երկրներ են, և

Թուրքիայում իրավիճակը փոխվելուն դեռ կարող են ետ վերադառնալ: (Ակամայից հիշեցի այն փաստը, որ 1915 թ. շատ հայեր Արևմտյան Նայաստանից Արևելյան Նայաստան գալիս բնակություն էին հաստատում Թուրքիայի սահմանին մոտ՝ մասնավորապես Շիրակի տարածաշրջանում, որդեսգի իրավիճակը խաղաղվելուն դեռ վերադառնան իրենց տները: Այդ օրվանից արդեն անցել է 100 տարուց ավելի...): Երկրորդ դատճառն այն է, որ տանից հեռու գտնվելու ընթացքում Նայաստանի հետ ունեցած մշակութային նմանությունները նրանց ինչ-որ առումով սփոփում են: «Ես համոզված եմ, որ եթե նրանք [Թուրքիայում հետադիմացիները] հնարավորություն գտնեն, նրանք կնախընտրեն այստեղ գալ՝ բանտ գնալու փոխարեն»:

Նայաստանում անցկացրած 4 տարվա ընթացքում Էմրեին այդպես էլ չի հաջողվել լավ ընկերներ ձեռք բերել, թեև կարիքը զգացել է: Թուրքիայում շատ ընկերներ է ունեցել, այնտեղից տեղափոխվելուց հետո Արգենտինայում էլ նրան հաջողվել է լավ ընկերներ ձեռք բերել, ինչը չի կարելի ասել Բելգիայի և Նայաստանի մասին:

«Ես փորձել եմ լավ ընկերներ ձեռք բերել, բայց չեմ կարող ասել... Մի բանի ընկերներ ունեմ, միգուցե ես փորձել եմ... Ես ցանկացած երկրում, ոչ միայն Նայաստանում, ցանկանում եմ լավ ընկերներ գտնել, բայց իմ կյանքում դա բացակայում է, Թուրքիայում ես մի շարք ընկերներ ունեի՝ տարբեր ինքնությունների մարդիկ, դա կարևոր չէր, սակայն այնտեղից տեղափոխվելուց հետո ամեն ինչ ավարտվեց, էլ ընկեր չկա, սկայողով խոսելը բավարար չէ, ուստի ես իրոք ընկերոջ կարիք ունեմ՝ նրա հետ մտքիս եղածը կիսելու համար: Մուրադի¹⁴ հետ հանդիպում եմ, բայց դարձյալ նա Նայաստանից չէ, այլ Թուրքիայից»:

Ըստ Էմրեի՝ այս խնդրի դատճառները տարբեր են և կախված են մարդուց: Էմրեի ինքնությունը միգուցե ինչ-որ չափով դեր խաղում է այդ հարցում, բայց նա կարծում է մաս, որ մարդիկ ժամանակ չունեն հանդիմելու. «Եթե Նայաստանում ավելի երկար մնայի, համոզված եմ, որ կկարողանայի ընկերներ ձեռք բերել»:

Էմրեի շփումը հարևանների հետ սահմանափակ է լեզվական խոչընդոտի դատճառով, բանի որ նրանք անգլերեն կամ թուրքերեն չգիտեն, իսկ ինքը՝ հայերեն: Նարևանների վերաբերմունքը Էմրեի հանդեպ բավականին լավ է: Էմրեն չի կարծում, որ

¹⁴ Մուրադը որդասահայ է, որ տեղափոխվել է Նայաստան սովորելու:

հարևաններին անհանգստություն է դատճառում իր՝ Թուրքիայից լինելու փաստը, թեև ամբողջությամբ չի բացառում, քանի որ նրանց հետ շփվելու որևէ հնարավորություն չունի.

«Նորմալ չենք կարողանում խոսել. Թուրքիայում բնական երեկոյթ է գնալ հարևանի տուն, գրուցել, ինչ-որ բան տալ, ես կարող եմ [այս սովորությամբ], քանի որ դու տեսնում ես նրանց [հայ հարևաններին], «Բարև Ձեզ», «Բարև Ձեզ» և ավել ոչ մի բան»:

Այլինի շփման շրջանակը հիմնականում սահմանափակված է UWC Դիլիջանի դղրոցով, անգամ Երևան նրանք հաճախ չեն գնում: Սահմանափակ տարածությունը առաջացնում է նաև սահմանափակ շփում, սակայն ինչդեպ Էմբերի, այնդեպ էլ Այլինի դեղքում լեզվի գործոնը մեծ դեր ունի, և այս դեղքում թուրքերենից բացի՝ կարևոր դեր է խաղում նաև անգլերենը: Դիլիջանի գրեթե բոլոր բիզնես հաստատություններում անգլերենին տիրադատող գոնե մեկը կա.

«Ինձ մոտ այն տղավորությունն է, որ կյանքը Դիլիջանում դղրոցի շուրջ է ձևավորված: Գրեթե բոլոր տեղերում, ուր մենք կարող ենք գնալ, կարելի է գտնել մեկին, որ անգլերեն գիտի: «Զարա-հունցում»¹⁵ մի երիտասարդ կա, ի դեռ, որ խոսում է թուրքերեն. շատ հետաքրքիր էր դա տղարգելը: Նա մատուցող է այնտեղ, Սի-րիայից է, բայց հայ է, և նրա ամբողջ ընտանիքը թուրքերեն գիտի: Ես շատ ոգևորվել էի, և հիմա մենք մտերիմ ընկերներ ենք, և ամեն շաբաթ մենք այնտեղ ենք գնում՝ սուրճ խմելու»:

Տեղացի ընկեր ձեռք բերելը Դիլիջանում դժվար է, ուստի Այլինի և Թուրքիայից ժամանած մյուս ուսանողների լավագույն ընկերը Կարոն է՝ սիրիահայ մատուցողը, քանի որ նրանք ունեն հաղորդակցման ընդհանուր միջոց: Դղրոցից դուրս Դիլիջանի տեղական համայնքի հետ հաղորդակցությունը այնքան էլ չի հաջողվում մասնավորապես երիտասարդների արտահոսքի դատճառով.

«Դիլիջանում ամենամեծ խնդիրն այն է, որ երիտասարդությունը սովորաբար Նայաստանում չի մնում, մնացողներն էլ իրականում անգլերեն չգիտեն, ուստի կա հաղորդակցական խոչընդոտ: Բայց կան մարդիկ, որ հաճախում են դղրոց տարբեր նուազակներով, օրինակ՝ «Գիտությունը երեխաների համար»¹⁶, տարբեր նախա-

¹⁵ Ռեստորան Դիլիջանում:

¹⁶ UWC Դիլիջանի նախագծերից է:

գծերի համար, այդ ժամանակ է, որ նրանց հետ շփվում ենք, հետո ընկերանում, նրանք գալիս են ավարտական միջոցառմանը, դու գնում ես նրանց միջոցառումներին, սա հաճելի է»:

Եթե անգլերեն իմացող չի գտնվում, ուսանողների հույսը մնում է իրենց հետ սովորող որոշասահայ ուսանողուհու՝ Քարինի վրա, որ հաճախ դառնում է նրանց «գեզուն», քանի որ կարող է հաղորդակցվել արևմտահայերենով, իսկ եթե անգամ Քարինը նրանց հետ չի լինում, օգնության է գալիս ժեստերի լեզուն: Քարինը կարևոր մարդ է դարձել Այլինի կյանքում:

«Մենք Քարինի հետ շատ մտերիմ ենք, քանի որ մենք միասին ենք ժամանել այստեղ, միասին ենք մնում, թուրքական համայնքը այստեղ շատ սերտ հարաբերությունների մեջ է, քանի որ շատ քիչ ենք այստեղ, ուստի երբ ինչ-որ բանի կարիք ենք ունենում, մենք միշտ հավաքվում ենք: Ընկերներ ունենք, բայց երբ խոսքը գնում է ուտելիքի մասին, երբ գնում ենք դուրս սնվելու, մենք [Թուրքիայից ժամանած ուսանողները] փորձում ենք միասին գնալ: Կարծում եմ դա գալիս է... չգիտեմ՝ ինչո՞ւն է բացատրեմ, sofra adeti (հայ.՝ սեղանի շուրջ հավաքվելու՝ ուտելու, խմելու, խոսելու ավանդույթից). սովորաբար, երբ մարդիկ միասին նստում են սեղան, ինչ-որ կոնկրետ բանի մասին խոսում: Մեր մշակույթում մենք նստում ենք սեղանի շուրջ և խոսում մեր օրվա մասին, և մեր ճաշը շատ երկար է տևում՝ 2 ժամ, հետո մենք գնում ենք, թուրքական սուրճ խմում, ես կարծում եմ՝ դա է դաստնադը, որ մենք դեռ միասին ենք»:

Թուրքիայից ժամանած ուսանողների փոքր խումբն ստեղծել է իր սեփական համայնքը դոկորցի շրջանակներում՝ ադախովելով ամեն ղայման՝ «տունը» չկարոտելու համար: Նրանք Թուրքիայից իրենց հետ բերել են ամեն ինչ՝ սկսած սուրճից, թեյից մինչև անհրաժեշտ սղասքը, և սովորաբար այնքան են բերում, որ իրենց բոլորին լիովին հերիքում է, բերում են և բաժանում իրար մեջ:

«Երբ առաջին անգամ եկա այստեղ, չգիտեի, որ այստեղ կա արևմտյան¹⁷ սուրճ, փոքր սուրճի բաժակներ և ամեն ինչ, ուստի մենք դրանք տանից բերել էինք: Մենք շատ թեյ ենք բերել, շատ սուրճ, նույնիսկ թեյնիկ, և ամեն անգամ, երբ ես տուն եմ գնում, հայերն այստեղ շատ են սիրում թուրքական լոխումը, երբ ես տուն եմ գնում, շատ լոխում եմ բերում և բաժանում, սա լավագույն դասերից է, և միշտ ունենում ենք բախտագուշակության

¹⁷ Ակնհայտորեն շփոթում է. դեռ քիչ է ասի՝ արևելյան:

սեսիաներ, բերում ենք նաև աղոյր՝ տնական տատրաստված, մենք այն անվանում ենք թարհանա (հայ.՝ թարխանա), ես բերում եմ դրա փոշին, երբ հիվանդանում ենք, աղոյր ենք տատրաստում դրանով: Բերել ենք նաև էլեկտրական ջեզվե, 2 շիշ թահին, ինչը բավարար է բոլորի [Թուրքիայից ժամանած ուսանողների] համար, բայց կան որոշ բաներ, որ արաբական խանութներից կարող ենք գնել, օրինակ՝ նոսան սոուսը, բայց մենք սովորաբար մեզ հետ տանից բերում ենք ամեն ինչ: Մենք շատ մոտ ենք, և բոլորը գիտեն՝ ինչը որտեղ է, և եթե ինչ-որ բան ցանկանում են, ուղղակի գնում, վերցնում են»:

ՆԱՅԱՍԱՆՆՅԱՆ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թե՛ Էմրեի և թե՛ Այլինի կյանքը Նայաստանում անցել է որոշ դժվարությունների և խնդիրների միջով՝ և՛ սոցիալ-հոգեբանական, և՛ վարչական: Առաջինը սերում է շրջադատի՝ «թուրքի» ինքնության շուրջ հյուսված ընկալումներից, մինչդեռ երկրորդը բխում է Նայաստանի և Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների բացակայությունից: Ինչդեռ Ա. Պորտելլին է նշում, բանավոր աղբյուրները շատ բան չեն կարող ավելացնել մեր իմացածին, օրինակ՝ այն մասին, թե գործադուլի մասնակից բանվորներն ինչ նյութական վնաս են կրել, սակայն դրանք շատ բան կարող են ասել նրանց կրած հոգեբանական վնասի մասին¹⁸: Այսինքն՝ եթե նույնիսկ հարցազրույցները փաստացի մեծ բացահայտումների չհանգեցնեն, դրանք այն բացատիկ աղբյուրն են, որ հնարավորություն են տալիս տեղեկանալու տարբեր տատմական գործընթացներում ներգրավված մարդկանց հույզերի ու հոգեբանական վիճակի մասին: Նետաքրքրական է, որ թուրքերի՝ Նայաստանում երկար ժամանակ բնակվելը ոչ միայն հայերի, այլև որոշ օտարերկրացիների մոտ կասկածներ է առաջացնում. ինչու՞՞ ղետք է թուրքը այդքան երկար մնա Նայաստանում, և դժվար չէ կռահել, թե ինչ տատասխան են նրանք տալիս իրենց իսկ հարցին.

«Որոշ մարդիկ, երբ իմանում են, որ ես երկար ժամանակով եմ այստեղ աղոյրում, որ ես գրոսաշրջիկ չեմ, Բելգիայում իմ ընկերներից մեկը մյուս ընկերոջս, որ հայ է, հարցրել է. «Ի՞նչ է նա [Էմրեն] անում այնտեղ [Նայաստանում], նա լրտե՞ս է», նման մի բան: Նա գիտեր ինձ, եթե չիմանար, ուրիշ բան, կասեի՝ հաս-

¹⁸ A. Portelli, նշվ. աշխ., p. 50.

կանայի է: Ուղիղ շեն ասում, բայց ոճանք կարծում են, որ դու հատուկ կարգավիճակ ունես՝ թուրք ես, լրագրող, աշխատում ես քրդական մեդիայի համար, հասկանայի իրավիճակ է»:

Էմբեին չի հաջողվել ինչ-որ միությունների, խմբերի անդամակցել Ղայաստանում, շնայած մինչև Ղայաստան գալը փորձել է որոշ մարդկանց, կազմակերպությունների հետ կառի հաստատել, սակայն աղարդյուն: Նա ցանկացել է կամավորական սկզբունքով ինչ-որ նախաձեռնությունների մեջ ընդգրկվել: Ոճանք սկզբից խոստացել են, որ կօգնեն նրան այդ հարցում, կծանոթացնեն համադատասխան մարդկանց հետ, բայց այդ արձագանքը մարել է, երբ Էմբեն դարձյալ դիմել է նրանց.

«Ես շեն կարողանում մի տեղ գտնել, որտեղ միասին կաշխատենք, նրանք շեն ցանկանում ինձ օգնել, կամ նրանք շեն ցանկանում ինձ հետ միասին աշխատել: Օրինակ՝ ես հետաքրքրված էի Յեղատալանությունով կամ ինչ-որ սոցիալական խնդիրների վրա ցանկանում էի ակտիվորեն աշխատել՝ որդես լրագրող, և այլն, իրականում շատ բան կարող էի անել, եթե գտնեի հնարավորություններ, հիմա էլ կարող եմ փորձել, սակայն շուտով մեկնելու ենք: Ինտելեկտուալ մարդիկ հեռավորություն են ուսում, բանի որ, կարծում եմ, նրանք մտածում են, որ ինչ-որ խնդիր կա... կամ չգիտեմ, թյուր կարծիք ունեն, ես վստահ չեմ, բայց դու Թուրքիայից ես, լրագրող ես, դու աշխատում ես քրդական հեռուստաընկերության հետ, ուստի դու կասկածելի ես, դու նորմալ չես կարող լինել... հասկանում եմ, սա նորմալ չէ, բայց եթե դու չփորձես հասկանալ, դու միանգամից շրջանի մեջ ես դնում... սա լրտես կլինի, կամ նման մի բան, մեծամասամբ իմ մասին այստես են մտածում և իրենց հեռու են ուսում: Իրականում ես ավելի շատ բաներ էի ցանկանում կիսել [մարդկանց հետ], ես մտածում էի ավելի շատ բաներ այստեղ կանեմ, բայց դա ինձ չհաջողվեց: Նրանք հեռու են իրենց ուսում, և շես կարողանում լավ կառի կամ ընկերություն հաստատել»:

Ամբողջ հարցազրույցի ընթացքում Էմբեն մի բանի անգամ կրկնում է Ղայաստանում իրեն դատադարտող և իր գործունեությունը սահմանափակած կարծրատիղը՝ «դու Թուրքիայից ես, լրագրող ես, աշխատում ես քրդական մեդիայի հետ»: Այս խոսքերի կրկնությունը ցույց է տալիս, թե ինչ խորը ազդեցություն են դրանք թողել Էմբեի վրա: Ուշագրավ է, որ Էմբեն կարծում է, որ իր աշխատանքը քրդական լրատվամիջոցի հետ կարող է իրեն չվստահելու դատաճաններից մեկը լինել, թեև դա կասկածի հիմք կարող էր լինել ավելի շուտ Թուրքիայում, բայց հազիվ թե՝

Նայաստանում: Նավանաբար ինչ-որ խնդիրներ, որ ավելի արդիական կարող է լինելին Թուրքիայում, նա ինքնաբերաբար տեղափոխում է Նայաստան: Տեղական կյանքին ինտեգրվելու իր ճախողումը նա բացատրում է մի քանի հանգամանքով, որոնց երևի թե կարելի է ավելացնել ևս մի քանիսը՝ ինչո՞րքան կառուցող իր քաղաքացիության և էթնիկ ինքնության հետ, այնուհետ էլ դրանցից անկախ, սակայն տվյալ դեպքում ուզում էի լսելի դարձնել հենց Էմրեի տղավորությունն ու ընկալումը: Միևնույն ժամանակ նա ըմբռնումով է մոտենում իրեն կասկածանքով վերաբերվելու փաստին՝ այն բացատրելով որոշ սոցիալական վարք, հաշվի առնելով հայերին դատաճառած ցավը թուրքերի կողմից:

Էմրեի 9 տարեկան որդին, որ սովորում է Նայաստանում մի ֆրանսիական դպրոցում, նույնուհետ բախվել է որոշ խնդիրների՝ կառաված իր ազգության հետ: Երբ նոր էին ժամանել Նայաստան, նա դպրոցում դժվարանում էր, քանի որ ֆրանսերեն չգիտեր, բայց այս խնդիրն ամենահեշտն էր հավանաբար թուրք դպրոցականի համար: «Շա [որդին] լուծեց այս խնդիրը կարճ ժամանակահատվածում, սակայն երբեմն, թուրք լինելու դատաճառով, նա խնդիրներ է ունենում մյուսների հետ, նրա վրայով կատակներ են անում, ծաղրում, մի փոքր ագրեսիա կա»: Դպրոցում Յեղաստանության թեման իհարկե շոշափվում է, և Էմրեի որդին բնականաբար դառնում է քննարկումների առաջնային թիրախը:

«Քանի որ դպրոցում խոսում են Յեղաստանության մասին, նա ինձ հարցնում էր, թե ինչ է դա, ինչ է կատարվել և նման այլ բաներ: Չմոռանալը նորմալ է, բայց օրինակ՝ նրանք [դպրոցի աշակերտները] Մրարատը գրեթե ամեն օր տեսնում են դպրոցից, նրանք տեսնում են, բայց գիտեն, կամ մարդիկ նրանց ասում են, որ այն Նայաստանում չէ, այն ձերը չէ, բայց ինչու², սա հարց է, նրանք աշակերտներին դատում են այս մասին, նաև Յեղաստանության մասին, բայց սա ոչ թե լուծում է խնդիրը, այլ խնդիր առաջացնում երեխաների շրջանում»:

Ըստ Էմրեի՝ Յեղաստանության մասին, իհարկե, դպրոցներում ղեկոս է սովորեցնեն, բայց դրան ղեկոս է այնուհետև մոտեցում ցուցաբերել, որ երեխաների հոգեբանության վրա չազդի, ուստի ուսուցիչներից շատ բան է կախված:

«Դպրոցում ուսուցիչների խնդիր կա, չկան ֆրանսերենի բավարար թվով ուսուցիչներ, 4 անգամ ուսուցիչ փոխվեց, և տարվա

Ճե՛ն մասը մեր որդին և մյուսները կովի մեջ էին. անցած տարին մեզ համար աղետալի էր: Ուսուցիչը չկարողացավ լուծել կամ համոզված չեմ, միգուցե փորձեցին լուծել, հավանաբար նրանք չէին հասկանում՝ ինչ էր կատարվում: Մի երիտասարդ Ֆրանսիացի ուսուցչուհի եկավ և լուծեց [խնդիրը]. վերաբերմունքները միանգամայն փոխվեցին, շատ բան փոխվեց: Չեմ կարծում՝ նա հրաշք գործեց, դարգադեա փոխեց վարվելակերպը կամ նա այդ ամենին նայեց այլ տեսանկյունից»:

Էմրեի ընտանիքի աղետը ավարտվեց, երբ նրանց որդու կրթությունն անցավ օտարերկրացու ձեռքը, ով, հայ դատմական իրականությունից դուրս լինելով, կարողացավ հարթել իրավիճակը:

Էմրեի դուստրը, հաճախելով մանկադարտեզ, նման խնդիրների չի առերեսվել. մանկադարտեզում շատ օտարերկրացի երեխաներ կան. «Իմ դուստրը շատ լավ հայերեն է խոսում, երևի դրա համար էլ խնդիրներ չի ունենում: Յածր դասարանում [մանկադարտեզում] ավելի շատ արտասահմանցիներ կան, բան իմ որդու դասարանում, օրինակ՝ որդուս դասարանում հիմա ոչ մի օտարերկրացի չկա»:

Էմրեի երեխաների համար դժվար է ինտեգրվել իրենց հասակակիցների միջավայրին: Էմրեն կարծում է, որ ի տարբերություն իր դստեր՝ որդին իրեն Ղայաստանում երջանիկ չի զգում, քանի որ շատ ընկերներ չունի.

«Կարծում եմ՝ հիմնական խնդիրը սա է. մի Ֆրանսիացի տղա և լիտվացի աղջիկ կային, նրանք ընկերներ էին, բայց հետո տեղափոխվեցին, և նա [որդին] մնաց մենակ: Մի հայ կար, նրանք շատ լավ ընկերներ էին, բայց նա տեղափոխվեց ուրիշ դղրոց, և տղաս կորցրեց իր ընկերոջը»:

Էմրեի որդին հեշտությամբ կարող էր ընկերներ ունենալ դղրոցում, եթե շլիներ հայ հասարակությունում ձևավորված թուրքի հանդեպ միանշանակ վերաբերմունքը, որը տարածվում է նույնիսկ անչափահասների վրա, ու թերևս նրանց շրջանում այն ավելի անթաքույց է դրսևորվում, քանի որ չկա գիտակցված ինքնազստվածությունը: Դղրոցից դուրս ընկերություն ձեռք բերելը դժվար է Էմրեի որդու համար, ինչը առաջին հերթին դայմանավորված է ազատ ժամանակ չունենալու փաստով: «Նրանք լսում են, թե ինչդեա են այգում երեխաները բարձրաձայն խաղում, բայց նրանց ոչ ոք չի հրավիրում, եթե ինչ-որ մեկը աղջկաս հրավիրեր, նա ինքնամփոփ չէ, կզմար»:

Նայաստանում Այլինը ևս զերծ չի մնացել ինքնության հետ կաղված խնդիրներից: ՄWC-ում մի ավանդույթ կա. խաղաղության միջազգային օրը, որը նաև ՄWC-ի օրն է և Նայաստանի անկախության օրը, բոլոր ուսանողները վերցնում են իրենց դրոշները և քաղաքի կենտրոնում փողոցներով վազում, նրանք դարում են, երգում և համայնքի հետ տարբեր միջոցառումների մասնակցում: 2014 թ. Թուրքիայից ժամանած առաջին տարվա ուսանողները ցանկացել են իրենց դրոշները վերցնել և դուրս գալ փողոց, բայց այդ օրը մեկընդմիջտ ազդել է ՄWC-ի հաջորդ տարիների Թուրքիայից ժամանած ուսանողների վրա:

«Տեղի համայնքի հետ ինչ-որ խնդիրներ են առաջացել, բանի որ այդ օրը նաև անկախության օրն էր: Նրանք [դրոշոցը] մեզ մանրամասները չեն ներկայացնում, բայց դրանից հետո մեզ թույլ չեն տալիս մեր դրոշները վերցնել: Անցած տարի մենք գնացինք այնտեղ, ոչ մի ազգային բան չէինք կրում, չէինք տարել մեր դրոշները, մենք դարձադառնա մյուս մարդկանց դեմ դարում էինք, և մենք սխալ գործեցինք՝ թուրքերեն խոսելով: Ոստիկանները սկսեցին իրար մեջ խոսել, և մենք սկսեցինք վախենալ և ամբոխի մեջ խառնվեցինք, նրանք մեզ էին նայում, և մենք անհարմար էինք զգում մեզ այդ իրավիճակում: Սովորաբար մարդիկ ուրախանում են՝ մեզ այստեղ տեսնելով: Մենք փորձում ենք հաղորդակցվել նրանց հետ և բացատրել ինչու ենք մենք այստեղ, ինչ ենք անում և որտեղից ենք գալիս, և ամեն ինչ կարգին է սովորաբար լինում: Բայց որոշ նման դեպքերում մարդիկ շատ լարված են, բանի որ նրանք ակնկալում են, որ ինչ-որ մեծ բան դեռ է տեղի ունենա, ուստի նրանք [ոստիկանները] զգուշավոր էին, բայց այդ իրավիճակը անհարմար էր»:

ՄWC Դիլիջանի դրոշոցը միակ տաշտոնական վայրն է Նայաստանում, որտեղ կարելի է տեսնել Թուրքիայի դրոշը: Վերջինս Նայաստանում բացեփբաց ցուցադրելը մեծ հավանականությամբ շատ բացասական արձագանքների և նույնիսկ ազդեցիկ դրսևորումների կարող էր հանգեցնել, ինչից խուսափելու համար էլ դրոշոցն արգելել է թուրք ուսանողներին իրենց դրոշները փողոց դուրս հանել սեղանների 21-ին: Այդ օրը թուրք ուսանողները ստիպված են մի կողմ դնել իրենց ինքնությունը, ինչը Այլինը համեմատում է Թուրքիայում հայերի ամրածի հետ.

«Շատ ճնշող էր, բոլորը ունեն ինքնություն, բայց քեզանից ակնկալվում է կորցնել այդ ինքնությունը, որը հակառակ կողմն է այն ամենի, ինչի միջով հայերն են անցել Թուրքիայում՝ այդ

ժամանակ Արևմտյան Նայաստանում, այդ զգացողությունը հիասթափեցնող էր: Անցած տարի մենք փորձեցինք ինչ-որ բան ձեռնարկել այդ կառավարչությանը. մենք ելույթ ունեցանք, ամբողջ դոկորը, բոլոր թուրքերն այնտեղ էին, մենք բռնել էինք Թուրքիայի և Նայաստանի դրոշները, մենք Նրանտ Դինքի¹⁹ գրքից մի ելույթ ներկայացրինք, կարծում եմ՝ դա շատ օգնեց հայ համայնքին թուրք համայնքի մասին տեղեկացնելու հարցում, կարծում եմ՝ դրանից հետո մենք կառ տեղեկեցինք, ինչը փոքր բան չէր, կարծում եմ՝ դրա ազդեցությունը դեռևս զգացվում է դոկորում: Դոկորը փոքր համայնք է, առավելագույնը 300 մարդ, բայց կարծում եմ՝ դա սկիզբն էր»:

Այլիմը ընկերների հետ միասին որոշում է ինչ-որ բայլ ձեռնարկել, և ոչ ոքի նախօրոք չտեղեկացնելով՝ ելույթ են ունենում հանրության առաջ, որը կարևոր նախաձեռնություն էր ոչ միայն իրենց համար, այլև իրենց հանդեպ վերաբերմունքը փոխելու առումով.

«Ելույթից հետո մենք արտասվում էինք, հայերը [UWC Դիլիջանի հայ ուսանողները] վազեցին մեզ մոտ և մեզ գրկեցին, այնքան հրաշալի էր: Կարծում եմ՝ դա աննկարագրելի զգացմունքային բան էր, իրատես, գիտեք, փխրուն բան: Ուրախ եմ, որ մենք դա արեցինք առանց որևէ մեկին վիրավորելու»:

Թեև Նայաստանում բնակվելու ընթացքում Այլիմին հանդիպած խնդիրները հսկայական չեն, բայց դրանք, միևնույնն է, ցավ են դատճառում.

«Միակ վատ բանը, որ ինձ հետ կատարվել է, մենք Cafe #2-ում²⁰ նստած էինք խմբով, ես միակ թուրքն էի եղտեղ, մի կին կար, մեզ հետ խոսում էր «Օ», երեխեք դուք դոկորում²⁰ եք սովորում, որտեղի՞ց եք»: Եվ ես ասեցի՝ Թուրքիայից, և նա [կինը] դադարեց խոսել, նա ինձ հետ էր խոսում, նա դադարեց ինձ հետ խոսել, և սկսեց խոսել Ննդկաստանից եկած աղջկա հետ, ես խսկատես... ես չգիտեի՝ ինչ զգայի, քանի որ, գիտե՞ք, դու խոսում ես անզերեմ, դու շատ տեղեր ես ճանադարհորդել, գալիս ես դոկորց այցի, բայց դու դեռևս դեմ ես այն մարդկանց, որոնք քեզանից տարբեր են»:

¹⁹ Նրանտ Դինքը թուրքահայ լրագրող էր, ում 2007 թ. ստանեցին հենց իր գրասենյակի մուտքի մոտ:

²⁰ Սրճարան Դիլիջանում:

Ինչդեռ նշում է Միշել-Ռոլֆ Թրուլիլոն, դարտադիր չէ, որ դատմությունը մեր սեփականը լինի դրանում ներգրավվելու համար: Այն դարգադես դեռ է ինչ-որ մեկին վերագրվի²¹: Ուստի Էմբերեն և Այլինը չէին կարող անմասն մնալ և «շնեղագրավվեին» Յեղասպանության խոսույթում, առավել ես՝ այդ դատմությունը նաև նրանցն է: Տարածված կարծիք կա, որ հայի հետ հանդիպելիս հնարավոր չէ, որ նա Յեղասպանության մասին խոսք չբացի: Թեև Էմբերեն կցանկանար, որ մարդիկ Նայաստանում իր հետ անկեղծ գրուցեին այդ թեմայով, հարցնեին իր տեսակետների մասին, բայց նրանք, իմանալով իր ինքնության մասին, փորձում են նախ ճշտել, թե արդյոք նա գիտի՞ դրա մասին, թե՞ ոչ, ադա առանձնադեպ չեն տարածվում այս թեմայի շուրջ:

«Երբ մարդիկ իմանում են, որ ես թուրք եմ, նրանք միանգամից սկսում են Յեղասպանությունից խոսել, սրա մասին ես նախկինում էլ իսկեմ, Lonely Planet²²-ում, միգուցե Դուք էլ եք կարդացել, ասվում է, որ, ոչ միայն թուրքերի հետ կառված, այլ ընդհանուր, որ եթե ինչ-որ հայի հետ խոսեք, 3-րդ նախադասությունը կարող է լինել Յեղասպանության մասին: Ըստ նրանց՝ հայերը փորձում են ավելի լավ բացատրել իրենց իրավիճակը, այդ իսկ դատաճառով ամեն անգամ խոսում են Յեղասպանությունից: Ես չեմ կարող հաստատել սա, քանի որ նրանք [մարդիկ Նայաստանում] միգուցե չեն ցանկանում ինձ հետ խոսել Յեղասպանությունից, քանի որ ես Թուրքիայից եմ, բայց, օրինակ՝ որոշ խանութներում, միգուցե չիմանալով, թե ինչ տեսակետներ ես ունեմ, չեն հարցնում դրանց [տեսակետների] մասին, նրանք ինձ հարցնում են՝ Դուք գիտե՞ք Յեղասպանության մասին»:

Նայերի ձգտումը՝ բարձրաձայնելու ցեղասպանության հարցը հատկապես օտարների հետ խոսելիս, թերևս գալիս է այն խընդրից, որ այս ոճիրը չի ստացել միջազգային և հատկապես թուրքական կողմի դատաճառ ճանաչումը: Եվ գրեթե յուրաքանչյուրն իր դարձում է համարում անձնական ներդրում ունենալ ճանաչման գործընթացում: Դա հատկապես արդիական էր, երբ այս խնդիրը ղեկավարող մակարդակում լռեցված էր: Մակայն ուշագրավ է, որ առնվազն Էմբերենին հանդիպած հայերը գերադասում

²¹ Michel-Rolph Trouillot, *Silencing the Past: Power and the Production of History*, Boston: Beacon Press, 1995, p. 142.

²² Տարիգմի դորտի հրատարակչատուն:

են այս հարցն իր հետ առանձնադեպ շքննարկել, մինչդեռ ինքը դատրաստվել էր և սղասում էր նման գրույցի: Յեղասպանության խնդիրն իր համար բացահայտած Էմբեն մեղավորության զգացողություն ունի, ինչը ծնունդ է առել մինչև Նայաստան գալը: Ինչդեռ և Թուրքիայում շատերի, այնդեհ է Էմբեի համար, Նրանտ Դինքի մահը դետական ռազմավարական շատ «ճշմարտություններ» է կոտրել. Դինքի մահից հետո Թուրքիայում սկսվել է հասարակական գիտակցության զարթոնք:

«Այս կադակցությամբ [Յեղասպանության] ես ինձ մեղավոր եմ զգում ընդհանուր առմամբ, այդ զգացողությունը սկսվեց, երբ որ ես Արգենտինայում էի, երբ ես 2010 թ. առաջին անգամ գնացի Յեղասպանության հիշատակի արարողությանը: Դա [զգացողությունը] սկսվեց այնտեղ, քանի որ ես լսեցի շատ վատ բառեր թուրքերի նկատմամբ, նախկինում էլ ես տեղյակ էի իրավիճակից, բայց առաջինը Նրանտ Դինքի սղանությունն էր, որ իսկադեհ լիովին փոխեց ոչ միայն ինձ, այլ շատ մարդկանց փոխեց, քանի որ մինչ այդ ես մտածում էի արդյոք կարող ենք դաշտոնադեհ ասել, որ Յեղասպանություն է եղել, վատահ չէի, բայց դրանից հետո, ես վատահ էի, որ դաշտոնադեհ կարող ենք ասել: Մարդիկ սովորաբար հավաքվում են իրավագիտության ֆակուլտետի մոտ: Ինչու՞՞՞ այնտեղ: Քանի որ այն մոտ է Թուրքական դեսպանատանը: Կոնկրետ ժամը չեմ հիշում, բայց հիշում եմ, որ ուշ սկսեցին: Սկզբից նրանք՝ կազմակերպիչները, ուրախ էին, բարի գալուստ ասեցին, բայց երբ զնացինք, հստակ չեմ հիշում, բայց շատ արյունահեղ բաներ էին ասում թուրքերի մասին, ոչ թե քաղաքական, այլ, դու զգում ես, դու զգում ես... ես բոլոր թուրքերի փոխարեն ինձ իսկադեհ զգում էի մեղավոր, ոչ միայն մեղավոր, այլև դու մտածում ես դատմության ամբողջ դատասխանատվության մասին, նման մի բան, ուստի այստեղ [Նայաստանում] ես, երբ քեզ հանդիպում է ինչ-որ մեկը և հարցնում «Դու գիտե՞ս Յեղասպանության մասին», «Դու ընդունո՞ւմ ես Յեղասպանությունը», նման բաներ, ես անմիջադեհ մի փոքր սկսում եմ դաշտոնավել, նրանց հասցեին ոչ մի վատ բան չեմ ասում, բայց ասում եմ, որ միգուցե դուք այնքան էլ լավ չգիտեք, Թուրքիայում որոշ մարդիկ ընդունում են, ճանաչում են, որ Յեղասպանություն է եղել, մենք էլ նույն բաների դեմ ենք դաշտարում, բայց սովորաբար սովորական մարդիկ, նրանք քեզ չեն լսում: Ինտելեկտուալ մարդիկ տարբեր են, նրանք լսում են, կարծում եմ՝ նրանք իրենց մտքում վերլուծություններ են անում, բայց նրանց մեծ մասը ուղիղ չեն հարցնում՝ ինչու՞՞՞ ես դու Նայաստանում, այլ՝ դու թուրք ես, աշխատում ես քրդերի

հետ, Պետր է որ ինչ-որ մեկը լինես [լրտես], ես հասկանում եմ, սա բացատրություն է [լրագրող լինելը], բայց մարդկանց մտքում Պետր է մի փոքր տեղ լինի բացատրության համար: Ես որոշ ինտելեկտուալ մարդկանց հանդիպել եմ, բայց մեկ շաբաթ հետո նրանք այլևս չեն ուզում հանդիպել, խնդիր չկա, բայց միևնույն ժամանակ նրանք կասկածամիտ են, նրանք չեն փորձում կարեկցանք ցուցաբերել, նրանք շեշտադրում են իրենց դիրքորոշումը, այստեղ շատ մարդիկ մի կողմն են ընտրում: Սա խնդիր է ոչ միայն հայերի համար, այլև աշխարհում շատերի համար, նրանք ունեն մի տեսակ կլիշեավորված մտածելակերպ և չեն ցանկանում դրանից դուրս գալ»:

Էմրեն՝ մեղավորության զգացողությամբ հանդերձ, նաև դատաստանատվություն է զգում դատմության համար, ի՞ր դատմության համար, իր երկրի համար: Նա փորձում է վերլուծել և զննհատել Յեղասպանության ազդեցությունը տարբեր հասարակություններում՝ ինչդեռ թուրքական, այնդեռ էլ այն խմբերում, որտեղ աշխատանքի բերումով հայտնվել է: Այսպիսով, նա հնարավորություն է ստանում համեմատել ոչ միայն տարբեր երկրներ, այլև որոշ ընդհանրացումներ է անում՝ ըստ սերունդների.

«Ես այնտեղ [Արգենտինայում] սերնդային տարբերություն զգացի երիտասարդ սերնդի և տարեց սերնդի միջև, քանի որ հանդիպել եմ ոմանց, նրանց հետ խոսել, և երիտասարդները միանգամայն այլ կերպ էին նայում աշխարհին, Նայաստանին, Թուրքիային: Յեղասպանության հիշատակի օրը մենք մարդկանց հետ մի փոքր զրուցեցինք, ավագ սերնդի մարդիկ շատ ընկերական էին, և նրանցից ոմանք էլ մեզ հետ սկսեցին թուրքերեն խոսել: Սակայն երիտասարդ սերնդի ներկայացուցիչներն ասացին «Ժ՞նջ գործ ունեք այստեղ», «Դուք լրտե՞ս եք» և նման այլ բաներ, նրանք ավելի ազգայնամոլ էին, դրա դատաճառը կարող է լինել այն, որ նրանք այնքան էլ տեղեկացված չեն աշխարհից, նրանք կասկածամիտ էին՝ եթե դու Թուրքիայից ես և այն էլ լրագրող, առյա Պետր է որ ինչ-որ բան լինես [լրտես]: Մենք գրեթե վեճի էինք բռնվում, բայց հետո փորձեցինք բացատրել, երկրորդ անգամ նույն դատմությունը դատմեցինք, և իրավիճակը փոխվեց»:

Այս դատմությունը կարծես դասագրքային օրինակ է այն բանի, թե որքանով է հետիշտությունն²³ ավելի էմոցիոնալ և զաղափա-

²³ Shū M. Hirsch, The Generation of Postmemory // Poetics Today, 29:1 (Spring, 2008), pp. 103-128:

այս երկրից [Թուրքիայից] եմ, այս հողից, և այս մարդիկ... սա մի բեռ է քո ուսերին, գիտեք, ու այդ զգացողությունից շես կարող հեշտությամբ ազատվել: Ես... օրերով չէի կարողանում բնել, արտասվում էի, ինչ-որ փոփոխություն դա առաջ չի բերում, բայց դու շարունակում ես դա զգալ: Վատկադես երբ դու շատ երիտասարդ ես և չգիտես Յեղասպանության իրողությունը, դու նման զանգվածային սղանդի միջով շես անցել... դու իրականում տեսնում ես այն մարդկանց դեմքերը, ովքեր մահացել են... և այն բոլոր վայրերը, որ բեզ համար եղել են տղատմական վայրեր, հանկարծակի դրանք դատնում են սարսափ տատմություններ կրող վայրեր»:

Յեղասպանության թանգարան այցելելը UWC Դիլիջանի Ծրագրի տարտադիր բաղադրիչներից է, ուստի ամբողջ դոդրոցն է այդ օրն այցելել թանգարան: Եվ դառը փորձառությունից հետո Այլինն ու Թուրքիայից ժամանած մյուս ուսանողները խնդրել են դոդրոցին, որ հաջորդ տարիներին թանգարան կատարվելիք այցը մի փոքր ուշ իրականացնեն, երբ ուսանողները զոնե մի փոքր կադատոտացվեն միջավայրին. «Այս տարի առաջին կուրսեցիները դա շեն ադրել, կարծում եմ, որ մի օր նրանք կզնան այդտեղ [թանգարան], բայց դա տետք է տեղի ունենա մի քանի ամսվա փորձառությունից հետո»:

Կամա, թե ակամա Այլինը առերեսվում է Նայաստանում թուրքի հանդեղ առկա ստելությանը, և ուզած-չուզած նա կրում է իր երկրի նախատիները: Ատելության մթնոլորտը ստելծում է նաև անատահովության զգացողություն, ինչն էլ իր հերթին՝ զգուշավորություն.

«Մենք անցած տարի Նայոց ցեղատատանությանը նվիրված քայլերթ արեցինք դեղի հուշարձանը, ես և Քարինն էինք, հոգեվոր առաջնորդն էր խոսում, մի կողմում զինվորական դոդրոցն էր, ձախ կողմում բանակայիները, նա [հոգևոր առաջնորդը] լավ բաների մասին էր խոսում, գիտեք, որ մենք տետք է բարելավենք, մենք տետք է ադագային նայենք, և հանկարծ նա ասեց, որ մահը զալիս է թուրքերի ձեռքերից, ես... զինվորական դոդրոցի բոլոր երեխաները ինձ ճանաչում են, գիտեն ես որտեղից եմ, և նրանք նայեցին ինձ, ասեղի ճնշվածություն էի զգում, դու շես ցանկանում զգալ այդ տատատանատությունը, բայց դու զգում ես, քանի որ դա քո մի մասն է, և դու շես կարող դրանից ազատվել: Ես Թուրքիայում եմ ծնվել, ես դա ընտրեցի՞ եմ, ո՛չ, բայց ես այդ մշակույթի մեջ եմ մեծացել: Ուստի երբ նման

բաներ են ասվում, ես ինձ մեղավոր եմ զգում, հաճախ ես ինձ աղահով շեմ զգում, բանի որ այնքան շատ մարդիկ կան, ովքեր դեմ կլինեն, որ ես այնտեղ լինեմ: Այդ դատաճառով նման դեղորբերում մենք թուրքերեն շենք խոսում, մենք փորձում ենք մեզ հնարավորինս զուտոյ դասել: Վատ կողմն այն է, որ ես հասկանում եմ մշակույթը, հասկանում եմ՝ ինչքան կարևոր է այդ մարդկանց համար այդտեղ լինելը, ինչքան կարևոր է էլույթը, ես շեմ կարող անգամ դատել, կարծում եմ՝ նրանք ծիշտ են, տարզատես այն, ինչ զգում եմ, աննկարագրելի է, որովհետև... ես դեռևս զգում եմ մի բանի ծանրություն, որ կատարվել է 100 տարի առաջ»:

Մեկ դար առաջ տեղի ունեցածի դաժանությունն ու ծանրությունը Այլինն իր վրա է զգում, ու թեև չի դատում մարդկանց, փորձում է հասկանալ նրանց, բայց այն, ինչ զգում է, նրան ցավ է դատաճառում, ինչը բերում է լուրջան ու դարձյալ բարձրացնում ինքնության խնդիրը.

«Լինում են դեղորբեր, երբ տեսք է քո ինքնությունը սղասողական ռեժիմի մեջ դասես, հետ դասես և նորմալ մարդ լինես: Որովհետև, իհարկե, ես վստահ եմ, հայերը Թուրքիայում անցնում են նույն կամ միգրացի ավելի վատ... մարդիկ կան, ովքեր չափազանց կողմնակալ են և առեկողմնաբար են լցված այլ մարդկանց նկատմամբ, երբ նման մարդկանց ես հանդիպում, տեսք է նախ և առաջ աղացուցես, որ դու նրանց նման մարդ ես, այլ ոչ թե թուրք: Երբ որ գալիս ես նման տեղ, որտեղ կա մոտ 18 երկիր [երկրի ուսանող], ամեն երկիր իր խնդիրն ունի, ուղղակի գիտակցում ես, որ դու միակը չես, և դու սովորում ես դրանով [խնդիրներով] աղորել»:

Ըստ Այլինի՝ մարդիկ տեսք է նախ դիմացինին ընդունեն որդես իրենց հավասարի, որդես մարդ, և հետո միայն որդես որևէ ազգության ներկայացուցիչ:

Եթե հոգեբանական խնդիրներն ինչ-որ չափով հնարավոր է լուծել անհատական մակարդակում, աղա վարչական խնդիրների լուծումը ոչ Այլինից է կախված, ոչ էլ Էմրեից: Թեև Էմրեի կացության իրավունքի քարտը տարբերվում է նրա կնոջը տրամադրած քարտից, այն դարձյալ համարվում է դիվանագիտական փաստաթուղթ: Կացության իրավունք ստանալը լուրջ խնդիրներ չի առաջացրել, սակայն այդ գործընթացը տևել է մոտ 3 ամիս:

«Ես դիվանագիտական կացության իրավունք ունեմ, բայց այն ինձ տալը Նայաստանի համար դժվար էր, քանի որ դա արտակարգ իրավիճակ էր. ես թուրք եմ, Թուրքիան և Նայաստանը շունեն դիվանագիտական հարաբերություններ, և բավականին երկար ժամանակ ղահանջվեց այն [կացության իրավունքը] ստանալու համար»:

Դիվանագիտական հարաբերությունների բացակայության դատաճառով Նայաստանում Էմրեին դիվանագիտական կացության քարտ տալը արտառոց երևույթ է: Նայաստանում դիվանագիտական ներկայացուցչություն չունենալու դատաճառով էլ Էմրեն ստիղված վայր է դրել որոշ քաղաքացիական իրավունքներ:

«Ես իմ ընտրելու իրավունքը այս ամբողջ ընթացքում չեմ կարողացել օգտագործել, չեմ կարողացել ընտրել: Երևանում չկա նաև Նունգարիայի դեսպանատուն, եթե մենք ուզում ենք ընտրել, օրինակ անցած ընտրություններին, մենք դեռք է գնայի՞նք Թբիլիսի և այնտեղ ընտրելի՞նք: Թուրքիայի դեսպանատուն չեմ կարող գնալ, քանի որ մի անգամ գնացի այնտեղ, մի օր մի փաստաթղթի համար ժամադրություն վերցրի, մի քանի անգամ էստեղից զանգեցի ասեցի, որ գալիս եմ, էսինչ ժամին կլինեմ այդտեղ, կարո՞ղ եք, խնդրում եմ, տատրաստել այն, նրանք ասեցին, որ խընդիր չկա, բայց երբ գնացի, նրանք չէին ցանկանում բացել դուռը, մի փոքր իմ ժամից անցել էր, ներսում մարդ կար, շատ հասարակ փաստաթուղթ էր, ընդամենը մեկ բողոք, նրանք կարող էին սա անել, բայց չէին ցանկանում, ու ես սկսեցի կոխվ անել: Քաղաքական դատաճառով նրանք սա արեցին, ես գիտեմ, սա ուղիղ խտրականություն չէր, չեն ուզում քեզ ոչ մի բան տան, քանի որ նրանք AKP²⁴-ներ են: Այս ընտրություններին չփորձեցի, քանի որ վստահ եմ՝ նրանք ինչ-որ խնդիրներ կստեղծեն, բայց եթե ունենայի՞նք դեսպանատուն [Նայաստանում], ես նման բաների համար կոչայքարեի, ես ինձ այստեղ կարող էի վստահեի, կովեի, և նրանք ինչ-որ բան կանեին, բայց Թբիլիսիում ես չեմ կարող դա անել, քանի որ վստահ չեմ կարող լինել՝ առաջինը իրավիճակում կլինեմ, թե ոչ, նրանք ամեն բան կարող են անել»:

Երկար տայքարից հետո Էմրեն վերջիվերջո կարողանում է վերցնել փաստաթուղթը, սակայն նա այլևս չի ցանկանում ոտք դնել այնտեղ, քանի որ վախենում է, որ միգրացիոն ձեռքբերակալն կամ Եմրեի ենթարկվեն իր ձախակողմյան հայացքների համար, և Էմրեի այս ենթադրությունները նախադեղ ունեն. մի քանի տարի առաջ

²⁴ AKP-ն Թուրքիայում իշխող Արդարություն և զարգացում կուսակցությունն է:

Նիդեռլանդներում և Շվեյցարիայում գտնվող Թուրքիայի դես-
 տանատներում ծեծի են ենթարկել թուրք բաղաբացիների: Էմրեի
 այն ենթադրությունը, որ եթե Նայաստանում լիներ Թուրքիայի
 դեստանատունը, նա իրեն ավելի վստահ և ադահով կզգար և
 հարկ եղած դեղքում իր իրավունքների համար կդայքարեր, բա-
 ցահայտում է հայ-թուրքական հարաբերությունների մի կողմ, որը
 սահմանը բացելու քննարկումներում երբևէ չի հնչում, բայց մի-
 գուցե թուրքական կողմի համար ոչ մականա կարևոր հանգա-
 մանքներից է. սահմանը բացելու դարազայում Նայաստանը
 կարող է դառնալ ընդդիմադիր թուրքերի ադահով ադաստան:

Լինելով երկու երկրի բաղաբացի՝ Թուրքիայի և Նունգարիայի,
 Էմրեն, միևնույն է, դիվանագիտական հարցերի դեղքում ելքի
 շատ տարբերակներ չունի, և փոխարենը թշնամանքի բաժնե-
 մասն ավելի է մեծանում, քանի որ Նայաստանը 2012 թ. խզել է
 դիվանագիտական հարաբերությունները նաև Նունգարիայի
 հետ²⁵. *«Մենք մտածում էինք երկու կողմից՝ ես և իմ կինը, եր-
 կուսս էլ նրանց [հայերի] համար թշնամի ենք»:*

Ըստ Այլինի՝ Նայաստան հասնելը մեծ խնդիր է, քանի որ
 Ստամբուլ-Երևան թռիչքները սղասարկող միայն մեկ ավիա-
 ուղի կա, և գներն էլ գնալով թանկանում են: Արձակուրդների ըն-
 թացքում Այլինը սովորաբար այցելում է իր ընտանիքին: Վերջին
 անգամ Նայաստանից Թուրքիա գնալիս Այլինը բռնել է Վրաս-
 տանի ճամփան, իսկ այնտեղից վերադառնալիս նա հասել է
 Մոսկվա: *«Ընդհանուր առմամբ կարծում եմ՝ 14-16 ժամ տևեց,
 որ սովորաբար 2 ժամ է տևում, ուստի խնդրում եմ, բացե՛ք սահ-
 մանները»*, — երկար թռիչքի հոգնածությունը թոթափելով՝ ծի-
 ծաղում է Այլինը:

Առաջին անգամ Նայաստան գալու ժամանակ օդանավակայա-
 նում՝ անձնագրային անցակետում, Այլինն ու Քարինը ստիդ-
 ված են եղել սղասել մեկ ու կես ժամ.

*«Նրանք փորձում էին հասկանալ՝ ով ենք մենք, ինչու ենք Նա-
 յաստան եկել, ինչդե է, որ թուրքական անձնագրեր ունենք,
 հատկադե Քարինի դեղքը նրանց համար անհասկանալի էր,*

²⁵ Նայաստանը Նունգարիայի հետ խզեց դիվանագիտական հարաբերությունները,
 երբ վերջինս Ադրբեջանին արտահանման Բուդադեշում ՆԱՏՕ-ի «Գործընկե-
 րություն հանուն խաղաղության» ուսումնական ծրագրին մասնակցող ադրբեջան-
 ցի զեներալ-եյտեմանտ Ռ.Սաֆարովին, ով կացնահարել էր հայկական բանակի
 լեյտենանտ Գուրգեն Մարգարյանին և իր դատիժն էր կրում այդ երկրում:

բանի որ նրանք իրականում չեն կարողանում կառ տեսնել Ղայաստանի ու Թուրքիայի միջև, նրանք շատ հարցեր տվեցին՝ «Այստեղ ինչ-որ մեկն ունե՞ք, բարեկամնե՞ք, ինչու՞ եք եկել, այստեղ երկա՞ր եք մնալու» բոլոր անվտանգության հետ կապված այս հարցերը... Նրանք անձնագրերի ամեն անկյուն ուսումնասիրում էին՝ հաճոզվելու համար, որ ինչ-որ բանից չենք փախչում, ահավոր է, որ միայն մի թռիչք [ավիատուղի] կա, և ամեն անգամ նույն դատմությունն է. միգրացիոն նրանք դա մտադրված չեն անում, բայց ես չեմ հասկանում, թե ինչու են Ղայաստանի բոլոր թռիչքները կազմակերպվում [Ստամբուլի] օդանավակայանի ամենահեռավոր անկյունից, հետո ավտոբոսներով են տանում դեղի ինքնաթիռ, փոքր ինքնաթիռներ՝ միշտ լիքը, աշխատողները կոդիտ են, հաճախ թռիչքի ուշացումներ են լինում և շատ ու շատ բաներ»:

Բացի անձնագրային անցակետի խնդիրներից՝ կա նաև թռիչքների կազմակերպման խնդիրը, ինչը, դատելով Այլինի խոսքերից, կարելի է ասել, որ դայանավորված է դարձյալ դիվանագիտական հարաբերությունների բացակայությամբ:

Մինչև Ղայաստան գալը Դիլիջանի դոդոցը կազմակերպում է Թուրքիայից ժամանած ուսանողների կացության իրավունքը ստանալու գործընթացը. ուսանողները մեկ տարվա կտրվածքով ստանում են այդ իրավունքը, և այն թարմացվում է ամեն տարի: Երբեմն անձնագրային անցակետում կացության իրավունքը ցույց տալը բավարար չէ, և սահմանադահները ճշտելու համար զանգահարում են դոդոց:

«Թուրքական անձնագիր ունեցողների համար անսովոր է կացության իրավունք ունենալը, ուստի այն մի տեսակ խնդիր է դառնում օդանավակայանում: Ղայաստանում մարդկանց դուր չի գալիս թուրքական անձնագիրը, երբ հետ ես գնում Թուրքիա, նրանց դուր չի գալիս [Ղայաստանի] վիզաները, կացության իրավունքը: Երկու դեղքում էլ բոլորը դժգոհ են, բայց դա կարևոր չէ»:

Այլինը կարծում է՝ երբ ինքն ու Թուրքիայից ժամանած մյուս ուսանողները հետ գնան Թուրքիա, իրենց համար դժվար կլինի ոլետական ադարատում աշխատանք գտնել իրենց՝ Ղայաստանում ադրելու և սովորելու դատճառով, բանի որ նրանք ոլետության համար արդեն անվստահության վարկանիշ են ձեռք բերել:

«Թեև UWC-ն միջազգային դոդոց է, նրանք [Թուրքիայում] խըն-

եմ, թե ինչդեպ եմ փոխվել հասարակությունները, ինչդեպ եմ նրանք դատկերացնում իրենց անցյալն ու առյապա՛հ»:

Այլի՛նը հիացմունքով դատմում է Նայաստանում իր «wow»²⁶ զգացողությունն առաջացրած դահր, այն է՝ Կասկադից Արա-րատը տեսնելը:

«Նիանայի էր, մենք մեքենայով գալիս էինք [Երևան], և մարդիկ հանկարծ՝ «Օ՛, նայե՛ք, Արարատը», շեմ հիշում, որ իմ կյանքում երբևէ ինչ-որ լեռից տղավորված լինեմ, կարծում եմ՝ նաև մյուսների ոգևորությունը... լրիվ ուրիշ զգացողություն է: Այդ տեսարանը լրիվ տարբեր էր նրանից, ինչ մտածել ես մինչ այդ: Արարատի շուրջ այնդիսի մշակույթ կա, որ շես կարող անտեսել»:

Սա մի ուշագրավ դրվագ է, երբ Այլի՛նը իր երկրում գտնվող լեռը «բացահայտում» է միայն հարևան երկրում, որտեղ կա դրա դաշտամունքը: Այսդեպ, Նայաստանի «սրբազան» լանդշաֆտը Այլի՛նին թույլ է տալիս «բացահայտել» Թուրքիայի ֆիզիկական աշխարհագրությունը:

Այլի՛նը կարողացել է այնդիսի թանկ հարաբերություն հաստատել Նայաստանում, որ դրա ջերմությունը նրան մղում է ևս մեկ տարի մնալ Նայաստանում: *«Ես ետ կգալի UWC Դիլիջան, եթե կարողանայի, անգամ եթե... անգամ դարգատես Նառայի հետ ունեցած հարաբերության համար, ով գրադարանավարուհին է և իմ թունփեռընթը [թուն հայ.՝ տուն, փեռընթ անգլ.՝ ծնող]: Ես եկա այստեղ, նրան հանդիպեցի, և կարծում եմ՝ նա այն մարդն է, որ միշտ դատրաստ է ինձ օգնելու: Նենց այդ հարաբերության համար ես մեկ այլ տարի էլ UWC-ում կանցկացնեի»:* Եվ հենց Նառայի շնորհիվ է, որ Այլի՛նի մայրը հարմարվել է դստեր՝ Նայաստանում աղբերու փաստի հետ: *«Նա միշտ օգնող է դաշտդանող է եղել, շատ դեղքերում ինձ համար մոր նման է եղել, ուստի իմ մայրը գիտի, որ աղահով եմ: Այդ առումով ես սիրում եմ հայերին, նրանք մայրություն ունեն, մայրական զգացողություն ունեն»:*

Թեև Այլի՛նի համար ավելի հեշտ է եղել աղբեր Միացյալ Նահանգներում մարդկանց բազմազանության շնորհիվ, նա Նայաստանը յուրօրինակ կերպով է սիրում.

«Կյանքի առումով ես Նայաստանի մեծ երկրորդացուն եմ, այն ա-

²⁶ Անգլերեն գարձանք և հիացմունք արտահայտող ձայնարկություն:

տումով, որ գնա՝ Դիլիջան, գնա՝, բայի՛ր փողոցներով, ոչ մի վատ բան չի դատասի, բոլորն իրար գիտեն, դատասիական մարդկանցից օգնություն խնդրես, նրանք միշտ բեզ կօզնեն: Փողոցներում անտուն մարդիկ չես տեսնի, բայց ես աղյրել եմ Միացյալ Նահանգներում, տեսել եմ երկնաքերեր և տեսել եմ մարդկանց, որ փողոցներում էին բնում և գումար չունեին կերակուր առնելու: Ինձ համար ավելի լավ է մի միջավայրում աղյրեմ, որտեղ բոլորը կիսում են իրար հետ, հասկանում են, օգնում են իրար: Դիլիջանը փոքր քաղաք է, և վերահսկում կա, եթե ինչ-որ մեկին ինչ-որ բան դատասի, շատ հեշտ կլինի այդ մարդուն գտնել, օգնել»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսդիսով, փակ սահմանն ու դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը առանձառես չեն խոչընդոտում Նայաստանի և Թուրքիայի քաղաքացիներին՝ միմյանց երկիր այցելելու հարցում: Նատկանշական է, որ թուրքերի՝ Նայաստան գալը չի սահմանափակվում զուտ տուրիստական կամ քաղաքացիական հասարակության ոլորտի նախագծերի մասնակցությամբ.²⁷ Թուրքերի համար Նայաստանը կարող է լինել նաև երկարաժամկետ կացության վայր: Ուստի, հաշվի առնելով մեր գրուցակիցներին, ինչդեպ նաև Թուրքիայի քաղաքացի, ազգությամբ քուրդ այն բոլոր մարդկանց, որոնք Նայաստանում են աղյրում, կարելի է եզրակացնել, որ շնայած մեր երկրների միջև ստեղծված հարաբերություններին և դարավոր ստեղծությանն ու ցավին՝ Նայաստանում կա Թուրքիայից թեկուզ շատ թույլ, բայց որոշ ներհուք: Նայաստանում աղյրող թուրքերին կարելի է համարել կանոնավոր միգրանտներ, քանի որ նրանք հիմնականում այստեղ բնակվում են օրենքի շրջանակներում՝ լինելով կա՛մ քաղաքացի, կա՛մ ունենալով կացության իրավունք²⁸:

Թեև հայաստանցիների մտքով հաճախ անգամ չի էլ անցնում, որ իրենց երկրում աղյրում են թուրքեր, վերջիններս ստեղծել են իրենց յուրօրինակ համայնքները: Եթե Այլինի դեղքում այդ համայնքը շատ սահմանափակ է, այն ընդգրկում է միայն Թուրքի-

²⁷ Ներկայումս գոյություն ունեն բազմաթիվ ծրագրեր, որոնք աջակցում են Նայաստանի և Թուրքիայի հասարակությունների, մասնավորապես երիտասարդների միջև երկխոսության հաստատմանը, ինչդեպ օրինակ՝ «Էրագմուս+» ծրագիրն է:

²⁸ Նայաստանում տարբեր ժամանակներում գրանցվել են Թուրքիայի կողմից ինչ-ինչ ղատճանկերով սահմանը անօրինական կերպով հատելու դեղքեր ևս:

այից ժամանած մյուս ուսանողներին, որոնք թուրքական մշակույթի մի ամբողջական համալիրի կրողներն են, առաջ էմբրեյի դեղքում այն բավականին լայն է, և դրա հիմնասյունը թուրքական մշակույթի միայն մեկ բաղադրիչն է՝ լեզուն, որն այդ համայնքը դարձնում է բազմամշակույթ և տարբեր ազգային ինքնություններ ներառող:

Չնայած մեր գրուցակիցները հարևան երկրից են, բայց մինչև այստեղ գալը Ղայաստանի մասին շատ քիչ են տեղեկացված եղել և ունեցել են տարբեր վախեր, հատկապես առ այն, որ Ղայաստանում իրենց կարող են վատ վերաբերվել և շքնդունել: Ղայաստանում մարդկանց հետ շփվելիս վախի զգացողությունը հետզհետե մարել է, մինչդեռ տեղացիների կողմնադասի վերաբերմունքը ժամանակ առ ժամանակ իրեն զգացնել է տվել: Եթե Թուրքիայում «թուրք» եզրը և «թուրքական ինքնությունը» քաղաքական օրակարգի թեմա է, առաջ Ղայաստանում այն գրեթե առօրյա խնդիր է՝ մասամբ շաղկապված ընտանեկան հիշողության հետ, մասամբ էլ՝ երկրի լուստերազմական իրավիճակին: Տեղացիները վերադասությանը են շփվում Ղայաստանում աղյուղ Թուրքիայի քաղաքացիների հետ, քանի որ չկա վստահություն, ինչը միահյուսվելով առկա կարծրատիղերի հետ՝ շատ դժներ է փակում մեր գրուցակիցների առջև. նրանք զրկվում են հասարակության մեջ լիարժեք ներգրավվելուց, ընկերներ ձեռք բերելուց, երբեմն լրտեսի լիտակ են ստանում կամ ստիպված լինում ջրնջել իրենց էթնիկ ինքնությունը: Ղետաքրքիր է, որ Ղայաստանում աղյուղ Թուրքիայի քաղաքացիները անվստահության են արժանանում ոչ միայն տեղացիների, այլև իրենց իսկ հայրենակիցների՝ Ղայաստան եկած թուրքերի կողմից:

Չնայած բոլոր հոգեբանական, սոցիալական և վարչական խնդիրներին՝ իմ գրուցակիցները հասցրել են սիրել Ղայաստանը և այն դարձնել իրենց կենսագրության մասը: Երանց ներկայությունը Ղայաստանում ոչ միայն իրենց հնարավորությունն է՝ բացահայտելու սահմանակից երկիրը, այլև մեզ համար էլ ոչ լուսկա կարևոր հնարավորություն է՝ ի դեմս նրանց տեսնելու ոչ թե դեմոնացված և կաղաթարված թշնամի «թուրքի» կերտարը, այլ կենդանի մարդուն՝ իր անձնական լուստմությանը ու մեր կողքին և մեր մեջ աղյուղ խնդիրներով:

ARMENUHI NIKOGHOSYAN
"TURKISH COMMUNITY" IN ARMENIA

The research addresses some problems that ethnically Turkish citizens of Turkey face while living in Armenia for a relatively longer period. The research particularly focuses on such issues as their motivation to come to Armenia, their status, their lives in Armenia, the attitudes of locals towards them, and the problems they might have, taking into consideration their ethnic identity as well as the absence of diplomatic relations between Armenia and Turkey.

KEYWORDS: Armenia, Turkey, identity, everyday life

АРМЕНИУИ НИКОГОСЯН
«ТУРЕЦКАЯ ОБЩИНА» АРМЕНИИ

В исследовании поставлен ряд проблем, касающихся более или менее длительно проживающих в Армении этнических турок – граждан Турции. В частности, автор останавливается на вопросах о причинах переезда в Армению и гражданского статуса, образе жизни в новой стране, отношениях с местными жителями и повседневных трудностях с учетом их этнической идентичности, а также отсутствия дипломатических отношений между Арменией и Турцией.

КЛЮЧЕВЫЕ СЛОВА: Армения, Турция, идентичность, повседневность

ԳԼՈՒԽ IV

ԹԱՎՇՅԱ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔԱԳԱՎՈՐ ՊԱՏԱՌԻԹՅՈՒՆԸ ԳԳԵՐՈՒՄ

- ՈՍՏԻԿԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԹԱՎՇՅԱ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
- ԳՅՈՒՂԱԲՆԱԿ ԵՒ ՔԱՂԱՔԱԲՆԱԿ ԿԱՆԱՆՑ ՄԱՍ-
ՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ՝
ԵՐԿՈՒ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

ՈՍՏԻԿԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ՓՈԽՄԿԵՐՊՈՒՄԸ ԹԱՎՇՅԱ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Չողվածու՞մ նկարագրվում է ոստիկանի կերտարի փոխակերտման գործընթացը Չայաստանում տեղի ունեցած Թավշյա հեղափոխության ընթացքում: Այն ներկայացվում է շարժման ժամանակ գերիշխող երկու հանրային խոսույթների («ոստիկանը թուրք է» և «ոստիկանը մերն է») միջոցով: «Ոստիկանը թուրք է» խոսույթում ակտուալ էր ոստիկանի՝ իբրև թշնամու ընկալումը և հակադրումը զինվորի կերտարին: «Ոստիկանը մերն է» խոսույթի տրամաբանությունը ոստիկանին որդես յուրային ընկալելն էր, որի տարագայում նա արդեն նույնացվում էր զինվորի հետ: Այս համատեքստում ոստիկանը ներկայացվում էր որդես առկա քաղաքական իրավիճակի զոհ: Չնայած նրան, որ այս երկու խոսույթները զոյություն ունեին միաժամանակ, այնուամենայնիվ, շարժման կեսից նկատելի դարձավ դրանց միջև առկա հարաբերակցության փոփոխությունը:

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ՝ Թավշյա հեղափոխություն, ոստիկան, զինվոր, կազմաբանդում, ավանդական մշակույթ, քաղաքացիական հասարակություն

Ադրիլի 16-ին՝ Թավշյա հեղափոխության ընթացքում, երբ ոստիկանները Բաղրամյան դողոտայում դատ էին կազմել ցուցարարների բազմության առաջ, նրանց մեջ կանգնած քաղաքացիներից մեկը, դիմելով փշալարերից այն կողմ գտնվող ոստիկաններին, բղավում է. «Աշոտ, այ Աշոտ, արա, տատոդ էլ աստե, եկել ես կայնես խփե՞ս տատոդ: Հիմա ի՞նչ անենք ավադեր, տատոդ հետ ու՞ր էթամ, հասկանու՞մ ես, ինձ էլ ես խփելու: Ընգերներ ենք, հասկանու՞մ ես... Դու ես, քու ընգերն աս, քոչի տղեն աս, կամ դու, որ տենց ուշադիր նայում ես վրաս, հեսա էթալու եք հայաթ, ի՞նչ ես ասելու, խի՞ ես ըտեդ, ի՞նչ էիր անրմ: Քուչի մեջ կայնում, ասում ես սենց չի ձևը, գալիս ստեդ՝ ՎՈ՛: Նայաթ կա, վաղը մյուս օր տուն եք էթալու, տատոդ ի՞նչ ես ասելու, ավադեր..»¹:

Ադրիլի 16-ն այն օրն էր, երբ մի խումբ ցուցարարներ Նիկոլ Փաշինյանի հետ միասին փորձում էին խափանել Ազգային ժողովի կողմից Սերժ Սարգսյանին վարչադատ ընտրելու գործընթացը: Ոստիկանները փշալարեր էին տեղադրել Ազգային ժողովից մի քանի մետր հեռավորության վրա, որդեսգի թույլ շտային ցուցարարներին Փաշինյանի գլխավորությամբ ներխուժել Ազգային ժողովի շենք: Սակայն, վճռականորեն տրամադրված լինելով հասնել Ազգային ժողով, այնուամենայնիվ, Փաշինյանը փորձում է անցնել փշալարերի վրայով: Այդ դասին ոստիկանությունը ձայնային նռնակներ և ծխանոնակներ է արձակում դեղի ցուցարարները: Ն. Փաշինյանի ձեռքը վնասվում է փշալարերից: Նռնակներից վիրավորվում են մի շարք քաղաքացիներ և բազմաթիվ ոստիկաններ²: Փաշինյանին և մյուս վիրավորներին տեղափոխում են հիվանդանոց: Այդ ամենից հետո էր, որ բազմության մեջ գտնվող քաղաքացին ոստիկաններից մեկին ուղղեց վերոհիշյալ խոսքերը: Նետագայում դիտի դարձվի, որ Աշոտի կերտարն այդ երիտասարդը հորինել է:

Նոդվածը փորձ է՝ հասկանալու, թե ինչու անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու Աշոտի կերտարը, ինչ դինամիկա կրե-

¹ Աշոտ, այ Աշոտ, տատոդ էլ աստե. Յուգարաբը՝ ոստիկանին // Asekose.am, 16.04.2018, <https://www.youtube.com/watch?v=dHZGifmcM7c>, 09.05.2018:

² Օրվա գլխավոր լուրերը՝ «մեկ տղով» // News.am, 16.04.2018, <https://www.youtube.com/watch?v=-tnphKeySk0>, 09.05.2018:

ցին «նստիկանների» մասին ընկալումները Թավշյա հեղափոխության ընթացքում, ինչդեռ նաև վերլուծելու ոստիկանի և զինվորի կերտարների համադրումն ու հակադրումը հանրային խոսույթում (դիսկուրս):

Այս հարցերի լուսավորումները փնտրելու համար փորձեցի բանավոր դատմություններ գրանցել ամերիկյան հեղափոխության մասնակիցներից, քանի դեռ չէր ձևավորվել «հեղափոխական կանոնիկ» տեքստ, և հնարավոր էր արձանագրել մասնավոր տղավորություններ: Նաջողվեց անցկացնել ինը խորացված հարցազրույց շարժման մասնակիցների հետ: Նեղափոխության խոսույթում ոստիկանների հետ կապված սյուժեները վերլուծելու համար ոչ տակա կարևոր նյութ կար համացանցում՝ սոցիալական ցանցերում տեղ գտած դիտարկումներն ու մեկնաբանությունները, լուսանկարներն ու տեսանյութերը և հատկապես ուղիղ հեռարձակումները: Եվ վերջապես, ուսումնասիրությունից ամմասն չի մնացել մասնակցային և հեռահար դիտարկումը, քանի որ հետազոտությունը կատարվել է ընթացող իրադարձություններին զուգահեռ և անձնական մասնակցությամբ: Աշխատանքի համար հիմք ծառայած բանավոր դատմության մեթոդաբանությունը զուգորդվել է վերոհիշյալ նյութերի դիսկուրս անալիզով:

* * *

Նայաստանի Նանրադատությունում 2018 թ. գարնանը տեղի ունեցող իրադարձությունները հայտնի դարձան «Թավշյա հեղափոխություն»³ անունով, որը հանրային շրջանառության մեջ դրեց շարժման նախաձեռնող, Ազգային ժողովի «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը: Եարժումը սկիզբ առավ մարտի 31-ին Գյումրիից՝ քայլերթով, այնուհետև ամերիկյան 13-ից շարունակվեց ցույցերի ու հանրահավաքների ձևաչափով և դասակարգվեց իշխանափոխությամբ:

Թավշյա հեղափոխության ընթացքում հետաքրքիր էր ոստիկանների շուրջ ստեղծված հանրային խոսույթը: Ոստիկանությունն այս ողջ ընթացքում ցուցաբերողների հետ կիսում էր դայքարի միևնույն տարածքը, սակայն հակադրված էր նրանց որդես իշխանության ներկայացուցիչ:

³ Այս անվանումը Ն. Փաշինյանը փոխառել է 1989 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Չեխոսլովակիայում տեղի ունեցած խաղաղ քաղաքացիական շարժումից՝ նդատակ ունենալով ցուցել շարժման խաղաղ բնույթը:

Վերջին տասնամյակում Նայաստանում բողոքի ակցիաների և ցույցերի շնորհիվ ձևավորվել է նեղ իմաստով՝ ցուցարարների, լայն իմաստով՝ հանրության և ոստիկանների միջև հաղորդակցման որոշակի մշակույթ: Նողվածում անդրադառնալու եմ այդ մշակույթի դրսևորումներին Թավշյա հեղափոխության ընթացքում և հատկապես ոստիկանի կերտարի հանրային ընկալումների փոփոխություններին:

ՈՍՏԻԿԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՄԻՆՉԵՎ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Նայաստանի անկախացումից հետո հայ հասարակությունում ոստիկանական ինստիտուտի նկատմամբ նկատելի էր խորը անվստահություն, ինչը մասամբ դայմանավորված էր խորհրդային շրջանից ժառանգած վերաբերմունքով և գրեթե նույն կադրերով ու աշխատելաճով: Այդ ուժային կառույցն օգտագործվում էր քաղաքական նոր վերնախավի իշխանությունը տարածելու և (վերա)-հաստատելու համար: Անկախացման առաջին իսկ տարիներից տեղի ունեցան մի շարք քաղաքացիական շարժումներ ու ցույցեր՝ որոշեա հետևանք ձևավորելով ոստիկանների և քաղաքացիների միջև որոշակի հարաբերություններ՝ լեցուն բռնության դատմություններով: Ոստիկանության հանդեպ անվստահությունը դարբերաբար արտահայտվել է բողոքի ցույցերի ու քաղաքացիական շարժումների ժամանակ: Սակայն արմատացած անվստահության այդ մթնոլորտը փոխելու սերմեր առաջացան 2018 թ. Թավշյա հեղափոխության շնորհիվ:

Ղարաբաղյան շարժման ընթացքում, երբ տեղի էր ունենում խորհրդային շրջանից դեղի անկախ Նայաստան անցումը, քաղաքացիներին դաշտողանելու կամ դատժելու հիմնական դատասխանատվությունը կրում էր խորհրդային բանակը, որը կենտրոնական իշխանության որոշմամբ ներգրավված էր՝ վերահսկելու Երևանում տիրող իրավիճակը: Բանակի ներկայությունը հիմնավորող դարետային ժամը գործում էր ընդհուպ մինչև 1988 թ. դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը: Նույն-իսկ այդ ողբերգությունից հետո խորհրդային զինվորները չէին հեռանում Օդերայի հրադարակից:

բառվեց անկախ Նայաստանում 1996 թ. նախագահական ընտրություններին հետևած բողոքի ցույցերի ժամանակ: Նայտարարվեց արտակարգ դրություն, Երևանի գլխավոր փողոցները շրջափակվեցին տանկերով: Սա առաջին դեղքն էր, երբ հետխորհրդային Նայկական բանակը և ներքին զորքերն օգտագործվեցին ընդդեմ Նայաստանի Նանրադետության քաղաքացիների⁴:

Նույն ձեռագիրը կրող ճնշումներ են գործադրվում նաև 2004 թ. ապրիլի 12-ի ցույցերի ժամանակ, երբ 2003 թ. նախագահի դաշտոնում ընտրված Ռոբերտ Քոչարյանի հակառակորդները լուսահանջում էին խոստացված հանրաքվեն: Երբ ժամը ճնշվեց բռնի ուժով՝ հատուկ ջոկատի՝ կարմիր բերետավորների մասնակցությամբ, շնայած դեռ է նշել, որ ի տարբերություն 1996 թ. շարժման՝ այս ցույցերն ավելի խաղաղ բնույթ էին կրում: Ինչդեռ նշվում է Լ. Աբրահամյանի և Գ. Երզնյանի հոդվածում, 2004-ի ցույցերի ժամանակ որոշ օլիգարխների թիկնադասերը ներգրավվել էին որդես ցույցը ճնշողներ⁵: Այդ դրակտիկան սկսեց կիրառվել գրեթե հետագա բոլոր բողոքի ցույցերը ճնշելիս:

Իշխանությունների կողմից կիրառվող ճնշումներն իրենց գազաթնակետին են հասնում 2008 թ. ցույցերի ժամանակ, որոնք ուղղված էին Նայաստանում նախագահական ընտրությունների բողոքարկմանը: Սա ևս ավարտվեց բախումով. մարտի 1-ի լույս 2-ի գիշերը զոհվեց տասը մարդ՝ ութ քաղաքացի և երկու ոստիկան⁶:

Անկախացումից ի վեր տեղի ունեցող ցույցերի արդյունքում քաղաքացիների մոտ ոստիկանական համակարգի նկատմամբ ծայրահեղ անվստահություն ձևավորվեց, ինչի հետևանքով իշխանության նկատմամբ բացասական վերաբերմունքը և նրանց հասցեագրվող անվանարկումները տեղափոխվեցին ոստիկանների վրա՝ որդես իշխանության կամակատարների:

Որոշակի դարբերականությամբ տեղի էին ունենում բնադաշտանական, սոցիալական, քաղաքական բնույթի ցույցեր Երևանում և դրանից դուրս, ինչդեռ էին՝ Մաշտոցի դուրսակի համար դաշտարը, տրանսպորտի ուղեվարձի թանկացումների դեմ «100

⁴ L. Abrahamian, G. Shagoyan, From Carnival Civil Society Toward a Real Civil Society: Democracy Trends in Post-Soviet Armenia // Anthropology and Archaeology of Eurasia, 2012, 50:3, p. 32, <http://dx.doi.org/10.2753/AAE1061-1959500301>.

⁵ Նույն տեղում, էջ 33:

⁶ Նույն տեղում, էջ 36:

դրամ» շարժումը, ՊՊԾ գունդը գրաված «Մասնա ծոեր» խմբավորման հանրային սատարումը, որը ճնշվեց ուժի կիրառմամբ: Այդ շարժումների ընթացքում քաղաքացիների մոտ ձևավորվում է ոստիկանների գործողություններին դիմադրելու որոշակի վարք: Առավել հասկանչական են 2015 թ. «Էլեկտրիկ Երևան» ցույցերը՝ ուղղված գազի սակագնի թանկացման դեմ: Ցույցերի առաջին օրերին ոստիկանության կիրառած ջրցան մեքենաներն ու ցուցարարների հետադիմումն ավելի շատ մարդ դուրս հանեցին փողոց: Այդ ժամանակ էր, որ «Ֆեկա 23» կեղծանվամբ մի երգիչ թողարկեց «Պարոն որեզիդենտ» երգի տեսահոլովակը, որտեղ հիմնականում հնչում է քննադատություն նախագահ Ս. Սարգսյանի հասցեին, և դարբերաբար ցուցադրվում են «Էլեկտրիկ Երևան» ցույցերի ժամանակ քաղաքացիների ու ոստիկանների բախումներից կադրեր: Երգում ոստիկանը հիշատակվում է «մենթ» անվանմամբ, ինչը սովորաբար օգտագործվում է որդեա ոստիկաններին ուղղված վիրավորանք⁷:

*«Ուզում եմ, որ տխրի
Միրտը մեր որեզիդենտի,
Որ չի տարբերվում
Թուրքը հայ մենթից»⁸:*

Երգում ոստիկանը նույնացվում է թուրքի հետ, որի կերտարը հանրային նման ելույթներում հաճախ ուղղակի «թշնամի» էր նշանակում:

ՈՍՏԻԿԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՆԵՂԱՓՈՒՍՈՒԹՅԱՆ
ԸՆԹԱՅՔՈՒՄ

Ոստիկանն իբրև «օտար» կամ «թշնամի»

Թավշյա հեղափոխության ժամանակ, հատկադեպ սկզբնական

⁷ Որդեա ոստիկանի վիրավորական անվանում այն հայերեն ներթափանցել է ռուսերենից, որտեղ «բանտի վերահսկող», «ոստիկան» իմաստը ձեռք է բերել առնվազն 19-րդ դարում: Բառի վերջնական ստուգաբանությունը դարձ չէ, կա առաջացման մի բանի վարկած, որից ամենահավանականն է ավստրո-հունգարական ոստիկանի թիվնոցի հունգարերեն «մենթ» անվանումը, որը Ռուսաստան է ներթափանցել Լեհաստանի միջոցով: Почему полицейских называют «ментами»? // Ежедельник "Аргументы и Факты", № 20, 16/05/2018, http://www.aif.ru/society/history/pochemu_policeyskih_nazyvayut_mentami:

⁸ Ֆեկա 23, Պարոն Պրեզիդենտ, 03.03.2017, <https://www.youtube.com/watch?v=tqz6SMZAtpQ>, 09.05.2018:

շրջանում, ուստի կանին իբրև թշնամի ընկալելը շարունակում է վերարտադրվել: «Ուստի կանը թուրք է» արտահայտությունը այս շարժման երկու հիմնական խոսույթներից մեկն էր, որը, կարելի է ասել, ժառանգվել էր առնվազն 2008 թ. բողոքի ցույցերից և մարտի 1-2-ի վերոհիշյալ իրադարձություններից հետո⁹: Չայրացած քաղաքացիները Ռ. Քոչարյանին, աղա նաև Ս. Սարգսյանին անդատվելու նդատակով երբեմն «թուրք» էին անվանում, և այդ վիրավորանքն ըստ էության տարածվեց նաև ուստի կանների վրա՝ որդես «նրանց կամակատարների»: Մինչև մարտի մեկյան արյունոտ իրադարձությունները՝ դեռ 2008-ի փետրվարյան ցույցերի ժամանակ և դրանից հետո, Ռ. Քոչարյանի և Ս. Սարգսյանի վարչակարգը Լ. Տեր-Պետրոսյանի կողմից ստացել էր «մոնդոլ-թաթարական» բնութագիրը, ինչը կարծես հանրային խոսույթում լեզվափոխանցեց ներքին «թշնամուն» արտաքին թշնամու հետ նույնացնելը:

Թավշյա հեղափոխության ընթացքում ուստի կանների համեմատությունը «էթնիկ թշնամու» հետ ակտիվորեն շրջանառվում էր ինչդես ցույցերի ժամանակ, այնդես էլ ֆեյսբուքյան մեկնաբանություններում: Առավել հաճախ լսվող վիրավորանքը «թուրք» վանկարկումն էր, որը հնչում էր ուստի կանների գործադրած բռնությանն ու ագրեսիային ի տատասխան. «Ղո դուր կենդանի չե՞՞ր, թուրք չե՞՞ր: Չեր ժողովրդի դեմ փշալա՞ր եք հանել, տե՛նց լավ չի, ավելի բարձրացրեք: Սերժի՞ն եք դաշտդանում ձեր փշալարերով»¹⁰:

Ֆ. Բարթն էթնիկ խմբերի ինքնության սահմաններին նվիրված ժողովածուի նախաբանում ընդգծում է, որ խմբերի միջև կարևոր են ոչ այնքան օբյեկտիվ մշակութային տարբերությունները, որքան այդ տարբերությունների ընկալումը: Այս դեռքում կարևոր գործոն են այլ խմբի կամ նրա անդամների մասին բացասական կարծրատիղերը¹¹, որոնք մեր դեռքում ընկալվում են որդես ինքնաբավ համալիր, և էթնիկությունը որդես որոշակի հատկությունների ամբողջություն վերագրվում է մեկ այլ «մերժելի» խմբին:

⁹ Մարտի 1-ի դեռքերը, 1 մաս, 09.05.2018, վերջին դիտում՝ 15. 10.2018 // Անհատական ֆեյսբուքյան էջ: Անհատ մարդկանց ֆեյսբուքյան էջերը հղման ենթակա չեն: Նշվելու են միայն նյութի տեղադրման և վերջին դիտման ամսաթվերը:

¹⁰ Սիդա Պատիկյան, ՊԱՆ, Երևան, 2018, Գ.Լ., 23 տարեկան:

¹¹ Փ. Բարթ, Этнические группы и социальные границы, Москва: Новое изд-во, 2006, с. 18.

Կարծրատիղային և դարձեցված կերտարների ստեղծման ու տարածման մեջ կարևոր է մեդիայի դերը¹²: ՉԼՄ-ները հեղափոխության ընթացքում ակտիվորեն մասնակցում էին ոստիկանների հրեշավորման գործընթացին: Սոցցանցերում տարածվում էին հատկապես այն տեսառոլվակները և նկարները, որտեղ ոստիկանությունը բռնություն էր կիրառում ցուցարարների և դատահական անցորդների նկատմամբ կամ նրանց բերման էր ենթարկում: Լույս էին տեսնում լրագրողական հոդվածներ՝ հետաքրքրություն գրգռող և զայրույթ արթնացնող վերնագրերով: Օրինակ, ադրիլի 16-ին, երբ ոստիկանները հատուկ միջոցներ՝ խլացուցիչ նոնակներ էին նետում հավաքված բազմության ուղղությամբ, ցուցարարներից մեկը ճակատի վնասվածք ստացավ նետված նոնակի բեկորներից: Այդ կադրակցությամբ լույս տեսավ մի հոդված՝ «*Այն աղջիկը, ում դեմքը ամբողջությամբ արյունոտ էր, նրա աչքերի մեջ բեկորներ կար և նա այլևս չի տեսնում*»¹³ վերնագրով: Իրականում, չնայած մի քանի ամիս անց դեռ նրա մարմնի տարբեր մասերից նոնակի բեկորներ էին հանում, բայց նրա դեմքը լուրջ վնասվածքներ չի կրել, իսկ տեսողությունն էլ, բարեբախտաբար, չի վնասվել:¹⁴

Լրատվամիջոցների տարածած աղատեղեկատվությունը այսօրվա նման մոլաստում է ոստիկանի միջականագված բացասական կերտարի տարածմանն ու հարուցում քաղաքացիների սուր քննադատությունը. «*Մերժը ու վոլան սրանց թուրքերից են փողով առել, բերել լցել են ՎԱՅ ժողովրդի մեջ կոտորելու համար, ոչ մեկ չի կարա հակառակն աղացուցի, ոստիկանի համազգեստները քաշել են հարերը ու իրենց տականքությունն են անում, ի օգուտ դավաճանների, էսքան ոստիկան մենք չէինք կարա ունենալ*»¹⁵:

¹² P. Брудейкер, Этничность без групп, Москва: Издательский дом Высшей школы экономики, 2012, с. 140-142.

¹³ Այն աղջիկը, ում դեմքն ամբողջությամբ արյունոտ էր... // Internews.info 17.04.2018, <https://internews.info/այն-աղջիկը-ու-դեմքը-ամբողջությամբ-արյունոտ-էր/>, 23.06.2018:

¹⁴ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Բ.Մ., 19 տարեկան:

¹⁵ Ազգադավ մարդկանց և ոստիկանների... // «Սասնա ծռեր-բացահայտում» Ֆեյսբուքյան խումբ, 21.04.2018, [311](https://www.facebook.com/934962079987453/videos/1029756883841305/?fref=mentions&_xts__[0]=68.ARBjGTi6D5ZR6UxykCvHTXs_nEkkRzV6ZQ4yMnfS5Ciqq3_reZbCaWjIjGjrj2KQHiYpRM0Yew5yAfG2FBADNHaz2bq9CyQcmCgVd0y9XPJUZxqMe3BX_U8owIp0nWYMVOkqc9xbMPdvPV8LgZEfGSAzxOmc12JCyvkuGdLZLvKPNesXK2&_tn__=KR&fb_dtsg_ag=AydyvEix01IVZoJtZIT6RkKTSY80E7HArH6ZAnrbLu9Jyg%3AAAdwKfJpLrLaThUcqxhEo6yiv2N9MhuNykz5VD7eyU4z_bw, 04.05.2018:</p>
</div>
<div data-bbox=)

Ինչդեռ տեսնում ենք, «թշնամու» խոսույթը ծավալվում է հատկապես «թուրք»/«հայ» հակադրության տիրույթում, որտեղ ուստիկաններին «մենք»/«նրանք» հակադրությունում դիրքավորում են «նրանքի» մեջ՝ նույնացնելով «ազգային թշնամու» հետ:

«Թուրք» էթնոնիմն այս դարազայում ոչ թե ազգության, այլ բարոյական որոշակի հատկանիշների հավաքական անվանում է, որը հետևանք է Նայոց ցեղատղանությունը որդես ազգային մետամարատիվ գործածելու¹⁶: Նույն երևույթի դրսևորում է այն, որ 2018 թ. ադրիլի 22-ին Ս. Սարգսյանի և Ն. Փաշինյանի տատալված բանակցությունից¹⁷ հետո Ազատություն ռադիոկայանի ուղիղ եթերն ուղեկցող մեկնաբանություններից մեկում Ս. Սարգսյանը համեմատվում է Թալեաթ փաշայի հետ. սա՛ այն բանից հետո, երբ նա իր խոսքում հիշատակում է 2008 թ. մարտի 1-ը, ինչը հանրության կողմից ընկալվում է որդես նոր տղանդի սղառնալիք: Նույն օրը ցուցարարները դեղի հրատարակ երթ անելիս երգում էին «Չարթի՛ր, Լաո» երգը¹⁸, որտեղ ի թիվս այլոց խոսվում է նաև հակառակորդից ակնկալվող սղառնալիքի մասին՝ «Սուլթան կուզե ջնջել մըզի», ինչն էլ իր հերթին զուգահեռվում է Ս. Սարգսյանի հայտարարության հետ:

«Ոստիկանը թուրք է» արտահայտությունից բացի՝ հասարակական խոսույթում շրջանառվում էր նաև մեկ այլ էթնիկացված համեմատություն: Ոստիկաններին բնորոշում են որդես «ադրբեջանցի» («*ադրբեջանցու մնացորթներ են սրանք, ուրիշ ոչմիբան, սրանց դոտի հավաքես դոստերը անցկցնես ու բաց թող գնան իրանց հայրենիք...*»¹⁹) և վիրավորանքների շարքում հայտնվում է նաև «Ֆաշիստ» ձևակերտումը («*ոչխար, թուրք, ձեռքերդ թուլանա աննասուն, բա դու մարդ ես, այ Ֆաշիստ*»²⁰): Այստիսի ձևակերտումների կարելի է հանդիպել հիմնականում համացանցում՝

¹⁶ Г. Шагоян, Армянский геноцид как метанарратив травматической памяти // Гефтер, эл. журнал, 25.04.2016, <http://gefter.ru/archive/18335>, 04.05.2018.

¹⁷ Վ. Ասլանյան, Փաշինյան-Սարգսյան բանակցությունները տաղավելցին // Ազատություն ռադիոկայան 22.04.18, <https://www.azatutyun.am/a/29184789.html>, 24.06.2018:

¹⁸ Ազատություն ռադիոկայան, Ուղիղ միացում Երևանից, 22.04.2018:

¹⁹ Տե՛ս հղում 15:

²⁰ Կարմիր բերետավոր բերման ենթարկելիս փորձում է կոտրել քաղաքացու ոտը // Asekose, 23.04.2018, https://www.facebook.com/asekose.am/videos/1724585077-609859/?hc_ref=ARQS-tWMqWo5ZUajR1Z2Q8GXChZqpvEB8Xu39Foy45kF1Mc-UtTUVXiA-BIVaFjGE, 14.06.2018:

նկարների ու տեսանյութերի մեկնաբանություններում՝ ի տարբերություն «Թուրք» բնորոշման, որն առկա էր նաև փողոցում՝ կենդանի խոսքում: Այս արտահայտությունները վկայություն են այն բանի, որ մենք-նրանք հակադրությունը կառուցվում է դաստակալ թշնամիների տարբեր կերտարների շուրջ: «Թուրքի», «աղբեջանցու», «Ֆաշիստի» կերտարները մարմնավորում են վերացական «թշնամուն» հատուկ բոլոր բացասական հատկանիշները: Ընդ որում, աղբեջանցին հաճախ նույնացվում է թուրքի հետ, բայց կիրառությամբ զիջում է վերջինիս: Երկրորդ համաշխարհային դատերազմից հետո «թշնամուն» կերտարը մարմնավորող «Ֆաշիստ»-ի կիրառությունը թեև հետզհետե այսօր նվազում է, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ հիշեցնում է իր երբեմնի թշնամիակերտ ֆունկցիոնալությունը:

Ոստիկանության աշխատակիցներին բնորոշելիս ցույցերի ժամանակ դարբերաբար հնչում են նրանց՝ նույնասեռականների և մարմնավաճառների հետ համեմատությունները՝ օգտագործելով դրանք որդես անբարոյական լինելու հոմանիշ²¹: Մարմնավաճառի հետ ասոցացվում են հատկապես կին ոստիկանները և հատկապես «Սասնա ծռերին» աջակցող ցույցերի ընթացքում, երբ շրջանառվեց մի լուսանկար, որում կին ոստիկանը ոլորում է տարեց կնոջը ձեռքը: Դրան զուգահեռ համացանցում տարածվեց նույն ոստիկանի ֆեյսբուքյան էջը, որի բովանդակությունն ընթերցվեց իբրև մարմնավաճառության աղացույց: Ոստիկանին առավել նվաստացնելու համար մարմնավաճառությամբ փող վաստակելն ավելի գերադասելի էր ներկայացվում. «Մի ծանոթ հարևան կար, կինը լրքի մեկն էր, ասեց առավոտը դու՞ես հաց ու կարագ երեխոս տալու: Ասի աղջիկ ջան, էլ նույն բանը փողոցում կանգնած մարմնավաճառն էլ է ասում, էլ ինչի՞ եք խեղճ ժողովրդին ծեծում: Մարդ ու կին զբաղվեք ձեզ վաճառելով, նույն բանը չի՞, եկամտաբեր է»²²:

Ոստիկաններին այս մերժված էթնիկ և սոցիալական խմբերի հետ համեմատելով՝ հանրությունը նրանց դարձնում է «այլ», դուրս է դնում «մենքի» սահմաններից, որդեսզի արդարացնի իր մերժողական վերաբերմունքն ու սեփական գործողությունները:

²¹ Ժողովուրդ ջան տարածում ենք անխնա ազգադավ մարդկանց և ոստիկանների, որոնք իրենց կեղծ ոստիկան են հռչակել դուրս գալով մեր դեմ // News Hay, 21.04.2018, <https://www.facebook.com/934962079987453/videos/1029756883841305/>, 15.06.2018:

²² Ֆեյսբուքյան գրառում, 15.05.2018, վերջին դիտումը՝ 15.10.2018:

Ոստիկանական համակարգի նկատմամբ մերժողական վերաբերմունքն էլ ավելի է ընդգծվում, երբ այն հակադրվում է զինվորի կերտարին: Նանրային խոսույթում այս համեմատությունը տեղի է ունենում երկու ուժային կառույցների համեմատությամբ՝ նրանցից մեկին վերագրելով «հերոսի», մյուսին «թշնամու» հատկանիշներ: Արցախյան դատերազմի արդյունքում հայ զինվորի կերտարը հետխորհրդային խոսույթում հիմնականում նույնացվում է հերոսի հետ: Նման կերտարով է նա հայտնվում դասագրքերում, սոցիալական գովազդում և մեդիահաղորդումներում: Արտաքին թշնամու դեմ դայքարող զինվորը հակադրվում է ոստիկանին, որը ուժ է կիրառում սեփական քաղաքացիների հանդեպ. «Իմ Նայաստանին զինվոր ա դետոք, ոչ թե քո նման ոստիկան, հասկանու՞մ ես էդքանը: Նայաստանին ոստիկան դետոք չի, Նայաստանին զինվոր ա դետոք: Էն, որ հասցրել են, կանգնացրել են ընդե էդ շորերով, էդ շորերը ուղարկեք իմ զինվորներին, իմ երեխեքը ընդե կանգնած են.. Իմ աշակերտներս Ադրիյան դատերազմի մասնակից են եղել, իմ երեխեքս բարձր են դահել իմ անունը»²³:

Սահման դահող զինվորներին առնչվող դատումներն արդիականանում են հատկապես հեղափոխության այն օրերին, երբ տարածվում են հայ-ադրբեջանական սահմանի լարվածության մասին տեղեկությունները. «Մերժիկ, ասում ես սահմանի վրա լարված իրավիճակ ա որ ժողովուրդը հետ կայնի, այ սերժիկ, այ էտ մուսրներիտ [ռուս.՝ *mycor* -ադր] վեկալ գնացեք սահման, որ կովեք, տենամ էտ ասլանները ընդեյել են ըտենց դահելու թե փախնելու են իրանց մամայի մոտ»²⁴: Եթե ընդհանրացնենք, ադա ոստիկանը ներկայացվում է որդես բռնարար, մինչդեռ զինվորն ընկալվում է որդես դաշտդան: Վերոհիշյալ մեջբերումից ակնհայտ է դառնում, որ սահմանին լարված իրավիճակի մասին տեղեկատվությունն էլ ընկալվում է իբրև ցույցը ցրելու գործիք կառավարության ձեռքին:

Նակադրելով ոստիկաններին ու զինվորներին՝ վերջիններիս հետ հաճախ նույնացվում են նաև ցույցին մասնակցող երիտա-

²³ Ֆեյսբուքյան գրառում, վերջին դիտումը՝ 22.06.2018:

²⁴ Տե՛ս հղում 15:

ասրդ տղաները, հատկապես նրանք, ում ոստիկանները բերման են ենթարկում կամ որևէ բռնություն կիրառում նրանց նկատմամբ: Այդ տղաներն ընկալվում են որդես զինվորներ, նույնիսկ այն դեպքում, երբ դեռ չեն զինակոչվել (*«Տո ոչխարներ, տղամարդ եք՝ զնացեք թուրքերի հետ կռվեք, որ ամեն օր մի զինվորա զոհվում, էտի մեր վաղվա զինվորնա, ի՞նչ եք վրա տվել այ թուրքից չեք տարբերվում, այ ոչխարներ»*²⁵) կամ արդեն զորացրվել են (*«Նայիր քեզանից փոքրերին, սովորիր մարդ լինել ոստիկան!! այս տղաները սահմանն են դառնել թուրքից, իսկ դու մահակով վախեցնում ես ազգիտ: ԱՄՈԹԹ»*²⁶):

Դրան զուգահեռ ֆեյսբուքյան տիրույթում սկսում է տարածում գտնել *«Նամակ հայոց սահմանները դաշտոտանող զինվորից՝ ոստիկանին»* վերնագրով մի տեքստ, որում զինվորի անունից է իր կերպարը հակադրվում ոստիկանին.

«Եղբայր, սիրելի՛ն, մի՞թե ես սահմանի վրա ամեն օր կյանքս վտանգում եմ, հանուն իմ ժողովրդի հանգիստ կյանքի համար, որ դու գտնվելով նրա կողքին, մատնես անտարբերության նրա ցավը:

*Եղբայր, ես այստեղ աղոթում եմ ազգիս համար, դու այդտեղ հայիդուն ես նրան: Ես այստե՛ղ, դաշտոտանում եմ ազգիս դատիվն ու նամո՛ւք, դու ոտքերիդ տակ տրորո՛ւմ ես այն...»*²⁷:

Այս տեքստով կարծես նոյատյակ է դրվում առավել հեղինակային և ազդեցիկ դիրքից, ի դեմս հայ զինվորի վերացական կերպարի, ընդգծել ոստիկանի բացասական դերակատարումը: Ինչդեռ Ֆ. Բարթն է նշում, որ սովորաբար հակադրվում են առավել նման, մոտ խմբերը, այստեղ ևս ոստիկաններին հակադրելու համար ընտրվում է մեկ այլ ուժային կառույց՝ խտացնելու բացասականը: Այս բավականին լայնատիվ տեքստն ամբողջությամբ կառուցված է որդես նույն երևույթի «բարի» և «չար» երեսների հակադրություն:

²⁵ Ֆեյսբուքյան գրառում, 20.04.2018, վերջին դիտումը՝ 15.10.2018:

²⁶ «Ներոսներ» ֆեյսբուքյան էջ, 20.03.2017, <https://www.facebook.com/10695212731-27020/photos/a.1069791616433319/1281313368614475/?type=3&theater>, 12.05.2018:

²⁷ Ամենաբարի վիդեոներից // “Comments” ֆեյսբուքյան խումբ, 20.04.2018, https://www.facebook.com/iComments/videos/1708079842607920/?hc_ref=ARS5g9rwPemygaPC4yuy1XGhvuZcqmqQErLBqjCogBB2_NgsWdkPcldrVyam6YS7ffwY, 15.05.2018:

ՈՍՏԻԿԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ՓՈՓՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Չնայած «հեղափոխությանը» նախորդող շարժումներից ժառանգված «ոստիկանը թուրք է» արտահայտության շրջանառմանը՝ Թավշյա հեղափոխությունը վերը հիշատակված բոլոր ցույցերից առանձնանում է նրանով, որ շարժման ընթացքում նկատելի է դառնում ոստիկանի կերպարի դիմամիկ փոփոխություն դեղի դրականը՝ մրցակցող այլ կարգախոսի ներդրմամբ: Ընդհանուր առմամբ այս շարժման ժամանակ ոստիկանների կողմից գործադրած բռնությունների ծավալն անհամեմատ քիչ էր նախորդներից թե՛ անհատական մակարդակով, թե՛ ճնշման գործիքակազմով: Թավշյա հեղափոխության առանձնահատկությունն, անշուշտ, իր խաղաղ բնույթն էր, ու դրանում ակնհայտորեն կա և՛ ոստիկանության աշխատակիցների, և՛ քաղաքացիների ներդրումը:

Յուզարարների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունն այս կամ այն կերպ արձանագրում են քաղաքացիները և իրենք՝ ոստիկանները: Ոստիկաններից մեկն իրենց նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը բացատրում է քաղաքացիների՝ նախորդ ցույցերի ժամանակ ունեցած փորձառությանը՝ միևնույն ժամանակ ընդգծելով իրենց ցուցաբերած գտյվածությունը. «Միշտ լուսանկարիչներն ու լրագրողները մեր նկատմամբ շատ ավելի կոռիտ են վարվում, որովհետև նրանց հետ երթերի ու քաղաքացիական ակցիաների ժամանակ գուցե մենք բիրտ ենք եղել, բան հիմա»²⁸:

Բանասացներն իրենց հերթին, նկատելով կամ արձանագրելով ոստիկանների վարքագծի ու քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը, փորձում էին գտնել դրա բացատրությունը.

«Կային ոստիկաններ, որ իրականում լավ են վերաբերվել: Ես չգիտեմ՝ դա ինչի հետ ա կապված. դա կապված ա նրա հետ, որ նաև իրանք տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից դրամաշնորհներ են ստանում ու իրանք տարտավոր են հետո ամփոփագիր ներկայացնել, որ դեղի բարելավում... գուցե նաև դրա հետ ա կապված: Բայց միանշանակ իրանք ասել են, որ առաջվա ոստիկանները շեն: Նույնիսկ մի կին, նու, ցույցերի ժամանակ ենք ծանոթացել, մի կին ասում էր, որ ես մար-

²⁸ Սիդա Պառիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Մ. Լ., 25 տարեկան:

տի մեկից ակտիվ մասնակցել են բոլոր ցույցերին, ասում ա՝ օրինակ, մարտի մեկի ցույցերի ոստիկանները վայրենի էին, վայրենի: Ինձ ասում էր՝ ոնց որ ինչ լինեի՞ն: Չեմ հիշում, թուրքական տերմինով էր ինքը ասում: Ինքը ասում էր, որ մեր ոստիկանները, հա, փոխվել են»²⁹:

Մյուս զրուցակցիս խոսքերով՝ «Ոստիկանների վերաբերմունքը, չէ, անկեղծ ասեմ, ինձ համար սկզբից էլ նույնն էր. երևի թե, մի քիչ բռնությունն էր քիչ, համաձայն եմ, բռնությունը քիչ էր, բայց բռնությունն էլ քիչ էր, որովհետև մարդիկ իրենց տղանավորածից շատ էին անընդհատ լինում»³⁰:

Այնուամենայնիվ, երկու զրուցակիցներս էլ այդ փոխված վերաբերմունքը մասամբ տպավորում են արտաքին գործոններով կամ հակադիր կողմի վարքով:

Մեկ այլ բանասաց դատմում է, թե ինչդեռ է նկատել, որ երբ ոստիկաններին հրաման է տրվում չժողտալ ցուցարարներին, ոստիկաններից երկուսը, որդես դիմադրության նշան, ավելի լայն են սկսում ժողտալ³¹: Շարքային ոստիկաններն իրենք, փաստորեն, հնարավորություն ունեին ընտրելու, թե ինչդեռ կատարել կամ շրջանցել վերադասի արձակած հրամանը: Այս մակարդակում էր գնահատվում ոստիկանների՝ քաղաքացիական դայքարին միանալու աստիճանը. օրինակ, զրուցակիցներիցս մեկը նշում է.

«Ես օրինակ փորձում էի նաև ոստիկանների կարծիքը իմանալի: 99%-ը համաձայն էր, որ տեղի ունենար հեղափոխություն, որովհետև ասում էր, որ՝ հա, մենք էլ ենք ձեր կողմից, բայց...մենք չենք կարա մեր զենքը վայր դնենք, որովհետև մենք չգիտենք, թե հետո ինչ կլինի, բա որ մենք դրեցինք և հեղափոխությունը ձախողվեց: Նու, հիմնականում իրանք մտավախություն... ինչի չեն միանում քաղաքացիներին... չնայած իրանք միացած էին, որովհետև իրանք ավելի հանգիստ էին, ինձ թվում ա դա արդեն միացում էր»³²:

Այստիպով, Նայաստանի անկախացումից մինչև Թավշյա հեղափոխություն կարելի է դիմամիկ փոփոխություն նկատել ոստի-

²⁹ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Մ.Լ., 25 տարեկան:

³⁰ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Շ.Գ., 24 տարեկան:

³¹ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Շ.Գ., 46 տարեկան:

³² Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Մ.Լ., 25 տարեկան:

կանների կերտարը ձևավորող վարքի մեջ: Այդ փոփոխությունը նկատում էին և՛ իմ գրուցակիցները, և՛ ոստիկանները՝ անկախ իրար նկատմամբ ունեցած ընկալումներից: Ընդ որում, վարքային փոփոխությունն արձանագրելու մեջ առավել զգայուն են նախորդ ցույցերին մասնակցած քաղաքացիները:

«ՈՍՏԻԿԱՆԸ ՄԵՐՆ Է»

Ի տարբերություն նախորդ ցույցերի, որտեղ ոստիկանների նկատմամբ հիմնականում գերիշխում էր բացասական վերաբերմունքը, Թավշյա հեղափոխության ժամանակ տարածվում է «Ոստիկանը մերն է» կարգախոսը: Իրականում այս կարգախոսը տարբեր ձևակերպումներով և տարբեր կոնտեքստներում գործածվել է նախորդ ցույցերի ժամանակ ևս, ինչդեռ օրինակ՝ «Մաշտոցի դուրակն» ու «Էլեկտրիկ Երևանը», սակայն այն դիտվածային բնույթ է կրել: Թավշյա հեղափոխության առաջին օրերին շարժման ղեկավար Ն. Փաշինյանը փորձեց այն տարածել ցուցարարների միջավայրում: Կարգախոսը լիովին համադաստասխանում էր հեղափոխության տրամաբանությանը, քանի որ Փաշինյանն այն հռչակել էր «սիրո և համերաշխության» հեղափոխություն և բացառում էր ցանկացած բռնություն: Ադրիլի 16-ին, երբ Բաղրամյան դողողալուց ոստիկանական ուժերը կուտակվել էին ցուցարարների մեծ խմբի դիմաց, դիմելով ցուցարարներին՝ Ն. Փաշինյանը հայտարարեց. *«Խնդրում եմ՝ միայն ժողտացեք, մի՛ փորձեք որևէ բան բացատրել ոստիկաններին, նրանք ամեն ինչից տեղյակ են: Նաև միայն հարգայից վերաբերմունք ոստիկանների նկատմամբ, այն մարդը, ով անհարգայից վերաբերմունք ցույց տա, մեր շարժումը դաքստության է տանում»*³³: Դրանով նա փորձում էր ոչ միայն տարածել նոր մոտեցում, այլև բացառել որևէ բախում երկու կողմերի միջև: Ն. Փաշինյանի մեկնաբանությամբ՝ «Ոստիկանը մերն է» կարգախոսն ուղղված էր միաժամանակ երկու ճամբարներին էլ՝ ցուցարարներին և ոստիկաններին: Մի կողմից նա հայտարարում էր, որ ոստիկաններին չընդդիմանալով նրանց առիթ և հնարավորություն չեն տալիս ցույցերը որակելու անօրինական և ճնշել, մյուս կողմից՝ նա, դիմելով ոստիկաններին, նշում է. *«Մենք ձեզ համարում*

³³ «Pan.am» Ֆեյսբուքյան էջ, 16.04.2018, <https://www.facebook.com/panarmenian.net/>, 17.04.2018:

ենք մեր եղբայրները, սա քաղաքական տրյուկ [հնարանք] չէ, ես ասում եմ ամենայն անկեղծությամբ», իսկ ադրիլի 19-ին ավելացնում՝ «Գնացե՛ք խորհրդակցե՛ք ձեր ընտանիքների հետ, թե՛ մեզ տար ջարդուփշուր անե՞ք, թե՞ սաղավարտները վայր դնե՛ք: Ձեր մայրերի, քույրերի, երեխաների հետ խորհրդակցե՛ք»³⁴: Առաջին դեղքում Ն. Փաշինյանը հղում է անում քաղաքական դաշտը ձևավորող խաղի կանոններին՝ «քաղաքական տրյուկ չէ», իսկ երկրորդ դեղքում արդեն փորձում է հենվել համայնքային, ընտանեկան հարաբերությունների, ավանդական արժեհամակարգի վրա: Յուզարարների բացատրությունները ևս արտացոլում են հեղափոխության մեջ այդ երկու արժեհամակարգերի առկայությունը: Բանասացներից ոմանք այդ կարգախոսը մեկնաբանում էին քաղաքացիական արժեքների համատեքստում՝ նշելով, որ Ն. Փաշինյանի նոյատև կը ցույց տալն էր, որ ոստիկանությունը ոչ թե իշխանությանն է դասակարգում, այլ միտված է ժողովրդին ղաշտոյանելու. «Ոստիկանը արդեն քաղաքացու շահերն առաջնորդում»: Շրուցակիցս զուգահեռ շեշտադրում է նաև մարդկային գործոնը. «Երբ որ դու ասում ես՝ ոստիկանությունը մերն ա, դու դրանով ուղղորդում ես մարդուն, որ մի գնա ու ոստիկանի հետ բախման մեջ մի մտի, որտեև ոստիկանն էլ ա մարդ, ինքն իրա գործն ա անում»³⁵:

Այստեղ հատկանշական է «ոստիկանն էլ է մարդ» արտահայտությունը, որն արձանագրում է ոստիկանի՝ նախկինում աղամարդկայնացված կերտարին մարդկային հատկանիշների վերադարձը, հանրության անդամ ճանաչելը: Այլ գրույցներում առավել հաճախ հանդիպում էր մեկ այլ մեկնաբանություն. այդ կարգախոսի փոփոխությամբ փորձ էր արվում փոխելու ոստիկանների ճամբարը, ինչը շատ հեղափոխություններում կարևոր գործիք է եղել, և կարող է խորհրդանշել մի ամբողջ ղեկավարական ինստիտուտի շեղարկում. «Ոստիկանը մերն ա» ասելիս մարդիկ աղասում էին, որ հրամաններ չկատարեն: Անեին ընենց, ոնց ժողովուրդն էր ուզում: Այսինքն՝ միանային իրենց ու տայքարեին»³⁶:

Ի տարբերություն ներքևից ծագած և հանրային խոսույթի մաս կազմող «ոստիկանը թուրք է» արտահայտության՝ «ոստիկանը

³⁴ Ազատություն ռադիոկայան, Ուլիղ միացում Երևանից (հղումն այլևս հասանելի չէ, վերջին դիտումը՝ 19.06.2018):

³⁵ Միդա Պատիկյան, ԳԱՆ, Երևան, 2018, Գ.Լ., 23 տարեկան:

³⁶ Միդա Պատիկյան, ԳԱՆ, Երևան, 2018, Բ.Մ., 19 տարեկան:

մերն է» կարգախոսը տարածվեց վերևից՝ սկսելով մրցակցել նախորդի հետ և հարուցելով ոստիկանի կերդարի որոշակի փոխակերտում: Չնայած նրան, որ այդ խոսույթը տարածվեց շնորհիվ հիմնականում Ն. Փաշինյանի, այնուամենայնիվ, որոշ ակտիվիստներ այդ գաղափարի ինքնուրույն կրողն էին, և յուրաքանչյուրն իր ուժերի չափով փորձում էր այդ միտքը տարածել: Զրուցակիցս նկարագրում է այդ կարգախոսը ցուցարարների մեջ ներդնելու բարդ գործընթացը.

«Նենց առաջին գիշերը մի քանիսը խանգարում էին, առաջին գիշերը մնացինք Ֆրանսիայի հրատարակում:...Մոտակա երեք օրը մենք մեզ ճղում էինք ասելով, որ ժողովուրդը, եթե դուր խիստու եք, եկեք տարանջատենք դայքարի ձևերը... դայքարողների անունները: Մենք ասում ենք՝ եթե ստեղ ես, մեր հետ ես, ես խաղի կանոնները դասի: Եթե մեր հետ չես, դու ասա, որ մեր հետ չես, չգիտեմ, մեջքիդ մի հատ տիտակ խիի, որ դու մեր հետ չես: Վրձա բո արածը մեր անունի տակ ա ֆոտոմ:...Ու երբ որ բո մոտ ստացվում էր էլ տարանջատումը դեմի, ու իրան բեռացնում էիր բեզանից, ինքը, եղավ դեղքեր, որ էլ տղեն իրան շատ բան զգաց, վատ զգաց ահավոր, ու շատ հեռու մեզանից: Երբ որ մենք ասեցինք, որ երբ որ դու խիում կամ բժուր ես անում, դու մեզանից չես, մենք էլ չենք անում»³⁷:

Այս կարգախոսով ջնջվում է հանրության ու ոստիկանների միջև գծված սահմանը. «թուրքի» փոխարեն նրանք այլևս հայտարարված են «մերը»: Զրուցակիցներիցս մեկը նկարագրում է, թե ինչդեպ ինքն ու ընկերուհին երթի վայրը փորձում են ճշտել ոստիկաններից.

«Ոստիկանների հետ իմ հարաբերությունները լավ ա եղել.. մենք Նիկոլին չէինք կարողանում գտնելինք... Գնացինք, մի հատ ոստիկանի ասում ենք՝ տեղյա՞կ եք՝ ուր են Նիկոլ Փաշինյաններ, ասում ա՝ Էրբունիում: Ո՞նց էրբունիում: Տենց... Էն որ՝ լաավ, շնորհակալություն»³⁸:

Ըստ էության, ցուցարարների գտնվելու վայրի մասին հարցը նույն հաջողությամբ և ավելի շուտ կարող էր տրվել փողոցում գտնվող այլ անձանց, բայց ոստիկանից այդ տեղեկությունը ճշտելը ենթադրում է նրան որդես յուրային ընկալելը:

³⁷ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Ա.Ա., 23 տարեկան:

³⁸ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Գ.Լ., 23 տարեկան:

Վիշատակված երկու բնորոշումները հնչեցվում էին զուգահեռ: Ինչո՞ղես փաստում է զրուցակիցներիցս մեկը, սկզբնաղես «ոստիկանը մերն է» կարգախոսը որոշակի դիմադրության է հանդիպել ցուցարարների մի հատվածի մոտ: Այն հարցին, թե տվյալ կարգախոսը որքանով էր տեղ գտել ցույցերի մասնակիցների շրջանում, նա դատաստանում է. «Սկզբի օրերը չէ, հումորային ասում էին, էլ արտահայտությունը սխալ ա, ոչ թե ոյտի ասես՝ ոստիկանը մերն ա, այլ ոյտի ասես՝ ոստիկանի մերը... Սկզբի օրերը ասում էին»³⁹: Մյուս զրուցակիցս հիշում է. «...Երիտասարդների մեջ էլ տեսնում էի, որ կային նրանք, որ մեկ ա չէին հարգում ոստիկաններին, չէին ընդունում, որ ոստիկանը մերն ա, բայց ամեն դեղորում, երբ որ մեր երթը անցնում էր ոստիկանների կողքով ու բղավում էինք՝ ոստիկանը մերն ա, իրանք մեկ ա էլ անում էին, որովհետև գիտեին, որ էլ ոյետք ա: Իրանք հա ասում էին, որ չենք հարգում իրանց, չենք ընդունում, բայց երբ որ ոյետք էր, որ մենք ցույց տայինք, որ տենց ա, իրանք մեր հետ էին, ցույց էին տայիս, որ էլ տենց ա»⁴⁰: Մեկ այլ բանասաց, դատաճելով ցուցարարների ինչ-որ խմբի առաջնորդներից մեկի մասին, նշում է, որ կախված հանդիսատեսի ով լինելուց (ընկեր, ոստիկան, ցուցարար) նա տարբեր կերպ էր արձագանքում «ոստիկանը մերն է» կարգախոսին⁴¹:

Նարկ է նշել, որ ոստիկանների հանդեպ կար դրական վերաբերմունք նաև հեղափոխությունից առաջ տարբեր քաղաքացիական շարժումների ընթացքում: Մամուլում ու սոցցանցերում նմանատիպ բննարկումներ տարածվեցին հատկադես «Էլեկտրիկ Երևան» շարժման ժամանակ: Ոստիկանի հանդեպ ընդգծված սիրալիք վերաբերմունքը, որոլես ընդդիմադիր շարժման գիտակցված տեխնոլոգիա, բավականին տարածված է, և շատ այլ երկրներում նույնոլես բազմիցս կիրառվել է: Բայց Թավշյա հեղափոխությունում տարբերությունն այն էր, որ այդ խոսույթը դիտվածայինից վերաճեց գերակշռողի. եթե ոմանք նույնիսկ չէին կիսում այդ մոտեցումը, նրանք ենթարկվում էին ոստիկանի հետ հարաբերվելու միակ ընդունելի դարձած ձևին, որի հիմքում «ոստիկանը մերն է» դրույթն էր:

Ոստիկանության վրա ազդեցություն գործելու նոլատակով հա-

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Սիդա Պատիկյան, ԳԱՆ, Երևան, 2018, Գ.Մ., 20 տարեկան:

⁴¹ Սիդա Պատիկյան, ԳԱՆ, Երևան, 2018, Ս.Թ., 23 տարեկան:

սարակական/ընտանեկան հարաբերություններին հղելը ավանդական հասարակությանը բնորոշ տարրերից է, ըստ որի՝ հասարակությունը համարվում է ընդարձակ ընտանիք⁴²: Այս կոնտեքստում դատահական չէ անծանոթներին ուղղված «ախտդեր», «քուր», «մայրիկ», «հոդար» դիմելաձևերը, որը լայնորեն կիրառվում էր նաև ցույցերի ժամանակ, այդ թվում՝ հաճախ ոստիկաններին դիմելիս: Վատկանշական է, որ ցույցերի ժամանակ ցուցարարները ոստիկանների հանդեպ իրենց դրական վերաբերմունքն ամրագրում էին հոգատարության դրսևորմամբ, օրինակ՝ ոստիկաններին ջուր հյուրասիրելով⁴³:

Ոստիկանին յուրային դարձնելն արձագանք է գտնում նաև հանրային խոսույթում. մարդիկ սկսում են շեշտել, որ «ոստիկանը հայ է» («Պարոնայք ոստիկաններ, մեր լավ ոստիկաններ, մեր հայազգի օրենքի մարդիկ, ափսոսում եմ, որ դուք հարկադրված եղևոք է ինչ-որ գործողության գնաք մեզ ծեծելով, մեզ վնասելով»⁴⁴), իրենց համազոտացին է («Ոստիկանը մերն ա, որտե՛ս իսկականից մերն ա, ի՞նչ տարբերություն, մենակ մեր գյուղից գիտե՞ք քանի հոգի ոստիկան աշխատող կա: Շո մենք ասենք թշնամի չե՞նք»⁴⁵), իրենց եղբայրը («Մլիցեքն էլ են մեր այստերները»⁴⁶), բարեկամը, ընկերը և այլն: «Ոստիկանը մերն է» կարգախոսով ոստիկաններին բերում են ջրբաժան սահմանից այս կողմ՝ հիշեցնելով, որ նրանք «մեզանից մեկն են»: Ոստիկանների վրա տարածելով «նույն խմբի» արժեհամակարգը՝ հնարավոր է դառնում նրանց վրա հասարակական ճնշում գործադրել, որտեղ որդես առավել ազդեցիկ հասարակական սանկցիա օգտագործվում է ամոթանքը: Շատերն էին փորձում այդ կերպ ոստիկաններին հիշեցնել իրենց հասարակական դերը. «Լավ, էդ ոստիկանները հո լուսնից չե՞ն իջել: Մեկիդ վարի հարևանն է, մյուսիդ բաջանախը: Գնացեք տները ընտանիքի հետ խոսեք, բացատրեք, ասեք, թող չվախենան: Վասկացրեք, որ Սերժիկն է իրենց տան տղամարդուն ժողովրդի դեմ հանում, թող թարկը

⁴² Լ. Աբրահամյան, Ազգ-դիտություն թե՛ ընտանիք-դիտություն. Նայ ինքնության ընտանեկան առանձնահատկությունները // Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները. Նանրադիտական գիտաժողովի նյութեր՝ նվիրված Է. Կարաղևտյանի հիշատակին, Երևան, 2001, էջ 12-16:

⁴³ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Գ. Լ., 23 տարեկան:

⁴⁴ Ֆեյսբուքյան գրառում, 20.04.2018, վերջին դիտումը՝ 17.05.2018:

⁴⁵ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, գ. Մայիսյան, 2018, Դ.Ա., 45 տարեկան:

⁴⁶ Ֆեյսբուքյան գրառում, 23.04.2018, վերջին դիտումը՝ 17.05.2018:

դիականացման շրջանում անցել է կառուցվածքային տարբեր փոխակերպումներ, սակայն խիստ սահմանազատում է «անձնական» ու «հանրային» տարածքներն ու դարտականությունները: Այս դարազայում կարծես այդ սահմանը նույնդես հանվում է և իրավունք ընձեռվում ներխուժելու անձնական որոշումների, քաղաքական կողմնորոշումների և նույնիսկ մասնագիտական դարտականությունների դաշտ: Նիշեցնելով ոստիկանների՝ նաև «քուշի տղա» լինելու հանգամանքը՝ նրանց վրա հոգեբանական և բարոյական ճնշում է գործադրվում: Սակայն այս հակադրությունը ստեղծվում է հենց այն դատճառով, որ ոստիկանների ներգրավումը քաղաքական գործընթացներին հակասում է հանրային սղասումներին: Երբ քաղաքացիական իրավունքը դադարում է գործել, ի հայտ է գալիս սովորութայինի անհրաժեշտությունը: Գիտակցելով, որ քաղաքացիներին դաշտդանելու առաքելություն ունեցող ոստիկանն իրականում ծառայում է իշխանական համակարգին, և որ իրավունքին հղելով չեն կարող ազդել նրա վրա, դիմում են հասարակական սանկցիաների: Դրա լավագույն դրսևորումը կարող է լինել հետևյալ մեջբերումը. «Էս [ոստիկանը – Ա.Պ.] ոնց է շլինի մի տեղ ադրում ա: Տղեք ջան, ախդերներ, խոսքս իրա քուշի տղերին ա վերաբերվում: Ախդերներ էս սուկային բացատրեք էլի, որ այ ձևը տենց չի, էս ոռսաստան չի, դուճուր երկիրա, սաղ շերեզ շերեզ իրար ծանոթ կամ ախդեր են գալի, շե՞ս մտածում, որ կարողա ոռտ [հետույք բրբ. — Ա.Պ.] ճղեն, տաս ուտես»⁵⁰: Տվյալ մեկնաբանությունն արված է այն տեսանյութի տակ, որտեղ լրագրողական տեսալսցիկը Ֆիքսել է, թե ինչդես բերճան ենթարկելիս կարճիր բերետավորներից մեկը դիտավորյալ ոլորում է քաղաքացու ոտքը:

Գրանցված դաշտային նյութերը վկայում են այն մասին, որ սովորութային իրավունքը շատ դեղքերում ավելի մեծ ազդեցություն էր ունենում ոստիկանության աշխատակիցների վրա, քան մասնագիտական դարտականությունը: Աշոտի հավաքական կերդարը ստեղծած քաղաքացի Մանվելի ընկալմամբ ոստիկանական բաժանմունքում իրեն ցուցաբերած վերաբերմունքն աղացույցն էր այն բանի, որ իր խոսքն ազդել է որոշ ոստիկանների վրա. «Շատ «աշոտներ» գործից դուրս եկան, շատերը ամաշում էին... Ինձ էլ, որ տարան ոստիկանություն, ընդեղ էլ

⁵⁰ Տե՛ս հղում 21:

կային աշտոներ: Մարդիկ տատրաստված ինձի ընդե տղասում էին, որ աղացուցեն, որ իրանք «աշտ» չեն, իրանք լավն են»⁵¹: Բանասացներից մեկը, որ ցույցերի ժամանակ մասնակցություն էր ականատես է եղել մի դեղքի, երբ սովորության օրենքների կիրառումն անմիջապես է ազդել իրավիճակի վրա. «Ես ունեմ տեսանյութ, որտեղ որ ոստիկանը կոմունիկացիայի, հայացքների, խոսքի ընթացքում դուրս ա գալիս շարքից և հրաժարվում է կանգնել շարք... ըստ էության կանգնում ա, բայց ասում ա, որ չի ուզում, չի ուզում»⁵²:

Չրուցակիցներիցս մեկը մարզերում ոստիկանների առավել զուտ վերաբերմունքը ցուցարարների նկատմամբ մեկնաբանում է մայրաքաղաքից դուրս համայնական կառույցի ամուր լինելով. «...Մարզում մեկը մյուսին ճանաչում են, հետո, ասենք, իրար տեսնել կա, բան կա: Ոստիկաններն էլ քաղաքի բնակիչներին ճանաչում են ու չեն կարա գան, ասենք, ծանոթ մարդուն վերցնեն շողտեն ևս կողմ կամ ինչ անեն»⁵³:

Նեղավոխության առանձին մասնակիցներ, լինելով ավանդական արժեքների կրող, ոստիկաններին հիշեցնում էին այդ արժեքները՝ համոզված լինելով, որ վերջիններս նույնպես կհսում են դրանք: Որդես դրա աղացույց տեղին է հիշել Նանրադետության հրադարակում մի կնոջ ու ոստիկանի բանավեճը: Կինը, ոստիկաններին բռնություն գործադրելու մեջ մեղադրելով, նրանցից ստանում է հետևյալ արձագանքը. «Մի քիչ քեզ հայ կնոջ տես տասի»⁵⁴: Ոչ ֆորմալ հաղորդակցության փայլուն օրինակ է երիտասարդ աղջիկների ու ոստիկաններից մեկի հայտնի լեզվակոխիվը: Ոստիկանի այն տարսավանքին, թե՛ «Ձեր տնեցիները գիտե՞ն՞ ինչով եք զբաղված», աղջիկները լուստասխանում են՝ «Այո՛, իսկ ձերո՞նք»:

Վերոբերյալ օրինակները ցույց են տալիս, որ ոչ ֆորմալ հաղորդակցության դաշտը ոստիկանների և ցուցարարների մի շարք ներկայացուցիչների համար իրար հետ կոնտակտ հաստատելու ու փոխըմբռնման հասնելու ձևերից էր:

⁵¹ Տե՛ս հղում 49:

⁵² Սիդա Պաղիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Ա.Ա., 23 տարեկան:

⁵³ Սիդա Պաղիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Չ.Օ., 26 տարեկան:

⁵⁴ Ազատություն ռադիոկայան, Ուղիղ միացում Երևանից, 22.04.2018:

Իսկ ոստիկանի՝ օրենքի անունից քաղաքացու հետ հաղորդակցվելը, զրուցակիցս համարում է անհանդուրժողականության դրսևորման ձև.

«Օրինակ, զնդադետները, լեյտենանտները և այլն, իրանք ավելի լավ էին տիրադետում, ու եթե նույնիսկ օրենքի խախտում էր տեղի ունեցել, իրանք փորձում էին բացատրեին, ամեն ձևով փորձում էին աղագուցեին, որ իրանք ավելի ճիշտ են, բան քաղաքացին: Ղեկավարները ավելի կոդիտ էին քաղաքացիների նկատմամբ: Երբ որ իրանց դեկավարները, այսինքն մայորները, կամ զնդադետները, օրինակ զնում էին, իրանք ավելի հանգիստ էին, ինչ-որ տեղ յիքը հարցերին շատ ավելի յոտ էին, կամ միգուցե նաև փորձում էին անտեսել տվյալ իրավիճակը, որդեսգի բերման շենթարկեն: Օրինակ, տեսնում էին, որ յրագրողներ շկային կամ ուղիղ միացում շկար կամ Ֆոտոնկարիչներ շկան, իրանք ասում էին, որ գիտե՞ք, լավ, ախդեր ջան, ես բեզ շեմ բոնի, բայց յանդրում եմ, հետևի կողմով զնա հանգիստ բո ցույցը արա»⁵⁵:

Ֆորմալ և ոչ Ֆորմալ հարաբերությունների միաժամանակյա գոյությունը կարող էր տարբեր արդյունքների հանգեցնել. դրանք կարող էին և՛ բոնության կամ անհանդուրժողականության դատճառ դառնալ, և՛ կանխարգելել բոնությունը: Ոստիկանների անհանդուրժող վերաբերմունքը ցուցարարների նկատմամբ բնդգծում էին շարճման այն մասնակիցները, ովքեր փորձում էին ոստիկանների հետ հաղորդակցվել իրավական դաշտում: Ոստիկանական բաժանմունք տարված ակտիվիստներից մեկը դատճում է.

«Բաժնում էի, առաջին ուսանողական յումբն ենք եղել, որ բաժին ենք եկել: Նոր Նորքի, ամենավատ բաժիններից մեկն ա համարվում.. վերաբերմունքը նույնն էր, յկտիաբար, շէիր ներկայանում՝ դատի տակ էին կանգնացնում: Խոսում էիր իրավունքներից՝ ասում էին՝ մենք ձեր իրավունքները լավ գիտենք, եթե մի բիշ բեզ շէիր դաշտդանում, հաստատ վիրավորանքն էնքան էր յինում, որ ետդես բան էիր, էլի, յինում: Անգամ եկավ իրենց բաժնի դետը, շոտ ա եկել ասում ա՝ ամոթ շեք անում, զնացել եք, բան եք անում, փողոց եք փակում, ի՞նչ եք սովորում, եթե մյուս անգամ էլ տեսնեմ, շեմ ների ձեզ, ինչը շէր ներելու, զգիտեմ...որովհետև իրենք անգամ մեզ փողոց փակելիս շի, որ բաժին էին տարել»⁵⁶:

⁵⁵ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Մ.Լ., 25 տարեկան:

⁵⁶ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Տ.Գ., 24 տարեկան:

Նակառակ տղավորությունը ստացել էր աղջիկներից մեկը, որ նույնդեռ հայտնվել էր ոստիկանական բաժանմունքում.

«Ագրեսիա չկար իրանց կողմից, շատ դրական էին: Նա երեխեք ջան, գնացեք, մեկ և երեք ժամ հետո դուրս եք գալու, բան: Ու էդ նույն բանն էլ, դրական միջավայրն էլ քաղմասում էր: Շատ լավ էր, էլի, ևն որ ավտոբուսի մեջ էլ երգել-դարելով գնացել ենք, ոնց որ էքսկուրսիա գնայինք: Տրամադրվածությունը լավ էր, ու նույնիսկ երբ որ իրավաբան էր եկել, իմ քննիչը հարցնում աս իրավաբանին, ասում աս՝ ի՞նչ եք անելու հիմա, գնալո՞ւ եք ցույցերին: Ասում աս՝ չէ, չենք գնալու, ասում աս՝ բա ինչի՞: Ասում աս՝ դե որ մենք գնանք, երեխեքի կողքը ո՞վ աս մնալու, ասում աս՝ դե մենք երեխեքի կողքն ենք, գոնե դուք գնացեք»⁵⁷:

Վերջինը լավ օրինակ է, թե ինչդեռ են ոստիկանները համադրում իրենց դաշտոնական դիրքն ու ոչ ֆորմալ վերաբերմունքը:

Ամփոփելով՝ արձանագրեմ, որ «ոստիկանը մերն է» կարգախոսը շարժման ղեկավարի և ցուցարարների կողմից մեկնաբանվում էր երկու հարթություններում էլ՝ և՛ ֆորմալ՝ օրենքի սահմաններում առաջ քաշվող դահանջներով, և՛ ոչ ֆորմալ՝ որդեռ համաբաղաբացի, համայնբային, հարևանական, ընտանեկան հարաբերությունների դերակատար: Նույն տրամաբանությունը նկատում ենք ոստիկանների և քաղաքացիների փոխհարաբերությունում: Մի կողմից ոստիկանությունը քաղաքացիներից դահանջում էր ցույցն անցկացնել օրենքի սահմաններում, մյուս կողմից ցուցարարների հետ անմիջական հաղորդակցությունն ավելի շատ կրում էր ոչ ֆորմալ բնույթ: Նաև ցուցարարները ոստիկաններից դահանջում էին գործել օրենքի շրջանակներում՝ միաժամանակ նրանց հիշեցնելով ոչ ֆորմալ փոխհարաբերությունների դաշտի առկայության և այնտեղ գործող սանկցիաների մասին:

ՈՍՏԻԿԱՆՆԻ ԻԲԲԵՎ.ԶՈՆ

Նաջորդիվ հայտնվող տեքստերում ավելի հաճախ շեշտադրվում են ոստիկանների և մյուս քաղաքացիների ընդհանուր խնդիրները, որոնք նրանց դարձնում են նույն համակարգի գոհը. *«Իրանք [ոստիկանները-Ա.Պ.] էլ գոհ չեն, իրանք էլ նույն վարկերի տակ*

կրված, նույն շարքաշ աշխատանքով: Իրանը իրանց աշխատավարձից բա՞ն են հասկանում: Իրանը իրանց աշխատավարձից էլ բան չեն հասկանում, նենց ա որ: Նույն բաները իրանը...»⁵⁸: Սոցիալական կարգավիճակի ընդհանրությունը, որդես ցուցարարներին միանալու շարժառիթ, համարվում էր առավել ազդեցիկ գործիք, և իզուր չէ, որ փողոցում ոստիկաններին միանալու կոչ անելիս հաճախ շեշտը դրվում էր նրա վրա, որ երկու կողմն էլ տուժել են իշխանության անօրինականություններից:

Երբե՛մն ոստիկանների սոցիալական ծանր կարգավիճակ ունենալու փաստն օգտագործվում էր որդես նրանց կատարած գործողությունների արդարացում. «Ամեն մեկը իր ընտանիքն ա տյահել, կարող ա ինչ-որ հիվանդ բարեկամ ունի, էդ աշխատանքով իրան ա տյահում, ու ինքն էլ չի ուզեցել էդ աշխատանքից զրկվի, որտն էդ իրա միակ հույսն ա եղել, դրա համար ինքը ճարը կտրած փորձել ա ինչ-որ մի ձև տյահի, դրա համար ինքն իրա աշխատանքն արել ա: Թեկուզ ոչ իրա կամքով: Ես իրանց չեմ մեղադրում»⁵⁹: Այստիսով, երբ ոստիկանն ընկալվում է որդես յուրային, անհրաժեշտություն է առաջանում ինչ-որ կերպ արդարացնել նրա վարքը՝ ընկալվելով իբրև համակարգի գոհ և դատաստանատվությունն ամբողջովին տեղափոխելով հրաման արձակողների վրա. «Ոստիկաններին հրամանները որ տայիս էին, թե իրանք ոնց անեին ժողովրդին, կարող ա խփեին, կարող ա ծեծեին, էդ առումով էին մարդիկ վատ վերաբերվում ոստիկաններին: Էդ ամեն ինչը գայիս էր վերևներից»⁶⁰:

Այստիսով, ոստիկանների սոցիալական վիճակը վկայակոչում էին որդես հիմնավորում՝ անհաղաղ միանալու քաղաքացիների տյայքարին և միևնույն ժամանակ թերում էին որդես բացատրություն, թե ինչու նրանք չեն կարող միանալ:

Այս համատեքստում Նայոց ցեղաստանության մետամարատիվը, կառուցված լինելով երկու հիմնական հաղորդագրության վրա՝ «հայը գոհ է», «թուրքը՝ դահիճ»⁶¹, տեղի է տալիս (այն գործում է այնքան ժամանակ, քանի դեռ ցուցարարները գոհ են համարվում լայն իմաստով՝ իշխանության, նեղ իմաստով՝ ոստիկանների ձեռքին)՝

⁵⁸ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, գ. Մայիսյան, 2018, Դ.Ա., 45 տարեկան:

⁵⁹ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Բ.Մ., 19 տարեկան:

⁶⁰ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Բ.Մ., 19 տարեկան:

⁶¹ Տե՛ս Գ.Шагоян, Армянский геноцид как метанарратив травматической памяти.

զիջելով «նստիկանը մերն ա, բայց թորքի ձեռն ա»⁶² կարգախոսին՝ «թորքի» անվան տակ նկատի ունենալով իշխանություններին:

Իշխանության՝ իբրև շարիքի և նստիկանի՝ իբրև զոհի ընկալումը առավել ցայտուն դրսևորվեց կանանց «աղոթելու» ակցիաներում: Ադրիլի 19-ի առավոտյան Ազատություն ռադիոկայանի լրագրողները արձանագրում են, թե ինչդեպ մի կին աղոթագիրքը ձեռքին մոտենում է նստիկաններին, սկսում աղոթել: Նա նստիկաններից մեկին ստիղծում է աղոթել իր հետ, և վերջին դահին, երբ հնչեցնում է «Այլ փրկեա զմեզ ի շարե» հաստվածը, երկու ձեռքով ցույց է տալիս Կառավարության շենքը⁶³: Ոստիկանության աշխատակիցները կարծես թե սկսում են ընկալվել որդես դիվահար, որոնց ողետք է «դարձի բերել»⁶⁴ աղոթք կարդալով:

Ոստիկանների գործողությունները սկսում են արդարացնել ոչ միայն ցուցարարները, այլև իրենք՝ նստիկանները նույնդեպ փորձում են արդարանալ՝ աջակցություն հայտնելով շարժմանը: Չբուցակիցներս հիշատակում են մի շարք նման օրինակներ.

«Գիտե՞ք, ես նստիկանի հետ խոսել եմ, մանավանդ, որ նկարում էի աղարատով, հաճախ էր ստացվում, որ ինձ որդես լրագրող էին ընդունում և կոմունիկացիա լինում էր: Իրանք ասում էին էն, ինչ որ ես կարող էի լսել իմ կողքը կանգնած մարդուց ցույցի ժամանակ. «մենք էլ ենք հոգնել, բայց դե ինչ անենք»: Այսինքն, վերջում էղ, երբ որ ասում են՝ բայց, էն առաջին ասելը դառնում ա ոչինչ: Ասում էր՝ հա վատն ա, ինքն էլ էր բժուր անում, սենց, վերջում ասում էր՝ բայց... ես տուն ունեմ»⁶⁵:

Նատկանշական է, որ նման զրույցներ նստիկանների ու ցուցարարների միջև տեղի էին ունենում միջանձնային շփումների ժամանակ, երբ նստիկանը ներկայանում է ցուցարարին իբրև անհատ: Իսկ բռնություն գործադրելիս, բերման ենթարկելիս կամ ցանկացած այլ հրաման կատարելիս նրանք լսմբով էին, ինչի արդյունքում կարծես դատասխանատվությունը տարածվում էր ողջ լսմբի, հաճակարգի վրա:

⁶² Վաղվան են դատրաստվում // “Zona positive” ֆեյսբուքյան խումբ, 07.05.2018:
⁶³ Ազատություն Ռադիոկայան, Ուղիղ միացում Երևանից, ցուցարարները շարունակում են բողոքի գործողությունները, (հղումն այլևս հասանելի չէ, վերջին դիտումը՝ 19.06.2018):
⁶⁴ Տե՛ս վերը նշված տեսանյութի տակ թողնված մեկնաբանությունները:
⁶⁵ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Ա.Ա., 23 տարեկան:

Բանասացներից մեկը լրագրողների նկատմամբ ոստիկանների անհանդուրժող վերաբերմունքը բացատրում է նրանով, որ նրանք ամաչում են իրենց վարկաբեկող կադրերից: Փորձում են թույլ շտալ նկարահանումը, և փաստորեն ամոթը ազդեսփայլի լուսանկար է դառնում. «*Էդ տասին ձեռնտու չէր հաստատ, որ նկարահանեին ու էդ վատ կադրերը ցույց տային: Վախենում էին չակերտավոր իրանց վատ տյակածքից, որ իրանց հրաման են տվել վատ, իրանք էդ վատ հրամանը կատարում են: Ամաչում էին ու վախենում էին իրանց հարազատների արձագանքից, որ իրանց կարող ա տենց տեսնեն ու հիասթափվեն*»⁶⁶: Ամաչելն իր ընտրած մասնագիտությունից ու կատարած աշխատանքից ինչ-որ չափով մեղմացնում էր ոստիկանների նկատմամբ վերաբերմունքը և շեշտում զոհի կարգավիճակը, որը նաև թույլ էր տալիս երբեմն նրանց արդարացնել. «*Ոստիկան կա, որ ամաչելով ա անցել այդ գործին ընտանիք տյակելու համար, և էսօր իրանք էդ քայլը անում են և չեն կանգնում մարդկանց դեմ...*»⁶⁷:

Ի տատասխան ոստիկանների շուրջ առկա քննարկումների՝ համացանցում ոստիկանի անունից տարածվում է անհայտ ծագման մի հոդված: Այն ոստիկանների շուրջ զարգացող խտույթների յուրօրինակ խտացում է: Այս հոդվածում ընդգծվում է վերը քննարկված երկու գաղափար: Մի կողմից նկարագրվում են ոստիկանի հոգեկան ծանր աղորումները՝ աշխատանքի և հասարակության առջև ունեցած լուստասխանատվության միջև ընտրություն կատարելիս. «*Գնացի ծառայության, դիմակը հազա, որ կատարեմ հրամանը: Բայց ինձ թվում էր՝ դիմակը չի փրկում, բոլորը ճանաչում են ինձ: Որ եկել է դիմակա տատոելու տյակը: Բայց ես իրավունք չունեմ հրամանը քննարկելու՝ տյակի անեմ*»⁶⁸: Մյուս կողմից հոդվածը կարծես նույնատակ ունի մեկտեղելու ոստիկանի և զին-

⁶⁶ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Բ.Մ., 19 տարեկան:

⁶⁷ Halala ES Vostikannerin (տեսանյութ) // «Սերժի զոհերը» ֆեյսբուքյան խումբ, 20.04.2018, [⁶⁸ Լ.Գրիգորյան, ՆՐԱՄՐԱԿԱՆ. ամեն մի աղակա աչքերում կարդում էի՝ դատ, ես դու՞ ես // Haynews 08.05.2018, <http://www.haynews.am/hy/1525775686>, 17.05.2018:](https://www.facebook.com/sammaruqyan/videos/564991473873946/?hcref=ARsbvIyMmJz-4L-d_6trnkSEIrpv1Pe9-zmcGzD0vT6TGHxguj1Xs1BhGTLXQAFMICHw&__xts__[0]=68.ARAAtAVc3oJnzpIP10d8J7M1mZ4TZGj0fegRAyoDQVb-6LSVv-Q84X_U4g302Q5YODJR7EmJsJbbWzxcF1W-iT1FTO-BQ01S-Te15br398um_AiCku5FcJgMKEKiPRbki063OUF-GDEqxFX0Y-CnnbosG3o9reZ7HGPzei99_u2C1TqIQyGMFBc&__tn__=FCR&fb_dtsg_ag=AdzbmSIV9isT5iZIk8z0_MZMApQfm_NULV1_xrF5v_2k5Q%3AAadzptKDupkP48W_CdZSphwxGfBUu-v1RbT2svxf9z0oqpA, 10.05.2018:</p>
</div>
<div data-bbox=)

վորի կերտարները, որոշագի վերացնի նրանց միջև հակադրությունը. «Օտապել եմ բանակում... ես ու ընկերներս միշտ առաջնագծում ենք եղել»: Այս հոդվածը փաստորեն խնդիր էր դրել՝ ստեղծելու մեկ այլ խոսույթ, ոստիկանի այլ կերտար, որը կմրցակցեր վերը նշված հրեշավորված կերտարի հետ:

Նանրային խոսույթում ևս ոստիկանի ու զինվորի կերտարների նույնացում է նկատվում: Ադրիլի վերջին տարածվում է մի տեսանյութ, որտեղ ոստիկանները երթի ժամանակ ցուցարարներին դիմադրություն ցույց չեն տալիս՝ թույլ տալով նրանց անցնել իրենց կազմած դատի միջով: Տեսանյութն ուղեկցող մեկնաբանություններում կարդում ենք. «Ըդորն էլ սենց լավն են, մեր ազգն են, մեր եղբայրներն են, ամոթ էս երկրի դեկավարությանը, որ խաղում է էս տղերքի անունի ու դատվի հետ: Վատաբանելուց առաջ հիշեք, որ էս տղերքն էլ դահել են մեր սահմաններն անառիկ, օդից շեն իջել»⁶⁹: Այսդիպի մեկնաբանություններում սկսում են արտահայտվել մտքեր, որ ոստիկանը ևս ժամանակին ծառայել է բանակում, ադա նա նույնացվում է զինվորի հետ, այսինքն՝ վերանայվում է զինվոր (հերոս) / ոստիկան (թշնամի) հակադրությունը:

ԻՐԱԿԱՆ ԵՎ ՎԻՐՏՈՒՄԸ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՍՏԻԿԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆ

Ադրիլի 16-ը, ինչդեպ արդեն նշվեց, այն հատկանշական օրն էր, երբ բախում տեղի ունեցավ ոստիկանների և ցուցարարների միջև, կիրառվեցին ձայնային նոնակներ, որի դատաճառով վիրավորվեցին ցուցարարներ և ոստիկաններ: Չրուցակիցներիցս մի քանիսն այդ ընթացքում գտնվել են ցուցարարների մեջ՝ տարբեր հաստիքներում: Նրանցից մեկը հիշում է. «Իրանք [ոստիկանները – Ա.Պ.] փշալարերից են կողմ էին ու իրանց միակ բանն էն էր, որ բոթում էին էդ փշալարերը ժողովրդի վրա: Իրանք չեն դատասխանել, ոչ մի ձեռն չեն հանել ոստիկանները, իրանք ավելի շատ ուժային բան էին անում»⁷⁰: Ըստ զրուցակցիս՝ ոստիկաններն են սկսել ուժ գործադրել ցուցարարների նկատմամբ: Նա նաև նշում է, որ այդ ընթացքում գտնվել է ցուցարարների բազ-

⁶⁹ Նույն տեղում:

⁷⁰ Սիդա Պառլիկյան, ԳԱՆ, Երևան, 2018, Գ. Լ., 23 տարեկան:

մուրթյան մեջտեղի հատվածում և հնարավորություն չի ունեցել տեսնելու, այդտեղ կանգնածներն առջևում կատարվող գործողություններին հիմնականում հետևում էին ուղիղ եթերով՝ հեռախոսների միջոցով:

Նույն դեպքը նկարագրելիս մեկ այլ բանասաց, որը գտնվել է առջևում, լրիվ այլ կերպ է մեկնաբանում. «...Բավականին ակտիվ ու նաև շատ վտանգավոր օր էր, որովհետև իրանը [ցուցարարները – Ա.Պ.] վերցրել էին քարերը ու փորձում էին քարերով հարվածել ոստիկանին: Ոստիկանները հիմնականում վահաններով կամ ինչ-որ տպայթուցիկ նյութերով, հենց էդ քարերի նետումից հետո սկսեց էդ տպայթուցիկները էլի, որ սկսեցին տպայթեցնել»⁷¹: Ինչդեռ տեսնում ենք, վերջին բանասացը տպայթուցիկների նետումը մեկնաբանում է որդես տատասխան՝ ցուցարարների գործողություններին: Կատարվածն ինչ-որ չափով գրանցել են մի քանի լրատվամիջոցներ, և այդ նյութը հասանելի է առցանց⁷²: Սակայն վերը բերված օրինակով կարելի է տեսնել, թե ինչդեռ է նույն իրադարձությունը, կախված գտնվելու վայրից, ստանում տարբեր մեկնաբանություններ: Ըստ Ա. Պորտելլի՝ բանավոր դատմությունն առանցքային է ոչ թե փաստեր հավաքագրելու, այլ իրադարձությունների նկատմամբ դատմողների վերաբերմունքն արձանագրելու համար⁷³:

Չրուցակիցներս, որոնք ցույցերին մասնակցել են անձամբ, տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ վերաբերմունքը ձևավորել են անձնական փորձառությունից ելնելով, որտեղ ոչ թե կաս կարևոր դեր էր խաղում ոստիկանների նկատմամբ իրենց գտնվելու վայրը:

Վիրտուալ տարածությունն առանձնացվում է որդես հեռավորության մեկ այլ աստիճան: Այն ուներ իր առանձնահատկությունը. մի կողմից կատարվողի վերաբերյալ քաղաքացիներն իրենց կարծիքը կազմում էին՝ ելնելով համացանցում տարածված նյութերից, այսինքն՝ կախված նկարահանողի տեսանկյունից, մյուս կողմից նրանք հնարավորություն ունեին տիրադատելու ավելի

⁷¹ Սիդա Պառիկյան, ՊԱՆ, Երևան, 2018, Մ. Լ., 25 տարեկան:

⁷² Տն՛ս, օրինակ, Յուգոսլավների բախումը ոստիկանների հետ // Civilnet, 13.05.2018, <https://www.youtube.com/watch?v=6kRjXf7OEF8>, 25.10.2018:

⁷³ A. Portelli, What Makes Oral History Different? // The Death of Luigi Trastulli, and Other Stories: Form and Meaning in Oral History, Albany: State University of New York Press, 1991, pp. 45-58.

լայն դատկերի՝ հետևելով քաղաքի տարբեր մասերում կատարվող համաժամանակյա իրադարձություններին:

Տեղեկատվության արագ տարածման հիմնական աղբյուրներն էին սոցիալական մեդիան և ֆեյսբուքում տարբեր օգտատերերի տեղադրած նկարները, գրառումներն ու տեսանյութերը: Նույն վիրտուալ տարածությունը կիսող օգտատերերի վերաբերմունքը ոստիկանների հանդեղ տարբերակվում էր նաև ըստ նրա, թե որտեղ են իրենք բնակվում, որքան են ֆիզիկապես հեռու կամ մոտ կատարվող իրադարձություններին: Պարզ է, որ Նայաստանում բնակվողների վերաբերմունքի ձևավորման վրա ազդում էր և՛ փողոցը, և՛ վիրտուալ տարածությունը: Իսկ Սփյուռքում աղբյուրները գտնվում էին Նայաստանում կատարվող իրադարձությունների նկատմամբ առավելագույն հեռավորության վրա. նրանց համար ողջ տեղեկատվությունը միջնորդավորված էր, որովհետև սոցիալական մեդիան էր տեղեկատվության հիմնական աղբյուրը: Ու քանի որ մեդիան տարածում էր ոստիկանների հրեշավորված կերպարը, այս լսմբում ավելի, քան այլ որևէ մեկում, ամբողջովի էր ոստիկանի բացասական կերպարը: Դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ ֆեյսբուքյան հարթակում մեկնաբանությունների տեսքով հնչող անհանդուրժողական կարծիքները մեծամասամբ դատկանում էին Նոր սփյուռքի հայերին: Իհարկե, նման մեկնաբանություններ թողնում էին նաև Նայաստանի քաղաքացիները: Այնուհանդերձ, նման մեկնաբանություններ ավելի հաճախ էին հանդիպում այն օգտատերերի ֆեյսբուքյան դատին, որոնց բնակության վայրը նշված չէր «Նայաստան», կամ չունեին իրենց մասնակցությունը ցույցերին հաստատող լուսանկարներ, կամ դրանք արվել էին ավելի ուշ, մասնավորապես Ս. Սարգսյանի հրաժարականից հետո, երբ ոստիկանների հետ առնչությունը հասել էր նվազագույնի: Այդ հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ այդ օգտատերերը ցույցերին հետևել են վիրտուալ տիրույթում:

Յույցերին դարբերաբար մասնակցած գրուցակիցներիս մոտ ոստիկանի հրեշավորումը զիջում էր ավելի հանդուրժող բնորոշումներին: Նատկանշական է, որ իրար միանշանակ հակասող խոսույթները կարող են հատվել և գոյակցել մեկ դատումում: Նման օրինակներից է գրուցակիցներիցս մեկի նկարագրությունը, թե ինչպես է առաջին անգամ դեմառդեմ հանդիպել ոստիկանների հետ.

«Ընդհանրապես սկզբում վախ կար, ձեռներս դողում էին, որ կը նոր էին շրջափակել, մտածում էի՝ հետագայում եմ խփելով տանեն, ինչ ասես՝ անցնում էր մտքովս, բայց հետո հասկացանք, որ իրանք բռնություն են կիրառում նրանց նկատմամբ, ովքեր որ դիմադրություն են ցույց տալիս, ու հասկացանք, որ ընդեղից փախսնելու տեղ չկա: Ուզած-չուզած նստացնելու էին ավտոբուսը, տանեն: Ստեցինք լավ, սենց խելոք կանգնեցինք, հենց հերթը հասավ մեզ, սիրուն գնացինք, նստեցինք ավտոբուս: Ավտոբուսի մեջ էլ... քր... բայց էնտեղ բան կար, մի դահ կար, որ էլ իրենց հրամանատարը ոստիկանների, ով գլխավորում էր էլ խումբը, ինքը ասեց՝ երեխեք ջան, ձեզ չենք տանում բաժին, ուղղակի տանում ենք, մի քիչ հեռու իջացնենք: Ավելի հանգստացանք, էլի, մի տեսակ»²⁴:

Նկարագրված սղասումները վկայությունն են այն բանի, որ ի սկզբանե բանասացի և իր ընկերների դատկերացումներում գերիշխում էր ոստիկանի շատ ավելի հրեշավորված մի կերպար, բան իրենց փորձառությունն էր: Խոսքում նա դարբերաբար հիշատակում է ոստիկանների կատարած բռնությունների մասին. «Որ տեսնում ես, թե ոնց են ոստիկանները բռնի ուժ կիրառում մարդկանց նկատմամբ, առանց նայելու տարիքը, սեռը, առանց ինչ-որ բան հաշվի առնելու, ուղղակի բռնության էին ենթարկում, էլ ահավոր էր: Ինձ թվում ա՛ր էլ արդարացված ա, մարդկանց ազդեցիկ վերաբերմունքը, շարությունը: Ես արդարացնում եմ կոնկրետ»:

Սակայն շարունակելով՝ անձնական փորձը ոստիկանական բաժանմունքում դրական է նկարագրում և նշում, որ իրենց նկատմամբ շատ հետևողականորեն բարիդրացիական էին. «Սենց բերել են՝ ո՞վ ա ջուր ուզում, երեխեք ջան, լիքը ջուր են բերել, հո դուք ծարավ չե՞ք, բան, կարո՞ղ ա սոված եք»: Նարցականի տակ շղենելով նաև ոստիկանական իրավասությունների գերազանցման դեմքերի հնարավորությունը՝ ամովազն կարող ենք արձանագրել, որ տարբեր բաժիններում կամ կախված տարբեր ոստիկանների կամքից ու միգրացե հնարավորություններից՝ վերաբերմունքը ցուցարարների հանդեպ եղել է տարբեր:

Այսպիսով, հեղափոխության ընթացքում շրջանառվում էին երկու հիմնական խոսույթ՝ «ոստիկանը թուրք է» և «ոստիկանը մերն է» կադադրաների տեսքով: Առաջինից ծագած խոսույթը, տարածվելով համացանցում, ստեղծում էր ոստիկանների հրեշային կերպար՝ հղելով Նայոց ցեղասպանության թեմային, ընդլայնելով

²⁴ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Երևան, 2018, Գ.Մ., 20 տարեկան:

«թշնամու» կերդարը և այն տարածելով նոր «հակառակորդի»՝ ոստիկանի վրա: Վիրտուալ տարածությունից դուրս՝ փողոցում, որտեղ ծավալվում էին հիմնական գործողությունները, ցուցաբարները ոստիկաններին ընկալում էին՝ ավելի շատ իրենց հետ փոխշփման փորձառությունից ելնելով: Երկու հակադիր խոսույթները գոյություն ունեին միաժամանակ՝ երբեմն տեղ գտնելով նույնիսկ մեկ անձի ընկալումներում: Շուգահեռ շրջանառվում է գինվորի «հերոսական կերդարի» դատումը՝ հակադրվելով, առաջ՝ նույնացվելով ոստիկանի հետ՝ կախված հեղափոխության այս կամ այն փուլից:

Վերոնշյալ երկու կադադարներն էլ գործում են ոչ թե քաղաքացիական, այլ ոչ ֆորմալ հարաբերությունների համատեքստում՝ հղում անելով ոչ թե ինստիտուցիոնալ իրավունքին, այլ միջանձնային հարաբերություններին: Այնքան էլ չի քննվում այն հարցը, թե ինչու է ոստիկանական համակարգը դաշտդանում կամ նույնանում գործող իշխանությանը: Ուղղակի փորձ է արվում այդ համակարգը շրջանցել՝ նրա մասը կազմող ոստիկանին դնելով համակարգից դուրս, բերելով նրան միջանձնային, հասարակական հարաբերությունների և անձնական դատաստանատվության դաշտ: Ողջ համակարգի մերժումն ի հայտ է բերում օրենքից դուրս գործող դատախազային մեխանիզմներ՝ հասարակական սանկցիաներ, քանի որ իրավական դաշտը չի գիտակցվում որդես քաղաքացու ազդեցության տիրույթ, այն խորադեռ օտարված է որդես «հակառակորդի»՝ իշխանության դաշտ:

Այսպիսով, հեղափոխության հաղթանակի դատճառներից մեկը կարելի է համարել նաև երկու արժեհամակարգերի՝ ավանդական հասարակության և քաղաքացիական հանրության համակեցությունը: Նեղափոխության նդատակին հասնելու համար ցուցաբարները հաջողությամբ համատեղում էին դայքարի երկու մտտեցումներն էլ. նրանք գործում էին և՛ որդես ավանդական հասարակության արժեհամակարգի կրող, ուլքեր ոստիկաններին դարբերաբար հիշեցնում էին ազգակցական-դրացիական համակարգում իրենց ունեցած ոչ ֆորմալ դարտաւորությունները, և՛ որդես արդի հասարակության անդամ՝ քաջ գիտակցելով իրենց իրավունքների սահմաններն ու հնարավորությունները:

The article describes the transformation of policeman's image during the "Velvet revolution" in Armenia. This process is presented through two prevailing discourses during the movement – "the policeman is a Turk" and "the policeman is ours". "The policeman is a Turk" discourse perceives the policeman as an enemy, contrasting that image to the image of soldier. The logic of "the policeman is ours" discourse considers the policeman as one's own, and he can be identified with a soldier. In this context the policeman is presented as a victim of the existing political situation. While these discourses existed simultaneously, the changing balance between the two became obvious in the middle of the movement.

KEYWORDS: Velvet revolution, policeman, soldier, deconstruction, traditional culture, civil societies

АИДА ПАПИКЯН

ТРАНСФОРМАЦИЯ ОБРАЗА ПОЛИЦЕЙСКОГО ВО ВРЕМЯ БАРХАТНОЙ
РЕВОЛЮЦИИ В АРМЕНИИ

В статье описан процесс трансформации в общественном восприятии образа полицейского во время Бархатной революции в Армении. Эта трансформация рассматривается путем сравнения двух доминирующих в современном армянском обществе дискурсов: «полицейский – турок» и «полицейский – наш». В рамках дискурса «полицейский – турок» работники правоохранительных органов воспринимаются как «враги», и их образ противопоставляется образу солдата-защитника, тогда как в сюжете «полицейский – наш» полицейский воспринимается как «свой» и, более того, отождествляется с военнослужащими. В последнем контексте полицейский представляется как жертва политических реалий. Несмотря на то, что вышеуказанные дискурсы существовали одновременно, с середины движения стало заметно изменение их пропорционального соотношения в пользу второго сюжета.

КЛЮЧЕВЫЕ СЛОВА: Бархатная революция, полицейский, военнослужащий, деконструкция, традиционная культура, гражданское общество

ԸՈղիհամուր ծրագիր՝ 33 ԳԱԱ 3ԱԻ-ի Բանավոր լուստմության կենտրոնի ուսուցողական ծրագիր

Վիդա Պատիկյանի Օստիկյանի կերտարի փոխակերտումը
Թավշյա հեղափոխության ընթացքում

Գարգարույցի կարգավիճակ՝ բաց հանրային

Չրուցակցի ամուճ՝ Մանյա Գրիգորյան

Օժոնյամ թիվ՝ 1998 թ.

Չրուցավարի ամուճ՝ Ալիդա Պատիկյան

Չրույցի տևողությունը՝ 54 ր.

Գարգարույցի վայր՝ «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի» գրասենյակ

Չրույցի ամսաթիվ՝ 26 հուլիսի 2018 թ.

Չրույցի լեզուճ՝ հայերեն

Վերծամողի ամուճ՝ Ալիդա Պատիկյան

Վերծամության ամսաթիվ՝ 5-6 օգոստոսի 2018 թ.

Չայնագրության ձևաչափը՝ m4a

ՎԵՐԾԱՆՈՂԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Չայնագրությունը տարզ լսվում է:

ՉՐՈՒՑԱԿՑԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Մանյա Գրիգորյանը ծնվել է աղոում է էջմիածնում: Սովորում է Երևանի Ֆրանսիական համալսարանի Կառավարման բաժնի Երկրորդ կուրսում:

ԱՄՓՈՓՈՒՄ

00:00:05 Ցույցերին մասնակցելու դրդադառնումները:

00:00:08 Ոստիկանական բաժանմունք բերման ենթարկվելու լուստմությունը:

00:18:20 Ցուցարար-ոստիկան փոխառնչությունները ցույցերի ժամանակ:

00:26:30 Ցույցերի ընթացքում ծանոթ ոստիկանի ու նրա ընտանիքի վարքագծի մասին լուստմություն:

00:34:00 Ընդհանուր գրույց հեղափոխության շուրջ և ոստիկանների դերը դրամում:

00:46:00 «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի» շրջանակներում իրականացրած, հեղափոխության արժեքներին մվիրված փոքր դրամաշնորհային ծրագրի մասին:

ՉՐՈՒՑԱԿՑԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

- Քանի՞ տարեկան ես:
- Տասնիներ:
- Որտե՞ղ ես սովորում:
- Ֆրանսիականում, կառավարման երրորդ կուրս:
- Կդատմե՞ս՝ ոնց եղավ, որ որոշեցիր մասնակցել ցույցերին:
- Չգիտեմ, ուղղակի տեսա, որ սկսել ա շարժումը: Ու տենց որոշեցի, որ դետք ա մասնակցեմ անդայման: Որովհետև իմաստ չէի տեսնում շմասնակցելու: Չգիտեմ, մի տեսակ հավատում էի, որ ինչ-որ բան կարա փոխվի: Առաջին օրվանից մի տեսակ հավատում էի, ու ոչ էլ շատ երկար մտածել եմ՝ մասնակցեմ, շմասնակցեմ: Մենց տեսա, որ սկսել ա շարժումը, որոշեցի, որ դետք ա մասնակցեմ:
- Ո՞ր օրերն էին, հիշու՞մ ես:
- Ես տեսել եմ, որ Նիկոլ Փաշինյանն արդեն դետք ա վերադառնար, 13-14: Ես 15-ից եմ միացել: Էդ օրերին չկարողացա, բայց 15-ից արդեն միացել եմ:
- Ընկերներիցդ կայի՞ր մարդիկ, ովքեր ոգևորված էին էդ ցույցերով:
- Նա ընկերներիս մեծամասնությունը ոգևորված էին, ու հենց իրանց հետ սկսել եմ մասնակցել, բայց ընկերներիցս կային մարդիկ, որ առաջին օրերին ուղղակի չէին հասկանում, թե ինչի եմ գնում, ու անիմաստ էին համարում իմ գնալը:
- Ինչու՞:
- Դե հիմնականում ասում էին՝ ինչի ես գնում, ինչ դետք ա լինի: Մարդիկ կային, որ ուղղակի չէին հավատում, ասում էին՝ էլի լինելու ա էն, ինչ որ եղավ «Էշեկտրիկ Երևանի» ժամանակ կամ «Մարտի մեկի» դեղորերն են կրկնվելու: Վիճականում դե երևի վախ կար, ու հավատ չկար: Իրանք մտածում էին, որ էս ամեն ինչը բեմադրություն ա ուղղակի: Դրա համար իրենք էլ չէին հասկանում՝ ինչի եմ մասնակցում, չէին հավատում էլի: Ինձ ամեն կերպ փորձում էին բացատրեին, որ էս ամեն ինչը ուղղակի սուտ բան ա, մարդկանց լսաբելու համար ա, շատերը տենց էին մտածում: Բայց մի մեծ մաս էլ ընկերներիցս շատ ակտիվ մասնակցում էին ու առաջին օրերից մինչև վերջին օրերն իրենք եղել են առաջնագծում:
- Նախքան էս շարժումը ուրիշ ցույցերի մասնակցե՞լ ես :
- Չէ, ուրիշ ցույցերի չեմ մասնակցել:
- Դրանո՞վ է տայմանավորված, որ վախ չես ունեցել:

- Չէ, կաղ շունի: Մի տեսակ ես զգում էի, որ արդեն էլ բանը հասել ւս իրա զագաթնակետին, սենց ասած մարդկանց համբերությունը հասել է զագաթնակետին: Ու ինչ էլ լիներ, հաստատ մի արդյունք տալու էր: Նավատում էի դրան, դրա համար էլ ուղղակի դուրս էի գալիս, ու թեկուզ մեկ-մեկ էլ, որ մտածում էի, կարող ւս բան լինի ժողովրդի դեմ, մի տեսակ մեկ էր, տենց չէի վախենում, ուղղակի դուրս էի գալիս:
- Շա՞տ ես մասնակցել ցույցերին:
- Դե հա, ամսի 15-ից, կիրակի օր էր, էղ օրվանից մինչև վերջ:
- Էղ ընթացքում ի՞նչ դեղքերի ես ականատես եղել, որ քեզ զարմացրել ւս, ջղայնացրել ւս:
- Բաղրամյանի դեղքերը, ամսի 16-ի, մի տեսակ իմ համար, չգիտեմ, չէի ընկալում, որ կարա տենց բան լինի էլի:
- Էղ որ փշալարերով փակե՞լ էին:
- Մանավանդ, որ էղ փշալարերին հասա, իմ աչքերով տեսա, մի տեսակ, ես էլ էի մտածում սարքած ւս, էն որ կարո՞ղ ւս, չգիտեմ... ուղղակի: Չէի դատկերացնում, չէի ընկալում, թե ինչ ւս: Երազի էր նման, կամ ոնց որ կինոյի մեջ լինեմ: Բայց հետո արդեն, չգիտեմ, հետո արդեն անջատեցի ուղեղս, փորձեցի շմտածել՝ ինչ հետևանքներ կարան լինեմ, ու ուղղակի գնում էի:
- Իսկ էղ ժամանակ, որ տեսար, վա՞խ առաջացավ մեջդ:
- Նա, էղ աննկարագրելի վախ էր, որովհետև տենց բան ես երբեք չէի զգացել:
- Ի՞նչ էր տեղի ունենում էղ ժամանակ, մարդիկ իրար նկատմամբ ո՞նց էին:
- Մարդիկ իրար նկատմամբ ահավոր հետևողական էին, մեկը մյուսի վրա թքած շուներ, ու էղ բոլոր օրերին էր տենց: Մի տեսակ ոնց որ մի ընտանիք էին դարձել: Բոլորը սիրում էին իրար, էղ վատ ւս, որ հիմա չկա: Բայց էղ ժամանակ էղ էլ էր շատ հետաքրքիր ու մի տեսակ ինձ թվում էր, որ միշտ տենց ւս լինելու, արդեն վերջ, սրանից հետո միշտ տենց ւս լինելու: Ճիշտ ւս, վատ ւս, որ չկա, բայց էղ օրերին էղ հրաշք էր: Իրար նկատմամբ վերաբերմունքը, սեփական անձին մյուսից շտաբերելը, այսինքն ոնց դու ինքդ քեզ կվերաբերվելիր, տենց էլ մյուսներին էին վերաբերվում, էղ շատ լավ էր:
- Իսկ էղ օրն ի՞նչ եղավ, որ սկսեցին էղ նոնակները նետել: Ինչի՞ց եղավ:
- Ինձ թվում ւս՝ տեսան, որ ժողովուրդը դատարատ են թեկուզ էղ փշալարերի միջով անցնեն ու հասնեն Ազգային ժողով, դրա համար էղ բանը սկսվեց: Ու ինձ թվում ւս՝ նաև մի բան էլ կար, իրանք ուզում էին ուղղակի վախացնեին, որ մարդիկ ասեին, մարտիմեկյան դեղքեր են

կրկնվելու, շգիտեմ, ղեկը շի, էյի, շարունակել, ավելի լավ և մնալ տանը: Բայց հետաքրքիրն էն էր, որ ամեն իրանց հարձակումից ավելի ու ավելի էին շատանում մարդիկ, էդ ամենալավն էր, որ գնալով ավելի շատանում էին:

– Ո՞նց էին էդ դահին վերաբերվում ոստիկաններին:

– Ոստիկաններին... կային, մարդիկ, որ փորձում էին ցույց տալ, որ, հա, իրանք անում են իրանց գործը, փորձենք հարգել, փորձենք ուղղակի լավ լինել իրանց հետ, որ մենք լավ լինենք, իրանց սենց սասած սիրտը կհալի, իրանք էլ մեր հետ լավ կլինեն: Բայց կային մարդիկ, որ ագրեսիայով էին: Ինձ թվում ա՛ էդ արդարացված ա, որովհետև իրոք ահավոր էր էդ վիճակը: Որ տեսնում ես, թե ոնց են ոստիկանները բռնի ուժ կիրառում մարդկանց նկատմամբ, առանց նայելու տարիքը, սեռը, առանց ինչ-որ բան հաշվի առնելու ուղղակի բռնության էին ենթարկում, էդ ահավոր էր: Ինձ թվում ա՛ էդ արդարացված ա, մարդկանց ագրեսիվ վերաբերմունքը, շարությունը: Ես արդարացնում եմ կոնկրետ:

– Դու ե՞րբ ես առաջին անգամ բռնություն տեսել իրանց կողմից:

– Բաղրամյանում: Նետո դե արդեն շարունակական էր էդ ամեն ինչը, արդեն նորմալ էր դառնում: Իսկ երբ որ ինձ էին տանում բաժին...

– Էդ մի քիչ ավելի մանրամասն:

– Էդ, ուրեմն, ամսի 18-ն էր, առավոտ շուտ հավաքվեցինք Օդերայի մոտ: Ֆրանսիայի հրադարակում: Ու տենց շատ-շատ էինք մենք, շատ-շատ էինք, իրոք: Որովհետև բոլոր տեղերից ուսանողներն էլ տեղ էին հավաքվել ու տենց փակեցինք Ֆրանսիայի հրադարակը: Նիկոլ Փաշինյանն եկել էր, ու մի խումբ Նիկոլ Փաշինյանի հետ գնացին դեղի Բաղրամյան, մի խումբն էլ, ոնց որ էդ տարածքը բոլոր փողոցների կողմից սենց փակած էր ուղղակի: Ու էդ դահին ես կանգնած էի մեր համալսարանի երեխեքի հետ: Ու էդ դահին ընկերուիս եկավ, ես գնացի Ռոդենի արձանի մոտ, որ իրան ղեկը ա տեսնեի ու զգացի, որ դեղի Մաշտոց ներքևի մասը տանող էդ հատվածը մի տեսակ մարդիկ են հավաքվում, ինչ-որ խառնաշփոթ ա, ասինք՝ լավ, տեսնենք ինչ ա կատարվում, նոր էինք, էյի, եկել: Գնացինք էնտեղ, տեսանք, որ մյուս կողմից ոստիկաններ են գալիս: Ճիշտ ա, մյուս կողմում էլ կային կազմած մեքենայով, բայց ոստիկաններ չէին երևում, ուղղակի մեքենան էր: Էն մյուս կողմից տեսանք, որ ոստիկաններ են գալիս, տենց որոշեցինք տեսնենք՝ ինչ ա եղել, գնացինք, մեկ էլ բոլորով որոշեցինք, որ ղեկը ա հանգիստ նստել գետնին, ոչ մի բան չենք անում, ոչ մի դիմադրություն չկա, ուղղակի խելոք նստում ենք գետնին: Խելոք նստած ենք գետնին, մեկ էլ զգացինք, որ դիմացից վազելով են արդեն գալիս, հասկացանք, որ վայո [վերջ], եկել են մեր հետևից: Կանգնեցինք, որ ղեկը ա փայտենք էդտեղից, տեսանք, որ հետևից էլ են արդեն շրջափակում, ու սենց էլ կլորի մեջ էին հայտնվել: Էնքան հետաքրքիր էր:

– Էդ ընթացքում ի՞նչ էիր գգում, ի՞նչ էիր մտածում:

– Մտածում էի, որ տանը իմանան, գլուխս կջարդեն: Մեճակ էր էի մտածում: Ընդհանրապես, սկզբում վախ կար, ձեռներս դողում էին, որ հլը նոր էին շրջափակել, մտածում էի հեսա գալու են խփելով տանեն, ինչ ասես անցնում էր մտքովս, բայց հետո հասկացանք, որ իրանք բռնություն են կիրառում նրանց նկատմամբ, ովքեր որ դիմադրություն են ցույց տալիս, ու հասկացանք, որ ընդեղից փախնելու տեղ չկա: Ուզած-չուզած նստացնելու էին ավտոբուսը, տանեն: Ասեցինք՝ լավ, սենց խելոք կանգնեցինք, հենց հերթը հասավ մեզ, սիրուն գնացինք, նստեցինք ավտոբուս: [Այս մասն ուրախ ձայնով է լսվում, հետո մի-անգամից ձայնը փոխվում է — Ա.Պ.]: Ավտոբուսի մեջ էլ... ըը... բայց էնտեղ բան կար, մի դահ կար, որ էր իրենց հրաճանատարը ոստիկանների, ով գլխավորում էր էր խումբը, ինքը ասեց՝ երեսեք ջան, ձեզ չենք տանում բաժին, ուղղակի տանում ենք, մի քիչ հեռու իջացնենք: Ավելի հանգստացանք, էլի, մի տեսակ: Էն որ՝ լավ, քաղմաս չենք գնում: Նստեցինք ավտոբուս, երկու կանգառ վերևը գնացինք ու մեկ էլ, էն որ խառնաշփոթը սկսեց ավտոբուսի մեջ: Ավտոբուսի մեջ բոլորս աղջիկներ էինք, մի կին կար երևի 40 տարեկան, մնացածս ուսանողներ էինք, ու մի տղա, ընդամենը, մեր հետ: Էդտեղից արդեն մեկ էլ աղջիկները դատուհաններից դուրս են գալիս, սենց խփում են, ժողովուրդը որ փողոցում տեսնում են, դե կենտրոնով գնում ա ավտոբուս. «Ժողովուրդ, ձեզ տանում են, եկեք, բան»: Նտո ոստիկանների հետ էին արդեն խոսում, հաճոգում էին, որ միանան մեզ, թողեն իջնենք գնանք, ամեն ձև փորձում էին բանակցություններ վարել, ու հետաքրքիր էն էր, որ ոստիկանները սենց չեզոք, էն որ ավելի շատ մեր կողմից էին, բան էն գործի, որ իրանք անում են: Էդ ակնհայտ էր, էլի:

– Ո՞նց էր հասկացար:

– Որ երբ որ էր կինը իրանց հետ խոսում ա, ասում ա՝ այս դուք տեսնում եք, չէ՞ ինչ ա կատարվում, դուք էլ գիտեք, որ ողետք չի...

– Ավտոբուսի մե՞ջ:

– Ավտոբուսի մեջ:

– Իրանք ձեր կո՞ղբն էին նստած, թե՞ վարորդ էր:

– Երկու ոստիկան ավտոբուսի մեջ էին ու վարորդը ուղղակի, ոստիկան չէր:

– Նասարակական տրանսպորտ էր:

– Չէ, ՊՆ-ի ավտոբուսները...Ու տենց խոսում էին: Իրանց վերաբերմունքն այսր ենց էր, որ իրանք չէին ժխտում, որ սխալ ա էն ամենը, ինչ որ մենք ենք անում: Իրանք չէին ժխտում էր, զուտ սենց նայում էին ուղղակի: Ինչ-որ ձև չէին փորձում ժխտել:

– Այսինքն՝ կոմունիկացիայի մեջ հանգիստ մտնում էին:

– Նա, ազրեսիա չկար իրանց կողմից, շատ դրական: «Նա՛, երեխեք ջան, գնացեք, մեկ ա երեք ժամ հետո դուրս եք գալու, բան»: Ու էդ նույն բանն էլ, դրական միջավայրն էլ քաղմաստում էր: Շատ լավ էր էլի, էն որ ավտորուսի մեջ էլ երգել-ողարելով գնացել ենք, ոնց որ էքսկուրսիա գնայինք: Չգիտեմ, թե իմ բախտն էր բերել, ես էի լավ ավտորուս ընկել, որովհետև գիտեմ, որ կոնկրետ էդ ժամանակ երեք ավտորուսով տարան, հեթո՞վ տանում էին, մարդկանց մի մասը, որ կենտրոն էին ընկել, ահագին խնդիրներ էին ունեցել, կենտրոնում ու Արաբկիրում, խնդիրներ էին ունեցել, մանավանդ Արաբկիրում:

– Ի՞նչ տեսակ:

– Մի 8 ժամ դասել էին իրանց, ու մարդիկ կային, որ նույնիսկ բռնության էին ենթարկել իմ ծանոթների շրջադաստում, բայց էնտեղ, որտեղ որ մենք էինք գնացել, շատ բարի մթնոլորտ էր տիրում, շատ լավ էր վիճակը: Տրամադրվածությունը լավ էր, ու նույնիսկ, երբ որ իրավաբան էր եկել, իմ բննիչը հարցնում ա իրավաբանին, ասում ա՛՝ ի՞նչ եք անելու հիմա, գնալու՞ եք: Էս՝ որ դուրս գան երեխեքը, արդեն գնալու՞ եք ցույցերին: Ասում ա՛՝ չէ, չենք գնալու, ասում ա՛՝ բա ինչի՞: Ասում ա՛՝ դե որ մենք գնանք, երեխեքի կողքը ո՞վ ա մնալու, ասում ա՛՝ դե մենք երեխեքի կողքն ենք, գոնե դուք գնացեք: Բննիչը հարցնում էր իրավաբանին: Էդ ֆիքսվել ա մեջս:

– Ասեցիր՝ ասել են՝ ձեզ բաժին չեն տանելու, հետո ո՞նց հայտնվեցիր բաժնում:

– Տարան:

– Այսինքն խաբեցի՞ր:

– Նաա, խաբեցին, ես հասուկ գրել եմ, որ մեզ խաբել են: Մի բանի տեղ շեշտել եմ:

– Բա ինչի՞ սասեցին, որ չեն տանում, բայց տարան:

– Որովհետև ընդեղ աղջիկներ կային, չգիտեմ, ֆեյսբուքում մի հատ վիդեո կա, որ աղջիկները գետնին նստած աղոթում են լացելով, որ ոստիկանների շրջափակման մեջ էին: Տենց վիդեո կար, ու ահագին տարածված ա ինքը ֆեյսբուքում: Ես ու ընկերուհիս իրանց կողքը սենց հանգիստ կանգնած էինք: Նենց սենց իրանք նստած էին, ու անմիջադեպ իրանց կողքը կանգնած էինք մենք: Մենք իրանց հետ ենք գնացել: Էդ վիդեոն, կարծեմ, Ֆակտոր թիվիի էջում ա դրած, բայց շատ տեղերում կա էդ վիդեոն: Երևի իրանք տեսել են, որ էդ երեխեքի մոտ տենց ծանր վիճակ ա, դրա համար որոշեցին տենց ասեն, ես տենց եմ ենթադրում:

– Այսինքն էդ աղջիկները վախեցա՞ծ էին:

– Նա, ահագին վախեցած էին իրանք: Չէին գնում, ոչ մի ձև չէին ուզում գնային: Բայց դե, չեմ հասկանում էլի դրա իմաստը, ես չեմ ընկալում,

որովհետև սենց թե նենց տանելու էին, մենք էլ շրջափակման մեջ էինք, իրանք որոշել էին՝ առավոտը ողետք արածից 50 հոգու տանեն, 50 հոգու շրջափակման մեջ գցեցին միանգամից տարան, իրանց գործը արեցին: Ու հետաքրքիրն էն էր, որ մեզ տարան, մի 50 հոգու, բոլոր բաժինները լցվեցին, ոչ մեկին չէին ձերբակալում 3 ժամ, հետո 3 ժամը լրացավ, որ արդեն դատարկվում էին բաժինները, նորից սկսեցին ձերբակալել: Նենց տեղը ազատվում էր, նորից տանում էին:

– Իսկ որ ասում ես՝ ծանոթ ունեմ ու իրա նկատմամբ բռնություն են գործադրել, ի՞նչ ասեղի ունեցել էլ ժամանակ:

– Ինչ-որ չի ուզեցել ուղղակի ցուցմունք տա, չի համաձայնել, չգիտեմ՝ կոնկրետ ինչ ասեղի, բայց գիտեմ, որ ինչ-որ բռնություն եղել աս: Ու ես գիտեմ, որ իրանց շատ երկար են դասել, ութ ժամ դասել են քաղձատում ու Արաբկիրում են դասել:

– Ինքը ո՞նց էր խոսում էլ մասին:

– Դե ինքը դատարաստվում էր բողոքարկեր ու դատարաստվում էր իրանց դեմ գործ հարուցել, բայց դե հետո որ արդեն բան եղավ ես ամեն ինչը, տենց որոշեց, որ չէ, բան ողետք չի, էլի, ուղղակի: Բայց էն ժամանակ ես էլ էի դատարաստվում, որովհետև ոստիկանի օրինական դասանջ չէր եղել տարածքը լքելու, իրանք ուղղակի եկել էին ու առանց զգուշացնելու խաբելով տարել էին: Մեզ ասում էին՝ տանում ենք... ես էլ էի որոշել, որ ողետք արածից անողայման, բայց շարեցինք էլ, որովհետև արդեն անիմաստ էր:

– Ո՞ր ոստիկաններն էին:

– Չեմ հիշում, բայց ոնց որ կարմիր բերետներն էին: Ոնց որ...

– Դու, ընդհանրապես համազգեստով տայմանավորված, մարդկանց նկատմամբ վերաբերմունքի տարբերություն զգացե՞լ ես:

– Չէ, ինձ թվում աս, մանավանդ էլ օրերից հետո բոլորի նկատմամբ նույնն էր մարդկանց վերաբերմունքը:

– Ինչդիպի՞ր՞ էր:

– Ատելությամբ էր լցված:

– Ո՞նց էին արտահայտում էլ ատելությունը:

– Դե չգիտեմ, ամեն ձև, սենց, չգիտեմ... կարգախոսերով իրանց, բան:

– Ի՞նչ էին ասում, օրինակ, շատ եմ տեսել, որ կանգնում, խոսում էին իրանց հետ:

– Նա, կային մարդիկ իրանց մեջ, ժողովրդի մեջ կային մարդիկ, ովքեր փորձում էին ուղղակի իրանց հետ խոսելով, բանակցություններ վարելով, էլ ձևով էին փորձում, բայց մարդիկ էլ կային, որ չէ, մենք սենց չենք

ընդունում, դուք մեր թշնամին եք, վերջ, տենց էին: Օրինակ, իմ բերման ենթարկվելուց մի օր առաջ, էլ փողոցի անունը չեմ հիշում, Կորյունի վերևի հատվածը...

– Չարե՞նց:

– Նա երևի: Էդ մասն էինք փակել, ու էլի ոստիկաններն եկել էին մեր դիմացը, ուղղակի դատ էին բռնել: Ու հիմա դե առավոտ շուտ էր, բուլորը տված էին, մի կին էլ տենց քաղցրավենիք էր բերել տոողրակով: Որ մեր մեջ բաժանեցինք, հետո իրանց էինք տալիս, մեկ էլ ոստիկաններից մեկն ասում ա՛ չէ, էս վերցնեն, որ հետո երեսով տա՞րք: Էդ էր վերջը: Ու որ սենց դեմ դիմաց կանգնած ենք, ուրախ-ուրախ նայում ենք իրանց աչքերի մեջ, ոչ իրանք են մեզ վնաս տալիս, ոչ մենք ենք իրանց վնաս տալիս:

– Երեսով տաք, այսի՞նքն:

– Դե չգիտեմ, երևի որ վերցնեին, հետո կասեինք՝ տեսա՞րք, դուք վերցրեցիք մեր վաճիլին, բա չե՞ր ուզում մեր կողմն անցնեք: Կամ՝ էս քայլ էր դեղի մեր կողմը, երևի տենց ինչ-որ բան:

– Այսինքն հրաժարվեցին վերցնեի՞ն:

– Նա, հրաժարվեցին, բայց հետո իրանք էին հյուրասիրում: Արդեն Մերժ Սարգսյանի հրաժականից հետո իրանք էին հյուրասիրում:

– Կոնկրետ լսե՞լ ես՝ ինչ էին ասում, մի կողմից ասում ես՝ կային մարդիկ, որոնք թշնամի էին ընկալում, մյուս կողմից, փորձում էին բացատրեին. ի՞նչ բառերով էին էլ անում:

– Նամոզելը իրանք ասում էին՝ դուք գիտեք, որ էս ձեր երեխեքի համար էլ ենք անում, ձեր երեխեքի աղազան ա: Չեր կարծիքով ասում ա, ձեր վարկերը լրիվ գրոյանալու՞ են, հա՞, որ էս ամեն ինչը շատացվի: Մի խոսքով ասում էին՝ էլ իրանց տված խոստումներին դուք մի հավատացեք: Տենց, ասում էին՝ իրականում խաբում են: Չե՞րք տեսնում, ձեզ էլ գործը դետք չի, որովհետև մեկ ա, եթե էս ամեն ինչը ստացվեց, ձեզ հաստատ էլի հետ են գործի ընդունելու, կամ ավելի լավ գործ եք ունենալու: Էդ ձևով էին փորձում համոզել: Ասում էին՝ մենք ձեր դեմ ոչ մի բան չունենք, հասկանում ենք, որ դուք ձեր գործն եք անում, բայց ասում էին՝ իմացեք, որ էն դասիին, երբ դուք հրաժարվեք ձեր գործը անելուց մենք հաստատ կհաղթենք: Էդ ձևով էին փորձում համոզել:

– Բա ոստիկանները ի՞նչ էին ասում:

– Ոստիկանները ոչ մի բան չէին ասում: Չուտ ուղղակի սենց սառած կանգնում էին, ոչ մի բան:

– Իսկ թշնամանքը ո՞նց էր արտահայտվում:

– Օ՛, թշնամանքն արդեն բղավոցներով, բաներով: Ինչ-որ բան չկար,

– Էլի անտարբեր, էլի սատր:

– Նայե՛հոյանքներ հնչեցնելով մարդիկ ի՞նչ էին ակնկալում ոստիկաններից:

– Ճիշտն ասած չեմ հասկանում, թե ինչ, երևի ուղղակի ուզում էին ջղայնությունը թափել, ոստիկաններին ցույց տալ, որ ձեր արածը լավ բան չի, չղետք ա անեք, որ մարդիկ վիրավորվեն ու հասկանան, որ իրանց արածը սխալ բան ա, վատ բան ա: Ինձ թվում ա՝ էղ էր իրանց ուզածը:

– Ասում ես՝ ոստիկաններն անտարբեր էին, իսկ նորմալը ո՞րն էր, ի՞նչ տխրի անեին:

– Ինձ թվում ա՝ ամեն դեպքում ճիշտ էր իրանց ղախվածքը, որովհետև եթե իրանք չէին տրվում դրական կրքերին, ուրե՛մն բացասականին էլ չղետք ա տրվեին, թե չէ խառնաշփոթ կստեղծվեր: Ինձ թվում ա՝ իրանք էլ շատ լավ հասկանում էին, որ եթե ամեն բառին հետևեին իրանք, հաստատ լավ բան չէր ստացվի արդյունքում:

– Ամեն դեպքում ոստիկանների մոտեցումը ցուցարարների նկատմամբ ո՞նց ես գնահատում:

– Կոնկրետ դեպքեր կային, որ... չգիտեմ, ամեն դեպքում ինձ թվում ա՝ սկզբից իրանք ղետք ա մեզ հետ լինեին, բայց եթե մտածում եմ, որ իրանք բոլորը չէին, ովքեր հավատում էին էղ հաջողությամբ, դարգ ա, որ իրանք, մասնավա՛նդ աշխատելով տենց կառույցում տարիներ շարունակ, դարգ ա, որ չէին հավատա նրան, ինչին որ հավատում էինք մենք: Ու բնական ա էն, որ իրանք չէին անցնում ժողովրդի կողմը: Շատ դեպքերում ծանոթ ոստիկան ունեմ, որի հետ հետո խոսել եմ էս ամեն ինչից հետո արդեն, որ ամեն ինչը հանդարտվել էր, իրանք ասում էին, որ ամեն կերպ իրանց փորձել են վախացնել, ու իրանց փորձել են նենց անել, որ իրանք մնան էղ շարքերում, ամեն ինչ արել են, որ հանկարծ չհեռանան, հանկարծ չանցնեն ժողովրդի կողմը:

– Ի՞նչ են արել:

– Էն սկզբերում, հա, էղ որ իրանց ագրեսիան որ կար, էղ իրոք վախացնող էր, բայց հետո...

– Չէ, ասում ես՝ ոստիկաններին էին վախեցնում:

– Նաա, օրինակ, կոնկրետ մեր ծանոթին ասել եմ, որ քո բարեկամներից, քո ծանոթներից ոչ մեկը չղետք ա գնա մասնակցի, եթե գնաց մասնակցեց, վերջ, իմացի, որ վերջ ամեն ինչ:

– Ի՞նչ, դու՞րս եմ հանելու գործից:

– Չգիտեմ, ինքը շասեց կոնկրետ ինչ, դե տենց ուղղակի ծանոթ էր, բան չէր, որ կարողանայի ավելի խորը խոսեի իրա հետ, մի խոսքով, ասել են, որ լավ չի լինի, եթե մասնակցեն: Ու ասում ա՝ հաջորդ օրը ես գնա-

ցել եմ, Էն որ, Էդ մարդը իրա ֆեյսբուքը ջնջել ա Էդ օրերին, ամեն ինչ փակել ա, ոչ մի տեղ չկա գրանցված, հաջորդ օրը իրան կանչում են ու ցույց են տալիս իրա բոլոր ծանոթների, բարեկամների նկարները, ուլ-բեր որ մասնակցում են ցույցերին:

– Ե՞վ:

– Եվ ցույց են տվել Էդ մարդուն ու ասել են՝ էս ա թո բարեկամները մասնակցում են:

– Իրանց ընտանիքի խոսակցություններին տեղյա՞կ ես:

– Իրանց ընտանիքում, չգիտեմ, իրանք էլ տենց անորոշ վիճակում են եղել՝ գիտեմ, բայց հետո արդեն իրենք էլ էին հաղթանակ նշում: Ու ականհայտ էին նշում:

– Այսինքն՝ ստացվում ա մի կողմից իրանց վախացնում էին, մյուս կողմից՝ հանդիպում էին ցուցարարների մեջ ընտանիքի անդամներ:

– Բայց, մեկ ա, գնում էին:

– Իսկ հակամարտություն կա՞ր ընտանիքում:

– Նա, կոնկրետ իրանց ընտանիքում եղել ա, ու նույնիսկ եղբայրը եղբորն ասել ա, որ հրաժարվի Էդ աշխատանքից՝ մի՛ արա Էդ, բայց չգիտեմ՝ ինչի ինքը չի հրաժարվել: Այ Էդ չեմ հասկանում: Շու, կարող ա վախ լինի, որովհետև Էդ մարդն ունի երեխեք, կարող ա վախեցել ա, որ կարող ա ինչ-որ վտանգ լինի, որովհետև ամեն ինչ էլ սղասելի է: Երևի հիմնականում Էդ ընտանիքի վախը, որ Էդ խնդիրը կլինի, ընտանիքը սոված կմնա, կամ ինչ-որ բան, երևի Էդ վախն ա եղել, կամ ինչ-որ վտանգ կսղառնա ընտանիքին:

– Իսկ տեղյա՞կ ես, նկարները ցույց տալուց հետո Էդ մարդիկ գնացե՞լ են ցույցերի:

– Նա, գնացել են: Գիտեմ, որ Էդ իմ ծանոթը գրել ա իրա եղբոր ընտանիքին, որ չգնան, չմասնակցեն, բայց Էդտեղ կոնֆլիկտ ա եղել: [...] Սկզբում ինքը ասել ա՝ մի՛ գնացեք, բան, իզուր տեղը ինչ-որ բաներ եք անում, ինչ-որ անկառայ, անիմաստ բաներ եք անում ու ձեր արածը ինձ վնաս ա տալիս: Ինքը ավելի շատ կենտրոնացել ա նրա վրա, որ դուք աննողատակ եք գնում, այլ նրա վրա, որ Էն, ինչ որ դուք անում եք, ինձ ա վնասում: Բայց երբ որ մարդիկ հաղթանակ էին տոնում, իրանք էլ էին տոնում, Էդ փաստ ա:

– Իսկ նախքան ցույցերը, ինքը խոսու՞մ էր իրա սոցիալական դրության և այլնի մասին:

– Մինչև Էդ հա, ինքը շատ բացասական վերաբերմունք ուներ, Էն որ ես չէի տատկերացնի, որ տենց կլինի, հաստատ ինքը իշխանամետ չէր Էդ ժամանակ, հաստատ:

– Ի՞նչը չէիր տատկերացնում:

– Դե չէի տատկերացնում, էլի, որ ինքը էդ արձագանքը կտա ցույցերի օրերին ու կասի՝ մի՛ գնացեք, մի՛ մասնակցեք: Չէի սղասում: [...]

– Քո կարծիքով հեղափոխությունն ինչի՞ հաղթեց:

– Ինձ թվում ավ՛ մինչև վերջ գնալու շնորհիվ, որովհետև ոչ մի տահի կանգ չառան մարդիկ ու շկոտրվեցին, անկախ ամեն ինչից գնալով ավելի շատանում էին: Ամեն մի բանը իրանց մոտիվացնում էր:

– Իսկ ոստիկանների դերը էդ հեղափոխության հաղթանակի մեջ կա՞ր, թե՞ չէ:

– Դրա մասին չէի մտածել [ժողտում է], կարծում եմ՝ ինչ-որ տեղ կա, որովհետև... ու դրական կա, որովհետև իրանց ամեն էդ բռնի արարքը ավելի և մոտիվացրել մարդկանց, որ ավելի շատ գնան, ավելի շատ լինեն, Էն որ դաժը [նույնիսկ] մարդիկ կային, որ տանից դուրս էին գալիս ոստիկանների կյանքը ուտելու համար, էդ արդեն ասագին օգուտ էր, էլի, տալիս:

– Իսկ ոստիկանների կյանքը ուտելը իրանց ավելի չէ՞ր հրահրում:

– Նրահրում էր, իհարկե: Իրանք տեսնում էին, որ դատրաստված եկել են մարդիկ, որ իրանց հետ բռնոցի խաղան, կամ իրանց կյանքը ուտեն: Իրանք ակնհայտ տեսնում էին էդ, ու բնականաբար էդտեղ ավելի էին գայրանում, ու արդեն ավելի էր ամեն ինչը սրվում:

– Ընդհանուր բռնության մթնոլորտն ում՞ով էր տայմանավորված:

– Սկզբում ոստիկաններից էր գալիս, որովհետև ոստիկանները ուղղակի տեղը գալիս էին ու ձերբակալում էին մարդկանց: Բայց հետո մարդիկ տեսան, որ ոստիկանները նույնիսկ ուղղակի գալիս են ու ձերբակալում են, իրանք արդեն ակտիվացան, ու էդտեղ սկսեցին ամեն ինչ անել՝ դե մեզ էլ ձերբակալեք: Մարդիկ կային, որ հատուկ ինչ-որ բան անում էին, որ իրանց ձերբակալեն:

– Ինչի՞:

– Որովհետև հետաքրքիր էր, բոլորը քաղմաս են ընկնում, բա իրանք չընկնե՞ն: Իրոք կար էդ մոտեցումը: Մարդ գիտեմ, որ Էն բոլոր օրերին ամեն ինչ արել աս, որ իրան տանեն քաղմաս, բայց չեն տարել: Մարդ էլ գիտեմ, որ էդ օրերին նույնիսկ դասի աս գնացել, դասից ուղղակի դուրս աս եկել, բրոջս կուրսեցին Պոլիտեխնիկում, դասից ուղղակի դուրս աս եկել Ցիտադելի մոտ, ընկերներով խոսալուց են եղել, ու էդ դասին էդ մասում փողոց աս փակ եղել, ոստիկանները եկել են, որ ձերբակալեն էդտեղ հավաքվածներին, իրանց էլ են տարել: Էն, որ իրանք ընդհանրապես կառ շունեն, դաժն դասի են գնացել: Իրանց էլ հավաքել-տարել են:

– Նետո ի՞նչ ա եղել:

– Նետո քաղմասից նկարներ էին ուղարկում: Ինչ-որ ուրախ-ուրախ գնացել են, ինչ-որ ծանոթ են ունեցել ու տենց շուտ դուրս են եկել:

– Ընկերներդ լոգումդի տակ ի՞նչ էին հասկանում:

– Իրանը էլ կողմ էին, որ ոստիկանների սիրտը շահելով դետո և իրանց գրավել, մեր կողմը անցկացնել:

– Իսկ բռնությունն ա՞մեն դեղքում ու՞մի՞ց էր գալիս՝ հրաման տվողի՞ց, թե՞ ոստիկաններից:

– Ինձ թվում ա՝ իրանց ասում էին՝ դետո և ա՞մեն գնով էլ մարդկանց բերման ենթարկել, ու իրանք արդեն իրանց տեսակից ելնելով, իրանց հասկանիչներից ելնելով, իրանք արդեն բռնությամբ էին անում էլ ա՞մեն ինչը շատ դեղքերում:

– Նորից հետ գանք բաժին, բաժնում ի՞նչ էին խոսում քո հետ կամ խոսու՞մ էին:

– Նա, խոսում էին, կոնկրետ ի՞նչ քննիչը, մենք երեքով էինք մնացել էլ սենյակում, դե ա՞մեն մեկը իրա առանձին քննիչը ուներ: Վերջում երեքով էինք մնացել, մի աղջիկ էր, որ ուղղակի չէր խոսում, ուղղակի ոչ մի բան չէր ասում, ես ու մի աղջիկ, ու մենք սենց իրար կատակներ էինք անում, ինչ-որ խոսում էինք, ու տարբեր բաներից, հեղափոխությունից չէինք խոսում, էս երկրի վիճակից չէինք խոսում, ինչ-որ կատակներ էինք անում, չգիտեմ:

– Քանի՞ ոստիկան կար:

– Սկզբում մի 6 հոգի կային, ուղղակի չգիտեմ, ինչ-որ իրանց հրամանատարն էր բան էր, որ երևի եկել էին տեհային, որ, հա, բերել են էսբան, թվաբանակ աղահովել են: Ինձ թվում ա, դրա համար էր: Նետո, դե, ա՞մեն մարդու հաշվով մի քննիչ էր, եկան, ա՞մեն մեկը մի տեղ գնաց, փուլերով անցնում էինք, մինչև որ գայինք հասներինք էլ վերջին: Էդ մի մարդը ի՞նչ քննիչն էր, ուղղակի վերջում երեքով էինք մնացել: Նետո իրավաբանները եկան, ու ասեմ, որ էն իրավաբանը, ով, սենց ասած, իմ հետ էր աշխատում, ինքը բանկի իրավաբան էր: Ասում ա՝ ուղղակի էն որ մարդ չի մնացել էլ, ա՞մեն մեկին մի տեղ ուղարկել են, ստիոված ես եմ եկել: Դրական էր, ես ինչ-որ բացասական բան չտեսա: Բայց մեհակ էն էր հետաքրքիր, որ երբ որ հետո մի հատ, մի տղա էլ եկավ, որ հենց էլ ոլորտի էր ինքը մասնագետ, ու ես էս երկուսի հետ առանձին գրուցեցի, որոշեցինք, թե ինչ մոտեցում դետո և ցուցաբերենք, մեկ էլ վերջում էր բաժնի ոլետը, հա տենց ա երևի, գլխավորը մի խոսքով սենց ա անում՝ չհավատաս, իրանք ինչ ասել են, չհավատաս, հակառակը կանես, սենց հուժորով էր ասում: Բայց էլ հուժորի մեջ բանը կար, որ հանկարծ իրանց ասածով շանես: Ասում ա՝ ո՞նց կա, տենց կգրես, հանկարծ իրավաբանի ասածով շանես:

– Բա դու ո՞նց արեցիր:

– Արեցի նենց, ոնց լոյսնաճարվել էինք, բայց իրականում ճշմարտությունն էր էդ, ինչ-որ գրեցինք մենք, ինչ որ ներկայացրեցինք, էդ ճշմարտությունն էր, որովհետև ոստիկանի օրինական դասիանց չէր եղել, իրենք մեզ ձերբակալելուց ղետք ա գգուշացնեին, որ ձերբակալում ենք, բայց չէին գգուշացրել, իրանք ասել էին՝ ուղղակի տանում ենք, երկու կանգառ վերև ձեզ իջացնենք: Երևի մեր կողմից էր ամեն ինչը, դրա համար մենք հանգիստ գրեցինք ինչ որ ղետք էր: Վերջում էլ համոզում էին, որ նկարվենք, էլ տեղի աշխատողները: Ինչ որ գործերի հետ նկար էին կցում, էն որ սենց բոյր չափող ինչ-որ բան ա դրած, դրա մոտ նկարում են, չէ՞: Էդ ցանկությունով էր, ու իրանք համոզում էին, որ նկարվենք: Ասում էին՝ դե ձրի նկար ա, նկարվեք էլի:

– Քանի՞ հոգի ես ճանաչում, որոնց բերման են ենթարկել:

– Տենց մի ամբողջ շատ մարդիկ կան, էլ համալսարանի շատն էր, որ հարյուրից ավել մարդիկ կային էլ շատում: Ու անընդհատ իրար հետ կաղի մեջ էինք, որ հանկարծ ինչ-որ մեկին բերման էին ենթարկում, միանգամից գրում էին էլ տեղ, որ մեր իրավաբանական ֆակուլտետում սովորող երեխեքը ծանոթներ ունեին, դասախոսներ, միանգամից արձագանքում էին: Ու էլ տեղ էլ մարդկանց հետևից գնում էին: Ու էլ շատում շատ-շատերն էին, որ իրանց բերման էին ենթարկել: Չատում քննարկվում էր, թե բաժնում ինչ ա լինում: Տենց մի տղա ասել էր՝ սոված եմ, մինչև հաց չտեսեմ, բան չեմ գրի, ոչ մի բան չեմ անի, տենց իրա համար սենց լավ սեղան էին գցել, լավ հաց էր կերել, նոր վերջում սկսել էր: Էդ բանը ես մեր նկատմամբ էլ գգացի, որ սենց բերել են՝ ո՞վ ա ջուր ուզում, երեխեք ջան, լիքը ջուր են բերել, հո դուք ծարավ չե՞ք, բան, կարող ա՞ սոված եք: Մի հոգի ընդամենը սանտավիկ էր ուզել, մի հատ մարդ էր, չգիտեմ, ինչ աշխատող էր էնտեղ, որովհետև քաղաքացիական հագուստով էր, բոռեն մեկ եկավ՝ սանտավիկ ո՞վ էր ուզում, դու՞ ես ուզում, դու՞ ես ուզում, էն որ, մի հագար անգամ մեզանից հարցրեց՝ ո՞վ ա ուզում սանտավիկ, մի հատ քննիչին ասեց՝ հայտարերեք, տեսեք՝ ո՞վ ա ուզում: Ըստ հետևողական էին: Ինձ թվում ա նրա համար, որ մենք հանկարծ չբողոքեինք, չասեինք, որ մեր նկատմամբ վատ վերաբերմունք ա եղել...

ԳՅՈՒՂԱԲՆԱԿ ԵՎ ՔԱՂԱՔԱԲՆԱԿ
ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԹԱՎՇՅԱ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ՝
ԵՐԿՈՒ ԴԵՊՔԵՐԻ
ՆԱՄԱՍԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Գողվածիւմ արծարծվում են թավշյա հեղափոխությանը գյուղաբնակ և քաղաքաբնակ կանանց մասնակցության տարբերությունները: Բանավոր ղափտմության և ինքնազգագրության մեթոդների համադրությամբ փորձ է արվում խնդրականացնել թավշյա հեղափոխությանը կանանց ֆիզիկական ներկայացվածության հնարավորությունը և մասնակցության այլընտրանքային մեթոդները Գայաստանի գյուղական համայնքներում: Համենատուրյան մեջ են դրված հետազոտողի սեփական մասնակցային փորձը գյուղաբնակ կնոջ մասնակցության հետ՝ ցույց տալով, որ գյուղում կանանց անձնական հետաքրքրություններն ու ղախանջներն այս ղայքարում ստորաղասվել են հայրիշխանական հասարակության նկրտումներին:

ԲԱՆԱԼԻ ԲԱՆԵՐ՝ Թավշյա հեղափոխություն, կանայք, գյուղական համայնքներ, հայրիշխանական հասարակություն, այլընտրանքային մասնակցություն

այլակալան Թավշյա հեղափոխության օրերին տեղեկատվական ահռելի հոսքը, զանգվածային լրատվական միջոցները և էքստերտային կարծիքները հանգեցրին հասարակության մեջ այնուխի վերլուծական շերտի ձևավորմանը, որ թվում էր, թե բոլորը խոսում են նույն լեզվով, մարդիկ վերլուծում են բոլոր արտաքին և ներքին գործոնները, որոնք կարող են ազդել հեղափոխության արդյունքի վրա: Երբ հրադարակում, փողոցում, խոհանոցում և ուղիղ եթերում բոլորը կարծես միաձայն էին, չէի կարող չհարցնել՝ ի՞նչ կա այս ամենից դուրս, արդյո՞ք փոփոխություններն այնքան արժատական են ու համատարած, որ հրադարակը, զանգվածային մեդիան և այլ «խոսող գլուխները» ներառում են բոլորի կարծիքներն ու տազնադները՝ անկախ սեռից, բնակության վայրից, կրթության մատչելիությունից, գրադվածությունից, ծագումից և հասարակությունը շերտավորող այլ հանգամանքներից:

Նույն օրերին կարդացի Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքներից մեկում աղորդ ընկերուհուս՝ իր ամուսնուն ուղղված դիմում-հայտարարությունը. «Նայ կանայք անցկացնում են բողոքի ցույց՝ «Կոռլչի խողանը» խորագրով: Նայ կանանց ակցիային են միացել նաև ռուս կանանց ամուսինները»: Այս հայտարարության տակ նա հավելել էր. «Վահագ, տե՛ս, որ ես էլ եմ ցույցի գնացե՛նք»: Սա իր Ֆեյսբուքյան էջում գրում էր Լարիսան¹, որ ծնվել և աղորում է գյուղում, և որի ամուսինն ամեն տարի մի քանի ամսով մեկնում է արտազնա աշխատանքի: Գրառումից ազդված՝ որոշեցի մեկնել Գեղարքունիքի մարզ և դարգել՝ ինչուխիսին Է եղել կանանց մասնակցությունը հեղափոխությանը Նայաստանի գյուղական համայնքներում և հասկանալ այս գրառման տակ թաքնված բողոքի տարբեր շերտերը:

Մինչ Գեղարքունիքի մարզ մեկնելս Երևանում ամենօրյա ռեժիմով հակակառավարական ակցիաներին էի մասնակցում. առավոտից թաղամասի ճանադարհներն էինք փակում, երեկոյան հավաքվում էինք Նանրադետության հրադարակում Նիկոլ Փաշինյանին և իր աջակիցներին լսելու համար, ընթացքում՝ սոցցանցեր, լուրեր, ուղիղ եթեր: Լարիսան, ի տարբերություն ինձ, իշխանությանն առերեսվում էր ավելի անմիջական և մոտ տարածությունից՝ լրատվամիջոցների բացակայության և իշխանամենտ քարեկամ դաշտոնյաների սղասողական դիրքորոշման ներքո:

Ուշագրավ է, որ տարբերվելով հանդերձ ձևով և մասնակցության եղանակներով՝ մեր մասնակցությունն այս շարժմանը շատ կետերում համընկնում էր: Չէի կարող գուգահեռներ չտանել մեր միջև: Երկուսս էլ (և դայքարող կանանց հիմնական մասը) բավականին անհանդուրժող հայրիշխանական համակարգի ներքո սոցիալիզացված կանայք ենք: Երկուսս էլ փորձում էինք մեր ակտիվությունը ցուցաբերել այս դայքարում՝ այն բերելով անձնական հետաքրքրությունների և դահանջների դաշտ:

Եթե Երևանում զանգվածային անհնազանդության կարևորագույն դերակատարներն ու հաճախ կազմակերպիչները կանայք էին, ինչը բազմիցս ընդգծվել է տարբեր հետազոտողների և վերլուծաբանների կողմից², ադա Գեղարքունիքի մարզից՝ Գավառից, Վարդենիսից ստացվող տեսանյութերից երևում էր, որ գոյություն ունեցող քաղաքական համակարգի ու դաշտոնյաների դեմ էին դուրս գալիս բացառադեպ տղամարդիկ (տես՝, օրինակ, Վարդենիկ գյուղում դատազանավոր Նակոբ Նակոբյանի դեմ անցկացված խաղաղ ակցիայի տեսանյութը³): Այս դատկերը կարող ենք տեսնել նաև Նայաստանի այլ մարզերում (բացառությամբ այնդիսի խոշոր քաղաքների, ինչդիսիք են Գյումրին և Վանաձորը), որտեղ կանանց մասնակցությունը բողոքի ակցիաներին չնչին է եղել:

ԻՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իմ մասնակցությունն այս դայքարում դաժանավորված էր մի քանի հանգամանքով: Շալս և առաջ, ես փորձում էի դրանով արտահայտել իմ քաղաքական դիրքորոշումն ընդդեմ տիրող ռեժիմին: Երկրորդը՝ ինձ համար կարևոր էր իմ քաղաքացիական մասնակցությունը դայքարին որդես կին, որդես հետազոտող և շատ դեղքերում՝ ուղղակի շարժման մարդաշատությունն ադա-հովող մասնակից:

² Ղ. Ղովհաննիսյան, Կնոջ ներկայությունն ու ակտիվությունը հանրային հարթակներում ստիդեց փոխել ընկալումը // Lragir.am, 22.05.2018, <https://www.lragir.am/2018/05/22/176891/>, 07.11.2018; A. Meliqyan, The Women Behind Armenia's "Velvet Revolution" // Chai Khana, June 2018, <https://chai-khana.org/en/the-women-behind-armenias-velvet-revolution>, 07.11.2018.

³ Ա. Խաչատրյան, Վարդենիկցիների և Նակոբ Նակոբյանի հանդիմունը կայացավ // YouTube, 03.05.2018, <https://www.youtube.com/watch?v=4Y9N0Z0hC34&t=2599s>, 08.07.2018:

Պայքարս առաջին հերթին սկսվում էր իմ ընտանիքից: Որդես ամուսնավուծված կին, որն ունի երեխա և աղորում է իր ծնողների տանը, ես կարևորում էի տան կանանց ակտիվությունը և ներգրավված մասնակցությունը դայքարին: Իմ երկու եղբայրն ու հայրս շարժման առաջին օրերին բավականին բացասական դիրքորոշում ունեին կատարվողի նկատմամբ. ավագ եղբայրս նույնիսկ ասաց, որ արգելում է ինձ մասնակցել մասսայական ցույցերին, քանի որ դա կարող է վտանգավոր լինել իմ առողջության և կյանքի համար: Կրտսեր եղբայրս անընդհատ փորձում էր համոզել մորս, որ թույլ չտա ինձ և քրոջս մասնակցել ցույցերին՝ «բա որ քաղմաս տանեն, ի՞նչ եք անելու»⁴ հարցադրումով: Միայն աղբիլի 23-ից հետո, երբ գործող վարչադատ Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց, նրանք հասկացան, որ երկրում ինչ-որ բան է կատարվում, ինչ-որ բան փոխվում է: Ավագ եղբայրս զանգահարեց ինձ այդ օրը երեկոյան և շնորհավորեց՝ ասելով՝ «Է՛վ, սա քո, Արմինեի և մամայի հաղթանակն է»⁵: Բայց, այնուամենայնիվ, ղեկըք է նշեմ, որ եղբայրներիս և հորս մասնակցությունը ցույցերին և շարժման խաղաղ գործողություններին մինիմալ էր նաև դրանից հետո. նրանք նախընտրում էին դաիտյանել շեզոքություն:

Ամեն օր ես և բույրս մասնակցում էինք շարժման տարբեր ակցիաներին. հազարավոր այլ մասնակիցների հետ և՛ փողոց էինք փակում, և՛ հանրախանութ բոյկոտում, և՛ ուղղակի քայլում՝ միանալով ակտիվ երիտասարդների այս կամ այն խմբին: Երեկոյան գնում էինք Ֆրանսիայի, աղյա Ղանրատետության հրատարակ, որդեսզի ժամը 19:00-ին մասնակցեինք հերթական ցույցին: Շարժման առաջին օրերին ելույթ ունեցողների ձայնը գրեթե չէր լսվում, բայց մենք շարունակում էինք մնալ հրատարակում, և երեկոյան, երբ տուն էինք վերադառնում, երկրորդ անգամ արդեն համացանցով էինք լսում ելույթները, որդեսզի հասկանանք, թե ինչ էր խոսվել, և ինչդիսի գործողություններ են դյանավորվում հաջորդ օրվա համար:

Նույն օրերին ինձ ծանոթ շատ երևանաբնակ կանանցից՝ բարձրագույն կրթությամբ, աշխատող, հաճախ էի լսում, որ ծնողները կամ ամուսինը թույլ չեն տալիս մասնակցել բողոքի ակցիաներին՝ դատճառաբանելով իրենց անվտանգությունը: Որոշ տղա-

⁴ Էվիյա Ղովհաննիսյան, ԴԱՆ, Երևան, 2018, Մամվել, 27 տարեկան:

⁵ Էվիյա Ղովհաննիսյան, ԴԱՆ, Երևան, 2018, Արմեն, 33 տարեկան:

մարդիկ առաջնորդվում էին «եթե կինը փողոց փակի, քա տան գործն ո՞վ անի»⁶ սկզբունքով: Այնուամենայնիվ, Թավշյա հեղափոխության կարևորագույն ուղերձներից մեկն այն էր, որ Նայաստանում տեղի է ունեցել կանանց որոշակի սոցիալ-մշակութային ազատականացում⁷: Մեկ այլ կարևոր հանգամանք էր «սիրո և համերաշխության» մթնոլորտը, որն անվտանգության մեծ լիցք էր տալիս հեղափոխությանը⁸:

Սակայն, եթե Երևանում և հանրադեմոկրատիայի մյուս խոշոր քաղաքներում կանայք այնուամենայնիվ կարողանում էին դեմ գնալ հայրիշխանական նկրտումներին և ակտիվ մասնակցություն ունենալ հեղափոխությանը, ադա գյուղական համայնքներում նրանք, չկարողանալով դուրս գալ փողոց, մասնակցության այլ ստրատեգիաներ էին կիրառում:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԸ

Նեոազոտական դաշտի ենթատեքստը հասկանալու համար տետք է համառոտ նկարագրեն Գեղարքունիքի մարզի բնակչության կազմը և սոցիալ-տնտեսական ընդհանուր դասակարգը:

Մինչև 1988 թ. մարզում զգալի թիվ էին կազմում աղքատացանցիները, որոնք Ղարաբաղյան հակամարտության սրման հետևանքով մինչև 1992 թ. ստիոված լքեցին իրենց բնակության վայրերը: Նույն ժամանակահատվածում Աղքատացանից տեղահանված հայ փախստականները տեղափոխվեցին նախկին աղքատացանաբնակ գյուղերը: Նեոաբար մարզի գյուղական համայնքների մի մասը կազմվեց տեղի հայ բնակչությունից և հայ՝ մասամբ նախկին քաղաքաբնակ փախստականներից:

Սոցիալ-տնտեսական հարաբերությունները երկու խմբերի միջև մինչ օրս էլ բավականին լարված են: Դա լավագույնս տեսանելի է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություննե-

⁶ Էվիյա Նովհաննիսյան, ԴԱՆ, Երևան, 2018, Արմեն, 33 տարեկան:

⁷ A. Meliqyan, The Women Behind Armenia's "Velvet Revolution" // Chai Khana, June 2018, <https://chai-khana.org/en/the-women-behind-armenias-velvet-revolution>, 07.11.2018.

⁸ Ա. Շահնագարյան, Նամերաշխության հանրության միջազգային օրակարգը // Epress.am, 01.05.2018, <https://epress.am/2018/05/01/111.html>, 08.11.2018:

բարձր ցուցանիշները: Այս հանգամանքը ղայմանավորում է կլին-տոլամարդ հարաբերությունները տարածաշրջանում և գեներերային դերերի բաշխումն առօրյա կյանքում: Տարբեր սոցիալ-մշակութային ղատճառներ ունեցող և խորը արմատներ գցած սեռատարիքային բևեռվածությունը բացահայտ դրսևորվեց հեղափոխության օրերին, երբ մարզային մակարղակով բողոքի ցույցերին մասնակցում էին բացառաղես տղամարղիկ:

ԼԱՐԻՍԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լարիսան 35 տարեկան է, ամուսնացած է և ունի երկու երեխա: Նա կրթություն է ստացել Վարդենիսի մանկավարժական ինստիտուտում, որն ավարտելուց հետո չի աշխատել: Լարիսան համայնքում հայտնի է իր հասարակական կաղերով և ակտիվիստական գործունեությամբ: Մինչև Թավշյա հեղափոխությունը Լարիսայի գործունեությունը սերտորեն կաղված է եղել Ղայաստանի Ղանրաղեսական կուսակցության (այսուհետև՝ ՂՂԿ) մարզային և համայնքային տարբեր օղակների հետ՝ գյուղաղես, մարզղես, դղրոցի տնօրեն և այլն: Դա լավագույնս արտահայտվեց 2017 թ. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, երբ Լարիսան, սատարելով ՂՂԿ-ին, գումարներ էր բաժանում գյուղական համայնքի ողտենցիալ ընտրագանգվածին: Այսղիսով, Լարիսան գյուղում կարծես ողրոՖեսիոնալ միջնորդի դեր է կատարում. նա սոցիալական օգնության և հանրային վերահսկողության միջոցով միմյանց է կաղում ամենատարբեր հասարակական օղակները՝ գյուղաղեստարանը, մարզղեստարանը, կուսակցություններին, տեղի բնակչուղանը և այլն:

Երբ հետաքրքրվեցի՝ արղոք Լարիսան սատարում է հեղափոխությանը և մասնակցում է անհնագանղության լսաղաղ գործողություններին, նա ասաց, որ գյուղը մինչև մայիսի 1-ը որևէ կերղ ներգրաված չի եղել ղայքարի մեջ: Միայն մայիսի 2-ին, երբ Ազգային ժողովում տաղալվել էին վարչաղեսի ընտրությունները, և Նիկոլ Փաշինյանը կոշ արեց նոր ուժով դուրս գալ փողոց և ղայքարել իշխող վարչալսմբի դեմ, իրենց գյուղի տղա-

¹² Գեներային ճեղրվածք՝ կանանց նկատմամբ լստրական դրսևորումների ալստորոշիչ ուսումնասիրություն // ՄԱԿ-ի Բնակչության հիմնաղրամ, 2016, http://www.un.am/up/library/Gender-Gap_arm.pdf, էղ 8:

մարդիկ որոշեցին փակել Գեղարքունիքի մարզի գլխավոր ճանապարհներից մեկը և դեղի Սոտքի ոսկու հանքը տանող երկաթուղին: Կանայք համայնքային ցույցերին չէին մասնակցում, միայն՝ տղամարդիկ և դրոնցահասակ աղջիկներն ու տղաները: Ցույցերին մասնակցած տղամարդկանցից մեկը երևույթը բացատրեց հետևյալ կերպ՝ «կինն ինչ գործ ունի փողոց դուրս գա, կամ փողոց փակի»¹³: Ցույցերին Լարիսան մասնակցում էր իրեն բնորոշ միջնորդի կարգավիճակով. նա զանգահարում էր գյուղատետին և մարզդետտին՝ փորձելով «ճշտել», թե ինչ է կատարվում շրջկենտրոնում, որ ճանապարհներն են փակ, որ դահից կարելի է սկսել բողոքի գործողությունները գյուղերում, որ համայնքներն են առավել ակտիվ մասնակցում ցույցերին, ովքեր են Երևան գնում մասնակցելու համար և այլն:

- *Օրինակ, ես հեռախոսով էի ամեն ինչ կազմակերպում, բայց չէի մասնակցում:*

- *Իսկ ի՞նչ էիր կազմակերպում: Օրինակ, տեղի կանանցից մասնակցող կա՞ր, թե դժվար թե կանայք փողոց դուրս գային:*

- *Մենակ Սիլվաս էր միամիտ հայտնվել երեխու հետ ցույցերում, էն էլ Վարդենիս գնալուց էր ուրիշ գործերով, ընկել էր ցույցի մեջ: Մնացածը զանգում էի գյուղի կամավորներին դուխ էի տալիս, բայց չէի կարա գնամ, Վահագը կտղաներ: Դե, 99% կանայք իրենք չեն գնա:*

- *Իսկ ամուսնու հետ կարո՞ղ էին գնալ: Կամ շամուսնացած աղջիկները կարո՞ղ էին մասնակցել:*

- *Չէէ, վատայ: Խիար ամուսին տետք է լիներ: Ես գյուղատետին զանգեցի ասի՝ գյուղացիները ճանապարհ են փակում. բան չասեր: Դե գիտես, բնականաբար, եղած կլինեն, բայց ամեն դեպքում ավանդական տարածաշրջան է մերը:*

- *Իսկ գյուղում կայի՞ն մարդիկ, որ Երևան եկան ցույցերի ու որ իրենց հետ կանայք էլ լինեին: Կամ, օրինակ, տարեց կանայք, տատիկները եթե մասնակցեին, իրենց ամուսիններն էլ դեմ կլինեին:*

- *Նասա, Երևան լիքը գալիս էին: Ամոթ չէր: Տատիկները հավես չունեին:*

- Երևան գայր ամուսնու հետ ամոթ չէ՞ր: Այսինքն, ման գալու մնան բա՞ն էր, թե՞ նոդատակադրված ցույցի էին գալիս:

- Ե՛վ նա, և՛ նա: Մերը կգրես՝ նամուսով-արուտով գյուղացի ենք եղել, ցույցի չենք զնացել¹⁴:

Նարցագրույցի ժամանակ Լարիսան քանիցս շեշտում է, որ կանայք և ի մասնավորի՝ ամուսնացած կանայք, չէին կարող մասնակցել ցույցերին համայնքներում: Սա նույնական է համայնքային այն ծիսակատարություններին, որտեղ կա կանանց և տղամարդկանց մասնակցության դերային բաշխվածություն¹⁵, որոնց ժամանակ կանայք բացառադես հանդես են գալիս դիտորդի կարգավիճակում: Այսինքն՝ մեան տիոյի հանրային բողոք և ներկայացում-խաղ տարունակող միջոցառումը, ինչոյիսին հանրահավաքն է, Գեղարքունիքի մարզի գյուղական շատ համայնքներում բացառում է կանանց մասնակցությունը: Երևոյթը նաև նույնական է գյուղամեջում՝ գյուղի կենտրոնական հրադարակում, առհասարակ կանանց ներկայության բացառմանը, ինչը նաև ենթադրում է կանանց հրադարակային մասնակցության բացառումը գյուղի հանրային կյանքում¹⁶:

Ուշագրավ է, որ համաձայն Լարիսայի՝ կանանց հանրային մասնակցությունն ունի երկու տարբեր մակարդակ՝ մեղ, գյուղական, ղախարակելի և լայն, համադետական, ընդունելի: Նեղ համայնական միջավայրում կնոջ վարքն ավելի վերահսկելի է թե՛ դիսկուրսիվ և թե՛ գործունեութենական մակարդակներում: Այլ բան է համադետական դայքարի հրադարակը, որտեղ մեան վարքագիծը կորցնում է իր իմաստը. մասնակցելով երևանյան ցույցերին՝ գյուղերից եկած կանայք կարծես ազատվում էին իրենց համայնքների վերահսկողությունից ու քննադատությունից՝ ձուլվելով ընդհանուր բողոքող զանգվածին:

Այնուամենայնիվ, մարզի խոշոր քաղաքներում բողոքի ակցիաներին եղել է աղջիկների որոշակի մասնակցություն: Նրանք հիմնականում ուսանողուհիներ էին և աշակերտուհիներ, այսինքն՝ աղջիկներ, որոնք համայնքում ընկալվում են դեռևս որոյես երե-

¹⁴ Էվիյա Նովհաննիսյան, ԳԱՆ, Կարդենիս, 2018, Լարիսա, 35 տարեկան:

¹⁵ Լ. Արրահանյան, Օնսք, նախաթատրոնը և թատերական հրադարակը // «Բեմ» ղարբերական, 1990, հ. 1, էջ 10:

¹⁶ Ե. Կարոն, Женское пространство в культуре народов Кавказа, Петербург: Петербургское Востоковедение, 2001.

խաներ, որոնք չեն հասել ամուսնական տարիքի: Ընդ որում, կանայք մասնակցում էին բացառապես կողեկտիվներով՝ համադասարանցիներով, համակուրսեցիներով: Այստեղ մենք տեսնում ենք սեռատարիքային բաշխվածության ակնհայտ օրինակ. «Ամուսնացած կանայք ընդհանրապես մասնակցություն չեն ունեցել: Արդեն ավարտածներն էլ: Կարողա մեկ կամ երկու ակտիվիստ, որոնց ուրիշ աչքով են նայում, այսինքն տուն տանելու չեն, էլի»¹⁷: Նետևաբար, հայրիշխանական հասարակություններում ինչդեպ կնոջ հանրային մասնակցությունն, այնդեպ էլ նրա քաղաքական հայացքները բխեցվում են ամուսնու դիրքորոշումից:

Վերադառնալով Լարիսայի ֆեյսբուքյան գրառմանը՝ հասկանալի է դառնում, որ նա ֆիզիկապես ներկա չի եղել ցույցերին, քանի որ ամուսինը, որն այդ ժամանակ գտնվում էր արտագնա աշխատանքի, թույլ չէր տվել: Ամուսնու՝ խողանում գտնվելու հանգամանքը շատ կարևոր է հասկանալու համար, թե ինչու կանայք գյուղական համայնքներում ցույցերին չեն մասնակցել: «Ո՞նց դուրս գան, ցավդ տանեմ, սաղի ամուսինները Ռուսաստան են, խողանում են, էդ կնիկը հելնի փողոց ու՞մ կողքը կանգնի, հելնի փողոց, որ ի՞նչ անի, ո՞ւմ կողքը կանգնի, ո՞վ կհանդուրժի, որ իրա կնիկը հելնի փողոց փակի»¹⁸: ԻՄՆդիրն այն է, որ փողոց դուրս եկող, որպեսզի կարող է իր կողքին ունենա տղամարդ, որի որոշումներն ու գործողությունները լեգիտիմ կդարձնեն իր մասնակցությունը: Փաստորեն, ամուսնու ֆիզիկական բացակայությունը շատ ավելի ազդեցիկ էր, քան իրական ներկայությունը. նրանց անհասանելիությունը խաղաց իր բացառիկ դերը կանանց մասնակցության բացառման հարցում: Լարիսայի մասնակցությունը հեղափոխությանը սահմանափակվում էր իր տնով, քանի որ գրառման մեջ արված հայտարարությունը՝ «ես էլ եմ ցույցի գնացել», զուտ սադրանք էր՝ ամուսնուն ցույց տալու իր բողոքն ընդդեմ խողանի: Լարիսան, օգտագործելով իր հանրային կադերը, համայնքում ունեցած դիրքն ու իր ակտիվիստական գործունեությունը, կարողացել էր փակ, անձնական տնային տարածքը վերածել հեղափոխական տարածքի՝ գտնելով մասնակցության այլ եղանակներ:

¹⁷ Էվիյա Նուրիանյան, ԴԱՄ, Կարդենիս, 2018, Մարգարիտա, 16 տարեկան:

¹⁸ Սեդա Անանյան, ԴԱՄ, Գավառ, 2018, Դավիթ, 45 տարեկան:

Պայքարի օրերին Նայաստանի խոշոր քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում, կանայք դուրս էին եկել փողոց, ղայքարում էին և ավելին՝ հանդիսանում էին Թավշյա հեղափոխության հիմնական շարժիչ ուժը: Այլ էր իրավիճակը գյուղական համայնքներում, որտեղ նրանք հիմնականում մնում էին իրենց տներում և մասնակցում էին ղայքարին ոչ բացահայտ եղանակներով: Այս նկատառումը կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Նատկանշական է, որ գյուղերում բողոքի ակցիաներին մասնակցում էին բացառադեպ դրոցահասակ աղջիկները և որոշ դեղքերում տվյալ համայնքներում հասարակական առավել ակտիվ դերակատարում ունեցող կանայք՝ ուսուցիչներ, բուժանձնակազմ, ուլքեր սովոր են գործելու հանրային տարածքում, դրացիների շրջանակից դուրս գտնվողների հետ: Վարդենիսի շրջանի գյուղերից մեկի հիմնական դրոցի հասարակագիտության ուսուցչուհին գրույցի ժամանակ նշեց, որ *«Էդ ղահին երեսեսքը ղյակատներով ղատրաստ եկել էին, բայց ոչ մեկի շասեցին, զգացինք, որ մեջը եղ ալիքը կա, ու ուրախացանք, սեսցինք՝ ինչ լավ ա, որ մեր երեսեսքի մեջ էլ էս ալիքը կա: Մի քանի հոգով, ընկերուհիներով խոսում էինք, բայց մեզ բան շասեցին: Ու հաջորդ ժամին ոչ մեկ չկա: Ու մենք իրանց հետ ելանք փողոց, ուրախ, զվարթ, բան, իրանք ղատկերացրեցին, որ... սհագին, երևի մի երկու ժամ ճանաղարհը փակեցին»*¹⁹: Այդդեպ, աշակերտների հետ փողոց էին դուրս գալիս նաև կին ուսուցիչները, որոնք իրենց մասնակցությունը հաճախ ղատճառաբանում էին երեսաների վերահսկողությամբ և անվտանգության աղախովմամբ, այսինքն՝ այս քայլը մեկնաբանում էին ոչ թե որդես անձնական դիրքորոշում, այլ մասնագիտական ղարտք:

Գեղարքունիքի մարգում արված մասնակցային դիտարկումները թույլ են տալիս փաստել, որ ցույցերին տղամարդկանց հետ մասնակցում էին բացառադեպ բարձր դասարանների աշակերտուհիները և քիչ թվով ուսանողական տարիքի երիտասարդ կանայք: Նատուկենտ էր միջին և տարեց կանանց մասնակցությունը տեղերում (տես՝ օրինակ, Սևան քաղաքում անցկացված խաղաղ բողոքի ակցիայի տեսանյութը²⁰): Կարևորագույն ղայմաններից

¹⁹ Սիդա Պատիկյան, ԴԱՆ, Մեծ Մարտիկ, 2018, Ամնա, 44 տարեկան:

²⁰ խաղաղ բողոքի ակցիա: Սևան - 25.04.2018 // YouTube, 26.04.2018, https://www.youtube.com/watch?v=l_vx1peb2eg, 05.07.2018:

մեկը թերևս կանանց ամուսնական կարգավիճակն էր: Ամուսնացած կանայք բողոքի ակցիաներին գրեթե չէին մասնակցում:

Պայքարին շնասնակցելու դատճառաբանություններից մեկն էլ գյուղական համայնքների հեռավորության խնդիրն էր շրջկենտրոններից և մայրաքաղաքից: Օրինակ՝ գյուղի ակտիվ կանանցից մեկը նշեց՝ «...շատ, շատ [կցանկանայի մասնակցել ցույցերին Երևանում], դարգադես ցույցերը սկսվեցին, ես մտածում էի, դեռևս դասադուլի մասին խոսակցություն չկար, ես ամեն օր դաս ունեի, հոգով սրտով ես ցույցերի մեջ էի, քույրս, հարազատներս ցույցերի էին, անընդհատ զանգում էի, կադրվում էի, բայց իրանք ասում էին՝ դեռք է քո աչքերով տեսնես: Չեղա ցույցերին, շատ փոշմանեցի, որովհետև ես ուզում էի էլ էներգիան վերցնել»²¹: Եթե տղամարդկանց համար այդքան խնդրահարույց չէր նստել մեքենան և հասնել շրջկենտրոն կամ Երևան ցույցերին մասնակցելու համար, ադա կանանց համար շատ դժվար էր թողնել գյուղի առօրյա գործերն ու ամբողջ օրը «վատնել»՝ հրադարակում կանգնելով կամ փողոց փակելով:

Այնուամենայնիվ, մենք տեսնում ենք, թե ինչոյես է սահմանափակ, ճնշված, ենթակա հանրությունը դայքարի այլընտրանքային ձևեր գտնում²²: Գյուղական համայնքներում կանանց ընդհատակյա մասնակցությունը դայքարին ունեցել է տարբեր դրսևորումներ. նրանց մի մասը ակտիվորեն հետևում էր համացանցում անընդհատ թարմացվող լուրերին և ուղիղ հեռարձակմանը՝ ընթացքում նաև ձեռք բերելով նոր համակարգչային հմտություններ, մյուս մասը զանգերի և առօրյա գրույցների միջոցով փոխանակվում էր վերջին նորություններով, իսկ մարզում առավել ակտիվ կանայք փորձում էին որոշակի կազմակերպչական գործունեություն ծավալել՝ ընդհուր մինչև ֆիզիկադեսներկա գտնվելով բողոքի ակցիաներին:

²¹ Սիդա Պաղիկյան, ԴԱՄ, Մեն Մասթիկ, 2018, Ամնա, 44 տարեկան:

²² J. Scott, Weapons of the Weak: Everyday Forms of Peasant Resistance, New Haven and London: Yale University Press, 1985.

EVIYA HOVHANNISYAN
PARTICIPATION OF RURAL AND URBAN WOMEN IN THE ARMENIAN
VELVET REVOLUTION
(COMPARATIVE ANALYSIS OF TWO CASES)

The article discusses the differences in participation of rural and urban women in the Armenian Velvet Revolution. Combining oral history and auto-ethnography, the article tries to analyze the possibility of physical participation of rural women in the rallies, and consider alternative methods of their involvement. Comparing the researcher's own participation experience with the participation of a rural woman, the article shows that the personal interests and demands of rural women in this struggle were subordinate to aspirations of the patriarchal society.

KEYWORDS: Velvet Revolution, women, rural communities, patriarchal society, alternative participation

ЭВИЯ ОГАННИСЯН
УЧАСТИЕ СЕЛЬСКИХ И ГОРОДСКИХ ЖЕНЩИН В БАРХАТНОЙ
РЕВОЛЮЦИИ В АРМЕНИИ
(НА ПРИМЕРЕ СРАВНИТЕЛЬНОГО АНАЛИЗА ДВУХ ИСТОРИЙ)

В статье рассматриваются различия в участии городских и сельских женщин в Бархатной революции в Армении с использованием методов устной истории и автоэтнографии. Проблематизируется возможность физического присутствия сельских женщин в протестных митингах. Рассмотрены альтернативные формы их участия в революции. Собственный опыт участия исследователя в движении сопоставлен с участием сельских женщин, что дало возможность выявить различия сельского гендерного порядка, связь личных интересов и требований сельских женщин в этой борьбе с устоями патриархального общества.

КЛЮЧЕВЫЕ СЛОВА: Бархатная революция, женщины, село, патриархальное общество, альтернативные методы участия

ԳՅ ԸՈՂԻԱՌՈՐ ԾՐԱԳԻՐ՝ ԳՅ ԳՍԱ ԳՍԻ-Ի Բանավոր ղատմության կենտրոնի ուսուցողական ծրագիր
Էվիյա Գովհամոմիյանի Ուխտագիծ՝ Գյուղաբնակ և քաղաքաբնակ կանանց մասնակցությունը թավշյա հեղափոխությանը՝ երկու դեղքերի համամետության օրինակով

Չարցագրույցի կարգավիճակ՝ ամանում

Չրուցակցի անուն՝ Ի.Ա.

ԾՈՈՂյամ թիվ՝ 1983 թ.

Չրուցավարի անուն՝ Էվիյա Գովհամոմիյան

Չարցագրույցների քանակ՝ 2

Չրուցումների տևողությունը՝ 1 ժ. 19 ր. և 16 ր.

Չարցագրույցների վայր՝ զրուցակցի բնակարան

Չրուցումների ամսաթվերը՝ 24 հունիսի 2015 թ. և 7 մայիսի 2018 թ.

Չրուցումների լեզու՝ հայերեն, Գեղարքունիքի բարբառ

Վերծանողի անուն՝ Էվիյա Գովհամոմիյան

Վերծանության ամսաթիվ՝ 2-10 սեղտեմբերի 2018 թ.

Ձայնագրության ձևաչափը՝ Mp3

ՎԵՐԾԱՆՈՂԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Ձայնագրությունը լավ լսվում է, թեև տեղ-տեղ ձայնը շատ տարբ չէ:

ՉՐՈՒՑԱԿՑԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ի.Ա. ծնվել է Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղում: Կրթություն է ստացել Վարդենիսի մանկավարժական ինստիտուտում: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Չարցագրույց 1 (24.06.2015)

00:00:00 Ներածություն, նախնական հարցադրումներ, հետազոտական թեմայի ներկայացում, ընտանիքի ղատմություն:

00:26:00 Վարդենիսի շրջան Աղրբեջանից հայ փախստականների տեղափոխման ղատմությունը:

00:45:00 Մեկնաբանությունների փախստականների տեղափոխման առաջին տարիների, ինտեգրացիոն դժվարությունների, արտաքին տեսքի մասին:

Չարցագրույց 2 (07.05.2018)

00:00:00 Գետազոտական խնդրի նկարագրություն:

00:02:00 Գեղափոխությանը կանանց ներգրավվածության մասին գյուղական համայնքներում:

00:08:00 Մեկնաբանություններ թեմայի շուրջ:

ՉԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՆ ԳԵՏԻՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ԲԱՆԱԿՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նարցագրույց 1

– Լարիսա ջան, իմ հետազոտությունը նվիրված է Ադրբեյջանից հայ փախստականների տեղափոխման տատմությանը: Գիտեմ, որ ձեր գյուղում փախստական ընտանիքները կազմում են բնակչության մոտ կեսը: Կողատմե՞ս իրենց տեղափոխման մասին. ինչդե՞ս են եկել, ինչդե՞ս են տեղացիները իրենց ընդունել, քո տղավորությունները և հիշողությունները, որդես տեղաբնակ:

[...]

– Մեր փախստականների գալը համընկավ երկրի քանդվելու հետ: Սովետը քանդվեց: Մերոնք էստեղ շաաատ շեն են աղբել: Են գիտե՞ս որն ա. հարստություն են ունեցել: Գյուղացի են եղել, կաղ շունի: Տկոր շեն եղել, շալվար շեն հագել, բաց շեն հագել, բայց ուրախ ա անցել կյանքը: Տունը, ամենակարևորը գյուղացու համար, յուղն եղել ա, զազն եղել ա, մեշտկներով ղեստկն եղել ա: Մերոնք սովետի չափանիշներով ունեցել են փող, խանութներն էլ ինչ եղել ա, հիմիկվա մման շատ շի եղել, իրենց թվացել ա լավ են աղբում: Ոչ թե հիմա՝ փող շունեն, բայց խանութները լիքն են: Ու էղ ժամանակ, որ սովետը քանդվում էր, փախստականները եկան, թուրքերը զնացին:

Մեր շատ մեծեր չհարմարվան փախստականների գալուն, մտածում էին, թե իրանք են դատճառը, որ մերոնք վատ են աղբում հիմա: Էղ անկախությունը, դատերագմը հաշվի չէին առնում. – «Վաաայ, մեր թուրքերը զնացին, էն ժամանակ լավ էինք աղբում, հիմա վատ ենք աղբում...»: Բայց հարցը թուրքը չէր, հարցը էն էր, որ սովետը քանդվեց, իրանց համար էղ արդեն տրագեդիա էր: Եկան խավար տարիները, դատերագմական, արդեն սկսեցին լույսը անջատել, ալյուր, ձեթ, ոչինչ չկար՝ զազ, բան, հենց համընկավ փախստականների գալու հետ: Էղ վատ տարիներին փախստականները եկան ու իրանց թվում էր, թե վարդենիացիները միշտ սենց վատ են աղբել՝ առանց լուս, առանց զազ, ալյուրը գրամով, հացը գրամով, բայց սովետն էր դատճառը, փլուզվեց, անկախություն էր:

Ու շատ վատ էր արդեն, շիմացան, փախան: Մեծամասնությունը եկվորների զնաց, համա թե աշխատանք չկարողացան գտնեն ալստեղ: Իսկ Ռուսաստանում շատ լավ էլ արդյունքների են հասնում: Սկզբից եկան, չէ՞ փախստականները, իմ հողարը, իմ ախղերը, փաստ, ցուլեր մորթեցին գալու օրը, վերտալոտներով, որ բերում էին, ինչ ձևի ենք դիմավորել:

Սկզբի տարիներին, որ եկել էին, շաաատ սիրուն աղջիկներ կային իրենց մեջ: Ու մեր շատ լավ տղաները, լավ մարդկանց տղաները, ոնց

են ասում՝ «եսին՝ մարդու տղեն, էնին՝ մարդու տղեն», էլ սկզբի ժամանակ առան իրենց հարս: Նետո, որ տեսան փախստականները չեն մնում, չեն հարձարվում, ամուսիններին սկսեցին տանել, գնում էին գյուղից: Իրանը շհարձարվան, ընդհանրադես շհարձարվան մեր կողմերին:

– Իսկ իրենց աղջիկներից այստեղ հարս տանո՞ւմ էին:

– Նա, հա: Սկզբի տարիները, որ եկան, շա՛տ, դե քաղաքից էլ դե եկել էին: Սկզբից շատ ամուսնացան իրար հետ: Դու քաղաքից եկել ես, քո էլ եղանակի, օդի տարբերությունը, նրբությունը: Որ ասում եմ, օրինակ, Իոսիկի Նոնան, ինքը շա՛տ սիրուն աղջիկ էր ու տղավորվում էր մեր մեջ տողիկ հագած, յուրկա-բրյուկի առաջին անգամ իրա վրա եմ ես տեսել՝ «վաայ, յուրկա ա, մամա՛ ջան, քայլում ա, մեջտեղից շալվար ա դառնում»: Ու էլ Իոսիկի Նոնային տեսնելու համար քեռուս տղան հատուկ նիվայով գալիս էր: Նովսեփի խումբ կար. Նովսեփը \$րանահայ էր, \$իդայիներ էին, Լեռնիդ Ազգալոյանի հետ էլ գրուղան ամբողջ օրը գալիս էին մեր տուն խանգալ ուտելու (մենք թաթար-բուրակին տենց ենք ասում՝ խանգալ): Նատուկ իրանք կգալին մեր տուն, որ գնալին Իոսիկի Նոնային տենալին: Իոսիկի Նոնան մի քիչ ազատ էր, տղամարդկանց հետ կխոսար, ավտոն կանգներ, ինքը կնստեր:

– Բարվի հա՞յ էր Նոնան:

– Չէ, Խանլարի հայ էր, բայց մերը ռուս էր: Նենց դատկերացրու, օրինակ, ճանադարիին ավտոմեքենա կանգներ, մեր Արմինեն հինգ կիլոմետր ոտքով էլ գար, չէր նստի: Բայց Նոնային, որ կանգներ, ինքը կնստեր: Իմ քեռու տղան ամուսնացավ, բայց գալիս էր Նոնայի հետևից, որ Նոնային կանգներ դարձադես հեռվից տեսներ: Նոնան էլ ահավոր սիրուն էր, մեր տեղացիներից մեկը փախսրեց Նոնային, տարավ, երկու օր հետո հայրը գնաց բերեց: Դրանից հետո, էս նորվա կինը, որ անցավ, դրա ամուսինը փախսրեց, էլի Նոնային ձեռքից վերցրեցին: Վերջում Նոնան գնաց Ռուսաստան, ամուսնացավ Խանլարի իր թուրք ընկերոջ հետ: Շատ-շատ էինք զարմանում էլ մեր նոր եկածների դեղին մազերով, ո՞ր մի բնիկ հայն էր դեղին մազ ներկում, հը՞, վա՛յ, զարմանք էր:

– Իսկ իրենք տեղացիներին ինչո՞ւն էին վերաբերվում:

– Վայ, ավելի հետամնաց կարգով: Տեղի աղջիկները ահավոր հետամնաց էին: Իսկ իրենց տղաների 90% մենք շտեսանք, իրանք լրիվ գնացին Ռուսաստան, մենք տղաներին չենք տեսել: Աղջիկներն էլ, որը ամուսնացավ, որը չամուսնացավ էլ, էլի Ռուսաստան գնացին: Այդդես, օրինակ, Մանյա Ստեղանովնան, մեր ռուսերեմի ուսուցչուհին էր: Ղիմա թոշակի ա: Խանլարից ա էլի: Ինքը շատ սիրուն աղջիկներ բերեց, որից մեկին մեր գյուղի լավ աղյուղներից մեկը ուզեց, էլի շատ հարուստ մարդկանցից մեկը, հիմա միլիոն ա տղան, շա՛տ լավ են վիճակները:

Բայց մի աղջիկը չէր ամուսնացել հլը մեր մոտ: Մազերը կտրած, լավ հիշում եմ, Լամառան շատ մողայիկ աղջիկ էր: Բժշկուհի էր ու մեր գլխավոր բժշկի հետ, անձամբ, երես առ երես կանգնում խոսում էր, Պետրոսյան Լյովայի հետ: Կոնկրետ իրա սենյակ գալիս էր, թուղթ էր գրում ու ոնց թե՝ «Պետրոսյան Լյովայի հետ Լամառան եկավ, մտավ, խոսաց»: Բոլորը ասում էին Լամառան Պետրոսյան Լյովայի սիրածն ա, բայց համոզված եմ՝ Լամառան ազաղ աղջիկ էլ ամուսնացավ: Բայց գյուղում ըտենց մեկը չկար, որ չկանգներ ու ասեր՝ «Լամառան Լյովայի սիրածն ա»: Կինը խանդեց, այնդես եղավ, որ կինը տարավ Երևան իրա դատճառով: Բայց դատճառն այն էր, որ ազատ շավար էր հագնում Լամառան, ու շատ ազատ աղջիկ, հիմիկվա, ներկա սերունդի նման էին եկել, ներկա մեր վարդենիսցի աղբորդների նման էին եկել: Տենց չափից դուրս ճչացող չէին, դարգադես կուլտուրական հագնված էին, բայց էի արտահայտիչ էր, էի խոսում էին:

Էդ նոր եկած տարիները՝ սկզբի երկու տարին, տենց իրիկուն չկար, որ մեր մոտ շուխուռ շոնեին, որ աղջիկ են փախցրել: Պարտադիր փախցնում էին, դարտադիր: Մի օր ես ու Արմինեն գնում էինք իրա ծանոթ խանկարեցի ուներ՝ Նրանուշի տուն: Մի մետր էնկողմ, էնքան լավ եմ հիշում, էնքան ա տղավորվել էր ձայնը ականջիս, մեր բնիկներից իրանցից աղջիկ փախցրեցին: Ու շատ, հատկադես խուժան վարդենիսցիներն էին փախցնում, անբախտացնում էին, շատերը բաժանվեցին, կասեի 70% բաժանվեցին: Խճող, ալկաշ, ղլանբաշ-նարկոճանները փախցրեցին լավ աղջիկներին, անբախտացրին, շա՛տ: Էս, որ էսօր ասում ենք՝ «փախստականների մեջ ման եկողները շատ են», մեծամասնությունը մեր բնիկների նախկին կանայք են, որ եկան, մեր բնիկները փախցրեցին: Շատ դատճառ եղավ էր բացասականը մեր տեղացիների կողմից: Տեղացիներն էլ այր շատ ավանդական էին, չկարողացան համակերպվել: Իրանք չհամակերպվեցին, իրանք չկարացան տանեն, չկարացին, չհարձարվան մեր բնիկների էլ կողիտ, էլ ուրիշ վիճակներին: [...]

Նարգագրույց 2

- Լարիսա ջան, կդատմե՞ս ձեզ մոտ ինչդեմոս էին տեղի ունենում ցույցերը, ինչքանո՞վ էր գյուղը ներգրավված հեղափոխությանը, և հատկապես կանայք մասնակցե՞լ են բողոքի ակցիաներին գյուղում, թե՞ ոչ:
- Օրինակ, ես հեռախոսով էի ամեն ինչ կազմակերպում, բայց չէի մասնակցում:
- Իսկ ի՞նչն էիր կազմակերպում: Օրինակ՝ փախստական կամանցից մասնակցող կա՞ր ցույցերին, թե դժվար թե կանայք փողոց դուրս գային:
- Մենակ Սիլվա էր միամիտ հայտնվել երեխու հետ ցույցերում: Մնացածը, զանգում էի գյուղի կամավորներին, դուխ էի տալիս, բայց չէի կարա գնամ՝ Վահագը կտղաներ: Դե 99% կանայք իրենք չեն գնա:
- Իսկ ամուսնու հետ կարո՞ղ էին գնալ:
- Չէէ, վաասայ:
- Իսկ քույրդ կգնա՞ր:
- Խիստ ամուսին դետք է լիներ (ծիծաղում է):
- Իսկ չամուսնացած աղջիկները:
- Քույրս չէ, բայց Վարդենիսում որոշ ակտիվիստ աղջիկներ գնացել են:
- Իսկ այդ ակտիվիստները ամուսնացա՞ծ էին: Սիլվան ակտիվիստ է:
- Մնումով որոշները: Չէէ, Սիլվան Վարդենիս գնալուց էր ուրիշ գործերով ընկել էր ցույցի մեջ (ծիծաղում է):
- Բայց, օրինակ, Սևանում մասնակցում էին, չէ՞: Կամ դոկորցահասակ աղջիկները գնում էին չէ՞ ցույցերի: Ձեր ակտիվիստները դոկորցակա՞ն են:
- Նաասա, դոկորցական երեխերը գնացել են:
- Իսկ, օրինակ, եթե չամուսնացած երիտասարդ ուսանող աղջիկը գնար, իր մասին կվատաբանեի՞ն: Դոկորցի ուսուցիչներն էլ են մասնակցե՞լ:
- Ես գյուղադեմոսին զանգեցի ասի՝ գյուղացիները ճանադարի են փակում, բան չասե՛ք:
- Իսկ քեզ մնան այլ ակտիվ կանայք կայի՞ն, որ զանգեին գյուղադեմոսարան կամ մարզդեմոսարան, հորդորեին, հետաքրքրվեին:
- Դե գիտես քնակամաբար եղած կլինեն, բայց ամեն դեպքում ավանդական տարածաշրջան է մերը:
- Գիտեմ, դրա համար եմ հարցնում: Ուղղակի Երևանում կանայք շատ

- ագատ էին մասնակցում ցույցերին: Այդ իսկ Պատճառով ինձ հետաքրքիր է՝ գյուղում ինչդեպ էր:
- Երևանի անուն մի՛ տուր: Իրանք եվրոպացի են, ոսի դայդին են մտածում:
 - Իսկ գյուղում տենց նվիրված հանրադեպականներ կայի՞ր, որ խոչընդոտեին ցույցերին:
 - Չէ, բոլորն աֆերիստ ենեն:
 - Ինչդե՞ս է դա արտահայտվում:
 - Դե, հանրադեպականների ժամանակն անցավ, հիմա մարդիկ կարող են հանգիստ շունչ քաշել: Էն ժամանակ, եթե գործ կամ դաշտոն ուզեիր, դարտատդիր հանրադեպական ոլիտի լինեիր:
 - Իսկ ակտիվիստները ձեր գյուղի՞ց են, թե՞ ուրիշ գյուղերից էլ կան:
 - Մերը՝ մեր գյուղից:
 - Իրե՞նք են նախաձեռնել զնալ ցույցի, թե՞ դու էիր կազմակերպել: Լարիսա՛, իսկ գյուղում կայի՞ր մարդիկ, որ Երևան եկան ցույցերի, ու որ իրենց հետ կանայք էլ լինեի՞ր: Կամ, օրինակ, տարիքով կանայք, տատիկները, եթե մասնակցեին, իրենց աճուսիներն էլ դեմ կլինեի՞ր:
 - Նաաա, Երևան լիրը գալիս էին: Սկի աճոթ չէր: Չէ, տատիները հավես չունեին:
 - Երևան գալը աճուսնու հետ աճոթ չէ՞ր: Այսինքն, ման գալու մճանքա՞ն էր, թե՞ իրոք նդատակադրված ցույցի էին գալիս:
 - Ե՛վ նա, ն՛ նա: Մերը կգրես՝ նաճուսով արուտով գյուղացի ենք եղել, ցույցի չենք գնացել:
 - Այդդեպ էլ կգրեմ:
 - Էէ, կարևորը կգրես, որ շաատ ենք հիաթափվեել:
 - Ինչի՞, Լարիսա՛ ջան: Որևէ եական փոփոխություն չե՞ք տեսնում: Իսկ եթե դու մասնակցեիր, Վահագն իճանար, ի՞նչ կաներ:
 - Մեզ մոտ ոչինչ չի փոխվել: Ես չէի մասնակցի. Վահագը կտղաներ, չգիտեմ ինչ կլիներ: Մշակույթի նոր նախարարն ինձ սղանում ա: Աճիրյանը արագ էր արճագանքում:
 - Ձեր հացատան մասին ես անհանգստանում, չի՞ր դատասխանում:
 - Պահդանճան գոտին չեն բերում, ու լիրը լսնդիրներ: Որդես դատմաճակուրթային հուճարճան այն հաստատված ա, բայց դայճանագրերը, վկայականը, գոտին և այլնը չեն տվել:
 - Վահագնը Մոսկվայու՞մ է:



CONTENTS

UNHEARD VOICES:

MEMORY AND POST-MEMORY IN ORAL HISTORY

Acknowledgements

Introduction

Gayane Shagoyan, *Oral History between History and Anthropology*

Chapter 1. Reconstruction of the Soviet Past

Nelli Manucharyan, *Baptism in the Midst of Atheism of Soviet Armenia*

Interviewer Nelli Manucharyan, *Interview with S.S.*

Elen Stepanyan, *Silenced Stories in Khachkar Language*

Interviewer Elen Stepanyan, *Interview with Nelson Shirvanyan*

Chapter 2. Politics of Memory and Memory of Politicity

Hasmik Grigoryan, *The Past in the Present: Second and Third Generations of Armenian Genocide Survivors*

Interviewer Hasmik Grigoryan, *Interview with Ara Gevorgyan*

Anna Babayan, *Remembering Kirovabad: between Nostalgia and Trauma (Tracking the Story of One Refugee Family)*

Interviewer Anna Babayan, *Interview with a Former Resident of Kirovabad*

Ashkhen Hakobyan, *The Image of Teacher between Soviet and Post-Soviet. A Case of a School*

Interviewer Ashkhen Hakobyan, *Interview with Ishkhan Petrosyan*

Chapter 3. Silenced Stories

Manana Movsesyan, *The April War in the View of Army Conscripts*

Interviewer Manana Movsesyan, *Interview with Aram Martirosyan*

Armenuhi Nikoghosyan, *“Turkish Community” in Armenia*

Chapter 4. The Velvet Revolution in Oral History

Aida Papikyan, *Transformation of the Policeman’s Image during the Velvet Revolution*

Interviewer Aida Papikjan, *Interview with Manya Grigoryan*

Eviya Hovhannisyan, *Participation of Rural and Urban Women in the Armenian Velvet Revolution (Comparative Analysis of Two Cases)*

Interviewer Eviya Hovhannisyan, *Interview with I.A.*

СОДЕРЖАНИЕ

НЕСЛЫШИМЫЕ ГОЛОСА:
ПАМЯТЬ И ПОСТ-ПАМЯТЬ В УСТНОЙ ИСТОРИИ

ՉԼԱՎՈՂ ՁԱՅՆԵՐ:

ՖԻՇԵՐԱԿԱՆ ՈՒ ՅԵՏՖԻՇԵՐԱԿԱՆ
ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սույն տղագրությունը ֆինանսավորվել է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ) կողմից: Գրքի բովանդակության համար դատաստանատու են հեղինակները, և դարտադիր չէ, որ այն արտագույի Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի տեսակետները:

տղաքանակը 300 օրինակ

դրակի գիտական խմբագիր.
ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ

լեզվական խմբագիր.
ՍՈՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ձևավորումը.
ՄԿՐՏԻՉ ՍԱԹԵՎՈՍՅԱՆ

11
A104752

Բանավոր դատմությունը մի հնարավորություն է՝ առերևակյու դատմության մութ կամ լուցված դրվագների հետ, հատկապես երբ կա հակասություն դաշտումական և սոցիալական հիշողությունների միջև:

Բանավոր դատմության՝ որդես առանձին ուղղության անբացրու- մը տեղի է ունենում հատկապես 1950-60-ականների մարզինայ խն- րերի իրավունքների դաշտականության շարժումների ազդեցու- յամբ՝ փորձելով լսելի դարձնել նրանց, ում մայր ներկայացված չէր անցյալի դաշտումական դատումներում: Բանավոր դատմու- յան սոցիալական այդ առարկությունը մինչ օրս դաժողանվում է, և դա է դատմատը, որ որդես ենտագոտությունների հասցևատեր այն տեսնում է ոչ միայն գիտական համրույթին, այլ նաև ավելի լայն յարան:

Բանավոր դատմության խնդիրներից է հանրային գիտակցության փրա ազդելն ու հանրային դատմագիտության զարգացումը: Բա- նավոր դատմությունը դատմական րենարկումների և սեփական փորձի իմաստավորման մի նոր հարթակ է:

ISBN 978-9939-9178-5-6



9 789939 917856